AMED
Armen

PK 8547
.S27
S27
1961
COPY 1

Տ՛եղեսի՝ Յեր դեմ Սասնոյ Դավթոյ,

Sasuntsʿi Dawitʿ

ԱՍՈՒՆՑԻ ԱՎԻԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍ

ԵՐԿՐՈՐԴ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ · 1961 · ԵՐԵՎԱՆ

91-970011

АР 1
Հ 25

Նախաբանը՝ ակադեմիկոս

Հ. ՕՐԲԵԼՈՒ

Սույն հրատարակության մեջ զետեղված են
Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ
ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆԻ
Դավթի ճյուղի համար կատարած
նկարազարդումները

Ձևավորումը կատարված է
ըստ Կոջոյանի զարդանկարների



АРМЯНСКИЙ НАРОДНЫЙ ЭПОС
ДАВИД САСУНСКИЙ
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1961

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԸ

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դյուցազներգություններ, որոնց մեջ ամենաբնորոշը, առավել նշանակալիցը, ամենից ավելի արտահայտիչն ու հերոսականը, մեծն ու համայնապարփակը «Սասունցի Դավիթ» էպոսն է։

«Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդական ավանդության մեջ, բանասացների բերանում կրում է մի քանի անուն, որոնք և ընդգծում են նրա միասնությունն ու ամբողջականությունը։

Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր»։ «Ծուռ» բառը հայերենում ունի մի քանի նշանակություն՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում։

Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն» (տարիքով և դիրքով ավագների), «Հսկաների տուն»։

Կա ևս մի անուն՝ «Քաջանց տուն», որ նշանակում է «քաջերի տուն», կամ դրսևորում է էպոսի առնչությունը քաջքերին, ոգիներին վերաբերող մի շարք ավանդությունների հետ։ Այդ քաջանց տոհմին պատկանող կանանցից է ծնվում հերոսների երեք կրտսեր սերունդ։

Ինչպես Մուրոմցի Իլյան ոչ թե Մուրոմի, այլ ամբողջ Ռուսաստանի հերոսն է, այնպես էլ Սասունցի Դավիթը ոչ միայն Սասնա, այլև ամբողջ Հայաստանի հերոսն է։

Միշտ չէ, որ բանասացներն էպոսը լրիվ են հաղորդում. նրանք հաճախ պատմում են միայն մեկ կամ երկու հատված, էպոսի միասնությունն ընդգծելով այն ողորմիներով, որոնք փառաբանում են մնացած բոլոր հերոսներին։ Պատմվող հատվածը կոչվում է այն հերոսի անունով, որի մասին հյուսված է էպոսի տվյալ ճյուղը։

Էպոսի հիմնական մասը երրորդ ճյուղն է, որն անմիջականորեն կապված է ամբողջ դյուցազնաշրջանի չորս սերնդի հերոսներից գլխավորի, ըստ ավանդության երրորդ դյուցազնի՝ Դավթի հետ, որն առավել մոտ ու հարազատ է ժողովրդի սրտին, նրա հիշողության մեջ առավել փայփայված, առավել երկրային, ամենից ավելի ժողովրդական։

Էպոս ասացողները, տղամարդ թե կին, գերազանցապես եղել են ավագ սերնդի ներկայացուցիչներ, հաճախ՝ ալեզարդ ծերուններ. էպոսը նրանք պատմել են հայկական տարբեր բարբառներով, մեծ մասամբ՝ Մոկաց, Մշո, Սասնա, ինչպես և արարատյան բարբառներով։

«Սասունցի Դավիթը» պատմվում է երգաձայն, ռիթմիկ առոգանությամբ, իսկ նրա առանձին դրվագներ երգվում են և հանգավոր բանաստեղծության ձև ունեն։ Միմյանցից երբեմն շատ հեռու բարբառներից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունը ավելի ցայտուն է դրսևորվում էպոսի չերգվող մասերում, քանի որ մեղեդու, հանգի ու չափի հետ կապված երգի մեջ միշտ էլ ավելի լավ է պահպանվում հնագույն տեքստը։

Մոտ երեք քառորդ դար է հավաքվում և գրի են առնվում «Սասունցի Դավթի» տարբեր վարիանտները։ Այդ գործի առաջին նախաձեռնողը եղել է հայ ժողովրդի բանահյուսության հայտնի հետազոտող Գարեգին Սրվանձտյանը։ Այնուհետև նույն գործը շարունակել են մի շարք մարդիկ, և առաջին հերթին՝ հայ անվանի գիտնական, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ հանգուցյալ պրոֆ. Մանուկ Աբեղյանը, որն էպոսի վարիանտներից մեկը գրի է առել 1886 թվականին, Վաղարշապատում, և այնուհետև մի ամբողջ հիսնամյակի ընթացքում բազմիցս անդրադարձել է էպոսին, նրա մասին գրել երկու ծավալուն ուսումնասիրություն։

Բանահավաքներից ոմանք գրի են առել էպոսի բոլոր չորս ճյուղերը, ոմանք էլ՝ միայն նրա առանձին մասերը։

Ի մի հավաքված նյութերը կազմում են շուրջ երկու և կես հազար տպագիր էջ և ունեն ավելի քան հիսուն վարիանտ։

Տարբեր ժամանակ հրատարակված բազմաթիվ վարիանտներից բացի, «Սասունցի Դավիթ» էպոսն ունի երկու հիմնական հրատարակություն։ Դրանցից առաջինը, որ լույս է տեսել Մ. Աբեղյանի ընդհանուր խմբագրությամբ և Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ, բաղկացած է երկու ստվար հատորից, որտեղ զետեղված են էպոսի բոլոր տպագիր և անտիպ վարիանտները (1936, 1944 և 1951 թթ.)։ Երկրորդը՝ ՍՍՌՄ

Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և լեզվի ինստիտուտի կողմից պատրաստված և 1939 թվականին տպագրված «Սասունցի Դավթի» համահավաք տեքստն է, որ պարունակում է ավելի քան տասը հազար տող (կազմողներ՝ Մ. Խ. Աբեղյան, Գ. Ա. Աբով և Ա. Տ. Ղանալանյան, խմբագրություն և առաջաբան՝ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու)։

«Սասունցի Դավիթ» էպոսում չորս սերնդի պատկանող հերոսները, միմյանց լրացնելով, ավելի ճիշտ՝ միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները։

Այդ կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է նաև այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել, ովքեր չեն ուզում հեղել ո՛չ իրենց, ո՛չ էլ այլոց արյունը՝ ի հաճույս իշխելու տենդով բռնված զավթիչների։ Այդ հայացքները խարսխված են այն դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, օտար նվաճողների և սեփական թագավորների լծի ներքո կրած տառապանքների բովում։

Մեզ առանձնապես մոտ և հասկանալի է ժողովրդի գիտակցության մեջ անհիշելի ժամանակներում ստեղծված Սասունցի Դավթի կերպարը, հերոս, որը ջերմ ու անաղարտ սիրտ ունի, արձագանքում է օգնության ամեն մի կանչի և սխրագործություններ է կատարում ի բարօրություն իր ժողովրդի, իր հայրենիքի։

ԷՊՈՍԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

Էպոսի հիմնական սյուժեի զարգացումը բնության ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորվելու ընթացքն է, որոնք մարդկային հասարակության պատմության արշալույսին սկսեցին ընդունել կենդանական կամ մարդկայնացված ձևեր։ Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը ավելի ու ավելի է մոտենում երկրին, ավելի ու ավելի է մոտենում երկրավոր մարդու կերպարանքին։

Էպոսի հերոսները, ինչքան էլ իրենց ծագմամբ, գերբնական հատկություններով ու արարքներով կապված լինեն բնության և նրա ուժերի հետ, այն ուժերի, որ հնագույն մարդն անհամեմատ ավելի սուր էր զգում, քան այն մարդը, որն արդեն վարժվել էր իրեն ենթարկել այդ ուժերի թեկուզ մի մասը — խորապես մարդկային են։ Սրանք կենդանի մարդիկ են՝ օժտված արիությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ։ Նրանց երկրային կյանքը պատկերող զրույցներում վառ արտացոլում են գտել ոչ միայն նրանց սխրագոր-

ծությունները, այլև մարդկային զգացմունքները։ Էպոսի հերոսները սրխրանքներ են կատարում, որովհետև այդպես է պահանջում ժողովրդի բարօրությունը, և, որովհետև նրանք իրենց մեջ այդ կատարելու ուժ են զգում. այդ սխրանքները նրանց ոչ մի առավելություն չեն տալիս, հերոսները չեն խզում իրենց կապը ժողովրդի հետ։ Հասակ առնելուց հետո էլ նրանք չեն կորցնում իրենց հոգու մանկական անաղարտությունը, պարզասրտությունը, սգնության ամեն մի կանչի անհապաղ արձագանքելու հատկությունը։

Չնայած էպոսի լեզվի սեղմությանը, բառերի անսովոր ժլատությանը, ոճի մոնումենտալությանը, մանրամասնություններ նկարագրելուց խուսափելու ձգտումին, «Սասունցի Դավթի» էջերից իբրև կենդանի մարդիկ հառնում են հերոսների կերպարները՝ տղամարդ թե կին, որոնք այնքան տարբեր լինելով իրարից իրենց բնավորությամբ, միևնույն ժամանակ ունեն ինչ-որ ընդհանուր բան։

Էպոսն սկսվում է այն պատմությամբ, թե ինչպես Բաղդադի խալիֆի ուղարկած հարկահանները Հայաստան գալով՝ մի վառ լուսավորված աշտարակում հանկարծ տեսնում են հայոց Գագիկ թագավորի դստերը՝ Ծովինարին (ծովածին, ծովազն)։ Խելքահան լինելով նրա հիասքանչ ու հմայիչ կերպարանքից, նրանք թողնում են իրենց գործը, շտապում Բաղդադ և խալիֆին հայտնում, որ անհրաժեշտ է, ինչ գնով էլ լինի, ձեռք բերել այդ գեղեցկուհուն։

Խալիֆը դեսպաններ է առաքում Հայաստան, որոնք նրա անունից պահանջում են գեղեցկուհի Ծովինարին և սպառնում են շտալու դեպքում պատերազմի դուրս գալ։

Հայաստանում տարբեր կարծիքներ են ծայր առնում։ Ոմանք պընդում են, թե պետք է տալ Ծովինարին, ոմանք էլ առաջարկում են պատերազմել և շտալ արքայադստերը, քանի որ խալիֆը կռապաշտ է, իսկ աղջիկը՝ խաչապաշտ (այստեղ և էպոսի մնացած բոլոր մասերում մահմեդականները ներկայացված են իբրև կռապաշտներ)։ Սակայն Ծովինարն ինքը միանում է այն մարդկանց կարծիքին, ովքեր գտնում են, որ ավելի լավ է տալ աղջկան և խնայել հազարավոր մարդկանց կյանքը։

Ծովինար խանում ասաց.
— Ու ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
Ջամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն էն է, ես էրթամ,
Ուրիշ մարդու թող բան չընի։
Ե՛ս մենակ մեռնիմ իմ ճար թերեն.
Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
էն ճազար-ճազար ճոգիմ կորուսանին։
Դարձավ ասաց.— Հա՛յրիկ, ինձ տուր էնոր։

Ծովինարը պայման է դնում, որ խալիֆը մի ամբողջ տարի չմոտենա իրեն։ Խալիֆը համաձայնվում է և արքայադստեր համար հատուկ գղյակ է կառուցել տալիս։

Մի օր Ծովինարը դուրս է գալիս ծովափ զբոսանքի։ Համբարձման տոնն է լինում (հայ կանայք այդ օրը դուրս են գալիս դաշտ և բախտագուշակ կատակերգերով վիճակ հանում)։ Զբոսանքից հոգնելով, Ծովինարը առանձնանում է. հանկարծ նա ծարավ է զգում։ Երկնքին ուղղած նրա աղերսով ժայռի միջից վճիտ աղբյուր է բխում, և աղջիկն իր խմած ջրից հղիանում է։

Այնուհետև Ծովինարին տանում են Բաղդադ։ Պարզվում է, որ նա երեխա է ունենալու։ Խալիֆը մահվան դատավճիռ է կայացնում։ Արքայադուստրը խնդրում է մահապատիժը հետաձգել մինչև ծննդաբերության օրը, քանի որ այլապես իր հետ կմեռնի մի անմեղ էակ։ Ժամանակ են տալիս։ Ծովինարը երկու տղա է ծնում, մեկի անունը՝ Սանասար, մյուսինը՝ Բաղդասար։ Կրկին հայտնվում են դահիճները։ Բայց Ծովինարը դարձյալ ժամանակ է խնդրում երեխաներին կերակրելու և մեծացնելու համար։ Պատիժը մի քանի անգամ հետաձգվում է։ Այդ ժամանակամիջոցում խալիֆը մտերմանում է Ծովինարի հետ, և արքայադուստրը բարեհաջող կերպով խուսափում է մահապատժից։ Տղաները ոչ թե օրով, այլ ժամով են մեծանում և տակավին հինգ տարեկան չդարձած՝ ահ ու սարսափի մեջ են գցում Բաղդադի ավագանու երեխաներին, որոնց հետ նրանք խաղում են։ Այս հողի վրա վիճաբանություն է տեղի ունենում վեզիրի և խալիֆի միջև։ Վճռում են արտակարգ ուժի տեր տղաներին հեռացնել տանից, քանի որ խաղի մեջ նրանց ամեն մի հարվածից՝ մեկի վիզն է ծռվում, մյուսի ոտքն է ջարդվում։ Եղբայրները ճանապարհ են ընկնում իրենց պապի մոտ։ Կարճ ժամանակամիջոցում պատանի դյուցազուններ դառնալով, Սանասարն ու Բաղդասարը գնում են նույն ծովի ափը, որտեղ ժայռից բխող աղբյուրը նրանց կյանքի էր կոչել։ Ուզում են լողանալ։ Բաղդասարը սիրտ չի անում նետվել ծովի ալիքների մեջ, իսկ Սանասարը համարձակորեն ծով է մտնում, և այստեղ հրաշք է կատարվում։ Սանասարի առաջ ծովը հետ է քաշվում, տղան իջնում է նրա հատակը, ընկնում ստորերկրյա թագավորություն և այստեղ Մարութա Բարձրիկ Աստվածածինը նրան շնորհում է հռչակավոր Թուր-Կայծակին և Քուռկիկ Ջալալին։ Սա բացառիկ հատկություններ և արտակարգ ուժ ունի, օժտված է մարդկային լեզվով խոսելու ձիրքով, կարող է երկար ճանապարհ անցնել, թռչել մինչև արևը և իսկույն իջնել երկիր։ Քուռկիկ Ջալալին ամենից առաջ փորձում է Սանասարի ուժը. հսկային մինչև արևն է բարձրացնում, որ այրի, բայց Սանասարը իրեն գցում է ձիու փորատակը։ Քուռկիկ Ջալալին նետվում է ժայռերի վրա, որպեսզի ջախջախի Սանասարին, բայց դյուցազնը ճարպկորեն թռչում է ձիու մեջքին։ Ի վերջո նժույգը հնազանդվում է։

Սանասարը ծովի հատակում ձեռք է բերում զենք ու զրահ։ Նրա բազկի վրա դրոշմվում է հրաշագործ մի խաչ։ Խմելով ծովի ջուրը, նա այնպիսի հսկա է դառնում, որ եղբայրը նրան չի ճանաչում և սարսափահար փախչում է։ Սանասարին դժվարությամբ է հաջողվում Բաղդասարին համոզել, որ ինքը իրոք նրա եղբայրն է։

Շարունակում են իրենց ճանապարհը։ Եղբայրներին զարմացնում է այն, որ կապույտ ջրի մի բարակ շերտ կտրում-անցնում է մի մեծ գետի ամբողջ հոսանքը։ Գայթակղված այդ փոքր ջրի մեծ ուժից, Սանասարն ու Բաղդասարը գտնում են կապույտ ջրի ակունքն ու այնտեղ վիթխարի ապառաժներից ամրոց կառուցում։

Ու գնացին, գտան գաղբուր։
Էդ աղբրի ջուր լույա մի ջուր է,
Կէրբա, կը կտրե գիր տակի մեծ գետ։
Տեսան, անուշ ջուր էր, ու տեղն էլ էր անուշ։
Սանասար ասաց.— Էստեղ խորոտ է.
Աղեկ է, որ մենք էստեղ մնանք,
Մեզ համար տուն մի ու ֆոշֆ շինենք։

Իրենց ամրոցի շուրջը բնակություն հաստատելու համար եղբայրները 40 ընտանիք են բերում, ամրոց շինելուց առաջ նրանց համար 40 տուն են պատրաստում։ Երբ նրանք ավարտում են ամրոցի կառուցումը, վրճռում են նրան անուն տալ, քանի որ վերջինս թե՛ գեղեցիկ է, թե՛ մեծ, բայց անուն չունի։

Եվ ահա հանդես է գալիս մի կերպար, որ հանդիպում է նաև ռուսաց բիլիններում ու իրանական էպոսում՝ ծերունի սերմնացանը։ Պատանի եղբայրները նրան բերում են իբրև պատվավոր հյուրի, Քուռկիկ Ջալալու մեջքին նստեցրած ման են ածում ամրոցի շուրջը, և ծերունին քարաժայռերի մեծությունից ապշած՝ կնքում է ամրոցի անունը, ավելի ճիշտ՝ ասում է, որ անուն փնտրելու հարկ չկա, քանի որ ամրոցը տեղով-տեղ Սասուն է (ժողովրդական մեկնաբանությամբ՝ սարսափելի, ահռելի, ահարկու)։

Հալվոր նայեց դարգանի վերա,
Էդոր վերին նարկեր տեսավ,
Քարեր նանած էդա բարձր նարկեր,
Տեսավ քարափներ պատ շարած,
Զարմացած մնաց, նարցուց, ասաց.
— Էդո՞ր անուն դնեմ։
Ասված ձեր տուն շինի,
Ես ի՞նչ անուն դնեմ էս տան։
Ասված բարի տա ձեզ,
Դուք ինչքա՞ն ուժ ունիք,
Որ վեր նաներ եք էս մե՞ծ-մեծ քարեր։
Վա՜, էս ի՞նչ սասուն քարեր են.

Դուռ էն սասուն քարեր
Ի՞նչպես հաներ եք էն վերին տեղ,
Ու քարե սան սուն եք զարկե.
Էս տո՛ւն չեք շինե դուռ,
Ապա սասուն մ'եք շինե:
Վա՜, քանի սասուն բերդ մի.
Էս տուն չէ, էս սասուն է:
Սանասար ասաց.— Բա՛վ է, պապիկ,
Էլ ձեն մի՛ հանի, էլ անուն մի՛ դնի.
Ա՛յ պապի, անուն դրվավ.
Անուն էղավ Սասուն:
Քանց էղա ավել ի՞նչ անուն:
Որ դու ասիր՝ սասուն քարեր,
Քարե սան սուն եք զարկե.
Մեր բերդի անուն էղավ Սասուն, Սասուն,
Մեր տան անուն՝ Սասնա տուն:

Այսպես է մեկնաբանվում ամրոցի անունը։ Այստեղից էլ հենց ծագում է ամբողջ մարդի անունը, որը և հասել է մինչև մեր օրերը[1]։

Ահա ալեզարդ այս ծերունին է այն իմաստունը, որ կնքել է Սասնա ամրոցի անունը։

Սանասարն ամուսնանում է Քաջանց արքայադստեր՝ Դեղձունի հետ։ Երեք որդի են ունենում, դրանք են Մհերը, Զենով Հովանը և Վերգոն։

Սանասարը էպոսի առաջին ճյուղի գլխավոր հերոսն է։

Ոչ միայն իր հրեղեն ծագմամբ, այլև իր արարքներով նա բազմաթիվ թելերով դեռևս կապված է հնագույն առասպելների հետ, մարմնավորում է կոսմիկական էակի մի շարք գծեր, էակ, որ մարդկային արտաքին ունի, բայց իր մեջ բնության ուժեր է բովանդակում, կապված է բնության կենարար ու բարեբեր տարերքի՝ ջրի հետ։ Ջրից ծնված այս հսկան ջրից է ստանում իր անխոցելի զենք ու զրահը, ամենակործան սուրը, ջրից է ստանում իր հասակը, անսահման ուժն ու զորությունը։ Ջրից է ստանում իր հրաշալի քուռկիկ Ջալալին, որն օժտված է մարգարեական ձիրքով, կարող է մարդու պես խոսել, սլանալ հողմից արագ, ծովի խորքերից սուրալ մինչև արևը։

Առաջին ճյուղի հիմնական կերպարներից է գեղեցկուհի Դեղձունը։

Նա իր մեջ խտացնում է մայրիշխանության ժամանակների տան տիրուհու (և ո՛չ թագուհու) մի շարք գծեր, որոնցով նա տարբերվում է իր շրջապատի կանանցից և շատ-շատերից բարձր է կանգնած։

Զափազանց մոնումենտալ է այն դրվագը, երբ Դեղձունը Սանասարի

---

[1] *Այս պատմությունը հիշեցնում է այսպես կոչված «կիկլոպյան» շինությունները, որ մեզ են հասել Հայաստանի հնագույն բնակիչներից և տարածված են Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի տերիտորիայում։ Հավանաբար նման շինություններ եղել են նաև Սասունում։*

մահից հետո բազմամյա կամավոր ինքնաբանտարկումից հետո մոտենում է պատուհանին՝ նայելու իր թոռանը, որը կարողանում է կրել իր հսկա հոր ասպազենը, բարձրացնել ծանր թուրը։ Դեղձունի խոսքերը ուղղված սքանչելի Քուռկիկ Ջալալուն հնչում են ազնիվ մետաղի պես.

էլավ, իրան տեղեն կայնեց, ասաց.
— Իմ մուրազ կատարվեց, տ'էլնեմ դուրս.
Գնաց գլուխ փանջարեն վեր կախեց,
Աչքեց տեսավ՝ նորամանուկ Դավիթ
Մեհրի ձին հեծե, կայնե։ Կանչեց.
— Քուռկի՜կ Ջալալի, մեռնե՞մ քե, մուրա՞զ։
Դավիթ չատ զարմացավ, կայնեց։
Դեղձուն շարունակեց.— Քուռկի՜կ Ջալալի,
Իմ Դավիթ հեր չունի՝ անես հերություն,
Իմ Դավիթ մեր չունի՝ անես մերություն,
Իմ Դավիթ դու տանես իր նոր Կաթնով Աղբուր,
Դավիթ ձիուց իջնի, իջնի ջուր խմի,
Իմ Դավիթ դու տանես իր նոր փորձամար,
Դավիթ իր բուր զարկի, զարկի սան, փորձի։
Քուռկի՜կ, քե ամանաթ իմ նորամանուկ Դավիթ։

Դժվար է հավատալ, թե դա հենց այն Դեղձունն է, որն իր նամակով մի օր կախարդեց երկվորյակ եղբայրներին և նրանց սրտում բորբոքեց նոր, նրանց տակավին անծանոթ մի կրակ, հմայեց այնպես, ինչպես չէր կարողանա հմայել ոչ մի կախարդուհի, եթե չունենար այն հրապույրը, որ հատուկ է Դեղձունին՝ և՛ Սպիտակ ամրոցի գեռափթիթ միանձնուհուն, և՛ Տան մորը՝ Սասնա տիրուհուն, և՛ կռվի գնացող թոռանը բարի ճանապարհ մաղթող զառամյալ տատիկին։

«Սասունցի Դավիթ» էպոսի երկրորդ ճյուղի հերոսը Սանասարից և Դեղձունից ծնված Մեծ Մհերն է, որը հայտնի է Առյուծաձև Մհեր (առյուծ պատառող) մականունով։ Նա հորից ժառանգում է ոչ միայն հրաշագործ ասպազենը և իմաստուն նժույգը, այլև անմահական Կաթնաղբյուրից գերբնական ուժ ստանալու հատկությունը։

Օժտված լինելով անպարտելի ուժով, նա մարդկային միջավայրում, երկրային կյանքի բովում ձեռք է բերում մարդկային թուլություններ։ Մեծ Մհերը տոգորված է այն կրակով, որի համար Պրոմեթեոսը մարդու հանդեպ տածած սիրուց զանց առավ աստվածների կամքը, կրակ, որը մեծ Հերակլեսին կիսաստծուց դարձրեց մարդկային ցեղի հավատարիմ ծառա, ոչ թե անձնական փառքի, այլ մարդկային բարօրության համար սխրագործություններ կատարող հերոս։

Ունենալով գերբնական ծագում, անարատ աղբյուրի թոռը՝ Մհերը իր կյանքի առաջին իսկ օրերից ոչ թե տարիներով է մեծանում, այլ ժամերով։

Երիտասարդ հսկան, որը կարող է արմատահան անել ծառերը և տանել դրանք թեթև մահակի պես ուսին դրած, մտքովն էլ չի անցկացնում ձի նստելու հնարավորությունը, իսկ երբ առիթ է լինում նժույգ ընտրելու, ապա նրա ձեռքի ծանրության տակ ճկվում են մարտական լավագույն ձիերը։

Մանկական հոգու տեր միամիտ հսկան պատրաստ է իր բոլոր ուժները նվիրաբերելու հանուն մարդկային բարօրության։ Լսելով, որ երկիրը սովի է մատնված (հացի ճանապարհին մի հրեշավոր առյուծ է պառկած լինում), նա նետվում է թշնամու դեմ, մի կողմ է քաշում ամեհի գազանի հետ կռվելու եկած զորքը և մեն-մենակ, իր զորավոր ձեռքերով, երկու կտոր է անում առյուծին։

Կանչեց, մի ձեռ բալեց էդ առյուծի վերի՛ ծնոտ,
Մյուս ձեռ բալեց ներքի՛ ծնոտ,
Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,
Արե՛ց էնոր երկու կտոր։
Մեկ դրեց նամփու էս դին, մեկէլ՝ էն դին։

Այնուհետև Մհերը կռվի է դուրս գալիս հարևան երկրի վրա իշխող Հերմակ Դևի դեմ, որը փակել է աղբյուրի ճանապարհը, սպանում է Դևին և ամուսնանում նրա ամրոցում գերության մեջ տառապող շնաշխարհիկ արքայադստեր՝ Արմաղանի հետ։

Մհերը կռվի է դուրս գալիս նաև Մըսրա Մելիքի՝ Մոսուլի թագավորության դեմ։

Ժամանակ անց, երբ մեռնում է Մըսրա Մելիքը, նրա կինը՝ Իսմիլ խանումը, Մհերին խնդրում է գալ և օգնել իրեն իբրև անօգնական մնացած այրու։

Մհերը չի լսում Արմաղանին և վստահ իր հավատարմության ուժին՝ մեկնում է Մըսըր[1]։ Այստեղ նրան հարբեցնում են, տանում Իսմիլ խանումի պալատը, և նա հակառակ իր ցանկության դառնում է կրտսեր Մելիքի հայրը։

Մըսրա Մելիքի երակներում եռում է հսկա հոր արյունը, նա ժառան-

---

[1] Ժողովրդի հասկացողությամբ և ուսումնասիրողների կարծիքով այստեղ նկատի է առնված Եգիպտոսը, որն արաբները Մըսըր են անվանում։ Նման մեկնաբանությունը առիթ է տալիս մի շարք թյուրիմացությունների, ինչպես և անախրոնիզմների, քանի որ հայերի և Եգիպտոսի տիրակալների ընդհարումները վերաբերում են միայն Մամլուքների ժամանակաշրջանին։

Իրականում Մըսըր անվան տակ այստեղ պետք է հասկանալ Մոսուլը։ Եվ այն ժամանակ հասկանալի են դառնում էպոսի մի շարք մոմենտներ, մասնավորապես այն, որ երբ Դավիթը Սասնա մոտակայքում սպանում է բազմաթիվ ռազմիկների, գետը նետում վերջիններիս դիակները, Մըսրրում ապրող նրանց հարազատները տեսնում են ջրի հետ եկած մարմինները։ Հենց այդ գետը այն գետն է, որը Սասունը կապում է Մոսուլի հետ և պատկանում է Եփրատ գետի սիստեմին։

գել է նաև նրա ուժը, իսկ սրտում զգում է մարդկանց և բոլոր ժողովուրդների վրա իշխելու բուռն ծարավ, որը նրան ներշնչել է իր մայրը։

Լույս աշխարհ բերելով իր այդ որդուն՝ Մհերը դրանով իսկ Իսմիլ խանումի հոգում ծնում է այն հույսը, թե «հիմա կշողշողա Մըսրա աստղը, իսկ Սասնա աստղը կխավարի»։ Իսմիլի կողմից Մելիքին տրվող այդ խրատները, իբրև հրաշագործ հակաթույն, սթափեցնում են Մհերին, և նա իր հոր հրեղեն ձիով Մըսրրից (Մոսուլից) սլանում է հայրենի Սասուն։

Մհերը վերադառնում է իր սիրեցյալ կնոջ մոտ, որը երդվել է քառասուն տարի հրաժարվել ամուսնական կյանքից։ Բայց Մհերը խախտել է տալիս նրան այդ երդումը, ցանկանալով վառել Սասնա ճրագը, որպեսզի վերջինիս լույսից խավարի Մըսրա աստղը, և իր ուստրերն ու դուստրերը պաշտպան ունենան այն աղետների դեպքում, որ կարող է նրանց գլխին բերել Մըսրա Մելիքը։

Իրականանում է Մհերի ու Արմաղանի երազանքը—ծնվում է Դավիթը, շիրիմ է իջնում Մհերը, շիրիմ է իջնում Արմաղանը։

Սկսվում է էպոսի երրորդ՝ գլխավոր ճյուղը։

Մհերի և Արմաղանի մահից հետո հարց է ծագում, ինչպե՞ս կերակրել մանուկ Դավթին։ Սասունցի բոլոր ստնտուների կաթից երեխան հրաժարվում է։ Վճռում են նրան տանել Իսմիլ խանումի մոտ։ Գուցե Դավիթը չհրաժարվի այդ կնոջ կաթից, որը իր հոր հետ նույն մահիճն է կիսել։ Բայց ինչպե՞ս ուղարկել։ Ճանապարհը հեռու է և դժվար։ Տղային կապում են Քուռկիկ Ջալալու մեջքին, և սա մանկանը հասցնում է Իսմիլ խանումի մոտ։ Դավիթը սնվում է նրա կաթով, ինչպես և Սասունից բերած յուղով ու մեղրով, հասակ առնում իբրև մի դյուցազուն։

Նա ավելի արագ է աճում, քան Մըսրա Մելիքը, ոչ թե օրով, այլ ժամով, ոչ թե ժամով, այլ րոպեներով։ Երեք-չորս տարում այնպիսի փահլևան է դառնում, որ խաղի ժամանակ բռնում ու դեն է շպրտում Մըսրա Մելիքի նետած մկունդը։ Դավիթը սարսափ է ազդում Մելիքին։

Մըսրա Մելիքը, տեսնելով փոքրիկ Դավթի ուժն ու դյուցազնությունը, նրան փակում է մթին զնդանում, ուր չի թափանցում արևի և ոչ մի շող։

Որպեսզի մանուկ հսկան զրկված լինի որևէ զենքից, նրա բաժին ճաշի միսն անգամ ոսկրահան են անում։ Հանում են նույնիսկ մրգերի միջի կորիզները։

Բայց այնպես է լինում, որ ճաշ բերողին վիրավորում են Մըսրա Մելիքի պալատականները, և սա բարկությունից Դավթին ոսկրոտ միս է տալիս։ Դավիթը ճաշն ուտում է և ոսկորը շպրտում պատի կողմն այնպիսի ուժով, որ զնդանի պատը քանդվում է, և ճեղքից ներս է ընկնում արևի շողը։ Դավիթը չգիտե, թե ի՛նչ բան է դա, կարծում է՝ կենդանի էակ է և կատաղի գոտեմարտի է բռնվում հետը։

Դաստիարակից Դավիթը իմանում է, թե ինչ բան է արևը։ Երկար աղերսանքից հետո նրան դուրս են հանում զբոսանքի։

Դավթի ամեհի ուժը նորից տեսնելով, Մըսրա Մելիքը վճռում է ազատվել նրանից։ Երկու հոգու ուղեկցությամբ նրան ետ են ուղարկում Սասուն, պատվիրելով, որ ճանապարհին սպանեն տղային։ Ուղեկցողներից մեկը Դավթի հոր՝ Մհերի հավատարիմ ծառան է, մյուսը՝ ավագ Մըսրա Մելիքի մերձավորը։ Բաթմանա կամրջին հասնելով, սրանք ուզում են սպանել Դավթին, բայց շրջահայաց տղան գլխի է ընկնում։ Գուշակելով իր ուղեկիցների մտադրությունը, երկուսին էլ կամրջից վեր է բարձրացնում և պահում օդի մեջ՝ մեկին աջ ձեռքով, մյուսին՝ ձախ, մեկին՝ գետի հոսանքն ի վեր, մյուսին՝ հոսանքն ի վար և սպառնում, որ կխեղդի շան լակոտների պես։

Բանը նրանով է վերջանում, որ Դավթի հոր հավատարիմ ծառան տղայի կողմն է անցնում, վճռում ծառայել նրան, իսկ մյուսը ետ է դառնում Մըսրը, որ Մելիքին պատմի, թե այնքան էլ հեշտ չէ Դավթի «գլուխն ուտելը»։

Դավիթը Զար Բահար Քամու հետ գալիս է Սասուն։

Սկսվում է Դավթի կյանքը Սասունում։ Երբ նա տղաների հետ կատակ է անում, ծովում են սրանց վզերը, դուրս են ընկնում ձեռքերը։

Գլուխներն ազատելու համար Դավթին գառնարած են կարգում։ Պողպատե տրեխներ են հագցնում, պողպատե գավազան են ձեռքը տալիս։ Դավիթը, գառների և ուլերի հոտն առաջն արած՝ սարերն է բարձրանում։ Քնով է անցնում, գառներն ու ուլերը ցրվում են, իսկ երբ մանուկ հովիվը աղնրանց ուզում է հավաքել, չի ջոկում, թե ո՛րն է գառը, ո՛րն է ուլը, աղվեսն ու նապաստակը. բոլորին քշում-բերում է, լցնում քարանձավը։ Երբ հորեղբայրը հաց է բերում, տեսնում է, որ փարախը լեփ-լեցուն է գազաններով։

Դավիթը գազաններին քշում-բերում է քաղաք։ Սասունցիները մորթում են նապաստակները, միսն ուտում, մորթում են աղվեսները և ձմռան համար մուշտակներ կարում։

Հետագայում Դավթին նախրապան են կարգում։ Սա էլ քշում, քաղաք է բերում արջեր, գայլեր, առյուծներ, վագրեր. ոչ ոք սիրտ չի անում գլուխը տնից դուրս հանել։

Դավիթը նետ ու աղեղ է պատրաստում և հրապուրվում թռչունների որսով։ Մտքովն էլ չի անցնում, թե տրորում է այն պառավի արտը, որին մի ժամանակ (Դավիթն այդ չգիտեր) սիրել է Մհերը։ Տեսնելով, որ իր արտը ոտնատակ է լինում, պառավը պատմում է Մհերի որսասարի մասին։ Դավիթը գնում է այնտեղ և տեսնում այդ վիթխարի որսասար-գազանանոցի անվթար մնացած շրջապարիսպը։

Դավթին շրջապատող մարդիկ առաջարկում են նրան կրակել որսի

վրա, բայց Դավիթը վճռականորեն առաթկում է։ Նա ասում է, որ պարսպի մեջ փակված կենդանիներին սպանելն անթույլատրելի է և մեղք է։

Ջենով Հովան ասաց.

— Հրաղբե՛ր մեռնի քեզ, Դավիթ,
Ձա՛րկ, ճա՛տ մի ըսպանի, բոնեմ զենեմ։
Դավիթ ասաց.— Հրաղբեր, ջանըմ,
Կապուկ տեղ պա՛պս էլ կզարկի.
Տղամարդն է՛ն է, որ արձակի ու ետ՛ զարկի.
Ձէ՞ որ էնոնք գերի են, հրաղբեր,
Մարդ էլ գերին զարկի՞։

Նա ցանկանում է, որ ուժի և ճարպկության մրցումը տեղի ունենա հավասար պայմաններում։ Քանդում է պարիսպը, բաց է թողնում կենդանիներին, ապա ասում. «Որս անողը թող հիմա անի»,— և ինքն է սկսում որս անել։

Որսից հետո հոգնած Դավիթը քնում է ծառի տակ։ Երբ հանկարծ արթնանում է, լեռան բարձունքին մի զարմանալի լույս է տեսնում։ Գնում է դեպի լույսը, և նրա դեմ կանգնում է լուսաճաճանչ մի շինություն, որտեղից բոց է հառնում։ Դավիթն այստեղ մի հրաշալի ձայն է լսում։ Այդ ձայնն ասում է, որ երիտասարդ հսկան պետք է վերաշինի Մարութա վանքը։ Դավիթը Ջենով Հովանին հարցնում է Մհերի մասին, իմանում է, որ այստեղ է Մհերի դամբարանը, այստեղ է եղել նրա կառուցած և արաբների ձեռքով ավերված Մարութա վանքը։

Դավիթը շրջահայաց է. լույսը տեսնելուն պես գետնի վրա իսկույն գծում է շենքի հատակագիծը, վճռում է վերակառուցել վանքը։ Տեսիլը չքանում է, իսկ գծագիրը մնում է գետնին։ Դավիթը մեծ թվով վարպետներ է կանչում և մի գիշեր, մի ցերեկ չանցած՝ շինում է վանքը։ Բայց հենց որ լույսը բացվում է, վանքը քանդված են տեսնում. քարերը դես ու դեն են ընկած, կիրը մի տեղ է կիտված, ավազը՝ մի տեղ։ Վանքի հետքն անգամ չի մնացել։ Նրան մի այլ տեսիլք է հայտնվում, և նա իմանում է, որ շենքի հիմքում պետք է դրված լինի իր թուրը։ Թուրը գնում է շենքի հիմքում, տաճարը կրկին կառուցվում է, և այնտեղ են տեղափոխվում վանականները։

Այդ օրվանից Դավիթը փոխվում, հասուն մարդ է դառնում, թեև նրա մեջ տակավին շատ է մանկական շարաճճիությունը։

Դավիթն իր հոր որսասարում շարունակ որս է անում։ Մի անգամ էլ, երբ նա այստեղ որս է անում, Մըսրա Մելիքի հարկահանները Սասուն են գալիս յոթ տարվա հարկը տանելու։ Տուն վերադարձած պատանին տեսնում է, որ հորեղբայրը, Սասունն ավերելու սպառնալիքից ահաբեկված, արաբների համար ոսկի է չափում։

Դավիթը միջամտում է։ Հարկահաններին ոչ մի ոսկի չի տալիս։ Ավե-

լին. ջարդում է գլխավոր հարկահանի՝ Կողբադնի գլուխը։ Այս դրվագը միակն է ամբողջ էպոսում, որտեղ խախտված է գեղարվեստական չափը, քանի որ ահավոր կերպով, վառ ու կոպիտ ձևերով տրված է հարկահանին այլանդակելու տեսարանը, Դավիթը նրա ատամները հանում, ճակատին է շարում, կտրում շրթունքները...

Որոտաձայն մարտակոչով և սեփական արյունով գրած հրովարտակով Մըսրա Մելիքը իր հպատակ բոլոր երկրներից զորք է հավաքում և գնում Սասնա դեմ պատերազմելու։ Նրա հետ են Մըսրա զորքերը, յոթ հպատակ թագավորների զորքերը։ Բանակն այնքան մեծաթիվ է, որ զինվորները մի-մի կում ջուր խմելով՝ ցամաքեցնում են գետը։ Թշնամու դեմ ելնում է Դավիթը՝ Քեռի Թորոսի և նրա 39 որդիների հետ։

Արտատեր պառավի խորհրդով Դավիթը ձեռք է բերում հոր զենքն ու զրահը։ Դրանք Դավթի համար չափազանց մեծ են, Քուռկիկ Ջալալուն էլ դժվար է հնազանդեցնել։ Բայց հրաշագործ աղբյուրի ջուրը խմելով, նա հսկա է դառնում և հոր զենքն ու զրահը հագած՝ արշավում դեպի արաբական բանակը։ Հարձակվելուց առաջ նա երեք անգամ որոտաձայն գոչում է.

— Էհե՛յ,
Ով ինած է՝ արքուն կացեք,
Ով արքուն է՝ ձիե՛ր թամբեք,
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,
Ով կապեր է՝ էլե՛ք, ճեծե՛ք.
Ձասեք Դավիթ զող-զող եկավ,
Գող-զող գնաց։

Եվ ահա սկսվում է զարհուրելի մի ջարդ։ Դավիթը աջ ու ձախ կոտորում է, մինչև որ նրան մի արաբ ծերունի է մոտենում և ասում հիանալի խոսքեր, այն մասին, որ պատերազմողները թագավորներն են, իսկ ժողովուրդները կռվելու, իրար կոտորելու ոչ մի ցանկություն չունեն, քանի որ միմյանցից որևէ բան չեն ուզում խլել։

Մըսրա Մելքի զորքի մեջեն մարդ մի էլավ,—
Մեկ ալեոր — յոթ տղու ճեր։
Մելիք էնոր յոթ տղեկներ զոռովե՛ն էր բերեր կռիվ։
Էդ ալեոր ասաց.— Հե՛յ-վախ, հե՛յ-վախ...
Դուրս էկավ էն՝ առանց զենքի ու գլուխբաց՝
Զորքի մեջեն վազեց,
Ասաց.— Ճամփա՞ տվեք, էրթամ Դավթի առաջ։
Մի խոսք ասեմ, էսա զորք ազատեմ կռվից։
Էկավ, կանգնեց Դավթի առաջ,
Ասաց.— Դավի՛թ, մեռնե՛մ քեզի,
Ակա՛նջ արա. ձիդ դադրեցրու,
Գամ՝ քեզի խո՛սք ա՛սեմ։
— Ի՞նչ ա՛սես ինձ, ճալվո՛ր,— ճարցուց Դավիթ։

— Դավի՛թ,— ասաց,— մեռնե՛մ քո արևուն:
Չէ՞ որ էնոնք էլ մա ըդ են, իսա՛ն են.
Ինչի՝ կը կոտորես, ինչի՞ կը սպանես.
Չէ՞ էդոնք է՛լ էրեխանե՛ր ունեն,
Տո՛ւն ու կրնի՛կ ունեն:
Էնոնց սպանես՝ ճժերու մեղք կ'բնկնի քո վիզ:
Աղքատ ու խեղճ մարդ են էդոնք.
Որը իր մոր մեկուճարն է,
Որը նոր պսակված տղա,
Որը իր օջախի սունն է,
Որը ճանգած մի տան նրագ:
— Ապա ինչի՞ էկած են, ճետ ինձ կը կռվեն:
Պատասխանեց.— Մեզ ի՞նչ մեղք կա.
Մըսրա Մելի՛քն է զոռովեն բռնե, բերե.
Մըսրա Մելի՛քն է քո դուշման,
Դրնա իր ճետ կռիվ արա:
— Ապա Մելիքն ո՞ւր է ճիմա:
— Ա՛յ, էն կանաչ վրանի տակ քնա՛ծ է, տե՛ս,
Ոսկի խնձորն էնոր շադրի գլխին դրուկ.
Յոքն ազապ աղջիկ էնոր ճանն կը քշեն,
Յոքն ազապ աղջիկ էնոր օտ կը մաժեն:
Էն վրանից մուխ որ կ'ելնի՝
Էն մուխն էլ ճո մուխ չի,
Էն շոգե լքն է էնոր բերնի:
Դու որ էրթաս Մելիք սպանես՝
Էդ զորք ճեզի աղոթք տ'անի,
Տի խնդանա ու ամեն մեկն իր տուն տ'էրթա:
Էդտեղ Դավիթ խղճավորվավ,
Զորք չարդել վերջացուց,
Դարձավ ասաց.— Հալվոր,
Աղե՛կ խոսք ասացիր.
Ես քո ասած տ'անեմ:

Դավիթը սլանում է Մըսրա Մելիքի վրանը։ Հանդես բերելով մեծագույն ազնվություն, ուղղամտություն և մեծահոգություն, գոտեմարտում սպանում է Մըսրա Մելիքին, ոչնչացնում նրան, ում պատերազմ էր պետք, խաղաղությամբ ազատ է արձակում Մելիքի զորքը, նախազգուշացնելով, որ այլևս երբեք չհարձակվեն Սասնա վրա։

Դավիթ ձիու գլուխ շրջեց,
Էլավ, գնաց մեջ զորքերին,
Ինչ զորք, զորական մնացե՝
Կանչեց, ճրամայեց, ասաց.
— Ամենիդ իրավունք կը տամ.
Ուրտեղեն էկեր եք՝ էլեք գնացեք՝ ձեր տեղ:
Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք,
Դուք ինձ ճամար աղո՛թք արեք,
Իմ ճորն ու մորն էլ օղորմի՛ տվեք.

Հանդա՛ռ կացեմ,
Մեկ էլ չ'էլնեմ ու գամ վեր Սասնա:
Մեկ էլ որ գենմ առնեմ մեր դեմ,
Թե որ դուռ կովի գամ վեր մեզ՝
Քառասուն գազ խոր ճորում բլնեմ,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'էլնի ձեր դեմ Թուր Կեծակին:

Հաղթական պատերազմից հետո վճռում են ամուսնացել Դավթին։ Պարզվում է, որ հարսնացու արդեն գտնվել է։ Դա գեղեցկուհի Խանդութ խաթունն է։ Նա Դավթի մոտ գուսաններ է ուղարկում, որոնք և դյուցազնի ներկայությամբ գովում են աղջկա գեղեցկությունը։

«Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին.
էնոր բոյ գյոլու եղեգ նման է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին.
էնոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին.
էնոր բերան մեղրով բացած է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին.
էնոր ատամներ մարգարիտ շարած է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին.
էնոր աչքեր գինու կրխա է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդուբ խանում Դավթին»:

Լսելով գուսանների գովքը, Դավթիթը հիացած գնում է Խանդութի մոտ։

Խանդութի ամրոցում նա հանդիպում է 39 կտրիճների, որոնք տարբեր երկրներից եկել էին նրա ձեռքը խնդրելու, բայց նրանցից և ոչ մեկը չէր կարողացել նվաճել աղջկա սիրտը։ Դավիթն առաջին իսկ հայացքից տիրանում է Խանդութի սրտին և որպես ընծա ստանում է սիրո խնձորը։

Վերոհիշյալ կտրիճները որոշում են Դավթին մեջտեղից դուրս բերել։ Խնջույքի ժամանակ նրանք իրենց թրերը թաքցնում են սեղանի սփռոցի տակ, որպեսզի Դավթին հարբեցնելով սպանեն։ Տեսնելով այդ, Խանդութը պատվիրում է Դավթի առաջ արծաթյա մեծ սկուտեղ դնել, իսկ ինքը մի պարկ կաղին առած՝ բարձրանում է վերնասրահը։ Ամեն անգամ, երբ քունը Դավթին հաղթահարում է, Խանդութը վերևից կաղիններ է գցում սկուտեղի վրա և չի թողնում, որ նա քնի։ Երբ խնջույքը Դավթին ձանձրացնում է, նա պատվիրում է վերցնել սփռոցը։ Տեսնելով թաքցրած թրերը, Դավիթը ձեռքով դրանք կտոր-կտոր է անում, տալիս ախոռապանին, որ Քուռկիկ Ջալալու պայտերի համար մեխեր պատրաստեն։

Դավիթը լավ է հիշում մերձավորների և հարազատների հանդեպ ունեցած իր պարտականությունը։ Երբ տակավին փոքրիկ տղա է լինում, նրան փորձում է գայթակղեցնել հորեղբոր՝ Ջենով Հովանի կինը։ Ցեղ-

բայի և Իպպոլիտի այս պատմությունը էպոսում դրսևորված է արտակարգ ցայտունությամբ։ Դավիթը փակում է աչքերը, երբ հորեղբոր կինը լողանալիս նրան պատվիրում է ջուր լցնել իր գլխին, որպեսզի տղան տեսնի իր մերկ մարմինը։ Ամուսնուն զայրացած ասում է, թե Դավիթն իբր կամենում էր իրեն խայտառակել։ Հորեղբայրը հավատում է և Դավթին վտարում տնից։ Հորեղբոր կինը երկրորդ անգամ է տղային փորձում, բայց սա երկրորդ գայթակղությանն էլ տեղի չի տալիս։ Դիմանում է նաև երրորդ փորձությանը, մնում է մաքուր ու անարատ։

Մի հանգամանք Դավթի կյանքում ճակատագրական է լինում։ Նա անակնկալ սիրահարվում է Զմշկիկ-սուլթանին և խոստանում նրա մոտ վերադառնալ յոթ օր հետո, բայց այդ մասին հիշում է միայն յոթ տարի անց, երբ Զմշկիկից արդեն ծնված է լինում իր դուստրը։

Սասունի ճանապարհին հոր և որդու (որին Դավիթը դեռ չէր տեսել) միջև մենամարտ է սկսվում։ Երկուսի համար էլ այդ մենամարտը շատ ծանր է լինում, որովհետև երկուսն էլ զորավոր ուժի տեր են։ Թեև Մհերն ավելի ուժեղ է, բայց չի կարողանում հաղթել արդեն ուժասպառ եղած, բայց անխոցելի Դավթին։ Կռվին վերջ է տրվում Դավթի կնոջ և Մհերի մոր՝ Խանդութ խանումի միջամտությամբ։ Դավիթն անիծում է որդուն՝ դատապարտելով նրան ամլության և անմահության։

Վերադառնալով Զմշկիկ-սուլթանի մոտ, Դավիթը սպանվում է իր հարազատ աղջկա արձակած նետից։

Էպոսի կենտրոնական հերոսի՝ Դավթի կերպարը տրված է առանձին լիակատարությամբ։

Մեծահոգություն—ահա այն գիծը, որ հատուկ է Դավթին։ Ի՞նչ փույթ, որ թշնամին, ոխերիմ թշնամին, արդեն երեք անգամ հարվածել է մկունդով։ Եթե նրան իր կաթով սնած կինը խնդրում է, ապա նա բաշխում է առաջին զարկը և իջեցնում վեր բարձրացրած սուրը։ Երկրորդ զարկն էլ է բաշխում, քանի որ այս անգամ էլ խնդրում է թշնամու քույրը, որը Դավթին մի ժամանակ խաղացրել է իր ծնկներին։ Նա իջեցնում է երրորդ կործանարար հարվածը, թեև գիտե, որ նենգավոր թշնամին մենամարտը համարձակորեն շարունակելու փոխարեն հորի խորքն է մտել, վրան քացել քառասուն գոմշի կաշի և քառասուն ջրաղացաքար։

Դավթի մեծահոգությունը անխորտակելի ժայռի պես ամուր հիմք ունի՝ հաղթանակի հավատ, իսկ այդ հավատը բխում է հայրենիքն ու հարազատ ժողովրդին պաշտպանելու արդար գործի անսասան գիտակցությունից։

Դավթի համար բնորոշ է մի այլ գիծ ևս։ Նույնիսկ ոխերիմ թշնամու դեմ կռվելիս, երբ մտադիր է նրան անխնա ոչնչացնել, աշխատում է իր համար չստեղծել առավել շահավետ պայմաններ. հանկարծակի չի հարձակվում չնախապատրաստված հակառակորդի վրա։

Դավիթը երկու անգամ է գրոհում թշնամու բանակի վրա։ Առաջին անգամ նա պետք է բախվի Մըսրա Մելիքի անթիվ, անհամար զորքի հետ, երկրորդ անգամ՝ Պապ-Ֆրենկի վիթխարի բանակի։ Երկու անգամն էլ, չնայած իր հուզմունքին, որն այնքան վառ են նկարագրում բանաստեղծները, Դավիթը չի մոռանում կանգնեցնել, սանձահարել իր ձին և բանակի մի ծայրից մյուս ծայրը հնչող որոտանման ձայնով ազդարարել, որ թշնամին արթնանա, զենք վերցնի, ձի հեծնի, պատրաստվի կռվելու։

Սա նման չէ այն մարտակոչերին, որոնցով Իլիոնի պատերի տակ և բարձր պարիսպների վրա աշխատում են իրար բորբոքել հելլեններն ու տրոյացիները։ Սա նման չէ այն լեզվակռվին, որով մխիթարվում է Սանասարը կտրիճների հետ գոտեմարտելիս։ Ոչ էլ թշնամուն գրգռող այն խոսքերին է նման, որոնք հաճախ գոտեմարտի նախաբանն էին համարվում, ինչպես դա հայտնի է տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդին պատկանող չափածո և արձակ բազմաթիվ նկարագրություններից։ Դավթի մարտակոչը սեղմ, հատու և շգրգռող կոչ է։

Այդ կոչն արդյոք այն պատճառով չէ՞ այդքան սեղմ, հատու, հանդարտ և անմիջական, որ էպոսում նկարագրված է ոչ թե ասպետների համար սովորական դարձած տասնյակ ճակատամարտերից մեկը, այլ մարտական հանգամանքներին անսովոր մարդու՝ ոչ թե սուր, այլ հովվական մահակ ու գութանի մաճ բռնող ասպետի մուտքը ռազմաբեմ։ Դավիթը կարիք չի զգում թշնամուն ծաղրելու, քանի որ նրան ոչ թե կռվի պրոցեսն է հրապուրում, նա ոչ թե փառքի համար է ուզում հաղթել, այլ հայրենիքի բարօրության։ Հարկ չկա, որ նա բորբոքվի։ Ձավթիշների նկատմամբ Դավիթը լցված է այրող ատելությամբ և ուզում է նրանց հաղթել, կոտորել, արտաքսել և ոչ թե փառաբանվել։

Դավիթը, ինչ գործ էլ անի, կրակոտ է, կռվի մեջ անզուսպ, ամբողջովին կիրք ու կորով, սակայն կատաղության ամենախելահեղ նոպայում էլ կարող է հանկարծ մեղմանալ, դառնալ հեզ ու հնազանդ, եթե մոլեգնությանը հակադրվում է քնքշանք, թեկուզ գորովալից մի խոսք։ Ինչպե՞ս է փոխվում Դավիթը, երբ հրաժեշտ է տալիս իր հորեղբորը՝ Ձենով Հովանին։

Դավիթը միշտ էլ աչքի է ընկնում ուղղամտությամբ, անկեղծությամբ և պարզությամբ։ Սքանչելի է նրա հիացմունքի պոռթկումը, երբ զմայլվում է Խանդութի գեղեցկությամբ և ամբողջ կերպարով, սքանչելի են մանկական անաղարտ անմիջականությամբ համակված երեք համբույրը, որոնցով նա ողջունում է Խանդութին, և որոնցից մեկը՝ երրորդը, գեղեցկուհու զայրույթն է շարժում։ Դավիթը հեռանում է դառնորեն վիրավորված ոչ թե այն պատճառով, որ Խանդութը բռունցքով հարվածում է նրան և քիթն արյունլվա անում, այլ այն պատճառով, որ իրեն չհասկացան։ Միայն սիրահարված զույգի հոգու մաքրությամբ կարելի է բացա-

տրրել այն անսովոր հմայքը, որով լի է երեք հաւ՞բույրի, դրանց համար տրված պատժի և հպարտ Խանդութի ներումն հայցելու դրվագը։ Խանդութ խաթունը, իր կյանքում առաջին անգամ, բորիկ ոտքերը քարերին տալով, արյունվա անելով, վազում է վիրավորված, դյուրաբորբոք դյուցազնի հետևից։

Դավիթը, որ ընդունակ է կատաղելու, ձեռք բարձրացնելու զառամյալ հորեղբոր վրա, հանգիստ և առանց վրդովմունքի է ընդունում իր անձին սպառնացող դավաճանությունը։

Էպոսի երրորդ ճյուղի երկրորդ կարևոր անձը Խանդութ խաթունն է։ Սա կամքի տեր կնոջ կերպար է, կին, որ իր մոտ է կանչում հիանալի ընտրյալին, իր ձեռքին է պահում ընտրություն կատարելու իրավունքը։ Ինչպես Դեղձունի պալատի պատերի տակ են տոչորվում նրանով կախարդված քառասուն կտրիճները, որոնց քմահաճ գեղեցկուհին զառամյալ ծերուններ է դարձնում, այնպես էլ Խանդութի պալատի ներքնահարկի խնջույքասրահում յոթ տարի տառապում են քառասուն հիասքանչ կըտրիճ։ Եթե Խանդութը ժողովրդի գիտակցության մեջ ապրեր այն ժամանակ, երբ ստեղծվել է Դեղձունի կերպարը, ապա նա էլ, շնաշխարհիկ կնոջ հմայքին առընթեր, օժտված կլիներ նաև կախարդուհու ձիրքով։

Դեղձունին Խանդութը հարազատ է դառնում նաև նրանով, որ նա որոշ առնչություն ունի գրքացության հետ։ Խանդութը «գրքերից» իմանում է, որ կռվի դաշտում Դավթի դեմ մարտնչողը նրա ազգականն է՝ պարոն Աստղիկը։

Դավթի մոտ գուսաններ ուղարկելիս Խանդութի մտքով չի անցնում, թե առաջին իսկ հանդիպումը իրեն մեկընդմիշտ սիրո գերի կդարձնի, ո՛չ պակաս քան Դավթին։ Բայց նույնիսկ այն սերը, որն աղջկան ստիպեց վազել նժույգով հեռու սլացող վիրավորված սքանչելի պատանու հետևից, աղերսել, որ նա ետ դառնա, այն սերը, որ սովորեցրեց կաղիններ նետել արծաթյա սկուտեղի մեջ՝ իր սիրեցյալի քունը վտանգի պահին վանելու համար, ստիպեց գիշերային խավարում, ռազմադաշտում ընկած դիակների մեջ որոնել իր սիրեցյալի դին, այն սերը, որ նրա հոտոտելիքը սրել էր Դավթի թաշկինակը հոտառությամբ ճանաչելու աստիճան, նույնիսկ այդ մեծ սերը ի վիճակի չէ խախտելու այն երդումը, որ տվել էր Խանդութը՝ ամուսնանալ միայն այն տղամարդու հետ, ով կկարողանա իրեն գետնել։

Խանդութը թշնամու արյամբ ողողված դաշտում կռվի է բռնվում իր սիրեցյալի հետ։ Աղջիկը նրան չի ճանաչում, բայց Դավիթը գիտե, թե ով է իր դեմ մարտնչողը։ Խանդութի այս գոտեմարտը առավել ցայտուն է դրսևորում նրա դյուցազնական ներքնաշխարհը։

Որքան իր ուժի և հակասական ամբողջության մեջ գեղեցիկ է Խանդութը, նույնքան գեղեցիկ է և նրա մահը։ Իր մահվամբ Խանդութը կյանք

է տալիս երկու աղբյուրի, որոնք բխում են այն ժայռից, որի վրա փշրվում է իր «աննման Դավթի» դին, տեսնելով աշտարակից իրեն ցած նետած հավատարիմ կնոջ կուրծքը։

Համա խանդուր էլած տանիմ,—
Բարձր էր իրենց տանիմ,
Քարերու վրա էր շինած,—
Ամեն կողմ կ'իրիշկեր, տեսներ՝
Դավիթ ո՞ղջ կըգա, թե՝ մեռած։
Խանդուր իրիշկեց, տեսավ, որ
Ջրինդ խաղալով կը գան էղոնք,
Դավիթ ճեծեր է մեկ ուրիշ ձի,
Իսկի չի խլվլա իր տեղեն։
Էն հասկացավ, որ Դավիթ մեռած է.
Ասաց.
«Որ աժեց, էկավ,
Որ չ'աժեց, էկավ,
Իմ կանաչ կտրին Դավիթ չ'էկավ»։

Էն ոտիակ Ցռան Վերգոն
Էնտեղ տանմի վերան կայնած էր.
Առաջ էկավ՝ վերցուց, ասաց.
— Դավիթ մեռավ առանց կռիվ.
Էն մեռավ, ես քեզի անուշ.
Կը պակսի քե կտրին Դավիթ,
Չի պակսի պարոն էրիկ։
Խանդուր դարձավ ասաց.
— Ըստուց էտև արև-լուս ինձի հարամ ըլնի,
Էտև Դավթին ես աշխարք չեմ մնա։

Էս անգամ խանդուր էլավ բերդի գլուխ
Ու էնտեղեն իրեն թալեց.
Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս։
Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ
Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ։
Էնոր ծծերի տեղ հիմի էլ էրկու աղբուր կը թալի։
Ցոր նուղ ծամի տեղ էլ հիմի կ'էրևա,
Քանց յոր սուն կը սեվկրաի։
Ու հիմի էլ սանդ էնտեղ է, բերդի առաջ։

Դավիթն ու խանդուրը թե՛ կյանքում, թե՛ շիրիմում՝ օձերի ու կարիճների բների տակ, որտեղից վշտով ու իմաստությամբ լի պատասխան են տալիս իրենց շիրիմին խորհրդի համար այցի եկած Մհերին, մեծ վարպետի կերտած փոխադարձ վսեմ սիրո հուշարձան են։

Շատ չէ նման սիրահարների թիվը, որ պահպանել է մարդկային հիշողությունն իր ստեղծած գեղարվեստական կերպարների մեջ։ Արևմուտքում Տրիստանի և Իզոլդայի, Պաոլոյի և Ֆրանչեսկայի, Իրանում՝ Վիսք

և Ռամինի, քրդերի մոտ՝ Մամեի և Զինեի միջ մարմնավորված փոխադարձ հարատև սիրո գաղափարը հայկական էպոսում իր դրսևորումն է գտել հանձինս Դավթի և Խանդութի։

Խանդութ խաթունի կատարյալ հակադրությունն է հանդիսանում Զենով Հովանի կինը՝ Սարիեն։

Նա չի հրապուրում, այլ վանում է իր անսանձ անառակությամբ, կեղծավորությամբ և կամակորությամբ։ Սարիեն հանդես է գալիս հելլենական Ֆեդրայի դերում, այն տարբերությամբ, որ Դավթին զրպարտելուց և տնից վտարելուց հետո էլ նա չի հրաժարվում տղայի հանդեպ տածած կրքից։ Էպոսում սա միակ կինն է, որն իր մարմնական սերը խառնում է համեղ ուտելիքի և գինու հետ, միակ կինը, ընդունակ որոշելու, թե որքա՞ն է թունդ այն գինին, որ մատուցվելու է նրան դուր գալու դրժբախտությունն ունեցող պատանուն, գինի, որից Դավիթը պետք է թմրի և ոչ թե քնի։

Իսմիլ խանումն էլ թմրեցնում, հարբեցնում է Մհերին և յոթ տարի նրան պահում գինովության մեջ, սակայն Իսմիլին ոչ թե կիրք հագեցնող սիրեկան է պետք, այլ արիասիրտ կտրիճ, որը կամա թե ակամա, զգաստ թե հարբած վիճակում, նրան որդի պարգևի։ Տակավին չծնված, թեկուզ գահն ամրապնդելու համար անհրաժեշտ, որդու հանդեպ ունեցած սերը արդարացնում է Իսմիլ խանումի գործադրած խորամանկությունը, երբ նա համոզվում է, որ ո՛չ իր գեղեցկությունը, ո՛չ էլ ընտրյալ կտրիճին ուղարկած գոտին—ոչինչ չի կարող Մհերին նետել իր գիրկը։

Նա էլ Դեղձունի, Խանդութի նման ի՛նքն է իր համար ընտրություն կատարում, թե ո՛ւմ հանձնվի, թե ո՛վ պետք է նրան որդի պարգևի։

Ո՞վ իմանա, գուցե սա մի հուշ է այն հեռավոր անցյալից, երբ մայրկինը, իր տոհմի տնօրենը լինելով, ինքն էր վճռում, թե ո՛վ է արժանի իրեն պտղավորելու համար։ Մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր համար ամուսին ընտրող կնոջ մասին եղած պատկերացումը պետք է իմաստավորեր նրան թագուհի դարձնելով։ Գուցե սրա մեջ է թաքնված այն պատճառը, որ թե՛ Սանասարը, թե՛ Մհերը, թե՛ Դավիթը, թե՛ Փոքր Մհերը ամուսնանում են թագուհիների հետ, որոնց արքունական պալատը իսկույն անհետ չքանում է, հենց որ այդ թագուհիներն ամուսնանում են։

Սակայն իր մյուս բոլոր հատկանիշներով Իսմիլ խանումը մի կին է, որը զերծ չէ և՛ կենդանի մարդու թուլություններից, և՛ թագուհու փառասիրությունից, և՛ իր որդու նկատմամբ ունեցած ջերմ սիրուց ու հոգատարությունից, ինչպես նաև այն էակի հանդեպ ունեցած սիրուց ու հոգատարությունից, որը նրա կաթով սնվելով, դառնում է նրա որդին։ Հոգեորդու հետ ունեցած կապն ապրում է Իսմիլ խանումի սրտում, և, նույնիսկ Դավթի համար ծուղակ պատրաստելու նենգության ֆոնի վրա տրագիզ-

մով է լի այն տեսարանը, երբ կուրծքը մերկացնելով նա Դավթին աղերսում է հանուն այդ կրծքից ծծած կաթի առաջին հարվածը բաշխել և Թուր-Կայծակով չսպանել Մըսրա Մելիքին։

Հեծավ Դավիթ Քուռկիկ Ջալալին,
Գնաց հասավ չուր Սովասար,
Քաշեց իր Թուր Կեծակին,
Քըշեց իր Քուռկիկ Ջալալին,
Էկավ, որ տի զարկեր՝
Իսմիլ խաթուն իրեն ծծեր հանեց,
Դավթի առաջ վազեց, ասաց.
— Դավիթ, քաղցր ծիծ եմ տվե քեզի,
Դու իմ կաթի խաթեր էդ զարկ ինձի բախշի։
Դավիթ ասաց.— Մարե, ինչի՞ դուն չուր ճիմիկ,
Մելիքի զարկ կրզար մեջ իմ գլխուն,
Մեկ մ'էլ չասիր՝ Մելի՛ք, զարկ մի ինձի բախշի։
Դավիթ իր թուր իջեցուց, տարավ բերեց,
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,
Դրեց նակատին, ասաց.— Մարե՛,
Էս մեկ զարկ քո՛ խաթեր։

Այս դրվագը մի այլ միջադեպ է հիշեցնում, երբ Դավթի մանկության տարիներին նույն Իսմիլ խանումը կուրծքը մերկացնելով նույնպիսի աղերսով թույլ չի տալիս, որ Մըսրա Մելիքը խեղդամահ անի Դավթին։

Էպոսում Իսմիլ խանումի կերպարն այնպես է կերտված, որ չնայած նրա բոլոր խորամանկություններին ու փառասիրությանը, արդարացվում է այն կաթը, որով նա սնել է «աննման Դավթին»։

Միակ կինը, որ կարծես խորթ է թվում և էպոսում տրված է աղոտ նկարագրությամբ, կարծես այլատարր է, այլ արյուն է հոսում նրա երակներում, դա Զմշկիկ-սուլթանն է։ Նա հանդես է գալիս միայն իբրև էպոսում առկա կանացի հինգ հրապուրիչ կերպարների հակադրություն և միայն այն նպատակով, որ իր փոքրիկ դստերը հաղորդած նենգությամբ կտրի Դավթի կյանքի թելը։

Զմշկիկ-սուլթանի դյուցազնական խառնվածքը, Դավթի հետ մենամարտելու ցանկությունը վիպերգության մեջ կյանքի են կոչված ոչ թե սիրածին փորձելու նպատակով, ստուգելու, թե արդյո՞ք տղան արժանի է աղջկան տիրանալու, ինչպես այդ անում են Խանդութ խաթունը և Գոհար խաթունը, այլ հետևանք են վիրավորված հպարտության, անսահման խանգի, սիրած երիտասարդին վերադարձնելու կամ նրա կյանքը խլելով, նրան մրցակցուհուց խլելու անզուսպ ցանկության։

Սա միակ կինն է ամբողջ էպոսում (եթե չհաշվենք խլաթցի պառավ ջադուի միջանկյալ, իր տրագիզմով հանդերձ անեկդոտային կերպարը), որն իր կյանքն ավարտում է ոչ թե սիրո հանգամանքներում և հանուն

սիրո, այլ ատելության հանգամանքներում, հանուն վրեժի. ընկնում է Քուռկիկ Ջալալու սմբակների տակ և ջախջախվում։

Որպես էպոսի չորրորդ ճյուղի հերոս հանդես է գալիս Դավթի որդին՝ Փոքր Մհերը։

Գերեզման է իջնում կապտաշյա աղջկա ձեռքով սպանված Դավիթը, նույն գերեզմանն է իջնում Դավթի մահվան վշտին չդիմացած Խանդութը, և մեն-մենակ է մնում Մհերը, որ երկրից երկիր է դեգերում, ջանալով վերականգնել արդարությունը. հաղթում է թշնամու զորքին, լեռներից վիթխարի ժայռեր գլորելով քաղաքին սպառնացող գետի մեջ, հեղեղից փրկում մի ամբողջ քաղաք։ Սակայն նա շուտով ուժասպառ է լինում, այլևս չի կարողանում պայքարել անարդարության դեմ։ Այցի է գնում հոր և մոր շիրմին։ Աղերսում է հորը ուղի ցույց տալ իրեն, քանի որ այլևս ի վիճակի չէ ապրելու, իսկ հողը չի տանում նրա ծանրությունը։ Դավիթը խորհուրդ է տալիս մտնել ժայռի մեջ և սպասել մինչև հին աշխարհը կործանվի, ստեղծվի նորը, երբ ցորենի հատիկը մասուրի չափ կլինի, իսկ գարին՝ ընկույզի չափ։ Դա կլինի Մհերի ազատության օրը, և նա դուրս կգա քարանձավից։ Մհերը ճանապարհ է ընկնում հիշյալ ժայռը գտնելու։ Նրա երկրային կյանքի վերջին քայլերը կապված են հետևյալ միջադեպի հետ։ Ոստանա Կապանի իշխանը, ճանապարհին ցանց նետելով Մհերի և նրա նժույգի վրա, աշխատում է նրանց գերի վերցնել։ Այդ ցանցի մեջ թափրտալով և ջանալով դուրս գալ որոգայթից, Մհերը տեսնում է, որ իր ոտքերն արդեն խրվում են ոչ թե ձյան, այլ հողի մեջ։ Գետինը չի տանում նրա և ձիու ծանրությունը։

Ձիու ոտ չէր դադրի վեր հողին,
Որ զոտքեր կը բալեր՝ կէրբար մեջ հողին.
Հող առչև բուլացեր էր,
Չէր դադրի առչև Մհերին։
Մհեր ասաց. «Հայ-հո՛յ, զո՛ւր է,
Գետինն էլ հալեորցեր է,
Իմ ձիու ոտաց տակը չի դիմանա»։
Օր կեսօր էր, քանի քշեց,
Ձին բաղվավ շուր իրիկուն։

Մհերը մարտահրավեր է նետում աստծուն, նա ուզում է վերջ տալ անարդարությանը։ Նրա դեմ հրեշտակների շքախմբով կռվի են ելնում երկրային ուժերը։ Մհերն սպառնում է, սակայն անկարող է խոցել։ Այդ ժամանակ, որպեսզի իմանա՝ ի՞նքն է իրավացի, թե՞ աստված, նա ինքն իր հետ պայման է կապում. եթե թրի հարվածին ժայռը չդիմանա, ուրեմն ինքն է իրավացի, իսկ եթե դիմանա, ուրեմն՝ իրավացի չէ։ Ժայռը չի դիմանում թրի հարվածին, ճեղքվում է, և ոտքից գլուխ զինված Մհերը ձիո՛ւ ներս է մտնում։

Ըստ ավանդության և էպոսի, ամեն տարի, Համբարձման և Վարդավառի գիշերը, Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող Ագռավու Քարը բացվում է, Մհերը դուրս է գալիս քարանձավից, փորձում է հողի ուժը և համոզվելով, որ հողը չի կարող դիմանալ իր ծանրությանը, վերադառնում է ետ։

Ժայռը հազվադեպ է բացվում։ Մի անգամ ինչ-որ հովիվ տեսնում է, որ ժայռը բացվել է, բայց Մհերը դուրս չի գալիս։ Հովիվը հարց է տալիս, թե ե՞րբ պետք է դուրս գա։ Մհերը պատասխանում է, որ դուրս կգա այն ժամանակ, երբ ցորենի հատիկն ավելի խոշոր կլինի, քան մասուրը, և երբ գարին ավելի խոշոր կլինի, քան ընկույզը[1]։

Փոքր Մհերը հոր մահվան դաժան վրիժառուն է, բնութագրված մի քանի գծերով։ Սակայն նրա մոտ ցայտուն են ընդգծված սասունցի բոլոր հերոսներին հատուկ կողմերը։ Սա էլ իր պապի՝ Մհերի նման գետնի համար չափից դուրս ծանր է։ Երբ քայլում է, ոտքերը խրվում են հողի մեջ։ Մեծ Մհերը այս իմաստով նման է Սվյատոգորին։ Փոքր Մհերի ոտքերն էլ հողի մեջ են թաղվում, բայց ոչ թե այն պատճառով, որ շատ է վիթխարի, ոչ թե այն պատճառով, որ շատ է ծանր, այլ այն պատճառով, որ հողը չի կարող և չի ուզում տանել նրա ծանրությունը, աշխարհը հոգնեցրել է դյուցազնին իր անարդարությամբ։

Այս ճյուղի հերոսուհին Գոհար խաթունն է։

Ինչ-որ նմանություն կա Արմաղանի՝ Մեծ Մհերի կնոջ և Գոհար խաթունի՝ Փոքր Մհերի կնոջ միջև։ Դա ամուսնուն հնազանդվելն է, որի համար երկուսն էլ զոհվում են՝ Արմաղանը՝ հանուն լույս աշխարհ եկող մի նոր կյանքի, իսկ Գոհարը՝ պարզապես այն բանի, որ հայրենի Սասունը պաշտպանելու համար Մհերը նրան բոլորովին միայնակ է թողնում և բռնում պանդխտության ճանապարհը։ Գոհար խաթունին մահից չի փրկում Մհերի թողած մկունդը։

Ինչ-որ անսովոր նազանքով է լի Գոհար խաթունի կերպարը և՛ այն օրերին, երբ նա մրցում է Մհերի հետ, և՛ այն ժամանակ, երբ սրտաշարժ հոգատարությամբ պահպանում է Մհերի անդորրն ու առողջությունը, որն այնքան էլ ապահով չէր դյուցազնի համար նեղ վրանի տակ, և՛ այն պահերին, երբ ճակատագիրը նրա շուրթերով նախազգուշացնում է Մհերին. «Արևից վախեցիր, Մհե՛ր»։

---

[1] Հետաքրքրական է, որ Հայաստանի շատ վայրերում ցույց են տալիս Դավթի և Մհերի հետքերը։ Մոկս գավառում ինձ ցույց են տվել Բաթմանա կամուրջը, ուր Դավիթն ընդհարվում է Մըսրա Մելիքի երկու փահլևանների հետ։ Իսկ Վան քաղաքի մոտ, միջնաբերդից չորս կիլոմետր հեռավորության վրա տեսել եմ Մհերի հռչակավոր գուռը։ Դա իրոք գուռ հիշեցնող մի քանդակ է վիթխարի ժայռի վրա՝ սեպատառ մակագրությամբ։ Քարանձավի մուտքի առաջ ժայռի մեջ մի փոքր փոս կա. դա այն տեղն է, ուր գուռը բացվելուց առաջ անհամբերությունից սմբակով խփել է Քուռկիկ Ջալալին։ ...

ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋՈՒԿՆ ՈՒ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Աներկբա է արաբական զորքի դեմ Դավթի մղած ճակատամարտի, օտարերկրյա հրոսակները հայրենի երկրից դուրս շպրտելու մասին ստեղծված զրույցի պատմական աստառը։ Այդ զրույցը բաղդատելի է դեպքի ժամանակակից Թովմա Արծրունու (10-րդ դար) այն վկայության հետ, թե ինչպես խութեցիները իրենց անառիկ լեռներից իջնելով, ջարդեցին արաբական զորախումբը և դուրս շպրտեցին արաբներին։

Պատմական Հայաստանի գործիչների անուններին համընկնող մի շարք անունների առկայությունը էպոսի տարբեր վարիանտներում հետազոտողներից ոմանց հանգեցրել է այն մտքին, թե հնարավոր է էպոսի բովանդակությունը և առանձին մանրամասնությունները մեկնաբանել իբրև Հայաստանի քաղաքական պատմության գեղարվեստական, փոքր-ինչ գունազարդված շարադրանք։

Պատմական հավաստի, այսինքն՝ Հայաստանի գրավոր պատմության մեջ հայտնի անուններից մեկը, որը համընկնում է էպոսում նկարագրված իրադարձություններին, արաբական գերիշխանության դեմ հայերի մղած եղրափակիչ պայքարին, դա Գագիկ Արծրունու անունն է։ 10-րդ դարում նա Վանա լճի հարավային ափին կառուցել է Ոստան քաղաքը, վերաշինել Աղթամար կղզու բերդերն ու ամրությունները և այնտեղ կերտել հայ ճարտարապետության ամենասքանչելի հուշարձաններից մեկը՝ շքեղ բարձրաքանդակներով զարդարված Ս. Խաչ եկեղեցին, որի ավարտման հաղարամյակը լրացավ մոտ քսան տարի առաջ։

Եռանդուն փորձեր են արվել էպոսի գործող անձանց փոխարեն տեղադրել հայոց այլ թագավորների և իշխանների անունները, որոնք առկա են վիպերգության մեջ կամ հիշեցնում են այս կամ այն հերոսի անունը։ Սակայն մոռացության է տրվել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր նման փորձ կապված է անխուսափելի անախրոնիզմների հետ, քանի որ Գագիկ թագավորն ապրել է 10-րդ դարում, քաջարի իշխան Թեոդորոս Ռշտունին՝ 7-րդ դարում, փառապանծ զորավար իշխան Մամիկոնյանը հայտնի է 5—7-րդ դարերում (արաբական արշավանքից առաջ), իսկ Սանասարը (իր սխրագործությունները 9—10-րդ դարերում կատարած դյուցազն Դավթի պապը) էպոսում հանդես է գալիս իբրև 10-րդ դարում ապրած Գագիկ թագավորի թոռը, որին, երբ համեմատում ենք Ասորեստանի Սենեքերիմ թագավորի Սանասար որդու հետ, պարզվում է, որ նա ապրել է իր պապից տասնութ դար առաջ։

«Պատմական» մեկնաբանության այս բոլոր փորձերը անտեսում էին էպոսի բուն պատմական արժեքը, այն չէին դիտում որպես կուլտուրայի պատմության (ոչ քաղաքացիական, ոչ քաղաքական պատմության) փաստաթուղթ, ուր արտացոլված է հայոց նախահայրերի աշխարհայացքի

մշակման պրոցեսը հեռավոր, անհիշելի դարերում, երբ մարդը իր գոյության համար պայքարելով, առաջին անգամ սկսեց փորձեր անել ըմբռնելու իրեն շրջապատող բնությունը, պարզունակ ձևով հաստատել բնական երևույթների փոխառնչությունը։ Հաշվի չէին առնում այն, թե էպոսում որքան ցայտուն է դրսևորված Հայաստանի բնակչության բազմադարյան պայքարը (այդ հազարամյակների ընթացքում ինչ անուն էլ կրած լինեն հայերը և նրանց նախնիները), պայքար, որ մղվել է կյանքի, ապրուստի հնարավորություն ապահովելու, կենսական տարրական պայմաններ ստեղծելու համար՝ հողից բերք ստանալու, թե վայրի կենդանիներ ընտելացնելու ճանապարհով։

Մոռացության էին տրվում նաև էպոսի արժեքավոր տվյալները Հայաստանի լեռնային շրջաններում գոյություն ունեցող կենսաձևի վերաբերյալ, շրջաններ, որոնք էպոսի ստեղծման ու ձևավորման դարաշրջանում դեռևս չէին մտել ֆեոդալական կյանքի հունը և պահպանում էին տոհմական կարգերի (կլանի) տարրերը։

Մոռացության էր տրվում նաև ֆեոդալների և ֆեոդալական արտոնությունների դեմ ժողովրդի մղած պայքարը, որն իր արտահայտությունն է գտել էպոսում, հենց թեկուզ այն սքանչելի տեսարանում, երբ Դավիթը քանդում է գաղանանոցի պատերը, դրանով իսկ (իբրև թե կենդանիների և որսորդական արվեստի նկատմամբ ունեցած հարգանքից) ժխտելով որսի տեր համարվելու ամեն մի իրավունք և նույնիսկ հաշվի չառնելով հարազատ հոր, իր համար սրբազան, հիշատակը։ Չէ՞ որ դա արգելանոցի ոչնչացում էր, որի համար պայքարում էին (ոչ միայն Հայաստանում) աշխատավորական խավերը, որոնք չունեին ոչ հող, ոչ ջուր, ոչ էլ որսի հնարավորություն։ Դավթի և Ռոբին Հուդի մտքերի զուգադիպությունը պակաս ուշագրավ չէ, քան արդարև քաջարի և հայոց պատմության մեջ փառաբանված իշխան Թեոդորոս Ռշտունու անվան հիշատակումը արդեն ոչ թե առասպելական, այլ ֆանտաստիկ մի զրույցում։

Մոռացության էր տրվում նաև հին Հայաստանի իրական կյանքի մի շարք կողմերի արտացոլումը, ինչպես, օրինակ, էպոսում չափազանց ընդգծված կրոնական հանդուրժողականությունը։ Թեև «խաչապաշտ» (այդպես են անվանվում սովորաբար հեքիաթներում քրիստոնյաները) գեղեցկուհի Ծովինարին «կռապաշտ» խալիֆին կնության տալու անհրաժեշտությունը վրդովմունք է առաջացնում, սակայն ոչ ոք չի տարակուսում, թե աղջիկը կարող է տուժել հավատի հարցում. կարծես նախապես վստահ են, որ խալիֆը «խաչապաշտ» կնոջ հետ կընդունի նաև հայ հոգևորականին։ Եվ հիրավի, խալիֆին բնավ չի զայրացնում այն, որ իր պալատներից մեկում ապրելու է քրիստոնյա քահանան։ Էպոսում հետագայում էլ քրիստոնեությունը չի հակադրվում որևէ այլ դավանանքի։ Պայքարը մղվում է բռնակալների, զավթիչների, Սասնա թշնամիների դեմ,

անկախ նրանց դավանանքից, քրիստոնեական եկեղեցին ոտնձգությունից պաշտպանելու ձգտումից։

Չէ՞ որ Մարութա Բարձրիկ Ասպարածին վանքի կործանումը դիտվում է իբրև բռնության ակտ և ոչ թե սրբության դեմ կատարված ոտնձգություն, որն արտացոլեր բռնակալների և հարձակման ենթարկված սասունցիների դավանանքի տարբերությունը։ Եկեղեցում կատարված ջարդից փրկված հոգևորականին Դավիթը վերաբերվում է հեգնանքով, իմանալով, որ եթե նա իր մոտ է եկել, ապա կամ աղն է պակաս, կամ մաղը, կամ մոմ է ուզելու, կամ խունկ։

Դավիթ կանչեց սարկավագին, ասաց.
— Տեսնե՛մ, արի էստեղ, ի՞նչ կ'ասես.
էն ի՞նչ է պակաս իմ վանքին.
Խո՞ւնկն է պակաս, ձե՞թն է պակաս, ինչի՞ էկար.
Նուտ ա՛ռ, գընա՛, քո ժամուն հասի՛ր։

Հոգևորականների հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի տեսակետից բնորոշ է այն դրվագը, երբ Արմաղանը հրաժարվում է Մըսրրից Սասուն վերադարձած իր ամուսնուն ընդունել, չուզենալով խախտել Մհերից քառասուն տարի բաժան ապրելու մասին իր արած ուխտը, իբրև պատիժ ամուսնու կատարած դավաճանության։

Ահա թե ինչ են ասում այդ կապակցությամբ հայտնվող եպիսկոպոսներն ու վարդապետները.

Օրհնած, օրենքն ի ձեռ վարդապետաց.
Քառասուն տարին բերենք, անենք քառասուն ամիս,
Քառասուն ամիսն բերենք, անենք քառասուն շաբաթ,
Քառասուն շաբաթ բերենք, անենք քառասուն օր,
Քառասուն օր բերենք, անենք քառասուն սնաթ։
Նուտ տերտեր մ'էլ կար՝ ասաց.
— Քառասուն սնաթ բերենք, անենք մրկա։
Վարդապետ մ'էլ պահպանիչ մի ասաց.
Ասաց.— Աստված ձեզ թողություն շնորհե,
էլեք, գացեք, էղեք էրիկ-կընիկ։

Ծանր երդման այս սրամիտ լուծումը, հատկապես «ծուռ տերտերի» ավելացրած խոսքերը իրենց հումորական հագեցվածությամբ մի կողմից կարծես արձագանքում են 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բյուզանդի մեջբերած զրույցին՝ Հովհան եպիսկոպոսի մասին, որն օգտագործելով իր հոգևոր աստիճանը՝ ավազակից խլում է նրա ձին, մյուս կողմից, հիշեցնում են հումորով լի միջնադարյան հայ առակները, որտեղ վառ կերպով ներկայացված է հոգևորականության ուխտադրժությունը, կաշառակերությունն ու նենգությունը։

Արդյոք կարելի՞ է ասել, թե ո՞ր թվականին է լույս աշխարհ եկել ժողովրդական էպոսը՝ տասնյակ սերունդների կոլեկտիվ ստեղծագործու-

թյան պտուղը, եթե նրա հիմնական առանցքը պատմական որոշակի իրադարձություն չէ, որի ժամանակաշրջանն ու վայրը նշված լինեին տեսնելու, շոշափելու, կարդալու կամ վերծանելու ենթակա որևէ հուշարձանով։

Ժողովրդական դյուցազնավեպի ճշգրիտ թվականը որոշելու փորձն արդյոք նույնքան անիրագործելի չէ՞, որքան այն, որ գետի հոսանքը, ջրի համն ու գույնն ուսումնասիրելով փորձես որոշել, թե ե՞րբ է ծնվել այն առաջին առվակը, որը հզոր գետի վերածվելով՝ իր ալիքներն է տանում դեպի մեծ ծովի աղի ջրերը։

Բացի երկրաբանից, որը գիտե զանազանել շերտավորված նստվածքները, հաշվել հնէաբանական արժեքավոր մնացորդներ պարունակող հարյուրավոր ու հազարավոր նուրբ, խստորեն չափավորված պարբերական շերտեր, նրանից բացի ո՞վ կհանդգնի լուծել այս խնդիրը։

Սակայն ի՞նչը կարող է ավելի դյուրին լինել, քան որոշել՝ ե՞րբ է գետն իր հունը փոխել, եթե ջուրը քանդել տարել է իր նոր ճանապարհին ընկած, պատմական կյանքով ապրող մի քաղաք, որի ավերակները արևոտ օրերին պարզ երևում են վերևում ծփացող հստակ ջրի հատակին։ Այստեղ երկրաբանն իր տեղը զիջում է պատմաբանին։ Պատմական գիտությունը, որը տիրապետում է մարդկային ձեռքերի սխրագործությունները հետազոտելու բազմազան եղանակներին, կարող է մեծագույն ճշգրտությամբ որոշել, թե՛ այդ քաղաքի գոյության ժամանակը, թե՛ այն թվականը, որով նշված են նրա վերջին օրերը, վրա հասած աղետից առաջ։

Նույն դժվարություններն է հարուցում նաև ժողովրդական էպոսը, այն էլ մի այնպիսի էպոս, որն ընդգրկում է մի քանի սերնդի պատկանող հերոսների կյանքը, առասպելական գործերն ու սխրանքը։ Այդ հերոսներն իրենց վրա և իրենց մեջ կրում են հարյուրավոր շերտավորումներ, որոնք գոյացել են մարդկային հասարակության աճին ու զարգացմանը համընթաց, երբ մարդն սկսում էր պատկերացում կազմել բնության, նրա ուժերի և այդ բնության մեջ տեղի ունեցող պայքարի մասին։

Էպոսի առասպելական մասերի թերագնահատումը, գրեթե արհամարհական վերաբերմունքը «հեքիաթային» տարրերի նկատմամբ (դրանք իբր թե եղծում են հայ հերոսների փառահեղ սխրագործությունների պատմությունը) հետազոտողներից ոմանց բերին այն եզրակացության, թե մենք էպոսի ծագումը պետք է վերագրենք մեզանից մեկ հազարամյակ առաջ ընկած ժամանակաշրջանին։

Իրականում գործը բոլորովին այլ բնույթ ունի։ Հնարավորություն կա հաստատելու, որ էպոսում ընդգրկված հիմնական դրվագները իրենց ձևավորումն ստացել են մոտ մեկ հազարամյակ առաջ. առասպելական հերոսների սխրագործությունները հարմարեցվել են արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած համառ պայքարի իրադրությանը։

«Սասունցի Դավթի» ձևավորման ժամանակաշրջանը բնորոշելու համար մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ էպոսի բաժիններից մեկում մենք գտնում ենք 7-րդ դարում Հայաստանի դեմ կատարված արաբական արշավանքի արտացոլումը, արաբ հարկահանների առկայությունը։

Էպոսի ստեղծումն ու ձևավորումը պետք է վերագրել այն ժամանակաշրջանին, երբ Հայաստանում հաստատվեց (ոչ անմիջապես) արաբական տիրապետությունը։

Այս կապակցությամբ շափազանց մեծ արժեք է ներկայացնում անշան թվացող մի մանրամասնություն։ Այնտեղ, ուր խոսվում է խալիֆի մասին, նա շարունակ «կռապաշտ» է հորջորջվում։ Այդ հորջորջումը երկար ժամանակ պահպանվում էր Թուրքիայում ապրող հայերի շրջանում։ Սա անշուշտ ոչ թե մահմեդականների «միաստվածությունը» ժխտելու ցանկությունից էր բխում, այլ մահմեդականների շրջապատում տեղի ունեցող խոսք ու զրույցի մեջ «մուսուլման», «մահմեդական», «իսլամ» բառերից խուսափելու անհրաժեշտությունից։

Սակայն էպոսում տրվում է «կռապաշտ» բառի հետագա մեկնաբանությունը, երբ այն գործ է ածվում խալիֆի հասցեին, «կռապաշտ» բառից կարծես հառնում է մի ամբողջ միջադեպ, մի ամբողջ պատմություն այն մասին, թե ինչպես խալիֆն աղոթում է իր կուռքերին, թե ինչպես խալիֆի մեհյանում դրված կուռքերից «Կրտսեր կուռքը» խալիֆին չի օգնում, և օգնության է հասնում «Երեց կուռքը», թե ինչպես կուռքերը խալիֆից մարդկային զոհաբերություն են պահանջում, թե ինչպես կարող է պահպանվել կամ չպահպանվել մարդկային զոհաբերության ծեսը։ Մինչդեռ բոլոր բանասացները, առանց բացառության, տասնյակ տարիներ հարևանություն են արել մահմեդականների՝ Թուրքերի կամ քրդերի հետ և հիանալի գիտեն, որ իսլամի մեջ ոչ մի կուռք էլ չկա։

Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու երկասիրություններում հիշատակված հայկական հինավուրց ավանդության համաձայն, Սանասարի (ո՛չ էպոսի հերոսի) հայրը ասորական Սենեքերիմ Թագավորն է, որին, ըստ Աստվածաշնչի և ասորական աղբյուրների, սպանել է իր որդին։ Այսպիսով, սույն մանրամասնության մեջ (բնավ ո՛չ պատահական) պահպանվել է էպոսի զարգացման նախնական էտապի արձագանքը, մի էտապ, որը նախորդում է հայերի ծանոթացմանը իսլամին, նախորդում է արաբական նվաճմանը և կապ ունի առավել հին շրջանի պատմական փաստերի հետ։ Նշանակալից է այն, որ վարիանտներից մի քանիսում խալիֆի փոխարեն հանդես է գալիս Սենեքերիմ Թագավորը։

Մյուս կողմից, երկրորդական թվացող մի մանրամասնություն ևս վկայում է, որ «Սասունցի Դավթի» մեջ արտացոլված են էպոսի ձևավորման ընդունված ժամանակաշրջանից ավելի ուշ կատարված պատմական

մոմենտներ։ Այն զորքերը, որոնց հետ Դավիթը կռվի է բռնվում Խանդութ խաթունի մոտ գնալիս, ուղարկված էին օտարազգի բռնակալ Պապ-Ֆրենկի կողմից, որի անվան մեջ դժվար չէ կռահել «ֆրանկների պապին»—Հռոմի պապին։ Հայերը ֆրանկների և պապի մասին գիտեն միայն խաչակրաց արշավանքների շրջանից։ Սակայն Հռոմի պապի «այոմությունը» և «ֆրանկությունը» էպոսում ոչ մի այլ կերպ չի արտացոլված, բացի նրա անվան հիշատակումից (հայերը ֆրանկ են անվանում առհասարակ բոլոր եվրոպացիներին, խաչակրաց արշավանքների մասնակիցներին, իսկ ժամանակակից խոսակցության մեջ՝ կաթոլիկներին, անկախ նրանց ազգությունից)։

Զափազանց հետաքրքրական է այն հանգամանքը, որ էպոսում հիշատակված պատմական գլխավոր անուններից ոչ մեկը չի վերաբերում 10-րդ դարի առաջին կեսից ուշ ընկած ժամանակաշրջանին։ Եթե շարունակեին էպոսի մեջ թափանցել հետագա շրջանի պատմական խոշոր անձանց հետ առնչվող փաստերը, ապա այդ անուններն իրենց արտացոլումը կգտնեին պոեմի այս կամ այն բաժնում։ Ժողովրդական էպոսի առանձնահատկությունը, եթե այն որևէ չափով շոշափում է պատմական իրադարձությունները, այն է, որ այնտեղ նույնիսկ երկրորդական գործող անձինք ունեն իրենց անունները, քանի որ վիպերգության մեջ ոչ մի հերոս առանց անվան չի կարող գործել։

Էպոսի ձևավորման ժամանակաշրջանը որոշելու փորձեր կատարելիս պետք է հաշվի առնել նաև էպոսի առանձին մասերը, հատկապես Դավթին վերաբերող մասերը՝ փոքրասիական հույների և արաբ նվաճողների պայքարն ու սահմանագծային ընդհարումներն արտացոլող բյուզանդական «Ասք Դիգենիս Ակրիտասի մասին» էպիկական պոեմի հետ զուգադրելու հնարավորությունը։ Այդ պոեմի մի շարք մոմենտներ, որոնք ռուս գրականության մեջ մուտք են գործել ոչ ուշ քան 12-րդ դարը, «Սասունցի Դավթին» վերաբերող ասքի մերձավոր զուգահեռներ են։

Հետազոտողները հայկական հին տարեգրություններում և հայ հին հեղինակների մոտ համառորեն տեղեկություններ էին որոնում հայկական մեծ էպոսի մասին, սակայն ապարդյուն։

Ինչպես Փոքր Մհերի համար տեղ չկար հին աշխարհում, այնպես էլ գրքերում տեղ չկար հայ ժողովրդի հույսերն ու ձգտումները հիշատակելու համար, ժողովուրդ, որ հող էր հերկում, իր անասուններն արածացնում, հանապազօրյա ծանր աշխատանքով վեր խոյացնում վիթխարի տաճարների և հզոր ամրոցների պատերը։

Չէ՞ որ այդ գրքերը տասնևհինգ դար շարունակ գրել են այն դասակարգի մարդիկ, որոնք օգտագործելով նյութական ու հոգևոր բարիքներ ստեղծողների աշխատանքը, փակվում էին ամրոցներում, ոչ այնքան հայրենիքի պաշտպանության, որքան այդ ամրոցները կերտողների վրա

իրենց իշխանությունն ամրապնդելու համար։ Ո՞ւմ հայտնի չէ, որ ամրոցներ էին կառուցվում ո՛չ միայն այնտեղ, ուր կարող էին ներխուժել օտարազգի զորքերը, այլև այնտեղ, ուր բխում էր Հայաստանի կենարար ուժը՝ ջուրը։ Ո՞ւմ հայտնի չէ, որ այդ ամրոցներում բաղմում էին հող ու ջրի տերերը՝ ինչպես Սանասարի սպանած վիշապը կամ Մեծ Մհերի ձեռքով դիտապաստ ընկած դևը։ Բաղմում էին հողի ու ջրի տերերը։

Հին պատմիչների մոտ հիշատակություն չկա էպոսի, հատկապես նրա առավել իրական, սակավ ֆանտաստիկ բնույթ կրող մասերի վերաբերյալ, որտեղ գլխավոր հերոսների դերում հանդես են գալիս ներքնախավի ընդերքից ելած մարդիկ, որոնք սովոր են հովվական մահակ կամ գութանի մաճ բռնելու, սակայն չեն զանազանում հին, ժանգոտած զենքը իսկական կռվի համար պիտանի զենքից, մարդիկ, որոնք պատրաստ են ւարտի նետվելու զինված նույնիսկ խաչերկաթով։

Սակայն էպոսի այն մասերի վերաբերյալ, որոնք զուտ առասպելական բնույթ են կրում, հին հեղինակների մոտ կան որոշ ակնարկներ։ Դրանց թվում պետք է հիշատակել Մովսես Խորենացու անունը, որը խնամքով պահպանել է Հայաստանի հնագույն կոսմիկական էպոսի բազմաթիվ հատվածներ և սիրով հաղորդում է այն զրույցները, որոնք արտացոլում են հայոց թագավորների ու իշխանների փառահեղ գործերը, ասորական մեծ թագավորների հետ նրանց ունեցած ազգակցական կապերը, սակայն չի հիշատակում նրանց, ում այնքան սիրում և օգնում էր Դավիթը։

Հին հեղինակների ուշադրությունը չեն գրավել ո՛չ հովիվները, որոնց տոնական հյուրասիրության մասին հոգալով՝ Դավիթը հարուստներից ու քահանաներից խլում է նրանց համեղ ուտելիքը, ո՛չ էլ հողի մշակները, որոնց իր հզոր ձեռքերի և իր ամեհի նժույգի զորությամբ օգնության է հասնում Դավիթը՝ մի ժամում գլուխ բերելով նրանց կատարելիք բազմօրյա աշխատանքը։

Սանասարի մասին Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու ասած խոսքերը վերաբերում են ոչ թե էպոսի հերոսներին, այլ կիսառասպելական հին իշխաններին՝ Արարատյան դաշտ տեղափոխված ասորական արքունի տան շառավիղներին։ Նրանց մասին արված հիշատակությունները արտացոլումն են ասորական թագավորների այն բուն պատմական արշավանքների, որոնք ուղղված էին մի երկրի դեմ, որը երկու-երեք դար հետո կոչվեց Հայաստան, իսկ այդ արշավանքների ժամանակ կրում էր Ուրարտու անունը։

«Սասունցի Դավիթ» էպոսին ամենամակերեսային ձևով անգամ ծանոթանալիս պարզ է դառնում, որ կենտրոնական տեղը գրավում են ոչ թե սկզբում նկարագրված հնագույն հերոսները, ոչ թե այն հերոսը, որով վիպերգությունը եզրափակվում է, այլ ըստ ժամանակագրության

միջանկյալ, երրորդ սերնդին պատկանող հերոսը։ «Սասունցի Դավթի» մեջ վիպերգված է ընդամենը չորս սերունդ։ Մինչդեռ էպոսի հիմնական դեմքը Դավիթն է, որի սխրագործություններն արտացոլող զրույցը տիրապետող է վեպի բոլոր վարիանտներում, և որն օժտված է թե՛ իր նախնիներին՝ պապին ու հորը, թե՛ իր որդուն հատուկ բնավորության գծերով։

Երբ խոսվում է ժողովրդական էպոսի մասին, բնականորեն պետք է որոնել այն միջուկը, որի շուրջը հյուսված է տվյալ էպոսը, և այն ձևն ու նշանակությունը, որ նա ստացել է իր զարգացման ընթացքում։

Բերենք մի օրինակ բոլորովին այլ միջավայրից։ Վերցնենք Տրիստանի և Իզոլդայի սիրավեպը։ Կարելի է վիճարկել (անձնապես ինձ համար դա արդեն միանգամայն պարզ հարց է), թե ի՞նչն է տվյալ վեպում ավելի էականը՝ առասպելական կո՞ղմը, վեպը որպես կելտերի կոսմիկական պատկերացումների, գաղղիական ասքերի, Բրիտանական կղզիներում, Իռլանդիայում և անգլո-սաքսոնական ապագա երկրում տիրապետող ասքերի արտացոլումը դիտելու հնարավորությո՞ւնը, թե՞ այն, որով վեպը մեզ հասած իր ձևով բնորոշվում է որպես 12-րդ դարի ասպետական վեպ։ Աներկբա է, որ այդ վեպն ստեղծվել է այն ձևով, ինչպես մենք գիտենք, համենայն դեպս ո՛չ կոսմիկական կերպարների շուրջը, այլ սքանչելի ասպետի և հիասքանչ ասպետական կնոջ, տվյալ դարաշրջանի համար միանգամայն իրական կերպարների՝ Տրիստանի և Իզոլդայի շուրջը, որոնք և կրում են իրենց վրա վեպը հորինող բանաստացներին ու բանաստեղծներին հնագույն դարերից հասած անթիվ, անհամար մտապատկերների շերտավորումները։

Նույնանման երևույթ է տեղի ունեցել նաև Սասունցի Դավթի հետ։ Կասկածից դուրս է, որ մեզ հասած էպոսի բաղադրիչ միջուկը Դավթի մասին հյուսված ասքն է։ Հիշեցեք, թե խեցու մեջ ինչպես է մարգարիտ գոյանում։ Քանի դեռ խեցու մեջ աննշան ավազահատիկի ձևով կողմնակի մարմին չի ներթափանցել, քանի դեռ այս առիթով կենդանին չի հիվանդացել, և նրա վրա չի գոյացել շնչին, աչքի համար անտեսանելի կրաշերտ, ոչ մի մարգարտի մասին խոսք լինել չի կարող։ Այնուհետև այդ ելուստի շուրջը շերտավորվում են աղերի ազդեցության տակ գոյացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտ, որը հետագայում կարող ենք դիտել ու հիանալ։

Նույնն է տեղի ունենում ժողովրդական յուրաքանչյուր ավանդության հետ. նրա հիմքում թերևս աննշան մի կորիզ է ընկած, սակայն այդ կորիզն իր վրա նորանոր շերտեր է ընդունում և հաճախ վերածվում մարգարտի, որը տասնյակ և հարյուրավոր սերունդների ստեղծագործության արգասիքն է։ Այսպես է ստեղծվել նաև «Սասունցի Դավիթ» էպոսը։

Սասունցի Դավթի՝ հայ ժողովրդի սիրած հերոսի մասին հյուսված ասքի հիմքում թերևս ընկած է աննշան մի փաստ, որի շուրջը և գոյացել

են հերոսի չտեսնված սխրագործությունները փառաբանող մի շարք զրույցներ։

Եթե էպոսը բաժանենք բաղադրիչ մասերի, ապա կտեսնենք, որ ամենապատմական մասը արաբներին Հայաստանից արտաքսելու դրվագն է։ Երկրային ամենաիրական գծերով բնորոշվում է հատկապես այս բաժինը, այստեղ էլ միաժամանակ կարելի է նկատել մի շարք հանգամանքներ, որոնք հնարավորություն են տալիս էպոսի հիմնական կորիզի ստեղծումը վերագրելու նկարագրվող իրադարձություններից ավելի ուշ շրջանի։ Իրադարձությունների ստեղծման միջև պետք է, որ ընկած լինի համեմատաբար ավելի քիչ ժամանակամիջոց։ Սրա օգտին է խոսում և այն շրջանի ճշգրիտ անվանումը, որտեղից զորքերն են եկել, և այն, որ հազարամյակի ընթացքում գոյացած անթիվ, անհամար անախրոնիզմների առկայությամբ իսկ հիմնական կորիզում չկան իրականությանը բացահայտորեն հակասող անախրոնիզմներ։ Ամեն ինչ մեզ տանում է դեպի 10-րդ դարը և ո՛չ ավելի ուշ ընկած շրջան։

Էպոսի առանցքը, անկասկած, կազմել է սասունցիների արաբ նվաճողների դեմ դուրս գալու և նրանց ջախջախելու իրադարձությունը։ Այլ հարց է, որ Թովմա Արծրունու հիշատակած Սասնա ապստամբություն փոքր տեղամաս է ընդգրկում, որ այդ ապստամբությանը միայն երկու հարյուր հոգի են մասնակցել, որ երկրից արտաքսվել է ոչ թե արաբական խալիֆը, այլ շարքային մի հարկահան։ Ժողովրդի հիշողության մեջ պատմական կոնկրետ փաստին ավելացել են զանազան հարակից զրույցներ, և դրանց մեջ գերմարդկային հատկություններ են վերագրվել շարքային, սովորական մի մարդու, որը սակայն հերոս է. իր կյանքն է նվիրաբերել հայրենիքին, համախմբել իրոք թույլ, իրոք անօգնական, վատ զինված լեռնցիների ուժերը, նրանց հանել այն ժամանակվա իմաստով հիանալի զինված արաբական զորախմբերի դեմ։ Նույն հերոսին են վերագրել այն բոլոր հատկանիշները, բնավորության այն բոլոր գծերը, որ այդ ժամանակ ունեցել է երգեր հյուսող, եղելություններ վիպող ամբողջ ժողովուրդը։ Ժողովրդին հատուկ այս գծերի հանրագումարից էլ հենց ստեղծվում է հերոսի կերպարը, հերոս, որ գերազանցում է արդեն մարդկային չափանիշները, դառնում է հսկա, ընդունակ յուրացնելու մարդկային առօրյա կյանքի սահմաններից բացահայտորեն դուրս եկող հատկանիշներ։

Ճիշտ նույն եղանակով են գոյացել նաև այն զրույցները, որ մեզ են հասել Արևմտյան Եվրոպայի առանձին ժողովուրդների էպոսից և այլ կարգի ստեղծագործություններից։ Հիրավի, հավաստի փաստ չի կարող համարվել այն, որ մի ասպետ, ինչքան էլ նա խիզախ լինի, կամրջին կանգնած՝ կարողանա դիմագրավել մի ամբողջ բանակի, և ինքը մնա անխոցելի։ Ոչ ոք չի տարակուսում, որ Ռոնսևալի դեմ փայլուն հաղթանակ տարած Ռոլանդի պատմությունը արտացոլում է ոչ թե Ռոլանդի

անձնավորությունը, այլ այն ամբողջ դասակարգը, որի ներկայացուցիչն էր նա։

Իսպանացի հերոս Սիդի պատմությունն անշուշտ պարունակում է տասնյակ գծեր, որ ոչ մի կերպ չի կարելի վերագրել առանձին մարդու։ Նա այնպիսի ահավոր ուժով է օժտված, որը հատուկ չէ մի մարդու։

Նման պատմությունների գոյացման ընթացքը միանգամայն նույնն է և՛ խոր անցյալում, և՛ մերձավոր ժամանակներում։

Հյուսելով իր զրույցը Յուսուֆի զորաբանակը կոտորող խութեցի պատանու վերաբերյալ, հայ ժողովուրդը պետք է որ մտածեր իր այդ հերոսի համար արժանավոր հարազատներ գտնելու մասին, քանի որ ժողովրդի պատկերացմամբ անտոհմ մարդը չի կարող հերոս լինել, մինչդեռ հերոսը, այն էլ բազմաթիվ դարեր ապրած հերոսը, ժողովրդի պատկերացմամբ պետք է ունենա և՛ հայր, և՛ պապ, պետք է քաջ հայտնի լինի իր ծագմամբ։ Այստեղ կատարվում է նույն հետաքրքիր երևույթը, ինչ տեղի է ունենում մյուս ժողովուրդների տասնյակ հերոսների հետ։ Զուտ երկրային ծագում ունեցող, հոգեկան բարձր հատկանիշներով օժտված և սխրագործությունների ընդունակ մարդուն վերագրվում են դյուցազնական առասպելական կերպարներին հատուկ գծեր։ Ազգակցական կապ է հաստատվում տվյալ ժողովրդի մեջ ապրող առասպելական հնագույն կերպարների և այն հերոսի միջև, որը եղել է բանասացների պապերի ժամանակակիցը։

Դավիթը պետք է նախնիներ ունենար, և նրա համար ժողովուրդը հայր է ընտրում կիսաստված մի հսկայի։ Մհերը այնքանով է մարդկային, որ երկնքից երկիր է իջել։ Ավելին. պատմվում է նաև Մհերի հոր մասին, որը սաղմնավորվել է դեռևս այն ժամանակաշրջանում, երբ աղջիկը կարող էր հղիանալ ջրից։ Այսպիսով, Սանասարը ծնվում է այն կույս աղջկանից, որի անունը զրույցներից մի քանիսում ակնբախ կերպով առնչվում է Առաջավոր Ասիայի աստվածուհիների հետ և, մյուս կողմից, ժողովրդական զրույցներում տարածված ձևով նշանակում է «ծովածին»։ Ծովինարը Սանասարին ծնում է ժայռի միջից հանկարծ բխած աղբյուրի մի կում ջրից։ Սանասարի և Քաջանց թագավորի հիասքանչ աղջկա— կիսահողածին կախարդների արքայի դստեր ամուսնությունից ծնվում է Մհերը, և այսպիսով, հաստատվում է Դավթի վերընթաց ծննդաբանությունը։

Սակայն էպոսի կառուցվածքի պատճառով, այն պատճառով, որ Դավթի կերպարը մարմնավորում է հայ ժողովրդի բոլոր իդեալները, այն պատճառով, որ այդ հերոսը պետք է մնա, ապրի, քանզի այլապես նրա հետ կմեռնի ամբողջ ժողովուրդը, հարուցվում է Դավթի որդու հարցը։ Եվ ժողովուրդը նրան որդի է տալիս։ Բայց քանի որ էպոսի գոյացման ժամանակ երբեք չեն ստեղծվում առանձին նշանակալից մանրամասնու-

թյուններ, իբրև որևէ բանաստեղծի նորաստեղծություն, ուստի և, ըստ անհրաժեշտության, Դավթի որդու կերպարը միայն պապի բնավորության գծերի կրկնությունն է։

Կարող է հարց ծագել. ինչո՞ւ միանգամայն հողածին Դավթի որդին պետք է ծնվեր իբրև հսկա, որն ավելի է կապված բնության ուժերի, տիեզերական ուժերի հետ, քան Դավիթը։ Ուղղակի այն պատճառով, որ այդ որդուն վիճակված էր ինչ-որ միանգամայն հեքիաթային վախճանի հասցրնել ժողովրդի իդեալները։ Եվ ահա այս պատճառով Մհերը պետք է մնար անմահ, կամ էլ էպոսը պետք է նրա համար ստեղծեր անհամար հետնորդներ, որոնք աստիճանաբար մանրանալով հասնեին այն օրերի մարդու կերպարին, երբ ստեղծվել են «Սասունցի Դավթի» վարիանտները։ Սակայն ոչ մի բանաստաց խնդրին այդպիսի լուծում չի տվել։ Հերոսական էպոսը միշտ էլ խզվում է, եզրափակվում զորավոր կերպարով։ Դյուցազունները կամ առանց որևէ հետք թողնելու զոհվում են, կամ դառնում քար, պարփակվում այդ քարի խորքում, սակայն երբեք չեն թողնում բազմաթիվ և բազմադարյան կյանքի ընդունակ ժառանգներ։

«Սասունցի Դավիթ» էպոսում հին հայերի կոսմիկական հնագույն պատկերացումները, հնադարյան առասպելները, որոնք ստեղծվել են Հայաստանի նախապատմական կյանքի հազարամյակների ընթացքում, և ականատեսների ու նրանց հետնորդների հիշողության մեջ գրոշմված պատմական իրադարձությունները միաձուլվել, մի միասնական ամբողջություն են կազմել, երանգավորված պատմականության արտաքին երևույթով։

Այս իրադարձությունները իրենց լայնությամբ ու զորությամբ, ժողովրդի դրսևորած կոլեկտիվ հերոսության ուժով հարմար հիմք են ծառայել, որի վրա էլ հնագույն առասպելները կուտակվել են, ընդունել հստակ և կուռ ձևեր։ Դրանք վեր են ածվել հերոսներին փառաբանող կապակցված պատմությունների, հերոսներ, որոնք այդ դյուցազնաշրջանի շորս սերնդի գոյաշրջանում ընթացել են իրենց տիտանական ուժի կըրճատման, իրենց գերմարդկային չափերի նվազման ուղիով, աշխարհի վերևում ծավալվող արեգնափայլ անսահմանությունից և գեղածիծաղ ծովի անչափելի խորությունից իրենց անմիջական կապը խզելու ճանապարհով։

Հերոսները կորցնում են իրենց երկնա-ծովային հրեղեն ձիով ծովի անդունդից դեպի կիզիչ արևի սկավառակը սլանալու ունակությունը, որպեսզի հիմնավոր բնակություն հաստատեն երկրի վրա, անգիտակցորեն կապ են պահպանում միայն մի տարերքի, հույժ կենաբար տարերքի՝ ջրի հետ։

ԷՊՈՍԻ ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտողներից ոմանք, նշմարելով էպոսի մեջ մտնող մի շարք զրույցների պատմական աստառը, ջանում էին այն բացահայտել, և այդ աշխատանքի ընթացքում ստեղծվեց էպոսի ծագման ֆեոդալական այն կոնցեպցիան, որն անհուսալիորեն փակուղու առաջ է կանգնում, հենց որ հաշվի է առնվում հերոսների աշխարհայացքը, նրանց խորշանքն ընչաքաղցության, իշխելու ծարավի նկատմամբ, բազմիցս դրսևորված անմիջական թշնամանքը թագավորների, կառավարողների, ազնվատոհմների հանդեպ։ Այս փակուղին ֆեոդալական կոնցեպցիայի համար դառնում է անելանելի, քանի որ ժողովրդի ընդերքից ելած հերոսը գահ չի բարձրանում, ոչ էլ իշխանական դղյակի տիրակալ է դառնում. քանի Դավիթը ձգտում է վանել ոչ միայն զավթիչներին՝ թագավորներին, այլև ազնվատոհմներին, որոնց փոխարեն նա նշանակում է «հասարակ մարդկանց», քանի որ Մհերը դուրս է գալիս ո՛չ թե օտարերկրացիների, այլ Հայաստանում իշխող արյունակից բռնակալների դեմ՝ այն հաստատ հավատով, որ եթե նույնիսկ ընկնեն սասունցիները, միևնույն է՝ «նրանց գերեզմաններին էլ չեն կարողանա մոտենալ թագավորները»։

Չնայած այս բոլոր և բազմաթիվ այլ հանգամանքների, որոնք կարծես անհնարին են դարձնում էպոսը ֆեոդալական Հայաստանում գերիշխող խավերի ստեղծագործություն համարելը, համենայն դեպս էպոսի ծագման ֆեոդալական կոնցեպցիան ստեղծվեց։ Դրա պատճառը հետևյալն է։ Հաշվի չառնվեց այն, որ էպոսում արտացոլված աշխարհայացքի, դեռևս ֆեոդալական հասարակության աստիճանին չհասած հասարակության աշխարհայացքի, զգալի մասը զարգացման նախորդ փուլերի մնացուկներն ու արձագանքներն են, լինեն դրանք կոսմիկական առասպելներ, մետեորային երկաթի օգտագործման ասք, մայրիշխանությունն արտացոլող հերոսուհիների կերպարներ (Դեղձուն, Խանդութ խաթուն, Գոհար խաթուն), Քեռի Թորոսի ու նրա որդիների՝ նահապետական կարգերն ու տոհմական ընտանիքն արտացոլող նկարագրություն կամ տոտեմների մնացուկները պահպանած տոհմային կենսաձևի գծեր, որոնք արտացոլված են Սասնա կյանքի ընդհանուր նկարագրության մեջ և որոնք իրենց զուգահեռն են գտնում Թովմա Արծրունու տված Սասնա և Խութի նկարագրության մեջ։

Ֆեոդալական կոնցեպցիայի հիմքում, անկասկած, ընկած է ոչ միայն էպոսում հանդիպող հատուկ անունները բաղդատելու և անվերծանելի անախրոնիզմներն ու անատոպիզմները հաղթահարելու ճանապարհով էպոսը Հայաստանի գրավոր պատմության շրջանակների մեջ խցկելու ցանկությունը, այլև արմատապես սնանկ, սակայն ֆեոդալական աշխարհայացքով սնուցված կանխավարկումը (պրեդումցիա), որով ֆեո-

դալական վերնախավի շրջանակներում խստորեն սահմանափակվում է արիության ու հերոսության, սխրագործություններ կատարելու հնարավորությունը։

Հիրավի, հին դպրոցն անցած մարդկանց մեծամասնության մեջ (ինչ իմաստով էլ վերցնենք «դպրոց» բառը, լինի դա տարրական, միջնակարգ թե բարձրագույն) տասնյակ տարիներ շարունակ մի՞թե չի արմատավորվել այն գիտակցությունը, թե սխրագործություններ կատարողները եղել են ազնվական դասին պատկանող ասպետներ, որոնք կատարելապես տիրապետել են սուր և նիզակ գործածելու արվեստին և իրենց ձեռքերը երբեք չեն «պղծել» աշխատանքով, երբեք ձեռք չեն տվել աշխատանքի գործիքներին։ Մի՞թե տասնյակ և հարյուրավոր տարիների ընթացքում չի մշակվել այն պատկերացումը, թե հոգու վեհությունը, առատաձեռնությունը, արիությունը, տառապյալին օգնելու պատրաստակամությունը, ուրիշներին բաժին ընկած շարքաշությունն իր վրա վերցնելու, հայրենիքը սրով պաշտպանելու պատրաստակամությունը կոչվում է «ասպետություն» («ասպետ», «հեծյալ» բառից, սակայն այդ հեծյալը, ի տարբերություն մյուս մահկանացուների, պետք է իր ծագմամբ իրավունք ունենար ձի նստելու)։ Մի՞թե տասնյակ և հարյուրավոր տարիներ շարունակ չի մշակվել այն հասկացողությունը, թե հոգու բարձր հատկանիշները պետք է որոշվեն «ազնվություն» բառով, որը մատնացույց է անում, թե իբր այդ առաքինությունները հատուկ են «ազնիվ» տոհմից սերած մարդկանց, և թե այդ առաքինությունները բնածին են։

Արդյոք զարմանալի՞ է, որ Սասնա տան հերոսների մեջ այս բոլոր բարձր ու վսեմ առաքինությունները տեսնելով, դրանք իրավացիորեն բնորոշելով իբրև ազնվության ու ասպետության դրսևորում, ֆեոդալական կոնցեպցիայի ստեղծողներն սկսեցին Սասնա հերոսների նախատիպերը որոնել այն հայ իշխանների մեջ, որոնք ըստ ծագման պետք է օժտված լինեին ազնվատոհմ ասպետներին հատուկ բնավորության գծերով և առաքինություններով։

Սակայն մենք լավ գիտենք, որ այդ վսեմ առաքինությունները բնավ էլ ազնվատոհմերին տրված շնորհ չեն եղել, լավ գիտենք, որ պատմության մեջ բազմաթիվ սխրագործություններ կատարել են այնպիսի մարդիկ, որոնք չեն ծնվել պալատական հարկի տակ, իսկ այժմ էլ շատ լավ գիտենք, որ իսկական հերոսությունը հատուկ է նրանց, ում համար մատչելի է սրի, մուրճի ու մանգաղի սխրագործությունը, գիտենք, որ սուրն ավելի ամուր է բռնում այն ձեռքը, որ սովոր է բռնելու մուրճը և գութանի մաճը, գիտենք, որ թշնամու գլխին սուրն ավելի ուժգին է իջեցնում այն ձեռքը, որը սովոր է սալի վրա երկաթ կռելու։

Սասնա դյուցազունները մնալով իբրև արիության ու հերոսության

օրինակներ, իրենց կապը չխզելով հովվի, հողագործի կամ որսորդի աշխատանքի հետ, եղել են «հասարակ ժողովրդի» զավակներ։ Դավթի մահից հազար տարի հետո շարժն նրա գլուխը իշխանական խույրով զարդարել. դա նրան այնպես սազական չէ, ինչպես վայել է նրան ամենակործան Թուր-Կայծակին։

Էպոսի ծագմանը վերաբերող ֆեոդալական կոնցեպցիայի գոյացման պատճառը կարելի է մեկնաբանել երկու բառով։ Հայ ժողովուրդը մեծարանքի ու հարգանքի հասկացությունը արտահայտելու համար ֆեոդալական դարաշրջանից ժառանգել է «պատիվ» բառը, որը տառացիորեն նշանակում է իշխանական խույր, ապարոշ։ Եկեք Դավթին մատուցենք իրեն և մյուս դյուցազուններին վայել հարգանք ու պատիվ, առանց նրա գլխին հագցնելու իշխանական խույրը, որից հերոսը խորշում էր իր կենդանության օրով։

Վերջապես, եթե արաբների տիրապետության դեմ ուղղված պայքարը, օտարերկրյա զավթիչների արտաքսումը պատկերող էպոսը չստեղծվեր ամրապնդված ֆեոդալիզմի դարաշրջանում, ֆեոդալական հասարակության ներքնախավերում, ֆեոդալական Հայաստանի ժողովրդական զանգվածներում, ապա հերոսական գործեր դրսևորող զրույցները այս կամ այն կերպ կարտացոլվեին հայ պատմիչների գործերում, որոնց թիվը փոքր չէր ո՛չ 10-րդ դարում, ո՛չ էլ հետագայում։ Սակայն ֆեոդալական ազնվականությունից սերած հայ պատմիչները անտեսել են էպոսն այնպես, ինչպես այն չէր ուզում ճանաչել նաև հայ բուրժուազիան, որը 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբում, հետաքրքրություն ցուցաբերելով իր երկրի անցյալի նկատմամբ, տան պատերը զարդարում էր առասպելական հերոսների և հին Հայաստանի տիրակալների՝ Վաղարշակի, Արտավազդի և մյուսների նկարներով, մինչդեռ արհամարհանքով էր վերաբերվում այն առաջավոր անձանց աշխատանքին, ովքեր բանահյուսական նյութերի գրանցումով մոռացումից փրկեցին հայ ժողովրդի մեծ էպոսը։

Հայ բուրժուազիայի ծիծաղն էր շարժում այն իբր թե «պարծենկոտությունը», որ մի սասունցի կոտորում է թշնամու ամբողջ զորքը, թեև նույն բուրժուազիան հիանում էր ֆրանսիացի ասպետ Ռոլանդի և իսպանացի ասպետ Սիդի հերոսական արարքներով, առանց նկատելու, որ թե՛ Ռոլանդի, թե՛ Սիդի և թե՛ Բոյարդի սխրագործությունների նկարագրության մեջ նույնքան չափազանցված է մարդկային ուժը, որքան Փոքր Մհերի կամ Դավթի մասին հայ բանասացների պատմած զրույցներում։

«Սասունցի Դավիթ» էպոսը ժողովրդական է, ժողովրդական ո՛չ միայն այն պատճառով, որ ապրում է ժողովրդական զանգվածներում և պատմվում նրանց բերանով, ո՛չ միայն այն պատճառով, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը ապրում է բանավոր պատմվելով,

ո՛չ միայն այն պատճառով, որ բոլոր վարիանտներում լեզուն ժողովրդական է, իր կառուցվածքով հեռու հին կամ նոր գրական հայերենից, այլև, ամենից առաջ, այն պատճառով, որ հերոսների ողջ աշխարհայացքը անխզելիորեն կապված է ժողովրդական ներքնախավերի հետ, այն պատճառով, որ բոլոր հերոսները անխզելիորեն կապված են ժողովրդի հետ։

Միայն ճնշումից և հարկահանությունից հոգնած մարդիկ կարող էին ստեղծել Սասուն քաղաքի հիմնադրման հիասքանչ զրույցը, քաղաք, որտեղ Սանասարն ու Բաղդասարը ժողովրդից հարկեր չեն առնում, մարդկանց չեն շահագործում։ Միայն իրենց՝ արյունակից հայ թագավորներից ու իշխաններից ձանձրացած մարդիկ կարող էին ստեղծել այն զրույցը, որտեղ Փոքր Մհերն ընդհարվում է ժողովրդին կողոպտող քյոխվայի հետ, որտեղ Ոստանա իշխանը որոգայթով փորձում է գերի վերցնել Մհերին և Քուռկիկ Ջալալուն, փորձ, որ չի հաջողվում հեծյալի ու ձիու դիմադրության շնորհիվ։

«Ազնվազարմների» ով և ինչ լինելը փորձելուց հետո միայն ժողովուրդը կարող էր գիտակցել «հասարակ» մարդկանցով նրանց փոխարինելու անհրաժեշտությունը։

Միայն հին աշխարհն անմիջապես կործանելու անհնարինությունից հուսաբեկված ժողովուրդը կարող էր Մհերին ուղարկել քարանձավ, որպեսզի նա այնտեղ սպասի իր օրվան, իսկ ինքը՝ ժողովուրդը մինչ այդ պետք է իրականացներ նախնական պայքարը, տեսներ և՛ մազդեական-բարսոմեական ժողովրդական շարժման, և՛ Սյունյաց ապստամբության, և՛ «ազնվազարմներին» հաղթելու մյուս փորձերի ձախողումը։

Չնայած իր արիությանը, ժողովրդի բարօրության համար կատարած իր սխրագործություններին, ավելի ճիշտ՝ հենց այդ առաքինությունների պատճառով հերոսներից ոչ մեկը, նվազագույն չափով անդամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ձգտում հատուկ իրավունքներ ձեռք բերել իր շրջապատում, չի ցուցաբերում փառասիրության նշույլ անգամ, չի ձգտում իր կամքով տնօրինել այն հողը, որի համար նա պատրաստ է տալու իր արյունը, տնօրինել այն ջուրը, որը բոլոր դյուցազունների ուժի ակունքն է, ամբողջ ժողովրդի կյանքի հիմնական պայմանը, այն ջուրը, որ նրանք ազատում են դևերից՝ նրա կենարար շիթերը ժողովրդին տալու համար։

Սասնա հերոսներից յուրաքանչյուրի համար առիթ է ընձեռվում (այն էլ ոչ թե մի անգամ, այլ բազմիցս) հասնելու բարձրագույն իշխանության և բազմելու գահին։ Սակայն նրանք շարունակ հրաժարվում են այդ հնարավորությունից։ Խալիֆի դատաստանը տեսնելուց հետո, ողջ մնացած զորախմբերն ու մյուս հպատակներին իրենց թրի տակով անցկացնելուց հետո Սանասարն ու Բաղդասարը հաղթողների իրավունքի

համաձայն փոխանակ գահ բարձրանալու, հեռանում են խալիֆի երկրից։ Նրանք մերժում են նաև իրենց պապի՝ Գագիկ թագավորի խնդրանքը, երբ սա առաջարկում է, ժառանգական իրավունքի համաձայն, բազմել իր գահին, և ճանապարհ են ընկնում դեպի իրենց կառուցած Սասունը։

Սանասարի որդի Մհերը մերժում է Իսմիլ խանումին, երբ սա առաջարկում է ստանձնել Մըսրա գահը, ինչպես Դավիթը Մըսրա Մելիքին հաղթելուց հետո չի ցանկանում բազմել Մըսրա Մելիքի գահին և այն հանձնում է Մելիքի մորը՝ Իսմիլ խանումին։ Փոքր Մհերը նույնպես մերժում է իր պաշտպանության տակ առած Հալեպցի քառասուն թագաժառանգներին, որոնք նրա հետ եղբայրանալով՝ խնդրում են ստանձնել Հալեպի գահը։ Եվ գահից հրաժարվելու այս բոլոր դեպքերում էլ չորս դյուցազուններն իրենց հրաժարականը արտահայտում են պարզ ու անպաճույճ բառերով, մի տեսակ հուզիչ, սակայն անսասան հավատով լցված դեպի իրենց վարմունքի ճշմարտացիությունը։

Գահի հանդեպ Սասնա հերոսների ունեցած այդ վերաբերմունքին էպոսը շափազանց սուր ձևով հակադրում է իշխանների ու եպիսկոպոսների գահը ձեռք գցելու վարմունքը։ Նշանակալից է իշխանների և եպիսկոպոսների պատասխանը Մեծ Մհերի այն հարցին, թե ինչպե՞ս վերաբերվի ինքը Իսմիլ խանումի առաջարկին.

Ուրիշ թագավորաց տեղ էլ կուզենք հալա զավթես։
Իսմիլ խաթուն որ կը կանչե՝ ինչի՞ չ'էրթաս։
Էտա հազըր տեղ է՝ շուտ գնա... Մըսըր տիրապետի։

Մհերը՝ ամբողջ Սասնա հույսն ու ապավենը, չի եղել ո՛չ թագավոր, ո՛չ իշխան, թեև (գուցե իր հոր՝ Սանասարի հետ ունեցած կապի հետևանքով) իրեն թույլ է տալիս կառուցելու պարսպապատ գաղանանոց։ Սասունցի Դավիթը և այս բոլոր հերոսները աշխարհից հեռանում են իբրև ներքնախավին պատկանող այնպիսի մարդիկ, ինչպիսիք նրանց շրջապատում էին։ Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով։

«Սասունցի Դավթի» հերոսներն ամուսնանում են թագուհիների հետ։ Սակայն այդ թագուհիները, էպոսի հերոսների հետ կապելով իրենց ճակատագիրը, կորցնում են արքունիքի հետ ունեցած իրենց առնչության ամեն մի հետք, եթե նույնիսկ տառացիորեն հասկանանք էպոսում տրված նրանց տիտղոսները։

Նշանակալից է այն, որ Փոքր Մհերի՝ աշխարհի անարդարության և շահագործման դեմ պայքարելու գաղափարը մարմնավորողի բերանով է էպոսը հայտնում հետևյալ խոսքերը.

Բա մենք Սասնա տնեն չե՞նք,
Չէ, մենք Սասնա տնեն ենք.
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վերա
Թագավորներ չեն կարնա գա.

Ջարդելով Պապ-Ֆրենկի զորքերը և, ըստ երևույթին, հաշվի առնելով նաև արաբ ծերունու այն իմաստուն խորհուրդը, թե պետք է կոտորել ոչ թե բռնությամբ Սասուն բերված զինվորներին, այլ Մըսրա Մելիքին, Դավիթը գնում է հենց իրեն՝ Պապ-Ֆրենկ կոչված թագավորի հետ անձամբ իր հաշիվը մաքրելու։

Դավիթ ընկավ Բապ-Ֆրենկի՝ էտև,
Բռնեց, էնտեղ գլուխ կտրեց։
Քաղքի մեջ ով մնացեր էր,
Էնոնց համար թագավոր դրեց.
Ջոջ մարդեր սպանեց,
Պստիկներ տեղ դրեց. ասաց.
— Քանի դում ժիր եք, կռիվ միք էրթա։

Էպոսում հիշատակված թագավորներն ու իշխանները հանդես են գալիս որպես դժգույն ուրվականներ։ Միայն Սանասարի և Բաղդասարի մասին հյուսված ճյուղում ենք տեսնում կենդանի ու լիարյուն (սակայն հեքիաթային) խալիֆին, որին հակադրվում է իր կերպարով նույնպես հեքիաթային Դագիկ թագավորը։ Դա բնորոշ է մեր էպոսի համար, և մեր էպոսը խստորեն զանազանվում է ինչպես հայ, այնպես էլ Արևելքի մյուս ժողովուրդների մի շարք այլ էպիկական երկերից։ Այս հանգամանքը առավել ևս համոզում է, որ «Սասունցի Դավիթը» հիրավի ժողովրդական ներքնախավերի ընդերքում ծնված վիպերգություն է։

Ջավթիշ խալիֆի, Մըսրա Մելիքի կամ նրա զորավարների հասկացողությամբ գոյություն ունեցող պատերազմին սուր կերպով հակադրվում է պատերազմի այն ըմբռնումը, որն առկա է Սասնա դյուցազունների մոտ։

Խալիֆին և նրա զորաբանակը կոտորելուց հետո Սանասարն ու Բաղդասարը ոչ մի ավար չեն առնում։ Գոհար խաթունի հորից կարևոր հարկ վերցնող թագավորին ջախջախելուց հետո Փոքր Մհերը գոհանում է նրանով, որ իր աներոջն ազատում է ահավոր լծից, ոչինչ չպահանջելով պարտված թշնամուց։

Առանձնապես ընդգծվում է Դավթի խորշանքը ռազմական ավարի նկատմամբ։ Մըսրա Մելիքի դեմ փայլուն հաղթանակ տանելուց հետո Դավիթը մեծահոգաբար ազատ է արձակում Սասնա դեմ ելած նրա զորքը, թույլ է տալիս, որ Իսմիլ խանումը գնա Մըսը, իսկ ինքը Քեռի Թորոսի հետ վերադառնում է Սասուն ավարով, բայց ի՞նչ ավարով.

Ինչ կրեբեն ճետներ էն կովից.
Իսկի բան չեն բերի:
Էնոնց բերած էղավ ջուխտ մի եզ,
Լծեցին սել. ֆցեցին ճետեններ.
Մբսրա Մելիքի ականջ զարկեց Դավիթ նիզակի ծեր,
Դրավ վեր սելին, ֆաշեցին, բերին,
Քաշեցին, բերին՝ Սասնա ֆաղաք ճասցնեն:

Դա ոչ թե «ավար» է, այլ Մբսրա Մելիքի կործանման ապացույցը. այդ «ավարն» առանձին սայլով Սասուն բերելը ավելի է ընդգծում այն, ինչ այդ անհավասար ճակատամարտում բոցավառում էր Դավթի, Քեռի Թորոսի և նրա երեսունինն ուստերի սրտերը՝ հայրենիքի պաշտպանությունը, օտարերկրյա բռնակալների արտաքսումը, բայց ոչ երբեք զավթելու, ավար առնելու որևէ ցանկություն։

Եվ մի՞թե Դավիթը, արդարության ու մեծահոգության այդ մարմնացումը, կարող էր այլ կերպ վարվել։ Երկրից հարուստ կողոպուտով հեռացած Խոլբաշու և Կոզբադնի զորախմբի դեմ անհավասար ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո Դավիթը կանչում է սասունցիներին, հայտնում, թե ինչպես պետք է ավարը բաժանել. ամեն մարդ պետք է վերցնի միայն այն, ինչ նրանից խլել են, վերցնի միայն իր սեփականությունը.

Ժողովուրդ, կրնիկ, աղջիկ,
Քաղքեն տարած ալան-բալան ետ դարձուց,
Բերեց, ճասուց Սասնա ֆաղաք,
Կանչեց ժողովուրդ, ասաց.
— Ամեն մարդ գա, իրեն ապրանք ճանչնա, վերցու:
Ով որ ապրանք տվե,—
Թող գա ապրանք վերցու:
Ով որ ոսկի, փող տվե,
Թող գա իրեն ոսկին վերցու:
Ով որ մեկ կորեկ ավել վերցու,
Կը զարկեմ, գլուխ կը կտրեմ:
Ամեն իր տված բող վերցու:

Իսկ երբ Դավիթը ընաջնջում է տարիներ շարունակ Սասունը կողոպտող և իրենց քարանձավում ոսկե լեռներ կուտակող դևերին, ոսկին բաժանում է բոլորին։ Ով ինչքան կարողանում է, տանում է։ Դավիթը չի մոռանում նաև Քեռի Թորոսին ու նրա որդիներին, իսկ ինքը միայն մի ձի է վերցնում։

Սա նույնպես ավարառություն չէ, այլ սեփական բարիքի վերաբաժանում, բարիք, որ արդեն դադարել է առանձին մարդկանց սեփականությունը լինելուց։ Այն, որ էպոսի և էպոսն ստեղծող ժողովրդի գաղափարակիր Դավիթը հրաժարվում է ավարից, բխում է ուրիշի սեփականությունը զավթելու հանդեպ տածած խորշանքից, իր սեփականությունը

պաշտպանելու, սեփական բարիքները ամեն գնով վերադարձնելու պատրաստակամությունից։

Թերևս պատահականություն չէ հեքիաթներում ու զրույցներում հանդես եկող դևերի ու վիշապների բնակավայրի համընկնումը ոռոգման ակունքների մոտ ֆեոդալների կողմից ընտրված ամրոցատեղի հետ։ Դեվերի քարանձավներն արդյոք ժողովրդի պատկերացումը չե՞ն ֆեոդալների գանձարանների, ոսկով լեփ-լեցուն նկուղների մասին, որտեղ շեղջ-շեղջ դիզված է ոսկին, որտեղ ընկած են այնպիսի անօգտագործելի իրեր, ինչպիսին է ոսկե երկանքը։

Զարմանում ես, թե որքա՜ն խորն է ժողովրդական իմաստությունը, ժողովրդի նրբազգացությունը, որով նա ստեղծել է կերպարների մի ամբողջ շարք։ Այդ կերպարները վկայում են, որ ժողովուրդը, թեկուզև աղոտ, պրիմիտիվ ձևով պատկերացնում էր իր գլխին այնքան հաճախակի եկած աղետների պատճառը։ Ի՞նչ փույթ, որ այդ բարդ հարցի ըմբռնումը տրված է պրիմիտիվ ձևով, ի՞նչ փույթ, որ արաբ ծերունու խոսքը վերաբերում է միայն թագավորին, միայն Մըսրա Մելիքին։ Մենք լավ գիտենք, որ պատերազմի պատճառը միայն թագավորը չէ, բայց արաբ ծերունու խրատից հետո Դավիթն ավելի շրջահայաց է դառնում, քան յոթ որդու հայր զառամյալ ծերունին։ Պապ-Ֆրենկին սպանելուց հետո նա չի մոռանում, որ երկրի երեսից պետք է ջնջել բոլոր չար մարդկանց։ Այստեղ ժողովուրդը արդեն բարձրանում է դեպի ազնվատոհմների մեղքով իր գլխին եկած դժբախտությունների պատճառը գիտակցելու հետևյալ էտապը, մյուս աստիճանը։ Սակայն էպոսի վեհությունը ժողովրդի թշվառության իսկական պատճառների մեջ ներթափանցելն է։ Ժողովուրդն իր հերոսներին ներշնչել է այն մեծ իմաստությունը, որ մարդը պետք է լինի ճշմարտացի և միշտ հավատարիմ մնա իր տված խոսքին։ Մհերը գիտեր, որ իրեն աղետ է սպառնում, սակայն գնաց, քանի որ հավատարիմ էր իր տված խոսքին։

Ճշմարտացիություն — ահա այն հիմնական գիծը, որով ժողովուրդն օժտում է իր հերոսներին։

Էպոսի հերոսներն օժտված են բոլոր մեծ մարդկանց, առավել ևս ժողովրդական զանգվածներին հատուկ արդարամտությամբ ու մեծահոգությամբ։ Հիշենք, թե ինչպես Մհերը չի ուզում զինված գոտեմարտել առյուծի հետ։ Նա դեն է նետում սուրը, և մարդ ու գազան հավասար գոտեմարտի են մտնում իրար հետ։ Հիշենք, թե ինչպես Դավիթը նախ քնից արթնացնում է հակառակորդի բանակը և ապա նետվում մարտի։ Դավիթը նույնքան արդարադատ է նաև գազանների նկատմամբ. գազաններին չի կարելի սպանել գազանանոցում, որովհետև նրանք գերիներ են, իսկ գերիներին չի կարելի կոտորել։ Էպոսի հերոսների մեջ խոսող այս մե-

ծահոգությունն ու արդարամտությունը դրսևորված է նրանց մղած թեժ ճակատամարտերի պահերին անգամ։

Ժողովուրդն իր հերոսներին նկարագրելիս ճշմարտացիորեն երևան է հանում նաև նրանց թույլ կողմերը։ Մհերը լավ իմանալով, որ ինքը պարտավոր է տուն վերադառնալ անարատ վիճակում, այսուհանդերձ տեղի է տալիս նենգավոր Իսմիլ խանումի գայթակղությանը և խմում է գինին։

Էպոսի հերոսներն իրենց առաքինություններով առանձնապես թանկ են մեզ՝ սովետական մարդկանց համար։

Հիշենք, թե ինչպես Սանասարն ու Բաղդասարը իրենք են տքնում (այդ հատկությունն ավանդում են նաև իրենց թոռ Դավթին), հսկայական ապառաժներ են կրում-բերում, որպեսզի նախ շքավորների համար տներ կառուցեն, ապա իրենց համար՝ ամրոց։

Եթե նրանք իրոք ֆեոդալներ լինեին, ապա հազիվ թե այդ ձևով վարվեին։ Նախ տներ չէին շինի շքավորների համար, որ նրանց շայրեր ամռան արևը, ապա՝ իրենց համար դղյակ։

Էպոսում հիանալի կերպով զուգակցված են աշխատանքից հառնող հերոսությունը՝ ռազմի դաշտում ցուցաբերված հերոսության հետ, որը մեզ համար առանձնապես թանկ է. մենք գիտենք, որ միայն այս հերոսությամբ են զորավոր այն անունները, որ մենք հպարտությամբ ենք արտասանում, այն մարդկանց անունները, ովքեր այսօր մուրճ են բռնում, վաղը սրախողխող կանեն ոսոխին, այսօր դարբնի սալի հետ են կապված ոչ թե շղթայով, այլ աշխատանքի հանդեպ ունեցած սիրով, իսկ վաղը կսավառնեն եթերում, որպեսզի բնաջնջեն մայր երկրի սահմանները խախտողներին։

Սակայն մեզ համար Սասնա հերոսները թանկ են մի այլ պատճառով ևս։ Նրանք թանկ են ժողովրդի հետ ունեցած իրենց միասնության գիտակցությամբ, այն ժողովրդի, որի զավակներն են իրենք։

Մասսաների հետ ունեցած կապը դրսևորված է էպոսի ամենահիասքանչ տեսարանում, երբ Դավիթը, Մըսրա Մելիքի դեմ կռվի գնալուց առաջ, հրաժեշտ է տալիս համաքաղաքացիներին ու համագյուղացիներին, անսահման սիրո ու խանդաղատանքի խոսքեր ասելով նրանց.

Դավիթ էլավ, բռավ վեր իր ձիուն,
Աստծու անուն տվեց,
Դարձավ, առավ խաբրը քաղքացոց,
Դարձավ, առավ խաբրը գեղացոց,
Առավ Դավիթ խաբրը մարդ ու կնկրտոց, ասաց.
— Աղրեբնե՛ր, քուրե՛ր, դուք մի՛ վախենաք,
Աստծու կամքով կ'էրթամ ես կռիվ.
Օ՛, քուրեր, դուք կացեք բարով,
Դուք ինձի քուրությո՛ւն եք արե.

Օ՜, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերությո՛ւն եք արե։
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով.
Իմ դուռ-դրկիցներ, ձեր էրես շա՛տ եմ բռեր,
Ինձ հալա՛լ արեք։
Բարի տանտիկիններ՝, ինչ հա՛ց կը թխեք,
Դավթի անուն հիշեցեք։
Ջանելներ՝, դուք է՛լ, ինչ որ ֆե՛ֆ կ'անեք,—
Դավթի անո՛ւն հիշեցեք։
Իմ ֆուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,
Մնացե՛ք բարով։

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ» ԵՎ ՄՅՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷՊԻԿԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԸ

Հայկական էպոսի տեղը հաղարամյակների ընթացքում ստեղծված մյուս վիպերգությունների շարքում որոշելու համար ամենից առաջ անհրաժեշտ է քննության առնել այն նմանությունը, որ գոյություն ունի հին Հայաստանի կոսմիկական առասպելների և մյուս ժողովուրդների առասպելական հնագույն պատկերացումների միջև։

Ավելի ճիշտ կլինի, եթե այս հարցերի քննարկումն սկսենք «Սասունցի Դավթի» նախահիմքը կազմող տարրերից, որոնք ստեղծվել են էպոսի պատմական մասի գոյացման ժամանակից շատ հեռու ընկած շրջանում։ Այդ տարրերն ստեղծվել են այն դարաշրջանում, որը նախորդում է ոչ միայն հայ ժողովրդի գոյացմանը, այլև հետագայում հայ ժողովրդի կազմի մեջ մտնող տոհմերի ձևավորմանը։

Խոսքն առասպելական այն կերպարանքի մասին է, նրանց միջև բորբոքված այն պայքարի, որը ծագել է մարդկային հասարակության զարգացման ընթացքում, արտահայտել այդ հասարակության պատկերացումները շրջապատող բնության երևույթների մասին։ Անհրաժեշտ է պարզել, թե ինչպե՛ս են ծագել այդ կերպարները, ինչո՛վ բացատրել տարբեր ժողովուրդների ստեղծած առասպելների ու առասպելական պատկերացումների նմանությունը, ի՛նչ չափով կարելի է խոսել այդ զրույցների ու պատկերացումների փոխառյալ լինելու մասին, որքանո՛վ են անկախ հիշյալ պատկերացումներն այն ժողովուրդների, որոնք իրարից հեռու են աշխարհագրական կամ ժամանակային անորոշ տարածությամբ։

Հիշենք այն խոսքերը, որ Լենինն ասել է ռուսական բիլինաների տեքստը աչքի անցկացնելուց հետո։ Նա գտնում է, որ անհրաժեշտ է այդ բոլորն «ընդհանրացնել», «դիտել սոցիալ-քաղաքական տեսանկյունով»,

որ «այդ նյութի հիման վրա հրաշալի հետազոտություն կարելի է գրել ժողովրդական իղձերի և սպասելիքների մասին։ Այդ իսկական ժողովրդական ստեղծագործություն է, որ այնքան պետքական և կարևոր է մեր օրերում ժողովրդական հոգեբանության ուսումնասիրության համար»[1]։

Լենինի առաջադրած հարցերի կարևորությունը պարտավորեցնում է հատուկ խնամքով և զգուշությամբ, բայց և միևնույն ժամանակ հետևողականորեն մոտենալ դրանց լուծմանը։

Կար ժամանակ, երբ ամբողջ աշխարհում տիրապետող արևմտաեվրոպական բուրժուական գիտությունը և նրան հետևող կիսաֆեոդալական-կիսաբուրժուական ռուսական գիտությունը (որոշ բացառությամբ) այս հարցը լուծում էին չափազանց հասարակ ձևով, այնպես ինչպես լուծվում է տարբեր լեզուների իրար հետ ունեցած ազգակցության հարցը։ Ամեն ինչից բարձր դասելով հնդեվրոպական ժողովուրդների բնածին ընդունակությունները, օժտվածությունն ու կուլտուրան և կյանքի իրավունք տալով Հին Արևելքի այսպես կոչված սեմական ժողովուրդներին,— նրանք լույսի միակ աղբյուրը, վսեմ գաղափարների միակ ակունքը, կուլտուրայի միակ աղբյուրը համարում էին Միջերկրական ծովի ավազանը, ընդ որում մոռացության տալով, որ գետերը դեպի այդ ծովն են հոսում, ոչ թե սկիզբ առնում այնտեղից։ Եթե նյութական կուլտուրայի ասպարեզում որևէ նվաճում էին ձեռք բերում Միջերկրական ծովի ավազանում և էլի ինչ-որ տեղ բնակվող ժողովուրդները, ապա դրա սկզբնաղբյուրը, այդ «ինչ-որ տեղը» մշտապես համարվում էին Միջերկրական ծովի ժողովուրդներն ու կուլտուրան։

Մյուս ժողովուրդներին հնարավորություն էր տրվում սեփական պատմության հարցերը, սեփական կուլտուրայի հարցերը, սեփական կուլտուրայի դերը լրիվ կապիտուլացնելու գնով հաղորդություն առնել Միջերկրական կուլտուրայի աղայական սեղանից, իրենց պատմական արժեքը չափելով այդ կուլտուրայից ունեցած իրենց կախման չափով։

Միայն դեպի հին տրադիցիաներն ունեցած հակումը կարող է հանդեցնել յուրատեսակ ռեանշի պահանջներին, որոնց ականատեսներն ենք մենք դառնում երբեմն։ Ռևանշիստական պահանջի օրինակ կարող է ծառայել այն սնանկ փորձը, որով ջանում են հաստատել, թե հելլենական աշխարհայացքի հիմքում ընկած տիտանի՝ մարդկության բարօրության համար անձնվիրաբար պայքարող մարտիկի կերպարը փոխ է առնված Կովկասից դեպի Սև ծովի արևելյան ափը հելլենների կատարած ճանապարհորդության ժամանակ, հին Վրաստանում տարածված Ամիրանի առասպելներին ծանոթանալու ընթացքում։

---

[1] Վ. Բոնչ-Բրուևիչ, *Լենինը պոեզիայի մասին (տե՛ս* Н. П. Андреев, Русский фольклор, хрестоматия, 1938, *էջ* 29)։

Այս պնդումը վկայում է, որ տվյալ հարցում հին կուլտուրայի ջահակիր և մարդկային ամբողջ կուլտուրայի ակունքը համարվող ժողովուրդներից մեկի անունը ձգտում են նենգափոխել մի այլ ժողովրդի անունով, որը նույնպես բարձր կուլտուրայի ջահակիր ու ստեղծող է և, ինչպես հելլեն ժողովուրդը, ի դեմս իր ոչ նացիոնալիստական խավերի, չի ձգտել իրեն համարել համամարդկային կուլտուրայի միակ ակունքը։

Մարդկային բարօրությանը ծառայող, այդ նպատակի համար իր կյանքը նվիրաբերող հերոս հսկայի գաղափարը աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ էլ այս կամ այն ձևով ընդհանուր է, և սա մեզ իրավունք չի տալիս ամերիկյան հնդիկների հերոս Հայավաթի՝ մարդկության ծառայի մասին հյուսված ավանդապետի արմատները որոնելու Բալկանյան թերակղզում կամ Կովկասում, չնայած հելլենները երկրպագել են Պրոմեթեոսին, վրացիները՝ Ամիրանին, աբխազները՝ Աբրսկիլին, հայերը՝ Մհերին։ Նման հերոսի կերպարը, հերոս, որն իր մեջ հայելու կիզակետի նման կենտրոնացնում է բարօրության և մասամբ կրակի համար մարդկության մղած դարավոր պայքարը, անկախ կերպով ծնվել է տարբեր ժողովուրդների միջավայրում, սակայն ծնվելուց հետո հող է ստեղծել իր վրա տեղափոխելու այլ ժողովրդի միջավայրում հանդես եկած համապատասխան հերոսի բնավորության գծերը։ Եվ կասկած չկա, որ Պրոմեթեոսի առասպելի որոշ տարրեր կարող էին ներմուծված և փոխառնված լինել, հարակցվել հիմնական գծերով արդեն ստեղծված կերպարներին։

Քարին, կրակին, մետաղին նման պայմաններում և տարբեր ժամանակներում տիրապետելը զարգացման նույն ուղին է անցել երկրագնդի զանազան մասերում։ Մարդու մտածողությունը, որը պայմանավորվում է նրա տնտեսական կյանքի զարգացմամբ և որն իր զարգացման ընթացքում նույն ուղիով է ընթանում, աշխարհի տարբեր ծայրերում դրսևորվել է համանման ձևերով, համանման կերպարներով, համանման առասպելներով, այդ կերպարների պայքարն արտացոլող ավանդավեպերով։ Եվ հազարավոր սերունդների կողմից բերնե-բերան պատմվելով, այդ առասպելները, ավանդությունները, բնության, գազանի և մարդու դեմ մարդու մղած պայքարի փորձի այս բոլոր կուտակումները հաճախ մեզ են հասնում զարմանալիորեն նման ձևերով։ Կոսմիկական հնագույն կերպարներում չկա ոչ միայն ժողովրդական, այլև ցեղային տնօրեն, քանի որ դրանք ծագել են այն ժամանակ, երբ տակավին չէին ձևավորվել ո՛չ ժողովուրդները և ո՛չ էլ ցեղերը։

Ինչպես առուն իր հունով հոսելիս իր մեջ է ընդունում այլ առվակներ, շրջանցում կամ իր հոսանքի տակ է առնում ճանապարհին հանդիպած խոշընդոտները, այդպես էլ կոսմիկական կերպարների մասին հյուսված զրույցներն ու առասպելները, հազարավոր մարդկանց, հարյուրավոր սերունդների կողմից պատմվելով, իրենց մեջ են ընդունում նո-

ցանոր գծեր, նորանոր մանրամասնություններ, որոնք հաճախ գալիս են հեռվից, այլ հոսանքից։ Այս առասպելները հաղարամյակներ ապրած իրենց ձևով պատմական կյանքի երևույթներն ու իրադարձությունները ծածկում են, միահյուսվում դրանց հետ, առասպելական բնույթ տալիս պատմական դեպքերին, և պատմական երանգավորում մտցնում իրենց, ըստ էության, առասպելական բովանդակության մեջ։

Ժողովրդի պատկերացմամբ, հերոսն իր ուժը ստանում է կենարար տարերքի հետ շփվելուց։ Զափազանց արժեքավոր է Անթեյի ու Սանասարի զուգադրումը։ Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյն իր ուժն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի զորության աղբյուրը ջուրն է։

Հանձինս Սանասարի ու Բաղդասարի, տեսնում ենք այն երկվորյակ հերոսներին, որոնք մի շարք ժողովուրդների մոտ ծնվում են հրաշագործ աղբյուրից։ Դրանք են հունական Դիոսկուրները, Կաստոր ու Պոլիդևկ փրկարար եղբայրները, որոնց օգնությանն են դիմում աղետյալները, և որոնք, ինչպես ենթադրվում է, հանդիսանում են լուսաստղի և իրիկնային աստղի մարմնավորումը։ Դրանց համապատասխանում են Հնդկաստանի Ավշինները և Իրանի Ասֆինները։

Կենարար ջուրը կնոջ կերպարով, որը նույնպես կյանք է շնորհում, իր արտացոլումն է գտել գեղեցկուհի Արմաղանի կերպարում, որին վիշապից փրկում է Մհերը, դրանով իսկ փրկելով նաև աղբյուրի ակը։ Սա այն կերպարն է, որ Հունաստանում տեղ է գտել Արգուսի կողմից պահպանվող և Պերսեուսի կողմից փրկված Անդրոմեդի առասպելում։

Ինչպես մեզ հասած և ամենօրյա գործածության մեջ գտնվող այս կամ այն բառի մեջ հաճախ արտացոլվում են խոր հնությունից եկած երևույթներ, վաղուց վերափոխված հասկացողություններ, այնպես էլ ժողովրդական բանահյուսության պատառիկներում պահպանվում են մարդու այն աշխարհընկալման արտահայտությունները, որ հատուկ են եղել նրան զարգացման վաղ էտապներում։ Ի թիվս նման մնացուկների և ժողովրդի հիշողությամբ մեր օրերը հասած բեկորների, մենք հանդիպում ենք նաև առասպելական հնագույն ըմբռնումների, որոնք անչափելիորեն ավելի հին են, քան մեկ ու կես հազարամյակ գոյություն ունեցող հայ գրականության հնագույն հեղինակների հաղորդումները։

«Սասունցի Դավիթ» էպոսում, ինչպես ժողովրդական ներքնախավերից եկող հնադարյան յուրաքանչյուր այլ վիպերգության մեջ, արտացոլված են թե՛ դիցաբանության ու կոսմոգոնիայի առավել լիակատար, ծավալուն պատկերը, թե՛ առասպելաստեղծության զարգացման փուլերը, թե՛ կոսմոգոնիական մտապատկերների այն տարրերը, որոնք իրենարտացոլումը չեն գտել հայ պատմիչների թանկարժեք աշխատությունը-

ների էջերում։ Այդ կերպարներն ու մտապատկերները առանձնապես գնահատելի են այն պատճառով, որ սկիզբ առնելով մարդկային զարգացման այն էտապներում, որոնք նախորդում են հետագայում հայ ժողովրդի կազմի մեջ մտած ժողովուրդների կազմավորման շրջանին, դրանք իրենց մեջ պարունակում են այլ ցեղերից, այլ ժողովուրդներից ավանդաբար մեզ հասած կերպարներին հարազատ գծեր։

Նման կերպարների ու պատկերացումների թիվը մեծ է և ոչ մի կերպ չի կարող սահմանափակվել մարդկանց բարօրության համար պայքարող հերոսին վերաբերող պատկերացումների վերոհիշյալ շրջանակով, քանի որ գերագույն ուժերի դեմ պայքարող մարտիկի այդ կերպարը կարող էր հանդես գալ միայն այն բանից հետո, երբ արդեն ստեղծվել են նույն այդ գերագույն ուժերի մասին եղած պատկերացումները։

Բնության հիմնական երևույթները և մարդու համար շոշափելի առավել գործուն ուժերը պետք է, որ ամենից առաջ մարմնավորվեին այս կամ այն մարդակերպ, իսկ ավելի վաղ՝ կենդանակերպ ձևերի մեջ։ Եղել են միջանկյալ էտապներ, երբ կենդանակերպ էակները վերափոխվել են մարդակերպների, ասենք կիսամարդ-կիսակենդանի հիբրիդային էակների, ինչպես նաև այնպիսի էակների, որոնք թռչունի, շան, այծի կամ ձկան հատկանիշներ են պարունակում, նայած թե առասպելների զարգացման ո՞ր էտապին են վերաբերում։ Այդ էակներն են հիշեցնում օսեթական առասպելի Պասկոնձին, հայկական առասպելի Պասկուջը, սլավոնական առասպելի Պասկուդը, որի անունն է միայն հասել։ Պրիմիտիվ մարդու մտածողության սահմանափակությունը, որտեղ էլ ապրելիս լիներ այդ մարդը, և այն պատկերացումների սահմանափակությունը, որոնցից նա կարող էր օգտվել բնության ու նրա երևույթներն արտահայտելու համար, բնականաբար հանգեցրել են նրա գիտակցության համար անմատչելի, ահարկու բնության երևույթների նույնանման դրսևորմանը, նույնիսկ այն դեպքում, եթե այդ պատկերացումներն ստեղծվել են աշխարհագրականորեն անանցանելի տարածություններով, ժամանակի տեսակետից բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հազարամյակներով իրարից հեռու մարդկանց մտածողության մեջ։

Դեպի այս խոր արմատներն են տանում տարբեր ժողովուրդների ստեղծած, մեծ մասամբ իրար այնքան նման առասպելներն ու վիպերգությունները կոսմիկական հերոսների մասին։ Սակայն այս առասպելների ու վիպերգությունների զարգացման և զանազան ցեղերի ու ժողովուրդների միջև սկսված հաղորդակցության ընթացքում այս կամ այն կողմին հատուկ կերպարներն ու մտապատկերները կարող էին փոխադարձաբար ազդել միմյանց վրա, միմյանց վրա շերտավորվելով բարդանալ։

Նման շերտավորման ու բարդացման օրինակ կարող է ծառայել և

այն պատժի տեսակը, որին դատապարտվում է Պրոմեթեոսը, պատիժ, որ աշխարհագրորեն կապված է Կովկասի հետ և կրում է վրացական Ամիրանի, օսեթական Ամրանի, աբխազական Աբրսկիլի և այլ տիտաններ մասին հյուսված առասպելների հետքերը։ Սակայն այս շեղտավորումները ոչ մի հիմք չեն տալիս Պրոմեթեոսի կերպարը հիմնական գծերով կախման մեջ դնել կովկասյան վիպերգություններից։ Մահվան հանգամանքը կամ մահապատժի ձևը չի կարող հիմք համարվել այս կամ այն հերոսի կամ հսկայի կերպարի և տիպի համար, ճիշտ այնպես, ինչպես ասենք փառապանծ կազակ Երմակ Տիմոֆեևիչի՝ առասպելներով պարուրված այդ հերոսի հիմնական գիծը չի կարելի համարել նրա վախճանը Իրտիշի փրփրահույզ ալիքներում։

Փոփոխված և կարծես թե լիովին մարդկայնացված կոսմիկական հնագույն կերպարների կողքին հայկական ժողովրդական էպոսում հանդիպում ենք Մհերի, Զենով Հովանի և Ցոան Վերգոյի եղբայրին։ Մհերը, որը, ինչպես տրված է էպոսում, բոլոր հերոսներից ամենակատարյալն է, իր իսկ անվան մեջ պարունակում է իր կոսմիկական էության բացահայտումը։ Մհերի՝ արևի աստծո անունը համանման ձևերով հանդիպում է բազմաթիվ ժողովուրդների մոտ, թե՛ հին Հնդկաստանում, թե՛ հին Իրանում, թե՛ հայերի մոտ՝ Mher, Mehr ձևով (որ պահպանվել է հայերեն mehra, mehyan բառի մեջ), Միհր ամսանվան մեջ Mehekan ձևով, որը համապատասխանում է իրանական mitrakan'y, mihrakan'y-ին և Mehr, Mehrik անվան ձևով։ Այն հանդիպում է նաև անտիկ աշխարհի ժողովուրդների մոտ, որոնք փոխ են առել հիշյալ անունը և վերջինիս հետ կապված առասպելական զրույցների մի մասը, զուգորդելով դրանք իրենց Helios-ի և sol invictus-ի (անպարտելի արևի) հետ։

Իզուր չէ, որ Միհրի՝ անխոնջ որսորդի, իր ճառագայթներով աշխարհը լուսավորողի և ջերմացնողի, տկարների ու ճնշվածների հովանավոր լուսաճաճանչ մարտիկի կերպարը դարձել է Հեռավոր Արևելք ընկած հռոմեական լեգիոնների «ռազմիկների աստվածը»՝ ձուլվելով Helios, Sol invictus-ի կերպարին, ճիշտ այնպես, ինչպես նա հովանավոր ու ապավեն էր դարձել ազատության ծարավի և ապստամբության սուր բարձրացրած մարդկանց համար։

Հիասքանչ է ակադեմիկոս Մանանդյանի այն միտքը, թե տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների մոտ ինչ հետևողականությամբ են ապստամբներն իրենց անվանել «արևի որդիներ» և «արևաչող քաղաքի որդիներ», Պերգամի heliopolit-ներից և Հայաստանի arevordiներից մինչև Վերածնության դարաշրջանի ուտոպիստ իտալացի Կամպանելլայի սոլյարիները։

«Սասունցի Դավիթ» էպոսում Մհերի կերպարը բաժանված է երկու մասի. առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի

ճաճանչափայլ և կենսալից արևի հատկանիշները, իսկ երկրորդը Թոռան կերպարն է, որն արտացոլում է հոգնած արևի, մայր մտնող արևի հատկանիշները։ Այդ հանգչող արևը սահմանված օրը պետք է ճառագի նոր ուժով՝ ի բերկրություն այն arevordi-ների, որոնք նրա հետ են կապել իրենց բոլոր երազանքներն ու հույսերը, ինչպես Լենինն է նշել ռուսական բիլինաների մասին խոսելիս։

Էպոսի վարիանտներից մի քանիսում Մեծ Մհերին դժվար է զանազանել Փոքր Մհերից՝ պապին թոռից, քանի որ նրանք կարծես իրար մեջ են կիսել իրենց կոսմիկական հատկանիշները։ Պապը որսորդ է, սև ցուլ է սպանել՝ խավարի ու սանդարամետի սիմվոլը, Միհրի նման ոչ թե Ցլասպանի մականուն է ստացել, այլ՝ Առյուծաձև, քանի որ նրա կերպարի մեջ են ներհյուսվել Արևելքում Նեմեական առյուծին հաղթող Միթրայի, Հերակլի, թերևս նաև հին արևելյան Գիլգամեշի կերպարի, հատկանիշները։

Իսկ թոռը դեգերում է աշխարհով մեկ, հեռանում ժայռի խորքը։ Չէ՞ որ անձավում հնուց ի վեր կարող էին գտնվել միայն Միհրի սրբավայրերը. Միհրի, որն ամեն օր դեմքը թաքցնում է իր հողածին երկրպագուներից, նախապես օծվելով իր լուսաճաճանչ դեմքի մշտնջենական փայլը պահպանող, մաքրող ջրում։ Ծովի մեջ խորասուզվելը նույնքան է պայծառացնում Միհրի փայլը, որքան Մհերի ու նրա տոհմի ուժն է ամրապընդվում ջրի հետ շփվելիս։

Սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս, թե՛ պապի, թե՛ թոռան կերպարում Մհերի երկատված տիպարն օժտված է թույլերի պաշտպանի ու հովանավորի, ժողովրդի բարօրության համար պայքարող մարտիկի գծերով, մարտիկ, որը կռվում է քաղաքը ջրից զրկողների դեմ, քաղցած ժողովրդին հաց հասցնելուն խոչընդոտ ուժերի դեմ։ Մհերը հանդես է գալիս որպես գահին բազմած մարդակերներին պատժող, ժողովրդի բարեկեցությունը տարերային աղետներից պաշտպանող, անարդարության և միաժամանակ երկնքի դեմ մարտնչող հերոս, որը խոստանում է ժայռի խորքից դուրս գալ միայն այն բանից հետո, երբ հիմնակործան կլինի հին աշխարհը, կստեղծվի նորը։ Պապի որսորդության և թոռան քարանձավ մտնելու, երկու Մհերների երկրային բոլոր սխրագործությունների միջից հառնում է Միհրի լուսաճաճանչ կերպարը, որի անունը պարսկերենում նշանակում է թե՛ արևի լույս, թե՛ սեր։

Մհերի եղբայրը՝ Զենով Հովանը, որը լիովին մարդկայնացված է, պահպանում է սասանող ձայնով երկինքը դղրդացնող իր կոսմիկական կրկնորդի գծերը։

Սակայն Զենով Հովանը երկնային այս շանթաձիգին հիշեցնում է ոչ միայն սարերից ու ձորերից դեն, յոթ քաղաքներում լսվող ահարկու իր ձայնով, միայն այն ձայնով ու թոքերով, որոնց ուժի դիմադրությունը

հաղթահարելու համար նա իր մեջքին յոթ գոմեշի կաշի է փաթաթում, դրանց վրայից էլ՝ երկաթե շղթաներ։ Նա ոչ միայն բարձրագոչ է, այլև դարբին, որը մետեորային երկաթից սուր է կռում, ձիեր բուժելու արվեստին տիրապետելով՝ ապաքինում է Քուռիկ Ջալալու վիրավոր ոտքը։ Ինչքան էլ Զենով Հովանի կերպարը մարդկայնացված լինի, միևնույն է, նա հիշեցնում է երկնաբնակ դարբնին, որը մուրճի հարվածներով խլացնում է երկնային որոտը, իսկ իր ձայնով՝ մարդկանց, ինչպես հին գերմանացիների Թորը կամ Դոնարը։

Հելլենների մոտ ամպրոպաբեր Զևսի կերպարը չէր տարբերվում շանթաձիգից, երկնային նետաձիգից, որը երկիր էր ուղղում իր խոցող նետերը։

Գերմանացիների մոտ նետաձիգ ռազմիկի և որոտաձայն դարբնի կերպարներն արմատավորվել են առանձին-առանձին. դրանցից մեկը Օդինն է, որը երբեք վայր չի դնում իր սուր նիզակը, իսկ մյուսը նրա եղբայրն է, մուրճով որոտ բարձրացնող Թորը։ Այդպես է նաև հայկական էպոսում. մեկը որսորդ, նետաձիգ և նիզակակիր Մեծ Մհերն է, իսկ մյուսը նրա եղբայրն է, խլացուցիչ ձայնով օժտված Զենով Հովանը կամ Քեռի Թորոսը։

Հելլենական Զևսի կերպարի մեջ միավորվել են երկնքի տիրակալը, ամպրոպաձիգը և անձրև շնորհողը, իսկ հայերի մոտ այս երեք կերպարը հանդես են գալիս դեռևս առանձին-առանձին. այս փաստը գալիս է ասելու, որ առասպելական ավանդությունները Հայաստանում ծագել են զարգացման ավելի վաղ շրջանում, քան դա եղել է Հունաստանում։

Այս պատկերացումների հետագա զարգացումը Հայաստանում ընթացել է այլ ուղիով և կասեցվել ժողովրդի աշխարհայացքի վրա հասարակական զարգացման պայմանների թողած ազդեցության հետևանքով. ընդ որում այդ պայմանները միանգամայն տարբերվում էին հին Հելլադայում գոյություն ունեցող պայմաններից։ Այստեղ կարող էր նշանակություն ունենալ նաև Իրանի ժողովրդա-զրադաշտական միջավայրի հետ սկսված հաղորդակցությունը և զրադաշտականության փոխարինած քրիստոնեության ազդեցությունը։

Սակայն կոսմիկական այս կերպարները, որոնցից յուրաքանչյուրը անձնավորում է բնության այս կամ այն երևույթը, հայկական միջավայրում ևս ընթացել են միաձույլ կերպարների մեջ միավորվելու ուղիով։ Կոսմոգոնիական իմաստով սրա արտահայտությունը կարող է հանդիսանալ երկնային նետաձիգ որսորդի և ամպրոպաձայն Զենով Հովանի հատկանիշների միաձուլումը Դավթի կերպարի մեջ, որն իր ծնունդով դառնում է իր հոր մահվան պատճառը։

Հելլենական առասպելաբանության մեջ և հելլենական պանթեոնում դիֆերենցված երկնաբնակ Ապոլլոնի կերպարն ունի առանց շանթի հար-

վածող իր կրկնորդը։ Դա նրանից անջատված Թեբ-Հելիոսն է, որի կառքը դղրդոցով է լցնում երկինքը։ Ռուս ժողովրդի պատկերացումների մեջ ուժի այդ աղբյուրը երկնքով սուրացող Եղիա մարգարեն է, որի անունը համահնչուն է Թեբ-Հելիոսի անվանը։

Շանթարձակ նետաձիգի, երկինքը մուրճի հարվածներով դղրդացնող դարբնի կերպարից անջատվում է երրորդ երևույթը՝ որոտին ու կայծակին հաջորդող անձրև շնորհողի կերպարը։ Արդյոք տեղին չէ՞ առաջ քաշել (առայժմ միայն առաջ քաշել) հետևյալ հարցը։ Հնարավոր չէ՞ ենթադրել, որ երկնային ջրերն առաքողի կերպարն արտացոլված է հայկական էպոսի երրորդ եղբոր՝ Ցռան Վերգոյի մականվան մեջ։ Չէ՞ որ «ցռան» չի նշանակում միայն «կեղտոտող»։ Նյութական կուլտուրայի մեջ դա ամենից առաջ նշանակում է ջրաղացի փողրակ և վերջինիս այն մասը, որը ջուր է մղում ջրաղացի անվացրանքի վրա։ «Ցռան» բառի երկրորդ, ոչ թե առաջին, նշանակությունը առնչվելով Սանասարի երրորդ որդուն վերաբերող պատկերացումներին, Ցռան Վերգոյի երկրային կերպարը նկարագրելիս թերևս կարող էր հիմք տալ նրան վերագրելու վախկոտին հատուկ այդ թերությունը ևս, որի անվան մեջ կարող էր թաքնված լինել նաև ջրի ժայթքման հասկացությունը (օրինակ, ջրվեժում)։

Երկնային երեք երևույթ արտացոլող եռյակին պետք է ուղեկցի երկրային հաստատությունը, որն այս կամ այն կերպ կապված է երկնային ուժերի հետ։ Հիշենք գերմանացիների Էրդային, որը վաղեմի կապով կապված է Օդինի հետ. հիշենք Դեմետրեին՝ մայր հողը, որը Զևսից ծնում է Պերսեֆոնին. հիշենք Մեծ Մհերի վաղեմի սիրուհուն՝ այն պառավին, որը միակն է ամբողջ էպոսում, միակը Սասնա բոլոր բնակիչներից, որին մտահոգում է վարուցանքը, ինչպես դա մտահոգում է բերք շնորհող Դեմետրեին։ Այդ պառավն իմաստուն է ինչպես Էրդան ու Դեմետրը. հոգատար մայր է հերոսի համար, ինչպես Էրդան, որը ողբում է իր դստեր կորուստը. ինչպես Դեմետրեն, որին հրճվանք է պատճառում դստեր վերադարձը, որը բերկրում է տեսնելով իրեն Պերսեֆոնեի հետ կապող հաստկերի ծլարձակումը։ Իր զարգացման ավելի ուշ շրջանում ժողովրդի հիշողության մեջ արմատ բռնած և մարդկայնացված մայր-հողի կերպարը հայկական էպոսում տրված է իբրև մի աղքատ պառավ, որը հայտնի չէ, թե ումի՛ց է ծնել իր դստերը, որը սնվում է իր աննշան արտի կորեկով։ Եվ եթե կարելի է պատահականություն համարել այն, որ հերոսը նրան «նանեհ» է անվանում կամ գերմանական Էրդայի երկրորդ անունը հնչում է իբրև «Նոննա», կամ իրանական առասպելաբանության մեջ պտղաբերություն շնորհող Անահիտի անունը հնչում է իբրև «Նանայյա», ապա չի կարող պատահական լինել Դեմետրեի, Էրդայի և սասունցի պառավի գործողությունների ու ֆունկցիաների նմանությունը։

Իսկ Դեմետրեի, Էրդայի և սասունցի պառավի կերպարների նշա-

նակության տարբերությունը, հասկի ու սրա մեջ արտացոլված տարեկան շրջապտույտի նշանակության տարբերությունը, այդ նշանակության ընդգծվածության տարբերությունը առասպելաբանական երեք սիստեմում, չի կարող շրխել տնտեսական կառուցվածքի տարբեր էտապներից, որոնց վրա խարսխվել են մայր-հողի այս երեք կերպարները։

Երկրագործական Հունաստանը և անասնապահական Սասունը, որն աննշան չափով էր կերակրվում պրիմիտիվ հացաբույսով՝ կորեկով, պետք է, որ իրենց պանթեոններում էապես տարբեր տեղ տային բերքի հովանավոր աստվածուհուն։

Էպոսում հիանալի է կորեկի արտի տեր պառավի կերպարը։ Ջնայած չքավոր այրու արտաքուստ միանգամայն երկրային տեսքին, պառավ, որի ամբողջ գոյությունը կախված է մի թիզ արտում ցանած կորեկի բերքից, և որի միակ մխիթարությունը էպոսում հանդես չեկած գուստրն է, նա այս արտաքինի տակ թաքցնում է բազմաթիվ ժողովուրդների կոսմիկական առասպելներին հատուկ կերպարներից մեկի գծերը։ Նրա կոսմիկական այս կապերը բնորոշվում են, իհարկե, ոչ միայն նրանով, որ նա մի ժամանակ Մեծ Մհերի սիրածն է եղել։ Այդ գծերն առավել ցայտուն են դրսևորվում հատկապես նրանով, որ այդ պառավը շարունակ խրատներ ու ցուցումներ է տալիս Դավթին, ինչպե՛ս պետք է գործել, կանխագուշակում է երիտասարդ հսկայի ապագան, թաքցրած գաղտնիքներ է բաց անում և հարևանցիորեն մայրական խրատներ տալիս, թե, օրինակ, ինչպես խուսափել հորեղբոր կնոջ՝ Սարիեի երկար ու համառ հետապնդումներից։

Սակայն, ինչպես նշվեց, այս պառավ կնոջ կերպարի հիմքում ընկած է ոչ թե պատկերացումը մայր-հողի մասին, այլ այն տարերքի պատկերացումը, որը բազմաթիվ ժողովուրդների մոտ ընդունել է մայր-կնոջ կերպարանքը, դարձել է իմաստուն խրատներ շնորհող և ծնել լիովին մարդկայնացված մարգարեուհիներ։ Հունական Դեմետրեի, այսինքն՝ մայր-հողի գծերը, հնադարյան գերմանացիների Էրդայի՝ վոթանի սիրածի բնավորության գծերը նշմարվում են սասունցի պառավի մոտ, և գուցե պատահական չէ, որ հատկապես նրա մոտ է առանձնապես ընդգծված հոգատարությունը վարուցանքի նկատմամբ։ Չէ՞ որ միայն նրա կապակցությամբ է ընդհանրապես հիշատակվում վարուցանքը։

Պառավ կնոջ հուսահատությունը, որի պատճառն իր աղջկա առևանգումն է, շատ է նման առևանգված Պերսեֆոնեի մոր՝ Դեմետրեի վշտին։

Հաց շնորհող մայր-հողի երկրպագությունը առնչվում է երկրագործի հերոսականացված անձնավորության պաշտամունքի հետ, որն առկա է թե՛ ռուսական բիլիններում, թե՛ իրանական էպոսում։ Նման երկրագործ մի ծերունու Սանասարն ու Բաղդասարը հրավիրում են իրև պատվավոր հյուրի, և սա կնքում է նրանց կառուցած ամրոցի անունը, ավելի

ճիշտ՝ ասում է, թե անուն կնքելու հարկ չկա, քանի որ ամրոցը տեղովտեղ սարսափ է, սասանում («Սասուն» բառի ժողովրդական մեկնաբանությունը)։

Հին աշխարհի պայմաններում, երբ ժողովրդի հույսերի, ձգտումների ու երազների մեծ մասը իրրև կանոն չէր իրականանում, հերոսի հզորությունն ու անխորտակելի ուժը թուլանում էին որևէ ձևով, և նա զոհ էր գնում չարին։

Եթե ժողովրդի սիրով ստեղծված պայծառ հերոսները խոցելի տեղ չունենային, ապա նրանք իրենց երկրային կյանքում պետք է մնային անմահ, վայելեին հաղթողների լիակատար փառքը։ Սակայն ժողովուրդը, ինչ անուն էլ նա կրեր, գիտակցում էր, որ լիակատար հաղթանակի օրը տակավին չի հասել, և մարտնչող հերոսները պետք է ընկնեն չար ուժերից, պետք է խոցելի տեղ ունենան, որտեղից և նրանց կհարվածի թշնամին։

Փառապանծ Աքիլլեսը, որն իր մոր՝ ծովի աստվածուհի Աֆրոդիտեի շնորհիվ զերծ էր մահկանացու հորից ժառանգած երկրային թուլություններից, ինչպես գիտենք, ուներ մի խոցելի տեղ. դա նրա գարշապարն էր, որից մայրը նրան բռնել էր կրակի վրա որդու հողեղեն էությունը հրկիզելիս (հիշենք, որ Սանասարին ու Բաղդասարին կնքել են թոնրի կրակի վրա)։

Հնադարյան գերմանացիների Զիգֆրիդը, որն օժտված էր մարմնի անխոցելիությամբ, համենայն դեպս ուսի վրա խոցելի տեղ ուներ, այնտեղ, ուր ծառից դավադրաբար ընկած տերևի պատճառով չէր դիպել վիշապի արյունը, որի մեջ լողացրել էին Զիգֆրիդին։ Զիգֆրիդը գիտեր այդ խոցելի տեղի մասին և գաղտնիքը հայտնեց մի կնոջ, որին վստահեց ու սիրեց, երբ մինչև մրուրը դատարկեց մոռացության գավաթը և դավաճանեց Բրունհիլդին։

Կաթնաղբյուրում լողանալով, Դավիթն իր ուժն ու անպարտելիությունը ստանում է ջրից, և ոչ մի ճակատամարտում թշնամական ոչ մի հարված, նույնիսկ Մըսրա Մելիքի իննսուն փթանոց մկունդը, ոչ մի ուժի վիճակի չէ նրան վնաս պատճառելու։ Սակայն կապուտաչյա մի աղջկա՝ իր իսկ դստեր թույլ ձեռքով Դավթի մեջքին արձակած նետը նրան մահ է պատճառում։ Դյուցազնի մեջքը հավանարար ջրդեղված չէր կենարար հեղուկով և թիակների արանքը մնացել էր խոցելի։

Հնարավոր է, որ վարիանտների հետագա ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվի մի դրվագ այն մասին, թե ի՛նչն է խոչընդոտեղել, որ կենարար հեղուկն ամրացնի և անխոցելի դարձնի հերոսի թիակների արանքը։

Հետաքրքրական է այն, որ հերոսին վիճակված է ընկնել իր իսկ ծնած փոքրիկ երեխայի ձեռքով։ Ժողովրդական առակներում այդպես է

մեկնաբանվում արծվի կործանումը նրա փետուրից շինած նետից, հզոր կաղնու տապալումը կացնից, որի կոթը պատրաստված է նույն կաղնու ճյուղից։

Սա վերափոխված և մանրացված մոտիվն է բազմաթիվ ժողովուրդների այն պատկերացման, ըստ որի հին աստվածները կործանվում և փոխարինվում են նրանցից ծնված նոր աստվածներով։

Այդպիսին է Զևսի և Կրոնոսի, Ահուրամազդի և Զրվանի պայքարը, այդպիսին է Ռուստամի և Զոհրաբի կռիվը (այլ հետևանքով), այդպիսին է անակնկալ լուծում ստացած Դավթի և Մհերի պայքարը։

Սա հայրերի ու որդիների, որդիների ու հայրերի միջև գոյություն ունեցող հին պայքարն է, մի պայքար, որտեղ նախկին բարի աստվածները մշտապես վեր են ածվում չար աստվածների։ Սրա մեջ է հելլենական գիգանտոմանիայի իմաստը, սրա մեջ է վիշապաքաղ Վահագնի սխրագործությունների ներքին իմաստը։

Որդու ձեռքով հոր կործանվելու մոտիվը, ինչպես տեսանք, առկա է նաև հայկական էպոսում. Դավիթը մեռնում է իր հարազատ աղջկա նետից։ Սակայն այդ պայքարն այստեղ ստացել է յուրատեսակ լուծում, բարդանալով նոր հերոսի հայտնությամբ, որն օժտված է անմահությամբ, և պետք է տարագրության մեջ սպասի սահմանված օրվան, լույս աշխարհ դուրս գա ժողովրդի հաղթանակի և իղձերի իրականացման օրը։

Մհերի այդ տարագրությունը անվիճելիորեն արձագանքում է միջնադարի եվրոպական ասքերին, որտեղ պատմվում է, թե ինչպես Ֆրիդրիխ Բարբարոսսան քարանձավում կամ ստորերկրյա դղյակում այնքան է բանտարկված մնում, այնքան է նստում ննջելով, որ նրա հրաշեկ մորուքն իր անվերջանալի մազերով միաձուլվում է ժայռին։

Այն, որ Մհերը փակված է ժայռի խորքում, անկասկած, կապ ունի ռուսական բիլինաների հետ, որտեղ պատմվում է, թե Ռուսաստանում ինչպես են հսկաները քար դառնալով մեռել։ Բայց արդյո՞ք լիովին է պարզված այդ հարցը. հսկաները մեռել են քար դառնալո՞վ, թե՞ հնարավորություն կա ռուսական հին ասքերը հասկանալու այնպես, որ դյուցազունները մեռել են երկրի երեսին և ինչ-որ ժամկետով իջել նրա ընդերքը։

Հետաքրքրական է հետևյալ հանգամանքը։ Ժողովուրդներից շատերի մոտ հերոսների ժայռում փակվելու մոտիվը, որը միշտ կապված է ժայռի խորքից դուրս գալու կամ ժայռից ամրացված շղթայից ազատվելու հետ, միշտ առնչություն ունի արևի կերպարն այս կամ այն կերպ արտացոլող հերոսների հետ։

Սակայն վերադառնալով տարագրված կամ շղթայված հայկական կերպարներին, արդյոք կարո՞ղ ենք, որպես նշանակալից փաստ, չնշել այն խոր տարբերությունը, որ գոյություն ունի Մհերի և Արտավազդի՝

ալեղարդ Մասսի վիհերում, սանդարամետում շղթայված արքայորդու միջև։

Նույն ժողովուրդը, որը հուսավառ սպասում է Մհերի դուրս գալուն և որը նրան հնարավորություն է տվել տարագրավայրից ժամանակ առ ժամանակ դուրս գալու, Արտավազդ արքայորդու համար այլ ճակատագիր է սահմանել։ Նա ամեն ուրբաթ օր իր բոլոր դարբին որդիների ձեռքերով, երեք սրբազան հարվածով ամրացնում է այն ծանր շղթան, որով Արտավազդը գամված է ժայռին։

Մհերի, Բարբարոսսայի և ժողովրդին օգնելու, մարդկության բարօրության համար մարտնչած այլ հերոսների գալիք ազատագրումն ու այդ ազատագրման ակնկալությունը կարող է հիշեցնել Մեսիայի հայտնության հետ կապված հույսը, ինչպես էլ որ լինի Մեսիայի անունը՝ Մեսիա, Մշիխա, թե Քրիստոս։ Սակայն կա մի անդունդ, ավելի խոր, քան այն վիրապը, ուր իր նժույգի հետ ընկնում է արքայորդի Արտավազդը։ Այդ անդունդը Մեսիայից բաժանում է տարագրված և շղթայված արևային հերոսներին։ Մեսիան աստծո օծյալն է, որը պետք է հայտնվի աստծո անունով և գերագույն աստվածության ողորմածությամբ (ինչ անուն էլ որ ունենա այդ աստվածությունը)։ Նա ընդհանուր ոչինչ չունի այն հերոսների հետ, որոնք հանուն մարդկային բարօրության իրենց ձայնն են բարձրացրել ընդդեմ աստվածների և նրանց երկրային ներկայացուցիչների, հերոսների, որոնք աստվածային կամքին հակառակ՝ կրակ են փախցնում ի սեր մարդկային բարօրության։ Մհերը աստծո օծյալ չէ, այլ աստծո դեմ ծառացող մարտիկ, այն աստծո, որը հանդուրժում է անարդարությունը, հանգիստ է նայում մարդկության տառապանքներին։

Ինչքան էլ չընդունենք, որ ժողովուրդների փոխադարձ «ազդեցություններ» կամ փոխառումներ են կոսմիկական առասպելների նմանությունն ու զուգադիպությունը, այն ամենը, ինչ վերաբերում է առասպելի կարգացմանը կամ էպիկական թեմային, համենայն դեպս, ժողովուրդների կուլտուրական հաղորդակցության առկայության պայմաններում, առասպելական ասքերը կամ պատմական փաստերի վրա խարսխված վիպերգությունները միմյանց հետ բաղդատելով, չի կարելի ժխտել այս կամ այն մանրամասնության ներմուծումը, որը և հարմարեցված է տրվյալ ժողովրդի հերոսին։ Սակայն այս հարցը լուծելիս էլ պետք է համոզված լինել, թե փոխառում թվացող մանրամասնությունը արդյո՞ք չէր կարող անկախ և ինքնուրույն ձևով ստեղծվել, հատկապես այն դեպքում, երբ որևէ մեկուսացված փաստ ենք վերցնում։

Մոտիվի փոխառման ցայտուն օրինակ կարող է ծառայել եվրոպական միջնադարյան «Տրիստան և Իզոլդա» վեպի այն մասը, որտեղ հերոսը, ցանկանալով սիրած աղջկան տեղեկացնել իր գալստյան մասին,

այգով անցնող առվի մեջ տաշեղներ է գցում։ Առուն հոսում է այն սրահի միջով, որտեղ աղջիկն է բնակվում, և այսպիսով, ջուրն աղջկան բերկրալի լուր է բերում, որ հերոսը մոտերքումն է։ Ջուրը բնակարան տանելու այսպիսի սիստեմը հայտնի չէ Արևմուտքին, մինչդեռ շատ է ընդունված Արևելքում՝ և՛ Իրանում, և՛ Կովկասում, և՛ լեռնային Քրդստանում։ Եվրոպական վեպի մեջ ներթափանցած այս մանրամասնի առկայությունը հիմք է տալիս մտածելու, որ պատահական չեն նաև այլ մանրամասների զուգադիպությունը «Տրիստան և Իզոլդա» վեպում, 11-րդ դարի պարսկական գրող՝ բանաստեղծ Ֆահրեդդին Գուրգանիի «Վիս և Ռամին» վեպում, քրդական «Մամե ու Զինե» վիպերգում և այլն։ Սակայն, երբ տարբեր ժողովուրդների մոտ հանդիպում ենք նույն պատմությանը, որտեղ միևնույն մահճում պառկած աղջիկն ու տղան իրար տրվելու հնարավորությունը բացառելու նպատակով մերկ սուր կամ դաշույն են դնում իրենց միջև, մենք պետք է հաշվի առնենք այդ դրվագի բնականությունը և այն ենթադրության անհեթեթությունը, թե որևէ ժողովրդի մեջ կարող է կամ կարող էր գերազանցորեն գոյություն ունենալ մահճի վրա պառկած սիրահարների միջև սուրը դնելու սովորությը, և չպետք է իրարից կախման մեջ դնենք Զիգֆրիդի ու Բրունհիլդի, Մամեի ու Զինեի, Տրիստանի ու Իզոլդայի, Մհերի ու Գոհար խաթունի և ուրիշ մահճի վրա սրով բաժանված հերոսների ու հերոսուհիների պատմությունները։

Սակայն լինում են այնպիսի մանրամասներ, որոնք լուրջ երկմտանքի մեջ կարող են գցել ուսումնասիրողին և միայն առավել խոր հետազոտությունը կարող է ցրել այդ երկմտանքը։

Այդպիսին է մկունդի քաշին վերաբերող դրվագը «Սասունցի Դավիթ» էպոսում և Մուրոմցի Իլյայի շուրջը հյուսված բիլիններում։ Թե՛ էպոսում և թե՛ բիլիններում մկունդի քաշը կայուն չէ, կան տարբեր վարիանտներ, սակայն հայկական էպոսում ընդունված քաշը երեք հարյուր լիտրն է, իսկ լիտրը տասներկու ֆունտի է հավասար, հետևաբար, մկունդն էպոսում կշռում է 3.600 ֆունտ կամ 90 փութ։ Մուրոմցի Իլյայի կաղնե մկունդը նույնպես 90 փութ է կշռում։ Եթե փորձենք այստեղ հայ և ռուս բանասացների միջև տեսնել ուղղակի փոխառում կամ ենթադրենք, որ երկու կողմն էլ օգտվել են մի երրորդ աղբյուրից, ապա հարկ կլիներ եզրակացնելու, որ հիշյալ քաշն ընդունված է տեղական չափերով։ Սա անհավատալի է։ Սակայն նույնքան հավանական է, որ երկու կողմն էլ մկունդի նորմալ, միջին քաշը սահմանել են հավասարաչափ, որոշակի, իբրև պայմանական թիվ ընդունված բազմապատկումով (այդ թվերից են, օրինակ, 7-ը, 12-ը, 40-ը և այլն)։ Իսկ մկունդի այս նորմալ, միջին քաշը, բնավ էլ չհանդիսանալով փոխառման առկայության ապացույց, կարող է լինել երկու ժողովուրդների փոխադարձ կամ երրորդ ժողովրդի հետ ունեցած փոխառնչության արտացոլում, որը վերաբերում է

նյութական կուլտուրայի հաղորդակցության, այսինքն՝ նյութական կուլտուրային պատկանող առարկաների ներմուծման և արտահանման (տընտեսական իրեր, կահույք, առավել ևս՝ զենք, որը միշտ էլ առանձնապես դյուրին է թափանցում նույնիսկ ամենահեռավոր միջավայրը)։

Երբ դնում ենք այն հարցը, որ անհրաժեշտ է լուսաբանել տասներորդ դարում ստեղծված հայկական էպոսի և նույն տասներորդ դարում Կիևի շրջակայքում արդեն ստեղծվող ռուսական բիլինաների միջև եղած առավել հետաքրքրական զուգադիպությունները, էպոսում և բիլինաներում հանդես եկող երկրագործի կերպարների նմանությունը, Սվյատոգորի և երկու Մհերների որոշ առանձնահատկությունները, այր դյուցազունների և կին դյուցազնուհիների մենամարտերը, արդեն տասնհինգ տարի հողի տակ թաղված դյուցազնական զենքի և տասնհինգ տարի գետնի տակ պահված նժույգի թեմաները, Մուրոմցի Իլյայի և Դավթի մենամարտը իրենց որդիների հետ և տասնյակ այլ անվիճելի զուգահեռներ, ապա մտածում ենք, որ առանձին ուշադրության են արժանի աննշան թվացող այնպիսի մանրամասնություններ, ինչպիսին դյուցազնական մկունդի քաշն է։

Հանրագումարի բերելով վերևում մեր ամբողջ ասածը, պետք է նշենք, որ աշխարհի ժողովուրդների հնագույն վիպերգությունների շարքում պատվավոր տեղերից մեկը անվիճելիորեն պատկանում է «Սասունցի Դավիթ» էպոսին, և դա որոշվում է թե՛ վերջինիս առասպելական կողմով, թե՛ էպոսի այն մասերով, որտեղ գովերգվում են նրա հերոսների երկրային սխրագործությունները։

Էպոսի առասպելական կողմը իր մի քանի առանձնահատկություններով հնարավորություն է ընձեռում առաջ քաշելու տարբեր ժողովուրդների հնագույն կուլտուրական կապերի հարցը և առաջին հերթին Սովետական Միության մեջ միավորված ժողովուրդների կուլտուրական կապերի հարցը։

Այս տեսակետից յուրահատուկ արժեք է ներկայացնում էպոսի պատմական մասը, որը հնարավորություն է տալիս նոր, ցայտուն օրինակներով բացահայտելու այն հետաքրքրական պրոցեսը, թե ժողովրդի հիշողության մեջ ինչպե՛ս է ստեղծվել հիմնականում երկրային, սակայն ժողովրդական բանահյուսության մեջ տիտանական հատկանիշներով օժտված հերոսի կերպարը։ Բազմաթիվ ժողովուրդների վիպերգություններում ընդհանուր է այն երևույթը, երբ ժողովրդի սիրած հերոսը վեր է ածվում տիտանի, սակայն այդ կերպարը (նայած թե ո՛ր դասակարգն է այն ստեղծում) իր մեջ կենտրոնացնում է դասակարգային իդեոլոգիայի այս կամ այն ընդհանրացնող գծերը։

Հայ ժողովրդի տարբեր խավերի իդեոլոգիայի զարգացման պատմության համար էպոսն առանձնապես բարձր արժեք է ներկայացնում,

քանի որ այդ էպոսն ամբողջ ձայնով խոսում է այն խավերի ձգտումների և երազանքների մասին, որոնք հայրենիքի պաշտպանության ու աշխատավոր մարդկանց վիճակի բարելավման համար դարեր շարունակ սրխրագործություններ էին կատարում՝ աշխատանքի ասպարեզում թե ռազմի դաշտում, առանց ազդարարելու այդ մասին արտաքին աշխարհին, և նրանց այդ լռությունը նույնքան խորն էր, որքան տիրապետող դասակարգի ներկայացուցիչների լռությունը ժողովրդական ներքնախավի կատարած արիության ու սխրագործությունների հանդեպ։

Մեզ՝ սովետական ընթերցողներիս համար «Սասունցի Դավիթը» առանձնապես թանկ է նրանով, որ այնտեղ, բացի էպոսի գեղարվեստական արժանիքներից, հայրենիքի և ժողովրդի համար մարտնչող հերոսների կերպարների մեջ արտակարգ ցայտունությամբ դրսևորված են այն գաղափարներն ու զգացմունքները, որ դարեր շարունակ փայփայել է մարդկությունը։ Այդ գաղափարներն ու զգացմունքներն առանձնապես վառ են դրսևորված Դավթի և նրա որդի Մհերի կերպարներում, որոնց հետ նրանց ստեղծող ժողովուրդը կապել է իր ամենանվիրական երազանքը՝ հին աշխարհը կործանելու և նոր աշխարհ ստեղծելու երազանքը։

Ակադեմիկոս ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Մեր աշխատանքը հանդիսանում է հայ ժողովրդի դարերի խորքից մեզ հասած բազմերանգ ու հարուստ ստեղծագործության —«Սասունցի Դավիթ» համահավաք հյուսված տեքստը կազմելու առաջին փորձը:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք հյուսվածո տեքստը կազմելիս՝ ելակետ ենք ունեցել էպոսի 1000-ամյակի տոնակատարության Հոբելյանական Ռեսպուբլիկական Կոմիտեի հաստատած հետևյալ սկզբունքները.

1. Ի մի հավաքել և հաջորդականությամբ խմբագրել գրի առնված 50 տեքստերի մեջ եղած այն բոլոր էպիզոդները, որոնք օրգանապես կապված են էպոսի սյուժեի զարգացման հետ և չեն հակասում էպոսի ամբողջական կառուցվածքին և ոգուն:

2. Էպոսի ընդհանուր ռիթմը ի նկատի ունենալով՝ առանձին տողերը ենթարկել ռիթմական միօրինակության՝ դուրս շգալով էպոսի տողերի իմաստի ու շարահյուսության սահմաններից՝ երբեմն միայն առանձին բառեր պակասեցնելով կամ ավելացնելով ու վերադասավորելով բառերը:

3. Տարբեր պատումների բարբառային առանձնահատկություններն ի մի բերելու և անհասկանալիությունները վերացնելու համար՝ տարբեր բարբառների հնչյունները մոտեցնել արարատյան բարբառի հնչյուններին, պահպանելով արևմտյան բարբառների մի շարք բերականական ձևեր՝ ինչպես, օրինակ, «տ», «տի» ձևերը և «կը»-ի գործածումը ներկա ժամանակի համար, սակայն հիմնականում էպոսը պատմել անցյալ կատարյալ ժամանակով:

4. «Սանասար և Բաղդասար» հյուղի առաջին և երկրորդ մասերը հյուսել է պրոֆեսոր-դոկտոր Մանուկ Խաչատուրի Աբեղյանը. «Առյուծտձև Մհեր» հյուղը և «Սասունցի Դավիթ» հյուղը՝ մինչև «Դավիթ և Խանդութ»

մասը, հյուսել է պրոֆեսոր Գևորգ Արշակի Աբովը, իսկ այդ հյուղի II, «Դավիթ և Խանդութ» մասը և «Պստիկ Մհեր» հյուղը՝ ավագ գիտական աշխատող Արամ Տիգրանի Ղանալանյանը:

Էպոսի ընդհանուր տեքստը ենթարկվել է վերոհիշյալ բրիգադայի քննությանը, կարդացվել ու քննության է ենթարկվել ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի գիտական խորհրդի ու ՀՍՍՌ Գրողների Միության Վարչության ընդլայնած միացյալ նիստերում, կարդացվել է «Սասունցի Դավթի» Հոբելյանական Ռեսպուբլիկական Կոմիտեի նիստերում և հաստատվել է նրա կողմից:

Պրոֆ.-դոկտ. Մ. Խ. ԱԲԵՂՅԱՆ
Պրոֆ. Գ. Ա. ԱԲՈՎ
Ավագ գիտ. աշխ. Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԾՅՈՂ ԱՌԱՋԻՆ

ԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

1

Դառնամ, կօղորմին տի տամ*
Խանում Ծովինարին.
Դառնամ, կօղորմին տի տամ
Սանասարին, Բաղդասարին.
Դառնամ, կօղորմին տի տամ
Քեռի Թորոսիկին.
Դառնամ, կօղորմին տի տամ
Ականջ արողների ծընողներին:

---

* Նախերգանքները երգվում են։

ՄԱՍ Ա

Կ Ռ Ի Վ
ԲԱՂԴԱԴԻ ԽԱԼԻՖԱՅԻ ԴԵՄ

2

Ըսկիզբն էր կըռապաշտ Խալիֆան,
Մեկ էլ Հայոց Գագիկ թագավոր.
Կռապաշտ Խալիֆան Բաղդադ կը նստեր.
Գագիկ թագավոր՝ Բերդ-Կապոտին:

Գագիկ թագավոր ծեր, ալևոր էր.
Զինք շա՛տ հարըստություն ուներ,
Զարմ ու վավակներ չուներ.
Մեկ աղջիկ ուներ, շատ տեսակով,
Անուն՝ Ծովինար խանում:

Էն ժամանակ ո՛ր թագավոր վորեղ ըլներ,
Էն մեկէլից հարկ կ'առներ:
Բաղդադու Խալիֆան շատ վոր ու վորընդեղ էր.
Ասքար արեց, էկավ վեր մեր ավգին.
Շատ առ ու ավար առավ,
Ու շատ գերի բռնեց տարավ,
Շատ ըվմեր ավգ կտրեց, նվավցուց:
Ու Հայոց Գագիկ թագավոր
Բաղդադու Խալիֆային խարջդար էղավ:

Օրերից մեկ օր Խալիֆան էլավ.
Էրկու մարդ հարկ առնող ուղարկեց.

— Գնացե՛ք, իմ խարջ ժողվեցեք, բերեք:
Հարկ առնողներն էկան, անցան
Թագավորի քոշկ ու սարի առջևեն.
Որ կ՚անցնեին, լուս մի էնոնց երևաց:
Իրիշկեցին, ի՞նչ տեսնեն,—
Էնպես խորոտ աղջիկ մի երևաց,
Արևուն կ՚ասեր. «Դու դուրս մ՚է՛լներ, ե՛ս դուրս էլնեմ»:
Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ,
Որ տասնուչորս ավուր լուսնին կը նմաներ,
Որ յոթ սարի էտևեն կ՚էլնի:
Էդ հարկ առնողներ ինչ տեսան վէդ աղջիկ,
Խելք գլխըներուց գնաց,
Էրկուսն էլ անհուշ, անակահ ընկան:
Մեկ սհաթեն թագավոր մարդ ուղարկեց,
Էկան, վէնոնք տարան իր պալատ:

Էդ մարդիկն իսկի բան չասին.
Էրկուսն էլ էլան, սուս ու փուս դարձան,
Իրենց Խալիֆայի մոտ գնացին:
Խալիֆան հարցուց.— Խարջ բերի՞ք: Չբերի՞ք:
Ասին.— Թագավոր ապրած կենա, ի՞նչ խարջ, ի՞նչ բան,
Էնպես մեկ բան մ՚ ենք տեսեր,
Աղեկ էր մենք չմեռանք:
Դու ըլնեիր, ավատաս, իրեք ամիս
Անհուշ գետին կ՚ընկնեիր:
Խալիֆան հարցուց.— Ի՞նչ էր ձեր տեսած:
Էնոնք ասին.— Քո տուն աստված շինի.
Դու ի՞նչ կ՚անես ապրանք ու գանձ, հարըստություն.
Քեզ ունիս հո՛ղ, երկի՛ր, ապրա՛նք ու գանձ, հարըստությո՛ւն.
Դու շա՛տ ունիս ոսկի, արծաթ, անգին քարեր.—
Էն խաչապաշտ Հայոց թագավորին
Մի է՛ն տեսակ աղջիկ ունի.
Աղջիկ մի իրենից շատ խորոտիկ,
Որ ամե՛ն մի բան կ՚արժի:
Ահա, Խա՛լիֆա, վէդ հրեղեն աղջիկ տեսանք,
Որ գիշեր-ցերեկ չուտես, չխմես,
Հա՛ էնոր շենք ու շնորհքին թամաշա անես:
Խելք ընկավ կռապաշտ Խալիֆային,
Ջուղաբ ղրկեց Հայոց թագավորին.
Ասաց.— Քո աղջիկ տա՛ս ինձի:

Թագավորն ասաց.— Ես հայ եմ, դու՝ արաբ,
Ես խաչապաշտ, դու՝ կրոապաշտ,
Ի՞նչ բան է, որ ես իմ աղջիկ տամ քեզ:
Ես իմ աղջիկ չեմ ի՛տա քեզ:
Խալիֆան ասաց.— Գագի՛կ թագավոր,
Խաթրով ըլնի, տի տա՛ս:
Կռվով ըլնի, տի տա՛ս:
Թե քո աղջիկ չտա՛ս,
Քո ժողովուրդ առ ու գերի կ'անեմ,
Զեզ ամենիդ կը մորթեմ,
Քո ապգ ամեն կը կտրեմ,
Քո քաղաք տակ ու վերև կ'անեմ,
Քո թախտ ու թագ կը քանդեմ:
Ասաց.— Կռիվ կ'անեմ, չեմ ի՛տա:

3

Բաղդադու Խալիֆան կանչեց, ասաց.
— Հա՜, ասքա՛ր, ասքա՛ր արեք, գնացե՛ք.
Աղջիկ կը տա՝ կը տա. չի տար,
Քար քաղեցե՛ք, ավազ մաղեցե՛ք,
Ժողվեցե՛ք, բերե՛ք՝ ինչ կա:
Էլան, ասքար արին, էկան.
Էկան Հայոց թագավորի վերա:
— Ահա, թա՛գավոր,
Քո աղջիկ կամ կը տաս տանենք,
Կամ քար քաղենք, ավազ մաղենք,
Ժողվենք, տանենք՝ ինչ կա:
Թագավորն իրիշկեց, ի՛նչ իրիշկեց,—
Քանց աստղ էրկինք՝ զորք է թափվե:
Կռիվ արին, շատ զորք սպանին.
Խաչապաշտ թագավոր կոտրվեց:

Ծովինար խանում էրդիք կայներ էր.
Միտք արեց իր մեջ. «Որ իմ հերն իմանար,
Էսքան մեղք ու արունք չէր ձգի իմ վիզ, ինձ կը տար—
Իմ պատճառով էտա ամեն մարդ տի սպանեն,
Էնոնց տղաներ տի մնան որբ, ինձ տ'անիծեն,
Վերջըն զոռով ինձ տի տանեն:

Աղեկն էն է, որ ես իմ կամքով էրթամ,
Իմ հոր թագավորությունն էլ հաստատ մնա»:
Աղջիկն էլավ, գնաց իր հոր դիվան,
Ասաց.— Հա՛յրիկ, ինչի՞ կը մտածես:
Հեր պատասխան էտու էնոր, ասաց.
— Ես էնոր համար կը մտածեմ,
Որ էս կորքեր ամեն, էն քո համար է էկած
Կամ տ'էրթաս, կամ մեր էրկիր տ'ավերեն,
Խալիֆան մեր թագավորություն տ'առնի,
Ջամեն տի սպանի, գերի տի տանի:
Թե իմ աղջիկ տամ, էն արաբ է, ես հայ եմ:
Ծովինար խանում ասաց.
— Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
Ջամեն տի սպանի իմ պատճառով,
Աղեկն էն է, ե՛ս էրթամ,
Ուրիշ մարդու թող բան չըլնի:
Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.
Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,
Ջանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հապար հապար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց.— Հա՛յրիկ, ինձ տուր էնոր:

Ժողով արին իրենց մեջ,
Թե ի՛նչպես անենք, տա՞նք, թե՞ չտանք:
Ջուղաբ արին թագավորի աներոջ,—
Ինչ Վարդպատրկա էպիսկոպոսն էր,— էկավ:
Ջուղաբ արին Քեռի Թորոսին,— էկավ:
Թագավոր կանչեց իր ընտանիք,
Ժողով արեց, ասաց.
— Ժո՛ղովուրդ, դուք ի՞նչ կ'ասեք.
Կամքով տա՞նք կաղջիկ, թե չէ՝ կռվենք.
Դուք ի՞նչ խորհուրդ կը տաք:
Մեկն ասաց.— Չկա՛ռնանք՝ կռիվ անենք.
Աղջիկ է, տանք՝ առնի, տանի:
Մեկն էլ ասաց.— Չէ՛, կռիվ կ'անենք:
Մենք կմե կամեն տի տանք կոտորել
Ու կմեր աղջիկ չենք ի՛տա կռապաշտ թագավորին:—
(Դե ապգություն է, թասիբ կ'անեն),
Էդտեղ Թորոս, տասյոթ-տասնութ տարեկան էր,

Տեսավ ժողովական կ'ուզեն՝
Պատիվ անեն թագավորին,
Կ'ուզեն կռիվ անեն, աղջիկ չտան,—
Ասաց.— Թագավոր ապրած կենա,
Ես գիտեմ ժողովական կ'ուզի՝
Կռիվ անի, աղջիկ չտա.
Աղեկ է, որ աղջիկ մի վերջանա,
Քանց թե ապգ մի վերջանա:
Թա՛գավոր, որ դու ինձի ականջ անես.
Արի աղջիկ տանք՝ տանի.
Մենք չկա՛ռնանք՝ կռիվ անենք:
Էնպես հաշվենք, թե էդ աղջիկ
Իսկի չի՛ էղեր քեզի:
Էդտեղ խորհուրդք արին,
Էպիսկոպոսն էլ համաձայնավ, ասաց.
— Մեկ հոգու պատճառով ա՞պգ մի տանք կտրե՞լ.
Չէ՛, էդ մե՛կ հոգին թող էրթա:

Հեր չէր ուզի էդ բան.
Տեսավ, որ ճար վերան կտրավ,
Համաձայնավ, էլավ, աղջիկ տվավ:
Խաբար ղրկեց Խալիֆային,
Թե.— Հա՛, կը տանք. արի տա՛ր:
Խալիֆան էլ իր պատրաստություն տեսավ,
Ջիր հարսնևոր առավ, էկավ:
Աղջիկ գնաց հոր մոտ, ասաց.
— Հա՛յրիկ, Խալիֆային ասա՝
Ջոկ տեղ քոշկ ու սարայ մի շինի,
Ինձ որ տանի, էնտեղ դնի.
Մեկ տարի մոտ ինձ չգա,
Իմ հետ փարդան չմտնի:
Հա՛յրիկ, դու էլ մեկ քահանա դիր հետ ինձ,
Որ առավոտ, իրիկուն ժամ ասի,
Ես իմ աղոթք անեմ, մնամ մեր օրենքով.
Մեկ էլ քեռմե՛ր մի դիր հետ ինձ, ես կ'էրթամ:
Ես ինչ ասի, Խալիֆային խնդրի,
Որ էն բաներ կատարի:

Հերն էլ իր աղջըկան ասածն ամեն
Բաղդադու Խալիֆային ասաց:

— Խա՛լիֆա, ասաց Գագիկ թագավոր.
Ես հետ քեզ կռիվ չեմ անի.
Ես հետ քեզ պայման տի կապեմ:
Որ ես իմ աղջիկ տամ քեզ,
Իմ աղջկան հետ քահանա մի տի գա.
Էն իր աստված կանչի, իր խաչ պաշտի,
Դու քո կռքեր պաշտես:
Էնոր ջոկ տեղ սենեկ մի տի տաս,
Մեկ տարի էլ մոտ ինք չէրթաս:
Կռապաշտ թագավորն ասաց.
— Ջա՛նըմ, ես հետ քեզ կը հաշտըվիմ.
Հետ քեզ պայման կը կապենք:
Դու քո աղջիկ տուր ինձ,
Ես էլ քենե հարկ չեմ ուզի.
Իմ անուն քո աղջըկան վերա ըլնի,
Ինձ թող ասեն Հայոց թագավորի փեսա, բավ է:
Չէ թե չուր մեկ, ուխտ ըլնի,
Չուր յոթ տարի մոտ ինք չէրթամ:
Խըդամ մի կըդնես հետ,
Քահանա մի կըդնես հետ.
Աղջիկ կը տաք, ես կը տանեմ մոտ ինձ.
Իմ սարայի դիմաց էնոր համար
Ջոկ քոշկ ու սարայ կը շինենք:
Աղջիկ մնա ի՛ր օրենքով,
Ես մնամ ի՛մ օրենքով.
Չէ՞ մենք արաբ ենք, դուք՝ հայ:

4

Կռապաշտ թագավորն էկեր, Տեղտիս կը նստեր.
Գագիկ թագավորի նստած տեղ
Նորագեղա դաշտի մեջն էր:
Թագավորն էնտեղ ուներ ամառանոց,
Հոտավետ, անուշ արոտատեղեր,
Ծաղիկներով ու մարգերով զարդարված.
Էնտեղ կը գտնվի Կաթնով Աղբուր:
Էնտեղ վրաններ զարկին,
Յոթ-ութ օր հարսնիք արին:

Ծովինար խանում խնդիրք արավ թագավորից,
Ասաց.— Հա՛յրիկ թագավոր,

Վաղ համբարձում է, հրաման տուր ինձ՝
Էրթամ Հիլի, աղբրներու վերան պբոսանք.
Մեկ տասն իմ չափին աղջիկ դիր հետ ինձ,
Էրթանք սեյրան, ուրախություն անենք,
মান գանք չուր իրիկուն,
Իրիկուն դառնամ, էրթամ իմ տեղ:
Թագավորն ասաց.— Քեզ հրաման է,
Գնա՛, մա՛ն արի, դարձի՛:

Ծովինար խանում, էնոր քեռմեր ու աղջիկներ
Գնացին պբտրտելու Կաթնով Աղբուր:
মান էկան չուր իրիկուն:
Աղջիկ տեսավ՝ արև-աշխարք կա, արեգակ կա,
Ամեն մարդ հետ իր գործին.
Ոմանք հետ իրենց ջրին, օչխարին.
Ոմանք էլ հետ իրենց ռանչպարութնին:
Աղջիկ միտք արեց, ասաց.— Հե՛յ-վա՛խ,
Էսքան լուս աստևոր կա, ես չէի գիտի:
Գնացին, էլան սարի վերև,
Էնտեղ նստան չահրի վերա, կերխում արին,
Հետո মান էկան, տեսան Կապոտ ծով.
Գնացին ծովափ սեյր անելու:

Իրիկուն որ տի դառնար, տուն գար
Ծովինար ասաց աղջիկներուն.
— Աղջի՛կներ, դուք քելեք, գնացեք,
Ձեզ համար মান էկեք, քեֆ արեք,
Ես էրթամ, քիչ ջուր խմեմ:
Մտածելով ծովու բերան վե գնաց.
Գնաց, կայնեց մեկ քարափ տեղ.
Նայեց, տեսավ, որ ծովին ծեր չկա:
Ինք ու քեռմեր ծովու պռուկ նստան, լացին:
Շատ նեղացավ աղջիկն মান գալով,
Էնոր խըդամ շատ ծարվեցավ,
Ինքն էլ շատ ծարվեցավ, ասաց.
— Էս ծովի ջուր շատ աղի է:
Ա՛խ, երանի՛ մեկ կաթ ջուր ըլներ,
Ես խմեի, սրտիս պապակն անցներ:
Քեռմերըն շատ ֆըռաց, ջուր չգտավ,
Էն ժամանակ Ծովինար ասաց.

— Աստված, դու մեկ աղբուր էստեղ բուսցես,
Մեկ էլ ինձի մեկ լուս ու ճար անես:
Աստուծու հրամանով, ծովըն բացվավ,
Մի շատ համեղ ջուր դուրս էկավ:
Նայեց, տեսավ՝ մեկ ջոջ քար կա ծովու պռուկ,
Սիպտակ աղբուր մի էդ քարից կը թալի.
Ջուրն էլ էդ քարի չորս բոլոր բռներ էր,
Մարդ չէր կարնա առանց հալավ հանելու,
Էդ աղբուր էրթա, որ ջուր խմի:
Ինքն իր շորեր էհան, գնաց էդ աղբուր,
Բուռ էտու էդ անմահական աղբըրի մեջ,
Մի բուռ լիք ջուր խմեց,
Մեկ էլ՝ մի բուռ կիսատ:
Աղբուրըն ցամաքավ:
Էդ էրկու բուռ ջրից հղացավ:
Ետ էնոր իր աղջիկներ ժողվեց,
Էնդից դարձան, էկին տուն,
Էկին Գագիկ թագավորի մոտ:

Առավոտուն Խալիֆայի կորքըն քաշվավ:
Թագավորն իր աղջըկա ձեռք-ոտք տեսավ:
Էլան, հեծուցին, տարան, հասուցին
Էն կռապաշտ Խալիֆայի քաղաք:
Երբ գնացին, քաղաք հասան,
Էդ թագավոր շատ ուրախացավ,
Յոթն օր, յոթ գիշեր հարսնիք արեց.
Մեջլիս, ուրախություն արեց:
Էնոր համար մեկ ջոկ սարայ շինեց,
Հաց, ջուր ղրկեց էնտեղ,
Ասաց.— Սարայից դուրս չգաք:
Ծովինար խանում գնաց, մտավ յոթոտանին,
Յոթ դուռ շինեց, սուգ արեց:

5

Մի ժամանակ վրա անցավ,
Ծովինար իմացավ, որ էրեխով է.
Ակհավ, որ էն ծովից է.
Ամա Խալիֆային չհայտնեց:
Խալիֆան էլ ակհավ, ասաց. «Իմ կարմից չէ»:

Գնաց դիվան նստեց, կանչեց վպրին,
Թե.— Ձես ասի, էսպես բան է էղե.
Վպի՛ր, ապա ի՞նչ անենք:
Վպիրն ասաց.— Թագավոր ապրած կենա, սպանենք:
Հրամայեցին դահճին.
— Գնա, էնոր վիպ կտրի՛:
Դահիճն էկավ սարայ, ասաց.
— Թագավոր հրաման արե՝
Ըվքո վիպ տի կտրեմ:
Ծովինար խանում ասաց.
— Ձեր թագավորին դատաստան չկա՞,
Չէ՞ որ էրեխով կնկան վիպ կտրել
Մեկ անգամից էրկո՛ւ մարդ ըսպանել է:
Խալիֆային ասա՝ դադրե՛ք,
Ձուր ես իմ էրեխան բերեմ.
Էն ժամանակ,— տեսնենք՝
Տղա է, ինչ է,— թող իմ վիպ կտրեն:
Թե որ կը հարցուցեք, ասաց,
Իմ հոր տնեն որ կուս էկեր եմ,
Մինչև էսօր դեռ կուս եմ ես.
Իմ էրեխան, աստծու կամքով,
Ծովի ջրից է գոյացե:
Դահիճ գնաց Խալիֆայի մոտ,
Ասաց.— Թագավոր ապրած կենա,
Քո կնիկ, Գագիկ թագավորի աղջիկ,
Էսպես, էսպես ասաց ինձի:
Վպիրն ասաց Խալիֆային.
— Աղեկ է ասեր Ծովինար խանում.
Թող մնա, իր էրեխան բերի,
Էն ժամանակ վիպ կտրենք:
Ժամանակ տվին, չուր էրեխան բերի:
Էն էլ ասաց.— Զգուշ կացե՛ք.
Իրիշկենք, չուր էրեխան ըլնի, իր կամքն է,
Ես տեր եմ. իմ կնիկն է Ծովինար.
Էլ դուք մի՛ խառնըվիք:

Մնաց: Ինն ամիս, ինն օր, ինը ժամ,
Ինը րոպե որ թամամավ,
Էնոր ժամանակ լըմընցավ,
Էրկու տղա էբեր.
Մեկըն թամամ, մեկըն կիսատ:

Մելքիսեթ քահանան էկավ,
Թոնդրան վերա կնքեց.
Ջոջ տղի անուն էդիր Սանասար,
Պստիկին՝ էդիր Բաղդասար:

Ականջկլան տարան Խալիֆային.
Թե.— Քեկ ջուխտ մի լաճ էլավ:
Թե խալխ տարով կը ջոջանան,
Էնոնք օրով ջոջացան:
Խալիֆան որ իրիշկեց,
Տեսավ վէրկու տղան, աչքեր կուրցավ:
Ասաց.— Դահիճին սուսեք,
Թող էրթա, էնոր վիկ կտրի:
Դահիճ գնաց Ծովինարի մոտ.
Ասաց.— Քո վիկ տի կտրեմ:
Ծովինար խանում ասաց.
— Ձեր թագավորին կանոն, օրենք չկա՞.
Ծծմոր տղեքըն ի՞նչպես կը շահեն,
Որ էն իմ վիկ կը կտրի:
Թող իմ տղեք մեծանան,
Նոր՝ իմ վիկն էն թող կտրի,
Ես հո էստեղից չեմ կա՛ռնա փախնիմ:

Դահիճ գնաց Խալիֆային հայտնեց.
Էն էլ կանչեց վակրին հարցուց.
— Ի՞նչ խորհուրդ կը տաք էս բանի համար:
Վակիրն ասաց.— Տաս տարի ժամանակ էնոր.
Տղեք մեծանան, վիկ նոր կտրենք.
Էն էստեղից դո՞ր տի գնա.
Թող բռնավորի պես ներս մնան:
Թող սարայից դուրս չգան:

Կես տարի սարայի մեջ մնացին:
Հետո ջուղաբ ղրկեց Խալիֆային.
Ես հա՞վք եմ, որ դու ինձ դրեր ես վանդակ,
Ես բռնավո՞ր եմ էստեղ,
Որ ինձի դրեր ես բանտ,
Չես թողնի տանից դուրս գանք.
Արև էրդիս վե՛ կը տեսնենք,
Լուս էրդիս վե՛ կ՚առնենք:
Խալիֆան ասաց.— Ես ի՞նչ անեմ:

Թող դուրս գան, գնան ման գալու:
Դռնապահներն իրավունք տվին,
Ու դուրս էկին ման գալու:
Քանի մի ժամանակ անցավ,
Էդ ճժերն օրըստօրե պետացան.
Ինչ էղան մեկ տարեկան,
Ինչպես հինգ տարեկան տղա:
Կ'էլնեն դուրս, հետ ճժերուն կը խաղան.
Ճժեր կը տփեն, կը լացուցեն:
Քաշեց հինգ-վեց տարի, չքաշեց,
Սանասար ու Բաղդասար պետ կտրիճներ դարձան.
Մերն ասաց քահանային.— Տե՛ր տեր,
Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:
Դաս էտու տղաներին.
Էնոնք գրել-կարդալ սովորեցին:

Ավուր մեկին Խալիֆան
Էդ էրկու տղաներ կանչեց,
Տարավ դիվան, իրիշկեց,—
Էնոնց խոշորություն որ տեսավ,
Էնոնց խոսք ու կրուց որ լսեց,
Վախեցավ էնոնց մոտեն,
Ճամփեց, գնացին տուն:

Ճժեր էղան յոթ տարեկան:
Օր մի կը խաղային հետ էն մեկէլ ճժերուն.
Սիլա մի կարկեց Սանասար վապրի լաճուն,
Վիկըն ծռվեց, մնաց ծուռ:
Վապիր գնաց Խալիֆայի մոտ գանգատ,
Ասաց.— Էս ի՞նչ աստծու պատիժ է.
Մեկ ճիժ չթողին սալամաթ:
Խալիֆան ասաց.— Իրավունք ունին.
Ես գիտեմ՝ էնոնք որ ջոջանան,
Տի կախվեն իմ մորուսից:
Կա՛ց, էնոնց համար բան մի կ'անենք:

6

Տղեկներ որ ջոջացան,
Մեկ օր առավոտուն
Հետ ճժերուն կը խաղային:

Ճժեր թափվան էնոնց վերան,
Ասին.— Դուք բի՛ճ եք, դուք բի՛ճ եք:
Երբ որ էնոնց խոսք լսեցին,
Լալով էկան մոտ իրենց մեր, ասին.
— Կամ մեկ ասա՝ ով է մեր հեր,
Կամ կ'երթանք, մեկ կը թալենք գետ:
— Ո՛րդիք, ասաց, ձեր հեր Խալիֆան է:
— Չէ՛, ասին, թե էն մեր հեր ըլներ,
Խալխըն մեկ բիճ չէին ասի:
Մեկ ժամանակ էն էս խոսքով
Լաճեր բռնապետեց ներս:
Քանի մի օրեն լաճեր նորեն
Գնացին քաղաք խաղ անելու.
Տղեք նորեն թափվան վրաներ,
Թե.— Դուք բի՛ճ եք, դուք բի՛ճ եք.
Ինչի՞ կը գաք մեջ մեկի:
Է՛լի լալով դարձան,
Ջիրենք թալին իրենց մոր գոգ:
Շատ որ լացին, մոր դժվար էկավ,
Ասաց.— Ո՛րդիք, դադրե՛ք,
Ձուր առավոտուն ձեկ կը տանեմ,
Ձեր հոր կրուց կը տամ:

Առավոտուն էլավ իր խըդամին ասաց.
— Ա՛ռ կապոց, հետ տղեկներուն էրթանք գետափ,
Որ քիչ մի սրտերնիս բացվի:
Երբ գնացին, Սանասար ասաց.
— Մարե՛, արի ասա՝ իմ հեր ով է.
Թե չէ՝ ինձ գետ կը թալեմ:
Մերն ասաց.— Ո՛րդի, դու հեր չունիս:
Տղան ասաց.— Մարե՛,
Ես հո քարի, թփի տակեն չեմ էլեր,
Հալբաթ ես էլ մարդուց էլեր եմ:
Ասաց.— Ո՛րդի, ես մեկ ժամանակ
Հետ իմ քեռմոր գնացի ծովափ,
Շատ ծարվեցա, քեռմոր ասի՝
Մեկ ջուր գտի ինձի համար.
Ծով բացվեց, մեկ համեղ ջուր էկավ,
Ես էլ էն ջուր խմեցի,
Մեկ բուռ լիք, մեկ բուռ կիսատ.
Աստված ձեկ էն ջրից էտուր ինձ.

Դու էն լիքըն բռնից ես,
Ծուռ Բաղդասարն էլ էն կիսատ բռնից:
Տղան ասաց իր մոր.
— Մենք իմացանք մեր էություն.
Դե՛ արի դու քո էություն ասա մեկ:
Մերն ասաց.— Ո՛րդիք,
Ես Հայոց թագավորի աղջիկն եմ:

Զուր իրիկուն ման էկան.
Իրիկուն դարձան քաղաք,
Գնացին, մտան իրենց պալատ:

7

Շատ ժամանակ վերան անցավ.
Սանասար ու Բաղդասար տեսան՝
Իրենց մեր օր վեր ավուր կը կոտորվի.
Ասին.— Մարե՛, էսա քեզ ի՞նչ է էղեր,
Որ դու օր վեր ավուր կը կոտորվիս,
Քո աչից արտասուք չի պակսի.
Մենք կը նայինք՝ աստվածություն
Մեկ տվեր է քե՝ ջուխտակ մի լաճ.
Դու թագավորական կին ես.
Մենք կ՚որոնենք՝ քե բան պակսորդ չկա:
Էկո՛ նայինք՝ քո դարդըն ի՞նչ է.
Որ դու օր վեր ավուր կը կոտորվիս:

Մերն դարձավ, ասաց տղեկներուն.
— Հա՛յ, որդիք. որ ես չկոտորվի՛մ, ո՞վ կոտորվի.
Խալիֆան, էսօր էգուց է մնացեր,
Իմ ու ձեր էրկուսի վիկն էլ տ՚առնի:
Սանասար պատասխանեց, ասաց.
— Մարե՛, էդպես բան է՛լ կա:
Շատ լավ, տեսնենք՝ ինչպես կ՚առնի·

Տաս տարին որ լըմընցավ,
Խալիֆան դահիճներ ուղարկեց,
Ասաց.— Գնացե՛ք, էնոնց վիկ կտրեք:

Սանասար ու Բաղդասար,
Կշտի սենեկի մեջ քուրսիկների վերան նստած,

Կ'ասեն, կը ծիծաղան, մերրն կը լա:
Ներս մտան դահիճներն ու ասին.
— Էսօր ձեր վիկ տի կտրենք:
Մերն ասաց.— Մեր վիկ կտրե՛ք,
Իսկ իմ տղաներին՝
Ձեր ձեռ կերթա՛, որ վիկ կտրեք:
Դահիճների մեկն ասաց.
— Մեր ձեռն էլ չէ՛րթա վեր քո տղաներին.
Ապա մենք ի՞նչ անենք.
Խալիֆայի հրաման է, որ կտրենք:
Մերն լալով ասաց.— Մի քիչ ցած խոսեք,
Իմ տղաներրն չլսեն, վախենան:
Մի քիչ էլ թող ծիծաղան.
Դուք էլ նստեք, հանգստացեք:
— Չէ, ասաց, մեկ իրավունք չկա նստել:
Դե շուտ արեք, էրթանք դուրս.
Թե չէ էստեղ ձեր վիկ կտրենք,
Արուն սարայի մեջ կը թափի:
Բռնաց, ասաց.— Շո՛ւտ արեք:
Ձենն ընկավ Սանասարի ականջ,
Դուռն էբ սց, տեսավ՝ քանի մի մարդ՝
Թրերով կայներ են սենեկի մեջ:
Ասաց.— Ի՞նչ մարդ եք, ի՞նչ կ'ուզեք·
Մերրն ծածուկ աղաչեց, ասաց.
— Իմ տղաներին չասեք,
Թե էկեր ենք, որ ձեր վիկ կտրենք:
Իմ տղաներ տանից դուրս հանենք,
Դահիճ մի կայնի էն կող, մեկն՝ էն կող.
Զարնեն, իմ տղի վիկրն թռուցեն,
Որ նա չտեսնի, վախենա:
Ապա առաջ ինձ սպանեք, նոր իմ տղեք:
Դահիճն ասաց.— Դե՛ էլ էրթանք:
Սանասար ասաց.— Մարե՛, դո՛ր տ'էրթաք:
— Մենք տ'էրթանք դուրս, տի գանք:
— Մարե՛, ինձի ասա՝
Մեկ բան կա ստա, որ քեզ կը տանեն:
Մերրն չուկեց ասել:
Սանասար չէթող՝ էրթա, ասաց.
— Մեկ բան կա ստա, որ ինձ չես ասի:
Մոր սրտին դիպավ, ասաց.



Տարան կնքեցին, անուն դրին Դավիթ



— Ո՛րդի, որ ճշմարիտ կ'ուզես,
Խալիֆան ղրկե, որ իմ վիզ կտրեն:
Ասաց.— Կտրող ո՞վ է:
— Էս մարդ:
Մոտեցավ դահճին, բռռալով ասաց.
— Դո՞ւ իմ մոր վիզ տի կտրես:
Դահիճն ասաց.— Խալիֆայի հրաման տված,
Որ ձեր վիզ տի կտրեմ:
Սանասար մեկ սիլա կպցուց դահճի էրեսին.
Գլուխ թռավ, ջանդակ մնաց կայնուկ:
Մեկէլներ որ տեսան, թողին փախան.
Գնացին, Խալիֆային ասին.
— Քո լաճ մեկ սիլա էկար դահճին,
Գլուխ թռավ, ջանդակ մնաց կայնուկ:

Խալիֆան զորք ուղարկեց էնոնց վերան կռիվ:
Սանասար ու Բաղդասար տեսան,
Որ զորք էկավ՝ կռիվ անի,
Էլան, չուր իրիկուն էն զորքի կեսն ըսպանեցին,
Կռվին դադար արին, էկին տուն:
Մեկէլ օր մարդ չեկավ կռիվ.
Խալիֆան ասաց զորապետին.
— Գնա կռիվ:
Զորապետն ասաց Խալիֆային.
— Փաթշա՛հ, մենք չենք կանա վեր էնոնց.
Էնոնք ավնավուր մարդ են, փահլևան են.
Քո թագավորություն կը փճացնեն:
Աղեկն էն է՝ չերթանք կռիվ,
Մեր զորքերն էլ չըսպանվին:

Խալիֆան էլ միտք արեց, ու միտք արեց,
Տեսավ, որ ճար չկա,
Կռիվ իրեն վնաս է, ասաց.
— Էլ գործ չունինք էնոնց հետ:
Հիմի կը հավատամ,
Որ Ծովինար խանում անմեղ է.
Էն ավնավուրներ ծովից են:
Իմ կնիկն է Ծովինար,
Էնոնք էլ իմ տղեկներն են:

8

Էդ Խալիֆան մեկ էլ ասքար արեց,
Ու էկավ վեր մեր ավգին:
Որ պատրաստություն կը տեսներ,
Ծովինար խանում էրավ տեսավ:
Էլավ առավոտ, պատմեց իր էրավ,
Ասաց.— Խալիֆան ապրած կենա,
Արի՛ դու ինձ ականջ արա,
Դու մի՛ էրթա կռիվ:
Խալիֆան հարցուց.— Ինչո՞ւ:
Ասաց.— Էս գիշեր էրավ մ՚ եմ տեսե:
Ասաց.— Էդ ի՞նչ էրավ ես տեսե:
Ասաց.— Էս գիշեր տեսա՝ մանր աստղեր՝
Էնպես են բոլորած մեկ մեծ աստղի բոլոր,
Էդ մանր աստղեր մեկեն՝
Ամեն թափան էդ մեծ աստղի վերան:
Էդ մեծ աստղ ցոլըլաց, էկավ,
Էկավ, մեր դռան առաջ ընկավ:
Է՛հ, ասաց, խորո՞ տ Ծովինար,
Քեզի համար կը քնես,
Ուրշի համար էրավ կը տեսնես:
Քանի որ իմ ջահել ժամանակն է,
Պիտի էրթամ կռիվ:
Էն էլ ասաց.— Կապված է քո կամքին,
Կ՚էրթաս՝ դու գիտես, կը մնաս՝ դու գիտես:
Համա չէ՞ դու պայման ունիս հետ իմ հոր:
Ասաց.— Իմ միտք փոխեր եմ.
Տ՚էրթամ կռիվ, իմ հարկ առնեմ:

Զորք ժողվեց, բանակ կապմեց,
Ամեն պատրաստություն տեսավ զորքի համար,
Էլավ, էկավ կռիվ:
Ցոթըն տարի կռիվ արեց:
Էկավ Բերդ-Կապոտին քաղքի բոլոր փաթթեց.
Զորքն էդի փաթթեց, նստավ:
Քաղքի ապրանք, տավար մնաց իրա քաղքի մեջ.
Մնացին առանց վար ու ցանք,
Սերմ էլ գետին չթալին,
Քաղքի՛ մեջ թանկություն ընկավ:

Էնպես մի թանկություն էղավ,
Որ մեկ հաց մեկ ոսկու չեն տար:
Քաղքի մեջ թանկություն ընկավ:
Սովամահ կը մեռնեին շատեր:
Մարդիկ լցված են սենեկներն, իրար կ'ասեն.
— Աստված, կ'ըլնի՞, որ մե՛կ էլ
Մենք էժնություն տեսնենք,
Կուշտ փորով մեկ էլ հաց ուտենք:

Էնոնց մեջ մեկ բարի մարդ կար, ասաց.
— Վաղն էս ժամանակ հարուր լիտր հացն
Մեկ արծաթի առնող չիլնի:
Էնոնց մեջ մեկ անհավատ մարդ կար,
Կրո անունով, էլավ, ասաց.
— Առ էս մեկ ճանկ ոսկին, հաց տուր,
Տանեմ, տամ՝ իմ էրեխեքն ուտեն:
Ախար, ա՛յ մարդ, ո՞ւստ կը տաս:
Ես իմ աչքով հաց տեսնեմ,
Ես իմ բերնով հաց ուտեմ,
Ես չեմ հա՛վտենա, ես չեմ հա՛վտենա:
Էն բարի մարդն էդոր անիծեց.
— Կրո՛, հուս ունիմ իմ աստրծու,
Որ լուսուն հաց կ'ըլնի փալասանք.
Որ չես ա՛վատա իմ ասելուն,
Աչքով քո տեսնես, բերնով քո չուտես:

Գագիկ թագավոր ջահել տղաներ
Ժողվեց, էբեր վորք իր համար:
Իրիկուն մութ որ ընկավ,
Էնի իր վորք ժողվեց մեկտեղ,
Էնոնց սովորեցուց, ասաց.
— Զուր իրավունք չտամ, չ'կարկե՛ք:
Գիշերվան մի պահ ձեն-ձուն որ հանդարտեց,
Մեկ անգամ ձեն էտու.— Զարկե՛ք:
Էդոնք որ վարկեցին,
Էն կռապաշտ թագավորի վորքեր,
Առաջին դարձավ վեր ետինին,
Ետին դարձավ վեր առջինին,
Քեռի Թորոս, ջառեղ տղե՛ք
Սրով, թրով իջան Խալիֆայի վորքի մեջ,

Ու ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին:
Էնպես մի կոտորում ընկավ գորքի մեջ,
Որ գորք գորքին չըճա՛նչեներ.
Ջիրար կը սպանեին, կը ջարդեին,
Էնպես որ արուն էլավ, գնաց:
Խաբար տվին էն կռապաշտ Խալիֆային,
Թե.— Ի՞նչ կ՚անես, գորքըդ պրծավ կտրելով:
Խալիֆան ինքն էլավ, տեսավ.
Տեսավ, որ գորք գիրար կը ջարդի,
Էկավ, իր մոտ կը հասնի.
Մնաց ինք Խալիֆան մենակ:
Մեր ազգ էդ անգամ գինք շատ նեղ լծեց:
Ինք հեծավ մեծ դավեն ու փախավ:—
Էնոր Շամա ուղտ կ՚ասեն,—
Ու հեծավ, ու փախավ:

Լուսուն էլան, տեսան՝
Խալիֆայի գորք բնաջինջ էղած:
Էն անհավատ բերին, դրին չափրար,
Որ էնտեղի մնացած հացն ու կերակուր
Մարդուն մարդագլուխ տա, որ տանեն, ուտեն:
Մեկ մարդու բաժնից պակաս էտու.
Իր ձեռի չափ վերցին, վարկին գլխուն,—
Էն անհավատ չափրար մեռավ.
Ուղորդ որ աչքով տեսավ ու չկերավ:

Որ Խալիֆան հեծավ, փախավ,
Էդ նեղութնի մեջ կանչեց իր կռքերուն.
— Կռքե՛ր, արիք իմ օգնության,
Ինձ ապատեք էս հայ ազգի ձեռից.
Քառասուն անծին էրինջ ձեվի մատաղ կ՚անեմ:—
Է՛յ, կռքեր ո՞ւր պիտի գան օգնության:—
Մեկ անգամ էլ դարձավ, ասաց.
— Կռքե՛ր, արիք իմ օգնության,
Ձեվի հարուր լիտր արծաթ կը բերեմ,
Ձեվի ոսկի ընծա կը բերեմ.
Դուք ինձ ապատեք էս թշնամուց:
Կռքեր օգնության չեն հասնի:—
Ախըր կուռք ի՞նչ է, որ օգնության գա:—
Էս անգամ կանչեց, ասաց.

— Ո՞վ Ջոջ Կուռք,
Որ դու հասնիս, որ դու հասնիս,
Դու վիս ապատ անես էսա ապգից,
Ու երբ որ ես ողջ առողջ իգամ,
Սանասարն ու Բաղդասար քեզի մատաղ կը տամ:

Էն ժամանակ դիվանք էկան,
Մտան ուղտի փորտակ.
Ու փախցուցին ըվԽալիֆան, ու տարան:

9

Էն գիշեր Ծովինար քնավ, տեսավ էրավ.
Տեսավ որ իրան էրկու ճրագ կար.
Կը գար առջև անցընելուն որ անցըներ,
Ու կը դառնար հեղ մ' էլ լուս կը տար:
Էլավ գիշերանց, երբ որ վարթնեց,
Կանչեց, էբեր իր կուշտ էրկու տղան,
Մեկ վեր մեկ ծնկան էդիր,
Մեկէլ վեր մեկէլ ծնկան էդիր,
Էլաց, բռնեց տղեկներու էրես պագեց:

Տղեկներ հարցուցին.— Մարե՛, ինչո՞ւ կը լաս:
Ու մեր վիր էրավի էղելություն
Պատմեց տղեկներուն ու ասաց.
— Էս գիշեր սուրբ Կարապետ էրավ էկավ ինձի,
Որ Խալիֆան ընկեր է նեղութնի մեջ,
Ու վձեվի մատաղ կանչե իր կոքերուն.
Երբ որ էկավ ձեվի մատաղ կ'անի.
Դուք ձեր գլխու ճարըն գտեք:
Որդիք, ձեվի մատաղ կ'անի,
Փախեք, գնացեք Հայոց թագավորի քաղաք:
Գիշեր պայծառ աստղըն բռնեք նշան,
Ցերեկն էլ հարցուցեք
Արևելից թագավորի էրկիր:

Տղեկներ էլան, մեկ մեկ վենք առին,
Նետ ու աղեղ, գուրվ ու թուր.
Վերուցին վիրանց ուտելիք,
Ու լցին մեկ ագուբե,

Գնացին Խալիֆայի ախոռ:
— Հե՛յ ձիապան, ասին,— էրկու լավ ձի՛,
Մեկ համար շուտ դուրս քաշի՛:
Ձիանք քաշեցին դուրս, հեծան, էկին,
Պագին իրենց մոր ծիծ, ասին.
— Մարե՛, դե՛ էն Խալիֆան թող գա,
Մեկ բռնե, տանի, մորթե իր կռքերուն:
Էրկու աղբեր կանչեցին կիրենց աստված,
Ու գիշերով ընկան ճամփա,
Առան ու փախան չուրի լուսցավ:

Աղոթրանին էր, լուս բացվեր էր,
Ծովինար խանում էլավ դուրս:
Էլավ դիվանխանի տանիսն,
Տեսավ որ առանց կորք, առանց կորապետ,
Հեծեր է Շամա ուղտն ու կը գա.
Խալիֆան սևցեր է, էղե կուպր:
Էկավ էն կռապաշտ թագավոր,
Ափալ-թափալ իրեն թալեց դուռ:
Ծովինար խանում ասաց.
— Ցա՛, թա՛գավոր, ապրած կենաս,
Աստված բարի անի.
Էդա յոթ տարի քո ձեն լավ կը գար.
Էդ ի՞նչ էղե քեզի:
Խա՛լիֆա, ո՞ւր է քո կորք,
Ո՞ւր է քո կորապետ:
Խալիֆան պատասխանեց, ասաց.
— Կնի՛կ, էնպես արի կգավուրներ.
Էցի բերդի պարսպի ներս.
Վերջին ժամ էր, որ պիտի թասլիմ ըլներ,
Մեկ էլ աղոթրանին կրակ թափվեց վերևից,
Իմ կորքն ու կորապետ ամեն ջարդվեց.
Հրեղեն սուր ընկավ մեջ իմ կորքին,
Ձիրար կոտորեցին, բրդեցին:
Պիտի ես էլ ընկնեի մեջ,
Հեծա դավեն, փախա:
Ինչքան իմ կռքերուն մատաղ ասի,
Ոսկի, արծաթ ընծա ասի,
Չեկան ինձի օգնության,
Չեկան ինձի ապատեին:

Սանասարն ու Բաղդասար
Մեր Ջոջ Կռքին մատաղ եմ կանչե,
Որ նո՛ր հապիվ ինձ ապատած, բերած է:

Ծովինար էդտեղ իր մեջ միտք արեց, ասաց.
— Վալլա՛հ, իմ էրկու տղան պիտի տաներ,
Անմեղ տեղըն պիտի մորթեր:

Քանի մի ժամանակ վերան անցավ.
Կռապաշտ Խալիֆան գնաց կռքարան:
Հեռի լսողաց, չար թշնամին
Մտավ էնոնց կռքերի մեջ,
Իրենց մատաղ ուզեցին:
Ջոջ Կռքից ձեն էլավ, ասաց.
— Քո տղաներ, Սանասար ու Բաղդասար,
Բեր իմ առջև, ինձի մատղե,
Դու ինչ մուրապ անես,
Ես կքե քո մուրապին տի հասցնեմ:
Կռքապետն էլ էկավ Խալիֆայի առջև,
— Կռքեր մատաղ կ'ուզեն:
Ասաց.— Ինչ կ'ուզեք՝ տարեք, մատղեք:
— Խաչապաշտ թագավորի աղջըկանից
Էրկու տղա կա քեզի,
Ջէնոնք մատաղ կ'ուզեն,
Ուրիշ բան չեն ուզի:
Ասաց.— Լա՛վ, տասն օրից ետ,
Մեր կռքեր տանենք վեր աղբըրներուն սեյր,
Ես իմ էրկու տղան էլ տանեմ,
Մեր կռքերուն մատաղ անեմ:

Խալիֆան էն օր էկավ, ասաց.
— Թագավորի՛ աղջիկ, գիտե՞ս՝ ինչ կա:
— Հա՛, ի՞նչ կա, հարցուց Ծովինար:
— Ապա չե՞ս ասի, իմ կռքեր մատաղ կ'ուզեն:
Ծովինար խանում ասաց.
— Քո տուն չավրի, քեզի չկա՞ էրինջ,
Չկա՞ օչխար, չկա՞ տավար,
Ջէնի՛ արա մատաղ:
Խալիֆան ասաց.— Ջէ՛, չէ՛, մա՛րդ կ'ուզեն:
— Է՛, մա՛րդ կ'ուզեն.

Չկա՞ քո քաղքի մեջ անտեր տղա,
Զէնի՛ արա մատաղ:
Խալիֆան ասաց.— Չէ՛, չէ՛, քո տղեկներ կ'ուզեն.
Կնիկ, քո տղեկնե՛ր մատաղ եմ ասե.
Պետք է տղեկներ տանեմ, մատղեմ կոքերուն,
Որ ինձ ապատեր էն թշնամուց:
Գագիկ թագավորի աղջիկն ասաց.
— Քո տուն չավրի, ինչո՞ւ.
Իմ տղեկներ քո տղեկներ չե՞ն.
Ինչպես գիտես, էնպես արա.
Տար, վէնոնք արա մատաղ:
Համա ո՞ւր է Սանասա՛ր, ո՛ւր է Բաղդասա՛ր.
Մե՛նք ո՞ւր, մեր էրկու տղա՛ն ո՞ւր:

10

Էն գիշեր որ Սանասար ու Բաղդասար
Հեծան ձիանք, ընկան ճամփա ու քշեցին:
Չորս օր գիշեր ցերեկ քշեցին,
Խալիֆայի հողից էլան դուրս:
Շատ պըտըտվան, կարկին, էկան կարիբ էրկիր,
Էկան նեղ ձոր մի մտան:
Տեսան, որ մեկ մեծ գետ կը գար, կ'անցներ էնտեղ.
Ու մեկ բարակ առու մի էնդիեն՝
Կ'իջներ, կը գար բարձր սարերից,
Կը վարկեր մեջ էդ գետին,
Ու կը կտրեր վէդ գետ,
Ու կը շերտեր չուրի մեջտեղ,
Ապա կը խառնըվեր մեջ էդ գետին ու կ'էրթար:

Էդտեղ էրկու աղբեր իրար հարցուցին.
— Էդա բարակ առվի վորություն ի՞նչ է,
Որ կը կտրի վէդ ահագին գետ, կը կիսի,
Կ'անցնի ու կը դիպնի էս փըլին:
Սանասարի միտքըն փոխվեց,
Վերուց, ասաց Բաղդասարին,
— Զարմացեր եմ, շատ եմ զարմացեր էդոր վերան:
Էդ բարակիկ ջուրն կը գա,
Հրե՛ն, էն սարի գլխեն կը գա,
Ու կը վարնե գետին, ու կը կտրե,

Ու նոր կ'էրթա հետ էս գետին:
Էդ ի՛մալ ջուր է, Բա՛ղդասար:
Աղբերն ասաց Սանասարին.
— Էդ ջուր ակնանցորդու ջուր է.
Ով որ էդոր ական ջուրըն խմե,
Էդպես կտրիճ կ'ըլնի,
Էնոր մեջքըն գետին տվող չի՛լնի:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Ով որ կէդա պստիկ ջրի ակըն գտնե,
Ու վիր տունն էլ շինե վեր էդ ջրին,
Էնոր վավակն էլ որ ըլնի,
Էդպես վորեղ կ'ըլնի,
Էնոր մոտեն ակնանցորդի կ'էլնի.
Էնոր տղեք կտրիճ կ'ըլնին:
Սանասար էդտեղ էրդում արեց.
— Հացն ու գինին, տեր կենդանին.
Էդ ջրի ակ որտեղ էղավ,
Էրթանք, էնտեղ մեր տուն շինենք.
Էնտեղ, ջրի վերան շենլիք շինենք:
Մենք վոռբա, էս ջուր վոռբա,
Էս ջուր խմող ապրայի՛լ մարդ կը դառնա:
Բաղդասար ասաց.— Դու գիտես, աղբեր:

Էդ ջոջ գետ անցան, գնացին էնդին:
Էլան, առան վառուն,
Ու բռնեցին վէն բարակ ջուր,
Ու գնացին էրկու աղբեր:
Ու գնացին, գնացին լեռներ, լեռնե՛ր.
Էլան էդ սարերի գլուխ.
Գիշեր ցերեկ՝ արին մեկ,
Ու գնացին մեկ վերունի էրկիր հասան,—
Քարափրթա՛, ձո՛ր, անդո՛ւնդք, քար ու կապա՛ն.
Անտա՛ռ, արջ ու գապա՛ն:
Շենլիք չկար էդ վերքեր:
Էդ էրկրին շատ հավնեցան:
Ու գնացին, գտան վաղբուր:
Էդ աղբրի ջուր լուլա մի ջուր է,
Կ'էրթա, կը կտրե վիր տակի մեծ գետ:
Տեսան, անուշ ջուր էր, ու տեղն էլ էր անուշ.
Սանասար ասաց.— Էստեղ խորոտ է.

Աղեկ է, որ մենք էստեղ մնանք,
Մեկ համար տուն մի ու քոշք շինենք,
Նստան վեր էդ ջրի ական,
Սահմանեցին՝ իրենց համար բերդ մի շինեն:
Մեծ աղբեր ասաց պստիկ աղբոր.
— Գնա, մեկ որս կարկ, բեր էփենք, ուտենք,
Ես էլ քարեր դնեմ իրար վերա,
Նշանակ շինեմ, որ գեղ շինենք:
Յոթն օր իրար վերա չուր կեսորին՝
Բաղդասար հավքեր կարկեց, բերեց.
Սանասար էլ քար բերեց, նշանակ շինեց:
Ու բերին, վիրենց բերդի հիմ դրին:
Սանասար գնաց արևելի կողմ,
Բաղդասար գնաց արևմտի կողմ,
Ջոջ ջոջ քարափներ կրեցին, բերին:
Քարեր բերին, լրացուցին,
Ձեռ իրար տվին, աստված կանչեցին,
Էղան վարպետ, պատ շարեցին,
Իրենց համար վեր էն ջրին
Իրարու հետ տուն մի կը շինեին:
Ապա Սանասար նետ ու աղեղ կ'առներ,
Կ'էրթար որսի լուսաբացին չուր իրիկուն,
Ու Բաղդասար կը դատեր վեր էն բերդին:

11

Մեկ տաս-քսան օր բանեցին վեր էդ քոշքին:
Էն մեկ օր Սանասար էկավ,
Տեսավ, որ Բաղդասար թաշկեր էր,
Ու քուն անցեր էր վերան,
Արնոտ որսեր էնպես անեփել՝
Թալեր էր ի գետին ու քներ էր:
Շատ կսկծաց էնոր համար,
Ու ասաց.— Աղբեր, էլի էրթանք.
Մեր ապրուստ էսպես չի՛լնի.
Չուր ե՞րբ պիտի մնանք էստեղ,
Ու անալի՛ միս ուտենք:
Աստված որ տար մեկի,
Խալիֆայի քոշք ու սարեն կը տար:
Բաղդասար հարցուց Սանասարին,

— Ապա ի՞նչ անենք, աղբեր:
— Թողնենք, երթանք աշխարհ վե՛:

Էրկու աղբեր հեծան ու գնացին, հասան Մուշ:
Գնացին Մուշեղ թագավորի առաջ,
Գլուխ իջուցին, յոթն տեղով էրկիր պագին,
Ութի վերա ձեռներ կապին ու կայնան:
Ու թագավոր հարցուց էնոնց,
Թե.— Ի՞նչ պակասություն ունիք,
Ի՞նչ պիտի ձեվի, ո՛րդիք:
Տղեկներ դարձան, ասին.
— Պակասություն չունինք.
Վերի դին աստված ենք ապավինե,
Ներքի դին՝ քեվի, թագավոր,
Որ մեվի պահես ու պահպանես,
Քո աչք հովանի մեվի վերա ըլնի.
Ետև անցման աստված իրարուց չամաչեցու:
Վերուց, հարցուց.— Ո՛րդիք, վի՞ր տղեկներն եք:
Թե.— Բաղդադո՛ւ Խալիֆայի:
Ասաց.— Որ էդպես է, ո՛րդիք,
Մենք չենք ի՛շխենա ձեվի պահել.
Էնի վորեղ թագավոր է,
Կը գա մեր առ ու գերին կը տանի:
Ետ դարձեք, գնացեք, չենք կա՛րնա պահել:
Էդա տեղեն էլան ու գնացին:

Ու միտք արին, թե.— Դո՞ր երթանք:
Ու դեմ արին Արվրում նստող ամիրային:
Գնացին էդ մարդուն էրկու աղբեր,
Գլուխ իջուցին ու կայնան առաջ:
Ահագին ու քո ուված՝ հաստաբակուկ
Ու հաղթուկ մարդ էին էդ էրկու աղբեր:
Արվրում նստող ամիրան
Որ տեսավ, շատ հավանեց էդոնց:
Հարցուց վիրենց ավգ ու տակ,
Ու ասաց.— Դուք ի՞նչ մարդ եք:
Սանասար պատասխանեց.
— Մենք՝ Բաղդադու Խալիֆայի տղեկներն ենք:
Էդ ամիրան ասաց.— Հա՛յ, հա՛յ, հա՛յ,—
Ու վիր փողպատ թոթվեց էնոնց մոտեն:

— Մենք էդոնց մեռելներուց կը փախնինք,
Էդոնց կենդանո՛ւն ռաստ կը գանք:
Ոչ, ձեվի տեր չենք կա՛րնա ըլնի.
Ուրվե կ'էրթաք, գնացեք:
Էդտեղեն էլ էլան ու գնացին:

Ճամփան խորհուրդ արին:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Աղբեր, մենք էդ մարդու մոտեն կը փախնինք,
Ջէդոր անուն ինչի՞ դրեր էնք մեր վերան:
Արի մենք էդ շան անուն չտանք.
Քանի որ մենք էդոր անուն տանք,
Մեվի պահող չկա:
Էս դիր ուր որ գնանք, ով որ հարցուց,
Տ'ասենք՝ մեվի բան չկա,
Ոչ հեր, ոչ մեր, ոչ տուն, ոչ հայրենիք,
Բալքի մարդիկ վմեվի տիրեն:

12

Ու էնտեղեն դարձան,
Թողին, էկին Մանձկերտու բերդ:
Թագավոր մի կար էնտեղ, անուն Թևաթորոս,
Էկին, էնոր դուռ կայնեցին,
Թագավորի մարդիկ էկին.
— Դուք ի՞նչ մարդ եք, հարցուցին:
Ասին.— Էկանք, թագավորին ըլնինք ծառա:
Թագավորին իմաց տվին:
Գնացին, գլուխ իջուցին,
Յոթըն տեղով էրկիր պագին,
Ութի վերա ձեռ կապեցին
Ու կայնան էնոր առջև:
Թագավորն ինչ վեդ էրկու խարտեշ,
Սիրունատես տղեք տեսավ,
Շատ հավանեց էնոնց, հարցուց.
— Ո՛րդիք, ի՞նչ պիտի ձեվի.
Ինչի՞ համար եք էկե:
Պատասխան տվին էնոր.
— Վերի դին աստված ենք ապավինե.
Ներքի դին՝ քեվի, թա՛գավոր,

Որ մեկի պահես ու պահպանես,
Քո աչք հովանի վերա մեկի ըլնի,
Էտև անցման աստված իրարուց չամաչեցու:
Ու թագավոր հարցում արեց.
— Ո՛րդիք, դուք ո՞ր տեղեն եք:
Պատասխան տվին, ասին.— Չենք գիտի:
— Ի՞նչ ունիք, ի՞նչ չունիք. հեր ու մեր ունի՞ք:
Ասին.— Իսկի բան մ'էլ չունինք,
Ոչ տուն, ոչ տեղ, ոչ հայրենիք,
Մենք ինչ մորե էլեր ենք,
Ոչ հեր ենք տեսե, ոչ մեր ենք տեսե.
Մեկի էսպես որբուկ տղա ենք տեսե:
Թագավոր նորեն հարցուց.
— Դուք ի՞նչ կ'ասեք, ինչի՞ ման կը գաք:
— Մենք էկեր ենք կո՛, կըլնինք քեզի ծառա:
Թագավորին շատ դուր էկան, ասաց.
— Տարեք էդ տղեկներ դրեք մեկ մաքուր տեղ,
Սենեկի մեջ անկողիններ փռեք:
Տարան, դրին մեկ սենեկի մեջ
Ու էնոնց ժամեժամ հաց կը տանեին:
Թագավոր կէնոնք շատ ուկեց.
Սանասարին արեց սեղանապետ,
Բաղդասարին՝ գինապետ:

Մեկ տարի թամամ պահեցին,
Տարին որ թամամավ,
Վակիր թագավորին ասաց.
— Թագավոր, մի բերե՛ս, փորձես կէդոնք.
Տեսնես՝ մեջերն հունար կա՞, թե չկա:
Թագավորն ասաց.— Աղեկ կ'ասես:
Ու կանչեցին էդ տղեկներ,
Բերին թագավորի դիվան,
Ու թագավորն ասաց էդոնց.
— Ո՛րդիք, լուսուն պիտի կռիվ էրթանք:
Ու տղեկներ էդա տեղեն էլան,
Գնացին, նստան իրենց սենեկի մեջ.
Մնացին էնտեղ չուրի լուսացավ:
Առավոտ բարի լուսուն էլան,
Ամեն մեկ իր կենքեր առավ վերան,
Հեծան իրենց ձիանք

Ու գնացին կռվի մեյդան.
Թագավորն էլ իր զորքով էկավ:
Վերուց, ասաց.— Սա նասար,
Զորքերն առ, դու մեկ դին կայնի,
Ես, Բաղդասար, վպիր մեկ դին կայնենք:
Սանասար ասաց.— Էդպես չէ, թագավոր:
— Հապա ի՞նչպես, հարցուց թագավոր:
Ասաց.— Ես ու իմ աղբեր մեկ դին կայնենք.
Դու, քո զորքեր, վպիր՝ մեկ դին:
Թագավոր ասաց.— Քո խոսք ըլնի:
Ու էկան, առան իրար կռիվ:
Թագավոր մեկ էլ նայեց, տեսավ,
Որ էլ զորքեր չկան, ամեն ջարդած են:
Ասաց.— Վպիր, քո տուն ավերի,
Ինչպես որ դու իմ տուն ավերեցիր.
Մինչի հիմի էդոնք գիտեին,
Թե մեր մեջ որձ մարդ կա.
Հիմիկս իրենք մարդ են, մենք՝ կնիկ:
Վպիր վերուց, թե.— Որ էդպես է,
Քաղքից դուրս արա, թող էրթան:

Էն օր քաղքի նախիր ավպակներ տարան:
Էլավ, էբեր մի էրեսուն ձիավոր,
Տղեկներու հետ տի դներ,
Որ էրթային տանողների ետև:
Սանասար ասաց.— Թա գավոր,
Մենք չենք ուզի էդ էրեսուն ձիավոր.
Մենք էրկուսով մենակ կ'էրթանք:
Առին զենքեր, հեծան ու գնացին:
Գնացին, հասան ավպակներուն.
Զարկին, ջարդին, նախիր թափեցին,
Զէդ ավպակներ խառնեցին նախրի տավրի հետ,
Դարձուցին, բերին քաղաք:
Թագավոր բռնեց, կավպակներ կապեց:
Էդա անգամ զտղեկներ է՛լ լավ պահեց:

Առավոտուն էլան, գնացին, պըտրտեցին,
Տեսան ջահել տղեք վահանամարտ կը խաղան.
Վահան բռնած ձեռներ՝ փետ կը զարնեն իրարու:
Ասին.— Մենք էլ էրթանք, հետ էնոնց խաղանք:

Գնացին, ո՛ր մեկին ձեռ տվին,
Ուշաթափ էղան, ընկան գետին:
Գնացին, թագավորին խաբար տվին.
— Էլի տես՝ ինչ են արած:
Թագավոր կանչեց վէնոնք, ասաց.
— Տղեք, դուք էս ի՞նչ կ՚անեք.
Էս ձեր արած բան ի՞նչ է:
Ասին.— Թագավոր ապրած կենա,
Մենք խաղացինք, էդպես էղավ:
Ասաց.— Դուք կորեղ, ալնավուր մարդ եք,
Էնոնք ձեվի կարնա՞ն դեմ կենան:
Դիր մ՚էլ էդպես բան չանեք:
Ասին.— Էլ չենք անի:

Մեծ քաղաք էր. հարսնիք արին.
Ջահելներ էլան, գնացին, ձի խաղցուցին:
Թագավոր ասաց Բաղդասարին.
— Էլեք, դուք էլ գնացեք,
Ձիաթողս, ուրախություն արեք:
Էդոնք որ գնացին, ձիավորներ կայնան:
Էդ էրկուս կայնան մեկ կողմ,
Ձիավորներ կայնան մեկ կողմ.
Էկան, իրարուց կրակ տարան,
Երբ մեծ աղբեր կ՚էրթար ետև,
Ջրինդ կը թալեր, վնաս չէր տա.
Երբ որ պստիկ աղբեր կ՚էրթար,
Կը կարկեր, կող կը ջարդեր.
Էրկու-իրեք տղի վնաս էտու:
Սանասարին էդ դուր չեկավ.
Էլան, դարձան, էկին տուն:

Մեկ սինի պտուղ վերցուց մեծ աղբեր,
Էդի պստիկ աղբոր գլխու վերա,
Տարավ թագավորի դիվան:
Էն տղաներու տիրվանք էկած են,
Գանգատ կը տան, կ՚ասեն.
— Թագավոր. էդ տղաներ ճամփու դիր.
Թե չէ՝ կորեղ են, քեզ կը վնասեն:
Սանասար որ պտուղ տարավ,
Տղաներու տիրվանք տղաներուն մոռցան.
Էկին, լցվան պտղի վերա, կերան:

Էնոնց ընկեր տղաներից մեկ գնաց, ասաց.
— Թագավոր բարկացեր է ձեր վերա,
Ձեզի քաղքից դուրս տի հանի:
Սանասար Բաղդասարին ասաց.
— Աղբեր, էստեղ մեզ տուն չի՛լնի,
Էրթանք, մեր տուն շինենք:
Էնքան ջանք թափեցինք էնտեղ,
Ու մեր էն ավերակն էնպես մնաց կիսատ:
Ասաց.— Դու գիտես, աղբեր, էրթանք:
Լուսուն ոչ դու հաց պատրաստիր,
Ոչ ես գինի լնում, իտամ.
Առավոտուն չէրթանք իրեն էրևանք:

Թագավոր քնուց կարթնեց, ոչ էն կա, ոչ էն.
Էդ հետ կանչեց կէնոնք:
Էկին թագավորի առաջ:
— Թա՛գավոր, ասին, մեր մեղքն ի՞նչ է,
Որ դու մեզի քաղքից դուրս կ'անես:
Ասաց.— Ո՛րդիք, խոսք է, բերնես գնացեր է,
Ձեզի պիտի դուրս անեմ:
Էստեղեն գնացեք ձեր սենեկ,
Ու միտք արեք, տեսնենք՝
Որ կողմ կ'ուզեք, տամ ձեզի,
Գնացեք, էնտեղ նստեք:
Տղեկներն էլ միտք արին,
Թե.— Էրթանք էնտեղ, որ նշանգահ թալեր ենք:
Էրթանք, էնտեղ նստենք:

Մնացին գիշերն իրենց սենեկի մեջ:
Բարի լուսըն որ բացվեց,
Էկին թագավորի առաջ կայնան:
Ու թագավոր հարցուց.— Ո՛րդիք.
Ո՞ր կողմ ուզեցիք, որ դուք նստեք:
Ասին.— Թագավոր ապրած կենա,
Մենք, ուղորդ է, հեր ու մեր չունինք,
Համա քենե պահենք, աստըծուց ի՞նչ պահենք,
Ջանք մեկ ավերակի տվեր ենք մի քիչ.
Հետո թորկեր, էկեր ենք էստեղ:

Իրիկուն Դավիթ գառ ու գազան էշեց հաղաք

Ու պատմեցին էնոր ասին.
— Էս օրինակ մեկ աղբերակ.
Էդ աղբրի կուշտ հիմք ենք թալե.
Կը խնդրենք, որ թողնես մեկի,
Էրթանք մեր տուն շինենք, տնավորվինք:
Թևաթորոս թագավոր վերուց, ասաց.
— Ախը՛ր, ո՛րդիք, ես առաջ ձեվ հարցուցի,
Թե ձեվ ինչ կա, հեր, մեր.
Ու դուք ասիք, թե՝ բան չկա. ոչ տուն, ոչ տեղ:
Հիմի քանի որ էդպես է, ասաց.
Կ'էրթաք, հալար բարին,
Գնացեք ձեր տուն ու բերդ շինեք:

Սանասար ու Բաղդասար դարձան, ասին.
— Թագավոր, ապրած կենաս,
Մեկ բան էլ կը խնդրենք քենե,
Մենք մենակ չենք կարնա էնտեղ նստինք.
Կը խնդրենք՝ մեկ քանի տուն աղքատ,
Մեկ քանի տուն հարուստ տաս մեկի,
Գան հետ մեկի, մեկի մոտ տուն շինեն,
Որ իրիկնեց ժողովվինք մեկտեղ,
Զրուցենք մեկի մեր քաղքի մեջ:
Թագավորի սիրտ կռչաց վեր էնոնց.
Էտու էնոնց քառսուն տուն.—
Հե՛լ գիտի տո՛ւն...
Ամեն մեկուն մեկ էշ ու մեկ ճախրակ:

Առավոտուն իր վալիրին ճամփեց քաղքի մեջ,
Էդ քառսուն տուն էտու քոչել,
Էնոնց համար էտու հիսուն բեռ ալուր,
Հետներ էդիր ուտելիք:
Էլան, բարձան վիրենց տներ:
Աղբերներն էլ թագավորին կաց-բարով ասին,
Ու հետ իրենց քոչին գնացին:
Գնացին, սարերն էլան,
Հասան վեր իրենց աղբերակին,
Ու վեր իրենց բերդի հիման:
Սանասար ասաց Բաղդասարին.
— Առաջ կմեր բե՛րդ շինենք,
Թե չէ՝ վէդա աղքատ-ուղքատի տներ:

Բաղդասար պատասխանեց.
— Առաջ շինենք կէդոնց տներ,
Ու նոր շինենք կմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարնա
Արևուն առջև կենա:
Ու սկսեցին կտներ:

Սանասար էնքան կորեղ էր,
Որ օր տասըն տան տեղ կը փորեր,
Էն մեկէլն էլ կփետեր կը բերեր,
Ու բանվածքըն էրկուսով կը շինեին:
Էրկու աղբեր չորս ավուր մեջ լման՝
Ջքառսուն տների պատեր շարեցին,
Էդա ջոջ սարերի գերաններ
Կտրեցին, բերին առանց թփռելու,
Թալեցին վերան, ծածկեցին, պրծան:
Ու քոչեր նստեցուցին տների մեջ:

Տղեկներ որ կտներ կը շինեին,
Օրեն մեկի տուն հաց կ'ուտեին,
Վիր տուն որ հաց կ'ուտեին,
Էնոր տաշտ ու մաղ կը կախեին:

Երբ որ քոչեր իրենց տներ նստան,
Տղեկներ կրկին ըսկըսեցին ըվբերդ շինել:
Սանասար ջոջ քարափներ շալկեց, էբեր.
Ջոջ ջոջ քարեր էլ իր աղբեր էբեր:
Գնացին հետո քաղաք,
Վարպետ ու բանվորներ բերին:
Վարպետ տեսավ բերած քարեր,
Ասաց.— Ես չեմ կարնա շինել:
Սանասար գնաց քաղաք,
Ուրիշ մեկ վարպետ էլ էբեր:
Էս վարպետ էլ որ տեսավ էն ջոջ քարեր,
Ասաց.— Սանասար, էս ի՞նչպես տի շարենք:
Ես չեմ կարնա էս քարափներ իրար տալ:
— Ապա ո՞վ կարնա, հարցուց Սանասար:
Վարպետ պատասխանեց.
— Մարդ չի կարնա իրար տալ:
— Ապա ի՞նչպես տի շարենք:

— Ես էլ չեմ գիտի, ասաց վարպետ:
Էն ժամանակ Սանասար վերուց, ասաց.
— Դե դու, վա՛րպետ, լարեր կապի՛, տեղեր շտկի՛,
Ինձի ասա, ես քար դնեմ իր տեղ:
Էսպես իրենց բերդ շինեցին:
Ջոջ ջոջ քարեր կը բերեին հրեշալի,
Վարպետների հետ էլ մեկտեղ կը բանեին:
Էնոնք էնքան կորեղ էին,
Որ քարե սան բարե սուն կարկին, ձագ թալեցին:
Մեկ տարի բոլոր էնոնք էսպես աշխատեցին,
Մեկ տարին որ լրացավ,
Նոր էնոնց բերդն ու տուն էկավ գլուխ:
Դարձան փոքրիկ, էկեղեցի մ'էլ շինեցին:
Մնաց բերդի ու տան անուն:
Ու չեն գիտի, թե ինչ դնեն էդոր անուն:

14

Ապա Սանասար ասաց Բաղդասարին.
— Շատ աղեկ, մենք մեր տուն պրծանք.
Մեր տան անուն ի՞նչ տի դնենք:
Բաղդասար ասաց.— Ա՛ղբեր, դու գիտես.
Շինել վեր մեր էրկուսիս,
Անուն դնել վեր քեզ:
Ով որ էկավ, բռնեց, ասաց.
— Իմ տան անունն դրեք:
Մարդ չիմացավ, թե ինչ ասեր:
Քանի մարդ էկավ էդտեղ,
Բերաններ փակվավ, անուն չասին:
Ով էլ էկավ, անուն էդիր,
Անհարմար ասին դրած անուն:
Մնաց: Մի իրիկուն խորհուրդ արին:
Բաղդասար ասաց իր եղբոր.
— Լավն էն է որ էրթաս,
Մեկ ալևոր մարդ գտնես, բերես.
Էստեղ հացկերություն անի,
Էլնի, բերդին անուն դնի, էրթա:

Առավոտուն լուս որ բացվեց,
Սանասար էլավ, գնաց ման էկավ,

Սիպտակմորուս պապիկ մի տեսավ.
Վեցկին լծեր էր մեջ օստնին,
Հետ հոտաղին վար կ'աներ:
Հալվոր ինչ էդ փահլևան տեսավ,
Ձեռքեր էլան դող, վար կայնեցուց:
Սանասար էկավ, ձեռ էթալ,
Հալվորի թև բռնեց, ասաց.
— Պապիկ, արի էրթանք մեր տուն:
Հալվորն ասաց.— Ձեռք վեր առ ինձենե:
Ասաց.— Մի վա՛խենա, պապիկ.
Արի էսօր մեր տուն հյուր.
Քեկ կը տանեմ, ետ կը բերեմ:
Հալվոր համաձայնավ, գնաց:
Ինչ մոտեցան, հոգնեց, ասաց.
— Հերիք է՝ ինձ տանես, ես նեղացա:
Ասաց.— Պա՛պիկ, հա՛—հա՛, մոտեցանք,
Հա՛մա ձեռ էտու կպապկի ճիվ,
Էթալ վեր իր ձիուն,
Առավ, տարավ, մեջ տան էդիր գետին:

Տարավ տուն, հացկերություն արին,
Նստան, կրուցեցին չուր իրիկուն:
Ասաց.— Պապիկ, դու գիտե՞ս՝
Ինչի համար ենք քեկ բերե:
Ասաց.— Հա՛լ կանաչ կտրիճ,
Բա ես գիտե՞մ, ես ի՞նչ գիտեմ՝
Ինչի համար եք ինձ բերե:
Սանասար ասաց.— Հա՛լ պապիկ,
Ծեր ալևոր, մեծ մարդ ես դու,
Աշխարք շատ ման էկեր ես.
Էս տուն մենք նոր ենք շիներ,
Դեռ մեր տուն անուն չունի,
Մեր բերդի անուն չենք գի՛տի՝ ինչ դնենք:
Պապիկ, ես քեկ բերի էստեղ,
Որ դու անուն դնես մեր բերդին:
Մեր տան անուշ անուն մի դիր,
Տեսնենք՝ ինչ տի դնես տան անուն:
Հալվորն ասաց.— Թող ըլնի:
Ապա դարձավ, հարցուց, ասաց.
— Ձեր հոգուն մեռնիմ, տղաներ,

Ի՞նչ անուն կ'ուզեք, ի՞նչ անուն դնեմ:
Էնոնք ասին.— Հալվոր պապի,
Մեր ուզածով չէ. դու քեզ համար ինչ կ'ուզես՝ դիր:
Հետո հալվորն ասաց.
— Հիմի մութն է. առավոտուն էլնենք, ման գանք,
Ես իրիշկեմ, էնոր գորա անուն մի գտնենք:

Քնեցին: Առավոտուն էլան վե,
Լվացվան, աղոթք արին.
Հալվոր կուշտ հաց կերավ,
Էլավ, գնաց, բակի մեջ մեկ ֆռաց, ֆռաց,
Խորոտ ու գեշ մտիկ էտու,
Դարձավ, ասաց.— Ես չեմ տեսնա՝
Ձեր տուն քանի մ'է, որ անուն դնեմ:
Սանասար ասաց.— Պապիկ,
Արի ես քեզ շալկեմ,
Մեր բերդի չորս բոլոր ման ածեմ,
Դու տես, նոր անուն դիր:

Շալկեց, էլավ դուրս, բերդի բոլոր ֆռաց,
Հալվորն աշեց էն տան չորս բոլոր,
Տեսավ՝ սար մի կո՛ շարած վեր իրարու:
Առավոտուն արևմտյան դռնեն էլավ,
Բերդի բոլոր պըտըտեցուց,
Իրիկուն նոր պրծավ, էկավ մոտ էն դուռ,
Էկան, կայնան դռան առջև:
Իրենք էլ էսպես են մտածե.
«Հալվորի գալուն պես էլնենք դիմաց,
Ինչ խոսք էնոր բերնեն էլնի,
Մեր բերդի անուն էն թող ըլնի»:
Ասին.— Պապիկ, ի՞նչ կ'ասես:
Հալվոր նայեց դարգահի վերա,
Էդոր վերին հարկեր տեսավ,
Քարեր հանած էդա բարձր հարկեր,
Տեսավ քարափներ պատ շարած,
Զարմացած մնաց, հարցուց, ասաց.
— Էդո՛ր անուն դնեմ:
Աստված ձեր տուն շինի,
Ես ի՞նչ անուն դնեմ էս տան:
Աստված բարի տա ձեզ,

Դուք ի՞նչքան ուժ ունիք,
Որ վեր հաներ եք էս մե՛ծ մեծ քարեր:
Վա՛, էս ի՞նչ սասուն քարեր են,
Դուք էն սասուն քարեր
Ի՞նչպես հաներ եք էն վերին տեղ,
Ու քարե սան սուն եք վարկե.
Էս տո՛ւն չեք շինե դուք.
Ապա սասուն մ՚ եք շինե:
Վա՛, քանի սասուն բերդ մի.
Էս տուն չէ, էս սասուն է:

Սանասար ասաց.— Բավ է, պապիկ,
Էլ ձեն մի հա՛նի, էլ անուն մի՛ դնի.
Ա՛յ պապի, անուն դրվավ,
Անուն էղավ Սասուն:
Քանց էդա ավել էլ ի՞նչ անուն:
Որ դու ասիր՝ սասուն քարեր,
Քարե սան սուն եք վարկե,
Մեր բերդի անուն էղավ Սանսուն, Սասուն:
Մեր տան անուն՝ Սասնա տուն:
Ու էն բերդի անուն կոչվավ Սասուն,
Էն տան անուն մնաց Սասնա տուն:

Բերդի անուն դրին, պրծան,
Սանասար ասաց հալվորին.
— Պապիկ, էստեղ մնա,
Ես քեզ խորոտ կը պահեմ:
Հալվորն ասաց.— Աստված որ կը սիրես,
Է՛լի ինձ կը տանես, դնես իմ տեղաց վերա.
Էն վաթանն է, էստեղ իմ համբեր չգա:
Սանասար կհալվոր վերուց,
Տարավ, իր տեղ էդիր:

15

Ի՞նչ էր էնոնց սովորություն, արվեստ:—
Էրկու աղբեր ցերեկ սարեր ման կը գային.
Կ՚էրթային, կը հասնեին չուրի ծովափ,
Որս կ՚անեին, իրիկուն կը գային տուն:

Ավուր մեկին Սանասար ասաց Բաղդասարին.
— Հա՛յ աղբեր, էրթանք ծովու բերան,
Մեկ լավ ձի մեկ համար գտնենք, բերենք:
Հրեղեն էին, գիտեին, որ ծովու ձի կա:—
Էլան, գնացին ծովու պռուկ.
Էրկուս նստան էնտեղ:

Սանասար ասաց Բաղդասարին.
— Աղբեր, արի մեկ տանք վեր էս ծովուն,
Տեսնենք՝ մարդ կը խրվի՞ մեջ:
Բաղդասար դարձուց, ասաց.
— Աղբեր, հոգին քաղցր է.
Ես ինձ չեմ թա՛լի ծով:
Սանասար աղբորն ասաց.
— Լավ, դու կայնի էստեղ, ես կ'էրթամ.
Թե ես չըխրվա էս ծովի մեջ, դու է՛լ արի.
Թե ես խրվա, խեղդվա, դու էլ մի՛ գա,
Դու էստեղ ողջ կը մնաս:
Սանասար սիրտ արավ,
Մեկ աստծու անուն էտու,
Ձինք շալապուտիկ արավ, էթալ ծով:
Աստծու հրամանքով ծով բացվեց,
Սանասարի աչից առջև էղավ չոր գետին,
Բաղդասարի աչից ծով կ'էրևար:
Բաղդասար մնաց էնտեղ ծովու պռուկ,
Հա՛մա կը լար, կ'ասեր.
«Վա՛յ, իմ աղբե՛ր գնաց ծովու մեջ կորսըվա՛վ,
Իմ աղբեր գնաց ծով, խեղդըվա՛վ»:
Որ էլ վէնի չտեսավ,
Ուշքըն գնաց կըսկըծու,
Ընկավ ծովու բերան:

Սանասար ծովու մեջ որ մտավ,
Ինչ չոր գետնի վերա գնաց:
Գնաց, հասավ ծովու տակ մեկ պարտեզ,
Տեսավ՝ քոշք ու սարալ մի կա էնտեղ.
Հավուկ մի կա մեջ էն պարտեզին.
Էն քոշք ու սարի առջև ջուր կը թալի:
Տեսավ Ծովային ձին, Ռուռկիկ Ջալալին,
Էնտեղ կապուկ, թամք սադաֆին վերան պատրաստ,

Կեծական Թուր վերան կախած:
Նայեց՝ էկեղեցի մի կա էնտեղ:
Ինչ մտավ էկեղեցին,
Ակահ գնաց, թավալեց, ընկավ:
Մեջ քնուն էրապ տեսավ,
Մայր Աստվածածին էկավ էրապ, ասաց.
«Հե՛յ, Սանասար, էլի վե՛ր:
Խաչ Պատերազմին կո՛ էստեղ է.
Էլի՛, յոթ ծունր, աղոթք առջև արա.
Արժան ընիս, քեզ կը հասնի,
Դնես վեր քո աջ թևին, որ դարբ չառնի:
Ծովային ձին, Քուռկիկ Ջալալին,
Էնտեղ թամքած, սանձըն բերան վարկած,
Էրկնուց իջած Թուր Կեծակին վերան կախած.
Թե արժան ես, կ'առնես, կը հեծնես:
Էստեղ մեկ պահարան կա, բա՛ց.
Մեջըն շապիկ կրեհին.
Զրեհի քամարն ի մեջքին,
Գլխու գուտն կրեհին,
Զրեհի կոշիկն ի ոտին,
Ծանրիկ գուրզ փահլևանին,
Ամուր նիզակ, նետ ու աղեղ,
Փող պղլորին, պինդ վահան.
Ամեն էստեղ է, կ'առնես:
Էն դարբասի աղբրի մեջ էլ կըլողանաս,
Կը ջոջանաս, կը զորանաս, կտըրճանաս,
Քո ուժ կ'ընի քան յոթ,
Մեկն յոթ կը հավելանա, կը լցվիս,
Կ'երթաս քո մուրազին կը հասնիս»:

Սանասար քնուց կարթնեց, էլավ, ասաց.
«Էն ի՞նչ էրազ էր, ես տեսա.
Տեսնես՝ ուղո՞ղդ է, թե՞ սուտ է»:
Գնաց էնտեղ, ինչ շանց էտու,
Էն պահարան էբաց, տեսավ էնտեղ՝
Ինչ էրազի մեջ տեսեր էր:
Տեսավ մեկ կրեհի գուտ էնտեղ.
Էրկու լիտր բամբակ դներ մեջ,
Դներ գլուխ՝ չկայներ.
Մեկ կրեհի մեջկապ էնտեղ,

Յոթ փաթ էկավ բոլոր մեջաց.
Մի ջուխտ վրեհի կոշիկ էնտեղ,
Մեկ մեկ լիտր բամբակ դներ մեջ,
Հագներ, հալա ջոջ էր:
Էկեղեցուց էլավ դուրս,
Գնաց, մտավ էն դարբասի հավուլ, լողացավ.
Աղբըրի ջուր խմեց, քնեց.
Քնեց մի քիչ, աստծու շնորհք առավ.
Ջոջացավ, վորացավ, կտըրճացավ,
Լցվավ, դարձավ հրեղեն:
Վեր էլավ, էն գեստեր կապեց ամեն:

Ըվվրեհի շապիկ հագավ.
Ըվվրեհի քամար կապեց,— քամար մեջքով էր.
Ըվվրեհի գուտըն էդի գլուխ,— գլխով էր.
Ըվվրեհի կոշիկ հագավ,— ոտքով էր.
Ամեն գեստեր, վենքեր առավ:
Յոթ ծունր աղոթք արավ,
ՋԹուր Կեծակին կապեց վեր իր:
Հրեշտակները ըվԽաչ Պատերազմին
Դրին վեր աջ թևին,
Որ դարբ չառնի Սանասարին:

Էլավ, սիրտ առավ, որ ձին հեծներ:
Քուռկիկ Ջալալին դարձավ, ասաց.
— Հողածին, ի՞նչ կանես, քո միտն ի՞նչ է:
Ասաց.— Քե կը հեծնեմ:
Ասաց.— Քե կը տամ արեգական, կ'էրեմ:
Ասաց.— Ծովային եմ, ինձ կըտամ քո փորի տակ:
Ասաց.— Քե կը տամ գետին, կ'էրթաս անդունդ:
Ասաց.— Ծովային եմ, ինձ կը տամ քո քամակ:
Թռավ քամակ, հեծավ ըվձին,
Որ կը տար արեգական՝ էրեր,
Ինք էտու ձիու փորի տակ.
Որ կը տար գետին՝ էրթար անդունդ,
Ինք էտու ձիու քամակ:
Ձին քիչ մ'էլ թռավ վեր-վեր,
Դես փախավ ու դեն փախավ,
Կայնավ վեր հետին ոտներին,
Փրփուր էտու վեր բերնին,

Չկարցավ ըկՍանասար ձգեր գետին:
Խելացացավ, կայնավ, հնապանդեց,
Ասաց.— Ես քո ձին, դուն իմ տեր:

Սանասար քշեց ըկձին, բաղչով կ'էրթար,
Է՛լի ճամփին ծով բացվեց,
Մեկ էլ տեսավ ծովու էրես,
Դուրս էլավ, որ գա աղբոր մոտ:
Աղբեր գետին նստած կը լար.
Տեսավ՝ մեկ սար էլեր սարի վերա, կը գա:
Ասաց. «Էն գական ինձի կ'ուտի.
Էն ըվիմ աղբեր քաշեց ի ծով,
Ըվիս էլ տի տանի, քաշի ծով»:
Չճանչեցավ, վախեցավ, լալով փախավ:
Սանասար կանչեց, ասաց.— Բա՛ղդասար, մի փա՛խի:
Գնաց, հասավ Բաղդասարին, ասաց.
— Ա՛յ տղա, ինչի՞ կը լաս:
Ասաց.— Է՛յ, ես չլամ, բա ո՞վ տի լա.
Ես եմ իմ մեկ աղբեր.
Իմ աղբեր վինք էթալ ծով, գնաց, խեղդըվավ.
Ես էլ մնացի էստեղ մենակ:
Ապա ես չլամ, ո՞վ լա:
Սանասար ասաց.— Է՛յ, տղա,
Մկա քո աղբեր տեսնես՝ կը ճանչենա՞ս:
— Ապա չե՞մ ճանչենար:
Ասաց.— Ես քո աղբերն եմ:
— Իմ աղբեր էդքան ջոջ չէր.
Քանց իս մեկ լար մի ջոջ էր:
Իմ աղբեր էդ ձին ո՞ւստ գտավ.
Իմ աղբեր էդա վենքեր ո՞ւստ գտավ:
Հասավ աղբոր գլուխ պաչեց, ասաց.
— Բա՛ղդասար, ես քո աղբերն եմ,
Սանասարն եմ, մի՛ վախենար, մի՛ լար:
Բաղդասարն էլ Սանասարի գլուխ պագավ.
Ասաց.— Աղբեր, քանի դու կ'էրևայիր,
Ես կ'իրիշկեի քեզի.
Երբ դու չէրևացիր, ես նստա, լացի:
Էնոնք իրար գլուխ պագին,
Մեկտեղ էլան, գնացին տուն:

Էրկու աղբեր նստուկ էին Սասուն:
Բաղդասար քնուկ էր մեկ գիշեր.
Մեկ էլ տեսնի, ի՞նչ տեսնի լավ:—
Ջոջ Կուռք էղավ իծու օրինակ,
Էկավ գլխու վերև, մըկմըկաց,
Մինչի լուս չթողեց, որ էն քներ, սթրեր:
Մեկ ամիս թամամ էդպես կ'աներ:
Ամիսն որ լրացավ,
Դեղնություն թափավ Բաղդասարի վերան,
Հիվանդացավ, նիաթ կախեց:
Սանասար հարցուց աղբոր.
— Ինչու՞ ես դու հիվանդացե.
Քանի կը բանինք, ուրախ էիր,
Հիմի նոթեր կախեր ես:
Բաղդասար պատասխանեց.
— Աղբեր, դու խաբար չես, ես գիշեր չեմ քնի.
Էդ մեկ ամիս Ջոջ Կուռք չի թողի,
Որ ես գիշեր քնեմ:
Կ'ընի իծու պես, գիշեր կը գա,
Կը տըրճըկի չուր լուս վեր ինձի,
Իմ գլխու վերև կը մըկմըկա.
Չի թողի, որ ես քնեմ:
Աղբեր, ես կէրթամ Բաղդադ,
Կամ Խալիֆան ինձ տի մատաղ անի Ջոջ Կռքին,
Կամ ես՝ Խալիֆային:
Սանասար վերուց, ասաց.
— Աստուծով էն չի կարնա մեկ մորթի:
Բաղդասար դարձուց, ասաց.
— Համա, աղբեր, ինձի չի պա՛տկանի,
Որ ես մենակ էրթամ:
Մեկտեղ էրթանք, ըզԽալիֆան կարնենք, սպանենք.
Կռքատուն վառենք, չխոկ մարդիկ թալենք կրակ.
Մեկ էլ էրթանք մոտ մեր խեղճ մեր,
Տեսնենք՝ ինչպես է, ինչ կ'անի:

Էլան, քանի մի մարդով ընկան ճամփա,
Էդ հաշվին գնացին, հասան Բաղդադ,

Ու քաղքից դուրս մեջ դաշտին
Իրենց վրան կարկին, նստան:
— Բա՛ղդասար,— աղբորն ասաց Սանասար.
Դու շուտ գնա, մեր մորն աչքալուս տուր:

Գնացին, ջուաբ տարան Խալիֆային, ասին.
— Քո աչք ի լուս, տղեք էկան:
Խալիֆան ուրախացավ, կվարթացավ, ասաց.
— Զորավոր է մեր Ջոջ Կուռք,
Իր մատաղներ քաշեց, բերեց:
Վերուց, ասաց իր մարդոց.
— Դուք ինձ էրեսով կը տայիք.
Տեսա՞ք իմ կռքերի կորություն.
Ջոջ Կուռք քաշեր, իր մատաղներ բերեր է:
Մարդիկ ճամփեց, էկան տղեկներուն ասին.
— Խալիֆան ասաց՝ դուք բարի էկաք.
Դուք գիտցաք, որ իմ կռքերու օր է,
Ակիկ օր է, տի տանեմ ձեզի մատաղ անեմ:
Ասին.— Մենք գիտցանք՝ կռքեր կոռ են.
Էկանք՝ մեզի մատաղ անի:
Էրկու աղբեր մեկէլ օր էկան,
Գնացին Խալիֆայի էրես:
Տեսան, որ էն էլեր Դիվանխանի տանիք,
Թևեր կանթե, կէրթա ու կը գա:
Որ կՍանասար ու Բաղդասար տեսավ, բոռաց.
— Դուք շան լակոտներ, շուն-շանորդիք,
Ո՞ւր անցիք, դո՞ր գնացիք, ինչի՞ շուտ չէկաք.
Դուք չգիտցա՞ք, որ դոր էրթայիք,
Ջոջ Կուռք ձեզի կը բերեր:
Ասին.— Հերի՛կ, քե մեռնինք, հերի՛կ, քե մեռնինք.
Որ մենք մորե ծնվեր էինք,
Աշխարհ չէինք տեսե.
Աշխարհ տեսանք, մոռացանք:
Համա արևելք փախանք, չպրծանք,
Արևմուտք փախանք, չպրծանք,
Չապատվեցինք քո կռքերու ձեռնեն:
Քո Ջոջ Կուռք շատ կորավոր կուռք է,
Գիշերն էլ չէր թողնե,
Որ մենք էնտեղ սըթըրվինք:

Ասաց.— Դե՛ արիք, էրթանք կռոց տուն,
Ձեզի մատղեմ իմ կռքերուն:
Ասին.— Թագավոր, ապրած կենաս,
Դու կմեզ տ՚անես քո կռքերուն մատաղ.
Մենք թագավորի տղա ենք, մեզ չվա՛յելա,
Իսկույն տանես, գաղտիկ-մաղտիկ կենես:
Մենք կ՚աղաչենք, որ դու, ինչքան ժողովուրդ կա,
Ժողովես, բերես էնտեղ,
Որ տեսնեն ու փառք տան կռքերուն:
Խալիֆան ասաց.— Շատ աղեկ.
Ինչպես որ դուք կ՚ուզեք, էնպես կ՚անեմ:
Ամեն էլ կը ժողվեմ, բերեմ:—
Տղաներ դարձան, էկան իրենց վրան:
Ու գնացին մոտ իրենց մեր:

Խալիֆան թուղթ ուղարկեց, ասաց.
— Իմ էրկու լաճ տի տանեմ,
Իմ կռքերուն մատաղ անեմ.
Էկեք, կռքերուն փառք տվեք:
Ջաղաք քաղքով ու գեղ գեղով թափվան դաշտ,
Հավարավոր մարդեր էկան, դաշտ լցվավ.
Ասեղ թալեին, չէր ընկնի գետին:

Էնոնց մեր, Ծովինար, գիշեր չուր լուս նստավ.
Իր տղեկներն ապով արցունք թափեց:

Սանասար տեղից էլավ, ասաց.
— Բաղդասար, ձիու գլուխ բռնի, ես կէրթամ:
Որ ես կանչեմ, ձին ինձ կը հասուցես:
Ասաց, գնաց մոտ Խալիֆան.
Էնի տեսավ, որ Սանասար կը գար,
Ճանչեցավ, ուրախացավ, ասաց.
— Էյ, մեռնիմ քեզի, Ջոջ Կուռք,
Ի՞նչպես ըվքո մատաղ իր ոտով քաշիր, բերիր:
Հար երբ է մնացե,
Ամեկէլն էլ կը քաշես, բերես իր ոտով:
Ու դարձավ, ասաց.— Է՛յ, ո՛րդի,
Քո աղբեր ո՞ւր է. ինչի՞ շուտ չէկաք:

Սանասար պատասխանեց.
— Իմ աղբեր փոքր է, հետի-հետի կը գա.
Ինձ տար, վէնի՛, չուր իմ աղբեր կը գա:
Ասաց.— Դե կուվ ըլի, ըվքե վէնեմ:
Սանասար ասաց.— Խա՛լիֆա, ինչո՞ւ,
Մարդ մատաղ սրբի դռա՞ն կը վէնի, թե՞ չոլ տեղ:
Էրթանք կռատուն, էնտեղ վէնի,
Որ մատաղ ընդունելի ըլնի:

Խալիֆան ասաց.— Հա, վա՛լլա, քո խոսքն է:
Խալիֆան սուր ձեռն առավ,
Կանչեց, ասաց.— Արի, ո՛րդի, էրթանք,
Էրկրպագություն արա Ջոջ Կռքին,
Որ ըվքեվի վէնեմ, մատաղ անեմ:
Առավ վտղան ու էրկուսով մտան կռատուն:
Տղան ասաց Խալիֆային.
— Երբ մենք գնացինք, պստիկ էինք,
Մենք վքո կռքի վորություն չգիտեինք.
Ես էդոր էրկրպագություն չեմ տվե:
Չեմ գիտի, թե ինչպես կը պառկեն առջև,
Որ կռքերուն հաճո ըլնի.
Դե՛ արի, առաջ դու պառկի կռոց առաջ,
Դե՛ կվի, էրկրպագություն տուր,
Որ ես տեսնեմ՝ ինչպես կը տաս,
Ես էլ քեվնե ուսնեմ, էնպես անեմ:
Խալիֆան կվավ, էրկրպագություն էտու,
Ասաց.— Էսպես, տղա, էսպես տուր:
Սանասար կուվեկուվ արավ:
Խալիֆան դանակ էհան,
Քաշեց, որ վիվ կտրեր, մատղեր.
Սանասար տեսավ՝ ուղորդ, վիվ տի կտրի,
Ասաց. «Յա հացն ու գինին, տեր կենդանին»,
Աքուց մ՚ էկար Խալիֆային,
Որ գնաց իրեք շալապուտիկ
Վեր մեկմեկի էտև, շրջվեց էնտեղ:
ԶԽալիֆան բռնեց, կապեց:
Էնոր մարդիկ ձեն գցեցին քաղաք,
Զորք ժողվեցին, էկան,
Քաղաք քաղքով թափան վերա կռիվ:

Սանասար կանչեց.— Բա՛ղդասար, ձի՛ն...
Բաղդասար ըվձին հասցուց:
Սանասար թռավ, հեծավ ըվձին:
Ասաց. «Այ-վա՛յ, այ-վա՛յ.
Էսոնք ըլնին բամբակ, ես էլ ըլնիմ կրակ,
Էսոնք չեմ կարնա վառել.
Էսոնք ըլնին կրակ, ես էլ ըլնիմ ջուր,
Էսոնք չեմ կարնա անցնել»:
Ձիուն լեկու էկավ, ասաց.
— Սանասար, ինչի՞ կը վախենաս.
Դու քո աստված կանչի.
Քանի դու քո Կեծական Թրով կտրես աջ-ձախ,
Էնքան ես իմ պոչով կը սպանեմ.
Ինչքան դու Կեծական Թրով կտրես,
Էնքան ես իմ շնչով կը սպանեմ,
Էնքան էլ իմ քամով կը սպանեմ.
Ինչքան դու Կեծական Թրով կտրես,
Էնքան ես իմ ոտներու տակ կը կոխոտեմ:

Էրկուս թրեր առան ձեռ,
Ու քշեցին էրկու աղբեր.
Մեկ էրկու դիր գնացին, էկան,
Ձիերու ոտաց փոշին էլավ էրկնուց էրես:
Ու փրթեցին, էնպես փրթեցին,
Ինչպես ձին իր գարին կտրի:
Ու Խալիֆայի մարդեր ընկան,
Խսրի նման փռվան գետնին:
Դարձան ձիուց իջան տակ,
ԸկԽալիֆան բռնին, բերին մոտ իրենց մեր.
Ձվանով ոտնեն չուր գլուխ փաթթեցին սան,
Տախտակ գլխով անցուցին,
Ճրագ գլխի վերա վառեցին,
Նստան տակ Սանասար, Բաղդասար,
Նռան գինին սեղնի վերա դրին,
Կարմիր գինին աչքի առաջ խմեցին,
Ուրախություն, խնջույք արին:

Խաբար գնաց, հասավ պապին,
Թե Սանասար ու Բաղդասար կորացեր են,
Կռապաշտ Խալիֆան բռներ, կապեր են.
Նստած՝ ուրախություն կ'անեն:
Պապիկն ասաց.— Ա՛յ աստված,
Որ էն տղեք տեսնեի,
Թող իմ հոգին առներ:
Խաչապաշտ Գագիկ թագավորն էլավ.
Թուղթ մի գրեց, էտուր Քամուն, ասաց.
— Իմ թուղթ կը տանես Բաղդադ,
Իմ թոռ Սանասարի ձեռ կը տաս:
Քամին ըվթուղթ էբեր,
Ականատից էթալ Սանասարի ձեռ:
Սանասար ըվթուղթ կարդաց.
Պապիկ թղթի մեջ գրեր էր.
«Հապար բարին իմ թոռ Սանասարին:
Որ էս թուղթ կըհասնի քո ձեռ,
Գլուխ էդտեղ թրջես, էստեղ կնտես»:
Սանասար Բաղդասարին ասաց.
— Ես կ'էրթամ, Խալիֆային բաց չթողնես:
Ձին քաշեց, հեծավ, գնաց պապի տուն:
Պապիկ մոր նմուշի վերա վթոռ ճանչեցավ.
Շա՛տ մի ուրախացան, վրուց արին.
Ու շատ խոսքի ընկավ Սանասար,
Մոռացավ ըվմեր ու վիր աղբեր:

Ամեն օր Բաղդասար կ'էլներ, կ'էրթար որսի.
Օր մեկ վերու օչխար կը բերեր.
Կը գային, կը նստեին կերուխումի,
Քեֆ-ուրախություն կ'անեին:
Մեկ էլ որ էն գնաց որսի,
Խալիֆան փաթթած տեղեն՝ ասաց աղջըկան.
— Չէ՞ ես խեղճ եմ, քո տուն չավրի,
Փշուր մի իմ կապեր թուլցո՛ւ:
Աղջիկ էլավ, վկապեր արձակեց, էդիր էնդին:

Խալիֆան էլավ, ի՞նչ էլավ:
Ջամեն տեսավ, ժողվեց:
Գնաց քաղաք, ինչ իշխան մարդ կար մնացած,
Խալիֆայի մարդեր խորհուրդ արին,
Թե՝ «Ի՞նչ անենք, որ ապատվինք»:
Իշխաններից մեկն ասաց.
— Սանասար գնացե, մնացե Բաղդասար,
Էրթանք, վէնի սպանենք:
Մեկն էլ ասաց.— Մենք չենք կարնա վէնի սպանենք.
Կանչենք հարսնիք, խմացընենք,
Տանենք, թալենք մեջ փոսին,
Փուշ ու փալաշ ժողվենք վերան, թող մեռնի:
Խալիֆան ասաց իր մարդերուն.
— Էկեք, յոթ ուղտաբեռ քացախ գինի
Լցեք, տարեք Ախմախու սար,
Որ ես վաղ ըվ Բաղդասար խաբեմ, բերեմ.
Էնտեղ գինի տանք էնոր,
Խմացընենք, հարբեցընենք, սպանենք:
Մարդեր էլան էդպես արին:

Իրիկուն Ծուռ Բաղդասար որսից էկավ.
Տեսավ՝ Խալիֆան արձակած, բան չասաց:
Խալիֆան ասաց էնոր.
— Բաղդասար, գիտե՞ս ինչ կա:
Ասաց.— Ի՞նչ կա, Խա՛լիֆա:
Ասաց.— Ինձ թող, էրթանք Սև սար,
Էնպես որսի տեղ մի գիտեմ,
Որ վերու օչխար, վերու տավար,
Ամեն լցվեր են էնտեղ:
Ինձ թող, վաղ էրթանք, ամեն բռնենք,
Մեկ համար էնտեղ ուրախություն անենք,
Չև քո աղբեր ետ դառնա, գա:
Բաղդասար ասաց.— Թող ըլնի, էրթանք:
Էսպես Բաղդասարին համոցեց:

Մեկէ՛լ օր հեծան իրենց ձիանք, գնացին:
Որ հասան Ախմախու սար,
Էս դեհեն, էն դեհեն, գինու կթխեք ձեռքեր,
«Հապար բարի քե, Բաղդասար»
Ասին, ու չորս դեհեն տվին:

Ինչքան գինի բերին, մարդ չխմեց,
Զամեն տվին Բաղդասարին:
Էսպես Բաղդասարին խաբեցին,
Յոթն տարվան քացախ գինին գլուխ կապեցին:
Ո՛ր մեկին մեկ թաս գինի տվին,
Ասաց.— Հապար բարին Բաղդասարին:
Բաղդասար կանչեց.— Ձեր հապար կտրվի.
Լցեք տաշտեր, ես խմեմ:
Բաղդասար խմեց, էնպես հարբեց,
Որ անակահ, անհուշ ընկավ:
Խալիֆան ասաց իր մարդերուն.
— Դե գուրպեր առեք, էլեք վերան:
Առան գուրպեր, էկան սպանելու:
Վախեն հեռվեն կը կարնեին:
Էնքան կարկին, էնքան կարկին,
Բաղդասարի չորս դեհեն՝
Էնպես խանդակ, փոս շինեցին,
Որ քառասուն գալ փոս կ'ըլներ—
Աստըծու հրամանքով,
Մեկ գուրպ Բաղդասարին չէր դիպնի:

Սանասար էլավ դուրս, իրիշկեց էրկինք,
Տեսավ՝ Բաղդասարի աստղ խավարեր էր,
Իր մտքի մեջ ասաց. «Իմ աղբեր նեղն է»:
Դարձավ, իր պապիկին ասաց.
— Ավա՛, պապիկ, ես տ'էրթամ, իմ ձին քաշեք.
Ես իմ աղբոր կամ լաշին կը հասնիմ, կամ ճաշին:
Պապիկն ասաց.— Ռո տուն չավրի.
Ռո աղբեր հիմի հանգիստ նստեր է,
Իր մոր հետ ուրախություն կ'անի,
Կը խնդանա, դուն էլ մեկ խնդացու:
Սանասար համբեր չարավ.
Էլավ, ինքն իր ձին քաշեց դուրս,
Հեծավ, աչք խփեց էբաց, հասցուց մոր մոտ:
— Մարե, ո՞ւր է իմ աղբեր Բաղդասար:
Թե.— Խալիֆան առե, տարե դաշտ ու սեյրան
Գնացած Ախմախու սար ուրախութեն:
Ասաց.— Ահա՛, իմ աղբեր խաբած, տարած:
Հե՛յ-վա՛խ, իմ աղբեր տի սպանեն:
Ասաց թե չէ՝ քշեց, հասավ Բաղդասարին:

Տեսավ՝ Բաղդասար էնպես խմեր է,
Քոռ հարբած ընկեր է, ակահ չունի.
Էնոնք էլ առած գուրկեր, թրեր,
Էկած են, չորս կողմեն կը կարնեն, որ սպանեն:
Ինքն էլ աստծու անուն էտու,
Ծռանակ ընկավ մեջքեր,
Ու ծանրիկ գուրկ մի իջավ,
Ու կԲաղդադու Խալիֆան՝
Ցոթն գավ գետին վե՛ իջուց,
ԶԽալիֆան, կէնոր մարդեր ամեն սպանեց:

Գնաց, կայնեց աղբոր վերա,
Ջուր էլից գլխուն, գլուխ լվաց, սիրտ մաժեց,
Որ հարբեցություն թողնի, լրջանա:
Կանչեց.— Բաղդասա՛ր, Բաղդասա՛ր:
Ուշք էկավ աղբոր վերան.
Գլուխ վերուց, ասաց.
— Հա՛յ, քո տուն չավրի:
Ինչ աղեկ քներ էի. չթողիր՝ ես քնեմ:
Ասաց.— Քո տուն չավրի.
Մի ե՛լ, քո չորս բոլոր աչքի:

Էլան էրկու աղբեր, էկին քաղաք:
Բաղդասար կանչեց, ասաց.
— Որն որ է՛ն կը հավատա, ինչ ես կը հավատամ,
Թող գա անցնի իմ թրի տակով:
Քաղաք քաղքով թափան, էկին,
Անցան էնոր թրի տակով:

Էնոնց մերն էլ, Ծովինար խանում,
Կկավ վեր քիթ ու բերնին,
Էրկրպագություն արեց ու ասաց.
— Գոհանամ քենե, էրկնի ու էրկրի ստեղծող,
Որ ըմեկի ու մեր ժողովուրդ
Ազատ արիր էն կալումի ձեռնեն:

Մի ժամանակ նստան էնտեղ:
Հետո էլան, առին իրենց մեր ու կքեռմեր,
Ու դեմ արին, էկին դեհ Հայաստան:
Էկին, Գագիկ թագավորի քաղքին մոտեցան,
Մեկ աղբրի վերա վրան դրին, նստան:
Տեսան, որ էն դեհեն մեկ մարդ կը գա,
Կանչեցին, ասին էնոր.
— Գնա թագավորին աչքալուս.
Շատ բարով տար էնոր ու Քեռի Թորոսին,
Ասա՝ ձեր Ծովինար ու իր էրկու տղան
Ողջ-առողջ էկած, աղբրրի մոտ նստած են.
Աչք ձեր ի լուս ըլնի:
Գագիկ թագավոր ու Քեռի Թորոս
Էլան, էկին էնոնց առաջ:
Էկին, ընկան իրար վզով,
Պագին իրար, լացին ու խնդացին,
Կերան ու խմեցին, ուրախություն արին:
Թագավոր ու Քեռի Թորոս ասին.
— Դեհ, էլեք, էրթանք քաղաք:
Խոսք մեկ արին, գնացին քաղաք,
Իջան թագավորի պալատ:
Ցոթն օր, յոթ գիշեր ուրախացան:

Սանասար վերուց, ասաց թագավորին.
— Քեռհե՛ր, ես մեկ բան կը խնդրեմ քենե:
Ասաց.— Ի՞նչ կը խնդրես:
Ասաց.— Մեկ տեղ մենք մեկ համար
Մեկ տուն ենք շինե, էրթանք էնտեղ:
Թագավոր դարձուց, ասաց.
— Ո՛րդի, ես տղա չունիմ,
Ես կը մեռնիմ, իմ թագավորություն
Չեկ կը մնա, կ՚ըլնի ձեր տուն:
Ասին.— Չէ՛, թագավոր, ապրած կենաս,
Էկանք, ձեվի տեսանք,
Գոհություն աստծու, ողջ-առողջ եք,
Իրարուց կարոտ առանք, կ՚էրթանք մեր տուն:

Պատրաստություն որ տեսան,
Մերն իր էրկու որդուն խրատ էտու.
— Ո՛րդիք, թագավորից էս բան ուզեք.
Ասեք, թե՝ Ծովասար, Մարաթկա ջուր,
Ճապաղջրի Բաժն ու Քոդեն տուր մեզ:
Թե էրդավ՝ «Հացն ու գինին, տեր կենդանին», կը տա:
Սանասար ասաց թագավորին.
— Մեկ բան էլ կը խնդրենք քենե:
— Ո՛րդիք, ասաց թագավոր,
Մեր հոգուց զատ՝ ինչ որ կ'ուզեք,—
Հացն ու գինին, տեր կենդանին,— կը տանք:
Ասին.— Ծովասար, Մարաթկա ջուր,
Ճապաղջրի Բաժն ու Քոդեն տուր մեզ:
Ասաց.— Տվինք, ո՛րդիք:
Էլան Ծովինար խանում ու իր տղեկներ,
Հեծան, ճամփա ընկան ու գնացին.
Ու Քեռի Թորոս էլ իրենց հետ գնաց:
Ընկավ իրենց առջև Սանասար,
Ու գնացին, էլան վեր Սասնա բերդին:

Սանասար շատ զորընդեղ մարդ էր.
Սև սարի բոլոր ու չուրի Ծծմակաքիթ՝
Մշու վերևով պարիսպ քաշած,
Էլած էր չուրի Սեղանսարու գոտին ի վե՝
Ճապաղջրու Դուրան, Մուրադ գետի բերան,
Ու վեդ ամենն էլ տիրապետեց:
Զորս դարգահ էլ թողեց իր բերդին,
Ու միշտ հանապազ կը գարկեր վիր դարգահ,
Ու կը հեծներ վիր ձին, զՔուռկիկ Ջալալին,
Ու ինչքան գել ու գազան ըլներ, կը բռներ:
Օրերուց օր մ' էլ գարկեց, գնաց չուրի Մըսըր,
Զուրի Բաթմանա կամուրջ, չուրի Անգղա ձոր:

Էնպես փահլևան էղավ Սանասար,
Որ էնոր ձեն աշխարք բռնեց:
Շատ մարդեր որ լսեցին, ասին.
«Ա՛ղբեր, մենք նստեր ենք էստեղ, ի՛նչ.
Գող մարդեր ամեն ժամանակիկ՝

Կը գան, մեր ապրանք կարնեն, կը տանեն:
Ըհը՛, էն աստվածը, մենք կ՚էրթանք էդա Սասուն,
Որ Սանասարի, Բաղդասարի պես՝
Էրկու կորեղ փահլևան կա.
Որ էդ տեղի մարդուց ոչ հարկ կ՚առնեն, ոչ տուրք,
Որ մեկ մարդ մեր ապրանք չկարնե տանի»:
Հա քիչ քիչ, հա քիչ քիչ գնացին էնոնց մոտ.
Շատացա՛վ, մե՛ծ քաղաք էղավ Սասուն:

ՄԱՍ Բ

ՍԱՆԱՍԱՐԻ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

1

Օղորմի տի տամ, օղորմի
Էն խանում Ծովինարին.
Օղորմի տի տամ, օղորմի
Էն Սանասարին, Բաղդասարին.
Օղորմի տի տամ, օղորմի
Էն Դեղձուն-Ծամին.
Օղորմի տի տամ, օղորմի
Ականջ արողներու անցավորներին:

2

Խաբար ո՛րդուց տանք:—
Խաբար Պղնձե քաղքից տանք,
Քաջանց թագավորի աղջկանից տանք:

Սանասար-Բաղդասարի անուն բարձր էլավ.
Էնոնց ձեն ընկավ բոլոր երկիր,
Թե էսենց, էսենց, էսենց.
Երկու կտրիճ կա Սասուն:
Սանասարի քաջությա՛ն ձեն որ էլավ,
Խոսք ու լրուց գնաց, հասավ Պրղնձե քաղաք,
Հասավ Քաջանց թագավորի աղջրկան,
Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամին:

Էդ թագավոր էրկու աղջիկ ուներ,
Էլ մարդ չկար էնոր:
Դեղձուն աղջիկ կախարդ էր, հմայիչ էր:
Մեջ էրպին վինք տեսավ Սանասար,
Ու շա՛տ սիրու տեր էղավ վեր էնոր:
Աղջիկն իմացավ էս բան, ասաց.
«Էնա մարդու անուն կտրիճ է.
Ես էնոր թուղթ մի տ՝ուղարկեմ,
Էն գա, ես հավանիմ, կէն առնեմ»:

Էս Պղնձե քաղքի թագավորի աղջիկ
Մեկ կուժ լիք ջուր էլից, խնձոր բերան էդիր,
Մեկ կուժ էլ դատարկ՝ խնձոր բերան էդիր,
Էլավ, մեկ թուղթ գրեց Սանասարին:
Թղթի մեջ գրեց.

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից՝
Շատ բարև Սանասարին.
Շատ բարև Բաղդասարին, Սանասարին:
Սանասա՛ր տղա,
Ես Պղընձե քաղքի թագավորի աղջիկն եմ:
Իմ սի՛րտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սո՛ւրբ է.
Իմ գլո՛ւխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լի՛ք է.
Աստրծու շնորհքով լցուկ եմ:
Շատեր էկած իմ վերա, ինձ ուզելու.
Քառսուն տեղե քառսո՛ւն մարդ է էկած,
Ես խոսք չեմ տվե, ես հա չեմ ա՛սե.
Էրպով ըվքեկ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ.
Ինձի շա՛տ դուր կը գաս դու:
Սանասա՛ր տղա,
Էս թուղթ կը գրեմ քե՛զ համար.
Զուր ե՞րբ ես տի մնամ էստեղ քո ապով.
Գլուխ թացեր ես, չկնտես,
Արի, ինձի տար քեզ համար»:

Գրեց, իր պատկեր էդիր մեջ թղթին,
Կանչեց էրկու աղջիկ,
Կապեց էնոնց թևքերուն,
Ասաց.— Կը տանեք Սասուն քաղաք,
Տան էրդիսեն կը գցեք
Սանասար տղի տեղաց վերա,
Կժեր կը դնեք էնոր սնարքին,

Որ առավոտուն էլնի, տեսնի:
Երբ որ էնի կտրի՛ճ մարդ է,
Թող գա, ինձ իր համար տանի:
Զըլնի՛մ, չիմանա՛մ, ասաց,
Որ թալեք Բաղդասարի էրդիսն վեր:

Էդ աղջիկներ կախարդ էին.
Հավքեղեն հալավ հագան,
Էղան էրկու սիպտակ աղունիկ.
Թռթռալեն բերին Սասուն ըվթուղթ,
Էկան, իջան Սասնա Տան տանիքի վերան:
Աջակողմ էրդիսի վերա գնացին.
Տեսան, որ մեկ տեղաց շոր է գցած,
Մեկ ջահել-ջիվան տղա մեջ քներ է, քրտներ է,
Էնքան կարմրեր, արևուն կ'ասի.
«Դու դե՛ն գնա, ե՛ս առաջանամ»:
Մեկ կույգ մոմակալ գլխին կը վառվի,
Մեկ կույգ մոմակալ ոտներին կը վառվի:
Թուղթ բերողներից մեկն ասաց.
— Ա՛յ քուրըս, արի էրթա՛նք,
Էն մեկէ՛լ էրդիսի վերա աչքենք,
Կարելի է, Սանասար տղան էդ չի:
Գնացին էն մեկէլ էրդիսի վերա.
Տեսան մարդ մի քներ է շորերի մեջ.
Աչքեցին. տեսան էնպես է քըրտնե,
Որ էսի էն տղից տասնապատիկ աղեկ է:
Քուրն ասաց.— Քո՛ւրըս, էս է Սանասար տղան,
Ըվթուղթ թալենք էս էրդիս վե՛:
Մեկէլ քուրն ասաց.— Աղջիկ, էն ա՛ստվածը,
Էս մարդ էլ շատ աղեկ մարդ է.
Չեմ գի՛տի՝ է՞ս է Սանասար,
Թե՞ էն մեկէլն է Սանասար:
Չիմացան՝ որն է Սանասար,
Տարան, թալեցին աջակողմ էրդիս վե՛,
Դրին Ծո՛ւռ Բաղդասարի տեղաց վերա:

3

Բաղդասար առավոտուն քնից վեր էլավ,
Շորեր հագավ, իրիշկեց, տեսավ՝
Թուղթ մի կո՛ էնտեղ է, իր տեղաց վերա:

Ըվթուղթ առավ ձեռ, էբաց, կարդաց.
Տեսավ՝ Քաջանց թագավորի աղջըկա գի՛ր.
Թղթի մեջ գրած՝ «Շատ բարև Սանասարին,
Շատ բարև Բաղդասարին, Սանասարին»:
Ասաց. «Էս ի՞նչ բան է. էրկու դիր՝
Բարև գրե Սանասարին, մեկ դիր՝ ինձի:
Լա՛վ. Սանասար ջոջ աղբերն է,
Առաջ էնոր է գրե. էն լավ է:
Ինչո՞ւ էրկու դիր գրե էնոր»:
Կարդաց, տեսավ՝ Քաջանց թագավորի աղջիկ
Սանասարի համար գրեր է մեջ թղթին.
«Արի ինձի ա՛ռ», «արի ինձի տա՛ր»:
Բաղդասարի հետ ծուռ էրակ մի կար,
Ըռըկավ, ասաց. «Ուը՛յ, իմ աղբեր կնիկ ուզեր.
Առանց ինձի կը պսակվի, ինձի չի հա՛րցնի.
Ինձի բանի տեղ չի դնի»:
Ասաց. «Ջանը՛մ, մենք աղբեր ենք.
Էս ե՞րբ էն խոսք տվեր է, ինձի չա՛սիր.
Սանասար գաղտիկ բան մի կանի»:
Ըռըկա՛վ, նստավ վեր իր տեղաց.
Չէլա՛վ դուրս իր սենեկից:
Տեսավ թղթի մեջի պատկեր,
Հա՛մա խելք գնաց, արուն քթից փրթավ, էկավ:
Ասաց. «Կամ իմ աղբե՛ր տի մնա ժի՛ր, կամ ե՛ս»:
Ըվթուղթ ծալեց, էդիր իր ծոց:
Մեջ իր սրտին արավ խոց.
Հետ Սանասարի վրուց չի տար.
Սանասար ինչ կ'ասի՝ պատասխան չի տար:
Առավոտուն էլան, էկան,
Սուփրեն բացին, նստան հացկերություն.
Տեսան՝ Բաղդասար տղան չէկավ:
Բաղդասար ըռըկեր, նստեր էնտեղ,
Չէ՛լնի դուրս իր սենեկից.
«Է՛յ-հա՛յ, կ'ասի, իմ աղբեր ի՞նչ բեբախտ աղբեր է.
Առանց ինձի գործ կը բռնի:
Որ էդպես է, ոչ էնոնց սեղան կ'էրթամ,
Ոչ էնոնց հաց կ'ուտեմ:
Տ'էլնեմ, իմ ձին հեծնիմ,
Էրթամ ուրիշ էրկիր, կորուսիմ,
Տեսնեմ՝ աստված ինձ ինչ կըտա»:

Էնոր մերն ասաց. «Էն ի՞նչ է,
Բաղդասար ինչո՛ւ չէկավ»:
Էլավ, էկավ վեր սենեկի դռան,
Ըկդուռ էբաց, էկավ մեջ սենեկին, ասաց.
— Բա՛ղդասար, ինչո՛ւ չէկիր՝ քո հաց ուտես,
Էդ ի՞նչ է էղե քեզ, չըլնի՞ հիվանդ ես:
Բաղդասար ասաց էնոր.
— Մարե, դու իմ մեր չըլնեիր, ուրիշ ով ըլներ:
Էսա դուռ բանար, գար նե՛րս,
Ես վէն կտոր-կտոր կ'անեի:
Ասաց.— Ինչո՛ւ, ի՞նչ է էղե քեզ:
Ըկթուղթ էհան, էտու մոր ձեռ, ասաց.
— Մարե՛, առ էսա թուղթ, կարդա՛,
Տես՝ ինչու չեմ իգա հաց ուտեմ.
Ի՞նչ սրտով տի գամ, սեղան նստեմ.—
Իմ աղբեր կնիկ ուզեր է, ինձ իմաց չարեր:
Ինչո՛ւ, ես մարդ չե՞մ, թող ինձ հարցներ,
Նոր՝ էնպես աներ, նոր՝ պսակվեր:
Էլի՛, գնա՛, Սանասարին ասա՝
Կամ է՛ն տի մնա ժիր, կամ ե՛ս:
Մեր ըկթուղթ առավ, կարդաց.
Ասաց.— Որդի, ես խաբար չեմ,
Քանց քեզ շատ ըռըկա էդ գործեն:
Ըկթուղթ առավ, էկավ մոտ Սանասար,
Էն թուղթ էտու Սանասար տղին,
Ասաց.— Ա՛ռ քո թուղթ:
Սանասար առավ, կարդաց:

«Քաջանց թագավորի աղջիկ Դեղձուն-Ծամից՝
Շատ բարև Սանասարին.
Շատ բարև Բաղդասարին, Սանասարին:
Սանասա՛ր տղա,
Ես Պղնձե քաղքի թագավորի աղջիկն եմ:
Իմ սի՛րտ՝ քանց էսա դատարկ կուժ սար-սո՛ւրբ է.
Իմ գլո՛ւխ՝ քանց էսա լիք կուժ լափ-լի՛ք է.
Աստրծու շնորհքով լցուկ եմ:
Շատեր էկած իմ վերա, ինձ ուզելու.
Քառսուն տեղե քառսուն մարդ է էկած,
Ես խոսք չեմ տվե, ես հա չեմ ա՛սե,

Էրապով ըվքեվ տեսեր եմ, արի ինձի ա՛ռ.
Ինձի շա՛տ դուր կը գաս դու:
Սանասա՛ր տղա,
Էս թուղթ կը գրեմ քե՛վ համար.
Զուր ե՛րբ ես տի մնամ էստեղ քո ապով.
Գլուխ թացեր ես, չկնտես,
Արի, ինձի տար քեվ համար»:
Ըվթուղթ կարդաց, էրդվեցավ, ասաց.
— Մարե՛, ես քո աստծուն մեղա,
Ես էդ բանից խաբա՛ր չեմ:
Մերն ասաց.— Քո աղբեր քենե խռովեր է:
Սանասար ասաց.— Ես ի՞նչ անեմ:
Էն աղջիկ կախարդ է, հմայիչ է.
Մեր անուն լսե, էտա թուղթ գրե.
Ի՞նչ անեմ, որ դա էդպես է:
Որ իմ աղբեր ըռըկեր,
Էնի փշուր մի ծուռ է.
Գնա՛, անուշությունով էնոր ասա՛.
Թե որ իր բարկություն իջավ՝ աղեկ.
Թե չէ՝ թող գա դարբ մի էրկու կարնի ինձ,
Իր հավաս անցնի, իր փոր հովնա:
Մեր գնաց, անուշությունով ասաց Բաղդասարին.
Բաղդասարի բարկություն չիջավ:

Էն իրիկուն Սանասար դրսեն էկավ տուն.
Բարև էտու, Բաղդասար չառավ:
Ասաց.— Ա՛ղբեր, ինչի՞ ես նեղացե:
Բաղդասար ասաց Սանասարին.
— Կամ ես քեվ տի սպանեմ, կամ դու՝ ինձ:
Սանասար հարցուց.— Ինչո՞ւ, պատճառ ի՞նչ:
— Ապա ինչո՞ւ Քաջանց թագավորի աղջիկ
Էրկու դիր քե՛վ բարև գրե, մեկ դիր՝ ինձ:
Ասաց.— Ա՛ղբեր, բա ի՞նչ անեմ, էն է գրե:
— Չէ, ասաց, ես դու տի կռվե՛նք:
— Ինչի՞ կռվենք, մեկ դատարկ բարևի՞ համար:
Բաղդասար ասաց.— Դու գաղտիկ բան մի կ՚անես
Դու թուղթ մի ուղարկեր էս էն աղջկան.
Ինչո՞ւ դու ինձ չես ասի:
Սանասար ասաց.— Աղբեր, էն ա՛ստվածը,
Ես էնոր թուղթ չեմ գրե:

Բաղդասար ասաց.— Չէ՛, ես դու տի կռվենք,
Ես դու տի կուշտի կպնենք, իրար վարկենք:
Ասաց.— Աղբեր, ես չե՛մ վարկի քեզի.
Դու վարկի՛, ինձի սպանի՛:
Ինչքան ասաց, հնարք չէղավ աղբոր հետ:—
Ինչու որ էնիկ հաստակող էր, էրակ ծուռ էր.
Էնոր կ'ասեին Ծուռ Բաղդասար:

4

Վերջն ինք վինք ասաց Սանասար.
«Էլնեմ, իմ աղբեր առնեմ, էրթամ դա՛շտ.
Էրթանք էն չիման տեղ, քիչ մի խաղամ հետ,
Փշուր մի ձիաթողս խաղանք,
Բալքի էնոր սիրտ իջնի»:
Էլավ, առավ իր աղբեր, գնաց:
Որ հասան դաշտ, էն չիման տեղ,
Ձիուց իջան, հասան իրար, կպան,
Առին կուշտի— գոտեկռիվ.
Ձեռ թալեցին իրար փողպատ,
Ձուր կեսորին վիրար տրորեցին:

Մերն ասաց. «Ի՞նչ էղավ, էսոնք չեկան»:
Որ տնեն էլավ, էնոնց ձեն ընկե քարեր,
Գետին թունդ կ'առներ էնոնց ոտաց տակ:
Գնաց, տեսավ էնոնց հալ.
Ծնկներ տփեց, կատամ կոտրավ.
Նստավ էնտեղ մտիկ արավ.
Ոչ է՛ն վէն կը հաղթի,
Ոչ է՛ն վէն կը դնի գետին:—
Էն ինչ Սանասարն է, հանաք կ'անի.
Էն ինչ Բաղդասարն է, սրտանց կը վարնի:

Մեր տեսավ, որ Բաղդասար նվաղավ,
Ուժըն պակսավ, առավ հաղթվել,
Էլաց, բոռաց, իր ձենով կանչեց.

«Օ՜ սարեր, օ՜ քարեր, օ՜ թփեր*,
Ջուաբ տարեք քեռուն,
Թող գա, հասնի իր փահլևաններուն»:

* Երգ է։

Մեկ ժամ էլ մտիկ արավ,
Տեսավ, որ Բաղդասար գահ ա ընկնի,
Էլաց, կանչեց.

«Օ՜ ծովեր, օ՜ դընդեղներ*,
Ջուաբ տարեք քեռուն,
Թող գա, հասնի իր քեռորդիներուն»:

Չուր իրիկուն վիրար չընչընփեցին.
Ոչ է՛ն վէն էդի գետին, ոչ է՛ն՝ վէն:
Իրիկուն թողին, էկան տուն:
Բաղդասար ճամփին ասաց աղբոր.
— Վաղն էլ գանք, հասնինք իրար:
Էկան տուն, քնան չուր լուս:

Առավոտուն էլան, հաց կերան.
Էլան, իրենց ձիանք քաշին դո՛ւրս,
Իրենց գուրկեր առին,
Իրենց վահաններ կապեցին վեր իրենց,
Ձիանք հեծան, գնացին մեյդան կռիվ:
Իրենց մերն էչ գնաց հետքեր.
Նստավ էնտեղ, էլաց.
Անեծք էտու կախարդ աղջկան, ասաց.

«Բարի չտեսնի պատճառ ըլնող.
Առավոտ լուսաթաթախ իմ էրկու տղան՝
Մեկմեկու փողպատ էհան.
Տի վարկեն, վիրար խեղեն»:

Էրկու աղբեր ձիաթողս խաղացին գուրվով,
Գուրվ կը վարկեն մեկմեկու:
Սանասար կայնեց նշանքարի գլուխ,
Բաղդասար գուրվ առավ, էկար,
Սրտից էկար Սանասարին, որ սպանի.
Գուրվըն գնաց գլխու վերեն:
Սանասար բռնեց ըվգուրվ,
Ետի էթալ, աղբոր մոտ չհասցուց:
Աղբեր առավ, մեկ էլ էկար:
Սանասար էլի բռնեց, մեկ էլ էթալ:
Սանասարն է, սիրտ մաքուր է, պարվ է.

* Երգ Լ.

Սրտե դարբ չկա՛ռնե Բաղդասարին,
Զուկե՝ կարկի աղբոր.
Մենակ իր վահան կը տա առջև դարբին,
Զթո՛ղնի, որ դարբ դիպնի իրեն:
Բաղդասար ինչքան ուժ ունի,
Կը կարնի Սանասարին.
Կ'ուզի կՍանասար ձիուց բերի տա՛կ.
Կ'ուզի տեղնուտեղ մեկ դարբով կաղբեր սպանի,
Ան ինչ Սանասարի գուրկ բարձր կ'անցնի:
Սանասար իր միտ վե կ'ասի.
«Բալքի դադարի ինձենե»:
Բաղդասար չդա՛դարի, հա կը կարկի:
Սանասար ինք կինք կ'ասի. «Զդադարի»:
Կռիվ արին չուր կեսորին,
Զուր կեսոր կոտրավ իրիկվան:

Սանասար ինք կինք ասաց.
«Դեռ իր բարկություն չի ջնի:
Ջանը՛մ, ես քանի կը տեսնեմ՝
Էն ինձի սրտե դարբ կը կարնի:
Նայինք՝ իմ աղբեր իմ չափ ուժ ունի՞,
Որ կը կարնի ինձ սպանելու,
Ես էնոր դարբի առջև կ'առնեմ,
Զդի՛պնի իմ ջանին:
Տեսնենք՝ ես է՛լ դարբ մի կարկեմ էնոր,
Էն էլ կլսրնա՞ դարբի առջև առնի,
Դեմ տա, դիմանա առջև իմ դարբին»:

Սանասար մեկ՝ դարբ, թեթև դարբ մի,
Ուշիկ էկար Բաղդասարին.
Բաղդասար վահան էտու առջև,
Չկարցավ դարբի առջև առնի:
Դարբ դիպավ, կաղբեր ձիուց էբեր տա՛կ:
Սանասար բոռաց, ասաց.
«Վա՛խ, էս ի՞նչ արի, իմ ուժի չա՛փ,
Իմ ձեռաց դայդեն չիմացա.
Զարկեցի, իմ աղբեր սպանեցի»:
Ձիուց իսկույն իջավ տակ,
Ինք է՛ն կողմեն էկավ, մեր՝ մե՛կ դիեն,
Լալելեն էկին, վիրենք կարնեցին վերա.

Տեսան, որ չէր մեռե,
Գուրպ դիպե էնոր ոտաց,
Խելք գնացե, ընկե էնտեղ:

Սանասար շալկեց աղբեր, էբեր, էթալ տուն:
Ձեռ տարավ, էնոր սիրտ մաժեց, պորտ օլորեց:
Աչքեց՝ պատկերն ի ջեբ կա...
Նստավ, չուր լուս էլաց:
Լուս որ բացվավ, աղբոր ուշք էկավ վերան,
Էլավ, նստավ, Սանասար հարցուց.
— Աղբե՛ր, էդ ի՞նչ էղավ, դու էդպես էղար:
Ասաց.— Ոտս ցավաց, իմ խելք գնաց:

Սանասար ասաց.— Աղբե՛ր,
Էս պատկե՛ր, էս թու՛ղթ ապով է որ ըռըկեր ես,
Հետ ինձի կրուց չես իտա.
Ես մեռնիմ քո աչք-էրեսին,
Ինձ պետք չէ՛, գնա բեր քե՛զ համար:
Բաղդասար ասաց Սանասարին.
— Աղբեր, ես չգիտեի,
Որ դու քանց իս էդքան ուժով էիր:
Արի հաշտվինք. դու վեր ինձի կտրիճ ես.
Ինձի թոբա, էլ ես վեր քեզ ձեռ չվերցեմ.
Ես քո պստիկ աղբեր, դու իմ ջոջ աղբեր.
Ինչ որ ասես՝ ես քեզ կը լսեմ:
Ես քեզ դաստուր տվեր եմ,
Էլի, գնա, էն աղջիկ ա՛ռ, բե՛ր քեզ համար:
Սանասար ասաց.— Ես չեմ գնա, բերի.
Դու գնա, բեր քեզ համար:
Բաղդասար ասաց.— Դե, մի՛ դադրի,
Էլի՛ քո պատրաստություն արա,
Քո ձին հեծի՛, քո աստված կանչի՛, գնա՛:
Սանասար ասաց.— Ես չեմ գնա, բերի,
Էն կախարդ է, էն հմայիչ է:
Բաղդասար ասաց.— Էլի՛ գնա, բե՛ր, քեզ կ'ասեմ:
Էն լսեր է՝ մենք ջոջ մարդ ենք.
Էն մեր ձեն լսեր է, մեզ թուղթ ուղարկեր է:
Որ դու չէրթաս, էն աղջիկ բերես,
Մենք էլ կ'ըլնինք պստիկ.

Տ'ասեն՝ էնոնց ձեռեն չէկավ,
Էրթալին, աղջիկ մի իրենց համար բերեն:
Անկարելի՛ բան է՝ չէրթաս, բերես:
Էլի, գնա, բեր կէն աղջիկ:

5

Սանասար գնաց մոտ մեր, Ծովինար խանում,
Ասաց.— Մարե՛, իմ պատրաստություն տես,
Ես պիտի էրթամ Քաջանց էրկիր.
Էն թուղթ էկեր իմ հետև:
Մերն ասաց.— Ո՛րդի, մի՛ էրթա,
Էն Բաղդադու էրկրեն հապիվ փրթանք, էկանք:
Տղան ասաց.— Չէ՛, պիտի էրթամ,
Թե որ իմ գլուխ էլ գնացեր է:

Մեր՝ պատրաստություն տեսավ, պրծավ:
Սանասար էլ ինչ տ'էրթար,
Մոր ձեռ պագավ, կաց-բարին արավ.
Թռավ իր ձին հեծավ,
Էլավ, կալնավ ճամփի վերա, կանչեց.
— Բա՛ղդասար, հոգուդ մեռնիմ,
Արի՛, ըվքեկ տեսնեմ:
Ա՛ղբեր, դու կաց էստեղ,
Կո ես կ'էրթամ հետև էն աղջկան:
Իրեք ավուր վերա որ ես էկա՝ է՛կա,
Որ չէկա՝ նեղութնի մեջ կ'ընիմ.
Կը գաս հետև ինձի օգնություն:
Հետ իրարու ներում արին,
Հալալություն ուզին իրարուց,
Մատանիներ հետ մեկմեկու փոխեցին:
Կաց-բարով արավ ու գնաց:

Թե որ քառսուն ավուր ճամփա էր,
Էնի քշեց, գնաց մեկ օրեն:
Հասավ ճամփա-խառնուրդի մի մեջ:
Տեսավ՝ մեկ ծեր, ալևոր մարդ մի նստե էնտեղ:
Ասաց.— Բարև քեզ, հե՛րացու:
— Աստծու բարին քեզ, Սանասար, ասաց հալվոր.—
Դե՛ ձիուց իջի՛ր, քեզ խոսք ունիմ ասելու:

— Պա՛պիկ, ասաց, դու ո՞վ ես,
Որ ինձ կըճանչենաս, թե Սանասարն եմ:
Ասաց.— Ես եմ հրեշտակն աստծուն,
Որ էստեղ նստեր եմ, ճամփաներ կը բաժնեմ:
Դո՞ր պիտի երթաս, Սա՛նասար:
Պատասխանեց.— Կ'երթամ Քաջանց երկիր.
Ինձ մեկ բարի ճամփա նշանց տուր:
Էն էլ ասաց.
— Թե էս ճամփան երթաս,
Կ'ըլնիս մեծ թագավոր.
Թե որ մեկէլ ճամփան երթաս,
Կ'ըլնիս վաճառական.
Ամա թե որ երթաս Քաջանց երկիր,
Էնտեղ վնաս կը քաշես:
Սանասար ասաց.— Էնտե՛ղ պիտի երթամ,
Թե որ գիտնամ՝ իմ վիպ իրեք տեղով կտրեն:
Թե որ ուրիշ խրատ ունիս, ինձ ասա:
Էն էլ ասաց.— Որդի, որ կ'երթաս,
Ինչ որ քեզ ռաստ կը գա,
Թե քար, թե թուփ, թե անասուն, թե գալան,
Ամենուն էլ բարև տա՛ս,
Առանց բարև տալու չանցնե՛ս:
Թե որ առանց բարևի անցար,
Էն Քաջանց երկիր հմայքի երկիր է,
Քեզ շատ վնաս կը տա:
Սանասար ասաց.— Մնացի՛ր բարի:
Էլավ, հեծավ, հա՛մա քշեց դեհ Քաջանց երկիր:

Գնաց, շատ-քիչ աստված գիտի,
Մեկել Քաջանց թագավորի հող դուրս էկավ,
Տեսավ մեկ հովիվ օչխարներու առաջ:
Մի՛ ասի՝ էդ հովիվ թագավորի հովիվն է,
Էնոր փահլևաններից մեկն է:
Կանչեց, Սանասարին ասաց.
— Ա՛յ կանաչ կտրիճ, էդ դո՞ր կ'երթաս:
Ասաց.— Կ'երթամ Քաջանց թագավորի քաղաք:
Ասաց հովիվ.— Արի նստի՛ էստեղ,
Կաթ մի կթեմ, կե՛ր, նո՛ր էլի՛, գնա՛:
Ասաց.— Չէ՛, ես վռապն եմ, ես կ'երթամ:
Հովիվ ասաց.— Էստեղեն երթացողին,

Հնար չկա, անկաթ-ուտել չեմ թո՛ղնի էրթա:
Զոռով նստեցուց ըկՍանասար:
Էնոր հետ ջոջ տաշտ մի կար,
Որ չորս մարդ մեջն կը լողկանար,
Էդ տաշտ իլին կաթ արավ,
Էդի Սանասարի առջև հացի հետ:
Էդ հովըվու միտքն էլ ի՞նչ է.—
Կ'ուզի փորձի խալխին,
Տեսնենք՝ էնոնց ուժեր քա՛ն մ'է.
Էդ կաթ ուտելով՝ էն կը հասկանա՝
Էնոնց ուժեր քանի՛ մ' է:
Ով որ էդ ճամփով կ'էրթա,
Էդ հովիվ էդ ցեղ կ'անի,
Ապա կը թողնի, կ'էրթան Դեղձուն-Ծամի մոտ,
Էնտեղ փահլևաններ վէնոնք կ'ըսպանեն:

Հովիվ տաշտ իլին կաթ, էբեր,
Էդի Սանասարի առաջ ուտելու.
Ջինք գնաց իր օչխարի բոլոր ման գալ:
Մեկ փաթ որ ման էկավ, Սանասար բոռաց.
— Հովի՛վ, արի, քո կոտ վերցո՛ւ.
Շնորհակալ եմ. կա՛ց բարով, ես տ'էրթամ:
Հովիվ էկավ, որ տեսավ՝
Սանասար կաթ կերե, կոտ կործե,
Իրա տեղ դողաց, ասաց.
— Սա՛նասար, գնա՛ բարով, մի վա՛խենա.
Դոր էրթաս, մարդ քեզ չի հաղթի:

Գնաց, հասավ Պրղնձե քաղքի դիմաց.
Նայեց, տեսավ ի՞նչ.— Էնտեղ քաղքի պատի տա՛կ.
Քառսուն մարդ դադրած, էնքան են մնացած,
Որ մորուսներն էկեր, դեղին է դարձած:
Ասաց.— Բարև ձեզ, մեծ մարդեր,
Սիպտակմորուս, կարմրամորուս
Ու թուխմորուս փահլևաններ:
Էդ մարդեր ասին.— Աստրծու բարին,
Ջահել տղա, վաղ չուր կեսորին,
Դուն է՛լ կ'ըլնիս մեր հալին:
Հալվորների մեկն էլ ասաց.
— Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վախ, կանաչ կտրիճ,

Դու է՞լ էկար ընկար էս քաֆրի ձե՞ռ:
Ջահել տղեն վերուց, հարցուց.
— Ափո ջան, ի՞նչ, ինչո՞ւ կ՚ընիմ ձեր հալին:
Ասաց.— Մենք է՛լ քեզ պես կտրիճ էինք,
Էկանք էն աղչկա համար.
Ինչ ուշքի էկանք, դարձանք էսպես:
Ասաց.— Ա՛ղբեր, ասեք՝ ի՞նչ բան էղեր,
Որ դուք էղեր եք էդ հալին:
Ասին.— Էնի հնարք ունի, կախարդ է.
Մի քիչ համբեր արա,
Էն քաֆրին էնպես մեկ հավք մի կա,
Կը գա, պատի վերա կը ճվա,
Մեր հասակին ձեր մարդ կը դառնաս:

Սանասարն իմաստուն էր, չգնաց քաղաք,
Իր ձին դարձուց, քաղքից քիչ մի վատացավ,
Մնաց չուր մութ էտու գետին:

6

Մթնեց: Էդ ժամանակ դարձավ, էկավ քաղքի մոտ.
Ռուզկիկ Ջալալինի սանձ օլորեց,
Ձիու մեյդա՛ն բաց արավ,
Կանչեց ըվիր աստված,
Ջանգու դարկեց ձիուն,
Մեկեն թռավ, անցավ ըվպղընձե պարիսպ,
Իջավ, մտավ քաղքի մեջ:—
Ձէ՞ էդ քաղաք բաց դուռ չուներ,
Տի թռներ, անցներ պպարիսպ:—
Շատ ման էկավ քաղքի մեջ,
Իրեն ուկած տեղ չգտավ, որ նստեր,
Էկավ, հասավ քաղքի կուշտ,
Մեկ հայի խա՛ն գտավ, իջավ էնտեղ:
Էդոր պահող՝ սիպտակամորուս հալվոր մարդ էր:
Հարցուց.—Ափո ջան, էս խանի վարձ ի՞նչ է:
Պատասխանեց.— Որդի,
Ձիուն մե՛կ արծաթ, մարդուն կե՛ս արծաթ:
Թե.— Ափո՛, ես քեզ կը տամ,
Ձիուս էրկո՛ւ արծաթ,
Իմ գլխուն իրե՛ք արծաթ.—

Զինք քանց ձին ավելացուց.—
Իմ ձիուն աղեկ տիրություն կ'անես:
Քուռկիկ Ջալալին էդտեղ կապեց,
Գնաց մեջ էդ քաղքին ման գալու:
Էլավ, մեկ հաց առավ փռնից,
Դարձավ, էկավ իր խան,
Էն հալվորի կուշտ նստավ:

Գիշեր էր: Իր հաց կերավ, ասաց.
— Հալվո՛ր, հեքաթ մ' ասա, ականջ անենք:
Հալվորն ասաց.— Ես բան չեմ գի՛տի:
— Ափո՛ ջան, մեկ հարցմունս անեմ քենե:
Թե.— Որդի, ի՞նչ հարցմունս:
Հարցուց.— Էս քաղքի անուն ի՞նչ կ'ասեն:
Պատասխանեց.— Ո՛րդի,
Էս քաղքի անուն Պրղնձե քաղաք կ'ասեն:
— Դե՛, Պղրնձե քաղաք էստե՞ղն է:
Պատասխանեց, թե.— Հա՛, էստեղն է:
Սանասար վերուց, հարցուց.
— Էս քաղքի թագավոր մեկ աղջիկ ունի,
Էդ աղջիկ ի՞մալ աղջիկ է:
Հալվորն ասաց.— Ո՛րդի, քեզ ի՞նչ կա հետ.
Իմալ կ'ըլնի՝ թող ըլնի:
Ասաց.— Պա՛պիկ, էնպե՞ս, կը հարցընե՛մ:
Հալվորն ասաց.— Ո՛րդի,
Մեր թագավորի աղջիկ հմայք կ'անի.
Քանի՛ քանի թագավորի տղա՝
Էկին, որ կէն առնեն,
Հմայք արավ, էթալ սարեր.
Մեկըն դըսա, մեկըն դընա:

Ըլնի՞ թե դու էկեր ես՝ կէն առնես.
Ես կ'իրիշկեմ, որ դու ափսոս տղա ես:
Թե է՛ն ապով ես էկեր,
Թո՛ղ, թո՛ղ, դարձի՛, խեղճ ես, մեղք ես.
Էդ բաներեն ձեռք վեր առ.
Շատեր էկած, չկա՛րցած:
Սանասար ասաց.— Չէ՛, պա՛պիկ,
Ես էն ապով չեմ է՛կի.
Ինձ ի՞նչ կա հետ էնոր:

Ապա էնոր հմայք չի խա՛փանի,
Պա՛պիկ, օղորմի քո հոր, ինձ ճիշտն ասես,
Տեսնենք՝ ինչ է էնոր հմայք:
Ասաց.— Էնոր հմայք կո՛ մեջ ծովուն,
Ակունք կո՛ մեջ ծովուն վիշապի բերնի մեջ:
Հրեղեն մարդ մի տ՚ըլնի,
Որ էրթա, մտնի էն ծով,
Ակ վիշապի բերնեն հանի.
Առավոտուն էլնի,
Աղջիկ մերկ մեջ իր սենեկին տեսնի,—
Էնոր հմայք էս է, կըխափանի.
Էլ հմայք վեր էնոր չբա՛նի,
Կարնա կաղջիկ առնի, իրեն տանի:

Սանասար ասաց.— Պա՛պիկ, ի՞նչ կ՚ըլնի,
Էնոր քոշք ու սարեն շանց տաս, ես էլ տեսնեմ:
— Քո ի՞նչ բան է էդ բաների հե՛տ:
Էն էլ խնդիրք արավ.— Ափո՛ ջան,
Աստված սիրես, ես կարիք էրկրից եմ.
Ի՞նչ կ՚ըլնի, մեկ ինձի շանց տաս,
Ես էլ մտիկ անեմ,
Էրթամ մեր էրկիրներ, ասեմ՝
Էսպես քաղաք մի կա:
Հալվորն առավ կտղան,
Էլավ տանիս, ձեռ պարկեց, ասաց.
— Էն սև պատուհաններ, սև պալատներ կը տեսնե՞ս,—
Թագավորի աղջըկա քոշք ու սարեն է:
Էն սև փարդա է կապած պատուհաններին,
Որ աղջիկ դուռ չտեսնի:
Տղան հարցուց.— Պա՛պիկ,
Էն ի՞նչ է ճրագի՛ պես կը վառվի:
Ասաց.— Ո՛րդի, էնի ոսկի խնձոր է,
Էնոր դարգահի սա՛ն գլուխ կարկուկ:
Մեկ էլ գուրկ մի կա, կո՛ էն բրջի գլուխ:
Ով էն ոսկի խնձոր բերի տա՛կ, դնի իր ծոց,
Դիր մ՚ էլ ձիով բարձրանա, դնի տեղ.
Ով որ ուժով ըլնի,
Էն գուրկ բրջի գլխեն թալի տա՛կ.
Ակ վիշապի բերնեն հանի,
Թագավորի հետ կռիվ անի, կտրիճ ըլնի,—

Աղջիկ իրեն կը տանի:
Ասաց.— Օ՜ֆ, ափո՛, ես ի՞նչ եմ,
Որ էդ բաներին ձե՛ռ թալեմ.
Հարցմունս էր՝ արի քենե:
Կ'երթամ ուրիշ երկիրներ,
Կ'ասեմ՝ Պղընձե քաղաք էսպես քաղաք է:
Քելե՛, քելե՛, երթա՛նք, ինձ քուն կը գա:
Գնացին խա՛ն, տեղ ձգեցին, պառկեցին:

Հալվոր քնավ. համա Սանասարը չքընի:
Ասաց. «Խա՛չ, որ էնպես է,
Էս գիշեր պիտի գնամ, փորձեմ»:
Տղան տեսավ, որ հալվոր քնավ,
Քիչ մի հանդարտեց, խալխ պակսեցին,
Էլավ, դարձավ աղոթարան,
Իրեք անգամ ծունր էդի առաջի աստծու:
Էլավ, գնաց, ըվձին հեծավ, խանից էլավ դո՛ւրս:
Լուսնակ գիշեր մի, ինչպես ցերեկ:
Աստծու անուն էտու,
Խաչ Պատերազմին կանչեց.
Մեյդանի մե՛ջ գնաց, էկավ, ըվձին տաքցուց.
Զանգու կարկեց ձիու կո՛ղ,— ձին բարկացավ.
Ըվձին թռուց, էլավ սան գլխի հե՛տ,
Զեռ էտու, կոսկի խնձոր առավ, էդի ծո՛ց,
Թափկան գնաց, մեկ ժամվա ճամփա հեռացա՛վ,
Նորեն դարձավ, էկավ մեյդանի մե՛ջ:
Դիր մ'էլ ըվձին թռուց,
Էլավ բրջի գլուխ,
Աստծու անուն էտու,
Խաչ Պատերազմին կանչեց,
Զեռ էտու, ըվգուրվ բռնեց:
Օլորեց, տեղից էհան դո՛ւրս, թալեց,—
Գուրվ կես ժամվա ճամփա գնաց, դիպավ գետին,
Մեջ ամառվա չոր գետնին՝ գալ մի մտավ գետնի մեջ:
Ապա ըվձին քշեց մեջ ծովուն,
Գնաց, մտավ ծովու տա՛կ,
Տեսավ՝ վիշապ գլուխ բարձրացուցեր է.
Վեր վիշապի գլխուն դադրավ.
Գուրվ մի կարկեց վեր վիշապի գլխուն.
Վիշապ վինք թափ էտու,

Ակ բերնեն թռավ, գնաց մեջ դաշտին:
Վիշապ կինք թափ էտու, ջուր էլից քաղաք,
Ինչպես անձրև գա, էնպես կքաղաք էթաց.—
Ծով կատաղավ, վիշապ քամի քաղաք եղավ:
Դարձավ իր խան, ըսինք էտու քունջ մի,
Կող էլավ քնավ չուր լուսաբաց:

Առավոտուն ինչ լուս բացվավ,
Տեսան՝ Դեղձուն-Ծամի պատուհաններ բացվ'ե.
Էնոր լուս տվեր է քաղաք:
Ինչ լուս բացվավ, տղան իր նինջ էհան,
Էլավ տանիս, իրիշկեց՝
Աղջկան պատուհաններու մեջեն՝
Աղջիկ մեջ իր սենեկին կ'էրևեր,
Զաղջիկ մեջ իր սենեկին տեսավ:
Էնոր հմալք խափանե՛ր է՛ր:
Սանասար դարձավ, ասաց հալվորին.
— Պա՛պիկ, էս գիշեր քամի մի փչեց,
Սև ամպ մի Սասնա հե՛տ էկավ,
Անձրև էնոր մոտեն էկավ, քաղաք թրջեց:

7

Թագավոր էտու մունետիկ կանչել.
— «Տեսնենք՝ ո՛վ ակնունք վիշապի բերնեն հաներ է.
Ման էկեք. տեսնեմ՝ էն ի՛նչ մարդ է էկե,
Իմ աղջրկան ոսկի խնձոր կոտրե. տարե:
Բռնեցեք. բերեք էստեղ. գլուխ կտրենք»:
Մունետիկներ ընկան քաղքի մեջ ման գալու.
Էրկու ժամ ման էկան. մարդ չտեսան.
Գնացին. մտան էն հալվորի խան. ասին.
— Հալվո՛ր, էստեղ կարիբ մարդ չկա՞,
Ասաց.— Չէ՛, էս գիշեր իմ խան՝
Մարդ չէ՛կեր. քանց էն տղան.
Էն էլ իմալ էկեր է, ընկեր քնուկ էր:
Էն տղան էնքան էն հալվորի աչքին չէր գա:
Որ ասաց. «Չէ՛. կարիբ մարդ չկա»,
Տղան վերուց. ասաց.— Աղբե՛ր,
Ինչի՞ կարիբ մարդ չկա. ես կարիբ եմ:
Հալվոր բարկացավ.— Սո՛ւս կաց. վքեկ կր տանին, սպանեն:

Ասաց.— Ինչի՞ տի սպանեն:
Տղան կմունետիկներ կանչեց. ասաց.
— Աղբեր, ես կարիք եմ, ի՞նչ հարցմունս կ'անեք:
Մունետիկներ տեսան՝
Էդ տղան էնենց ջահել, ջիվան տղա է,
Էնոնց արուն էռաց էնոր վերա,
Ասին.— Ա՛յ տղա, վքեվ պահենք,
Դու ափսոս ես, մի գա մեր թագավորի առաջ:
Հարցուց.— Թագավորին ի՞նչ է էղե՝
Չգամ թագավորի առաջ:
Էնոնք ասին.— Ո՛ղի,
Էս գիշեր կարկած, տարած են
Թագավորի աղջկան ոսկի խնձոր.
Թագավորից հրաման է՝
Ինչ մարդու մոտ էն խնձոր տեսան,
Թե կտրիճ էղավ, կռիվ արավ,— պրծա՛վ.
Թե որ կտրիճ չեղավ, վգլուխ կը վարկեն:
Սանասար էլ ձեռ տարավ ծո՛ց,
Ոսկի խնձոր հանեց, նշանց էտու,
Դարձավ, ասաց էնոնց.
— Մունետիկնե՛ր, գնացե՛ք, թագավորին ասե՛ք,
Թե՝ ոսկի խնձոր տանող տեսեր ենք:

Էնոնք գնացին, թագավորին ասին.
— Մենք քո ոսկի խնձոր տանող տեսեր ենք:
Թագավոր ասաց.— Գնացե՛ք, ասեք՝ գա էստեղ:
Թագավորի բռնավորն է:
Էկան, ասին.— Դու թագավորի բռնավորն ես.
Էրթանք, թագավորին բռնվի՛:
Ասաց.— Թագավո՛ր, ի՞նչ թագավոր.
Հա՛, հա՛, ձեր թագավորից կռիվ կ'ուզեմ.
Աստված կամ ինձ կրտա, կամ իրեն:
Ես ինչի՞ տի գամ թագավորին բռնվիմ,
Կռիվ կ'ուզեմ, որ կռիվ անեմ:
Թագավոր լսեց, ասաց.
— Աղեկ, էս բան ով որ արե՝
Իմ աղջրկան համար է արե.
Թող գա, նայենք՝ ինչպես արե.
Թող ինձ ասի, ես իմ աղջիկ տամ էնոր:

Սանասար էկավ, ասաց.— Ես եմ արե:
Հարցուց.— Էս բան դո՛ւ ես արե:
Պատասխանեց.— Այո՛, ես եմ արե:
Թագավոր ասաց.— Որ դու ես արե,
Դե՛, ինչպես ոսկի խնձոր՝
Էն սան գլխից բերեր ես տակ,
Դիր մ՝ էլ ցերեկով տա՛ր, դիր սան գլուխ,
Որ մենք տեսնենք. ես իմ աղջիկ տամ քե՛զ.
Կամ թե չէ՝ ես քո վիզ տի կարկեմ:

Սանասար ըզձին հեծավ, մեյդան առավ,
Մեյդանի մեջ մա՛ն էկավ, ըզձին տաքցուց,
Գնաց, էկավ, թռուց, էհան էն սան գլխու հետ,
Ոսկի խնձոր էկար էն սան գլուխ:
Թափկան ժամ մի նտ գնաց,
Մե՛կ էլ դարձավ, էկավ մոտ թագավոր:
Թագավոր ասաց.— Էտա էլա՛վ:
Համա էն շնորհք քոն չէ, քո ձիուն է:
Ասաց.— Քենե կ՝ուզեմ՝
Ինչպես էն գուրզ բրջի գլխեն
Քաշեր ես դո՛ւրս, թալեր ես տա՛ղ,
Դիր մ՝էլ հանես բրջի գլուխ, թալես վեր բրջին,
Որ մենք տեսնենք. ես իմ աղջիկ տամ քե՛զ.
Կամ թե չէ՝ ես քո վիզ տի կարկեմ:

Սանասար էլավ, գնաց կէն գուրզ վերուց,
Վեր թևին վեր օլորեց. էթալ,
Էկար վեր էն բրջի գլխուն,
Հետ կարկելուն ըզբուրջ փլուց, էբեր տա՛ղ:
Թագավոր ասաց.— Կ՝էրևա,
Որ դու աղեկ կտրիճ, ,ղորեղ ես:
Էտա էլավ իրեք փորձանալիք:
Ինձի վաթսուն հատ փահլևան կա,
Ամեն էլ շղթայե, բանտ եմ դրե,
Թողնեմ դո՛ւրս, կռիվ արեք.
Թե դու կվաթսուն էլ հաղթեցիր,
Աղջիկ կը տա՛մ քեզ, կը տանես:

Սանասար մտածեց. «Ես իմ վադեն դրեր եմ՝
Միայն իրեք օր մնամ էստեղ.

Ես թագավոր վեր ինձ կռիվ տի հանի
Մե՛կ մեկ փահլևան, թե՞ ամեն մեկդիր»:
Դարձավ, հարցուց.— Թա՛գավոր,
Դու քո վաթսուն փահլևան մեկդի՞ր տի հանես,
Թե՞ մեկ մեկ տի հանես դեհ ինձ:
Թագավոր ասաց.— Սա՛նասար,
Վաթսուն էլ մեկդիր հանե՛մ,
Ըկքեկ ցրի՛վ կը տան.
Մե՛կ մեկ հանեմ, կռվեցե՛ք:
Թե դու հաղթեցիր, աղջիկ տի տամ քեզ.
Թե չէ՝ կո՛ կքեզ տի սպանեն:

— Թա՛գավոր, ապրած կենաս,— ասաց.—
Ես չեմ դադրի էստեղ, չուր վաթսուն օր կռվի.
Վաթսուն էլ մեկդիր թող դո՛ւրս, կռվենք.
Աստված կամ ի՛նձ կը տա, կամ փահլևաններուն:
Թագավորն էլ ասաց.— Հա՛լ.
Վաթսուն մեկտե՛ղ թողնեմ դո՛ւրս,
Ըկքեզ տի փըրփըրթե՛ն.
Խե՛ղճ ես, կաց, վաթսուն օր կռվի:
Ասաց.— Չէ՛, թագավոր,
Ես վաթսուն օր չեմ կա՛ռնա կենա էստեղ.
Դու քո վաթսուն փահլևան մեկդիր հա՛ն:

Թագավոր ուղարկեց, մեկդիր էթող դուրս
Ըկիր վաթսուն փահլևան:
Սանասար կՔուռկիկ Ջալալին հեծավ,
ՁԹուր Կեծակին քաշեց, մելդան կայնավ.
Փահլևաններ գոմշու պես մըռմըռացին,
Էկին դեհ Սանասար:
Մե՛կ էնոնց մոտեն, մե՛կ Սանասարի,
Առին իրար, կարկին իրարու:
Դեղձուն-Ծամ պատուհան կայնե, մտիկ կ'անի:
Սանասար ընկավ մեջքեր,
Թուր կը կարնի փահլևաններուն,
Էնոնք չեն կա՛ռնա էնոր մոտենա:
Ձուր իրիկուն կռվան,
Ռսան փահլևանի վիպ կտրեց:
Գիշերն էլ փահլևաններ կռիվ արին,
Ասին.— Կը մթնի, մենք կը վարնենք,

Զէնի կը սպանենք, գիշեր մութն է:
Զուր առավոտ տաս փահլևան էլ սպանեց:
Առավոտից չուր իրիկուն կռիվ արին,
Տասն էլ սպանեց, մնաց քսան:

Լեշեր ընկավ չորս բոլոր,
Արուն կայնեց մեջտեղ.
Սանասար մնաց արնի մեջ,
Արուն Սանասարին բռնեց.
Էլ ոչ էնի կարցավ արնից դուրս գա,
Ոչ էնոնք կարցան կՍանասար սպանեն.
Էնոնք Սանասարի չորս բոլոր մա՛ն կը գան.
Զեն ի՛շխենա մոտենա էնոր:
Սանասարի ձեռ կռմավ,
Էլ չկա՛նա աղեկ կռիվ անի.
Համա ըկինք կը պաշտպանի:
Կռիվ էդպես մնաց:

Դառնանք Բաղդասարի վերան:

8

Բաղդասարն էլ Սասուն էր:
Էն մեկ առավոտուն էլավ, կը լվացվեր,
Աչք ընկավ Սանասարի մատնիք,
Ինչ աղբեր աղբոր հետ փոխարկեր էր:
Տեսավ՝ մատնիք մատին սևցեր է:
— Ահա, ասաց, շտապեք, իմ ձին քաշեք դո՛ւրս.
Ես հեծնիմ, էրթամ իմ եղբոր հասնիմ:
Էլավ դուրս, տեսավ՝ ամպն մթներ է:
Էկավ տո՛ւն, ասաց.— Հեյ-վա խ, հեյ-վա՛խ, մարե՛,
Իմ աղբեր շատ նեղութնի մեջ է:
Հարցուց.— Դու ի՞նչպես գիտես:
— Մեկ հալվոր մարդ մի մեկ նշանց էտուր.
Ասաց՝ Երբ էս ամպ կը մթնի,
Դուք էրկու աղբեր՝ որ մեկտեղ չեք ըլնի,
Իմացեք, որ մեկրն նեղ տեղն է.
Իրարու օգնություն հասեք:
Ես շուտ տ՝էրթամ, հասնեմ:
Ասաց.— Որդի, համբեր արա,

Ով համբեր ունի՝ կյանք ունի:
Էրթանք, կտոր մի հաց ուտենք,
Գնա քո աղբոր հասի՛:

Էլավ կհրեղեն ձին քաշեց,
Թամք էդիր վերան, վիր գուրպ առավ,
Էլավ, հեծավ ըվձրն,
Իր աստված կանչեց, քշեց:
Մոռցավ, հաց էլ չկերավ:

Գնաց, հասավ էն սարի մեջ.
Էն աժդահար հովիվ նայեց, տեսավ՝
Մեկ ձրավոր, էնպես կը գա՝ քամու պես.
Ասաց. «Կա-չկա, էս Սանասարի աղբերն է»:
Գնաց առջև, ասաց.
— Ձիավո՛ր, արի՛, կաթ մի կթեմ, կե՛ր.
Նստի, հանգստացիր, էլի՛, գնա՛:
Բաղդասար ասաց.— Սատանա՛ ես դու.
Իմ աղբեր մկա մեռե,
Դու կ՛ասես՝ արի կաթ կեր, ես կ՛էրթամ:
Հովիվ ասաց.— Հնար չկա,
Ձուր կաթ չուտես, չեմ թողնի՝ էս տեղով էրթաս:
Բաղդասար տեսավ՝ էդտեղ կռիվ կ՛ընի, նստավ:
Հովիվ իր կոտ իլին կաթ կթեց,
Հացի հետ էդիր Բաղդասարի առջև,
Ձինք գնաց օչխարի բոլոր ման գալ:
Յոթ փաթ ման էկավ օչխարի բոլոր,
Նոր՝ Բաղդասար էդ կաթ կերավ,
Կոտ կորձեց, կանչեց.— Հովի՛վ,
Արի՛, կոտ վերցո՛ւ, ես կ՛էրթամ:
Հովիվ էկավ, Բաղդասարին ասաց.
— Բաղդասար, քո աղբեր լոթ քո չափ ուժ ունի.
Էնոր չըլնիմ հակառ կենաս:
Գնա՛, քո աղբեր քառասուն փահլևան սպանե,
Մնացե քսան, էն էլ դու կը սպանես,
Ետ կը դառնաք, կը գաք:
Մի վախենաք, մարդ չկա՛րնա
Ձեր երկու աղբոր վերան:

Քշեց, գնաց Պղընձե քաղքի պարսպի տակ.
Տեսավ՝ քառսուն հալվոր կայնած են էնտեղ.

Տեսավ, որ էդ մարդիկ էնքան ծերացած են,
Որ շորեր, մորուս, վերան-գլուխ դեղին դարձե:
Բարև էտու հապրաց, ասաց.— Բարև ձեզ,
Սիպտակմորուս, կարմրամորուս, թուխմորուս մարդեր:
Էլի էն հալվոր բարև առավ, ասաց.
— Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ, կանաչ կտրիճ, ջահել տղա,
Դու է՞լ էկար, էրթաս ընկնես էն քաֆրի ձե՛ռ:
Ասաց.— Ի՞նչ կա, որ քաֆրի ձեռ ընկնեմ:
— Որդի, մեկ ժամ մնաս,
Էն քաֆրին մեկ հավք մի կա՝ կը գա կը ճվա,
Դու էլ մեր հասակին մարդ կը դառնաս:
Բաղդասար ասաց.— Ափո ջան,
Էրեկ, էռանդ իմ պես ջահել մարդ մի էկե,
Անցեր էստեղ վե՛, չե՞ք տեսե:
Էդա մարդեր դարձան, ասին.
— Էրեկ չէ էռանդ քեզ պես մարդ մի անցավ,
Դեռ քանց քեզ կորեղ, քանց քեզ կտրիճ էր.
Ո՛րդի, էնոր ձին էլ կրակե ձի էր.
Թռավ, անցավ քաղքի մե՛ջ:
Զուր էսօր էնոր կռվի ձեն կը գար,
Փահլևանների կռվի ձեն կը գար:
Էսօր մենք էլ ձեն չենք լսե,
Էլ չեմ գի՛տի՝ ի՛նչպես էղավ, ի՛նչպես չէղավ:
Բաղդասար ասաց.— Հե՛յ-վա՛խ, էն իմ աղբերն է.
Որ էլ էնոր կռվի ձեն չէ՛կեր՝ սպանած են:
Ուխտ ըլնի՝ ես էստուց առնեմ սպանել,
Էսա քաղաք ավերեմ,
Իմ աղբոր վրեժ առնեմ:

Ըկեն մարդեր անցավ, գնաց.
Ինչ բան որ ռաստ էկավ,
Ինչ որ իրար կ՚առներ՝
Թե տավար, թե մարդ՝ սպանեց:
Գնաց, գուրկ մի կարկեց, պարրսպ փլուց,
Մտավ քաղաք, մոտ հասավ:
Սանասար ու էն քսան փահլևան
Էլած էն մեկ մեկի առջև կռիվ.
Սանասար էնպե՛ս էղեր,
Զոռով ըվինք կը պաշտպանի.

Արուն աչքեր բռներ է, թուր կը կարնի:
Բաղդասար ըկձին քշեց, գնաց,
Աղջկա պատուհանի առաջեն անցավ.
Ասաց.— Աղջի՛, կռիվ դեհ դո՛ռն է:
Աղջիկ ճանչեցավ, պատասխանեց.
— Կռիվ դեհ քաղքով դե՛ս է:
Բաղդասար քշեց ըկձին,
Գնաց, մտավ մեջ կռվուն.
Ճոթից մի էն կտրեց կփահլևաններ,
Դարձավ, կանչեց.— Տո՛, Սանասար, ա՛ղբեր:
Սանասար իմացավ՝ իր աղբերն է էկեր,
Ասաց.— «Օրհնյա՛լ է աստված.
Օգնականս հասավ. էլ ահ ու երկուղ չունիմ»:
Կանչեց.— Հրամմե, Բաղդասար աղբեր.
Ուայ, էդ դո՛ւ ես, էկար իմ օգնություն:
Բաղդասար ասաց.— Հա՛, ես եմ:
Դե՛, էտա դեհեն առջև բռնի՛,
Ես էս դեհեն սպանեմ, գա՛մ:
Գնաց, աղբորն արնից քաշեց դուրս,
Տարավ, լվաց, աղբոր աչքեր բացվավ, ասաց.
— Ո՞ւր է. քսան փահլևան էլ մնացեր է:
— Ես վէնոնք սպաներ եմ,— ասաց Բաղդասար:

Գնացին թագավորի առաջ:
Թագավոր որ երկու աղբեր տեսավ,
Ասաց.— Էտա էղավ չորս փորձանալիք:
Հիմի տ'էրթաք Կանաչ Քաղաք,
Նոր գաք վաղջիկ տանեք:

9

— Կանաչ Քաղաք, ո՞ւր ես, էկա՛նք:—
Գնացին, ընկան չոր ու ցամաք, ոստին տեղեր:
Մտան քաղաք, դես ման էկան, դեն ման էկան.
Վերջըն պառվու մի դուռ տփեցին:
Պառավ էկավ, հարցուց.— Ո՞վ է:
Ասին.— Կարիք տղերք ենք, մամիկ, հյուր չե՞ս ուզի:
Ասաց.— Ինչի՞ չե՛մ ուզի, ո՛րդիք, հյուրն աստծունն է:

Պառավ դուռ էբաց, տղեք ներս առավ:
Ասաց.— Ես էլ վավակ չունիմ.

Դուք ինձի լա՛ճ, ես ձեզի մե՛ր,
Մեկտեղ ապրինք, հացն աստծունն է:

Առավոտուն լուս որ բացվեց,
Սանասար ասաց Բաղդասարին.
— Քաջանց թագավոր մեզ ուղարկեց էստեղ, որ ի՞նչ.

Մենք ի՞նչ պիտի անենք էստեղ:
Բաղդասար պատասխանեց.
— Ա՛ղբեր, էլնենք, ման գանք էս քաղքի մե՛ջ,
Աստված ինչ որ կը տա՝ էն էլ կ՚անենք,
Զուր կը տեսնենք՝ վերջն ի՞նչ կ՚ելնի:
Չիանք, կենքեր թողին պառվու մոտ,
Էլան քաղքի մեջ ման գալու:

Էկան թագավորի ախոռի դո՛ւռ, կալնան:
Ախոռապետն էկավ, էնոնց հարցուց.
— Ա՛յ տղա, ի՞նչ մարդ եք. չե՞ք ըլնի ձիապան·
Ասին.— Կարիք մարդ ենք. կ՚ըլնինք:
Հարցուց.— Գիտե՞ք ձի թիմարեք:
Ասին.— Այո՛, գիտենք:
Ախոռապետն էնոնց տարավ ախոռ,
Ասաց.— Դե՛, ձիերու տեղ շինեք:
Սանասար ցախավել առավ, Բաղդասար՝ թիակ,
Ձիերի տեղ ավլեցին:
Ախոռապետն ասաց.— Հիմի ձիանք թիմարեք:
Սանասար հարցուց.— Ո՞ւր է քերոց:
— Էս ականատն են քերոցներ,—
Ասաց ախոռապետն ու դուրս էլավ:
Սանասար որին ձեռ տվավ,
Էն քերոցներ ձեռաց մեջ էղան հո՛ղ:
Ախոռի մեջ ման էկավ, տեսավ՝
Քերոցի պես՝ մեծ մի բան դրած էնտեղ.—
Պղինձե գուռ էր, ինչ ձիերուն ջուր կը տային,
Գարի լցած մեջ՝ ձիերու համար:—
Գարին դատարկեց գետին,
Էդ պղինձ առավ ձեռ, ձրեր թիմարի:
Որի քամկին մեկ դիր պրտեց,
Կաշին հանեց, բերեց, էթալ պոչից դո՛ւրս:

էլավ Դավիթ՝ ձի հեծավ, գնաց Սովասար



Էդ ժամանակ ախոռապետ դարձավ ետ,
Կանչեց, ասաց.— Էս ի՞նչ եք արե:
Պատասխանեցին, թե.— Քերոցեր ենք:
— Աստված ձեր տուն ավրի,
Ամեն սպաներ եք ձիանք:
Ախոռապետ գնաց, թագավորին ասաց.
— Էսպես մեկ բան է էղե.
Էս մարդոց հետ ի՞նչ անենք,
Էս մարդեր կորեղ են, աժդահա են:
Էն էլ ասաց.— Թողեք՝ մնան.
Առավոտ կ՚ուղարկենք սա՛ր՝
Վիշապի հետ կռիվ անեն:

Տղեք դարձան, էկան պառվու տո՛ւն:
Իրիկնապահին Բաղդասար ասաց.
— Մամի՛կ, ծարավ եմ, պուտ մի ջուր:
Պառավ ասաց.— Հոգիս էլնի, էլ ջուր չկա:
Տղան հարցուց.— Մամի՛կ, էդ ի՞նչ խոսք է:
Պառավ պատասխանեց.— Մեռնիմ քեզի.
Էս Կանաչ Քաղաք անջուր քաղաք է, ջուր չկա:
Սարի գլուխ մեկ աղբուր կա՛,
Էն էլ աղբրի ական վերա՝
Վիշապ մի էկեր, բերան տվե, նստե,
Չի թողնի, որ ջուր գա քաղաք:
Մենք էլ էնոր ահու չենք կա՛րնա ջուր բերի:
Ամեն շաբաթ ապապ աղջիկ մի տի տանք,
Էդ վիշապ ուտի, որ ջուր բաց թողնի,
Ինչ է թե՝ ժողովուրդ ծարավ չկոտորվի.
Ու մեր քաղաք չավերի:
Թագավորի մոտ մեկ աղջիկ մի կա,
Վաղ հերթ էդ աղջկան է:
— Մամի՛կ, բա չե՞ք կարնա էդ վիշապ սպանի:
Ասաց.— Որդի. էնոր սպանելու ճա՛ր կ՚ըլնի.
Քանի՛ քանի դիր թագավոր՝
Իր կորքերով գնացե վերան կռիվ,
Բան չի կարցե անի:

Առավոտ որ լուսացավ,
Պառավ ասաց.— Հանգո ծերնենց կը գա.
Ես կ՚ասեմ՝ աղջիկ կը տանեն, տան վիշապին:

Տղաներ իրիշկեցին, որ, ուղորդ,
Լուսնակի պես մեկ աղջիկ,
Ոտից գլուխ սևեր հագցուցած,
Լալով առեր են, որ տանեն աղբրի գլուխ.
Կնանիք էլ՝ կժեր առած՝ կ'էրթան ջրի:
Էրկու աղբեր ընկան էնոնց հետև, գնացին:
Երբ որ քաղքից էլան դուրս,
Սանասարին, Բաղդասարին ասին.
— Էս աղջիկ առեք, տարեք, տվեք վիշապին.
Էնոր հետ կռիվ արեք, սպանեք:
Սանասար ու Բաղդասար ասին թագավորին.
— Մենք ինչո՞վ էրթանք կռիվ,
Մենք կենք չունենք հետ մեկ:
Էն էլ ասաց.— Դուք գիտեք:

Բաղդասար ասաց Սանասարին.
— Էրթանք, էնտեղ, էնա մոտիկ ջոջ տան մեջ,
Էրկու կլոր քար կա, առնենք, էրթանք.
Էրկուսի մեջն էլ ծակ է,
Կը մտուցենք մեր թևքեր, կ'էրթանք:
Գնացին քարեր առին:

Քարերի տերեր էկան,
Թագավորին գանգատ արին,
Թե.— Մենք էնքան ծախս արինք,
Հավիվ բերինք էդ քարեր.
Էդոնք կը տանեն, կը թալեն սա՛ր,
Էլ մենք չենք կարնա բերի:
Թագավոր ասաց.— Որ տանեք, էլ կը բերե՞ք:
Ասին.— Հա՛, կը տանենք, էլ կը բերենք:

Էնոնք առին աղջիկ ու քարեր,
Գնացին, հասան սարի գլուխ,
Էնտեղ որ աղջիկները կը կապեն:
Ասին.— Աղջիկ, մի վախենա,
Կայնի էստեղ, մենք էրթանք,
Մեկ՝ վիշապի վերև կայնենք, մեկ՝ ներքև:
Աղջիկ էստեղ մտածեց,
Թե՝ «Ես թողնեմ, փախնիմ,
Թող վիշապ գա, վէնո՛նք ուտի»:

Տեսան՝ վիշապ չկա, աղջիկ կը փախնի,
Զաղջիկ բռնին, կապեցին:
Սանասար ասաց աղբոր.
— Ես կը կայնեմ ներքև, դու՝ վերև.
Ես կը վախեմ, որ ես վերև կայնեմ, քար վարնեմ,

Դու իմ քար չես կա՛րնա բռնի.
Հետ վիշապ դուրս գա՛, կարնենք, սպանենք:
Համա կգուշ կաց, աղբեր,
Քարեր չերթան, ձորի մեջ կորուսին:

Մեկ էլ տեսան՝ գրռոց ընկավ սարեր.
Իրիշկեցին՝ մեկ ջոջ գապան էկավ,
Մեկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ երկեն:
Վիշապ հեռվեն տեսավ՝ էն որ մեկի տեղ՝
Իրեքն են էկեր իրեն կերակուր,
Ուրախացավ, ատամներ սրեց, բերան էբաց.
Պոչն օլորելով, ֆըշֆըշալով,
Կը գար դեհ աղջիկ, որ կուլ տա:
Աղջկան կեռիք փակվավ,
Լեկուն կապվավ, ու կը լար,
Արցունք տաք տաք կը թափվեր երեսն ի վար:
Վիշապ էկավ, հասավ էնոնց մոտ:
Բաղդասար քար մի էկար.
Քար բռնեց էդ գապանին, չի ձգեց:
Կանչեց աղբոր.— Իմ քար բռնի՛:
Սանասար էկար, գապանի մեկ կող կոտրեց,
Քար չգնաց աղբոր մոտ:
Մոտեցան, քարերով գլուխ ջարդեցին,
Քարեր առին, էկան աղջկա մոտ:
Արձակեցին կաղջիկ, ասին.
— Աղջիկ, էլի գնա տուն:
Վիշապ արենկոլոլ ընկավ, սատկեց:
Աղբուրների ակունք բացվան.
Աղբրի ջուր վարարեց, էկա՛վ, էկա՛վ.
Ամեն մարդ առատ-առատ ջուր կրեցին:
Բաղդասար ասաց Սանասարին.
— Քարեր թալենք էն ձոր, էրթանք:
Սանասար ասաց.— Աղբե՛ր, հայեր մեղք են,
Չեն կա՛րնա քարեր բերի, տանենք, տանք էնոնց:

Քարեր առին, աղջկա հետ դարձան քաղաք:
Աղջիկ պատմեց թագավորին, ինչ որ տեսավ:

Թագավոր կանչեց, հարցուց.
— Տղեք, էն քարեր բերի՛ք:
Ասին.— Այո, բերինք, դրեր ենք դո՛ւռ.
Էնոնց տերեր թող գան, տանեն, դնեն տե՛ղ.
Մենք էնոնց տեղ չենք գիտի:
Զուր էստեղ բերեր ենք, դոր թող էնոնք տանեն:
Թագավոր ասաց.— Էնոնք չեն կարնա տանի ներս:
Ասին.— Բա՛ առաջ ի՞նչպես են տարե ներս:
Ասաց.— Առաջ գոմեշներ, ձիեր լծեր են,
Էդ քարեր բերեր են իրենց տեղ,
Նոր՝ ձիթահանք շիներ են:
Սանասար ասաց.— Թող գան հետ մեկ,
Դռներ բանան, տեղեր շանց տան,
Մենք քարեր տանենք, տեղեր դնենք:
Տերեր գնացին տղաների հետ,
Քարերի տեղ շանց տվին,
Էնոնք քարեր տեղեր դրին,
Դարձան, էկան պառվու տուն:

Մեկէլ օր թագավոր կանչեց,
Սանասարին, Բաղդասարին ասաց.
— Ուզեք, ձեր ուզած տամ:
Բաղդասար ասաց.— Մենք բան չենք ո՛ւզի,
Մեր ապատած կ՛ուզենք:
Թագավոր նորեն հարցուց.
— Բաղդասար, ի՞նչ կ՛ուզես՝ տա՛մ:
Թագավոր իրեք անգամ հարցուց,
Բաղդասար տղան իրեք անգամ էլ բան չուզեց:
Էն ժամանակ ասաց թագավոր.
— Որ բան մի չեք ուզի,
Ձեր ապատած աղջիկ չխոտ ձերն է:
Արի քեզ պսակեմ, Բաղդասար:
Բաղդասար տղան ասաց.
—Հիմի ես ժամանակ չունիմ պսակվելու:
Բերին աղջիկ նշանեցին վեր Բաղդասարին:

Էրկու աղբեր էլան, կաց-բարով արին,
Էդ Կանաչ քաղքից դարձան,
Էկին, հասան Պղինձե քաղաք:
Քշեցին վեր Քաջանց թագավորի դռան,
Որ կոռով կԴեղձուն քաշեն, տանեն:
Թագավոր ասաց.— Սա՛նասար,
Դեղձուն կո՛ քաղքից դուրս իր դղեկի մեջ.
Համտոլ դևն էնոր դռան պահապանն է:
Կարնա՛ս, գնա, տա՛ր քեզ համար:

Բաղդասար մնաց քաղաք,
Սանասար, Սասնա Ծուռն էր,
Առավ կենքեր, հեծավ իր ձին, գնաց:
Քարի մ՚ գլուխ սիպտակ դղեկ մի տեսավ.
Դեմ արավ էդ դղեկին,
Ասաց. «Տեսնեմ՚ էդ Դեղձունի դղեկ չի՞»:
Գնաց, հասավ դռան, տեսավ՚
Ջոջ, ահագին դարգահ մի կո՛ վեր դռան:
Կանչեց.— Է՛, դուռ բացե՛ք:
Համտոլ՚ դևն՚ էն դեհեն ձեն էտու, ասաց.
— Դու ո՞վ ես, դուռ բանամ վեր քեզ:
Սանասար ասաց.— Իմ անուն չե՛ս լսե:
Համտոլ հարցուց.— Քո անուն ի՞նչ է:
Սանասար՚ ասաց.— Դու իմ անուն չես գի՞տի:
Համտոլ ասաց.— Չէ՛, չեմ գի՛տի:
Սանասար ասաց.— Ես էլ չեմ գի՛տի,
Թե իմ անուն ինչ՚ է.
Իմ մոր մոտեն լսեր եմ...
Համտոլ՚ հարցուց.— Ի՞նչ ես լսեր:
Սանասար ասաց.— Ինչ՚ եմ լսե՛ր:
Ճիժ էի, իմ մեր ինձ վեր կը թալեր
Ու կ՚ասեր՚ Համտոլի՚ գրո՛ղ:
Համտոլ ասաց.— Որ դու իմ գրողն ես,
Մի քո մատ դռան ճղուն վե՛ տուր դե՛ս...
Սանասար ասաց.— Ահա՛ քեզ ձե՛ռ:
Ու թև պարկեց էն դեհ:

Համտոլ ինչ որ էնոր ձեռ տեսավ, վարմանք մնաց:
Առավ իր ձեռաց մեջ, քամեց,
Ապա ինչպես լու մի Սասնա Ծուռ կծի,
Բան չկարցավ աներ էնոր:
Սանասար ասաց.— Համտո՛լ:
Մի քո՛ ձեռ տուր դրսա:
Համտոլ ըվձեռ էտու:
Սանասար ինչ որ էնոր ձեռ քամեց,
Համտոլի մոր ծծի կաթ արնի հետ մեկտեղ՝
Էնոր ձեռից էտու դուրս էղունգի բերնից:

Համտոլ փախավ, գնաց մոտ Դեղձուն:

Դեղձուն ասաց.— Վա՛-վա՞, Հա՛մտոլ,
Ի՞նչ էղավ քեզ, որ դու էսպես փախար:
Համտոլ ասաց.— Խա՛թո՛ւն,
Մարդ մի կո՛ վեր դռան,
Ասաց՝ դուռ բաց, չբացի.
Իմ ձեռ քամեց, իմ մոր ծրծի կա՛թ
Իմ էղունգի բերան վե՛ էտու դո՛ւրս:
Դեղձուն ասաց.— Դու չկարցա՛ր
Էնոր ձեռ քամեիր:
Համտոլ ասաց.— Իր ձեռ էտու իմ ձեռ,
Ձեռ չէ՛ր, ապա գերա՛ն էր:
Դեղձուն ասաց.— Դու չհարցուցի՞ր,
Թե էնոր անուն ի՞նչ էր:
Համտոլ ասաց.— Հարցուցի, ասաց՝
«Ես պզտիկ էի, իմ մեր ինձ վեր կը թալեր,
Կ'ասեր՝ Համտոլի գրող»:
Դեղձուն ասաց.— Կարելի է,
Էնոնք Սասնա Ծռերն են:
Համտոլ հարցուց.— Սասնա Ծռեր ո՞վ են:
Դեղձուն ասաց.— Սանասար, Բաղդասար են,
Էնոնք որ էկած՝ սասուն տուն են շինած,
Անուն դրած Սասուն—Սասնա տուն:

Ջը՞նգ... կը՞նգ... էկար դռան:
Ասաց.— Դուռ բա՛ց, թե չէ՝
Քո դուռ, էրդիս՝ վեր քո գլխուն կը քակեմ:

Համտոլին ձեռ-ոտ չկար, աճու կանգներ էր:
Դեղձուն պատուհանից իրիշկեց տեսավ՝
Սասնա Ծուռն էր, Սանասար.
Իր չմըշկներ ձգեց իր ոտք,
Վազեց առաջ, դուռ էբաց, ասաց.
— Գլխուս, էրեսիս վերան էկար, իմ տե՛ր:
Սանասար իջավ ձիուց,
Ձեռ թալին իրար վզի վերան,
Գնացին, մտան մեջ դղեկին:
Համտոլ էղավ քանց մժիկ մի, փախավ դո՛ւրս:
Դեղձուն ասաց.— Է՛, հոգուդ, արևուդ մեռնիմ,
Սանասար, ի՞նչ կա, բարի ըլնի:
Սանասար պատասխանեց, ասաց.
— Ես էկեր եմ, քեզ ինձ կնիկ տանեմ:
Դեղձուն ասաց.— Աչքի՛ս վերա,
Ես քեզ պես կտրիճ՝ մի էլ տի տեսնե՞մ:
Որ էլավ Սանասարի դիմաց,
Տեսավ՝ Դեղձուն էնպես խորոտ էր,
Որ էրպի մեջ տեսածեն, իր պատկերեն,
Ցոթնապատիկ ավելի էր:
Էդ տեղ մատանիներ հետ իրարու փոխեցին:

Դեղձուն-Ծամ վերուց, ասաց.— Սանասար,
Հապա՛ր ափսոս քո ջահելութնին,
Որ էլեր, էկեր ես իմ հետև:
— Ի՞նչ դիմացով ափսոս կ'առնես:
Դեղձուն պատասխանեց.
— Էն ապով, որ կը վախնամ՝ կարնեն, քեզ սպանեն.
Էսա էրկիր հմայքի էրկիր է:
Գիշերով էնպես էրթանք. ասաց,
Որ քաղաք չակահի, չիմանա.
Որ քաղաք ակահի, իմանա,
Ձեն թո՛ղնի՝ դու ինձ տանես:
Էն էլ պատասխան էտու, ասաց.
— Ես չեմ վա՛խենա, ես ցերեկո՛վ տ'էրթամ,
Էրկեն խոսք պետք չի,— ասաց.—
Թե որ կը գաս ցերեկով,
Թռի՛ ձիուս վերան՝ քեզ տանեմ.
Թե չես իգա, վերջի խոսք տուր՝
Ես դառնամ, էրթամ Սասուն:

— Ինչպե՞ս չգամ, ասաց Դեղձուն.
Ինձ ջան մի կա՝ քո սիրուն է:
Քեզ կանչեցի, բերի, որ հետ քեզ գա՛մ:

Ասաց թե չէ՝ իսկուն թռավ ձիու քամակ,
Սանասար քշեց ու գնացին:
Վեր ճամփուն ինչ որ ըռաստ էկավ,—
Թե քար, թե թուփ, թե գապան,—
Բարև էտուր Սանասար,
Մինչև էկրեց էն էրկիր:
Էնտեղ մեկ մուրտառ գապան մի ռաստ էկավ,
Էնոր բարև չէտուր:
Էն գապան էլ էլավ հետ էրկնուց.
Բարձր ձենով կանչեց.
«Հա՛, տարա վ, տարա՛վ.
Սանասար Քառսուն-Ճուղ-Ծամ աղջիկ տարավ»:

Էս ձեն քարն լսեց. տվավ թփին,
Թուփն՝ ծառին, ծառն՝ անասնին,
Զուր ձեն հասավ մեջ քաղքին:
Քաղաք քաղքով մեկ մեկին իմաց տվին,
Քաղքի մարդեր կրմեն ակհան,
Հետիրաց էլան կռիվ:
Հեծել հեծավ. բակմացավ,
Ընկան Սանասարի էտևեն:
Ծովու ավապին համար կա՛ր,
Էրկնուց աստղին համար կա՛ր,
Գետնի բուսին համար կա՛ր,
Հեծելին համար չկար:

Սանասարն էր, կաղջիկ տարավ,
Էդի մեկ բարձր սարի գլուխ,
Դարձավ դեհ էդ հեծել.
Քաշեց Թուր Կեծակին. ասաց.
«Հիշեմ քեզ. հեր կենդանին,
Խաչ Պատերազմին վեր իմ աջ թևին».
Անոթի, ծարավ բրդեց էդ հեծել:
Քաղքի մարդեր չորս բոլոր բռնին,
Դարգահի առաջ չաթուն բռնին, կայնան:

Սանասար էնոնց մեջ կռիվ կ'աներ,
Կը կոտորե՛ր, կը ջարդե՛ր, առաջ կ'էրթար:
Քիչ էլ մնաց, իրիշկեց, տեսավ՝
Դարգահի կողմեն մարդեր կը փախնին,
Կ'էրթան, կը՝ մտնեն քաղքի մեջ.
Քաղքի կողմեն կը փախնին,
Կը գան դարգահի առաջ:
Մեկէլ կողմեն՝ Ծուռ Բաղդասարն էր՝
Կը գար, կը ջարդեր զմարդեր:

Էնի կատանց տեսավ մեկ սիպտակ ձիավոր,
Որ արընի մեջ թաթախվեր,
Ընկե մեջ հեծելին կը կտրեր:
Կանչում մի կանչեց վեր ձիավորին,
Ասաց.— Պատրա՛ստ կաց, կա-չկա,
Դու ես իմ աղբեր սպանե.
Հետ հասա, քո հոգին աստծուն կ'ավանդեմ:
Տարավ, էբեր, մեկ գուրպ էկար մեջ աղբոր սրտին.
Աղբեր ընկավ վեր ձիու գավակին,
Ամա նորեն շուտ թռավ մեջ թամքին.
Դարձավ, գուրպ մ' էլ էկար, թամքից ձգեց դուրս.
Աղբեր նորեն շիտկվավ մեջ թամքին,
Սկսեց եղանակով ասել.

«Օրհնյա՛լ, բարերա՛ր աստված*,
Խնամք շա՛տ է մեծ թագավորին.
Դարբիկ նման էր մեր Ծուռ Բաղդասարին,
Թափիկ նման էր մեր Ծուռ Բաղդասարին»:

Էս խոսքի վերան Բաղդասար ճանչեցավ,
Որ իր աղբերն էր, ասաց.
— Դու արնոտվեր ես, քե չըճանչեցա.
Դո՛ւ ինչի ինձի չըճանչեցար.
Խաբար չտվիր, որ քե դարբ չտայի:
Դարձավ հարցուց Սանասարին.
— Էն տեղեն որս բերե՛ր ես, չէ՝ դատարկ ես էկե:
Պատասխան էտու, ասաց.
— Քաջանց թագավորի աղջիկ բերեր եմ,

* Երգ է։

Կո՛ էնա բարձր սարի գլուխն է:
Առավ իր աղբեր, տարավ մոտ աղջիկ.
Զատանց աչքով, արավ աղջկան,
Որ գա իր աղբոր ձե՛ռք:
Էն էլ իսկուն էլավ, էկավ Բաղդասարի ձեռք:
Բաղդասար վերան շատ ուրախացավ.
Էնտեղ ասաց.— Հարսնի՛կ,
Իմ աղբոր շորեր արնից լվա՛:
Էն մնացած կորքեր՝ ի՛մ բաժին:
Ասաց թե չէ Բաղդասար,
Հա՛մա առավ իր նիկակ,
Ընկավ մեջ հեծելին, կտրեց.
Մենակ էն էթող, որ տնեն չէ՛ր էկե,
Մեկ խաբրաբեր մի չփրթուց:

Էսպես էրկու աղբեր,
Մեկ է՛ն դեհեն, մեկ է՛ն դեհեն,
Զհեծել ամեն ըսպանեցին,
Ըրիվ-ճրիվ ընկավ մեջքեր:
Քաջանց թագավոր էկավ, ասաց.
— Աստծու սիրուն, Սասնա՛ Ծռեր,
Բավ է կիմ մարդիկ սպանեք.
Ինչ որ կ՚ուզեք, ես կը տամ.
Աղջիկ կ՚ուզեք, ես կը տամ,
Թագավորություն էլ ուզեք, ես կը տամ:
Ասին.— Աղջիկ կ՚ուզենք, կո՛ կը տանենք:

11

Զաղջիկ առան, էկին քառասուն հալվորի մոտ.
Էդտեղ կայնան, աղջիկ իջուցին գետրն,
Զաղջիկ էնտեղ կայնեցուցին:
Սանասար տղան ասաց.
— Աղջի՛կ, էս քառսուն մարդ քեզի համար էկած,
Էս մարդեր դու ես հմայք արեր, էսպես արեր.
Դու կը բերես, կ՚արձակես էսա մարդեր,
Էն հասակին կը դարձուցես,
Ինչ հասակի էկած են:

Դեղձուն-Ծամ աղջիկն ասաց.
— Էնոնք կըմեն ինձի ապով են էկած.
Որ ես կէնոնք ժրացուցեմ,
Տ'էլնեն, հետ ձեվ կռիվ անեն.
Առե՛ք ըվիս, գնացե՛ք:
— Չէ՛, անկարելի է, ասաց Սանասար:
Աղջիկն էլ դարձավ հմայք արավ,
Կանչեց իր հավք էբեր.
Հավք ինչ կանչեց, ինչ հասակի էկած էին.
Է՛լի էն հասակին դարձան:
Սանասար ասաց.— Հա՛յ աղե՛կ:
Ապա կաղջիկ էդիր մեկ կողմ,
Ինք էկավ մոտ էդ մարդեր,
Ասաց.— Է՛հ, կտրիճ փահլևաններ,
Դուք կըմեն էսա աղջիկ ապով եք էկե.
Դուք տ'էրթայիք, կռիվ անեիք,
Կռվով էսա աղջիկ տի բերեիք:
Մենք էլ էսա աղջիկ ապով ենք էկե,
Կո՛ մենք էրկու աղբեր գնացեր ենք,
Կռիվ արեր, հաղթեր ենք,
Նո՛ր՝ էսա աղջիկ առեր, բերեր էստեղ:
Դե՛, մկա նորեն դուք ձեր ուժի վերա հասաք:
Աղջիկ թող կենա էն դեհ,
Մենք էստեղ կռիվ անենք:
Թե դուք ըվմեկ էրկու աղբեր հաղթեցիք,
Աղջիկ թող ձե՛կ կենա:
Թե մենք ըվձեկ հաղթեցինք,
Աղջիկ թող մե՛կ կենա:
Էդա մարդեր դարձան, ասին.
— Հե՛յ, Սանասա՛ր, Բաղդասար,
Դո՛ւք էղաք պատճառ, կմեկ ապատեցիք,
Էնպես արիք՝ մենք ժրացանք նորեն.
Դիր մ'էլ էլնենք, հետ կռի՛վ անենք:
Մենք չենք ի՛շխենա հետ ձեվ կռիվ անենք:
Ա՛ղբեր, մենք չենք կռվի,
Մենք տ'էրթանք մեր էրկրներ:

Սանասար ասաց.— Ա՛յ կարիբ աղբերներ,
Դուք հոժար կ'ըլնի՞ք՝ ես աղջիկ տանեմ,
Էդոր հետ կյանք վայելեմ:

Էնոնք դարձան, ասին.
— Տա՛ր, բարի տեսնես մոտեն.
Շնորհավո՛ր ըլնի, բարո՛վ վայելես:
Էն քառսուն մարդեր կաց-բարով արին.
Էլան, գնացին իրենց էրկրներ,
Դարձան ամեն մեկ իր տուն:
Սանասար, Բաղդասար էլան, կաղջիկ առին,
Ընկան ճամփա, որ գան Սասուն:
Սանասար ասաց.— Աղբեր,
Էս Դեղձուն աղջիկ դո՛ւ առ:
Բաղդասար ասաց.— Չէ՛, ես կէն չեմ առնի.
Էնի էրկու դիր քե՛զ բարև գրե,
Կռիվն էլ դո՛ւ արիր, դու տ՛առնես:
Ո՞վ է լսե, ո՞վ է տեսե,— ասաց,
Աղբեր վաղբոր նշանածն առնի:
Ես կ՛առնեմ իմ նշանած,
Չէն աղջիկ, որ վիշապից ազատեցինք:

Ու շատ էկին, թե քիչ էկին,
Տեսան՝ կապուտ ձիավոր մի էն դեհեն էկավ.
Կանչեց.— Հա՛յ գիտի, սրիկաներ,
Հուրի-փարին ինձ է վայել, դո՛ր կը տանիք:
Սանասար ասաց.— Աղբեր,
Դու էնա ձիու գլուխ բռնի՛,
Ես գնամ, տեսնեմ՝ էն ինչ կ՛ասի:
Բաղդասար ասաց.— Դո՛ւ գրո ղտուն,
Ամեն անգամ էլ դու կ՛էրթաս,
Էս անգամ է; ե՛ս տի գնամ:
Սանասար ասաց.— Դո՛ւ գնա,
Ինչո՛ւ կը նեղանաս:

Բաղդասար ոտքին քշեց, գնաց առաջ,
Խոսք մի էնոր մոտեն, խոսք մի էնոր մոտեն.
Իջան, թռան դեհ իրար:
Բաղդասար վերուց, կէն էդիր գետին:
Իսկուն վիրդաստ քակեց,
Ծրծեր էհան դուրս, ասաց.— Բա՛ղդասար,
Ահա էն որ կը տանի, իմ քուրն է.

Յոթ տարի կա՝ ես փախեր էի,
Անհետացեր էի էնոր դարդեն,
Որ վեր խալխին էնպես հմայք կը թալեր.
Ընկեր էի սարեր, էղեր ինչպես հարամիք.
Վերջըն գնացեր Կանաչ Քաղաք,
Մոտ էն տեղաց թագավոր:
Որ լսեցի՝ կէնոր հմայք խափանեցիք,
Ջէնի բերիք Սանասարի համար,
Ես էլ, քո նշանած, էկա կո քեզ համար:

Ելան չորսով հեծան ձիանք,
Քշեցին, որ գան Սասուն:
Ականջկլա գնաց էնոնց կողմից,
Մորըն խաբար էտու,
Թե.— Բեռեր ենք Քաջանց թագավորի աղջիկներ,
Քառսուն-ճուղ-Ծամ Դեղձուն ու իր քուր.
Փող ու թմբուկ, գուսանք պատրաստ ըլնի,
Որ գանք, հարսնիք անենք:
Մերն էր, Ծովինար խանում, ուղարկեց,
Քառսուն ձեռք փող ու թմբուկ, գուսանք բերել էտու,
Քաղաքացիք կամեն ժողվեց:
Աղջիկներ պատակեցին,
ԸկԴեղձո՛ւն-Ծամ վեր Սանասարին,
Ջէնոր քուրն էլ վեր Բաղդասարին:
Քառսուն օր. քառսուն գիշեր հարսնիք արին.
Քեֆ, ուրախություն, խնջույք արին:

Բաղդասար էլավ, վիր կին առավ, գնաց Բաղդադ,
Սանասար մնաց Սասուն:
Բաղդասար անորդի մնաց:
Սանասարին, աստված էտու,
Լաճ մի էլավ, անուն էդին Վերգո:
Քանի մի տարի վերա անցավ,
Սանասարին էրկու տղա էլ էլավ,
Մեկի անուն էդին Զենով Հովան,
Մեկի անուն՝ Մհեր:
Էդոնց մեջ Վերգոն իսկի բանի պետք չէր.
Զենով Հովան էնպես ձենով էր,

Որ յոթ գոմշի կաշի կը փաթթեր կի՛նք
Ու նոր կը բոռար, որ չընի պատռեր:
Մհեր քանց էն երկուսն էլ հունարով էր:

Մնաց: Սանասար, մահու օրն էկավ, մեռավ:
Ծովինար խանում, էնոնք կըմեն մեռան:
Մնացին Քեռի Թորոս, Դեղձուն,
Վերգո, Ջենով Հովան ու Մհեր:
Ընկավ Մհերի ժամանակ:

ԾՅՈՂ ԵՐԿՐՈՐԴ

ՊԵԾ ՀԵՐ

1

Դառնամ, կօղորմի՛ն տի տամ
Դեղձուն Ճուղ-Ծամին,— հապա՛ր օղորմի.
Դառնամ, կօղորմի՛ն տի տամ
Քեռի Փորոսին,— հապա՛ր օղորմի.
Դառնամ, կօղորմի՛ն տի տամ
Զենով Հովանին,— հապա՛ր օղորմի.
Դառնամ, կօղորմի՛ն տի տամ
Էն Զոջ Մհերի՛ն,— հապա՛ր օղորմի.
Դառնամ, կօղորմի՛ն տի տամ
Արմաղանին,— հապա՛ր օղորմի.
Դառնամ, կօղորմին տի տամ
Իսմիլ խաթունին,— տի տա՛մ օղորմի:

Դավիթ մտավ ոսկու զարզամբին

ՄԱՍՆ Ա

ՄՀԵՐԸ ԽՆԱՄՈՒՄ Է ՍԱՍՈՒՆԸ

2

Սանասարի մահից հետո Զենով Հովան ասաց.
— Սասուն քե՛ կը հասնի, Վերգո,
Դո՛ւ ես մեր ջոջ աղբեր:
— Հե՛,— ասաց Վերգո.— ես չեմ կարնա կառավարի.
Ճողված եմ վաղվընե.
Օր մի, Սանասարի գուրպ վերուցի, թալի,
Էնոր վոռեն ճողվա:
Վերջը նստան, խորհուրդ արին.
Քանի տղեք պստիկ էին,
Ասին.— Թողնենք Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն կառավարի՝
Զուրի տղեք մեծնան:
Դեղձուն Ճուղ-Ծամ հեծավ Քուռկիկ Ջալալուն,
Գնաց սարեր ֆըռա,
Զունքի շատո՛ւնց էր, որ դուրս չէր էլե տնեն:
Մարդ տի էն գախ թամաշ աներ վինք ու իր ձին:
Սադափե Թամք դրե ձիու վերան,
Պողպատե Սանձ դրե ձիու բերան,
Հագե էրկաթե կրահ, պողպատե սոլ,
Բռնե ի ձեռ Սանասարի թոփուկ,
Կախլան էլ կապեր էր քամակ:
Էլավ, քշեց չուր սարեր մեկ:
Էսպես քանի մ' տարի Դեղձուն կառավարեց:

3

Բաղդադու Խալիֆային մոտիկ մա՛րդ մի կար.
Մըսրա Մելիք անունով մա՛րդ մի կար:
Մըսըր էնոր ձեռն էր— Մելիք Մըսըր կը նստեր:
Էն իմացավ Սանասարի մեռնել,
Էլավ, էկավ վեր Սասնա,
Խարջ ու խարաջ կապեց Սասնա քաղքին.
Տարին քառսուն անծին էրինջ,
Տարին քառսուն կոտ ոսկի,
Տարին քառսուն ակապ աղջիկ կ'առներ:
Քանի մի տարի Սասուն Մելքին խարջդար էղավ:

4

Երբ որ Մհեր էկավ-էղավ յոթ տարեկան,
Յոթ շենք էղավ իր բոյ:
Էնոր վանք—վարժատուն դրին.
Քիչ մի սորվավ, շնորհքով լցվավ,
Օր մ'էլ իր մոր ասաց.
— Մարե՛, հերիք էսպես մնամ.
Հրաման տու ինձ՝ էրթամ սարեր, քարեր շրջեմ,
Գական ու հավք կարկեմ,
Մարդերու շարք մտնեմ:
Քառսուն-Ճուղ-Ծամ ասաց.— Մհեր,
Պստիկ ես, չես կարնա գնա,
Քանի մի տարի համբերե:
Ամա Մհեր ասաց.— Մարե՛,
Քանի մեր տուն դեռ մարդ չկա՝
Դևեր մեր տան վերա տի գան, վնաս տի տան:
Աղեկ է, որ հիմիկվանե պատրաստ ըլնեմ՝
Թըշնամու դե՛մ կայնեմ:
Դեղձուն Ճուղ-Ծամ տեսավ՝ չի կարնա վեր տղուն,
Հրաման էտուր:
Էդ ժամանակ Մհեր գնաց որսի.
Կը պտտվեր սար ու դաշտեր,
Ցերեկ կ'էրթար՝ որս անելու,
Գիշեր կը գար՝ իր տեղ կը քներ:
Ոտքով կ'էրթար կը գար—ձի-բան չըկար:
Օր մի Մհեր շատ էր լարե,

Աղվեսներու հետև շատ էր վազե,
Էլ չըկարցեր էր բան բռնի:
Իրիկուն էկավ հերսոտ, դադրած,
Իր ձեռաց փետ թալեց գետին:
Քեռին հարցուց.— Տըղա, հորի՞ ես հերսոտե:
Մհեր ասաց.—Քեռի Թորոս,
Անտե՛ր մնա էդ տեսակ որս,
Էս մեկ օր ես շա՛տ եմ վազե,
Էս մեկ օր ես շա՛տ եմ լարե...
Գազաններ որ կան՝ կը փախնեն,
Չեմ կարնա հասնի լարելով.
Հեռվանց նետ-աղեղ կը թալեմ՝
Չի՛ հասնի, դարդա՛կ կը դառնամ:
Ա՛խ, քեռի, իմա՛լ կը դադրեմ...
Ինք որ մարմնով ծանրացեր էր՝ վատ կը վազեր.
Որ կը վազեր՝ չոքերեն հետ հող կը խրվեր:
Քեռին ասաց.— Դու, իմկընի՛, Սասունա ծուռ,
Սասունցիք բոլոր ծո՛ւռ տ'ըլնեն.
Ախար մարդ էլ ոտքո՛վ վազի:
Ձանավարներ ձեռքո՛վ բռնի:
— Հապա՛, քեռի,— ասաց Մհեր— ինչպե՞ս անեմ:
Մհերի մեր վերցուց, ասաց.— Տղաս, Մհեր,
Գորգիկ իշխան մի կա Բիթլիս քաղաք,
Հրեղեն ձիեր շատ կա էնոր. ինքն էլ մեկ բարեկամ.
Էլիր, գընա իր մոտ:
Հոգին չ'էլնի, գընա, քեզ ձի՛ մի առ, հեծիր:
Առ. բեր, ձի՛ով գնա որսի:
Մհեր ասաց.— Նանե, մեկ-էրկու հաց պահե,
Լուսուն պիտի էլնեմ էրթա՛մ,
Էրթա՛մ պիտի Բիթլիս քաղաք:

5

Լուսուն Մհեր էլավ,
Առավ էրկու կորեկի հաց—դրավ գոտին,
Ծառ մի քաշեց՝ դրավ ուսին, ընկավ ճամփա.
— Բիթլիսու դաշտ, ո՞ւր ես հապա, էկա՛ քեզի:
Գնաց իջավ Մառընկա դաշտ,
Գնաց հասավ Բիթլիս քաղաք.
Մըտավ թաղի գըլուխ:

Ջահել տղեք կը խաղային թաղի գըլուխ:
Ջահել տղեք տեսան՝
Մարդ մի կը գա—խոշո՛ր մարդ մի—
Դրած ուսին խոշոր ծառ մի,
Խոշոր գերան, որ կը թալեն կտրի վերան:
Տղեկներ որ էդ մարդ տեսան, ասին.
— Իդա հըմլա էլ մա՞րդ կ՚ըլնի,
Գերան դրե ուսին, կ՚էրթա:
Մհեր հասավ էնոնց, հարցուց.
— Տղեկներ, Գորգիկ իշխանի տուն ո՞ր մեկն է:
Տղեք թափվան էնոր բոլոր՝ ասին.
— Արի տանենք քեզի Գորգիկ իշխանի տուն:
Առան բերին Գորգիկի դուռ:
Մհեր իր փետ դրեց գետին ու մտավ ներս:
Տեսավ՝ Գորգիկ իշխան նստուկ է իր սենեկ,
Իր իշխաններ շուրջ բոլորած՝ վրուց կանեն:
Մհեր բարև տվեց:
Գորգիկ իշխան էնոր բա՛րև չա՚ռավ.
Մհեր տեսավ, որ էն վերն է նստուկ, ասաց.
— Կ՚ըլնի-չ՚ըլնի, է՛դ է Գորգիկ իշխան:
Մհեր գնաց, բռնեց էնոր թևեն,
Վերցուց, կանգնեցուց իր տեղեն,
Քիչ մի իշխանի թև քամեց:
Գորգիկ գիտցավ՝ իր թև կոտրեց յոթը տեղով:
Դարձավ, ասաց.— Տո, կտրիճ, հո՞ւստ ես դու:
Մհեր ասաց.— Սասնեցի՛ եմ:
— Ո՞ր մեկի որդին ես, տըղաս:
Ասաց.—Սանասարի՛:
Գորգիկ ասաց.— Ա՛խ, դու բարո՛վ էկար, տըղա՞ս,
Ա՛խ, դու հապա՛ր բարով էկար...
Գորգիկ կեղծավորութեն արավ.
Էն Մհերի ուժ որ տեսավ՝
Ուզեց Մհերի սիրտ շահի,
Ասաց.— Հա՛ց բերեք տըղին:

Մհեր նստավ, հանգստացավ,
Իր հաց կերավ, պրծավ:
Ու նոր Գորգիկ հարցուց.— Անունդ ի՞նչ է, տղաս:
Տղան ասաց.— Մհեր:
— Մհե՛ր, տըղա՛ս, իմա՞լ էղավ,

Որ դու դե՛մ էկել ես ինձի:
Ասաց.— Քեռի, էնպես մարմնես ծանրացե՛ր եմ՝
Երբ որ սարեր որսի կ'էլնեմ՝
Չեմ կա՛րնա գել-գալաններու հետև հասնեմ.
Կը փախնե՛ն, կ'ապատվե՛ն ձեռքես:
Էկա՝ որ ձի՛ մի տաս՝
Հեծնեմ, ձիո՛վ էրթամ որսի:
Կը տաս՝ դե տուր. չե՞ս տա՝ հիմիկ կ'էլնեմ կ'էրթամ·

Գորգիկ դարձավ, ասաց.
— Մհե՛ր ջան, արևո՛ւդ մեռնիմ,
Ուլաձդ ձի մի չէ՞,
Տա՛ս ձի քեզի մատաղ ըլնի:
Քառսուն ձի կա գոմըն կապուկ.
Քառսունից ո՛ր մեկ հավնեցիր՝
Էն էլ ա՛ռ, տար քեզի, հեծի՛ր:

6

Էդ իրիկուն քնան, առավոտուն էլան.
Առավոտուն որ էլան, հաց բերին.
Հաց որ կերան, պրծան,
Գորգիկ մշակին կանչեց, ասաց.
— Մըշա՛կ, կը տանես իմ Մհեր, շանց կը տաս թալվեն
Ձիերու միջեն ո՛ր մեկ ձի Մհեր սրտով կը հավնի,
Կը տաս թող տանի...
Մհեր մշակի հետ գնաց թավլեն.
Տեսավ, ի՞նչ տեսնի.
Քըսան ձին մե՛կ շարքին կապուկ,
Քըսան մեկէ՛լ շարքին կապուկ —
Քառսունն էլ՝ սադափե թամքով՝
Քառսունն էլ՝ պողպատե սանձով:
Մըշակն ասաց.— Մհեր ջան, ես մեռնի՛մ քեզի.
Ո՛ր մեկ ձին որ սիրտդ կուզի՝ քաշի ու տար:
Մհերն անցավ էդ ձիերու էրկու շարքով՝
Ո՛ր մեկ ձիու մեջքին վարկեց,
Ձին, փոր գետին առավ, կըվեց:
Քառսուն ձին էլ փորձեց Մհեր՝

Դարձավ, ասաց.— Ինձ պետքական ձի՛ մի չկա:
Էդոնք ես տանեմ՝ ի՞նչ անեմ:
Իմ ձեռ, որի մեջքին կարկի՝
Ամենի փոր իջավ գետին.
Իմ տակ կը դիմանա՞ն ըսկի:

Մհեր էկավ, որ դուրս էլնի դռնեն՝
Մեկ էլ տեսավ՝ գոմի միջին,
Էրկու տարվա կլոր, փռչոտ,
Պստիկ քուռակ կը վավվրտեր:
Մհեր միտ վե՛ ասաց.
— Ինձի պետքական ձի չըկա.
Կայնի՝ գո՛փ մի կարկեմ քուռկին,
Քուռակ փետնա—էլնեմ՝ էրթամ:
Էդ է՛լ ինձ մեկ անուն կ՚ըլնի:
Ասաց, գոփ մի կարկեց քուռկի մեջքին:
Էդ գոփ քսվավ քուռկի գավկին:
Քուռակ թռավ, կտաս ձի կտրեց,
Ջուխտ մի քացի էկարկ պատին.
Թե Մհերի՛ն առներ քացին,
ԸկՄհեր կը թալեր Սասուն:
Քըսվավ քացին թրքընոցի քարին
Ու քար կրակ տվավ: Մհեր ասաց.
— Խա՛չ, թե ինձի վերցնո՛ղ կա՝ էդ քուռա՛կն է.
Վերցնող չըկա՝ էդ քուռակն է:
Ախր ես իմ ուժ լա՛վ գիտեմ:
Ջարկ որ կարկի՝ քուռակ իր տեղը տի փետնար:
Կէրթամ՝ թե կէդ քուռակ տվե՛ց—կը տանեմ.
Ջըտվեց՝ կաթի թողնեմ— կ՚էրթամ:

7

Մհեր էլավ, էկավ սենեկ, նստավ:
Գորգիկ իշխան հարցուց.
— Մհեր ջան, ո՞ր ձիուն հավնար:
Ասաց.— Գորգիկ իշխան, քո ձիաներ
Քեզի թող բումբառաք ըլնեն.
Ես չեմ ուզի ձիերուդ տեղ խոռեմ.
Կը տա՛ս՝ փռչոտ քուռա՛կն ինձ տուր.
Որ էդ քուռակ չըտաս՝

Զաթի թողնեմ, կ'էրթամ մեր տուն:
Քեռին ասաց.— Մհե՛ր, տըղաս, ախըր ամո՛թ է.
Ախր ես Գորգիկ իշխա՛նն եմ,
Էդ քուռակն ի՞նչ է, որ տանես:
Մարդեր տ'ասեն.— Սանասարի տղան էկավ,
Գորգիկ իշխան խնայեց խորոտ ձի տար նվեր:
Մհերն ասաց.— Չէ՛, քեռի, չէ՛,
Էն քուռա՛կն եմ քեկնե ուզե.
Կը տաս՝ հո կը տանեմ—
Չըտաս՝ կը թողնեմ, կ'էրթամ:
Գորգիկ իշխան ասաց.
— Տըղա, դե, դո՛ւ գինաս,
Հո կոռովեն չ'ըլնի, դե դո՛ւ գինաս,
Որ կը տանես՝ կէդ քուռակ, տար:

Մըշակ գնաց, պախուց դրեց քուռակի վիկ,
Գոմեն կէդ քուռակ հանեց դուրս,
Պախուց տվեց Մհերի ձեռ:
Մհեր քաշեց՝ քուռակ տեսնի,
Տեսավ՝ քուռակ չ'էրթա:
Պարան ուզեց—բերին:
Բռնեց քուռկի չորս ոտ ամուր կապեց իրուր,
Գերան մտուց մեջ ոտներուն,
Վերցուց, դրեց ուսին, ասաց.
— Քեռի՛, դե մնացի՞ր բարով,
Աստված քո տուն թող շեն պահի:
Վեր էլավ Մհեր, ընկավ ճամփա:
— Ո՞ւր ես, Սասուն, էկա քեզի...
Բիթլիս քաղքի ճժեր, մարդեր սատանա են.
Հավաքվեցին շուրջ Մհերին,
Հո՛ւ-հո՛ւ կանեն, բո՛ւ-բո՛ւ կանեն,
Կծաղրեն, որ մարդ շալկեր է ձի—կը տանի:
Մհեր էդ ծաղրին տեր չեղավ,
Էլավ, էկավ, հասավ Սասուն:

8

Քեռի Թորոս տեսավ Մհեր կը գա՝
Քուռակն էնպես ուսին դրած:
Ասաց.— Տըղա՛, փրչոտ քուռակն

Անջա՞խ առար էն Գորգիկից—
Չըկարցա՛ր խորոտ ձի մ՚առնես:
Մհերն ասաց.— Քեռի՛,
Ճի՛շտ էր, ինչ կ՚ասեիր.
Գորգիկ իշխան ուներ կապուկ քառսուն ձի.
Անտերներու ո՛ր մեկին որ ձեռ կպցուցի՝
Կըկավ, իր փոր կարկեց գետին:
Պետքական ձի մի չըկա՛ր մեջ:
Ասաց.— Քեռի, գո՛փ մի կարկի՝
Էդ քուռակի գավկին քսավ.
Քուռակ թռավ, տաս ձին կտրեց,
Ջուխտ մի քացի կարկեց թրքնոցի քարին—
Թրքնոցի քար կըրակ տվավ:
Քեռին ասաց.— Որ էդպե՛ս է,
Էդ քուռակ բե՛ր, հրեղեն է:
Էդ քուռակ ես լա՛վ մի պահեմ,
Իրեք ամիս որ լրանա՝ նո՛ր կը հեծնես:

Քեռի Թորոս պայտար էր—ձի լավ կ՚ճանչնար:
Առավ, իրեք ամիս պահեց,
Քուռակն իր տեղն առավ,
Ու նոր տվավ՝ Մհեր հեծնի:

Մհեր որ էղավ ձիավոր՝
Սասուն ոտի տակ տվավ.
Ու կը հեծներ կուր ձին,
Ինչքան ջին-ջանավար ըլներ, կը բռներ,
Կը բերեր էդ իր որս՝
Սասունցոց վերան կը ցրվեր:
Յոթ տարի Սասուն պահեց որսով:

9

Էղավ մեկ օր՝ որ Սասնա մեջ
Հացի մեծ թանկություն ընկավ.
Մհեր տասնհինգ տարեկան էր:
Ժողովուրդն էլավ, էկավ լցվավ Մհերի դուռ,
Ասաց.— Մհեր, աստծո՛ւ սիրուն,
Մենք սովամահ տի կոտորվենք,
Արի մեկի ճա՛ր մի գտի:

Մհեր ասաց.— Ես չե՛մ գիդի.
Էրթամ քեռուն ասեմ.
Էնի թ' գիտնա՝ էս թանկությունն ինչի՞ց կ'ընի:

Էլավ, գնաց քեռուն,
Ասաց.— Քեռի, թանկությո՛ւն է.
Կարնա՞ս մեկի ճար մի գտի:
Քեռին ասաց.— Մհեր, որդի,
Ի՞նչ ճար գտնեմ. էրկիր հաց չըմնաց:
Թե հաց ընի՝ քո հոր ամբարներ տի ընի:
Մհեր հարցուց.— Ինչի՞ց է՝ հաց չըկա.
Կարկու՞տ վարկե, քամի՞ն քաղե,
Տո՞թն է տվե...
Քեռին ասաց.— Չէ՛, էդուց չէ:
Մեր էրկիր վար ու ցանք քիչ է.
Է՛ծ կը պահենք, տավար ու էշ,
Մեր հաց Շամա, Հալեպա կըգար.

Չէ, մեկ առյուծ է լուս ընկե.
Երբ սար չութի էրթանք՝ մեկ կո՛ւլ կը տա:
Ճամփան կտրեց ճամփորդներեն.
Գալող ու էրթացող հատավ.
Մարդ չի կարնա ճամփա էրթա՝
Շամից էստեղ, էստեղից Շամ.
Էդո՛ր համար հացի պակաս
Ու թանկություն ընկավ աշխարք:
Մհերն ասաց.—Քեռի՛,
Առյուծն ի՞նչ է. իմա՞լ առյուծ:
Ասաց.— Գաղաններու ջո՛ջն է առյուծ. մարդիկ կ'ուտի:

Մհեր հարցուց.— Հեռվա՞նց կ'ուտի,
Թե՝ մոտենաս, ու նոր կուտի:
Քեռին թե՝ մոտենաս ու նոր:
Մհերն ասաց.— Էդպե՛ս է՝ ես լուսուն կ'էրթամ:
Քեռին ասաց.— Որդի, չ'էրթաս, քեզ կը ջարդի:
Ականջ չարավ, գնաց:
Առավոտուն վիր ոտ-որ ուլանգուն հասավ,
Ամե՛ն, ինչքան ձի հեծնող կար՝
Հեծան՝ Մհերի հետ գնացին:

Գնացին էն առյուծին:
Առյուծ տեսավ՝ մա՛րդ մի կը գա՝
Էլավ, էկավ իրեն տեղեն:
Պոչը գետին կը տփտփեր.
Թոկ ու դուման կը բարձրացներ.
Էլավ՝ էկավ Մհերի դեմ:
Մհեր ասաց իրեն կորքին.
— Էդ ի՞նչ է, որ մեր դեմ կըգա:
Ասին.— Առյուծ է՛դ է, որ կա:
Ասաց.— Ո՛վ որ էդ առյուծին թրով կարկեց՝
Ես կը թողնեմ առյուծն իր տեղ,
Ետ կը դառնամ էնոր վերան ու կը սպանեմ վէնի:
Դարձավ, ասաց.— Առյուծի մեր
Աստված կանչեց՝ ծնավ էնոր.
Իմ մե՛րն էլ ինձ, աստված կանչեց, էնպե՛ս ծնավ.
Ես իմ ասպապը տի հանեմ,
Կուշտի՛ կպնեմ առյուծի հետ:
Մհերի հետ գնացած մարդիկ հեռու կանգնան.
Մհեր մենա՛կ գնաց:
Գնաց, ինք ու առյուծ առան իրար:
Մհեր կանչեց.— Հացն ու գինին, տեր կենդանին:
Կանչեց, մի ձեռ թալեց էդ առյուծի վերի՛ ծնոտ,
Մյուս ձեռ թալեց ներքի՛ ծնոտ,
Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,
Արե՛ց էնոր էրկու կտոր:
Մեկ դրեց ճամփու էս դին, մեկէլ՝ էն դին:

Իր հետ գնացած մարդեր էկան,
Կայնան Մհերի մոտ:
Մեկ մարդ էլ շուտ խաբար հասցուց Սասուն,
Մհերի մոր, թե.— Աչքդ լուս ըլնի,
Մհերն առյո՛ւծ սպանեց:
Զուր հիմիկ Մհեր էր,
Հիմիկվնե հետ էղավ Առյուծածն Մհեր:

Մհեր դարձավ, էկավ Սասուն:
Ու սասնեցիք էդ ժամանակ
Էկան Մհերի դուռ, ասին.
— Էստուց հետև մեր տեր դո՛ւն ես,
Մեկի կառավարի:

Երբ սասնեցիք Մհեր արին կառավարող՝
Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն տվեց էնոր
Քուռկիկ Ջալալին,
Թուր Կեծակին,
Գուտն կրեհին,
Գոտին ի մեջքին,
Կապան ղադիֆեն:
Հեծավ Մհեր Քուռկիկ Ջալալին,
Առավ ի ձեռ Թուր Կեծակին,
Շրջեց իր հոր հողեր:
Ու թշնամիք կորագլուխ էլան էնոր առջև:

10

Մնաց: Օր մի Քեռի Թորոս, իշխան մարդեր
Ժողվան, նստան Դեղձուն-Ծամի սենեկ, ասին.
— Սանասարի տղեն հորի՞ չես կարգի դու:
Խորհուրդ արին:
Լուսուն Քեռի Թորոս, Հովան ու կտրիճներ
Ամեն ձի մի հեծան,
Ընկան ճամփա, գնացին:
Գնացին Մելքոն թագավորին:
Մելքոն թագավոր հարցուց.
— Ապա ինչի՞ էկեր եք դեմ ինձի:
Քեռի Թորոս ասաց.— Թագավոր,
Էկեր ենք՝ գործ աջողեցուս:
— Ի՞նչ գործ,— հարցուց:
Քեռի Թորոս ասաց.
— Թագավոր, քաղքեն ըլնի, գեղեն ըլնի,
Մեկ լավ աղջիկ գտնես,
Տանենք, պսակենք Մհերի վերան:
Մելքոն ասաց.— Էլեք էրթանք Մանածկերտ,
Թևաթորոսի աղջիկ՝ Արմաղան ուզենք Մհերին:

Էլան Մելքոն թագավոր ու վզիրներ,
Էլան Քեռի Թորոս ու կտրիճներ,
Գնացին Մանածկերտու բերդ:
Մանածկերտու բերդ Թևաթորոս կա.
Կայնան Թևաթորոսի դուռ
Ու հարցուցին, թե.— Թևաթորոս տա՞նն է:
Ասին.— Թևաթորոս գնացեր է Վան:

Ագրատգահ գնացին Վան
Ու հարցուցին.— Թևաթորոս հո՞դ է:
Ասին.— Չէ՛, բերդի հիմ թալեց,
Իր հաց կերավ, գնաց Արվրում:
Գնացին կեսավուր Արվրում
Ու հարցուցին էնտեղ.— Թևաթորոս հո՞դ է:
Ասին.— Բերդի հիմ թալեց,
Կեսօր կերավ ու գնաց Կարս:
Գնացին ի Կարս:— Թևաթորոս հո՞դ է:
Ասին.—Բերդի հիմ թալեց,
Հրամեն կերավ ու գնաց բերդ Մանազկերտու:
Էկան նորեն հասան Մանազկերտու բերդ:
Համբավ տարան Թևաթորոսին,
Ասին, թե.— Մելքոն թագավոր,
Քեռի Թորոս, Հովան ու կտրիճներ
Կո, հյուր կը գան քեզի:

Էն էլ— մարդ ուղարկեց առաջ, առավ, գընաց:
Իշխանների տեղ ջո՛կ սարքեց,
Կտրիճների տեղ ջոկ:
Էկան, նստան ու հաց կերան.
Հաց որ կերան, պրծան, հաց վերուցին,
Թևաթորոս հարցուց Մելքոն թագավորին.
— Է՛, թագավոր, բարով էկաք,
Ի՞նչ գործ պատահավ, որ էկաք:
— Հապա, էկեր ենք քո օջախ,
Հետ քո խնամություն անենք:
— Ի՞նչ խնամություն է,— ասաց:
Ասին.— Քո աղջիկ, Արմաղան,
Մեր Մհերին տի տաս:
Ասաց.— Մհեր ո՞րիդ տղան է:
Ասին.— Սանասարի՛ տղան է:
Ասաց.— Մելքոն, Քեռի Թորոս, Հովան,
Երբ որ դուք էկեր եք ինձի՝
Աղջիկ իմ կը տայի ձեզի փեշքեշ,
Ամա կ'ընի էս յոթ տարի
Արմաղան Խլաթի տեր, Սիպտակ Դևն տարե գերի,
Թե գերութենե ապատ անի— Արմաղան Մհերին հալալ:

Էսոնք էս վրուց թող անեն՝
Մենք խաբար տանք Սիպտակ Դևեն:

Էդ ժամանակ Սիպտակ Դև Խըլաթ թագավոր էր.
Լսեր էր, որ Մհերի պատիվ
Օրեօր շատ կը բարձրանա մեջ աշխարքին:
Ասաց.— Օր մը չէ, օր մ'ըլնի
Մհեր ինձի վնաս տի տա.
Խըլաթ պիտի առնի:
Ու Սիպտակ Դև էլավ, թուղթ մի գրեց,
Տվեց Քամի փահլևանին,
Քամին էդ թուղթ տարավ Սասուն:

Մհեր էդ օր էլեր էր սար՝ որսի.
Մեկ էլ էդ փահլևան Քամին
Էնոր առաջն էլավ, ասաց.
— Օհո՜... բարո՛վ, բարո՛վ, Մհեր,
Էնչափ արդեն դու ջոջացար,
Որ կը գաս սար ո՛րս անելու:
Գիտցած ըլնես՝ որ Սիպտակ Դև քեզ կը կանչի կռիվ:
Էն թուղթ տվեց Մհերի ձեռ.
Մեջ թղթին գրուկ էր.
— Արի ինձ հետ կռիվ:
Մհեր կթուղթ առավ, ասաց.
— Աղեկ. պատրա՛ստ կաց, կո, էկա:
Թուղթ բերող դև ասաց.
— Մհեր, խնդիր ունեմ.
Դու բա խտ տաս ինձ, որ ինչ ասեմ՝ անես:
Մհեր պատասխանեց.— Իմ տված խոսք— խո՛սք է.
Թե դուք դև եք,
Մենք էլ Սասնա կտրիճ փահլևան ենք:
Մեկ սուտ չկա. ասա, ի՞նչ կուզես:
Ասաց.— Գիտցած ըլնես,
Մենք Սիպտակ Դևըն չենք սիրի.
Կուզենք՝ գաս, ըսպանես.
Ու ազատվենք էնոր ձեռեն:
Մհեր ասաց.— Աղեկ:
Մհեր ետ դարձավ տուն,
Մոր ձեռ պագեց,
Ասաց.— Գիտցած ըլնես,
Սիպտակ Դև գիր մի ուղարկե՝

Ինձ կը կանչե կռիվ:
Քառսուն-ճուղ-Ծամ Դեղձուն ասաց.
— Մեռնե՛մ քեզի, դուն տըղա ես.
Իր հետ ինչպե՞ս կարնաս կռվի:
Էն ամեն թագավորներեն վորընդեղ է.
Էնոր վերան թուր չի բանի:
Մհեր, դու քիչ մի համբերի,
Զուր մեծանաս ու նոր էրթաս կռիվ:
Ասաց.— Մարե, համբերելն աղեկ է,
Ամա ես խոսք տվի Դևին, տ'էրթամ:
Քառսուն-ճուղ-Ծամ ասաց.— Աղեկ,
Գընա, ամա էս իմ խրատ լսի.
Դու Քուռկիկ Ջալալին հեծիր,—
Գիտնա՛ս՝ Սանասարի ձին է,
Ամեն շնորհքներով լեցուն,—
Սանասարի վրահ հագիր,
Պողպատ ջվմեն քաշիր քո ոտք,
Էրկաթե գուտն դիր քո գլուխ,
Նետն-աղեղ ու կախլան քամակըդ առ,
Զգուրկ բռնի քո ձեռ,
Կապի Թուր Կեծակին, քըշի:
Էդ խրատներ առնելուն պես,
Մհեր շուտ մի հագավ իր հոր վենք ու վրահ,
Թռավ Քուռկիկ Ջալալու քամակ, քշեց:

Քշեց Մհեր էտա տեղեն,
Գնաց հասավ Սիպտակ Դևի յայլան,
Մեկ բարձրիկ սարի մի գլուխ:
Ժամանակ գարո՛ւն էր.
Սար հապար ծաղկունքով, ավելուկով լեցուն էր:
Էն ժամանակ Սիպտակ Դևըն իր մարդերով
Ցայլա էին էկած էդ սար:

12

Մհեր մինչև հասավ էդ տեղ՝ էնոր ծարավ բռնեց.
Ընկավ սար-ձոր՝ աղբուր գտնի.
Մեկ էլ տեսավ՝ երկու դև-ածդահա
Աղբրի մ' վերա, գոմշու տիկ մի ջրով լցե՝
Կայներ էին էդտեղ:

Մհեր էնոնց բարև էտու, ասաց.
— Կը թողնե՞ք աղբրից պուտիկ մի ջուր խմեմ:
Դևեր ասին.— Էսա աղբուր Սիպտակ Դևի աղբուր կ'ասեն.
Էնորեն վատ՝ հրաման չկա
Մարդ ջուր խըմի էսա աղբրից:
Մհեր ասաց.— Աղբե՛ր ջան,
Ձեվի խնդիր կանեմ—պուտիկ ըմ ջուր տվեք ինձի,
Խըմեմ, էրթամ ճամփա:
— Չէ, չէ,— ասին.— Սիպտակ Դևըն երդվեցուցե,
Մեկ պահապան դրե էստեղ,
Որ օտար մարդ գալու ըլնի, էնոր իմաց տի տանք:

Էլ Մհերի համբերություն հատավ,
Հասավ, վարկեց էնոնց,
Էլավ Մհեր, գնաց վեր աղբրին,
Մեկ ըսպանեց, մեկ վիրավոր էղավ, փախավ:
Կուշտ մի էդ ջուր խմեց,
Փախած դևի արնի հետքով գնաց,
Հասավ մեկ անվեր-վիրի տեղ, այրի մի մոտ:
Էն այրից բոց կը թալեր դուրս.
Էն այրի դուռ, ծառին կապած՝
Հուրի-հրեղեն աղջիկ մի
Նստե վիրավոր Դևի կուշտ,
Էնոր արունըն կը սրբեր:
Մհեր հասավ, բռնեց էդ Դև,
Էնոր ձեռ-ոտ կապեց, դրեց քարի մի տակ,
Ու աղջկա կապեր քանդեց:
Էլավ էդ հրեղեն աղջիկ կայնավ,
Տեսավ՝ էնպե՛ս խորոտ, էնպե՛ս կըտրիճ ըմ է Մհեր.
Խելագնաց էլավ վերան.
Էնչա՛փ, որ էնոր սիրտ ճըխաց:
Շուտ մի ասաց.— Հե՛յ, դու, կտրիճ,
Հավքն իր թևով, օձն իր պորտով
Չեն կա՛ռնա գա էստեղ,
Դու ինչպե՞ս էկար:

Մհեր հարցուց.— Հապա ինչպե՞ս էղավ,
Որ դու էկար էսա սարեր:
Աղջիկ խորունկ ախ մի քաշեց,
Ասաց.— Ախ-վա՛խ, մի՛ հարցուցի:

Էս յոթ տարի կ'ընի
Սիպտակ Դևի ձեռ կը տանջվեմ.
Էդ անիրավ Սիպտակ Դևը
Էկավ վեր մեր երկրին կռիվ.
Էդ պահ ես խաս բախչեն սեյր կանեի:
Էկավ անկարծ՝ ինձ առնել փախնել մե՛կ արավ:
Բերեց էստեղ, ուզեց ինձ կին առնի.
Ամա աստծու կամքով իմ ուժ պատավ.
Ես էնոր հետ չ'ապրա:
Ես կույս եմ չուր էսօր:
Գիտցած ընես.— ասաց.— ես էրապ մ'եմ տեսե.
Էն էրապի՛ մեջ ինձ ասին,
Որ շատ գընաց ու քիչ մնաց.
Մհեր անունվոր կտրի՛ճ մի տ'էլնի,
Սիպտակ Դև տի սպանի
Ու ինձ ապատ անի էնոր ձեռքեն:
— Ո՞ւր է ապա Սիպտակ Դև.— հարցուց Մհեր:
Ասաց.— Գնացե Սև Սար՝ ուխտի.
Էլավ ինն օր, էսօր ետ տի դառնա:
Էնոր զորություն սև եվան մի վերան է,
Էն սև եվ կը հեծնի՝
Կ'էրթա ամեն աշխարք,
Կը պտտի, ավերություն կանի:
Էնոր առաջ չի կարնա մարդ կայնի:
Մարդ մ'որ էն սև եվ ըսպանի՝
Նոր Սիպտակ Դևը կը հաղթվի:

Մհեր էլ բան չ'ասաց: Թռավ իրեն ձիու քամակ,
Ու ձին քշեց Սև Սար:
Մեջ Սև Սարին Մհեր ճահճուտ տեղ մի տեսավ.
Էն ճահիճեն սև եվ մ' էլավ իր դեմ:
Մհեր ասաց իր աղոթք,
Քաշեց վԹուր Կեծակին,
Խոթեց էդ եվան փոր:
Եվ բառաչեց, ծառս էլավ վեր էնոր,
Ընկավ գետին, խատավ:
Մհեր դարձուց իր ձին,
Էկավ էն այրի դուռ, նստեց:

Սիպտակ Դևը կերե, խմե,
Իր քեֆ հասուցե, նոր ծարավացեր էր,
Իր աչք բցե ճամփա, ջուր կ'աչքեր.
Շատ աչքեց, քիչ աչքեց,
Տեսավ, ջուր բերող դևեր չեն ի՛գա:
Մտածեց, ասաց.— Կա՛-չկա,
Մեկ վորավոր մարդու մ' են պատահե էնոնք:
Շուտ մի էլավ-հեծավ քամու ձին,
Քըշեց, գնաց դեհ էն աղբուր:
Ճամփին մեկ էլ տեսավ՝ այրի առաջ
Սարի մը պես մարդ մ' է նստե
Ու հրեղեն ձի մ'էլ թողե, կ'արածի:
Սիպտակ Դև գոռաց, ասաց.— Է՛յ, հողածին,
Հավքն իր թևով, օձն իր պորտով
Չեն կա՛րնա էս տեղ պտտվեն,
Դու ի՞նչ սրտով էկե,
Հասեր ես չուր էստեղ:
Ասաց.— Կանչեր էիր, կո՛, Մհե՛րն եմ,
Էկա վեր քեզ կռիվ: Դե, էլիր, կռվենք:
Ինչ որ ձեռնեդ կըգա, արա:

Սիպտակ Դև որ էդ խոսք լսեց՝
Սարսափ մի վինք բռնավ.
Ձեռ-ոտ ահու թուլցան:
Ամա սուտ ուրախութենով ասաց.
— Վայ դու, Մհեր, բարո՛վ էկար,
Էլիր երթանք վրանի տակ,
Ուտենք, խմենք, չուր լուսանա՝
Տեսնենք՝ աստված որո՞ւս կը տա:
— Չէ՛,— ասաց Մհեր,— մեր մեծ պապեր
Մեզ էնպե՛ս են խրատ տվե,
Որ թշնամու դեմ էլնելո՛ւն պես՝ տի կռվենք...

Սիպտակ Դևն ու Ջոջ Մհեր ձիեր քշին վեր իրարու,
Իրեք օր ու իրեք գիշեր իրարու հետ կռիվ արին:
Մհեր որ իր ձեռ կը թալեր Սիպտակ Դևին,
Մհերի ձեռ խոր կը խրվեր էնոր մարմին.

Գիտես թե՝ խրմորի՛ց ըներ էդ Սիպտակ Դև:
Վերա իրեք օր Ջոջ Մհեր էնոր սպանեց,
Արմաղանին գավակ առնել ու գնալ մեկ արավ:

14

Իրիկուն Մհեր իջավ Սասուն.
Ու հալա նոր Քեռի Թորոս, Ջենով Հովան
Դարձեր էին տուն:
Խաբար ղրկեցին Թևաթորոսին,
Թե Մհեր քո աղջիկ ապատե:
Թևաթորոս ու իր իշխաններ հեծան ձիանք,
Էկան, հասան Սասուն,
Էն հուրի Արմաղան բերին
Պսակեցին վեր Մհերին:
Էսօր համար բերին նռան գինին ու հաց դրին,
Կերան, խմին, ուրախություն, խնդում էղավ,
Յոթ օր ու յոթ գիշեր հարսնիք արին:
Յոթ օրեն հետ Թևաթորոս, իր վալիրներ
Ետ դարձան, գնացին իրանց տեղ:

Խաբար հասավ Խլաթ,
Թե,— Մհեր Խլաթի Սիպտակ Դև սպանեց:
Խլաթու ժողովուրդ ուրախացավ,
Էլավ, էկավ Ջոջ Մհերի առաջ.
Առավ էնոր, իրենց քաղաք տարավ:
Էդ քաղաքի դևեր էլան Մհերի դեմ:
Կռվան, չէին թողնի՝ Մհեր մտնի քաղաք:
Մհեր քաշեց Թուր Կեծակին:
Ընկավ մեջ դևերուն, կարկեց, կամեն ջարդեց,
Դարձավ, էկավ Սասուն:

ՄԱՍ Բ

ՄԵԾ ՄՀԵՐԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

1

Դեռ կ'ապրեր էդ վախտ Մըսրա Մելիք:
Մհերի քաջություն լսեց Մըսրա Մելիք, կատղավ.
Չէ՞ Սասուն Մելքի խարջդարն էր:
Ամա Մհեր էդ բան չը գիտեր:
Մելիքին հարկ չէր ուղարկի:
Մըսրա Մելիք հրաման արավ,
Ասաց.— Գնացեք Սասուն.
Ասեք Մհեր իրեն պատրաստություն տեսնի:
Ես ու Մհեր տի կռվենք:
Մըսրա Մելիքի փահլևաններն էկան, ասին.
— Մելիք քեզնե կռի՛վ կուզի:
Մհեր ասաց.— Կռի՛վ կուզի.
Թող գա, տեսնենք ի՞նչ է կուզի մեզնե:

Էստեղ Զենով Հովան ասաց.—Մհե՛ր,
Էղեր ես խոջա մարդ, խելքի հասած,
Հեծի՛ր, գնա Մըսըր, Մըսրա Մելիքի մոտ:
Մելիքի հետ խաթրո՛վ վարվի,
Մարդ ճանչցիր, մարդու շփվիր,
Ու խնդրվի, թող բան մ'էլ մեր խարջ պակսեցու.
Մեր խարջ շատ է, չենք կարնա տա:
Մհեր դարձավ, ասաց.
— Աստված քու տուն չ'ավրի, Հովան,
Մենք չը գինանք, դուն էլ չ'ասիս,
Թե Մելիքին մենք խարջ կը տանք:

2

Ասաց Մհեր, էլավ հեծավ Քուռկիկ Ջալալին,
Քշեց, հասավ Մըսրա սահման:
Մըսրա Մելիք իր դուռ բինակ
Դաշտի վերան նստուկ էր:
Տեսավ հեռվանց ձիավոր մի կը գա.
Ինք խոջա ամրոց էր՝ նստած ձիու վերան:
Էդ ձին փոթորկի՛ պես կը գար:
Էկավ, հասավ: Մհեր բարև տվեց,
Մըսրա Մելիք էդոր դեմքիցը վարվնդավ:
Չը կարցավ, թե բարև առներ իրեն վախից:
Ու ինք միտ վե ասաց.
«Մագյար հըմլա մարդ է՞լ կըլնի աշխարհ»:
Ասաց.— Ձին բռնե՛ք:
Ծառաներ ձին բռնին:
Մհեր իջավ: Մըսրա Մելիք հարցուց.
— Դու ո՞ր տեղացի ես, կըտրիճ:
Մհեր ասաց.— Սասունցի՛ եմ:
Ես Սանասարի տղա՛ն եմ:
— Հայ-հա՛յ,— ասաց Մըսրա Մելիք,
Իմ հողի մեջ որ կը նստիք, դո՞ւք եք:
Մհեր դո՞ւն ես:
Ասաց.— Մհեր ե՛ս եմ:
Մըսրա Մելիք ասաց.— Կռվի՞ էկար վեր ինձ:
Ինչի՞ դուք իմ խարջ չեք իտար:
Սասուն որ կա—էդ հող ի՛մն է.
Առավոտուն իրար պարկենք:
Մհեր ասաց.— Ջարկենք:

3

Առավոտուն Սասնա Մհեր
Գընաց, էնոր դեմը կայնավ:
Սասնա Մհեր, Մըսրա Մելիք
Իրար դեմ ըսկսան կռվել...
Հո՛ղը էնոնց ոտքերու տակը կը հերկեր.
Ասես՝ գութնի՛ պես կը հերկեր:
Կես կասեին.— «Ամպեր են որ կը գոռգոռան».
Կես կասեին.— «Երկրաշարժեն սարե՛ր բլան»:
Էդոնց վարկ-վարկոցից աշխա՛րք կը դողդողար:

Ամեն մեկի գուրկն էր իրեք հարիր լիդրից.
Գուրկեր առա՛ն, տվի՛ն, կարկի՛ն մեկ-մեկէլի.
Հա՞ր գնացի՛ն, էկա՛ն, կարկի՛ն մեկ-մեկէլի,
Իրեք ցերեկ, իրեք գիշեր կռվան
Ու չըկարցան հաղթեն իրար:
Էն ինչ Մհե՛րն էր, ուժով էր,
Էն ինչ Մըսրա Մելիքն էր՝ խորամանկ էր, ֆանդով էր:

Մըսրա Մելիք տեսավ, որ Մհեր չի հաղթվի.
Տեսավ՝ Մհեր շատ ակնավուր, հաստա՛տ մարդ է.
Ասաց.— Սասնա Մհեր,
Քելե մենք մի պայման կապենք:
Ասաց.— Ես կասեի՝ մեջ աշխարքին
Ինձնեն ուժեղ մարդ մի չկար՝
Ամա ես ու դու չը կարցանք իրար հաղթենք:
Ասաց.— Ինչքան խարջ կա ձեկի՝
Ամեն ես քեկի բաշխեցի:
Էլ Սասունն ինձ խարջադար չի.
Քոնն են Սասնա ամեն հողեր,
Գընա, կե՛ր, խըմի՛, վայելե՛:
Մենակ՝ կռվի վախտ որ ըլնի՝
Մենք իրարու պառեկ ըլնինք:

Ասաց.— Թե ես մեռնեմ՝
Ձիմ թագուհին ու էրեխեք հանձնեմ քեկի.
Թե դո՛ւ մեռար՝ կքոն հանձնի մեկի:
Որ խալխ չ'ասի, մնացեր են որբ:
Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,
Պայման դրին, էղան աղբեր:
Մըսրա Մելիք էս բան մաքուր սրտով չ'ասաց.
Էն Մհերից վախցավ, կեղծավորցավ:

4

Մհեր ընկավ ճամփա,
Էկավ, հասավ Սասուն:
Տեսավ՝ Ձենով Հովան կանգնած է դուռ:
Մհեր բարև տվեց էնոր:
Ձենով Հովան բարև առավ, հարցուց.
— Մհե՛ր, լա՛ռ, ըսկի մեր խարջ պակսեցուցի՞ր:
— Հովա՛ն, դու ի՞նչ կ'ասես,— ասաց.—

Աղե՛կ մարդ է Մըսրա Մելիք.
Մեր հարկ բաշխեց ինձի,
Ասաց. «Սասնա հողեր թող ձեզ ըլնի»:—
Էդտեղ Մհեր ասաց.— Հովա՛ն, հապա գինա՞ս,
Մենք Մելքի հետ աղբեր էղանք:

Էդ օրեն անցավ ժամանակ մի:
Մհեր էնպես կը շախեր Սասուն,
Որ մարդ կը վախենար Սասնա մոտենա:
Հավք չէ՛ր կարնա իր թևով անցնի էն տեղեն,
Օձ չէ՛ր կարնա իր պորտով սողա էն տեղեն:
Սասուն շա՛տ առաջացուց Մհեր:

5

Ժամանակ մի վրա անցավ, Մըսրա Մելիք մեռավ:

Մըսրա Մելքի մահից հետո
Մըսրա Մելքի կին, Իսմիլ խաթուն,—
Էնիկ ջահել ու խորոտիկ կին մ'էր,—
Ասաց.— Ջա՛նըմ, ինձի մա՛րդ մի հարկավոր է՝
Որ էրկրին տիրություն անի,
Մեր իշխաններ խաղաղեցու:
Չ'էլնի՞նք՝ ճամփենք Մհերի մոտ,
Մհեր թող գա, ինձ հյուր ըլնի.
Թող իմ սենեկ պառկի,
Էնոր ցեղեն ինձ կտրիճ տըղա մի ըլնի:
Չէ՞ որ իմ մարդ կ'ասեր.— Իսմի՛լ,
Թե Մհերից ու իր ձիուց ջինս չը վերունք,
Մհերի ցեղ մեր քոքըն տի կտրի:

Մըսրա Մելքի կնիկ կ'էլնի ու ի՞նչ կանի:
Էրկու փահլևան կ'ուղարկի Սասնա քաղաք.
Էդ փահլևաններու ձեռով Իսմիլ խաթուն
Իր գոտիկ-լաչակ կ'ուղարկի,
Ու մեկ գի՛ր մի կըտա, կ'ասի.
— Տարեք էս գիր, տվեք Մհերի ձեռ,
Ասեք՝ Իսմիլ խաթուն
Բեկ կը կանչե «իր մոտ»:
Էլան էրկու փահլևաններ, վգիր բերին,
Բերին ու հարցուցին Մհերի տուն:

Մհեր որսի՛ էր գնացե.
Իրիկուն սարից էկավ՝
Փահլևաններ էնոր առջև էլան, ասին.
— Մըսրա խաթուն գիր մ՚ է ուղարկե,
Ուղարկեր է գոտիկ-լաչակ,
Քեզ կը կանչե «իր մոտ»:
Մհեր աչքեց գոտիկ-լաչակ,
Ասաց.— Էդ ի՞նչ խոսք է:
Տեսնե՛մ էդ թուղթ:
Փահլևաններ էդ թուղթ տվին Մհերի ձեռ:
Մհեր կարդաց, տեսավ՝ Իսմիլ խաթուն գրեր է.
— Արի՛, ինձ ա՛ռ.
Գոտիկ-լաչակ, կո՛, կ՚ուղարկեմ,
Էն որ Սասուն քո ձեռն է,
Մըսըրն էլ թող մնա քո ձեռ:
Թե դուն չըգաս՝ քան վիս շատ կընիկ ես:
Դուն Մելիքի հետ ուխտ ունիս,
Որ էնոր կնիկ-էրեխեք պահես:
Մհեր ասաց.— Է՛յ, կտրիճներ,
Աստծու ուխտ թող վեր ինձ ըլնի:
Էկեք, էրթանք մեր տուն.
Էկեք, փըշուր մի հաց կերեք,— գացեք,
Մըսրա խաթնին բարև տարեք:
Քառսուն ավուր վրեն կը գամ իր մոտ:
Տեսնեմ էդ ի՞նչ է կա:

Փահլևաններ էլան, գնացին Մհերի տուն,
Հաց կերան, էլան դարձան Մըսըր:
Մհեր մնաց մենակ:

6

Մհեր էդ գիր մեկ է՛լ կարդաց,
Գնաց Արմաղանին.— Կնի՛կ,— ասաց,—
Իսմիլ խաթուն թուղթ ուղարկե՝
Ինձ կը կանչե Մըսըր, տ՚էրթա՛մ:
Արմաղան ասաց.— Մհեր, մ՚է՛րթա.
Ինչի՞ կէրթաս.
Էնոր հետ գլուխ մե՞կ անես:
Իսմիլ քեզ տեսե՞ր է,

Որ իր լաչակ-գոտիկ կ'ուղարկե քեզ:
Գիտի թե՝ խորո՞տ ես, գե՞շ ես, ինչպե՞ս ես:
Ո՞ւր կը կանչե Մըսըր. էնի քեզ կը խաբե՛.
Մ'է՛րթա, էնի քո խորոտություն չ'ուզի.
Էնի քո իգիթությո՛ւն, քո կտրիճությո՛ւն է կուզի.
Քո կտրիճություն լսե, հասկացե,
Կը կանչե՝ քեզնե լա՛ճ ունենա:
Աղեկ բան չէ՛, մարդ, դու մ'է՛րթա:
Դու գէն կուզես, ինձի կը թողնես:
Ասաց.— Կընիկ, ես որ չ'էրթամ՝
Ես էլ էնոր պես կընիկ եմ.
Մըսրա Մելքին ո՛ւխտ եմ արե,
Իմ ճար ի՞նչ է. ես տի գնամ:
Մհերի կնիկ ասաց.— Մ'է՛րթա:
Մհեր ասաց.— Տ'էրթամ:
Մհերի կնիկ ասաց.— Մ'է՛րթա:
Մհեր ասաց.— Տ'էրթամ:
Մհերի կնիկ ասաց.— Մհե՛ր,
Իմ գոռ քո վրա չ'անցնի:
Ամա՝ թ'էրթաս—ես ուխտ կ'անեմ.
Իմ հե՛րն ես դու, իմ աղբե՛րն ես—
Քառսուն տարի դու իմ գողենք չըգաս:

7

Մհեր էլավ, գնաց Դեղձուն-Ծամի սենեկ,
Բարեկամնե՛ր կանչեց,
Կանչեց իշխան մարդե՛ր,
Կանչեց վարդապետնե՛ր, ասաց.
— Մըսրա թագավորի կընիկ ճամփեր է իմ էտև.
Ես տի գնամ, դո՞ւք ինչ կասեք:
Ջենով Հովան ասաց.— Ինչի՞ կ'էրթաս,
Մելքի կնիկ խորամանկ է,
Էն մեր դուշմանի կնիկն է,
Քեզի կը խաբե: Մ'էրթա,
Քեզի տղա չկա—դու կաց քո տուն,
Աստված բալքի քեզ տըղա մի տա:
Ամա ինչ իշխաններ, վարդապետներ էին, ասին.
— Մհեր, որ դու կ'էրթա՛ս,
Մենք չե՛նք ասի՝ մ'էրթա:

Մենք չե՞նք ուզի, թո՛ղ կՄըսըր,
Ուրիշ թագավորաց տեղ է՛լ հալա կ՚ուզենք կավթես:
Իսմիլ խաթուն որ կը կանչե՝ ինչի՞ չ՚էրթաս:
Էտա հապըր տեղ է՝ շուտ գընա... Մըսըր տիրապետի:

8

Էրեսունինն օր գընաց, մե՛կ օր մնաց:
Հա՛մա Մհեր էլավ ոտքի, պիտի էրթար,
Արմաղան ի՞նչ արաց.
Էլավ, սև մուշամբեն բերեց,
Քաշեց վեր էնոր սնարին:
Էլավ Մհեր, հեծավ իր ձին.
Զենով Հովան վակեց,
Կախվեց ձիու վզին, կուլա՛ր, կ՚ասեր.
— Մ՚է՛րթա, մ՚է՛րթա, էն անառակ խաբած է քեզ:
Շատ որ չարեն կտրավ՝
Մհեր իր գուրզ վերցուց.
Շարժեց վեր Զենով Հովանին:
Գուրզու քամին որ էկար Հովանին՝
Հովանի ուշ գնաց, Մհեր մնաց շիվար:
Իջավ ձիուց, լալով Հովանի սիրտ մաժեց, ասաց.
— Հովան, իմ մե՛ծ ախպեր, վե՛ր էլի, վե՛ր,
Ես հետ աստծու ուխտ եմ արեր:
Թե որ չ՚էրթամ՝ էդ իմ ուխտի տակ տի մեռնեմ:
Հովան էլավ նստավ, ասաց.
— Հոյ, հո՛յ, Մհեր, դու որ տ՚էրթաս՝
Զոր ճամփաներ քո առջև թող կանաչ դառնան.
Քո թշնամու ձեռք վեր քեզի չը բարձրանա:
Էլավ Հովան ու Մհերի ճակատ պագեց:
Մհեր հեծավ, քըշեց Քուռկիկ Ջալալին
Ու Զարբահար Քամին իր հետ տարավ:

9

Առավոտուն էլավ, էդ իրիկուն հասավ Մըսըր:
Մըսրա խաթուն էլե, նստե փանջարեն,
Էն իր աչքեր դեղե,
Էն իր բսկեր հանե դուս,
Էն մեկ ժամվա ճամփա խալիչեք փռե,
Փռե ճամփախներ, մոմակալներ վառե,

Կ'ուզեր, որ Մհեր իրեն սերի՛ գար.
Ու աչք բռներ էր ճամփա.
Տեսավ՝ հեռվանց ձիավոր մի կը գա.
Ձիավոր՝ մեծ ամրոց մ' էր՝
Նստուկ ձիու վերան
Ու ձին փոթորկի՛ պես կը գար:
Իսմիլ խաթուն ասաց.
— Կա թե չըկա՝ էդա Սասնեցի Մհերն է:
Մհեր էկավ, հասավ, բարև էտու:
Մհեր կայնեց, էնպե՛ս փանջարի առջև, ասաց.
— Իսմիլ խաթուն, ասա՛ քո խոսք:
Իսմիլ խաթուն ասաց.— Ջա՛նըմ, Մհեր,
Հյուրը էդպե՞ս կը կրուցի.
Իջիր ձիուց տակ, արի, էլիր էստեղ՝
Նոր ես քեզի պատմեմ:
— Չէ՛, չեմ գիտի, հիմի՛կ տ'ասես.
Ուխտ եմ արե հետ աստծուն.
Իմ ոտ կանգուեն չեմ հանի դուրս.
Ասա՛՝ ի՞նչ է քո ասելիք:
Իսմիլ ասաց.— Ուղո՛ղդ կ'ասեն,
Որ հաստակող են սասնեցիք:
Ձեր էրկիր ավերուկ հո չէ՞.
Կրակ հո չի՞ պակասե Սասուն,
Որ դու էկիր էսա տեղեն կրակ տանես.
Իջիր տակ, հյուրասիրվե, նոր ե՛լ, գընա:
— Չէ՛, չէ՛, ջանըմ,— ասաց Մհեր,—
Էդ խոսքեր որ դու ինձ կ'ասես՝ ես չեմ ճանչնա:
Ասա, նայեմ՞ ի՞նչ է քո ասելիք:

Իսմիլ խաթուն տեսավ՝ Մհեր պիտի դառնա,
Ծառաներին ասաց.— Ձեր տուն ավրի՝
Նայեք, յոթը տարվա գինի չըկա՞.
Էնի պիտի դառնա գնա, շուտ արեք, շո՛ւտ:
Ծառաներ էլան, յոթ տարվա գինին բերին,
Տվին Մհերին՝ վեր ձիուն. Մհեր խմեց:
Մհեր որ խմեց՝ Մհերի ճակատ բռնեց:
Իսմիլ խաթուն հրաման տվեց.— Ձին բռնեք:
Ձին բռնին՝ Մհեր իջավ տակ:
Իսմիլ խաթուն տարավ կՄհեր պալատ,
Էնտեղ էնոր բարև էկար արավ:

Մհեր հարցուց.— Ինչի՞ ես ինձ կանչե:
Ասաց.— Մհեր, կանչեր եմ՝ կը խնդրեմ—
Էս մեր էրկիր խաղաղեցուս.
Մեր յոթ իշխաններ ինձ չեն ճանչնա:
Մհեր ասաց.— Լավ, հաց թող բերեն,
Ուտեմ, չուրի լուսնա՝
Էդ իշխաններ կանչեք:
Որ էկան՝ ե՛ս գիտեմ, էնոնք:

Իսմիլ խաթուն դարձավ, ասաց.— Մհե՛ր,
Ես քեզ իմ գոտիկ-լաչակ ուղարկեր եմ,
Կանչեր եմ՝ դու ինձ մոտ պառկես,
Էտո՛ր համար եմ կանչե:
— Էտա չէլա՛ծ բան է,— ասաց Մհեր:
Ի՞նչպես կարնամ ես քո գողենք մտնի.
Դու անօրե՛ն ես, ես՝ քրիստոնյա:
Իսմիլ խաթուն ասաց.— Մհե՛ր,
Դու ինձ էրիկ տի ըլնիս.
Իմ թագավորություն քոն տի ըլնի,
Իմ դուշմաններու դեմ տի կայնես:
Մհեր, ես քեզ սիրե՛ր եմ.
Խաթրո՛վ ըլնի՝ տի գաս,
Զոռո՛վ ըլնի՝ տի գաս:

Իսմիլ խաթուն քաղցր խոսքով,
Սիրով արբեցուց Մհերին,
Պատվեց, կերցուց, խմցուց,
Մհերին որ շատ գինովցուց՝
Մհերի չարեն կտրավ—
Քըշեց, էլավ Իսմիլ խաթունի մոտ:
Իսմիլ խաթուն էդ վախտ մշակներուն կանչեց,
Ասաց.— Քուռկիկ Ջալալին քաշեք ղսրըղներու վերան:
Մըշակներ Ջալալին քաշին ղսրըղներու վերան:
Իսմիլ Մհերից մնաց էրեխով,
Ղսրըղներ Քուռկիկ Ջալալուց բռնեցին:

Առավոտուն Մըսրա յոթ իշխաններ էկան Մհերի մոտ:
Կայնան դիվանխանի դռան:
Մհեր իրիշկեց, ասաց.
— Էհե՛յ, իշխաններ, էկե՛ր եք:
Էնոնք յոթ տեղով բաժանվան,

Ետ քաշվան, կանգնան:
Ասաց.— Այ իշխաններ, ես ի՞նչ մարդ եմ:
Ասին.— Վերին դեհ աստվա՛ծ գիտենք,
Ներքին դեհ քեպի՛ գիտենք:
Մըսրա յոթ իշխաններ խոնարհվեցին:

Էլավ էդ տեղեն Մհեր, որ դառնար Սասուն.
Ամա Իսմիլ խաթուն չ'էթող,
Որ Մհերի գլխին գինովություն անցներ:

Ինն ամիս, ինն օր, ինը սհաթ որ լրացավ՝
Իսմիլ խաթունին տըղա մի էլավ.
Էնոր հոր հիշատակի համար
Տըղի անուն դրին Մըսրա Մելիք:

10

Յոթ տարի Իսմիլ խաթուն կՄհեռ ապահեց գինով:
Մհեր մեկ օր դըրսուց տուն կըմտներ՝
Էկավ, կայնավ դուռ:
Տնեն ձեն մի էկավ.
Մըսրա խաթուն տըղան կը խաղցըներ,
Կը ծիծաղեր, կ'ասեր.
«Քո մեր քեպի մեռնի, Մելիք,
Մըսրա օջախ կ'անգնացուցես,
«Հայու օջախ փչացուցես»:
Մհեր, որ էդ խոսքեր լսեց,
Ուշքի էկավ, ասաց.
— Օհո՛, էկա էստեղ՝ հայու ճրագը հանգցուցի,
Մըսրա ճրա՛գ վառի:
Մհեր մըտավ սենեկ, հարցուց.
— Իսմի՛լ, էդ ի՞նչ խրատ կը տաս էդոր:
Էդիկ ձըվից դեռ դուրս չ'էկած՝
Հիմիկվընե դու չարությո՞ւն կը սորվեցուս:
Էն մեծանա՝ Սասնա ճրա՞գը հանգուցի:
Իսմիլ ասաց.— Հալբաթ, կ' ծիծաղեմ,
Կ' ուրախանամ տղուս վերան:
Էն որ էլնի՝ ամբողջ աշխարքը տի վավթի:
Մհեր ասաց.
— Տըղա մ'ունես, ասենք, Սասուն տի փչացնի՞:
Դու իմ ապգ կորցուցես՝ կՄըսը՞ր կը կայնեցուցես.

Թոբա թե՝ էլ քեզ մոտ կը գամ.
Թոբա թե՝ էլ Մըսըր մնամ:
Ես տի դառնամ էրթամ Սասուն:
Մելքի կընիկ ասաց.— Մհե՛ր,
Ես կ'ուզեի, որ ինձի տըղա մի ըլներ.
Ես կ'ուզեի, որ ժառանգ մի ըլներ Մըսրա.
Ես կ'ուզեի, որ չըհանգչեր Մըսրա ճրագ:
Ես յոթ տարի կքեզ գինով կը տիրեի.
Հիմի կ'էրթաս՝ դու գինաս, չե՛ս էրթա՝ դո՛ւ գինաս:
Էս ասելո՛ւ պես՝ Մհերին գինովություն էթող:
Որ Մհերին գինովություն էթող՝ Մհեր մտածեց.
«Հայ-հո՛յ, էս մե՛կ օր չեմ ես էսատեղ,
«Ես ինչպե՞ս տի Արմաղանին ու Հովանին պատասխան տամ:
«Տեսա՞ր, իմ կընկա խո՛սք էլավ:
«Իմ կընիկ ասաց մ'է՛րթա:
«Ես էնոր խոսք չը լսեցի»:
Էդտեղ Մհեր բախտակոծվավ, ասաց.
«Թող իմ աչքեր քոռանար,
«Որ ես էկա, էս յոթ տարի
«Խալխի արտ ջրի՝ կանաչ պահեցի,
«Իմ արտ չորցավ: Վայ, էս ի՞նչ արի:
«Հայու ճրագ հանգուցի, Մըսրա ճրագ վառի»:
Էլավ սուս-փուս, ու դուրս էլավ Մըսրա,
Քոռ ու փոշման դարձավ իր տուն—Սասուն:

11

Աչքալուս տարան Արմաղանին,
Ասին.— Մհեր էկավ:
Արմաղան էլավ, դարբասներ հողեց
Ու դռներ փակեց:
Մհերն էկավ, տեսավ՝ դարբասներ փակ՝
Դռներ գոց—դուռ-բան չ' էրևար:
Ասաց.— Պատճառն ի՞նչ է,
Դռներ իմ վրա շինած են.
Չեն թո՛ղնի որ իմ տուն էրթամ:
Ու Արմաղան պատասխանեց.
— Պատճառն էն է՝ դու իմ մարդ չես.
Դու ինձ թողիր, գնացիր Մըսըր.
Էլ դու չըգաս մոտ ինձ:
Մհեր կանչեց.— Դուռ բա՛ց...

Արմաղան ասաց.— Մհե՛ր,
Ես էրթում կերեր եմ.
Չուր քառսուն տարի դուն չես գա իմ գողենք.
Դու իմ հերն ես, իմ աղբերն ես:
Դու գնացիր Մըսրա օջախ կայնեցուցիր,
Սասնա օջախ փչացուցիր:
Էդ քո մեղք քավելու համար՝
Քառսուն տարի դու քառսունք տի պահես,
Ու նոր քեզի հրամանք կա, որ գաս իմ գողենք:
Մհեր մնաց շիվար՝ ասաց.
— Քառսուն տարուց էդև էլ բան բանի չ՚հա՛սնի:
Մելիք կ՚ըլնի կատարյալ մարդ:
Մհեր նստավ էնտեղ.
Ինչպես արավ, քանի մի համոկեց,
Չէլավ, վկընիկ բառա չարեց:

12

Խաբար բերին Զենով Հովանին՝ Մհեր Մըսրա էկե:
Հովան էկավ, ասաց.
— Ա՛յ Արմաղան, էսօր ու էսօր հետ էկավ Մհեր,
Էլիր, հե՛տ վերու էդ սև մուշամբեն:
Հարս մուշամբեն վերցուց, ասաց.
— Հովա՛ն, իմ մեծ աղբեր,
Զաթի՝ գիտեմ Մհեր անառակեն խաբված էկավ,
Արծաթ տարավ՝ փախր հետ բերեց...
Ես չեմ կարնա իմ ուխտ խախտեմ:
Զենով Հովան ասաց.— Հարսի,
Մենք վարդապետնե՛ր կը ժողվենք,
Քանի մի հատ իշխան մարդիկնե՛ր կը ժողվենք,
Գան, ձեզի արձակում անեն:

Վարդապետներ բերին՝ ժողվեցին,
Իշխաններ բերին՝ ժողվեցին.
Էն իշխաններ էկան, ընկան մեջտեղ,
Վարդապետներ էկան, ընկան մեջտեղ,
Ասին.— Օրհնած, ախր վնաս չըկա,
Իսա՛ն է, մա՛րդ է՝ կը խաբվի՛:
Հաշվենք՝ գացեր, լա՛ր է բռներ, հիմիկ էկեր է:
Քանի՞ տարի էրդում արեր ես, Արմաղան:
Ասաց.— Քառսուն տարի:

Վարդապետներ ու իշխաններ ասին.
— Օ՜րինած, օրենքն ի ձեռ վարդապետաց.
Քառսուն տարին բերենք անենք քառսուն ամիս,
Քառսուն ամիս բերենք անենք քառսուն շաբաթ,
Քառսուն շաբաթ բերենք անենք քառսուն օր,
Քառսուն օր էլ բերենք անենք քառսուն սհաթ:
Ծուռ տերտեր մ՚ էլ կար՝ ասաց.
— Քառսուն սհաթ բերենք անենք մրկա:
Վարդապետ մ՚ էլ պահպանիչ մի ասաց.
Ասաց.— Աստված ձեվ թողություն շնորհե:
Էլեք, գացեք, էղեք էրիկ-կընիկ:
Ըլնի թող, մեկ-մեկու խաբրով ըլնեք:

Մհեր ասաց.— Կընիկ, ըղորդ կասեն:
Թողնի՞ս ես գամ քո գողենք:
Բալքի՛մ աստված կավա՛կ մի տա,
Զը հանգցնի հայու ճրագ:
Կընիկ դուռ բաց արեց, ասաց.
— Տղամարդ որ կա՝ գլուխ է.
Կնիկ որ կա՝ ոտ է:
Էն չի կարնա դուռ բռնի մարդու վերա.
Դուռ կը բանամ, դու կը գաս տուն,
Աստված մեկ մեկ տըղա կը տա,
Համա էրթմակոտոր կըլնենք, էրկուսս էլ կը մեռնենք.
Տղան անտեր պիտի մընա—խսրի վերա:
Մհեր ասաց.— Աստված թող մեկ տըղա տա մեկ,
Էրթա Մելիքի օձիք բռնի,
Թող չը հանգչի Սասնա ճրագ,
Աստրծու զառ, գել չի՛ ուտի:
Որ մենք կանք վեր աշխըրքին—տի մեռնենք.
Համա որ մենք մեռնենք,
Մեր տղան մեր տեղ սաղ ըլնի՝
Մենք էլ սաղ տի հիշվենք:
Մեր տան անուն չի Լորսվի:
Ու Արմաղան պատասխանեց.
— Էրթմակոտոր կըլնենք, դո՛ւ գիտես:
Քառսուն տարին արին քառսուն ամիս,
Քառսուն ամիս արին քառսուն շաբաթ,
Քառսուն շաբաթ արին քառսուն օր,
Քառսուն օրն էլ արին քառսուն սհաթ,

Քառսուն սհաթ որ լրացավ,
Նոր Արմաղան Մհերին թող էտուր,
Էլան, իրարու մոտ գնացին:
Մհերի կին էղավ տըղով:
Էդ վախտ էլավ Մհեր, գնաց Սասունա սար.
Մեկ խաս բախչա՛ մի տնկել էտու էնտեղ,
Իր սարեն կայնեցուց էնտեղ,
Աստծու ստեղծած ամեն անասուններ, հավքեր
Մեջ էն բախչի դրեց, շուրջը պարիսպ քաշեց:
Էդ տեղի անուն դրեց Ծովասար:
Ծովասարեն էրկու սահաթի չափ կատն
Գնաց խորոտ վանք մի շինեց,
Վանքի անուն դրեց Մարութա բարձր Աստվածածին:
Էլավ, էտա վանքում շատ անգյալներ բերեց.
Էլավ բերեց կուրեր, էլավ բերեց կաղեր,
Կանչեց բերեց տերտեր, վարդապետներ,
Թողեց էդտեղ, էդ բան պրծավ,
Իջավ Սասնա քաղաք:
Ինն ամիս, ինն օր, ինը սհաթ որ լմնցավ,
Արմաղանին տղա էլավ:
Տարան կնքեցին, անուն դրին Դավիթ:
Տղան որ տուն բերին,
Մհեր ու իր կնիկ էրթմակոտոր էղան, մեռան:

Մհերի մեր, Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն,
Մհերի մեռնելեն հետև սուգ մտավ.
Մտավ յոթ դռների ետև,
Փակվեց մեկ սենեկի մի մեջ,
Որ արև իր գլխուն չ՚առներ,
Էնտեղեն արև լուս չ՚էլներ,
Զուր նոր մանուկ մեծանար՝
Մհերի տեղ բռներ:
Սասուն սուգ մտավ Մհերից հետո:
Դավիթ մնաց որբ:

ԾՅՈՂ ԵՐՐՈՐԴ

ԱՍՈՒՆՅԻ ԱՎԻԹ

Դառնանք, կողորմին տի տանք
Դեղձուն Ճուղ Ծամին
— Քառսուն օղորմի:
Դառնանք, կողորմին տի տանք
Քեռի Թորոսին
— Քառսուն օղորմի:
Դառնանք, կողորմին տի տանք
Զենով Հովանին
— Քառսուն օղորմի:
Դառնանք, կողորմին տի տանք
Արտատեր Պառվուն
— Քառսուն օղորմի:

Դառնանք, կողորմին չը տանք
Զմշկիկ Սուլթանին,
Զը տանք օղորմի:
Դառնանք, կողորմին չը տանք
Մըսրա Մելիքին
Զը տանք օղորմի:
Դառնանք կողորմին տի տանք
Իսմիլ խաթունին
Քառսուն օղորմի:
Դառնանք, կողորմին տի տանք
Խանդութ խանումին:
Քառսուն օղորմի:
Դառնանք, կողորմին տի տանք
Թառլան Դավթին,
— Հապար օղորմի:

ՄԱՍՆ Ա

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ
ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԴԵՄ

ՄԱՆՈՒԿ
ԴԱՎԻԹԸ ՄԸՍՐՈՒՄ

2

Դավիթ որ մնաց որբ,
Հորողբերներ էկան, ասին իրար:
Զենով Հովան ասաց.— Վե՛րգո,
Դո՛ւ կը տանես կԴավիթ,
Թե չէ՝ ե՛ս տանեմ:
Վերգոն ասաց.— Չէ, ես որդի ունեմ,
Դո՛ւ տար, պահի...
Զենով Հովան տարավ կԴավիթ,
Արավ իրան հոգեկավակ:
Էլան, ու էդ Սասնա քաղաք
Ինչքան ծծմեր որ կար՝
Էտա տղան տվին կետա ծծմեր:
Տղան ո՛չ մեկի ծիծ էլ չըվերցուց:
Զենով Հովան քաղաքացիք ժողվեց էդտեղ,

Ասաց.— Էսա տղան տի մեռնի:
Բա ի՞նչ անենք, բա ի՞նչ չանենք,
ԶԴավիթ չենք կա՛ռնա շահի:
Սասնեցիք ասին.
— Մհեր յոթ տարի որ Մըսըր մնաց,
Մըկա էնտեղ ծծմեր մի կա,
Ու Մհերի խաթեր համար՝ ըկԴավիթ տի շահի:
ԶԴավիթ Մըսը՛ր ուղարկի.
Էնի էնտեղ տ՛ապրի, թե չէ էստեղ
Անկարելի՛ բան է.— ծիծ չի վերցու:

3

Հովան ասաց.— Բա ո՞վ կ՚տանի, բա ո՞վ չի տանի:
Ասին.— Քուռկիկ Ջալալու թամբի վրեն դի՛ր,
Ամուր մի կապիր,
Քուռկիկ Ջալալուն լավ ճիպոտ մի վար,
Թող տանի Մըսըր:

Հովան էլավ, Քուռկիկ Ջալալին դուրս քաշեց գոմից,
Քուռկիկ Ջալալուն թիմար մի տըվին,
ՁԴավիթ առան, բարուր կապեցին Քուռկիկի քամակ,
Հովան ասաց.
— Քուռկիկ Ջալալին, քեկնե կը խնդրեմ*.
Իմ տըղան դու գե՛տ չ՚թալես,
Իմ տըղան դու քա՛ր չը վարնես.
Տանե՛ս Մըսրա էրկիր,
Մըսրա խաթունին դու թասլի՛մ անես:
Քուռկիկ Ջալալին կը տամ ամանաթ,
Կը տամ ամանաթ մեր Սասնա ճրագ.
Ոչ քա՛ր կը թալես, ոչ թո՛ւփ կը թալես—
Հասցնես սալամաթ մեր Սասնա ճրագ:

4

Քուռկիկ Ջալալին ըկԴավիթ առավ,
Մեջ էրկինք-գետինք թռավ ու գնաց:
Մըսրա Մելքի մեր պատուհան նստե՝
Տեսավ թոկ կը գա դաշտերու վերան.
Տեսավ, որ կրակ գետնու էրեսեն կը տա վեր, էրկինք.
Մեջ էրկինք, մեջ գետինք կը մոտենա իր տան:
Մըսրա խաթուն ասաց.
— Էսի ամպ չի՛. կա ու չկա,
Էսի Քուռկիկ Ջալալու օտաց կրակն էսպես կ՚ էլնի:
Դարձավ, ասաց.— Դռնապաններ,
Գնացեք դռներ բացեք.
Կո՛, ձի մի կը հասնի մեր դուռ:
Դռնապաններ հասան ու դռներ բացին:
Տեսավ Քուռկիկ Ջալալին է:

---

* Խրդվում է:

Բան մի վեր քամակին:
— Մըսրա Մելի՛ք,— կանչեց Իսմիլ խաթուն,
— Էն բան առեք, բերեք ինձի:

Մըսրա Մելիք գնաց, մոտիկացավ ձիուն:
Ձին իր գլուխ կոռեց:
Մելիք աչքեց, տեսավ— բարուր:
Ձիու քամկից բարուր առավ,
Տարավ էտուր Իսմիլ խաթուն:
Մելքի մեր բացեց ու ի՞նչ տեսավ—
Բարուրի մեջ՝ մանուկ Դավիթ,
Թուղթ մ'էլ գրուկ դրած կըշտին:
Էդ թղթի մեջ Ջենով Հովան կ'ասե.
— Աղբո՛ր կընիկ, հարսե՛,
Մհերն էկավ էստեղ, էնոր տրղա՛ մ' էլավ.
Մհեր ու իր կնիկ մեռան, տրղան մնաց որբ:
Ա՛ռ, Մհերի խաթե՛ր համար տրղան շահե:
Մինչև որ քիչ մի մեծանա, չրդա՛դարի.
Նոր ես կ'առնեմ, ե՛ս կը շահեմ:

Մըսրա թագավորի կընիկ միտ վե՛ ասաց.
— Մհեր ինձի օր մի աղեկություն արեց.
Էնոր խաթեր ես կը շահեմ Դավթին.
Իմ ծիծ կաթ կա՛ հալա.
Իմ տրղան կաթեն կը կըտրեմ,
Ջէ՛ն կը շահեմ: Շահեմ, էստեղ կենա,
Մելիքի հետ աղբե՛ր ըլնեն,
Իրար աղբերություն անեն,
Մըսը՛ր, ամբո՛ղջ էրկիր, կավթեն, տիրապետեն:
Հե՛յ, մըկա նոր Դավիթ տի մեծնա, էրթա Սասո՛ւն:

5

Էդտեղ Մըսրա Մելիք ակահեց, ասաց.
— Տղեկնե՛ր, դարբասներ գոցե՛ք:
Քուռկիկ Ջալալին կոռո՛վ ընկավ մեր ձեռ,
Բռնե՛նք մեկ համար: Դարբասներ գոցին,
Ձիավորներ էկան իրար՝ ձիու բոլոր:
Քուռկիկ Ջալալին տի բռնեն:
Քուռկիկ Ջալալին ասաց.

— Ի՞նչը տի պրծնեմ էսոնց մոտեն, տե՛ր աստված:
Գընաց դեն, էկավ դես մեջ պարսպին,
Ասաց.— Տո, տե՛ր աստված,
Ես տի վարնեմ էդա պարիսպ.
Թե՛ անցնեմ, թե՛ մընամ:
Քուռկիկ Ջալալին ո՛ւժ էտու վինք,
Ջիավորներու միջեն էլավ դուրս:
Էվարկ, վքառսուն գավ պարիսպ անցավ,
Թռա՛վ, գնա՛ց:
Մըսրա Մելիք ասաց.
— Ո՛ւ ըլլա՛. գընա՛ց Քուռկիկ Ջալալին,
Մեր ձեռնեն պրծավ:

6

Ձին փախավ, գընաց,
Գիշեր ու ցերեկ անդադար քելեց,
Ու էլավ Սասուն:
Ձենով Հովան իր աչք գցե ճամփան՝ կ'իրիշկեր.
Մեկ էլ տեսավ՝ իրիկվան կողմ՝
Մեջ էրկինք, մեջ գետինք թոզ մի կ' էլնի:
Էլավ, տեսավ, Քուռկիկ Ջալալին է կը գա.
Բան մի չկա՛ հետ:
Քուռկիկ Ջալալին էկավ, հասավ:
Ձենով Հովան իր դեմ էլավ, հարցուց.
— Մեռնեմ քե, Քուռկիկ Ջալալին,
Դավիթ ո՞ր սարն ես թալե,
Ո՞ր քարն ես թալե, ո՞ր թուփն ես թալե,
Ո՞ր գելն է կերե, ո՞ր ջանավարն է կերե
Իմ թառլան Դավիթ:
Ասաց.— Ոչ սա՛րն եմ թալե, ոչ ձո՛րն եմ թալե,
Ոչ գե՛լն է կերե ու ո՛չ ջանավար:
Տարեր եմ Մըսըր, Իսմիլ խաթունին թասլիմ եմ արե,
Համա հապիվ պրծեր եմ, էկե.
Դարբասներ վեր ինձ ամուր վարկեցին,
Կուվեին բռնեն.
Քառսուն գավ պարիսպ թռե՛ր եմ, էկե:
Ձենով Հովան ձիու գըլուխ պագեց, ասաց.
— Աստծու անեծք վեր էնոր տան տեղա՛ց ըլնի,
Վեր էնոր վավակի՛ն ըլնի,

Ով էս ձիու խաբար աշխարհ հանի:
Ու ձին տարավ, մրլեց յոթ դռնով ներս,
Գոցեց դռներ, հողեց,
Ձիու կեր ու ջուր հերթկեն կըտար:

7

Իսմիլ խաթուն Դավթի վերա շատ խնդացավ:
Ձձիձ էտուր Դավթին:
Դավիթ էնոր ձիձ վերուց:
Ժամանակ մի Դավիթ ձիձ կերավ:
Օր մ'էլ Դավիթ էնոր ձիձ չրձրձեց:
Իսմիլ խաթուն Դավթի գլուխ կը բերեր է՛ս ձձի վերա,
Դավիթ է՛ն կողմ կը փախցներ,
Կը բերեր մեկէ՛լ ձձի վերա,
Էն մեկէ՛լ կողմ կը փախցներ:
Իրեք օր, իրեք գիշեր Դավիթ բան չը կերավ:
Իսմիլ խաթուն էլաց, մնաց շիվար,
Չը գիտեր ի՞նչ աներ հետ Դավթին:
Կանչեց Մըսրա Մելքին, ասաց.
— Էսա տղան իրեք օր ու գիշեր իմ ձիձ չ'ո՛ւտի:
Ապա ի՞նչ անենք էսա տղի հետ, ապա ի՞նչ չ'անենք:
Մըսրա Մելիք ասաց.
— Էդա ապգ հաստակող են, մարե,—
Էնի մեր գլխուն ցա՛վ տ'ըլնի:
Էնի հայ է, մենք արաբ ենք,
Քո ձիձ մի՛ տար էնոր:
Իսմիլ խաթուն ասաց.— Էսպես մնա՝ մեռնի,
Մեկ ամոթանք կ'ըլնի էնոր տիրոջ մոտեն:
Էլ վերջ չըկըտրրի, ընկել ենք մեջ...
— Քո տուն ավերի,— ասաց Մելիք.—
Էնոր հոր մալ շա՛տ է,
Էնոր հոր տուն չկա՞ մեղր ու կարագ,
Զըկա՞ն անուշ-անուշ բաներ.
Բաթմանա Բուղեն ուղարկի,
Թող էլնի, էրթա Մհերի տուն,
Գնա բեռ մի մեղր բերի,
Գնա բեռ մի կարա՛գ բերի,
Կը շինես եղ-մեղր, կը տաս, տղան կ'ուտի:

Իսմիլ խաթուն Բաթմանա Բուղեն ճամփեց՝ մեղր-կարագ բերի.
Բաթմանա Բուղե՛ն է, էլավ, գնաց Սասուն:
Ձենով Հովան մեղր, կարագ —
Էնոր ուտելիք ի՛նչ է,—
Ամեն տվեց Բաթմանա Բուղին:
Բաթմանա Բուղեն բեռ մի մեղր, բեռ մի կարագ
Բերեց դրեց Իսմիլ խաթնի առաջ:
Մըսրա Մելիք է՛դ որ տեսավ, ասաց.
— Տեսա՞ր բան, էսպես աղեկ բան ո՞ր տեղ կա.
Տո՛ւր, թող ուտի՛, ջոջնա:
Մեղրով, կարագով Դավթին պահեց Իսմիլ խաթուն:
Թե ուրիշ տղեք տարով կը մեծնան,
Դավիթ օրեօր կը մեծնար:
Իսմիլ խաթուն կ'Դավիթ լա՛վ կը տիրեր.
Կ'ասեր. «Դավիթ Մելքին քոմագ կ'ըլնի—
Ամբողջ էրկիր տի կավթեն, տիրապետեն»:
Ամա Դավիթ էնպես կորեղ էր՝ բնդեր կը կտրեր:
Իսմիլ խաթուն շղթա բերեց, արավ բնդի թել.
Դավիթ էնչափ ուժ ուներ՝
Շղթան չըդիմացավ, կըտրավ:
Ինչ բերեց՝ ճար չ'էղավ, կըտրավ:
Բերեց էն որվանք, փեխր մանեց,
Արավ էնոր բնդի թել, որ պահեց:
Ինչ Դավիթ շունչ կը քաշեր ներս՝
Որվանք կը էրկարնար,
Նորեն Դավիթ որ շունչ կը հաներ դուրս՝
Որվանք կը կըծկեր:

8

Մըսրա Մելիք որ իմացավ Սասնա Մհեր մեռե՝
Կայնավ, թուղթ ուղարկեց,
Իր տեղաց մեջ ցրվեց, կորք հավաքեց,
Գնաց Սասնա տեղաց վերան.
Սասնա էրկրի վերա իր սուր քաշեց,
Սասնա ժողովուրդ կոտորեց,
Անհաշիվ խարջ ու խարաջ առավ,
Քըշեց Սասնա տավար, օչխար,
Սասուն ավրեց, առ ու ավար արավ:
Սասունցոց հպատակ դարձուց,

ԸկՎերգոն ու Հովան գերեց,
Տարավ Մըսըր:

Ժամանակ մի անցավ,
Էնոնք ապրուստ չէին կարնա անի էնտեղ:
Ձենով Հովան Մելքին ասաց.
— Հրաման տուր մեկ, էրթանք մեր էրկիր:
Մելիք հրաման էտուր, էլան, գնացին:

Էս հետ Վերգոն էղավ կառավարող.
Մըսրա Մելիք չ'էթող, որ Դավիթ էլ էրթար:
Մըսրա Մելիք պատվեր տվավ,
Որ կԴավիթ մեջ օդային փակված պահեն:
Առավոտուն էլավ Դավիթ, տեսավ՝ դուռ փակ.
Գնաց դռան էտև.
Զարկեց, դուռն իր տեղեն հանեց,
Էլավ դուրս, տեսավ այգի՛ մի.
Տղեկներ հավաքվե՝ դռնգոկա կը խաղային:
Դավիթ բարձր բարդի ծա՛ռ մի բռնեց,
Կորե՛ց, բերեց տակ,
Ինք բռնեց ծառի կատարեն, ասաց.
— Էկեք, հեծեք, ձի՛ խաղացեք:
Էկան, շարվան վերան:
Դավիթ ծառ պահե՛ց, պահե՛ց,
Իր ձեռ շատ որ դադրավ՝ գոռաց.
— Ցա՛ծ իջեք, ցա՛ծ, իմ ձեռ դադրավ:
Տղեկներ ականջ չ'արին, չ'իջան:
Էդ վախտ Դավիթ ծառի կատար էթող:
Տղեկներ թափվան գետին.
Որ մեռավ, որի գլուխ կոտրավ:
Մեծ մարդերու տղեկներ էին:
Էդոնց հերեր էկան, լցվան Մելիքի դուռ,
Բողոք բարձրացուցին, ասին.
— Թագավոր, էդ ծուռ Դավիթ հեռացուր,
Թե չէ՝ կը քոչենք, կ'էրթանք էս էրկրեն:

9

Մելիք ավելի կատղավ.
Դրավ Դավիթ մութ սենեկ, փակեց,
Որ էն արևի լուս չըտեսնի.

Դավթի վերան վարպետ դրավ,
Որ հնապանդություն սովորեցու:
Ու էնոր հաց տանողներին ասաց.
— Դավթին որ հա՛ց տանեք,
Մի՛ս կ' ըլնի՝ ոսկոր կը հանեք,
Չի՛ր կ' ըլնի՝ կորիկ կը հանեք:
Մեկ օր Դավթի հաց տանողին շա՛տ նեղություն տվին,
Էդ հաց տանող ասաց.— Կայնե՛ք,
Էսօր Դավթին հաց տանելուս՝
Միս կը տանեմ, ոսկոր չե՛մ հանի,
Թող ուտի, ոսկոր դեմ առնի,
Դուրս էլնի՝ ձեկի սպանի:
Հացը վերցուց, տարավ էտու Դավթին:
Դավիթ հաց կերավ, միս թալեց իր ատամներ,
Տեսավ՝ որ միս փլվեց, ոսկոր ատամներ չ' կտրավ:
Վերցուց, կարկեց ոսկոր լուսամուտին,
Լուսամուտ փլվեց, շող ընկավ գետին:
Ասաց.— Էս ի՞նչ ընկավ մեջ սենեկին:
Դավիթ էլա՛վ, ընկա՛վ հետ էդ շողին, ընկավ գետին:
Էլ ետ էլավ, ընկավ հետ էդ շողին, ընկավ գետին:
Էնպե՛ս էլավ, որ քրտինք է՛ս կողմեն,
Էն կողմեն թափավ:

Վարպետ, որ էդոր դաս կը տար,
Դռնով մտավ,
Տեսավ՝ Դավիթ կ' էլնի ու կը տփվի գետին.
Ասաց.— Դավիթ, մեռնե՛մ քեկի,
Ինչի՞ էդպես կը տփես դու էդա գետին:
Ասաց.— Էսիկ մտել է իմ սենեկ, չի՛ էլնի դուրս:
Ասաց.— Մեկ աչքերդ խփիր: Աչքեր խփեց:
Վարպետ թաշկինակով բռնեց էն շողի ծակ կալավ,
Շող կտրավ: Դավիթ ասաց.
— Ցա՛, ես էսքան կը չարչարվեմ,
Չե՛մ կարնա դուրս հանի:—
Ասաց.— Ինձնեն կոռբա՞ էիր:
Ինչպե՞ս դու կէն հանեցիր դուրս:
Վարպետն ասաց.— Ղո՞ւրբան, հե՞յրան,
Էնիկ մարդ չէր, էնիկ արևու շո՛ղքն էր:
Դավիթ ասաց.— Ցա՛, էդ արև որ կա՝
Բա ինչի՞ եք ինձի նստեցուցե էս բանտ:

Ասաց.— Ղո՛ւրբան, հե՛յրան,
Արև՛ էլ կա, ցերե՛կ էլ կա, գիշե՛ր էլ կա:
Ասաց.— Բա ինչի՞ ինձ չեք հանի դուրս:
Ասաց.— Կեցի էրթամ՝ թագավորին ասեմ:
Գնաց, ասաց.— Թագավոր ապրած կենա.
Դավիթ կ'ուզի, որ սենեկեն հանենք,—
Կ'ուզի արևի լո՛ւս տեսնի:
Թագավոր ասաց.— Գնա, հան դո՛ւս, պտըտեցուր:

10

Վարպետն էկավ, Դավթի թևեն բռնեց
Ու հանեց դուրս. տարավ, քաղքի մեջով, գընաց:
Ինչ պ:ատահեց, Դավիթ հարցուց՝
Տավա՛ր, գոմե՛շ ու ձի՛՝
Ամեն ինչի հարցում կ'աներ.—
Էսիկ ի՞նչ է, էնիկ ի՞նչ է:
Վարպետ կ'ասեր.— Էսիկ՝ է՛ս է, էնիկ՝ է՛ն է:
Քաղքից էլան: Դավիթ աշկեց,
Տեսավ՝ քաղաքի ամեն մարդեր ժողված են դաշտ:
Ասաց.— Արի էրթանք էն տե՛ղ:
Վարպետն ասաց.— Մեռնեմ քեզի,
Էն տեղ բան մի չըկա:
Արի էրթանք է՛ս կողմ:
Ասաց.— Չէ՛, ինձի տար էնտեղ:
Ասաց.— Ախր էնտեղ ի՞նչ կա, որ մենք էրթանք:
Ասաց.— Չէ՛, կը տանի՞ս, տար, չե՞ս տանի...
Որ ասաց.— Չէ՛,
Դավիթ իր ձեռք թալեց վեր վարպետի ականջ՝ պոկի:
Վարպետն ասաց.— Քելե էրթա՛նք:
Տարավ էդոր, գնաց, մի մեյդանի գլուխ: Կայնան:
Կայնելուն պես տեսավ՝ էրգնուց բան մի կը գա:
Տեսավ՝ ջրինդ կը գա իր մոտ:
Ջրինդ կը թալեին: Ջրինդ Մըսրա Մելքին էր:
Դավիթ հասավ, ջրինդ բռնեց,
Թալեց՝ գնաց տաս գավ անցուց Մելքի գլխով:
Մսրա Մելիք ասաց.— Հայ-հա՛յ,
Էս ո՞ր փահլևանն էր՝ որ իմ ջրինդ անցուց:
Գնացին, տեսան, էկան, ասին.
— Թագավո՛ր ապրած կենա, Դավի՛թն էր:

Ասաց.— Գնացեք, էնոր բերեք, գլուխ կտրեմ:
Վաքիլ, վպիր ընկան Մըսրա Մելքի ոտ-ձեռ պագին,
Թե.— Թագավո՛ր ապրած կենա, էնի էրեխա՛ է,
Էն ի՞նչ է, որ էնոր գլուխ կտրես:
Վպիր մարդ ուղարկեց վարպետի կուշտ.
Էկան ասին.— Քո տուն չ'ավրի, էլ մի՛ բեր էսատեղ:
Վարպետն ասաց.— Ձեր տուն չ'ավրի,
Մագյար իմ կամքո՛վ կը բերեմ.
Բռնի, ականջես կը քաշի,
Ջոռովե՛ն ինձ բերել կը տա:
Ասին.— Առ գընա՛, առ գընա՛, առ գընա՛:
Բերեց իրեն սենեկ:

11

Էն իրիկուն Մելիք դաշտեն դարձավ.
Դավիթ հարցուց Իսմիլ խաթնին.
— Ի՛մ մեր, չուր իրիկուն Մելիք էդ ո՞ւր կ'երթա:
Ասաց.— Մե՛ր մեռնի քեվ,
Կ'էրթա իրա սեյրանատեղ, ու իրիկուն կը գա.
Կ'էրթա հո՛լ կը խաղա:
— Ապա ինչի՞ ինձ չի՛ տանի,
Որ իմ միտք էլ քիչ մի բացվի.
Ես կը մնամ մենակ տուն վե,
Իմ համբերություն կը կտրի:
Մարդ մի չունեմ որ հետ խաղամ:
Ինձ է՛լ թող դաշտ տանի:
Իր մեր ասաց.— Մեռնե՛մ քեվ,
Ձիանք կը տան վեր քեվ, ըվքեվ կը ճղոտեն:
Ձուր հիմիկ տիրեր, պահեր ենք քեվ,
Հիմիկ կ'ընկնենք ամոթու տակ:
Դավիթ էլաց, ասաց.— Մարե՛,
Ես կ'էրթամ վա՛տ տեղ կը կայնեմ:
Մեր ասաց.— Մե՛լիք, ի՞նչ կ'ըլնի,
Առավոտուն կ'Դավիթ տար հետ քեվ,
Հոլ խաղ անի, սորվի:
Մըսրա Մելիք ասաց.
— Դավիթ, դու դեռ էրեխա՛ ես,
Ձես կարնա հոլ խաղալ հետ մեվ:
Դավիթ ասաց.— Տի գա՛մ հետ քեվ:

Իսմիլ խաթուն ասաց.— Խնդիր կ'անեմ,
ԸկԴավիթ տա՛ր, կը տեսնե՞ս թե ինչպես կը լա:
— Մե՛րիկ,— ասաց,— ախր չորակո՛ղ են էդ ապգ.
Վախնամ՝ Դավիթ պատիժ մի բերի մեր գլուխ:
Մեր էնոր հետ կռվավ, ասաց.
— Չէ՛, տա՛ր, տար, դիր բարձր մի տեղ.
Դավիթ թող թամաշա՛ անի:
Չելնի՝ գա ցած ընկնի ձիանց ոտքերի տակ:
Մըսրա Մելիք ասաց.
— Թե չտանե՛մ, շատ մարդ տ'ասի.
Որբ է, Մելիք ականջ չի՛ դնի:
Աղեկ, մարե, առավոտուն տանեմ հետ ինձ:

12

Առավոտուն Մըսրա Մելիք էլավ, հեծավ իր ձին,
Առավ կԴավիթ, տարավ իր հետ:
Ձ'իշխեց տանի իր մոտ, տարավ մեկ մեծ սարի գլուխ:
Էրկու փահլևաններ տարան,
Դավթի ոտ ու ձեռքեր կապին,
Դրին էդ մեծ սարի գլուխ:
Ու էրկուսով Դավթի մոտ նստան պահապան:
Մելիք իր վորք առավ, իր իշխաններ,
Փահլևաններ առավ ու Լեռա դաշտ իջավ.
Խաղաց հետ փահլևաններուն:
Դավթի մոտեն էդ Լեռա դաշտ
Համա՛-համմա՛ կը նշմարվի:

Դավիթ մինչև կեսօր էնտեղ նստած կեցավ,
Դավիթ նայեց, նայեց՝ բան չը տեսավ:
Բա՛ն մի չը հասկացավ իր նստելուց.
Դավթի սիրտը հոժար չ'էղավ.
Դարձավ, ասաց.— Փահլևաններ,
Էկեք, իմ ձեռներ արձակե՛ք:
Փահլևաններ ասին էնոր.
— Թագավորի հրամա՛նըն է՝
Մենք քեզ տի պահենք.
Ձ'էրթաս՝ ձիաներու ոտքերի տակ ընկնես:
Դավիթ ըռկավ ու կամացուկ հիրար տվեց իրան,
Կապած պարաններ կտրտեց:

Էրկու փահլևաններ կախվան Դավթից.
ԸկԴավիթ չը կարցան պահեն:
Դավիթ էրկու փահլևաններ վեր քիթ-բերնին քաշեց.
Ու մինչև տուն տարավ:
Դավիթ գլուխ դրավ գետին, պառկավ էնտեղ:
Մըսրա Մելքի մեր ասաց.
— Ինչի՞ ըռըկար, էկար:
Ասաց.— Մըսրա Մելիք ինձի տարավ՝
Բարձր սարի գլուխ դրավ.
Ու ինք գնաց դաշտ, կը խաղար.
Բան չի տեսա, էկա:

Իրիկուն էղավ, Մելիք կտրիճներուն ասաց.
— Հոլեր կարկե՛ք, գնան կԴավիթ ըսպանեն:
Կտրիճներ մեկ-մեկու հոլ կարկեցին,
Մելիքըն էլ իր հոլ կարկեց:
Տարան, հանին Դավթի տեղաց վերան,
Տեսան՝ Դավիթ չըկա:
Էլան, էկան տներ:

Մըսրա Մելիք էկավ իր տուն,
Իսմիլ Խաթուն էնոր առջև չ'էլավ-կայնավ.
Մըսրա Մելիք ասաց.
— Դու ինչի՞ ըռկեր ես, նստեր ես էսատեղ.
Չես կայնի, չես էլնի առջև:
Մեր ասաց.— Ինչի՞ կԴավիթ չը տարար՝
Հոլի տեղ, թամաշա աներ:
Ասաց.— Մարե, էն խոսք մտիկ չ'անի՛.
Հոլ դպնի, էնոր տի սպանի,
Ուրիշ մարդեր տ'ասեն՝ էլավ հացի կերող,
Մելիք իրեն հացի ապո՛վ էտու սպանել:
Ամոթ է ինձ իմ մարդերու առաջ:
Տարա, փախավ, էկավ:
Իրիկուն, որ հաց դրին Դավթի առաջ,
Դավիթ ըռկավ, ինչ որ արին հաց չը կերավ:
Իսմիլ խաթուն նորեն կպավ Մելքի օձիք, ասաց.
— Մըսրա Մելիք, որդի,
Առավոտուն տար, մոտի՛կ դիր:
Մելիք ասաց.— Աղեկ, մարե,
Վաղ ես տանեմ, դնեմ մոտիկ:

Էս հետ, առավոտուն՝
Մըսրա քաղքի ձիանք, ձիավորներ, որ դուրս ելան:
Մըսրա Մելիք էլավ, իր ձին հեծավ,
Առավ կ'Դավիթ, տարավ իր հետ:
Մեկտեղ գնացին իր իշխաններ,
Կտրիճ մարդեր, փահլևաններ:
Գնացին էն դաշտ, քարե կալի մեջ գո՛ւրպ թալեն:
Դավիթ նստեցուցին էդ կալի մոտ,
Մեկ արտաչափ հեռո՛ւ դրին:
Մըսրա Մելիք ասաց.— Դավի՛թ,
Էդտեղ կայնի, մտի՛կ արա.
Դավի՛թ,— ասաց,— դու կը տեսնե՛ս, այ, էդա գուրպ՝

Շատ գե՛շ բան է, շատ գե՛շ բան է.
Էդա գուրպ որ մարդո՛ւ առնի՝ մարդ կը սպանի.
Զգա՛ս, մըտնես մե՛ջ մեր խաղին:
— Աղբեր, աղեկ, քո խոսք կ'անեմ,— ասաց Դավիթ:

Մելիք կայնեց էդ քարե կալ,
Հետ իր ընկերներաց՝ գուրպ կը թալեր.
Դավիթ նստե էնտեղ՝ հետ հողին խաղ կաներ
Հող կ'առներ ու կը լցներ վեր ոտքերուն,
Հողերու մե՛ջ կը թավալվեր:
Փահլևաններ սովորո՛ւկ էին.
Հա՛ խաղացած էին.
Կը խաղային, մեկ մեկէլի վնաս չէին իտա.
Էդպես գուրպեր կը թալեին,
Զուր կեսավուր ժամանակին:
Դավիթ իր տեղ նստե՝ կ'աչքեր,
Զուր հերթը Մելիքին հասներ— իր գուրպ վարկեր:
Որ Մելիքի հերթը հասավ,
Մըսրա Մելիք հեծավ իր ձին,
Քըշեց, էկավ կորքերու մեջ:
Բոլոր ժողվան, էկան՝ մտիկ անեն:
Մեծ գուրպ մի կար Մելիքի ձեռ,
Իրեք հարիր վաթսուն ու վեց լիտր էր էդ գուրպ:
Կը խաղցներ—կը տաներ աջ,
Կը բերեր գուրպ իր ձեռի մեջ.

Պտտցնելով էդ գուրպ՝
Գուրպից կըրա՛կ կը թափեր դուրս:

Մելիք գուրպ կը կարներ՝
Գետին սելի աղուրի պես կըճըղճըղվեր:
Դավիթ տեսավ՝ որ հերթ Մելիքին է,
Գընաց, մտավ մեջ աղուրին:
Մեկ ծակ քոլոպ մ՝ էլ կար Դավթի գլուխ:
Դավիթ նըստած էնտեղ, հող կը չափեր իր քոլոպով.
Կասեր.— Էսա՛ մե՛կ...
Քանի չափեր, կ՝ասեր.— «Էսա՛ մե՛կ...»,
Էլ չէր կարնա ասի «էրկո՛ւ»:
Մըսրա Մելիք կանչեց.
— Դավիթ, էդ տեղեն վեր էլի,
Ես իմ գուրպ տի թալեմ:
Իրեք անգամ կանչեց.
Դավիթ չը լսությո՛ւն դրեց վեր իր:
Մելիք ասաց.— Փահլևաննե՛ր, Կակա՛ն, Ասլա՛ն,
Գնացեք, ճիվ բռնեք, դուրս թալեք:

Կական, Ասլան ու հինգ փահլևաններ
Էկան, ճիվ բռնեցին:
Ինչպես կանեն՝ չի՛ էլնի վեր:
Կ՝ասի.— Էսա մե՛կ, էսա մե՛կ...
Փահլևաններ շա՛տ ջանք արին,
Չը կարցան իր տեղեն հանեն,
Ինչպես որ մա՛րդ մի չի կարնա
Դուրս քաշի ծառն իր արմատով:
Փահլևաններ շիվար կայնան.
Էնոնց խաղ խանգարվեց:
Մըսրա Մելիք շատ բարկացավ, ասաց.
— Գուրպ կարկեցեք, թող գա, սպանի:
Փահլևաններ գուրպ կարկեցին:
Դավիթ գուրպ աջ ձեռով բռնեց, թալեց էրկինք,
Ձախով գուրպ մ՝էլ բռնեց թալեց էրկինք:
Մըսրա Մելիքն է, որ տեսավ, շա՛տ կարմացավ,
Ասաց.— Դե՛ն գնացեք.
Ես իմ գուրպ տի կարկեմ:
Իմ մոր ասի՝ ես Դավիթ չե՛մ տանի:
Ես գիտեմ Դավթի բնություն.

Ասաց.— էսա էսպես տի շինվի

Երբ էղեր է, էն իմ գլուխ տի ցավցուցի:
Աղեկ է՛ն է՝ մըկա կարկեմ ու մեռցուցեմ:
Գիտեմ, էն իմ գլխակե՛րն է, ձեկ տվեք դե՛ն:
Դավիթ էնոր խոսքեր լսե՛ց,
Ու ձեն տվեց, ասաց.
— Մելիք, կա՛րկ, կա՛րկ, թող գա՛ քո գուրկ:
Չընեմ, չիմանամ, որ էրկու մըտանի՛ ընես:
(Աստծուց դրած չէր,
Որ մեր ապգ մըսրցոց դեմ փախնի:
Դավիթ էլ Մըսրա Մելիքի դեմ չէ՛ր փախնի):
Մըսրա Մելիք լսավ Դավթի խոսքեր,
— Հող է, հող դարձուցեմ,— ասաց ու գուրկ կարկեց:

Դավիթ գուրկից էնպե՛ս ակահավ,
Ասես՝ ջաղցի քար մի կը գա մեջ իր գլխուն:
Իսկուն Դավիթ իր ձեռ տվեց առջև,
Ու գուրկ բռնեց.
Որ գուրկ բռնեց՝ ծանր-թեթև արավ,
Ասաց.— Ափսո՛ս, հապա՛ր ափսոս,
Մի քիչ թեթև՛ է էսա գուրկ:—
(Քառսուն փութ էլ արձիճ ըլներ,
Հալեին, լցնեին վերան,
Նոր Դավթի համար լավ տ՚ըլներ):
Մելիք էդ որ տեսա՛վ, փոշմանավ, հոնքեր կիտեց:
Էնոր ընկերներ տընավ տվին, ասին.
— Մելիք, Մելիք, դու կ՚ասեիր՝ ուժո՛վ եմ ես:
Տեսա՛ր, Դավիթ դեռ տըղա է,
Ամա ինչպես բռնեց քո գուրկ:
Մելիք ասաց.— Հեյ վա՛խ,
Որ ես իմ գուրկ կարկեմ ու չը դպնի՞ Դավթին,
Իմ թագավորութեն էն իմ ձեռնեն տ՚առնի՞:
Ինչ Դավի՛թ էր՝ Մելիքի գուրկ ձեռք պտտցուց,
Դրավ իր ծնկան տակ, պահեց:

Կական, Ասլան ու շատ փահլևաններ
Ձիեր քշին, հասան Դավթին,
Մեջ դաշտին գուրկ շա՛տ փնտռեցին, գուրկ չը գտան:
Դավիթ էն ժամանակ գուրկ հանեց դուրս,
Պտտցուց մեջ ձեռքին, պտտցուց, ասաց.
— Գո՛ւրկ, սաջա՛ր գուրկ:

Ասաց ու էդ գուրկով կարկեց: Որ կարկեց՝
Կական, Ասլան ու հինգ ուրիշ փահլևաններ սպանեց:

Մնացածներ դարձան ասին.— Մե՛լիք,
Էկանք մենք էսատեղ՝ քեֆ անելու:
Թե դու գիտիր՝ Դավիթ ծուռ էր,
Ինչի՞ բերիր՝ էսա մարդեր սպանեց:
Էն սպանուկներ ի՞նչպես տանենք քաղաք.
Քաղաք տ՛ասեն.— Տնեն գնացիք
Քե՞ֆ անելու, թե՞ էնտեղ մարդ սպանելու:
Մելիք էնպես բարկացավ՝ թուր քաշեց,
Լարեց Դավթի էտև, որ վիպ կտրի:
Կանչեց.— Վայ-վա՛յ, էն շան որբ տի սպանեմ:
Էնոր փահլևաններ թափվան վերան, ասին.
— Վայ-վա՛յ, Մելիք, դու կԴավիթ տի սպանե՞ս:
— Էն որբ է, մե՛ղք է:
— Բա՛ց թող:
— Էն տըղա՛ է: Էնոր խելք չի հասնի:
— Մելի՛ք, մի՛ ըսպանի: Խալխ տի ասի.
«Մելիք որբ մի սպանեց իրեն հացի ապով»:
— Էն չէ՛ր կարնա քո գուրկ թալի.
Աստըծո՛ւցն էր, հրեշտակն էր, որ քո գուրկ թալեց:
Շատեր ասին.— Էդ Մհերից կ՛ըլնի,
Դավիթ հոր ուժն ունի:
Զը թողին, որ Մելիք կԴավիթ սպաներ:

Դավիթ էլավ, մինչև տուն՝ չը կայնավ:
Էկավ ու կինք կարկեց Իսմիլ խաթունի փեշ:
Իսմիլ խաթուն ասաց.— Դավիթ, էն ի՞նչ էղավ:
Ասաց.— Մա՛րե, Մելիք կը գա՝ ինձ ըսպանի:
Գախ է, գա իմ վիպ տի կտրի:
Խաթուն ասաց.— Ինչի՞ տի գա քո վիպ կտրի:
Էդտեղ Դավիթ ուր պատմություն արեց:

14

Իրկուն Մելիք որ տուն էկավ,
Մըսրա խաթուն հարցուց.
— Մըսրա Մելիք, դու ինչի՞ չե՛ս խոսա.
Ինչի՞ ես քո նոթեր կախե:

Պատասխանեց.— Ինչի՞ խոսեմ.
Դավիթ էսօր ինձ ամչեցուց խալխի առաջ:
Մեր ասաց.— Ի՞նչ արավ:
— Հապա՝ իմ գուրպ որ կարկեցի՝
Էն ձեռ էտու, իմ գուրպ բռնեց:
Մեր ասաց.— Ի՞նչ կա, բան չկա:
Մելիք վեր մոր շա՛տ բարկացավ,
Էլավ, Դավթի թևից բռնե՛ց, գոռաց.
— Ինչի՞ էկար իմ գուրպ բռնիր:
— Ինչի՞ չըբռնեմ,— ասաց Դավիթ,—
Ես քեկնե պակաս տըղա չե՛մ:
Ես է՛լ գուրպ տի խաղամ հետ քեկ:
Նախանձեց Մելիք Դավթին,
Ձեռ բարձրացուց, ասաց.
— Մա՛րե, Դավիթ ես տի սպանեմ:
Մեր մոտ վազեց, էկավ Մելքի վրա, ասաց.
— Ա՛յ տղա, ծուռ հո չե՞ս:
— Մարե՛,— ասաց.— Էն որ իմ գուրպ էսօր բռնեց.
Վա՛ղ էլ կը գա, կիմ տուն ու տեղ էլ կը բռնի:
Մեր ասաց.— Մարե՛ն մեռնի քո արևուն,
Դավիթ քո ուժն է, քո մեջքի թո՛ւրն է.
Դավթի հեր—քո հեր—ջոջ փահլևա՛ն էղե:
Վաղ Դավիթ էլ փահլևա՛ն կ՚ըլնի:
Մեկ մեկէլի քամակ պիտի բռնեք, կայնեք:
— Է, մարե՛,— ասաց Մըսրա Մելիք,—
Ուրիշներ իմ գուրպի տակն ընկնեն, կը մեռնեն:
Դավիթ բռնեց իմ գուրպ ու չը մեռավ:
Չէ՛, մարե, ես չեմ ընդունի.
Դավթի վիպ տի կտրեմ:

Մելիք իշխաններ կանչեց պալատ,
Էլավ, հայտնեց, ասաց.— Իշխաննե՛ր, ի՞նչ կ՚ասեք.
Էդա Դավիթ հիմիկվանե ձեռ կը թալի իմ գուրպ,
Իմ մարդիկ կը սպանի:
Մարդու մեկ բարեխիղճ էր, ասաց.
— Թագավոր ապրած Լենա,
Դավթի խելք չի՛ հասնի, խելք ջո՛ւր է, տղա է:

— Չէ,— ասաց,— իր խելք իմից, քոնից շա՜տ է:
Չէ՛, էնոր տի կարկեմ:
— Թագավոր ապրած կենա,— ասաց.—
Կուկե՜ս, քելե փորձ մի անենք:
Թե որ Դավիթ տղա չ՚էլավ,
Էլեք վիմ գլուխ, կԴավթի գլուխ կարկեք:
Մելիք ասաց.— Ի՜նչ փորձ անենք:
Ասաց.— Բերեք սինի մի ոսկի մի կողմ դնենք,
Սինի մի կրակ էն մեկէ՛լ կողմ.
Դավիթ դնենք էդ կրակի, ոսկու արանք:
Թե որ կրակ վերցուց՝
Խելք չի հասնի, տղա է,
Թե որ ոսկի՛ն վերցուց,
Գնա գլուխ կարկի:

Բերին, կԴավիթ դրին սեղանի մոտ.
Ոսկին մի կողք լցրին, կրակ մի կողք:
Դրին Դավթի առջև, ասին.
— Դա՛վիթ, ա՛ռ, ա՛ռ, ո՞ր մեկ կուկես:
Դավիթ իր ձեռ պարկեց ոսկուն,
Հրեշտակ ձեռնեն բռնեց, տարավ դեհ կրակ:
Իր մատ որ կրակին կըպավ, կրակ կպավ մատին.
Մատ էրելով՝ տարավ բերան, լեկո՛ւն էլ երեց:
Տղան վըժժա՛ց, էլաց:
Կրակ բերնեն դո՛ւրս հանեցին:
Իսմիլ խաթուն Դավթին գրկեց, էլաց:
Դավիթ էլ էլաց:
Իսմիլ խաթուն ասաց.— Ո՛րդի, Մելիք,
Դու հո տեսա՞ր, էնոր ըսպանել մե՞ղք է:
Դու կ՚ասեիր՝ թե իր չարությունե՛ն արավ.
Ապա տեսա՞ր՝ միամի՛տ է,
Չը հասկացա՛վ, ձեռ տարավ, դրավ վեր կրակին,
Հալա լեկուն էլ էրեց, էլավ թլոր:
Բարեխիղճ մարդն ասաց.
— Թագավոր ապրած կենա,
Իմ խոսք ճի՞շտ է, ճիշտ չէ՞:
Ասաց.— Հա՛, շա՛տ ճիշտ էր քո խոսք:
Անխելքությո՛ւն արավ, խելք չի՛ հասնի:

Էստեղեն Դավիթ էլավ,
Գընաց Մելքի կինանոցի դռան վերան:
Տեսավ՝ կինանոցի դուռ բաց:
Սանդուղքով իջավ տակ, մտավ մեջ էդ կինանոցին.
Տեսավ, Մելքի մեծ գուրպ էնտեղ դրած:
Դավիթ ասաց.
— Էս ի՞նչ խաղալու լավ բան է:
Ասաց, գուրպ վերցուց ու ձեռնեն թալեց գետին:
Գրմփոց ընկավ մեջ քաղաքին,
Մարդիկ, կընիկ, տըղեք վախցան:

Մըսրա Մելիք տեսավ՝ քաղաք ժաժք ընկավ:
Կռահեց, ասաց.— Էս իմ գուրպի ձենն էր.
Տեսեք ո՞վ է. ի՞նչ բան էկավ վեր քաղաքին:
Վակիր գիտցավ, որ Դավի՛թն է,
Շուտ մի էլավ ու վակելեն գընաց.
Գնաց, կինանոցի դռան վերան կայնեց:
Դավիթ գրմփոց մ'էլ հանեց:
Վակիր կանչեց, ասաց.
— Դա՛վիթ, Դա՛վիթ, քո տո՛ւն չ'ավրի,
Դու ի՞նչ կ'անես էդտեղ.
Շո՛ւտ արա, արի վե՛ր:
Դավիթ վեր էլավ ու դուռ դրեց:
Վակիր ասաց.— Դա՛վիթ, Դա՛վիթ,
Դե շո՛ւտ գընա Իսմիլ խաթունի մոտ:
Թե չէ Մըսրա Մելիք կը գա,
Քո գըլուխ կը ջարդի:
Դավիթ գնաց:

Մըսրա Մելիք շուտ-շուտ էկավ,
Կայնեց դռան վերան, գոռաց, կանչեց.
Ասաց.— Վակի՛ր, ո՞վ է էդտեղ:
Պատասխանեց.— Դուռ բա՛ց էր, չ'իմացա՝ ով էր:
Վակիր էդ սուտ կ'անի՝ չ'ա՛սի ով է:
— Չէ՛, էղնի, չ'էղնի՝ էդ Դավիթ էր,— ասաց Մելիք:—
Դավիթեն կատ իմ գուրպ մարդ չի՛ կարնա վերցու:
Մըսրա Մելիք էլավ քաղաք պտտեց,

ՁԴավիթ փնտռեց, չը գտավ.
Էկավ տուն, տեսավ, որ Դավիթ ընկե,
Քուրսու տակ քներ է:
Մըսրա Մելիք աղեղան լար արձակեց,
Բերեց՝ Դավթի բողավ խեղդեր:
Էդ վախտ իր մեր դռնեն էկավ,
Մելիքի ձեռ բռնեց, ասաց.— Մե՛լիք, ի՞նչ է կ'անես:
Ասաց.— կԴավիթ տի խեղդեմ,
Իմ գուրպի հետ խաղացեր է,
Գըմփոց մ' էլավ մեջ քաղաքին:
Մելիքի մեր ծծեր էբաց, կայնեց Մելքի առջև,
Ասաց.— Թե դու Դավիթ ըսպանե՛ս՝
Էս ծծերի կաթ քո վերան հարա՛մ ըլնի:
Մելիք ասաց.— Մա՛րե, օձու ձա՛գ է Դավիթ,
Թե որ ինձի վնաս դիպնի, է՛դ տըղից է:

17

Էդտեղ Մելիք ու մեր կռիվ արին Դավթի վերա:
Վախիր էլավ, Դավթի ձեռեն բռնեց,
Գնաց Իսմիլ խաթնի առջև,
— Դե,— ասաց,— թագուհի,
Ինչո՛ւ Դավիթ չես ուղարկի ուր տիրու քով.
Չես ուղարկի— գնա Սասուն:
Օր մ'է, օր ըմ չէ, Մելիք կԴավթի տի կարկի:
Դե, վեր էլիր, հաց պատրաստիր,
Ուղարկիր՝ թող էրթա Սասուն:
Հերիք է մեր էրկիր մնա:

Իսմիլ խաթուն ասաց.— Դավիթ, տըղա,
Ուղարկեմ քեզ՝ կ'էրթա՞ս Սասուն քո հրողբրանց:
— Հրողբե՛ք ունիմ,— ասաց— ինչի՞ չեմ է՛րթա:
Մարե, իմ հրողբերանք ո՞րտեղն են:
Ասաց.— Սասուն քաղաք կ'ապրեն:
— Էնոնց անուն ի՞նչ է:
— Էնոնց անուն,— ասաց.—
Մեկին Զենով Հովան կ'ասեն,
Մեկին՝ Վերգո:
— Մարե՛, քո աչքե՛ր քոռանար,
Ինչի՞ շուտ չ'ասիր,

Դե, շուտ,— ասաց.—
Տաս ջուխտ պուճիկ, տաս ջուխտ տրեխ,
Տաս ավուր հաց տի պատրաստես,
Առնեմ, գնամ Սասուն:
Իսմիլ խաթուն պատրաստեց տաս ջուխտ պուճիկ,
Տաս ջուխտ տրեխ, տաս ավուր հաց,
Օրհնեց Դավթին, ասաց.
— Գնա՛, գնա՛, տրդա.
Գնա Սասնա քաղաք, հրողբրանցդ քով.
Աստված թող քեզի հետ ըլնի:

Էդտեղ Մըսրա Մելիք ասաց.
— Դավիթ թող գա՛, էս իմ թրի տակով անցնի՝
Որ թողնեմ՝ էրթա իր էրկիր:
Ու թուր բարձրացուց:
Դավիթ պատասխան էտու.
— Էնպես կանի՝ որ վաղ մեծնամ՝
Սուր չը քաշե՞մ էնոր վերան:
Էն ինձ թրով կարկի՛— ես չըկարկե՞մ էնոր:
Հապար էդպես Մելիք մեռնի՝
Էս մեկ չարսու լաչակ է,
Էս լաչակի տակով կ'անցնե՛մ.
Էնոր թրի տակով չե՛մ անցնի:
Ինչ ձեռեն կը գա՝ թող անի:

Վապիր Դավթի թևեն բռնեց,
Գընաց, որ անցուցի թրի տակով,
Դավիթ չընկռավ, կալնեց—
Չ'էրթա, չ'անցնի՛ թրի տակով:
Վապիր Դավթի պառեկ բռնեց,
Հոլրեց, քաշեց, որ անցուցի թրի տակով.
Դավիթ չը գնաց, չ'անցավ թրի տակով,
Կըշտո՛վ անցավ.
Ճկութ քսավ ի ջարդու քար՝
Քարեն կրա՛կ էլավ:

Մըսրա Մելիք տեսավ՝
Շա՛տ վախեցավ, ասաց.
— Էդ դեռ պստիկ է՝ էսպես է—
Որ մեծանա՝ ի՞նչ տի ըլնի:

18

Էլավ Մելիք, կանչեց էրկու փահլևաններ,
Բաթմանա Բուղեն ու Զարբահար Քամին,
Ասաց էդ փահլևաններուն.
— Դավթին տարեք յոթ սարով դեն՝
Տարեք, վեր Բաթմանա կամուրջ—սպանե՛ք:
Դավթի վերան հելա՛կ մի կար:
Մելիք էդ փահլևաններուն ասաց.
— Դավիթ սպանե՛ք, էնոր հելակ
Մեջ արունին թաթխեք, ինձի համար բերեք:
Կուժ մ՝ էլ էնոր արնեն բերեք՝
Խըմեմ՝ իմ սիրտ հովնա:
Փահլևաններ գնացին պատրաստություն տեսան:
Իսմիլ խաթուն գիտեր, թե Դավթին Սասուն տի տանեն.
Դավթի համար տաս ավուր հաց պաշար դըրավ.
Տաս ջուխտ պուճիկ, տասս ջուխտ տըրեխ տըվավ.
Դավիթ Իսմիլի ձեռ պագեց,
Կաց բարով արավ, գնացին...
Թող էնոնք իրենց ճամփան էրթան,
Մենք խաբար տանք Քեռի Թորոսից:

19

Մհերի մեռնելուց էտև՝
Յոթ տարի Սասուն սուգ մընաց:
Յոթ տարին որ անցավ,
Սասնա իշխաններ, տերտերներ, ռամիկ
Ժողովան, էկան Քեռի Թորոսի մոտ:
Սասունցիք ասին Քեռի Թորոսին.
— Ա՛յ Քեռի Թորոս,
Մեր տղեկներ հալևորան,
Մեր աղջիկներ պառավան. թե դու գիտես.
Որ յոթ տարի սուգ պահելով Մհեր կը սաղնա՛,
Յոթ տարի էլ ավե՛լ պահենք:
Քեռի Թորոս հրաման տվեց,
Իր դուռ-դրկիցներուն ասաց.
— Կարգե՛ք ձեր տղեկներ ու աղջիկներ.
Սուգ պահելով բան չի՛ ըլնի:
Էկան, սեղան պատրաստեցին, նստան,
Բերին, գինի դրին, դրին գինեխում:

Բերին, քեֆ, կեր ու խում անեն:
Ու Թորոս տերտերոջ ասաց.
— Տերտե՛ր, դու Մհերին հոգո՛ց ասա:
Տերտեր հոգոց ասաց, պրծավ,
Սկսան գինին լցնել,—
Տվին Քեռի Թորոսին,— թե խմե՛:
Քեռի Թորոս առավ կթխեն ի ձեռ,
Կայնեց ու միտք արեց.
Ոչ կը խմե ու ոչ կթխեն տեղ կը դնե:
Խոր Մանուկ էն տեղից ասաց.— Քեռի՛ Թորոս,
Կըխմես՝ խմե, թե չե՛ս խմե՝
Իկին տուր, թող մարդիկ երթան:
Թորոսի տղա՛ն էլ մի կողմեն
Ձե՛ն տվեց հորն,— ասաց.
— Աբո, Սասնու ծուռ են էդոնք,
Մկա մեկ վատ խոսք կ'ասեն քեզ,
Կամ խմե, կամ դիր գետին, քելեն:
Թորոս վերցուց տղին ասաց.
— Հեյ շա՛ն տղա,
Ես էսատեղ նստեմ, ես կերուխում անեմ,
Մըսրա Մելիք Դավթին գերի՞ պահի:
Բա ամոթ չէ՞ մեկի...
Հացն ու գինին, տեր կենդանին.
Ձուր էդա որբ հետ չը բերեմ,
Էս բաժակ իմ բերան չ'առնեմ:
Ու թող տվեց, մարդիկ էլան, գնացին:

20

Սասունցի քանի մի տուն ջուլհակ կար Մըսրա մեջ,
Էդոնք լսեցին էդ ձեն-ձուն,
Թե Սասնա Դավիթ տ' ըսպանեն,
Էլան, իրանք ժողով արին,
Թո՛ւղթ մի գրին Քեռի Թորոսին:
Թղթի մեջ գրուկ էր.
«Քեռի՛ Թորոս,
«Քո գլուխ էդտեղ թրջես, էստեղ կընտես—
«Քանի որ Դավիթ չեն վնասած,
«Բալքի պըրծցուս, տանես Սասուն»:
Էդ թուղթ տվին ջահել տըղի մի ձեռ, ասին.
— Կըհեծնես, կ'էրթաս Սասուն,

Կը տաս Քեռի Թորոսին:
Իրիկուն հասնես՝ իրիկուն թող գա,
Լուսո՛ւն հասնես՝ լուսուն թող գա:
Տղան կարճ ճամփով էլավ,
Գընաց դեպի Սասուն:

21

Ջուլհակներու ճամփած տղան
Էդ գիշեր էկավ, հասավ Սասուն.
Հարցուց.— Քեռի Թորոս ո՞րն է:

Էդ տղին տարան Քեռի Թորոսի մոտ:
Տղան բարև էտու, կանգնեց.
Քեռի Թորոս էնոր բարև առավ:
Տղան հանեց կթուղթ իր ծոցեն.
Քեռի Թորոս նամակ կարդաց,
Ասաց.— Կընի՛կ, Վեցոտնեն Լապգին դո՛ւրս բաշե:
Դու տըղին կը պատվես, չուր հետ կը դառնամ:

Էդ գիշեր Քեռի Թորոս հեծավ իր ձին,
Սասնու որ կարկեց՝ առավոտ իջավ Մըսըր:

Մըսրա Մելիք դուռ նստուկ էր:
Ասաց.— Վա՛յ, բարով, Քեռի՛ Թորոս:
Պատասխանեց.— Աստծու բարին, Մըսրա՛ Մելիք:
Ասաց.— Քեռի՛ Թորոս, բարի՞ է,
Էսպես ըշտապեր ես էստեղ:
Ասաց.— Փառք աստծու, բարի է,
Խեր է, բան չկա:
Բարևեցին, նստան: Ասաց.
— Հա՛յդե, ես ու դուն՝ աստծու դատաստուն:
Գերին գին ըլնի, տիրուն կը հասնի:
Ես էկեր եմ, որ Դավիթ տաս, տանենք:
Ասաց.— Իրեք օր է, ինչ մեռեր է Դավիթ:
Քեռի Թորոսի արցունքներ թափվան միրուք վե,
Ամա կ'Դավիթ չը գտավ:
Նստավ Քեռի Թորոս իր Վեցոտնեն Լապգին,
Առավոտուն ճամփա ընկավ Մըսրա՝
Իրիկուն իջավ Սասուն,
Էդ տխուր խաբար էբեր սասնեցոց:

Էն ինչ Դավիթ էր՝
Փահլևաններու հետ շա՛տ էկավ, քի՛չ էկավ,
Հինգ-վեց օր ճամփա էկավ:
Բաթմանա Բուղեն, Զարբահար Քամին
Կուկեն կ'Դավիթ սպանեն,
Հարմար չեն տեսնի կ'Դավիթ սպանեն:
Դավիթ ճամփու հետ չ'էրթար:
Պահ մի էսպես, պահ մի էնպես կ'էրթար,
Զը խոսեր, կ'էրթա՛ր ու կ'էրթա՛ր...
Փահլևաններ հա առաջադե՛մ կ'էրթային,
Դավիթ մեկ առջևից, մեկ հետևից, ճամփակորուս կ'էրթար:
Դավիթ էնոնց մոտեն կա՛տ կը մնար,
Հետ քարի՛ն, հետ թփի՛ն կ'խաղար:
Կ'ընկներ սար-ձոր, հետև հավքերուն, հետև գայաններուն:
Էդա էրկու փահլևաններ ճամփին կը նստեին՝
Հաց կուտեին, Դավթին հաց չէին ի տա:
Դավիթ ի՞նչ կ'աներ.—
Կը քաղեր բանջարներ, կ'ուտեր.
Կ'ընկներ մեջ արտերուն, արմատ կը քաղեր, կ'ուտեր.
Սարեր որ վե՛ր կ'ը գար, սունկ կը քաղեր, կ'ուտեր.
Մեկ լոր կը տեսներ՝ կը սպաներ,
Մեկ նապաստակ կը տեսներ՝ կը կարկեր, կը սպաներ,
Ականջ չէր անի փահլևաններուն:

Որ գնացին հասան մոտ Բաթմանա կամրջին,
Բաթմանա Բուղեն ասաց.— Զարբահա՛ր Քամի,
Զ'Դավիթ առնենք, թալենք ջուր: Դավիթ հեռու էր:
Նստեցին էդա էրկու փահլևաններ հաց ուտելու,
Զ'Դավիթ կանչեցին, ասին.
— Դա՛վիթ, Դա՛վիթ, շո՛ւտ արի:
Դավիթ գընաց, հասավ, ասաց.
— Էսա հինգ օր կա, վեց օր կա, մենք ճամփա կը գանք,
Դուք մեկ օր չ'ասիք՝ «Դա՛վիթ,
Անոթի՞ ես, ծարա՛վ ես».
Էդ կամրջի մոտ նստե ինձ ինչի՞ կը կանչեք:
Ասին.— Հապա, Դավիթ,
Զուր հիմիկ մենք Մելիքի հող-ջուրն էինք—
Հիմիկ քո հոր հող-ջուրն էկանք,

Էն ապո՛վ քեզի կը կանչենք:
Արի, Դավիթ, արի, հա՛ց կեր:
Դավիթ ասաց.— Իսմիլ խաթուն յոթ ավուր հուց՝
Հետ մեզ դրեր է. դուք կերաք, ինձի չը տվիք:
Էսօրվան օր, որ ես իմ հոր հոդ-ջուրն ընկա,
Էլ չե՛մ ուզի ձեր հաց:

Դավիթ իրիշկեց, տեսավ՝
Էդ երկու փահլևան էլան գնացին
Ձուր վեր Բաթմանա կամուրջին, կայնան:
Դավիթ էկավ, հասավ էնոնց, նորեն հարցուց.
— Ինչի՞ կայնաք:
Ասին.— Էկեր, քե՛զ համար կայներ ենք.
Մելիք մեզի ասաց.
«Ձ'Դավիթ աղեկ կամուրջ անցուցեք,
Որ Դավիթ չը վախենա, չ'ընկնի ջուր»:
Դու պստիկ ես. դու կը վախենաս:
Դավիթ ասաց.— Ձուր մենք Մըսրա էկա՞նք՝
Դուք չ'ասիք թե՝ «Դավիթ տըղա՛ էր. կը վախենար»;
Հիմի ի՞նչ էղավ. դուք քելեք,
Ձկամուրջ անցեք, ես հետևեն տի գամ:
Փահլևաններ ասին. (Դավիթ չէր իմանա)
— Մեկն անցնենք Դավթի առաջ,
Մեկն գնանք Դավթի հետև.
Որ կը հասնենք կամուրջի կես՝
Մեկն առջևից կ'ոլորվենք Դավթի վերան,
Մեկն հետևից,— Դավիթ կը սպանենք,
Թալենք ջուր, որ էրթա:
Դարձան Դավթին ասին.— Ձէ՛, Դավիթ,
Մեկ անցնի, մեկ կենա հետև, որ չը վախենաս:
Ասաց.— Որ էնպես է՝ թողեք ձեր խոսք ընի:
Դավիթ իր միտ վե ասաց.
— Ինչո՞ւ չուր հիմիկ երկուսն էլ առաջս էին.
Հիմիկ մեկն անցավ առաջ, մեկ մնաց հետև.
Ձէ՛, բա՛ն մի կա էնոնց սրտին:

23

Գընացին, հասան կամրջի կես տեղ:
Մեկն առջևեն դարձավ Դավթի վերան,
Մեկ՝ հետևեն դարձավ:

Դավիթ ասաց.— Էդ ի՞նչ տ'անեք:
Վա՛յ, դուք կուզեք ինձ ջո՛ւր թալեք:
Դավիթ ձեռ մի թալեց էնո՛ր փողպատ,
Մեկէլ թալեց էնո՛ր փողպատ,
Տըփեց իրո՛ւր, տըփեց իրո՛ւր,
Կախեց էրկուսն էլ կամրջի էրկու կողեն,
Ասաց.— Դուք չե՛ք գիտի մարդ թալել ջուր:
Ես ձեկ նշա՛նց տի տամ, ինչպես մարդ թալեք ջուր:
Էրկու փահլևաններ ասին.— Աստծո՛ւ սիրուն,
Դու ըզմեկ մի՛ թալի էդ ջուր:
Դավիթ էնոնց բռնեց, հետ իրարու էլար գետին,
Իր ծունկ էդի վեր սրտերուն, ասաց.
— Ըզձեկ էրկուսդ էլ տի սպանեմ ու թալեմ գետ.
Յա ղո՛րդ կ'ասեք, յա կը թալեմ:
— Դավի՛թ,— ասին,— մենք քո բա՛խտն ենք,
Դու ըզմեկ թող, որ մենք էլնենք
Ու ղորդ խաբար տանք քեզ:
Դավիթ իր ձեռ էնոնց մոտեն վերցուց:
Էնոնք էլան վե՛ր, նստան:

Սրհաթ մի խելք չէր գա էնոնց գլուխ,
Էնքան որ կոռ արավ:
Դավիթ ասաց.— Դե, ասեք է՞:
Նոր՝ քիչ մի շունչ առան էնոնք,
Ուշքի էկան, ու Զարբահար Քամին ասաց.— Դավիթ,
Քեզնե պահենք, աստծուց ի՞նչպես պահենք:
Էդ քյաֆուր, էդ վալըմ Մելիք
Զորբությունո՛վ էդի վեր մեր վզին,
Զմեկ էդի հետ քե՛զ, որ քեզ սպանենք.
Մըսրա Մելիք ասաց մեզի՝
«Տարեք Բաթմանա կամըրջի վերան Դավիթ զենեցեք.
Կուժ մի էնոր արնեն առեք,
Էնոր ջանդաք թալեցեք ջուր,
Արուն բերեք, որ ես խըմեմ, իմ սիրտ հովնա»:
Ամա աղաչանք կ'անեմ՝ ինձի չը սպանես:
Դավիթ էր՝ Բաթմանա Բուղա արաբ չը սպանեց.
Խղճավորվավ, էթող: Էնոր քաշեց վե՝
Կայնեցուց վեր կամըրջին, ասաց.— Գնա՛:
Բաթմանա Բուղեն ասաց.— Քո հելակ որ չը տաս,
Մեջ արնին թաթախենք, տանենք՝
Մըսրա Մելիք մեկ կը սպանի:

Դավիթ տեսավ՝ էդտեղ նապաստակ կը փախնի.
Էլավ, հասավ հետևեն,
Բռնեց, վիզ կտրեց, կուժ լցրեց արունով,
Հելակ մեջ էտոր արնին թաթախեց, ասաց.
— Տա՛ր Մելքին, ասա Դավիթ սպանեցիր:
Բաթմանա Բուղեն ուրախացավ, ճամփա ընկավ Մըսըր.
Էն որ Զարբահար Քամին էր՝ ասաց.
— Ես որ կամ՝ Դավի՛թ,
Քո հոր սուփրի վերա՛ն եմ մեծացե:
Զը գիտեի՝ դու էտա հունարի տերն ես.
Ինչ որ քո հեր մեռավ՝
Մըսրա Մելիք կմեկ տարավ գերի:
Թալել եմ ինձ քո բախտ.
Ես էլ Մելքին ծառայություն չեմ անի:
Որ դու էդա մարդն ես,
Ուր էդա հունար քո փոր կա,
Քանի կենդանի՛ եմ՝ ես քո ծառան տ'ըլնեմ:
Քո հոր խաթեր համար քեզի կը ծառայեմ:
Դավիթ ասաց.— Որ էդպես է, կայնի՝ էրթանք:
Էտատեղ մեկ-մեկու գլուխ պագեցին,
Էկան էլան Սասնա սահման:

24

Էդ գիշեր Զենով Հովան Դավթի վրա էրազ տեսավ:
Ասաց.— Աստվա՛ծ գիտի, մանուկ Դավիթ կա՞, թե չկա:
Կարելի է, որ մեր Դավիթ
Շուտով էսա էրկիր կը գա:
Ու մե՛ջ մեր հողուն է մտե:
Զենով Հովան կնկան ասաց.
— Սառյե՛, Սառյե՛, դու վե՛ր էլի: Սառյեն ասաց.
— Ա՛յ հայևոր, ինչի՞ չես թողնի, որ քնենք:
Զենով Հովան ասաց.— Սառյե՛,
Օտար կարմի՛ց ես դու, քո սիրտ հեչ չի՛ ցավի:
Վե՛ր էլի, վե՛ր:
Դու վե՛ր էլի, իմ սիրտ բա՛ց, տե՛ս.
Էսօր մեր քաղքի պարիսպ կայնե՛ր էր,
Մեր թագա բաղ կանաչեր էր,
Մեր ջահեր քաղքի պարսպին վառվեր էր,
Մեր բաղի պլպուլ կանչեր էր.
Կա չըկա, մեր որբ Դավիթ մեջ մեր հողին մտեր է:

ԴԱՎԻԹԸ ՀՈՎԻՎ

1

Դավիթ, ինչ խոտ, ինչ բան ընկեր էր ձեռ՝
Անոթութնե կերեր էր:
Էստուց քիչ մի ծուռ էր դարձե—
Խելք էլ գլուխ չէր մնացե:
Քանի մի օր գնացին էսպես
Դավիթ ու Զարբահար Քամին,
Օր մ'էլ մոտեցան Սասնա:
Էդտեղ հորթարածներ, էդտեղ նախրորդներ,
Էդտեղ հովիվներ ու գառնարածներ
Թողե իրենց տավար, թողե իրենց օչխար,
Կ'իրիշկեին կԴավիթ:
Ու ճանչըցան իր շորերաց,
Թե Սասնա Ջոջանց տնի՛ց է:
Գեղացու մեկ էլավ,—
Էնոր Դավիթ պատմեր էր, թե՝ ես Սասուն տ'էրթամ,
Սասուն իմ հայրենիքն է,—
Ակընջկալա տարավ Զենով Հովանին:
— Զենո՛վ Հովան, դու իմանա՛ս,
Մեկ կը գա, ձեր որդի Դավի թն է:
Իմ ակընջկալեն քե:

Զենով Հովան շատ խնդացավ,
Իմաց արավ Քեռի Թորոսին,
Էն մեծ տունեն էլան, էկան էնոնք,

Քաղաքացուն ու գեղացուն ասին.
— Աստվածություն մեկի նոր տղա մի տվեց.
Կը խնդրեմ ձեր մոտեն, էլե՛ք, էրթանք Դավթի առաջ:
Քաղաքացիք ու գեղացիք էլան, ժողվան,
Հետ Զենով Հովանին գնացին Դավթի առջև:
Տեսնան՝ ի՞նչ տեսակ տըղա է Դավիթ:
Գիտեն թե հորից աղե՛կ է:
— Հե՛յ-հե՛յ, Դավիթ ո՞ւրն է, հե՛յ-հե՛յ,
Դավիթ ո՞ւրն է.— ասին:

Էլավ Զենով Հովան, իրիշկեց իր ճամփան.
Իրիշկեց, տեսավ, որ մեկ փահլևան կը գա.
Մեկ տղա էլ հետևանց կը գա,
Ճամփուց դուրս կը քելե,
Կորընգանու արտերու մեջ:
Հովանն ասաց.— Քեռի Թորոս,
Էն տղան, որ ճամփուցը դո՛ւրս, ծուռ-ծո՛ւռ կը գա՝
Էնիկ, վա՛յ թե, մեր ծուռ Դավիթն է, որ էկավ.
Սասնա ճրագ վառվեց:

Զուրի Դավիթ էկավ, էլավ Սասուն՝
Էնոր տրեխներ կտրտվան,
Էնոր պուճիկներ կտրտվան,
Ինք էլավ անոթի:
Տեսավ՝ շատ մարդեր ժողվված,
Չը գիտեր՝ ո՞ր տեղն է էկե,
Շիվար մնաց, ասաց.
— Ես անոթի, ծարավ՝ ինչպե՞ս տ'էրթամ Սասուն:
Էն ինչ գեղացիք՝ ձեռ կտան Դավթի ձեռաց:
Դավիթ խաբար չի, չի մոտենա,
Էնի տըտուշ ընկե ճամփա, կըգա՝
Խաբար չունի, թե սասնեցի՛ք են
Էնոր առջև պատվի էկե:
Սասնեցիք էլ խաբար չե՛ն էնոր հալից,
Թե ինչպես հալից ընկե,
Ինչպես դադրած, անոթի է:
Զենով Հովան էկավ առաջ,
Էկավ կ'Դավիթ տեսավ,
Էնոր քով կայնավ, ասաց.
— Տղա՛, դու ո՞ր տեղացի ես:

Մբարա Մելիքն է ֆռ դուշման



— Ես Սասնու քաղքի՛ց եմ,— ասաց:
— Սասուն քաղաք ես քեզի չե՛մ տեսեր:
Է՛ս է Սասուն քաղաք, է՛ստեղըն է:
Սասուն քաղաք դու մարդ ունի՞ս:
— Իմ մեր կ՚ասեր՝ էրկու հորողբե՛ր ունիմ:
— Իրանց անուն ի՞նչ է.— հարցուց:
— Մեծ հորողբոր անուն,— ասաց,— Վերգո,
Էն մեկէլին Զենով Հովան:
Էդտեղ Հովան ըկԴավիթ պինդ գրկե՛ց, պագե՛ց,
Դավթի ճակատ լալե՛ն պագեց:
— Վա՛յ, Դավիթ,— ասաց.— էս դո՞ւ ես:
Ե՛ս էլ—քո հորողբեր Հովա՛ն եմ:
Հովան, նորեն պագելեն առավ ըկԴավիթ,
Ուրախ-ուրախ գնաց տուն:
Զեն տվեց ճամփին, կանչեց.— Է՛, աղբերնե՛ր,
Էկե՛ք, ձեր աչքը լո՛ւս, էկե՛ք, մեր ա՛չքն էլ լուս,
Մեր Դավի՛թն է էկե...
Դավթի հորողբերներ էնտեղ,
Գրկին, համբուրեցին ըկԴավիթ:
Սասունցիք էլ շատ աչքալուս արին:
Զենով Հովան ասաց.— Փա՛ռք իմ աստծուն.
Էս մեկ կավա՛կ էլ մեկ էլավ կայնավ.
Էկավ մեր աղունիկ:
Համա ի՞նչ տ՚անեմ՝ շիվա՛ր է:
Մենք ասինք լա՛վ մարդ մ՚էր,
Ափսոս շիվա՛ր տըղա մէ. փա՛ռք իմ աստծուն:
Նստան Հովան, բարեկամներ, քաղաքացիք,
Ուրախություն ու քեֆ արին իրենց համար:
Շատ կրուցին, էլան մեկ-մեկ իրանց տներ գնացին:
Մնացին Զենով Հովան, Դավիթ:
Դավիթ ասաց.— Հրողբեր, ինչպե՞ս ես, ի՞նչ ունիս:
Ասաց.— Որդի, փառք իմ աստծուն,
Էհ, տեր աստծո՛ւ օգորմությամբ
Քո հոր գերեկմանով մեր իդարեն կանենք:
— Աղե՛կ, ասաց Դավիթ, որ էդպես է, աղեկ է:

2

Առավոտուն Զենով Հովան էլավ, կայնավ.
Իրեք անգամ ձեռք էտու գետին, փառք էտու աստծուն,
Ասաց.— Փա՛ռք իմ քո մոտեն, աստված,

Էս անգամ էլ էրակ ես քո մոտեն տեսա.
Մեկ պուրակ ըմ էլավ Սասնա օջխի վերա,
Ես, իմ աղբեր էլ վախ չ'ունենք:
Էլավ, բերեց ձեռք մի խորոտ հալավ, հագցուց,
Ջեբեր լիք ճան, չամիչ, պոպոք արեց,
Գլուխ պագեց, ասաց.— Դավիթ,
Գընա մոտ ճժերուն, խաղա:
Դավիթ գընաց մոտ ճժերուն, խաղաց:
Ճժեր լեպ արին, ճաներ կամեն մոտեն տարան:
Դավիթ ապտակ մ'էկար իշխանաց լաճերուն,
Լաճու մի վիկ ծռվեց:

Իրիկուն էդ լաճու մեր էկավ մոտ Հովանին գանգատ:
Զենով Հովան ասաց.— Ոչինչ, բան չի ըլնի:
Թամբահ կ' անեմ, որ էլ կռիվ չ' անի:
Գնաց Հովան, Դավթին ասաց.
— Հորողբե՛ր քե մեռնի, Դա՛վիթ,
Էլ հետ խալխին կռիվ չ' անե՛ս:
Դավիթ լուսուն էլավ, գընաց մեջ ճժերուն, խաղաց.
Ճժեր նորեն ողջ մեկ էլան,
Թափվան Դավթի վերան, կռվան.
Դավիթ կարկեց, իրեք լաճերու վիկ ծռեց:
Էդ վախտ էկան քաղքի մեծեր,
Ամեն ժողվան, իրար ասին.
— Էն շան որբ մեր ճժեր խեղեց:
Մենք տ'էրթանք, Դավթին սպանենք,
Դավիթ ինչի՞ մեր տըղաներու վիկ ծռեց:
Էլան էկան, կանչեցին Զենով Հովանին, ասին.
— Դավիթ դո՞ր է, կանչի, թող գա:
Ասաց.— Ինչի՞ կանչեմ Դավիթ:
Ասին.— Մագյար էդ ծուռ Դավիթ
Դուշմա՞ն է մեր տղեկներուն.
Ինչի՞ էնոնց վկեր ծռեց:
Հովան վախեցավ, գնաց Դավթին, ասաց.
— Աստված քո տուն ավրի, Դավիթ,
Էդ տղաներ ինչի՞ խեղիր:
Ասաց.— Ջայնա՛մ էնոնց գըլուխ,
Ինձ հետ կռվան՝ ես էլ կարկի:
Ասաց.— Քաղքի մարդիկն էկե,
Մեր դուռ բռնե՛, էլի՛ր, պատասխա՛ն տուր էնոնց:

Դավիթ էլավ, էկավ դուռ, տեսավ.
Էնքա՜ն մարդ է հավաքված դուռ:
Շատեր կան՝ Դավիթ չե՛ն տեսած.
Էկած են՝ թամաշա՛ անեն, Դավի՛թ տեսնեն:
Շատեր էլ կան, Դավթին կարկելու ապով են էկած:
Դավիթ որ էլավ դուրս,
Էսքան մարդիկ Դավիթ տեսան,
Ահուց դողդողացին, իրարու գաղտուկ ասին.
— Դավթին դուք ձեռք չը տաք,
Որ ակահի՝ մեկ է՛լ տ՚ըսպանի:

Ու դարձավ, ամեն մեկ գնաց իր տուն:

3

Էն մեկէլ օր քաղքի ջոջեր
Կանչեցին Հովանին, ասին.
— Հո՛վան, գիտե՞ս ինչի համար ենք քե կանչե.
Մենք որ էրեկ էկանք ձեր դուռ,
Դավթին տեսանք՝ շա՛տ վախեցանք:
Արի Դավթին գործի՛ մի դիր.
Էդոր գործի որ չը դընես՝
Քաղքի մեջ շա՛տ ավերություն տ՚ընի:
Հովան ասաց.— Ի՞նչ անեմ, ի՞նչ գործի դնեմ:
Էնոնք ասին.— Դավթին մենք գառնարա՛ծ անենք,
Թող չը մընա՛ քաղաք:

Ձենով Հովան իրիկուն տուն էկավ, ասաց.
— Դավիթ, մեռնե՛մ քեզի, չե՞ս ընի գառնարած:
Աղքատացեր ենք մենք—
Ձա՛փ մի էրկու կորեկ առնենք, ուտենք:
Դավիթ ասաց.— Հորողբե՛ր, ինչի՞ չեմ ընի...
Էսպես պարապություն չեմ կա՛ռնա անցուցեմ:
Դու ջո՛ջ մարդ ես,
Հիմիկ քեզ խա՛թր կա մոտ մեր խալխին,
Ինձ համար մեկ ռանչպարությո՛ւն մի առ:
Ասաց.— Դա՛վիթ, քեզի բռներ են գառնարած:
Ամեն մեկ տավարի գլուխ մեկ կոտ կորեկ,
Մեկ կոտ ցորեն մեկ վարձ կը տան:
Կարնա՞ս պահի գառներ, թե՞ չես կարնա:

Ասաց.— Էնե՛նց պահեմ, ծաղկըներո՛ւ պես:
Զենով Հովան էլավ քաղքցոց ասաց.
— Էս տարին իմ աղբոր տղան տ՛անենք գառնարած:
Դուք լուսուն ձեր գառներ բերեք քաղաքի դուռ.
ԶԴավիթ կը ճամփեմ, թող ամեն ժողվի, տանի:

Զենով Հովանին դրկիցներ ասին.— Հովան,
Մեկ ջուխտ մի սոլ էնոր համար կտաս կարել.
Էդոր ի՞նչ սոլ տի դիմանա, որ էդ հագնի,
Էրթա Սասնա սարեր, արածացնի, ֆըռա:
Հովան ասաց.— Իսկուն կ՛էրթամ, կը տամ կարե՛լ:
Էլավ Հովան գնաց, դարբնին
Պողպատե սո՛լ էտու կարել,
Պողպատե կոռ էտու կռռել,
Առեց, բերեց, առավոտուն էտու Դավթին:
Դավիթ իր սոլերու վերան ուրախացավ.
Զենով Հովան ասաց.— Ո՛րդի,
Էլիր, գառներ քըշիր
Սասնա սարի հետև՝ արոտատեղ.
Կեսօրին գառներ կը հավաքես վեր աղբրին,
Քեզի կեսօրին հաց կ՛ առնեմ, կը գամ:

4

Էլավ Դավիթ, պողպատե սոլ հագավ,
Պողպատե կոռ բռնեց ի ձեռ,
Կանգնեց Սասնա մեջ, կանչեց.
— Դրկիցնե՛ր, ձեր գառներ հանե՛ք,
Ձեր ուլեր հանե՛ք, դո՛ւրս բերեք,
Տանեմ Սասնա սարեր, արածացնեմ:
Դրկիցներ առան գառներ, առան ուլեր,
Բերին քաղաքի դուռ:
Դավիթ կգառներ ժողվեց, տի տաներ սար.
Մարդեր որ տեսան կԴավիթ, ասին.
— Հո՛վան, Դավիթ տի սպանի՛ գառներ:
Հովան ասաց.— Դավիթ,
Մենք դրկից ենք, տես գառներ չը սպանե՛ս.
Սալամաթ տար, սալամաթ ե՛տ բեր իրիկուն:
— Հորոդբե՛ր,— ասաց,— մագյար ես ծո՛ւռ եմ,
Գառներ շա՛տ խորոտ կը պահեմ:

Դավիթ գառներ առաջ արավ, տարավ,
Մեկ բարձրը սար մի կար՝ էնտեղ արածացուց:
Գառներ կուշտ-կուշտ կերան:
Դավիթ էնոնց գոմեց քարայր,
Դավիթ հեռացա՛վ գառներուց.
Իր համար թե՛ք ընկավ, քընավ,
Դավիթ ակահ չունե՛ր գառներուց:
Գառներ արթնացան, քարայրից էլան,
Գառներ ամեն մեկ իր տեղ ցրվավ՝ արածելու:
Դավիթ ակահ չուներ գառներուց:
Քնավ, կարթնեց, իրիշկեց, տեսավ գառներ, ուլեր
Ամեն մեկ մի կողմով գացա՛ծ—վերա՛ կորուսված:
Կայնավ, գընաց քարայրի դուռ, մեկ գառ չկա:
Է՛ս կող իրիշկեց՝ գառ չըկա.
Է՛ն կող իրիշկեց՝ գառ չըկա.
Կայնավ՝ գոռաց, էլավ ընկավ հետևքեր,
Ման էկավ, ընկավ էդ սար ու ձոր.
Էնոր ոտքի ձեն որ էլավ,
Էնոր բոռոց որ դրմդրմբաց,
Նապաստակներ ու աղվեսներ սարից, քարից էլան,
Թողին իրենց բներ, կը փախչեն, հա՛ կը փախչեն:
Տեսավ նապաստա՛կ մի փախավ,
Ասաց.— Ուը՛հ, նա ուլ ինչպե՛ս կը փախնի:
Ընկավ հետև նապաստակին. էն չա՛լ ուլ էր:
Կո՛ւկ մ'էլ գընաց, աղվե՛ս մ'էլ փախավ,
Դավիթ է՛լ ասաց.
— Օ՛հ, էն ուլեր ինչպե՛ս կը փախնեն:
Էնպես վազեց հետևներեն,
Չուր լեկուներ հանին, դաղրան, կանգնան:
Ինչքան աղվես, կուկ, նապաստակ որ կար՝
Բռնեց բերեց, գցեց մեջ գառներուն, մեջ ուլերուն:

Էդտեղ պողպատե սոլեր կտրտվան:

5

Կեսօրին Հովան հաց առավ, տարավ,
Գնաց տեսավ՝ Դավիթ էնպե՛ս է ման էկե սարեր,
Որ էն պողպատե սոլ կտրտվե,
Էն պողպատե կոռ մաշվե՛:

Ասաց.— Դավիթ, քո բան ինչպե՞սն է:
Տըղա, գլխուդ մեռնեմ.
Օրեն մեկ սո՛լ կարել տամ քե,
Օրեն մեկ կո՛ռ կոռել տամ քե,
Քո հախն էն չափ չի՛ հանի.
Էլ մեր օգուտըն ի՞նչ տ՚ըլնի:
Դավիթ ասաց.— Է՛հ, հորողբեր,
Էլ վաղն էդ գառներ չե՛մ տանի:
Էսօր էնպե՛ս եմ վավվկե,
Որ իմ սոլ կտրտվե:
Ջենով Հովան ասաց.— Դավի՛թ ջան, ի՞նչ է,
Գառնարածութեն անուշ բան չէ՞:
Ասաց.— Անո՛ւշ է, հա, էն խա՛չ, անո՛ւշ բան է.
Էդա սև ուլեր միամի՛տ են.
Էդա կարմիր ուլերու հետ,
Էդա սալի՛կ ուլերու հետ
Ես շա՛տ աղեկ ճամփա կ՚էրթամ.
Համա էդա բալբալոս ուլեր, էդա սիպտա՛կ ուլեր,
Էդա էրկարակա՛նջ ուլեր— չե՛ն կանգնի.
Էդոնք ինձ շա՛տ կը չարչըրեն, շա՛տ կը փախնեն,
Ձիմ հոգին անգրո՛ղ առան.
Էնքա՛ն ինձ ցավցուցին:
— Լա՛ո,— ասաց Հովան.—
Մենք շեկ, սիպտակ ուլեր չունենք:
Դավիթ ասաց.— Ձէ՛, հորողբեր,
Շեկ ու սիպտակ ուլեր էլ կան:
Թե էն ուլեր առավոտուն չը հանե՛ս գառներաց մեջեն,
Ես չե՛մ էրթա հետ գառներաց:
— Մեկ է՛լ,— ասաց Հովան,—
Քարայրեն էդ գառներ հան դո՛ւրս,
Էդ շեկ ուլեր տեսնեմ:

Էլան, էկան, քարայրի դուռ բացին:
Դավիթն ասաց.— Հորողբե՛ր, դու մտի ներս,
Գառներ հանի՝ ես էնա ուլեր կը բռնե՛մ,
Դու էնոնց չե՛ս կարնա բռնի:
Հրողբեր ասաց.— Ձէ՛, չէ՛, տըղա, դու պստի՛կ ես:
Դու մտի նե՛րս, քըշե, թող գան, ես կը բռնեմ:
Դավիթ մըտավ էդ քարայր,
Փետ մի վարկեց. մեկ է՛ս քարին, մեկ է՛ն քարին.

Կուպեր, աղվես, նապաստակներ ամեն դո՛ւրս թափվան:
Զենով Հովան տեսավ՝ աղվեսներո՛ւն,
Նապաստակներո՛ւն կ'ասի Դավիթ ըսպիտակ ուլ:՝
Նապաստակներ, աղվեսներ ամեն փախան:
Քարայրեն Դավիթ էլավ դուրս, ասաց.— Հրողբե՛ր,
Դու ինչի՞ իմ ուլեր թողիր՝ գնացին:
Ասաց.— Էնոնք ջանավա՛ր են, տղա լա՛ռ, ուլ չե՛ն,
Էդ շեկ ուլեր թո՛ղ, թող էրթա՛ն:
Դավիթ ասաց.— Դու իմ ուլեր թողի՞ր,
Ինչպե՞ս տ'անեմ. էնոնց տերեր ո՛ւլեր տ'ուպեն.՝
Ինձ ուլ չը կա՝ ես տամ:
Էնոնց ջուաբ ինչպե՞ս տի տամ:
Ասաց Դավիթ, էլ հետ վպեց սարեր,
Որ նապաստակ, աղվես ժողվի:
Հրողբեր հետևեն գոռաց.
— Դավիթ, աստվա՛ծ քո տուն ավրի.
Էնոնք գապաննե՛ր են, թո՛ղ, թո՛ղ գընա՛ն:
Դավիթ ականջ չ'արեց, գնաց:

Հրողբեր դարձավ, էկավ տուն. ասաց.
— Ջա՛նըմ, էսա ի՞նչ մուր էր՝ բըսեցինք մեր էրես:
Էսա մեր ծուռ Դավիթ ինչ ջանավար տեսե,
Բերե, լցրե մեջ գառներուն,
Ո՛ւլ, նապաստա՛կ մեկ-մեկից չի՛ ջոկի.
Ասաց.— Դրկի՛ց-գեղացիներ, աստծո՛ւ սիրուն,
Լուսուն Դավիթ էլ չը դընե՛ք առջև ձեր գառներուն:

6

Էն ինչ Դավիթ էր՝ էլավ վեր,
Ընկավ հետև աղվեսներու ու կուպերու.
Էն կուպ, աղվես ու նապաստակ
Լեպուն թալած կը վպեն,
Հըլիբլոց ընկեր էր գառներ
Ու տկի պես կը պարկվեին:
Դավիթ էնոնց կը տաներ սար, կը բերեր ձոր,
Կը բերեր, կ'աներ մեջ ուլերուն,
Կ'ասեր.— Էսա տերով տերամեռներ,
Գառ-մառ, ուլեր, չեն թողնի՝ ես հանգստանամ.

Չե՛ն դադարի՝ ես հաց ուտեմ:
Ջանավարներ Դավթի ահուց էլ չը փախան:

Իրիկուն Դավիթ գառ ու գական քշեց քաղաք:
Դավթի տոլեր էնպե՛ս էին ցրվե՝
Էնպես էին կտրտվե, որ Դավիթ սոլեր հանե,
Մտուցե ի կո՛ռ, ոտաբոբի՛կ կը գար:
Էդա անասուններ բերեց, լցրեց մեջ քաղաքին:
Կանչեց.— Դրկիցնե՛ր, էկե՛ք, ձեր ուլ ու գառ տարե՛ք...
Էնա էրկենականջ ուլեր ո՞ւմն է, չեմ ճանչնար,
Շա՛տ կը փախնեն, էկե՛ք, տարե՛ք, կը խատուցեմ...
Էնա էրկեն պոչով ուլեր ո՞ւմն է, չեմ ճանչնա,
Շա՛տ կը փախնեն, տփելո՛վ եմ բերե. խառնե մեջ գառներուն...
Քաղքըցիք էդա բան տեսան, ասին.
— Դավիթ ամեն աղվես ու նապաստակ ժողվե,
Մըլե մեջ գառներուն— գնանք, առնենք:
Էլան, ջոկեցին իրանց գառներ, տարան:
Ամեն մեկ ինչ ուլեց՝ տարավ—
Կո՛ւլ, նապաստա՛կ, աղվե՛ս:
Նապաստակներ մորթին, հետ ուլերու կերան.
Աղվեսներու, կուլերու մորթիք քուրքեր արին, հագան:
Էն վախտեն չուր հիմիկ՝
Նապաստակ հա՛ կը կենե՛ն, հա՛ կուտե՛ն,
Աղվես, կուլ էլ կանեն քուրք, կը հագնե՛ն:

Էն իրիկուն իշխան մարդեր գնացին,
Ջենով Հովանին ասին.
— Էն ծուռ արեր ես գառնարած,
Ջանավարներ, ուլեր իրարուց չի՛ ջոկի:
Էն սարի որս ամեն ժողվե բերե՝
Սարեր որս չի՛ թողե:
Մենք չենք թողնի, որ Դավիթ գառնարած անեք:

7

Ժողովուրդ հավաքվա՛վ, ասաց.
— Ապա ի՞նչ անենք Դավթի հետ
Բերենք նախրո՛ղ անենք:
Դավիթ ասաց.— Ինձ բերիք, արիք գառնարած

Ու հանիք դո՛ւրս—հիմիկ նախրո՞ղդ կանեք:
Զենով Հովան ասաց.— Դա՛վիթ, տղա,
Ուլեր քեզ շատ կը չարչարեն.
Դու ուլեր մի՛ տանի.
Նախի՛ր տար, էդա դաշտ արա,
Պառկի էնտեղ քընի,
Մինչև ես քեզ հաց կը բերեմ:

Հրողբեր գնաց, պողպատե սոլ մ' էլ էտու կարել,
Պողպատե կոռ մ'էլ էտու կոռել,
Առավ, բերեց, առավոտուն էտու Դավթին,
Էլավ լուսուն կանչեց.
— Հեյ-հե՛յ, էլե՛ք, մալեր թողեք Դավթի առաջ:
Դավիթ հորթեր չի՛ տանի արածացնելու,
Դավիթ տավա՛ր կը տանի արածացնելու:
Էլան, տավար թողին առաջ:
Դավիթ ժողվե՛ց էդա տավար.
Գընաց, էլավ Սասունա դաշտ:
Տավար բաց էթող, թավալավ, քնավ:

Քնուց որ ակահավ, նստեց, տեսավ՝
Տավար բարձրացե, էլե քարափներու պռունկ:
Էլավ, ընկավ հետև տավարներուն:
Էս դիր՝ խանդքներուց գելե՛ր, արջե՛ր փախան.
Ասաց.— Անիծե՛մ ես ձեր տիրու հեր, էլի՛ փախան:
Էնոնք փախան, Դավիթ ընկավ հետևներեն,
Էնչափ վազեց մինչև նեղացա՛ն, դադրա՛ն, ուժից ընկան:
Դավիթ բռնեց, բերեց մեջ տավարին:
Նորեն ընկավ սար-ձոր ու ման էկավ.
Ի՛նչ կադար ջանավար որ կար՝ ամեն ժողվեց,
Ասլանը մե՛կ կողմից բերեց,
Ղափլանը մե՛կ կողմից բերեց,
Պընգըլը մե՛կ կողմից բերեց,
Գելերը մե՛կ կողմից բերեց,
Արջերը մե՛կ կողմից բերեց—
Ամե՛ն գաղաններ ժողվեց, դաշտ լի՛ք արավ:
Դավթի աչից մեկ կարող չէր իրար դիպնի.
Մեկ որ փորձեր իրար դիպներ, տեղեն շարժվեր՝
Դավիթ էնպես կը բարձրացներ, կը տար գետին,

Որ մեջ գետնին կը խրվեին:
Անասուններ գաղաններու ահու կանգնած էին,
Էդ գաղաններ Դավթի ահու կանգնած էին,
Դավիթ էլ ամենու առաջ կայներ էր:

3

Իրիկուն Դավիթ նախիր քշեց,
Բերեց լցրեց մեջ Սասնա քաղքին:
Էլ մարդ դուրս չ'էլավ:
Քաղքըցիք վախից դռներ չը բացին.
Դռներ գոցեցին, դարգահներ կարկին:
Ինչ Դավիթ՝ կանգնավ Սասունա մեյդան,
Բա՛րձր ձենով կանչեց, բոռա՛ց, հա՛ բոռաց.
— Հե՛յ ժողովուրդ, էլե՛ք, ձեր տավար տարե՛ք,
Տարե՛ք, տեղավորե՛ք,— ասաց.
— Ով կո՛վ չուներ՝ կով եմ բերե,
Ով ե՛կ չուներ՝ եկ եմ բերե,
Բա՛ց արեք ձեր դռներ, դե բա՛ց արեք:
Ում մե՛կն ուներ՝ արի էրկուս,
Ում էրկո՛ւսն էր՝ արեր եմ տաս,
Ում որ տա՛սն էր՝ արեր եմ քսան,
Ում քսան էր՝ արեր եմ քառսուն,
Ինչի՞ չեք գա ձեր տավար տանեք:
Մեկ չի՛ էլնի իրեն տավար ջոկի, տանի:
Էնչափ կանչեց՝ մարդ չը տեսավ.
Մարդ չէ՛ր իշխենա դուրս էլներ:
Դավիթ ըռկավ, էդտեղ ասաց.
— Կ'էլնեք՝ չխո բարո՛վ չ'էլնեք, ջահաննա՛մ ըլնի.
Ես չոլերից ապատե, բերեր եմ տուն.
Տեր չեք ըլնի՝ ո՛ւր կէրթան, թող էրթա՛ն:
Հա՛յ գիդի աշխարք,— ասաց.—
Արի ու լավությո՛ւն արա:
Դավիթ իր գդակ կործեց գլուխ,
Պառկավ էնտեղ, քնավ՝ մինչև առավոտուն:

Իշխան մարդեր էլան, Ձենով Հովանի մոտ գնացին,
Ասին.— Ձենով Հովան, մեկ տավարից պիտի կտրես:
Քո տղան մեր քաղաք ավրեց.
Կը վախենանք էդ գելերեն,

Էդ արջերեն, գայաններեն:
Էս ի՞նչ բան է, էսքան գայան...
Տըղատերեր վախցան, ահու մեռան:
— Որ էնպես է,— ասաց Հովան,—
Կ'էրթամ կԴավիթ բերեմ տուն:
Ձենով Հովան գնաց, կանչեց.
— Դա՜վիթ, հորողբե՛ր մեռնի քեվ, ասա.
«Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք.
Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք...»:
Դավիթ էլավ վեր, ասաց.
— Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք.
Հալալ մնացե՛ք, հարամ գնացե՛ք...
Գայաններ փախան, գնացին սարեր,
Մնացին տավարներ:

Տավարներու տերեր էլան, դռներ բացին,
Ձիրենց տավար տարան, արին գոմեր:
Դավիթ ասաց.— Աստվա՛ծ ձեր տուն ավրի,
Դուք թող տվիք, պարարտ տավարներ փախան սարեր,
Մնացին լղարներ:

Իշխաններ Հովանին ասին.
— Էս է՛լ չ'էլավ, էս է՛լ չ'էլավ:
Էս տնավեր իսկի՛ մարդու շնորք չ՛ունի,
Ծուռ, օղորթմա՛նց ծո՛ւռ...
Դավիթ հասկացավ, ասաց.
— Ձեր գլուխն ուտի՝ էլ չե՛մ ըլնի ձեվ նախրորդ:
Էդտեղ Հովան բարկացավ, ասաց.
— Դու որ էսպե՛ս կ'անես,
Էլ ես քեվ չե՛մ կարնա շահի,
Դոր էլ կ'էրթաս՝ գնա:

9

Դավիթ էլավ Սասնուց, տեղ մի պառկավ քնավ:
Քեռի Թորոս առավոտուն էկավ Սասուն, հարցուց.
— Էս մեր տղան, Դավիթ, ո՞ւր է:
Ինչքան մարդ կար՝ կԴավիթ հայհոյեց.
Ինչքան կնիկ կար՝ անիծեց:

Քեռին գնաց տղան փնտռի.
Տեսավ՝ տեղ մի Դավիթ քնե:
Էնպես քացի մ' կարկեց էնոր,
Որ թե Դավիթ չ'ըլներ, ուրի՛շ ըլներ,
Յո՛թըն գավ գետնի տակ տ'էրթար:
Դավիթ քնից էլավ, ասաց.
— Քեռի ջան, ինչի՞ կը կարկես:
Քեռին ասաց.— Հաբա, ի՞նչ ես արեր, լաո:
Դավիթ ասաց.— Քեռի՛ Թորոս,
Էն-էն լըբոք տավար ինձի շատ չարչրեց:
Էդոր համար էլ քաղքցիք ինձ դուրս արին:
Ասաց.— Անխե՛լք, Սասունա ծուռ,
Էն տավար, որ շա՛տ կը փախնի, էնի մի՛ բեր.
Էն, որ շատ չի՛ փախնի, էնի տուր քո առաջ ու բեր:
Դավիթ ասաց.— Չէ՛, ես էսա տեղ չե՛մ կայնի:
Ուրիշ էրկիր նշանց տուր ինձ,
Որ ես էրթամ էնտեղ:
Էս անգամ քեռին առավ Դավթին, տարավ իր տուն:

10

Ժամանակ մի անցավ:
Էդ տարին գարուն նոր բացվեր էր.
Դավիթ ասաց.— Քեռի, գարո՛ւն է,
Հոտաղ մշակի վախտ է, ռանչպարու վախտ է:
Մենք քառսուն ջանով լցվեր ենք էդա տուն,
Խո դու պարտական չե՛ս՝ մեկի կամեն պահես:
Էլի՛, մեկի աշխատող դարձու:
Դատենք, աշունք բերենք մեր աշխատանք:
Ժողվենք վեր իրարու, ուտե՛նք, ապրենք:
— Հա՛,— ասաց,— Դավի՛թ, աստված քո արև ըսպանի,
Հըմլա էղար ինձի աշխատո՛ղ...—
Քեռի Թորոս ծիծաղեց վեր Դավթին, ասաց.
— Տո՛, ծո՛ւռ Դավիթ, արի քեկի տանեմ Դաշտու Պադրիայ,
Հոնի քեկ տամ նախրորդ, հոտաղ,
Դու առնես քո հախ՝ կոտ մի կորեկ.
Առնես, բերես մեր տո՛ւն,
Ես տանեմ ջաղաց, աղա՛մ,
Բերեմ քո քեռակին շաղա՛,

Թխա, թոնդրեն հանա, տա՛ քեզի,
Վերցուս, հաց մի ինձի տաս,
Ասես՝ քեռի, էդ իմ աշխատանքն է.
Առ, էդա հացըն կեր —
Էլի չեմ հա վտենա, էլի չեմ հա՛վտենա:
Ասաց.— Քեռի, որ էդմա՛լ է՝
Էլիր, ինձ տար, արա նախրորդ:

Քեռին գիտեր՝ Դավթի խոսք մեկ էր, երկու չէր անի:
Էլավ առավ կԴավիթ, գնաց Դաշտու Պադրիալ:
Տարավ, տվեց նախրորդ:
Ամեն բան էլ էնոր խրատ տվեց, ասաց.
— Տըղա, է՛դ տեսակ, էդ տեսակ տավար կը պահեն.
Լուսուն նախիր կը տանես,— ասաց,—
Սասնա սարի հետև, արոտատեղ.
Սիպտակ Քար կա, Սիպտակ Քարի տակ աղբո՛ւր կա.
Էն աղբրի վրա կեսօր տի հավաքես, ջուր տի տաս:
Խրատ էտու, էլավ, թողեց կԴավիթ,
Էկավ հասավ Սասուն:

Առավոտուն Դավիթ կնախիր տարավ արոտատեղ,
Ճաշին տարավ Սիպտակ Քար, վե՛ր աղբրին:
Տեսավ՝ որ յոթ գեղի նախրորդ ժողովված են.
Տավար բերե, կ՚արածան:
Դավիթ ասաց.— Ա՛յ նախրորդներ,
Արեք ես-դուք աղբեր ըլնենք:
Էդ նախրորդներ ու Դավիթ էղան աղբեր:

11

Գարո՛ւն էր. խալխի մալ կաբո՛ւն էր...
Անձրև՛ էր. թացությո՛ւն էր, տի՛լ էր...
Մալեր կը չոքվեին տիլ, կը պաղեին.
Օրական յո՛թ-ութ հատ տըլի մեջ կը մնային:
Դավիթ կը քաշեր դուրս, տըլից կը հաներ,
Իր փետ էնոնց ոտներ կը կապեր,
Փետ մ՚ էլ կը մտուցեր մալերու ոտներ,
Կը դներ ուսին, ու կը բերեր գեղ.
Կը բերեր տիրու տուն, կ՚արձակեր,
Ու կընկտոց կ՚ ասեր.— Նա՛նե, ձեր կովեր նիհար.են:

Եղանակ ցո՛ւրտ է, կը պաղե՞ն, կը տլվե՛ն,
Ձեն կարնա էլնի, կը փետնան, մե՛ղք են:
Էդ վախտ կընկտիք կ՚օրհնեին Դավթին, կ՚ասեին.
— Շա՛տ դատիս, շա՛տ ուտիս.
Քի՛չ դատիս, շա՛տ ուտիս.
Աստված քո արև պահի.
Որ դու չ՚էղնեիր էս տարի՝
Մեր կովեր ամեն կը փետնին:
Էդ վախտ Դավթին կը պատվեին,
Հաց կ՛անեին կը տալին, ձվածեղ կ՚անեին,
Հավկիթ կը տալին Դավթին,
Շա՛տ խորոտ հոգ կը տանեին:
Գեղացիք կ՚օրհնեին Դավթին, կ՚ասեին.
— Հարի մըկա էդպես նախրորդ մեկի ռաստ չի՛ էկե:
Դավիթ արածեցուց տավար մինչև ամառ.
Տավարներ լցվան, գիրացան:

12

Մնաց: Էկավ, էլավ Աստվածածին.
Աստվածածնա կիրակի օր ցասման ժամ կ՚անեն,
Կ՚ էրթան ուխտ, պատարա՛գ կ՚ անեն.
Պատարագ որ կ՚ անեն, հարիսա կը դնեն:
Հարիսա որ կը դնեն, ժամից որ կ՚էլնեն,
Կը գան պատարագի տիրոջ մոտ, հարիսա կ՚ուտեն:
Էդ Աստվածածնա կիրակի օր ճաշոցին
Դավիթ կնախիր ժողվեց, տարավ արոտատեղ,
Սիպտակ Քարի տակ, վե՛ր աղբրին:
Տեսավ՝ յոթ գեղի նախրորդներ ժողովված են.
Դավիթ տեսավ՝ գեղացիք, իշխաններ,
Խմբով ընկած ճամփա վե, հա՛մա կ՚էրթան:
Ասաց.— Ջա՛նըմ, լուսուն չուր կեսորին հա՛ կ՚էրթան,
Էդ կողմեր ո՞ւր կ՚էրթան:
Ասին.— Ցասման ժամ է՝ կ՚ էրթան մատա՛ղ տի կտրեն,
Էնտեղ սա՛կ տի կարկեն,
Տ՚էլնեն խա՛ղ անեն,
Էնտեղ քե՛ֆ տ՚անեն,
Հարիսա՛ տի դնեն,
Տ՚ուտեն, տի գան տակ:

Նախրորդ մի ասաց.
— Ո՞վ կ'էրթա էդ տեղեն մեկի հարիսա բերի՝
Փըշուր մի ուտենք:
Էդոնցեն մե՛կ էլ չը գնաց:
— Որ էդպես է,— ասաց Դավիթ,—
Դուք իմ նախիր պահեք՝ էրթամ:
Էնպե՛ս մի հարիսա բերեմ, որ կուշտ ուտեք:
Համա թե էդ նախրեն տավար մի կորչի՝
Ձեր յոթի գլուխ էլ տի կտրեմ:
Դավիթ էդոնց որ ահ տըվեց՝
Էդոնք ահու նստան:

Ու Դավիթ էլավ, գնաց էդա հարիսատեղ:
Հարց ու փորձ արավ էսոր ու էնոր,
Թե հարիսեն ո՞ր տեղն է դրած:
Ասին.— Է՛, է՛ն տեղն է դրած:
Ու գնաց Դավիթ տեսավ՝
Չորս ունկանի պղինձ մի հարիսա թոնդիր դրած.
Կընիկ մ' էլ կայնուկ պղնձի մոտ:
Դավիթ ասաց.— Նա՛նե, նա՛նե,
Ինձի քիչ մի հարիսա տուր,
Յոթ գեղի նախրորդ ժողովվեր ենք մեկտեղ,—
Դե՛հ, գեղի աղքատ որ կա,
Գեղի նախրո՛րդն է, հոտա՛ղն է,—
Քո հո՛ր խերին՝ մեկի հարիսա՛ տուր —
Տանենք, ուտենք: Կընիկ ասաց.
— Դե դո՛ւրս կորի, Սասունա ծուռ,
Չը գինա՛ս, որ ժամեն դեռ չեն էլած:
Կեցի՝ ժամեն էլնեն,
Տերտեր ժամեն տի գա մեր հարիսեն օրհնի,
Նոր հարիսեն տ'ուտենք:
Դավիթ ասաց.— Նա՛նե,
Տավար թողած եմ ուրիշին, մոտ մարդ չը կա,
Ես վռա՛կ եմ, հիմի՛կ տասես.
Նախիր կ'էրթա սարեր, խալխին վնա՛ս կը գա:
Էդ կընիկ ասաց.— Չե՛մ իտա.
Չուրի տերտեր չը գա, հարիսեն չօրհնի, չե՛մ իտա:
Թող ժամավորն էլ գա, ուտի,
Մնացող կը տամ՝ տարեք, կերեք:
Դավիթ ասաց.— Նա՛նե, մնացող շա՛ն կ'իտան:

Որ ասաց՝ նանեն քրվեց: Դավթի հերս էլավ,
Իր ձեռ թալեց, պղինձ թոնդրեն առավ,
Դրեց թոնդրան պռունկ,
Իր փետ անցուց պղնձի ունկ,
Վերցուց պղինձ շալկեց,
Վերցուց տաշտ մ՝ էլ դրեց գլխուն,
Եղի փարխաչ առավ ի ձեռ,
Ինչքան որ հաց թխած էին, վերցուց,
Զարկեց տակ իր թևին:
Յոթ շերեփ էլ վերցուց, ասաց.
— Էդա էլ մեկի գդալ:
Աստված թող ձեր մատաղ ընդունելի՛ անի:
Էդա կընիկ դարձավ Դավթին ասաց.
— Անիծե՛մ ես հըմլա մատաղ,
Էլ ի՞նչ մնաց, որ ի՞նչ ընդունելի անի:
Դավիթ կարկեց ու գնաց դաշտ:

Կընիկ վակեց, հավար տըվեց ժամ.
— Ձեր տուն ավերի՛, ա՛յ խալխ,— ասաց.—
Սասունա ծուռ Դավիթ էկավ,
Հարիսեն ու հացեր կամեն ժողվե՛ց, տարա՛վ:
Էնտեղ շատ մարդ կրուց կ՝աներ,
Մարդու մեկ բոռբոռաց.
— Էլե՛ք, կարկե՛ք Դավթին,
Հարիսեն ձեռնեն խլե՛ք:
Մեկ մարդ էնտեղ էր, ասաց.
— Դուք չ՝էլնիք ընկնիք էնոր առջև:
Քահանան էլ ասաց.
— Մ՝է՛րթաք, էրկու պղինձ հարիսա կա՛ դեռ կրակին.
Էն Սասունա ծուռ է, մ՝է՛րթաք,
Ձեկ տի կարկի, ձեկ տի խեղի,
Մեկ էլ բենամո՛ւս տ՝անի:
Ծերունի մարդ մ՝ էլ էնտեղ ասաց.
— Էն Մհերի կարմի՛ց է, մ՝է՛րթաք:
Թե որ կարցաք՝ էն չորս ունկանի պղինձ
Ձորսով տեղից վերուք՝ գնացեք,
Թե չէ, մ՝է՛րթաք, չէ՞ դուք խե՛ղճ եք...

Դավիթ հասավ Սիպտակ քար:
Էնտեղ պղինձ դրեց գետին,

Հարիսեն լիք լցրեց,
Եղ էն շերեփով լիք լցրեց՝
Բռռաց ընկեր նախրորդներուն.
— Արե՛ք, տղեկնե՛ր, հարիսա՛ կերեք:
Է՛յ, ինչի՞ չեք գա:

Տղեկներ ահուց ցամքած են.
Նոթեր կախած նստեր են:
Դավիթ դարձավ էնոնց, հարցուց.
— Ինչի՞ եք նոթեր կախե:
Նախրորդներեն մեկ ասաց.— Դավի՛թ,
Մենք նոթեր չը կախե՛նք, բա ո՞վ կախի.
Դու որ գնացիր՝ քեզնից էտև
Քառսուն հարամի դև էկան, վարկին,
Նախրից քառսուն տավար տարան:
Ասաց.— Բան չի՛ ըլնի, տղեկներ,
Արեք, նստեք, կուշտ մի ուտենք:
Էդ նախրորդներ ահու չը կարցա՛ն ճաշ ուտեն:
Դավիթ ասաց.— Տղեկնե՛ր,
Գիտեք թե ո՞ր տեղով տարան:
Տղեկներ Դավթին ասին.
— Հա՛: Ա՛յ, էդա սարո՛վ վարկին, անցան վերև:

13

Դավիթ կոպալ դրեց իր թև,
Ճամփան տվեց առաջ,
Շրջվեց սարի էն մի էրես,
Էլավ սար-ձոր փնտռեց, դևեր չը գըտավ:
Դավիթ գնաց, իջավ Արքըկու տակ, Սըպլանաց մոտ,
Գնաց, հասավ սարի մի լանջ.
Տեսավ՝ քարափներու մեջեն ծուխ կը գա դուրս,
Բռնեց էդ ծուխ, գնաց.
Տեսավ, քառսուն հարամի-դև
Քառսուն կովեր բերե՝ մորթե,
Լցե քառսուն կանթեն պղինձ,
Օջախ շինե, դըրե օջախ,
Քըլքըլթալեն կ՚էփեն:
Դավիթ վերցո՛ւց քառսուն կանթեն պղինձ,
Շրջեց էդ օջախի վերան.

Քառսուն կաշին ժողվեց, լցեց մեջ պղնձին,
Գնաց, մտավ էնոնց քարայր:
Մտավ ու ի՞նչ տեսավ.
Որն իր խալու վրա պառկե,
Որն իրեն քամար խա՛ղ կ'անի,
Որն իրեն տեղ պառկե, քնե,
Որն էլ— ուրախութե՞ն կ'անի:

Դավիթ որ էդ տեսավ՝ Դավթի աչքեր դարձան:
Դավիթ դարձավ ու էլավ դուրս,
Մեկ մեծ քար մի առավ, գրկեց,
Էկավ մտավ մեջ քարայրին,
Էդ քար դրեց քարայրի դուռ,
Որ էդոնք չ'էլնեն, չը փախչեն:
Դավիթ էդտեղ մեկ որ բոռաց,
Սարսափ թափավ հարամի դևերու վերան.
Դևերու մեծ էնոր ձեն լսեց, ասաց.
— Էլե՞ք, ծառայությո՛ւն արեք, որ չըսպանի մեկի:
Էնի Դավիթն է, էլեք վե՛ր:
Համա Դավիթ բռնեց, մեկ-մեկ էնոնց վիկ օլորեց,
Կտրեց, թալեց քարայրեն դուրս:

Դավիթ դարձավ տեսավ՝ քարայր էնպե՛ս է լիք —
Խապինա՛ է էնոնց քարայր:
Մարդու ինչ բան որ պետք կը գա՝ լի՛քն էր էդտեղ:
Տեսավ՝ էդտեղ ոսկի էրկանք...
Տեսավ կուտակ մի ոսկի՛ է, մեկէլ՝ արծաթ:
Ողջ Սասունա ապրանք, հարստություն՝
Քանի Դավթի հեր մեռեր էր՝
Էդոնք ավերությո՛ւն արած,
Բերած լցած են էդա տեղ:

14

Դավիթ իր հաբգա՛ն լցեց ոսկին, կապեց մեջքին,
Էն մորթոտած մալի կաշիք ու գըլուխներ
Լցեց մեջ էնոնց պղնձին,
Ոսկի լցրեց մեջ պղնձին,
Կոպալն անցրեց պղնձի կանթ,
Թալեց իրեն ուսի վերան,

Առավ, էկավ հարիսատեղ:
Տեսավ՝ տերտերներ նո՛ր հաց կ'օրհնեին:
Առավ պղինձ, տարավ դրեց ժամու դռան.
Տերտերոջ պա՛հ տվեց, ասաց.
— Տերտե՛ր, ճա՛շ տվեք, ես ուտեմ.
Տարածս անջախ իմ ընկեր նախրորդնե՛ր կերան:
Տերտերն ահու ասաց.— Էս տղին ձեռ չը տաք.
Համ մեր պղինձ տարավ, համ էլ դարձուց, բերեց.
Հաց է՛լ կտաք, ուտի, էլնի էրթա:

Գնաց, նստավ Դավիթ լուկ մի էդ հարիսից կերավ,
Էլավ, էկավ, դարձավ ռամկին.
Ըկյեկներու տերեր կանչեց, ասաց.
— Ձեն մի՛ հանեք, ձեկ բան տ'ասեմ:
Եկան կաշիք հանե՛ց, թափեց.
Ամենք էկան, իրենց տավրի կաշին ճանչցան:
Դավիթ ասաց.— Ձեր մալերու ոտն ու գլուխ՝
Ձեր հարիսի՛ փոխ՝ ինչ տարա, առեք,
Էսա մեծ պղի՛նձն էլ՝ ձեր պստիկ պղնձի՛ն է փոխ.
Էս ոսկի՛ն տարեք,
Բաժին արեք՝ ձեր տավարի մսի՛ն է փոխ.
Համա կաշիք թողեք տանեն էն շիվարներ.
Հագնեն իմ հոր խերին:
Վա՛յն է էկե ձեր գլխներուն,— ասաց.—
Թե իմ աղբերներու հախից ճանկ մի կորեկ կտրեք՝
Ձեր տուն ես կ'անեմ Դավթի ավերած:
Ասին.— Ջա՛նըմ, առ քո խաթեն ու հեռացի:
Աղբերներուդ հախ չե՛նք կըտրի:
Դավիթն էլավ, էկավ հասավ աղբերներուն:
Էկավ տեսավ հալա հարիսան չե՛ն կերե,
Հալա նստած են՝ նոթեր կիտած:
Ասաց.— Աղբերներ, հարի ե՞րբ նոթեր կիտեք,
Դարդ կ'անեք, որ աղ չե՞մ բերե.
Էլեք, կերեք էդ հարիսան,
Գացեք իրիկուն, աղն էլ ձեր տուն կերեք.
Ասին.— Դավիթ, բա ի՞նչ անենք.
Էդ եկներու տերերուն ի՞նչ պատասխան տանք:
Ասաց.— Տարե, եկան կաշին տերվըտե՛ր եմ արե:
Ու թամբահ եմ արե,
Որ ձեր հախից ճանգ մի կորե՛կ էլ չը կտրեն.

Թե որ կըտրեն, ինձի ասե՛ք,
Կ'էրթամ, էնոնց տներ կ'անեմ Դավթի ավերած:
Նոր էդ նախրորդներու չանեք բացվավ,
Կարցան հարիսան ուտեն:
Որ կերան, Դավիթ ասաց.
— Էլեք, տավար ջոկեք, ես տ'էրթամ տուն,
Ասին.— Դեռ կեսօր է, Դավիթ:

Դավիթ յոթ հարամու ականջ տվեց էնոնց,
Ասաց.— Գընացեք գեղ, ասեք,
Թող կջորիք առնեն,
Գան էդ ապրանք տանեն:
Նախրորդներ վազեցին գեղ, ասին.
— Էլե՛ք, գընացե՛ք, դներ կքառսուն եկ մորթեր են.
Դավիթ կքառսուն հարամի դև սպանե՛ր է,
Կ'ասի՝ թող գա՛ն, ապրանք տանե՛ն:
Գեղականներ ասին.— Դուք սուտ կ'ասեք:
Տղեկներ ասին.
— Թե սուտ էղավ՝ կմեր ականջ կտրեք:

15

Ինք, Դավիթ էլավ,
Նախիր խառնեց առաջ,
Քշեց, էկավ Դաշտու Պադրիալ, ասաց.
— Առեք ձեր տավար, ձեր նախիր.
Ձեր նախիր չե՛մ պահի:
Թողեց, գնաց Սասուն, իր տուն:
Էկավ, հասավ Քեռի Թորոսի օդեն,
Մտավ, բարև՛ էտու, հարցուց.— Քեռի՛,
Մեր տուն քանի՞ մարդ ենք:
Ասաց.— Լա՛ո, քեկնով քառսո՛ւն մարդ ենք:
Ասաց.— Քեռի՛, օղորմի քո պապուն,
Մեր տուն քանի՞ տղամարդ ենք:
Ասաց.— Տըղա, լա՛ո, չէ՞ որ ասի,
Աստված քեկի վերու,
Քեկնով քառսո՛ւն կը թամամենք:
— Էդ լա վ,— ասաց.— Բա մենք քանի՞ ջվալ ունենք:
Ասաց.— Աստված քո արև սպանի,
Քո ջվալով քառսո՛ւն ջվալ ունենք, ի՞նչ կ'ուզես:

Դավիթ ասաց.— Քեռի ջան, դու մի՛ նեղանա.
Էլի՛ր, մարդոց խաբար արա,
Ջվալ առնեն՝ էրթանք ոսկի բերենք:
— Դե, դե՛,— ասաց.— Շա՛նորդի ծուռ,
Կորեկ չը բերիր՝ ոսկի՞ բերես:
Ասաց.— Քեռի՛, էլե՛ք, էլե՛ք,
Շա՛տ կ'աղաչեմ, էլեք էրթանք,
Աշխարքի մալ-խապինեն ամե՛ն տամ ձեկ.
Էդ էրեսունինը մարդ ինձ հետ թող գա, էրթանք:
Թե էրեսունի՛ն ջվալ ոսկի-արծաթ բերե՛նք՝
Ջաթի մեր մալն է՝ կը բերենք, կ' ուտենք:
Թե չը բերի՛՝ դուք էրեսունինը մարդ
Ինձ ըսպանեք, էլեք, էկեք ձեր տուն:
Քեռի Թորոս սուտ խոսելուց կը խրտըներ:
Ասաց.— Տղե՛ք, էլեք էրթա՛նք.
Որ սուտ էղավ՝ կԴավիթ կը սպանենք:
Էդ վախտ Դավիթ իրա մեջքեն քանդեց հաբգան,
Թափեց ոսկին Քեռու առջև:
Քեռին ոսկին տեսավ՝— Վա՛յ, Դավիթ ջան,— ասաց.
— Քո գլխո՛ւն, արևո՛ւն մեռնեմ,
Դու հարամի դևեր ըսպաներ ես...
Բռնեց Դավթի էրեսներ պագեց:

Էլան, առան ջորիք, էլան էրսունինն էլ կանգնան,
Առան էրսունինը ջվալ,
Ջենով Հովան ու Վերգոն էլ
Առան ամեն մեկ-մեկ ջվալ,
Ընկան Դավթի հետև, գնացին...
Դավիթ գնա՛ց, գնա՛ց.
Գնաց հասավ Սիպտակ Քար:

Էնտեղեն էլավ քարայր:
Էնոնք տեսան դևեր ընկած են այրի դուռ,
Ուռած, էղա՛ծ են ամեն մեկ քանց Պող Բլուր:
Ցռան Վերգոն՝ վախցավ,
Իրան ջորին մեկէլ ջորիներուց պրծուց, փախավ:
Ուրիշներ էլ, դևի ջանդաք, գլուխ որ տեսան՝
Մեկ-մեկու հետևեն կ'ուզեն փախնեն:
Դավիթ դարձավ, բոռաց.— Հեյ-հե՛յ,
Տնավերնե՛ր, ո՞ւր կը փախնեք, ըսպանե՛ր եմ.

Ասաց.— Թե չե՛ք հավատա ինձ
Դարձեք, ձեր էտև նայեք.
Էնոնց ականջ կտրե, լցրեր եմ էդատեղ:
Դարձան, էդ ականջներ տեսան,
Ջորիներն առան, էկան դեհ էն քարայր:
Քարայրի բերնից Դավիթ էն ժայռ վերցուց, քցեց,
Առավ Քեռի Թորոս, Ջենով Հովան, Վերգո,
Մըտավ մեջ քարայրին:
Էնոնք ինչ որ տեսան էդա ոսկի՛ն, ապրա՛նք,
Ուրախութենեն էնոնց ոտներ գետնեն կտրավ:
Ինչ կա՛ր, չկա՛ր ժողովեցին,
Ոսկիք լցրին ջվալներ,
Ոսկի էրկա՛նք, ամեն ապրա՛նք,
Բե՛ռ բեռնեցին, ջորի՛ք բարձին,
Տարան իրենց տներ:

Էդ ամեն լցրին Սասնու ամբարներ:
Սասուն էնպե՛ս էղավ, որ կը ճըճեր:

Դավիթ իր համար մենակ ձի մի առավ քարայրեն:

ՈՐՍՈՐԴ ԴԱՎԻԹԸ ՎԵՐԱՇԻՆՈՒՄ Է ՀՈՐ ՎԱՆՔԸ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ԽՈԼԲԱՇՈՒ ՋՈՐՔԵՐԻՆ

1

Դավիթ դներուն որ կոտորեց,
Էդ վախտ էղավ տան ապիկ.
Գտավ աղեկ բապե մի,
Ընկավ արտեր, որս կ'աներ.—
Ճնճղո՛ւկ կը սպաներ, կաքա՛վ կը սպաներ:

Սասուն Պառա՛վ մի կար.
Էդ Պառավ Մհերի յարն էր էղե:
Էնի արտ մի կորեկ ուներ:
Կորեկի մեջ լորերը շա՛տ, ճնճղուկը շա՛տ:
Պառավ օր մի էկավ, տեսավ՝
Բապեն ի ձեռք, քուռակ հեծած՝
Դավիթ մե՛ջ իր արտին լոր, ճնճղուկ կը վարկեր:
— Դավիթ,— ասաց,— փռեմ, լա՛մ քո արև,
Էդ ի՞նչ կ'անես.
Էկեր ես իմ կորեկի մեջ լո՞ր կը սպանես,
Էլի՛ր, գնա, մեջ սարերուն քի՞չ կա օչխար.
Էն վիրու օչխարնե՛ր վարկի,
Էս ճնճղու մեջ ինչքա՞ն միս կա,—
Դու Պառավի կորկի ճընճղո՞վ տի կշտանաս...
Դավիթ ասաց.— Պառավ, հապա, սար որ էրթամ
Ինչո՞վ վարկեմ վիրու օչխար:
Ասաց.— Քո հեր նետ ու աղեղ ուներ:
Էդ նետ-աղեղ, ասա, թող տան՝ էնո՛վ գնա:
— Բա՛,— ասաց Դավիթ.

— Իմ հոր նետ-աղեղ ո՞ւմ մոտն է:
— Քո հրողբոր կընկա՛ն հարցուր:
Էկավ Դավիթ, հրողբոր կնկան, Սառյեին հարցուց.
— Հրողբոր կնիկ, իմ հոր նետ ու աղեղ ո՞ւր է:
Ասաց.— Մեռնե՛մ ես քե, Դավիթ, ես չե՛մ գիտի:
Տեսեր եմ՝ նետ-աղեղ քո հոր թև՛ն էր.
Հիմիկ ես չե՛մ գիտի ո՛ւր են մնացե:
Մնաց: Դավիթ տեսավ, որ ճար չը կա՝
Էլի գնաց Պառավու կորկի արտ:
— Պառա՛վ,— ասաց,— իմ հրողբոր կընիկ
Նշանց չի՛ տա նետ ու աղեղ:
Ասաց.— Մեռնե՛մ քեզ, ծուռ Դավիթ, թլո՛ր Դավիթ,
Գնա, նեղի քո հրողբոր կնկան
Ու նետ-աղեղ կոռովե՛ն առ:
— Ինչպե՞ս նեղեմ, Պառավ:
Ասաց.— Գնա, քարից աղանձ արա, ասա՝
«Կամ էս աղանձ տ՛ուտես,
Կամ նետ-աղեղ նշա՛նց տի տաս»:
Դավիթ էկավ, ասաց.— Սառյե, անոթի՛ եմ:
Սառյեն ասաց.— Մեկ հաց չը կա:
Դավիթ նստեր է թոնդրան շուրթ,
Քարե աղանձ կանի, կը ճընճըլա:
Սառյեին դժար էկավ, ասաց.
— Դա՛վիթ, էլի, նա ցանոցից քի՛չ մի ցան բեր.
Խմոր անեմ՝ թխեմ ուտես:
Դավիթ էլավ՝ ցանոցից ցան բերի, տեսավ՝
Բան մի էդա պատից կախուկ—կոռուկ փետ մի:
Առավ էդ փետ, բերեց, ասաց.
— Հրողբոր կնիկ, էնա ի՞նչ է:
Ասաց.— Չեմ գիտի, հրողբե՛ր գիտի:
Դավիթ ըռկավ, ասաց.— Հրողբո՛ր կընիկ,
Ասա՛, էն ի՞նչ կոռուկ փետ է:
Սառյեն ասաց.— Էլիր,
Թե էնա թել դու գցեցիր էնա չախմախ, կ՚ ասեմ.
Թե չէ՝ չե՛մ ասի:
Դավիթ ինչ ձեռ տվավ էդա փետին՝
Թել թալեց վեր չախմախին:

Սառյեն շատ շշկլավ, ասաց.
— Մհեր սհա՛թ մի կը բաներ, նոր կը գցեր էդ թել-

Էսի մեկ դիր որ ձե՛ռ էտու, գցեց չախմախ:—
Դարձավ, ասաց.— Ես չե՛մ գիտի՝ էդ ինչ է, թո՛ղ:
Էդա վախտ Դավիթ Սառյեի ձեռ բռնեց,
Քաշեց, տարավ էն աղանձի բովի վերա.
Իր ձեռ կարկեց, մեկ բուռ քարե աղանձ վերցուց,
Լցեց Սառյեի ձեռաց մեջ՝ ու էնոր ձեռ խփեց:
Սառյեն «յամա՛ն-յամա՛ն» արեց, ասաց.
— Քո արևո՛ւն մեռնեմ, Դա՛վիթ, թող, ես ասեմ:
— Թափի՛ գետին, հրողբոր կընիկ:
Թափեց գետին, ասաց.— Չե՛մ գիտի, չե՛մ ասի:
— Հրողբոր կընիկ, տե՛ս, մեկ է՛լ կը լցեմ:
Էդ վախտ Սառյեն ասաց.— Դավի՛թ,
Էդա քո հոր նետ-աղե՛ղն է,
Էնով Մհեր որսի կ'էրթար:
Դավի՛թ էր՝ խնդացավ,
Ձնետ-աղեղ առավ,
Բերեց մաքրեց, լվաց,
Ժանգեր-մանգեր քերեց,
Ձնետ-աղեղ իր թև էթալ
Ու ամեն օր որսի կ'էրթար:

2

Ամիս մ'էրկու էսպես վրա՛ անցավ.
Չ'ասես՝ Ձենով Հովանի կնիկ Սառյեն —
Դավիթ շատ սիրուն, խորո՛տ տղա էր —
Գաղտուկ աչք էդի վեր Դավթին, ասաց.
— Տի գաս հե՛տ իմ ձեռաց:
Դավիթ ասաց.— Հրողբո՛ր կնիկ,
Դուն իմ մե՛րն ես, ես քո որդի՛ն...
Հրողբոր կնիկ ասաց.— «Տանեմ, գլուխ լվամ,
Դավիթ գա՝ ջո՛ւր լցի վեր իմ գլխուն.
Որ Դավիթ իմ մարմին տեսնա՝
Էնոր սիրտ տի մեղավորնա,
Տի գա հետ իմ ձեռաց»:
Էլավ, ջուրն առավ, տարավ,
Դավթին կանչեց, գա, ջո՛ւր լցնի:
Դավիթ աչքեր բռնեց,
Որ հրողբոր կնկան լեշ չը տեսներ,
Որ իր սիրտ չը մեղավորնար,

Ու էնպես ջուր լցրեց Սառյեի գլխուն:
Հրողբոր կնիկ գլուխ լվաց,
Էլավ, իրիշկեց, տեսավ՝
Դավիթ իր աչքեր պինդ բռնած:
Էլա՛ց, էտո՛ւ գլխուն,
Իր էրեսներ արնեց,
Մակեր քըրքըրե՛ց վեր գլխուն,
Գնաց իր տուն՝ նստավ,
Զուր էնոր մարդ, Զենով Հովան էկավ:
— Հե՞, կընիկ, ի՞նչ է էղեր քեզի:
Կնիկ ասաց.— Ի՞նչ տ՚ըլնի:
Ես գիտեի՝ թե ինձ որդի՛ էիր բերե,
Զը գիտե՛ի, թե դու գնացե՝
Ինձի էրի՛կ էիր բերե:
— Հե՞, կնիկ, էդպես չէ՛. դու սո՛ւտ կ՚ասես:
Կնիկ ասաց.— Ես սուտ չե՛մ ասի.
Էլավ, իր ձեռ էթալ ինձի,
Ես էնոր չը թողի...
— Որ էդպես է, իրիկուն դուռ շինենք:
Իրիկուն Զենով Հովան դուռ շինեց.
Չ՚էթող Դավիթ գար տուն:
Դավիթ ասաց.— Հրողբեր,
Հիմիկ կարամ քացի մի կարկեմ՝
Դո՛ւ էլ, քո դո՛ւռ էլ էրթաք գետնի տակի անդունդք:
Ամա ի՞նչ անեմ, հերագութ հրողբեր,
Էրբե՛ խաբված ես:

3

Դավիթ գնաց, իրիկուն մնաց Պառավու տուն:
Առավոտուն էդ տեղեն էլավ, գնաց որսի:
Ճամփին տեսավ շատ ագռավներ —
Զարկին վեր Պառվու արտին, կորեկ տ՚ուտեն:
Դավիթ ասաց.— Ինչպե՞ս անեմ,
Որ քսան հատ մեկից կարկեմ.
Էսա ագռավներ կը թռնեն:
Չէ, ես բա՛ն մի տ՚անեմ:
Ձեռ որ թալեց, մեկ ահ՛սգին բարդի քաշեց,
Քաշեց ու մեկ էնպե՛ս էկար,
Որ ագռավնե՛ր, կորե՛կ մեկտեղ ժողվեց,

Բերեց, արեց բարդոց: Պառավ էկավ,
Տեսավ մեկ հատ կորեկ չը կա մեջ իր արտին:
Ասաց.— Օ՜յ, օ՜յ, գրող-մա՛հ տանի քե, Դավիթ.
Դու ինչի՞ իմ կորեկն էսպես արիր:
Ասաց.— Պառավ, չէի թողնի,
Որ ագռավներ կքո կորեկ ուտեն:
— Զա՛րըս կքեկ տանի, գրո՛ղ կքեկ խեղդի,— ասաց,—
Տո, դու գաս վեր Պառվու կորկին
Քո փռո՞ղք տի թափես:
Աստծու կրա՛կ ըլնի վեր քեկ.
Էն հոր տղեն դո՞ւ տի ըլնես:
Աստված օղորմի Առյուծ Մհերին.
Էնի որ կար՝ խեղճերու պապ ու մամ:
Համա դու էդ ի՞նչ է՝ կ'անես.
Իմ հույս՝ էդ փշուր կորե՛կն է:
Դուն էլ էկար, տրորեցի՛ր:
Ե՛ս եմ՝ մեկ աղջի՛կ, էս կորե՛կ,
Իմ բա՞խտը կը կըտրես վեր ինձ:
Դուն որ էդպես տղամարդ ես՝
Հորի՞ չես էրթա Ծովասար:
Թե կտրիճ ես՝ գնա, քո հոր որսատե՛ղ առ:
Քո հոր սեյրանատեղ Ծովասա՛րն է:
Հրեն, Մըսրա Մելիք էկե,
Քո հոր սար կավթե՛,
Էդա Ծովասար բոլոր պարիսպ քաշած՝
Էնքա՛ն գաղաններ, վիրու օչխարներ
Թալա՛ծ են պարսպի էտև —
Ձեն կարնա դուրս էլնեն:
Հիմիկ ինչի՞ դու չես էրթա էնտեղ.
Վեր ինձի՞ էղար կտրիճ:
Դավիթ ասաց.— Պառավ,
Ես հոգո՛ւդ, արևո՛ւդ մեռնեմ,
Ո՞րտեղն է, շա՛նց տու ինձ,
Ծովասար ո՞րտեղն է, ես չը գիտեմ:
Ասաց.— Դավիթ, գնա քո հրողբոր օձիք բռնի.
Քեկ կը տանի, նշա՛նց կը տա:

4

Դավիթ էկավ հրողբոր մոտ, ասաց.— Հրողբե՛ր,
Ծովասար ո՞րտեղն է, նշա՛նց տուր ինձ:

Իմ հոր սեյրանատեղ ո՞րտեղն է:
Հրողբեր ասաց.— Ո՛րդի, քեզ խաբե՛լ են.
Քո հոր սեյրանատեղ չըկա՞.
Քեզ խաբե՛լ են, քեզ սո՛ւտ կ' ասեն:
— Չէ, հրողբեր, ես գիտե՛մ, կա՛.
Ես կ' երթամ, չե՛մ կայնի: Սուտ մի՛ ասա:
Հրողբեր ասաց.— Սովորեցնողիդ բերան կոտրի:
Ա՛յ որդի, ինչ քո հեր մեռավ՝
Մըսրա Մելիքն էն սար խլեց.
Չե՛նք իշխենա երթանք:
Ասաց.— Հրողբեր, դու ինձ նշա՛նց տու,
Որ գան, ինձի՛ թող ըսպանեն, քեզի չե՛ն ըսպանի:
Ասաց.— Ո՛րդի, էսօր մնանք, էն մեկել օր երթանք:
Դավիթ նորեն ըռկավ, ասաց.— Հրողբեր,
Ծովասարի տեղ թե հիմիկ կ' ասե՛ս, ասա՛,
Չ' ասես՝ հա՛ցն ու գինին, տեր կենդանին,
Սիլա մի կտամ քո երես, քո վիզ ծռի:
Որ էդպես ասաց, հրողբեր վախեցավ,
Տեսավ, որ Դավթի ծռությունըն բռներ է:
Ասաց.— Տղա, լա՛վ, մի՛ հերսոտի,
Արի, տանե՛մ, քեզ նշա՛նց տամ:

Զենով Հովան էկավ Քեռի Թորոսի մոտ,
Քաղքի մարդերու մոտ, ասաց.
— Ես չե՛մ գիտի՝ Դավթին ո՛վ է նշանց տվե.
Էսօր Դավիթ ինձ կոռե՝ կ' ասի տ' երթանք Ծովասար:
Էդա քաղքի ամեն մարդեր ասին.
— Հովան, դուք որ կ' երթաք՝
Մենք է՛լ գանք, էնտեղ մտիկ անենք:
Էնտեղ հիմիկ ջոջ-ջոջ արջե՛ր կան, գելե՛ր կան,
Կխտա՛ր, վիրու օչխա՛ր էլ կա.
Տեսնանք Դավիթ ինչպե՞ս տի սպանի վիրու օչխար:
Էլավ Դավիթ՝ ձի հեծավ, գնաց Ծովասար:
Տղերք պատրաստությո՛ւն տեսան,
Զենով Հովան ու քաղքըցիք իր հետ գնացին:
Գնացին, հասան ու—ի՞նչ տեսան:
Ծովասարի բոլոր մի մեծ պարիսպ քաշած,
Դո՛ւռ մ' էլ չը կա վերան:
Դավթի հեր—Մհեր,
Որ սարերու չորս բոլոր պարիսպ էր քաշե,

Էնքա՛ն ժամանակ՝ էնոր մեռնելուց հետո՝
Ինչքան ջելրան, վիրու օչխար,
Գե՛լ, ա՛րջ—լցվեր էր Ծովասար:
Դավիթ հարցուց.— Հրողբեր, էս ի՞նչ պարիսպ է:
— Քո հոր որսասարն է,— ասաց:
Դավիթ էլավ սարի գլուխ,
Տեսավ՝ չորս կողմ պարիսպ:
Ո՛ր կողմ դարձավ, փնտռեց, դուռ չը գտավ:
Դավիթ կանչեց.
— Յա՛, բարձրիկն Մարութա Աստվածածին...
Գուրպ վարկեց, պարիսպ փլավ:
Դավիթ մտավ ներս—ի՞նչ տեսավ.
Էնտեղ ծա՛ռ, ճո՛ւղ, բա՛ղ ու բաղչա՛, կանա՛չ,
Էնտեղ մեկ մեծ հավո՛ւպ շինուկ,
Աղբուրի պես, մեջ հավուպին ջուր կը գլգլա՛, կ՝էրթա՛:
Ի՛նչ չափ գաղաններ կա՛ն՝ ամեն էդտեղ են:
Ասաց.— Վա՛յ, իմ հեր ինչքա՛ն մեղք է գործե՝
Որ էս գաղաններ գերի՛ է դարձուցե:
Էդա մարդիկ, ինչ իր հետ գնացեր են՝
Ուպեցին վարկեն, սպանե՛ն օչխարներ:
Դավիթ իրիշկեց, իրիշկեց, կանչեց ասաց.
— Էհե՛յ, ձեպ իրավունք չկա՛...
Էնոնցից մե՛կն էլ չը սպանե՛ք:
Մոտիկ մի՛ գաք, ես չե՛մ թողնի էնոնց վարկեք:
Զենով Հովան ասաց.
— Հրողբե՛ր մեռնի քեպի, Դավիթ,
Զա՛րկ, հա՛տ մի ըսպանի, բռնենք պէնենք:
Դավիթ ասաց.— Հրողբեր, ջա՛նըմ,
Կապուկ տեղ պա՛պս էլ կը վարկի.
Տղամարդն է՛ն է, որ արձակի ու նո՛ր վարկի,
Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր,
Մարդ էլ գերին վարկի՞:
Դավիթ քացի մ՝ տվեց. պատեր վամեն քանդեց:
Իր կապան հանեց, թալեց էրկինք վե՛ր, ասաց.
— Հոյ-հո՛յ... Ամեն գաղաններ փախան:
Ասաց.— Գնացե՛ք, ձեպի համար ապրե՛ք:
Ինքն էլ էլավ էկավ սարի մեջ, ձորի մեջ,
Ման էկավ քարի՛ տակ, ծառի՛ տակ,
Հա՛, ման էկավ, ասաց.
— Չ՝ըլնի՝ մեկ ջանավար քնո՛ւկ ըլնի—մե՛ղք է:

Գաղաններ ամեն դուրս հանեց,
Էկավ քաղքըցոց ասաց.— Դե, գնացե՛ք,
Ով կըտրի՛ճ է՝ իր համար թող կարնի:
Ով ինչ կտրիճ էր՝ գնաց, իրան որս արեց.
Ով ինչ անշնորհք էր՝ ետ մնաց:
Ամենն էլ ետ դարձան, էկան Ծովասար,
Դավիթ էլ գնաց, էրկու վիրու օչխար բռնեց,
Բերեց դրավ հավուկի մոտ,
Ինք մտավ հավուկ լողացավ, էլավ,
Օչխարներ կէնեցին աստծուն,
Իրանց համար կրակ կպցուցին,
Խորոված շինեցին, կերան, նստան էդտեղ:

5

Էն մարդեր ու Դավիթ մնացին չուր իրիկուն:
Իրիկուն էդա քաղքի մարդեր
Ամեն դարձան, էկան տուն:
Հովանն ասաց.— Դավիթ,
Էլիր, մենք է՛լ էրթանք տուն:
Դավիթն ասաց.— Հրողբեր,
Իմ հեր էստեղ շա՛տ է ման էկե,
Ես էս գիշեր տի մնամ էստեղ:
Ասաց.— Դա՛վիթ, մարդ գիշերներ դուրս չի՛ մնա,
Գիշեր կ'էրթա իր տուն:
Տեսա՛ր, էդա քաղքի մարդեր ամեն գնացին:
Մենք էլ տ'էրթանք մեր տուն:
Ասաց.— Հրողբե՛ր, չէ, էս իմ հոր տեղրանքն է.
Գիշեր ես տի մնամ էստեղ:
Կ'ուզես՝ դուն գնա տուն:
Էլավ, ծառերու տակ պառկավ՝ քնի:
— Դավի՛թ,— ասաց Հովան,—
Որ դու կը մնաս՝ ես է՛լ կը մնամ:

Մընաց: Իրիկուն Դավիթ շուտով քնալ:
Հովան նստեց, չէ՛ր իշխենա՝ քնի.
Էն իր միտ վե՛ ասաց.— Ինչպե՞ս անեմ,
Որ դադարի Դավիթ:
Բերեմ, էնոր փեշ դնեմ տակ իմ գլխին,
Որ գիշերով Դավիթ ինձ չը թողնի՝ չ'էլնի՝ էրթա:

Հովան Դավթի կապայի փեշ ժողվեց, բաշեց,
Գաղտուկ բերեց, դրավ տակ իր գլխին,
Քընավ: Համա կը դադարի՞ Դավիթ...
Մընաց. էղավ գիշերվա կես:
Դավիթ վարթնավ քնից.
Էլավ, նստեց, իրիշկեց— ի՞նչ տեսավ.
Սարի գլուխ ճրա՛գ մի կը վառվի:
Տեսավ՝ լուս-կամար կանգներ է.
Ասաց.— Էսա ի՞նչ ճրագ է.
Տեսնեմ՞ ի՞նչ մարդիկ են էնտեղ:
Ուզեց էլնի, տեսավ՝ կապայի փեշ
Հրողբեր իր գլխու տակ դրե, քնե:
«Ո՛վ տեր աստված,— ասաց,—
Թե իմ հրողբեր վե՛ր հանեմ,
Տ'ասի՝ Դավիթ վախեցավ:
Թե չը հանե՛մ՞ կապայի փեշ իր գլխու տակն է»:
Դավիթ հրողբոր վե՛ր հանեց, ասաց.
— Էնա լեռի գլոխ ի՞նչ կանաչ-կարմիր բոց կ'իջնի:
Հովան գիտե, որ Մհերի գերեզմանն է,
Ու լուս կ'էլնի գերեզմանից,
Համա կ'Դավիթ խաբեց, ասաց.
— Կրրակ կը կրպցնեն. հալբաթ հովիվ,
Կամ թե նախրո՛ղ է, գառնարա՛ծ...
Ես ի՞նչ գիտեմ՞ ո՞ր մեկրն է:
Դավիթ իր սրտի մեջ չը համոզվավ էդ խոսքերուն:
Էրկուսի քուն էլ տարավ, կող էլան, քնան:
Զենով Հովան մեկ է՛լ Դավթի փեշ դրեց գլխու տակ,
Որ Դավիթ չ'էրթա՝ էդ գերեզման նայի:
Մնաց. մեկ մ'էլ Դավիթ կարթնավ,
Տեսավ՝ սարի վրա մարմար քա՛ր մի բացվե,
Էրկնուց լուս էկե վե՛ր էն քարին:
Էս դիր Դավիթ հրողբոր ձեն չը տրվեց, ասաց.
— Թե դանակ հանեմ՞ կապայի փեշ կըտրեմ՞ ափսո՛ս է:—
Ասաց.— Ջայնա՛մ թե ափսոս է:
Ջինք իր դանակ հանեց,
Դրեց՝ իր կապայի փեշ կտրեց,
Կապայի փեշ մնաց Հովանի գլխու տակ:
Դավիթ իրիշկեց էն կրակ, էլավ գնաց վեր:
Գնաց, տեսավ կո, գերեզմա՛ն մի կա էնտեղ
Կանաչ-կարմիր բոցն էդ գերեզմանե՛ն կ'էլնի:

Լուս կամար գերեզմանի վերան կանգնե:
Դավիթ գնաց մոտ, ձե՛ռ էտու բոցին— ձեռ չ՚էրեց:
Հո՛ղ թալեց վերան— չը հանգավ:
Նոր մեջ իր խելքին մտածեց.
«Է՛ն, ինչ Մարութա բարձր Աստվածածին կ՚ասեն՝
Սա է»: Ջնետ-աղեղ էկար էնտեղ նշան,
Էլավ, իջավ հրողբոր մոտ:

6

Իջավ Դավիթ, տեսավ՝ հրողբեր հալա քնած:
Նստավ իր տեղ, կանչեց, ասաց.
— Հրողբեր, քո անուշ քնից վե՛ր էլի*,
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ քեզ, հրողբեր,
Ես տե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա տերություն.
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ քեզ, հրողբե՛ր,
Ես հե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա հերություն.
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ քեզ, հրողբե՛ր,
Ես մե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա մերություն.
Տո, հրողբե՛ր, մեռնե՛մ քեզ, հրողբե՛ր,
Ես աղբե՛ր չ՚ունեմ, դու ինձ արա աղբերություն:
Հրողբեր վե՛ր էլավ, ասաց.
— Ծո՛ւռ Դավիթ, էլ ի՞նչ է էղե:
Ասաց.— Հրողբեր, օրհնյա՛լ է բարերար աստված,
Խնամքը շա՛տ է աստծուն.
Մարմար քար հրեն բացվեր է.
Լուս կամա՛ր կապեր է մեջ Ծովասարին.
Էլի՛, էրթանք, քեզ նշա՛նց տամ:

Դավիթ առավ կհրողբեր,
Բերեց վեր հոր գերեզմանին:
Գերեզման շանց տվեց, ասաց.— Էնի ի՞նչ է:
Ասաց.— Էնի քո հոր գերեզմա՛նն է:
Վանք էլ, որ քարուքանդ էղե՝
Ռո հեր, Մհեր էտու շինել,
Անունն էլ է՛ն էդի Մարութա բարձր Աստվածածին:
Համա ինչ որ քո հեր մեռավ՝
Մըսրա Մելիք էկար, հիմեն ավրեց, տարավ:

* Երդ է.

Դավիթ էդ լսեց, դարձավ,
Էվար չոքեր գետին, գընաց.
Ձեռներ էվար գետին, համբուրեց.
Իր նետ-աղեղով էդա մարմար քարի բոլոր
Գի՛ծ մի քաշեց, նշան արավ,
Լուսու ձևով խորանների կամար քաշեց,
Սեղանատեղ քաշեց, հիման տե՛ղ էլ քաշեց
Ասաց.— Էսա էսպե՛ս տի շինվի:
— Հրողբե՛ր, մեռնեմ քեզ, հրողբեր, ես քենե* կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—քար կտրո՛ղ, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—քար տաշո՛ղ, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—խիճ բերո՛ղ, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—ջուր կրո՛ղ, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—պատ շարո՛ղ, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—սվաղ անող, քենե կ'ուզեմ.
Հինգ հարիր—համար հազա՛ր—փայտ փորող, քենե կ'ուզեմ:
Թե որ չը շինե՛մ ես էս վանք՝
Իմ ուխտի տակ կը մեռնեմ.
Ձուր վաղն իրիկուն էս ամեն պատրա՛ստ կ'ուզեմ,
Որ լո՛ւս տա՝ մեկէլ օր պատարագ մեջ մատուցվի:

Հրողբեր լա՛վ գիտեր,
Որ Դավթի խոսք մե՛կ էր—էրկու չէր անի:
Էդոր համար Հովան լսեց Դավթի խոսքեր, ասաց.
— Դավի՛թ, մենք տո՛ւն էրթանք, բանո՛ղ ճարենք:
Դավիթ ասաց.— Ես տի մնամ մարմար քարի մոտ,
Ես տուն չեմ իգա: Դու շո՛ւտ գընա,
Ուստեք, բանողներ ճամփի, թող իգան,
Դու էլ էնոնց հետներ արի:
Ձենով Հովան ասաց.
— Ես էս լաճու խորհուրդ տի կատարեմ:
Ասաց.— Ո՛րդի,
Ես Ձենով Հովա՛ննեմ, ի՞նչ կը վախենաս,
Քառսուն ավուր ճամփա իմ ձեն կ'էրթա:
Իմ ձեն յոթ քաղաքի ուստա մարդիկ,
Հապար-հապար բանող մարդիկ տի լսեն, տի գան:
Վե՛ր, յոթ հատ վիրու ե՛կ կարկի,
Առնեմ, էրթամ քաղաք, պատի՛վ տամ քաղքըցոց.

---

* Երգ էլ

Էն ժամանակ ուստեք ու բանողներ
Ամեն կը ժողովվեն,
Դուն էլ սրտիդ մուրապ կը կատարես—վանք կը շինվի:
Դավիթ էլավ, վեց վիրու եկ կարկեց.
Հովան եկներ շալակն առավ, գնաց քաղաք:

7

Առավոտուն Հովան էլավ, կանչեց ձենով.
— Ա՛խ, կը կանչե՛մ, թող գան*,
Ով իր աստված կը սիրե, թող գա.
Մարութա բարձր Աստվածածին տի շինենք, թող գա՛:
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գան,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գան,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—քար կտրո՛ղ,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—քար տաշո՛ղ,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչե՛մ, թող գա՛ն,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—խիճ բերո՛ղ,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—ջուր կրո՛ղ,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—փայտ փորո՛ղ,
Ա՛խ, հի՛նգ հարի՛ր—համա՛ր հապա՛ր—պատ շարո՛ղ,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն,
Ա՛խ, կը կանչեմ, թող գա՛ն...
Հովանի ձեն չուր յոթ քաղաք լսան:
Էդ յոթ քաղքի բանողներ, ուստա մարդեր
Հապար-հապար թափվան,
Էլան, էկան Հովանի տուն:
Ձենով Հովանին պատիվ տվին, էլան, գնացին՝
Մարութա բարձր Աստվածածին շինեն:
Դավիթ էդ վախտ ի՞նչ է արե.
Գնացե, էնտեղ, ուր նետ-աղեղով
Էնա մարմար քարի բոլոր գիծ էր քաշե.
Գընացե՝ հիմ էր փորե, հիման քարեր բոլոր դրե,
Պա՛տ էլ մեկ մեջք բարձրացուցե:

---

* Երգ է։

Զենով Հովան որ առավ ուստեք, էկավ,
Ուստեք կը տեսնան, կը վարմանան էնտեղ.
Էնպես ջոջ քարեր բերեր, դրեր է մեջ հիման,
Որ ամեն բանողներ ժողվեն մեկտեղ՝
Զեն կարնա էն քարեր բերեն:

Ուստեք կը կանգնեն պատի վերա,
Դավիթ էն ջոջ քարեր ձեռ կը տա,
Կը վերցու, կը բերի, կը դնի իր տեղ:
Ոչ բանողներ կարնան էն քարեր բերեն,
Ոչ ուստեք կարնան վերցուն, դնեն տեղ:
Բանողներ էլ էնա պստիկ քարեր կը բերեն,
Ուստեք էդ պստիկ քարեր կը տան ջոջ քարերու բոլոր,
Բանողներ տիլ կը շինեն, կը տան ուստեքին,
Ուստեք տիլ կը վարկեն էդ քարերու բոլոր:
Զուր մութ կը տա գետին,
Էդ վանք կը գլխեն, կը լմնցուցեն,
Օրե՝ Մարութա բարձր Աստվածածին կը շինեն:

8

Էն գիշեր կը քնեն. Դավիթ կը տեսնա՝
Մարութա բարձր Աստվածածին կը գա էրավ, կ՚ասի.
«Քո թուր քո մեջքեն քաշի,
«Իմ հիմ քո թրի վերա՛ ձգի,
«Օրե՛ մի կը շինես, կը թամամցես,
«Պատարագ մեջ վանքիս կը մատուցես,
«Որ ես վեր իմ հիման կանգնեմ»:
Ուստեք տիլ կը վարկեն էդ քարերու բոլոր:
Դավիթ վարթնավ, տեսավ՝
Մարութա բարձր Աստվածածին չըկա:
Քարն իր տեղն է գնացե,
Հողն իր տեղն է գնացե,
Ավավ, կավ ու ինչ որ պատրաստություն կար՝
Ամենն իր տե՛ղն է գնացե:

Էլավ Դավիթ, Հովանին ձեն տվավ,
Քեռի Թորոսին ձե՛ն տվավ, ասաց.
— Հրողբե՛ր, Քեռի՛, ձեր անուշ քնից վե՛ր էլեք:
Մարութա բարձր Աստվածածին էսօր էկե ինձի էրավ.

Իմ մեջքեն իմ թուր տի քաշեմ՝
Վանքի հիմ իմ թրին տի դնեմ.
Վանք տի շինե՛մ, տի թամամեմ:
Պատարագ մեջ տի մատուցեմ:
Հովան շա՛տ կարմացավ, համա ասաց.— Դա՛վիթ,
Ես Զենով Հովա՛նն եմ. լուսուն մեկ է՛լ կ'էլնեմ,
Մեկ է՛լ բանող կը բերեմ քեզ համար, մեկ է՛լ շինեն:
Առավոտուն կ'էլնի Հովան, նորեն կը բռռա,
Հապար-հապար բանող, ուստա նորեն կը գան:
Կը գան, կը տեսնեն Դավիթ էլ հետ
Էնպես ջոջ քարեր բերե, դրեր է մեջ հիման,
Իր մեջքեն թուր քաշե՝ խրեր է մեջ հիման:
Քարեր, բաներ հելըստա կ'անեն,
Մինչ մութ կը տա գետին, կը շինեն, կ'ավարտեն:
Իրիկուն Դավիթ կ'ասի.— Հերահոտ հրողբեր,
Էդա վարպետներու վարձ տո՛ւր,
Էդա բանողների վարձն է՛լ տուր...
Առանց վարձ մի՛ թող:
Հովան կը գնա կը բերի երկու-իրեք բեռ ոսկի,
Կը բերի, Մարութա բարձր Աստվածածնա դուռ,
Էդտեղ ամեն մարդու մեկ ոսկի կը տա,
Մարդիկ կ' երթան իրենց տուն:
Դավիթ Զենով Հովանին կը դառնա, կ'ասի.
— Հրողբեր, մեռնե՛մ քեզ, հրողբեր*,
Ինձ քենե պետք են քառսուն էպիսկոպոս,
Ինձ քենե պետք են քառսուն վարդապետ,
Ինձ քենե պետք են քառսուն ավագ սարկավագ,
Ինձ քենե պետք են քառսուն սարկավագ,
Ինձ քենե պետք են քառսուն լուսարար,
Որ վանք լուս տան, շաբաթ պատարագ մատուցենք:
Էլավ Հովան կանչեց.
Վարդապետներ էկան, լուս տվին,
Շաբաթ պատարագ մատուցեցին:

Դավթի քեֆ էնքան էկա՛վ էկեղեցու վերա՝
Որ գնաց, Զարբահար Քամին բերեց,
Վանքի դռան հետև դրեց պահեցող:
Օրեն մեկ տիկ մեղր, մեկ տիկ կարագ

* Երգ է։

Զարբահար Քամու կերակուրն էր:
Թամբահ արավ Դավիթ Զարբահար Քամուն, ասաց.
— Ավեր մարդ—որ կը գա՝ դուռ վերան չը բանաս.
Որ ուխտավոր կը գա, շիվար-մարդեր կը գան՝
Դուռ բաց արեք, կերակրեցեք:

Ց

Մնացին էնտեղ չուրի առավոտուն:
Առավոտուն էլան, Դավիթ աչքեց, տեսավ՝
Մեջ Սասունա, մեջ Մարութա սարի գե՛տ մի կ'անցնի.
Դավիթ ասաց.— Պետք է էսա գետին կամուրջ շինվի:
Թե չէ՝ մարդիկ տի գան, տի ընկնեն գետ:
Բերին՝ կամուրջի հիմ թալեն՝
Ամա թալած քարեր ջուր կը տաներ՝
Հիմ չէր բռնի: Էն ժամանակ էլավ Դավիթ՝
Սարից է՛ն տեսակ ջոջ քարեր գլորեց տակ,
Որ ամեն քար քանց ջոջ տո՛ւն մի:
Էդ ջոջ քարեր կամրջի չորս հիմե՛ր թալին,
Քիչ ետ՝ կամուրջ կապին, պրծան:
Էդ քարերաց վերա ուրի՛շ քարեր շարին,
Էնպես լեն էր էն կամուրջ,
Որ էրկո՛ւ սել կուշտ-կշտի կ'անցնեին:
Էն կամրջի անունն մնաց Դավթի կամուրջ:
Քանի մի օր հետո՝ Դավիթ ու հրողբեր Հովան
Իջան Սասուն՝ աչքե անցնեն,
Թե ի՛նչ էր Սասնա տեղ էլե, դարձե:

10

Խաբար հասավ Մըսրա Մելիքին,
Թե՝ «Դավիթ գնացե Ծովասար ավրե,
Ամեն բռնավոր գապաններ թողե,
Պարիսպ փլցուցե ու Մարութա վանք շիներ է տվե»:
Մըսրա Մելիքի հերս էլավ.
Իր նախանձ սիրտ չը հովացավ.
Էլավ, կանչեց իր Խոլբաշուն, ասաց.
— Ես տի էլնեմ, հեծե՛լ առնեմ, էրթամ,

Վանք Մարութան թալնեմ բերեմ:
Էդ Խոլբաշին ասաց.— Թագավոր ապրած կենա,
Դու հեծելներ ինչի՞ առնես.
Մենք հինգ հարիր հոգի հեծել՝
Կէրթանք էն Ծովասար, վըրաննե՛ր կը վարկենք,
Էն վանք կը թալնենք, կը բերե՞նք,
Դավթի՛ն էլ կը սպանենք,
Ականջներ կը կտրենք, կը բերե՞նք:
Մելիք ասաց.— Դու էդպես բան անես՝
Քաղա՛ք մի կը տամ քեզ նվե՛ր:
Պատրաստությունդ տե՛ս. դու Ծովասար կ'էրթաս.
Մարութա բարձր Աստվածածին թալնես, ավրես ու գաս,
Դավթի՛ն էլ տի սպանես, իր ականջներ բերես:

11

Էդ Խոլբաշին հինգ հարիր ձիավոր առավ, էկավ.
Չէ՛ր իշխենա գա Սասնա քաղաքի վերան:
Էկավ, էլավ Մարութա բարձր Աստվածածին:
Զարբահար Քամին էլավ դուրս, իրիշկեց, տեսավ՝
Քանի մի հարիր ձիավոր մեջ դաշտին կը գա:
Ասաց.— Թե ասեմ էսիկ կամեն ուխտավո՞ր են՝
Ուխտավոր կամեն ձիավոր չի՛ ըլնի.
Մա՛ս մի ձիավոր, մա՛ս մի ոտավոր տ'ըլնի.
Ես ասեմ էսիկ ավե՛ր մարդ են, ավապա՛կ են.
Ես տ'էլնեմ, դուռ դարբաս կարկեմ,
Իմ մեջք տամ դարբասի առաջ:
Թե ուխտավոր էլավ՝ դուռ տի բանամ, գան ներս.
Թե ավե՛ր մարդ էլան, կաթի դուռ չե՛մ բանա,
Թող էլնեն, էրթան:
Ու Զարբահար Քամին էլավ իր մեջք տվեց դռան:
Խոլբաշին հի՛նգ հարիր ձիավորով էկավ,
Էկան, մեռա՛ն, կտրա՛ն, չը կարցան դուռ բացեն:
Խելքով մա՛րդ մի կար մեջ կորքին, ասաց.
— Բերեք նապաստա՛կ մի կարկենք, շոր մի,
Դավթի շորի տեսակ, թաթխենք մեջ արունին,
Էդ շոր կարկենք մկրախի ծեր,
Ու պարիսպ վե՛ թալենք տակ, ասենք.
«Զարբահա՛ր Քամի, մենք քո տեր սպանե՛ր ենք,
Դու ո՞րտեղ տի մնաս, ի՞նչ տ'անես»:
Որ տեսնա Դավթի շորեր,

Դարբասներ տի բանա, մենք տ'էրթանք ներս:
Բերին էդ շոր, թալին պարիսպ վե՛ տակ:
Զարբահար Քամին տեսավ շորեր, ասաց.
— Էս Դավթի հագուստն է:
Բո՛ւռ մի մոխիր գցեց իր գլուխ,
Համա դուռ բաց չ'արավ.
Ինչ արի՞ն-չ'արին, դուռ բաց չ'արավ:

Խոլբաշին գնաց վանքի պարսպի մոտ,
Մեկ է՛լ կանչեց, ասաց.
— Միաբաննե՛ր, վարդապետնե՛ր, դուռ բացե՛ք:
Ասաց.— Անիրավնե՛ր, ձեր տեր վէներ եմ.
Դուք դո՞ր կը մնաք՝ դուռ չեք բանա դեմ ինձ:
Մենք գնացինք Սասնա Դավիթ ըսպանեցինք.
Էլ ձեր հույս մեռա՛վ:
Կուկե՛ք դուռ բացեք, կուկե՛ք մի բանաք,
Զուր սև կուպր կը սիպտակի:
Էսա բան որ լսին վարդապետներ՝
Իրենք իրենց ասին. «Սասնա քաղաք ավերեր են,
Մեր տեր ըսպաներ են,
Էլ ինչպե՛ս մենք մնանք վեր աշխարհին»...
Գիշեր, Զարբահար Քամու քնած պահին,
Էնոնք ահու էլան, վանքի պարսպի դուռ բացին...
Զարբահար Քամին կարթնավ քնուց,
Էտո՛ւ վեր իր գլխուն, դռներ էթող բաց,
Փախավ գնա՛ց, գնաց սար վե՛ր:
Խոլբաշին կորքով մտավ վանք,
Վանքի դուռ բռնեց, ինք կանգնեց դռան,
Էդա հինգ հարիր ջան մտցըրեց ներս.
Թալանեցին, թախթըփեցին,
Կտրեցին քառսուն վարդապետ մեջ խորանին,
Կտրեցին քառսուն ավագ սարկավագ մեջ սենեկին,
Կտրեցին քառսուն լուսարար
Ու քառսունեն մեկ պակաս սարկավագ.
Էն մեկ թաքնվավ սպանվածներու լեշերու տակ:
Խոլբաշու կորքեր որ գնացին,
Էն էլավ լեշերու տակեն,
Առավ սարկավագի մի շապիկ,
Թաթխեց սպանվածներու արնով,
Հավար տարավ Սասուն, Դավթին:

Սարկավագ էկավ, հասավ Սասուն:
Էկավ Զենով Հովանի սենեկ:
Տեսավ՝ Դավիթ նստե, Դավթի քեֆ հասեր է.
Սագեր արե խորոված՝ դրե փլավի վերա,
Յոթ տարվա նռան գինին խմե,
Ոտ թալե վեր ոտուն, ապապ լաճերու,
Ապապ աղջիկներու հետ կեր ու խում կ'անի:
Սարկավագ էկավ, էդոր դիմաց կանգնավ:
Զենով Հովան ասաց.— Էդ ի՞նչ է էղե:
Սարկավագ ասաց.— Մեր վանք թալնեցին.
Դավիթ ծուռ է—էկե նստե, քե՞ֆ կ'անի:
Զենով Հովան սիլա՛ մի կարկեց սարկավագին:
Դավիթ էն կողմեն ասաց.
— Հրողբեր, ինչի՞ սարկավագին տփիր:
Ասաց.— Սարկավագ կ'ասի՝ Դավիթ ծո՛ւռ է,
Էկե, նստե, էստեղ քե՛ֆ կ'անի:
Դավիթ կանչեց սարկավագին, ասաց.
— Տեսնե՛մ, արի էստեղ, ի՞նչ կ'ասես.
Էն ի՞նչ է պակաս իմ վանքին.
Խո՞ւնկն է պակաս, ձե՞թն է պակաս, ինչի՞ էկար,
Շուտ ա՛ռ, գընա՛, քո ժամուն հասի՛ր:
— Դավի՛թ,— ասաց էդ սարկավագ,—
Սպանեցին քառսուն էպիսկոպոս*,
Սպանեցին քառսուն վարդապետ,
Սպանեցին քառսուն ավագ սարկավագ,
Սպանեցին քառսուն լուսարար,
Սպանեցին քառսուն՝ մեկ պակաս՝ սարկավագ,
Վանք պլոկեցին, թալնեցին, առա՛ն, գընացին:
— Է՛,— ասաց Դավիթ,— ինչի՞ գլուխ կը ցավցնես:
Դարձավ Հովանին ասաց.— Հրո՛ղբեր,
Սարկավագն էկեր է. խո՞ւնկն է պակաս,
Ձե՞թն է պակաս, մո՞մն է պակաս,
Տո՛ւր թող էրթա:
Սարկավագ մնաց շվար:
Չի կարնա հասկացնի Դավթին:

Դավիթ որ էտենց ասաց, չը հասկացավ,
Սարկավագ արնոտ շապիկ տփեց առաջ, ասաց.

* Երգ է։

— Աստված քո տուն ավրի,
Ո՞ւր են քո էպիսկոպոսներ,
Ո՞ւր են քո վարդապետներ,
Ո՞ւր են քո ավագ սարկավագներ...
Դավիթ՝ որ տեսավ արնոտ շապիկ,
Գինին գլխից անցավ, ասաց.— Տըղա՛,
Էդա ի՞նչ է, ի՞նչ է եղեր:
— Դավիթ, մեռնեմ ես քեզ,— ասաց*,—
Սպանեցին քառսուն էպիսկոպոս,
Սպանեցին քառսուն վարդապետ,
Սպանեցին քառսուն ավագ սարկավագ,
Սպանեցին քառսուն լուսարար,
Սպանեցին քառսուն՝ մեկ պակաս՝ սարկավագ:
Վանք պլոկեցին, թալնեցին, առան, գնացին:
— Ո՞ւրհ,— ասաց,— վանք թալնա՞ծ,
Վարդապետներ սպանա՞ծ.
Դու էդպե՞ս կ'ասես, սարկավագ. ո՞վ էր, ո՞վ չէր:
Սարկավագն ասաց.— Խոլբաշի՛ն էր՝
Հինգ հարիր ձիավորով:
Ամեն ըսպանեց, ես էլ հպիվ փախա:
— Սարկավա՛գ,— ասաց Դավիթ,—
Էնոնք շո՞ւտ են գացած, թե նոր:
Ասաց.— Էնոնք էնտե՛ղ են գացած,
Կո՛, ես էստե՛ղ էկա:
Դավիթ էլավ կայնեց, ասաց.
— Ապա՛պ լաճեր, ապապ աղջկե՛րք, կերե՛ք, խմե՛ք,
Ձեր քե՛ֆն արեք... Ես գնացի...

14

Իսկուն Դավիթ էլավ վպեց, մտավ Պառավու տուն:
Ասաց.— Պառավ, ես ո՞րտեղով էրթամ —
Էդ Խոլբաշու առջև բռնեմ.
Էն իմ վանք թալաներ, տարեր է:
Պառավ նշա՛նց տվեց ճամփան, ասաց.
— Կ'էրթաս էն Բաթմանա գետի վերան, կամրջի մոտ:
Էդ Խոլբաշին ո՛ւր էլ էրթա,
Տի գա, էդ տեղե՛ն տ'անցնի:

---

* Երդ Լ։

Դավիթ իրա ոտքեր չըլտեց,
Իրա թևքեր վե՛ր էտու,
Գնաց, բարդի ծառ մի քաշեց,
Իր ձեռ քսեց վերան,
Չլուտկացուց, դրեց թևին, գնաց:
Գնաց՝ էդա ջոջ քարի տակ կայնեց:
Խելի ժամանակ կայնեց, նայե՛ց, նայե՛ց...
Դըռդըռո՛ց մի, ձա՛յն մի չի՛ գա:
Ասաց.— Վա՛յ թե անցած ըլնեն:
Մեկ էլ՝ լսեց, որ Խոլբաշին կ'ասի.
— Դավթի հե՛ր անիծեցինք,
Համ վա՛նք թալնեցինք,
Համ քառսո՛ւն վարդապետ, սարկավագ կտրեցինք:
Դե՛հ, թող գա, իմ առջև առնի՛:
Դավիթ իսկուն կանչեց.
— Խո՛լբաշի, դու դո՛ր տի փախչես:
Խոլբաշին հետև աչկեց, տեսավ՝
Դավիթ բարդու ծառ մի քաշե կորքերու մեջ
Կը փարատի, ու կամրջի վերան
Մեկ է՛ս կողմեն շուռ կը տա ջուր,
Մեկ է՛ն կողմեն շուռ կը տա ջուր:
Էնոր կորքեր ամմեն ջարդեց, էնոնք սպանեց,
Մնացած էլ լցեց գետ, էնոնք էլ խեղդեց:
Իրիշկեց՝ մարդ չի՛ մնացե. տեսավ՝
Խոլբաշին իրեն ձիով անցե գետի էն երես:
Ասաց.— Ձիո՛ւ տեր, ես կարնա՛մ գամ քեզ ըսպանեմ,
Համա ես քեզ չե՛մ ըսպանի.
Դու գնա, Մելքին բարո՛վ արա,
Ասա՝ դեռ Սասուն չի՛ մեռե.
Մեկ էլ թող էսպես բան չանի՛.
Ավեր բանից ի՞նչ կը դառնա:
Է՛, Խոլբաշին կ'իշխենա՛, դառնա՝ պատասխա՛ն տա.
Կը վարկի ձիուն, կը փախնի:
Դավիթ կ'էլնի կը դառնա Սասնա քաղաք:

ԴԱՎԻԹԸ ՊԱՏՈՒՀԱՍՈՒՄ Է ՄԸՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻՆ

1

Խաբար գնաց, հասավ Մըսըր:
Գընացին Մըսրա Մելիքին ասին.
— Մելիք, ի՞նչ կ'անես.
Էն Սասունցի Ծուռ քո կորքեր ջարդեց...

Մըսրա Մելիք մեջլի՛ս հավաքեց.
Խելացի մարդեր՝ ինչքան կար, ժողվեց,
Խորհուրդ հարցրեց՝ ճամփան շանց տան՝
Դավթի կյանք էրկրի էրեսից վերցուն:
Մեջ մեջլիսին Կոկբադին անունով
Կտրիճ փահլևան մի կար, էն ասաց.
— Թագավո՛ր ապրած կենա, վայել չե՛մ տեսնի՝
Դու էրթաս վեր գյավուրի՛ն:
Դու ինձ հապար փահլևան տաս՝
Տ'էրթամ, Սասնա քաղաք թալնեմ, բերեմ քեզի.
Քառսուն էրկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,
Քառսուն կոլոտ կնիկ բերեմ՝ էրկանք աղան,
Քառսուն ապապ աղջիկ բերեմ քեզ արմաղա՛ն:
Քառսուն արջառ, քառսուն էրինջ,
Քառսուն ուղտու բեռով արծաթ,
Քառսուն ուղտու բեռով ոսկի՛ բերեմ—քե խա՛րջ,
Սասուն անեմ առ ու թալան:
ՋԴավի՛թ էլ սպանեմ, գլուխ բերեմ քեզի:
Մելիք ասաց.— Քա՛ջ Կոկբադին,

Էդ իրավունք տվի՛ քո ձեռ:
Կ'էլնես կ'էրթաս Սասնա վերան:
Կը բերես մեր յոթ տարվա խարջ.
Քառսուն էրկեն կնիկ՝ մեկի ուղտեր բառնան,
Քառսուն կոլոտ կնիկ՝ մեկի էրկանք աղան,
Քառսուն կույս աղջիկ մեկի՝ արմաղա՛ն—
Արջառ ու էրինջ, ոսկի ու արծաթ,
Մեկ էլ Դավթի գլուխ:
Կոկբադին Մելիքին ասաց.
— Մե՛լիք, դու ի՞նչ տի տաս ինձի:
Ասաց.— Թե դու էդպե՛ս արիր,
Իմ կես թագավորություն կը տամ քեզի:
Կոկբադին կ'էլնի, հապար կտրիճ մարդեր կը ջոկի,
Կ'առնի, որ էրթա Սասնա վերան:

2

Բաղին, Կոկբադին, Սուդին, Զարխադին
Ու Մելքի տված կորք ու կորական ընկան ճանապարհ.
Մըսրա քաղքի կընկտիք
Երբ որ տեսան էնոնց,
Պար բռնեցին, ասին.

«Բարո՛վ Բաղին ու Զարխադին*,
Էդ ո՞ւր կ'էրթաք էդպես վական,
Է՛յ Կոկբադին, է՛յ դու Սուդին,
Որ դարձեր եք էդպես գական...»:
Կոկբադին վերցուց, էդ կընկտոցն ասաց.
— Մտեք տուն, արեք շիվան*,
Էլեք դուրս, արեք դիվան.
Կերթանք Սասուն առ ու թալան.
Կարմիր եկներ բերենք լծան,
Սիրուն կովեր բերենք կրթան,
Որ դուք անեք եղ ու չորթան:
Կընկտոցից մեկ դարձավ ասաց.
— Սասնա ծռե՛ր... թե ես գիտե՛մ
Էդ ձեր ուված թե՛ տան, թե տան:

---

* երգ է։

3

Կոկբադին իր կորքով գնաց,
Գնաց ու Սասնա մոտկացավ.
Մեջ դաշտին վրաններ կարկեց,
Քառսուն մարդեր ջոկեց կորքից,
Էդ քառսուն մարդ ու քառսուն ուղտ առավ,
Գնաց Հովանի մոտ,
Որ յոթ տարվա հարկ հավաքի:
Ասաց.— Մելիք ճամփե՛ր է մեկ,
Որ յոթ տարվա ձեր հարկ տանենք:

Հովան էդ բան լսեց,— Դավթից կը վախենար,—
Կանչեց ասաց.— Դա՛վիթ,
Էսօր իմ սիրտ վիրու օչխարի մի՛ս կ'ուզի.
Գընա՛, օչխա՛ր մի վարկ, բե՛ր, ես ուտեմ:
Ջ Դավիթ խաբեց ու ճամփեց սար,
Որ Դավիթ խաբար չ'ըլներ, թե խարջ կը տան:
Դավիթ էլավ գնաց սար:
Վերգոն ու Կոկբադին կ'էրթան,
Քառսուն աղջիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Քառսուն էրկեն կընիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Քառսուն կարճ կընիկ կը ժողովեն,
Կը լցնեն մեկ մարագ,
Պառվու աղջիկն էլ կը տանեն:
Կը տանեն արջառներ, կը տանեն էրինջ,
Կը տանեն եվներ, կը տանեն կովեր,
Կը փակեն մեջ մարագներուն:
Սուդին, Զարխադին, Բադին, Կոկբադին
Կը գան, կը մտնեն ոսկու կարվամբին.
Կը գան, քուրսու վերան կը բաղմեն.
Վերգոն էլ կ'էլնի որ ոսկին չափի,
Մըսրա Մելքի ջվալներ լցնի:
Էդ վախտ Մըսրա կորք կը մտնի Սասուն քաղաք,
Թալան-թուլան կ'անի:
Կնիկ ու ապրանք կը տանի:

4

Դավիթ սար-ձոր ընկած՝ իր որս կ'աներ:
Սարեն իջավ Դավիթ՝
Իր նիկակին վերու օչխար տնկած:
Էկավ, մտավ Սասուն,
Իր ձեռ էտու, ժանգոտ շեղբիկ մ'առեց իր ձեռ,
Գնաց Պառվու շաղգամի մարգ,
Շաղգամ քաղեց, շեղբկով մաքրեց,
Ու շաղգամ ուտելեն մտավ քաղաք.
Մտավ քաղաք, էկավ տեսավ՝ ի՞նչ,—
Ամեն օր որ կը գար, կը տեսներ՝
Ասե՛լ, խոսե՛լ, ծիծա՛ղ, ուրախությո՛ւն.
Էս օ՛ր որ էկավ, տեսավ՝
Ինչ որ քաղքի վերան հո՛ղ մաղես,
Քաղաքն ինչ լա՛լ, գոռա՛լ, ծեծկո՛ւք,
Մեր ու մանուկ ուրացեր են.
Տեսավ Պառավ, ձեռները ծոց դրած՝
Կը լա՛, կը մռմռա՛, կ'էրթա, կը գա, կ'ասի.
— Ավե՛ր, ավերվի՛ս Սասուն,
Մեկ թաք աղջիկ ունեի՝ էն էլ գերի՛ գընաց Մըսըր:
Էդ ձեն ընկավ Դավթի ականջ.
Դավիթ էլավ, ասաց.— Պա՛ռավ,
Էդ ի՞նչ է, էդ ի՞նչ խաբար է:
Ասաց.— Գրող-մահ քեզ տանի, Դավիթ,
Սասունա ծո՛ւռ, շաղգամակեր,
Թող դարդակվի քո թամք:
Դավիթ ասաց.— Ինչի՞ համար ինձ կ'անիծես,
Ի՞նչ եմ արե, Պառավ:
Պառավ ասաց.— Ապա էն թաղթ նստող ո՞րն է:
Ասաց.— Իմ հրողբեր Վերգո՛ն է.
Նանե, ինչի՞ ինձ կանիծես:
Պառավ ասաց.— Հալա դեռ չանիծե՛մ,
Մենք ի՛նչ նեղությունով, ի՛նչ տանջանքով
Մեծացուցինք մեր աղջիկներ,
Հիմիկ Վերգոն մեր աղջիկներ ժողվե,
Լցե էն մարագներ,
Որ տա, տանեն Մըսրա Մելքին:
Գընա, տե՛ս, Կոկբադին էկե՝
Քո հրողբոր մոտեն խարջ կը տանի՝
Մենք էդոնց խարջ տվո՛ղն ենք, ի՞նչ:

Դավիթ ասաց.— Պառա՛վ, Պառա՛վ,
Կոկբադին ո՞վ է, ի՞նչ խարջ է:
Պառավ ասաց.— Հը՛, Կոկբադին ո՞վ է...
Կոկբադնին Մելիքն է ճամփե.
Քառսուն կարճլիկ կընիկ տանի*,
Քառսուն երկեն կընիկ տանի,
Քառսուն ապապ աղջի՛կ տանի:
Կո՛վեր տանի, եվնե՛ր տանի,
Քառսուն ուղտի բեռնով ոսկի՛, արծա՛թ տանի:
Աղջիկ, կընկտիք, ամեն տարե,
Իրեք մեծ մարագներ արե,
Հիմիկ էլ ոսկի՛ն կը չափեն:

Դավիթ շատ բարկացավ,
Ամուր բռնեց Պառավու ձեռ, ասաց.
— Պառավ, էդա բաներ ո՞ր տեղն է,
Արի, երթանք, ինձ նշանց տուր:

Պառավ Դավթին բերեց, նշանց տվեց գոմեր,
Ուր կարճ կընկտիք, երկեն կընկտիք,
Ապապ աղջիկ լցուկ էին:
Դավիթ իրեք գոմի դռներ կոտրեց,
Դռներ բացեց, կընկտիք, աղջիկներ դուրս հանեց,
Ասաց.— Իմ մերե՛ր, իմ քուրե՛ր,
Դուրս էլեք, գնացեք ձեր տներ,
Գնացեք, ձեկ համար աղոթք արեք,
Ես կ՚երթամ ձեր չար կը տանեմ:
Դավիթ գնաց, արջառներու, կովերու դուռ էլ բացեց,
Ասաց.— Աստծու անասուններ,
Գնացեք ձեր տիրու դուռ:
Ապա Դավիթ Պառավու ձեռ քաշեց, ասաց.— Պառավ,
Արի՛ ոսկու կարկամբու տեղ նշա՛նց տուր ինձ:
Ո՞ր տեղն է՝ կը չափեն ոսկին:
Պառավ բերեց, էսապես. հեռու կայնեց.
— Դավի՛թ,— ասաց,— իմ ձեռ թո՛ղ,
Որ չը թողնես, չե՛մ ասի:
Դավիթ Պառավու ձեռ թողեց,
Պառավ ասաց.— Դե՛հ, ահա՛, տե՛ս, էնա՛ է, տես:
Ու խավնի դուռ նշանց էտու:

---

* Երգ է։

5

Դավիթ էլավ, գնաց,
Տեսավ քառսուն փահլևաններ
Խակնի դռան, թրեր հանե՝
Կես մե՛կ կողմեն, կես էն մեկէ՛լ՝ նստե:
Էնոնց բարև էտու, հարցուց.
— Տեսնես իմ հրողբեր էդ ի՞նչ կանի:
Ջուաբ տվին, թե ի՞նչ կը հարցուցես:
Ասաց.— Էրթամ էնոր օգնեմ: Նե՛ղն է:
Փահլևաններ ասին.
— Էն ի՞նչ արեց, որ դու ի՞նչ անես:
Էս խոսքի վերան Դավիթ բարկացավ.
Վիրու օչխար դրավ գետին,
Բռնեց էն քառսունի վիկն էլ քաշեց,
Ինչպես մարդ հավու մի վիկ դուրս քաշի...
Էլ ետ վիրու օչխարն առավ իր թև,
Մտավ կարկամբին:
Դավիթ մտավ ոսկու կարկամբին,
Տեսավ՝ ոսկին գետնի վերան դիկած.
Տեսավ՝ Հովան ջվալների բերան բռնե,
Վերգոն էլ կոտ առե,
Կոտով ոսկի կը չափի՛, կը տա՛,
Կը լցնե՛ն, կը չափե՛ն, կը լցնե՛ն, կը չափե՛ն,
Կը դարդակե՛ն, Մըսրա բեռնե՛ր կը լցնեն.
Հրողբերներ էնպես են քրտընե,
Կը լողան մեջ քրտընքին:
Դավիթ աչքեց տեսավ՝
Ջուրսու բոլոր նստեր են.
Մեկտեղ Բադին, մեկ՝ Կոկբադին,
Մեկ՝ Ջարխադին, մեկէլ՝ Սուդին:
Կոկբադին մեկ-մեկ թիկ պռնգնե՛ր ունի,
Սուր-սուր ցրցված բեղեր ունի,
Որ մարդ տեսնի՝ կը սարսափի:
Էդ Կոկբադին նստե էնտեղ,
Որ հրողբեր ոսկին չափեր՝ կ'ասեր՝ «էրկո՛ւ-ռ՛ւ»,
Կոկբադին կ'ասեր — «մե՛-ե՛կ»:

Բարկութենեն արյուն լցվավ Դավթի աչքեր:
Հովան տեսավ՝ Դավիթ էկավ,

Համա խեղճ Վերգոն չը տեսավ:
Մեկ էլ Դավիթ էնե՛նց բոռաց Վերգոյի վերա,
Վերգոն էնենց վախցավ, որ լավոտեց:
Իրիշկեց՝ Դավիթ գլխու վերև կայնուկ է,
Ասաց.— Դա՛վիթ, մա՛հ քեզ տանի.
Դիր մի քո հե՛ր բոռաց—ես վախեցա:
Դիր մ'ել էդպես դու բոռացիր:
Դավիթ դարձավ Զենով Հովանին, ասաց.
— Հրողբեր, էդա ի՞նչ է կ'անեք:
Ասաց.— Ծո՛ւռ Դավիթ, քո թևի կեղտե՛ր կը սրբենք:
— Ա՛յ հրողբեր, իմ թևին կեղտ ո՞ւր է,
Չէ՞ս տեսնա, որ չը կա, բա՛ն էլ չը կա:
Հովան ասաց.— Տե՛ս, հա՛ն, քո թևի վերան:
Դավիթ օչխար թևեն թալեց էն վերի տեղ,
Էկավ մոտ հրողբրանց:
Կամաց Վերգոյի ձեռ բռնեց, ասաց.
— Հրողբե՛ր Վերգո, հրողբե՛ր Հովան,
Դուք շա՛տ եք ծերացե,
Դուք չե՛ք կարնա Սասնու ոսկին չափեք,
Տվեք, ե՛ս տի չափեմ, լցնեմ Մըսրա բեռներ.
Մելիք որ խարջ կ'ուզե,
Մելիքի խարաջ ե՛ս տի տամ:
Էդա փահլևաններ ասին.— Ջանըմ.
Դե, էդա ճիժ թող դե՛ն, քո գո՛րծ արա:
Դավիթ ասաց.— Չէ՛, աստվա՛ծ գիտե, ե՛ս տի չափեմ:
Զենով Հովան ասաց.— Դավիթ, գնա՛ քո բանին,
Քեզ բան չը կա՛ էսա գործին:
— Չէ՛,— ասաց,— ես չե՛մ էրթա, տո՛ւր:
Ու ձեռ էթալ, հրողբոր ձեռեն կոտ խլեց,
Կոտ կործեց վեր բերնին, ասաց.
— Հրողբեր, լի՛ց, լի՛ց, ոսկի՛ լից:
Հրողբեր մեկ թիակ ոսկի լցեց չափի ոռք,
Դավիթ փետ էտու վերան, թափեց,
Դատարկ կոտ վերուց իր ձեռ,
Շրջեց ջվալի մեջ, ասաց.— Էսա մե՛կ-էրկո՛ւ...
Կոկբադին չը դիմացավ, բոռաց, ասաց.
— Տո, ծո՛ւռ, էդ ի՞նչ է կ'անես:
Գնա, տեղդ նստի, կ'էլնեմ գլուխդ կը թոցում:
Բոռաց ասաց.— Զենով Հովան, խաղալի՞ք ենք.
Դու էդա ճիժ բերեր ես, որ ծիծաղա՞ վեր մեկ:

Կը տաս՝ տո՛ւր յոթ տարվա մեր խարջ.
Թե չե՛ս իտա, կ'էրթամ Մըսրա Մելքին կ'ասեմ,
Կը գա Սասնա քաղաք կ'ավերի, տանի:
Դավիթ հերսոտավ, էլավ, կանգնավ,
Էսպես, վիպ ծռելով՝ մեկ մ'էլ Կոկբադնի կողմ ուչքեց,
Կոտ վերցուց, ասաց.
— Յա՛ հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածի՛ն:
Ասաց, կոտ կարկեց Կոկբադնի գլխուն:
Կոկբադին իր գլուխ կոռեց, բարձր կպավ.
Թե Կոկբադին գլուխ չը կոռեր,
Վիպ կը կտրեր, գլուխ կ'էրթար:
Կոկբադին շուտ մի էլավ՝ փախնի:
Դավիթ ընկավ հետև, Կոկբադին բռնեց,
Էնոր շրթունքներ կտրեց,
Էնոր ատամներ քաշեց, շարեց ճակատ,
Բերեց, դրեց ձիու վերան,
Ոտքեր ձիու փորի տակ կապեց, ասաց.
— Դե, գնա, թագավորիդ բարև արա, ասա.
Էն Մհերի տղա Դավի՛թն էդպես արեց.
Մեկ էլ չը գա՝ Սասնա կրնիկ, աղջիկ տանի՛.
Սասնա տուն դեռ չի՛ ավերվե,
Որ դուք էկե մեկեն խարջ ու խարաջ կ'ուզեք:
Մըսրա գավառ իրեն, Սասնա գավառ մեկի:
Թե չէ՝ ինչ իրմեն կը գա, թող չը խնայի:

6

Էլան քոռ ու փոշման Բադին, Կոկբադին,
Սուդին, Զարխադին, իրենց վորք թողին
Փախան Մըսրա էրկիր:
Կոկբադնի վորքեր էլ իրենց ավար քշե.
Հաներ էին Սասնա սինորեն դուս, կը տանեին:

Դավիթ էլավ, հեծավ իր ձին,
Քըշեց Կոկբադնի վորքերի առաջ, կանչեց. ասաց.
— Էս մարդիկ ո՞ւր կը տանեք.
Էս թալան ո՞ւր կը տանեք:
Թողեք, գընացեք, քանի շո՛ւտ է.

Խե՛ղճ եք, մի՛ թողեք, որ ձեր գլուխ կտրեմ:
Ասին.— Դու մե՛կ՝ մենք հապա՛ր.
Ինչպե՞ս կարնաս դու մեկի հետ...
Դավիթ մըկրախ քաշեց ու ընկավ մեջ,
Էդ կորք բոլոր ջարդ ու փշուր արեց:
Զժողովուրդ, կնիկ, աղջիկ,
Քաղքեն տարած ալան-թալան հետ դարձուց,
Բերեց, հասավ Սասնա քաղաք,
Կանչեց զժողովուրդ, ասաց.
— Ամեն մարդ գա, իրեն ապրանք ճանչնա՛, վերցո՛ւ:
Ով որ ապրանք տվե՛,—
Թող գա իր ապրանք վերցու:
Ով որ ոսկի, փող տվե,
Թող գա, իրեն ոսկի՛ն վերցու:
Ով որ մեկ կորեկ ավե՛լ վերցու՝
Կը կարկեմ՝ զգլուխ կը կտրեմ:
Ամեն իր տվա՛ծ թող վերցու:
Զապրանք, զոսկի, զփող՝
Բոլոր ցրվեց, տվեց ժողովրդին.
Ինք էկավ իր տուն նստավ:

7

Սուդին, Զարխադին, Բադին, Կոզբադին
Լեղապատառ կ'էրթան, կը հասնեն Մըսըր:
Կ'իրիշկեն, Մըսրա աղբըրի վերա
Կնկտիք ժողվեր են՝ կժեր կը լցնեն:
Կնկտիք զէդ տեղաց տեսան Կոզբադին,
Որ բերան բացած՝ ուրախ կը ծիծղա:
Ասին.— Կոզբադին խարջ բերե, կը գա:

Համա Կոզբադին գնաց, մոտեցավ,
Տեսան՝ էնոր պռնգներ կտրտած,
Ատամներ քաշած, բևեռած ճակտին:
Կնկտիքըն ասին.— Տեսե՛ք մի, տեսեք,
Մեր Կոզբադին ինչպես կը գա լերան-լերան,
Բերնից կը թափե չորթընե թան:
Կոզբադին որ քիչ մ'էլ մոտիկ էկավ կնկտոց՝
Կնկտիքըն ասին ու խաղ արին.

— Այ, Կոկբադին, մեծաբերան*,
Կերթիր Սասուն՝ բերես թալան՝
Քառսուն էրկեն կնկտիք բերես՝ ուղտեր բառնան,
Քառսուն կարճլիկ կնկտիք բերես՝ էրկանք աղան,
Քառսուն կույս աղջիկ բերես արմաղան,
Քառսուն բեռով ոսկի, արծաթ բերես թալան.
Կարմիր կովեր բերես կթան,
Որ մենք անենք եղ ու չորթան:
— Ո՞ւր են հապա կարմիր կովեր:
— Ո՞ւր են հապա են քու կնկտիք.
— Հապա, էկար դու էտապես լերան-լերան,
— Քո ատամներ ճակտիդ վերան շարան-շարան:
— Ցեխո՛վ մոլված մեծաբերան:
— Իդա դիհեն գացիր՝ քանց գել գալան,
Ու էն դիհեն էկար՝ քանց շուն վալան.
— Մըկրախդ քո վկեն կախուկ՝ քանց շան խառան,
Բերանդ է բաց՝ քանց պատուհան.
— Փալիք կ'էրթա, քանց տոպրակի տակի թան՝
Ճանճեր վերան կապած քարվան:

Կոկբադին ամոթու էղավ՝ ձիու գըլուխ կոռեց,
Ուրիշ ճամփով էրթա: Կնկտիք տեսան՝
Էնոնց մարդիկ գացած՝ հետ չե՛ն իգա:
Շատերու աչք ճամփին էր—բոռացին, ասին.
— Աբա մեր էրիկներ ո՞ր տեղ թողիր:
Դարձավ ասաց.
— Այ կընկըտիք շատախոսան*,
Ես գիտեի, թե էդ Սասուն դաշտ է, դուրան,
Չը գիտեի՝ քար էր, կապան:
Էնտեղ, ճժեր, որ նոր էլած՝ դիվանական
Իրենց նետ կա՝ քանց ձիթհանի գերան,
Էնոնք խոտե՛ր ունին կծան,
Էնոնց թրերը կեծական,
Էնոնք կը կարկեն մարդու ջան,
Մարդու լեշ կ'անեն պատուհան.
Ձեր էրիկներ էնտեղ ընկան.
Շատ մի անձրև կը գա գարնան՝

* Ուրդ է։

Սասնա տեղաց հեղեղ կը գա,
Ձեր մարդերու քիթ ու ականջ՝
Կբերի ձեկ՝ եղ ու չորթան:

8

Մնաց: Օր մը, երկու՝ վերա անցավ.
Մըսրա Մելիք հարցում արեց իր Մեջլիսին.
— Կոկբադին որ գնաց Սասուն՝
Խարջ ու խարաջ դեռ չի՞ բերե:
Ջուաբ տվին Մըսրա Մելքին, թե—Հա՛լ, հավա՛լ...
Կոկբադին ե՛տ էկավ Մըսըր:
Մելիք ասաց.— Կանչեք, թող գա՛, գա էսատեղ:
Կոկբադին ամոթու չ'էկավ:

Էդ վախտ, որ Կոկբադին կորքեր սպանե՛լ էտու,
Էնոնց բարեկամներ ժողվան Մելիքի դուռ,
Գանգատ արին, ասին.
— Կոկբադնին տարեք Մելքի Դիվանխանեն, դատեք:
Մելիք չորս մարդ ճամփեց Կոկբադնի հետև:
— Գնացե՛ք,— ասաց,— կոռո՛վ բերեք:
Էդա մարդիկ գնացին, ասին.
— Վա՛յ, Կոկբադին, Մելիք հրամա՛ն արե՝ տի գաս.
Որ դու չը գաս՝ մենք քե տըփելո՛վ տի տանենք:
Երբ Կոկբադին առան, բերին Մելիքի դեմ,
Տեսավ՝ էնոր ակռեք քաշած՝ կարկած ճակատ՝
Շա՛տ բարկացավ, ասաց.— Էդ ի՞նչ է էղե քեզ:
Դու շատ կտրիճ կայիր էստեղ*.
Ասիր տ'էրթամ Սասուն թալնեմ,
Ո՞ւր են ապա, բեր մի տեսնեմ:—
Քառսուն-քառսուն էրկեն կնիկ,
Քառսուն-քառսուն կոլոտ կընիկ,
Քառսուն-քառսուն կույս աղջիկ արմաղա՛ն:
Հապա ի՞նչպես գացիր Սասուն,
Էդքան կտրիճ մարդեր տարար.
Ո՞ւր են ապա էդ քո մարդեր:

Կոկբադին ասաց.— Թագավո՛ր, ապրած կենաս,
Սասնա մեջ Դավի՛թ դուրս էկավ,

* Երդ էլ

Էնի քո հրաման չը լսե՛ց:
Մեր վորք ջարդեց, յոթ տարվա խարջ չ'էտուր,
Մեկ էլ էսպես խեղեց:
Ասաց. «Դե ե՛լ, գնա՛,
Բարև՛ տար դու Մըսրա Մելքին,
Թող ի՛նք գա իր խարաջ տանի,
Ես ձեվի խարաջ տվող չե՛մ:
Մըսըր էնոր, Սասուն մեվի:
Չէ՛, չի՞ ուվի: Ինչ կուվի՝ թող անի»:
Շա՛տ կտրիճ տըղա դառեր է Դավիթ.
Էնպես կտրիճ տըղա չըկա՛...

9

Էդ որ լսեց՝ Մելիք կատղա՛վ,
Կատղավ, արուն էլավ աչքե՛ր.
Էլավ, էկավ իր տուն, ասաց.
— Ա՛խ, մարե, ա՛խ, մարե,
Ես էն օր Դավթին տի սպանեի՛, դու չը թողի՛ր:
Տեսա՞ր՝ հիմիկ ի՞նչպես վեր ինձ
Զոռբայություն կը բանացնի:
Ես վուր էն քո ասած արի:
— Հա՛,— ասաց մեր,— դու իմ ասած չ'արի՛ր.
Դու Կովբադնի՛ ասած արիր:
Մելիք ասաց.— Ես քո ո՞ր ասածն էր՝ չ'արի:
Ասաց.— Որ դու իմ ասա՛ծն անեիր,
Տարին էրկու անգամ դու տ'էրթայիր իր տուն
Ու տեսնեիր Դավթին.
Ու դեռ Դավի՛թն էլ կանչեիր՝ բերեիր տուն:
Էն վախտ կ'ուրախանա՛ր, կ'ասեր՝ աղբե՛ր կա ինձ:
Էլ մարդ չէր կարնա քո վերա խոսի:
Մելիքն ասաց.— Մա՛րե, ես արա՛բ եմ,
Դավիթ՝ հա՛յ է. էն ո՞նց կըլնի ինձի աղբեր:
— Մելիք,— ասաց Իսմիլ խաթուն,—
Է, քո խելք չի՞ կըտրի:
Շատեր՝ արաբ ու հայ, կ'ըլնեն աղբեր.
Մեկ-մեկի տուն կ'էրթան
Ու իրար շատ կ'օգնեն:
Էն Դավիթն էլ մեր պահած-շահած տըղե՛ն էր.
Թե աղեկ վարվեիր իր հետ՝

Դավիթ քո խոսք տի կատարեր...
Աղե՛կ, Դավթի մոտ չը գնացիր,
Դավիթն էլ չը կանչի՛ր քո տուն,
Էլ ի՞նչ ունեիր Դավթի հետ,
Որ ճամփեցիր՝ յոթ տարվա խարջ ուզիր:
Դավիթն էլ տեղ հանեց:
— Մարե՛,— ասաց Մելիք,—
Դավիթ էդա բանե՛ր հանեց իմ գլուխ,
Որ ամոթու մե՛ջ էդ քաղքին
Ձեմ կարնա գլուխ հանի դուրս:
— Մելի՛ք,— ասաց Իսմիլ խաթուն,—
Էլ դու Դավթի հետ գործ չունե՛ս.
Էլ բադալ բադալի՛ն էլավ.
Ես մեկ թուղթ կը ճամփեմ Դավթին,
Դավիթ քեզ հետ կը բարիշցում.
Էլ էնոր հետ դու գո՛րծ չ՝ունես:
Է՛, Մելի՛քն է, կը դադարի՞:— Մարե՛,— ասաց.—
Քանի ես քո ասածն արի՝ վնաս տեսա:
Կամ ես կ՝Դավիթ կը սպանեմ,
Կամ Դավիթ ինձի կը սպանի:
— Մելի՛ք,— ասաց Իսմիլ խաթուն,— իմ խո՛սք արա.
Դու չե՛ս կարնա կ՝Դավիթ սպանի:
Որ ասաց՝ դու չես կարնա կ՝Դավիթ սպանի՝
Մելիք բարկացավ.
Էլավ, իր վակիրի ձեռնեն բռնեց.
— Էլի՛, էրթա՛նք,— ասաց:

10

Մելիք գնաց մեջ քաղքին,
Քաղքի խելոք մարդիկ ողջ ժողովեց,
Առաջ էդա խելոք մարդկանց հարցմունք արեց:
Շատեր կային՝ ավերություն չէի՛ն ուզի.
Շատեր կային՝ որ կ՝ասեին.— Մե՛լիք,
Դավիթ քեզ ի՞նչ վնաս կը տա իսկի.
Դավիթ միամիտ իր տան նստե,
Դո՛ւ ես ավերություն արե,
Էլի դո՛ւ ես, որ չես դադրի:

Մելիք էդ մարդերու հետ էլ խորհուրդ չ'արեց։
Ջո՛կ մարդերու հետ կրուցեց.
Ասաց.— Դո՛ւք ինչ կ'ասեք.
Մենք Դավթի հետ կռի՛վ տ'անենք։
Ասին.— Մե՛լիք, էսօր Դավիթ քսան տարեկան է.
Դավիթ դեռ չը գիտե կռվել.
Թե դու էսօր կռիվ չ' անես՝
Թե որ Դավթին դու չը սպանես,
Էն որ էլավ էրեսուն տարու,
Քեզ կը սպանի ու կՄըսըր էլ կը կավթի.
Աղե՛կն է՝ քո ամեն կորք ժողովես,
Էրթաս Դավթի վերա կռիվ։
Թե որ դու մեկ ակա՛նջ դնես՝
Էդա ամե՛ն բանեն լա՛վ է։ Էս տարի թե չ' էրթաս։
Էլ Դավթին վրա չե՛ս կարնա...

Մելիք դարձավ խելոք մարդերու վերա
Գոռա՛ց, կանչե՛ց, ասա՛ց.
— Կերթա՛մ Սասուն, Սասուն կավերե՛մ։
Ըկհող ու ջուր, ըկժողովուրդ կը վերում,
Բանդեմ, տանեմ
Մըսրա հետև նոր քաղաք մի շինեմ.
Էլ թող Սասուն անուն չ'ըլնի մեջ աշխարհին։

Ինձ պետք են հազար-հազար անբեղ, անմարուս զինվոր

ԴԱՎԹԻ ԵՎ ՄԵԼԻՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ

1

Իրեք կողմըն աշխարհի Մըսրա Մելքի ձեռն էր.
Մենակ մե՛կ կողմն աշխարհի Դավթի հայրենին էր.
Մելիք կանչեց, իրեն իշխաններ ժողվեց,
Հետո բերավ, տաշտ մի դրեց իրեն առջև,
Ածելի կարկեց իրեն ճակտին,
Արուն թափվեց, տաշտ լցրեց:
Բացեց Մելիք մեկ թուղթ,
Էն արնով գրեց կորականչ.

«Թղթիկ մի գրեմ հարավային*,
Թղթիկ մի գրեմ հյուսիսային,
Թղթիկ մի գրեմ արևելյան,
Թղթիկ մի գրեմ արևմտյան,
Իմ բոլո՛ր կորքին ու կորապետին,
Ձենքեր վերցնո՛ղ, թող գա՛,
Պատերա՛զմ է.
Էկե՛ք, էկե՛ք.
Խա՛չ պարոններ,
Սակռի՛ գլխներ,
Լե՛ն ճակատներ,
Թիա՛կ լեզվներ,
Էկե՛ք վեր գյավուրին.
Պատերա՛զմ է, պատերա՛զմ...

---

* Երգ է։

Ինձ պետք են հապա՛ր—հապար անբեղ, անմորուս վինվոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար էն մոր մինուճա՛ր վինվոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար թխամաշ մորուսով վինվոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար սիպտակ մորուսով վինվոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար կարմիր մորուսով վինվոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար սիպտա՛կ ձիավոր,
Ա՛խ, սիպտա՛կ ձիավոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար կարմի՛ր ձիավոր,
Ա՛խ, կարմիր ձիավոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար սև-սև՛ ձիավոր,
Ա՛խ, սև-սև՛ ձիավոր.
Ինձ պետք են հապա՛ր—հապար փո՛ղ փչողներ,
Թմբո՛ւկ վարկողներ,
Ա՛խ, թմբո՛ւկ վարկողներ.
Էկե՛ք, էկե՛ք, ինձ պետք են բյուր-հապար հետևակ վինվոր.
Ա՛խ, հետևա՛կ վինվոր:
Էկեք, էկեք վեր գյավուրին.
Պատերա՛զմ է, պատերա՛զմ»:

Քիչ ժամանակ վերա անցավ.
Մըսրա Մելիք տեսավ,
Որ չորս կողմեն օգնականներ հասան:
Էն ժամանակ էլավ Մելիք,
Ձենով ասաց.
«Էկա՛ն, որ էկան լոտրի՛կ ջահելներ*,
Էկա՛ն, կո հարի՛ր հապար համար.
Էկա՛ն, որ էկան թառբե՛ղ ջահելներ,
Էկա՛ն, կո հարի՛ր հապար համար.
Էկա՛ն, որ էկան մորո՛ւս կնդուկներ,
Էկա՛ն, կո հարի՛ր հապար համար.
Էկա՛ն, որ էկան փողե՛ր փչողներ,
Էկա՛ն, կո յո՛թ թագավորներ՝ չորս կողմ աշխարհեն
Էկա՛ն, որ էկան իմ կտրի՛ճ օգնողներ,
Պատերա՛զմ է, Մելիք, պատերա՛զմ...»:

Էնպես, անթիվ ու անհամար ձիավորներ էկան,
Որ Մըսրա գետ հասած ժամանակ՝

* Երգ է։

Առաջին էկողներ ջրի կե՛ս խմեցին,
Միջին էկողներ ջրի մնացա՛ծ կես խմեցին,
Հետո էկողներ գետի քարե՛ր լիվեցին,
Մնացած հեծելներ ծարա՛վ մնացին:
Էկան հասան Մըսրա դաշտին, վրան վարկին
Ու հարցում արին Մըսրա Մելիքին.
— Մեր դուշման ո՞վ է, ո՞ւմ հետ տի կռվենք:

Պատասխան տվեց.— Դավիթ անունով Սասնեցի՛ն.
Ինձի շատ ու շատ մարդ է կոտորե.
Օգնությո՛ւն տվեք,
Կռի՛վ տ'էրթամ էդ Դավթի դեմ:

2

Էդ գիշեր Իսմիլ խաթուն իրեք էրապ տեսավ.
Քուն որ փախավ՝ էլավ էկավ,
Տըղի բարձի վերև նստեց, ասաց.
— Մե՛լիք, ո՛րդի, մեկ է՛լ կ' ասեմ,
Դու մի՛ էրթա Դավթի վերան:
Ես էս գիշեր էրա՛պ տեսա.
Մըսրա աստըղ մութ, խավար էր,
Սասնա աստըղ լո՛ւս, պայծա՛ռ էր.
Ու մեկ դի՛ր էլ էրապ տեսա՝
Մեր Մըսրա ձին փախեփա՛խ էր,
Սասունա ձին հասեհա՛ս էր.
Էն մեկ դի՛ր էլ էրապ տեսա.
Սասնա էրկիր արև՛ էր, լո՛ւս էր, տա՛ք էր.
Մեր Մըսրա էրկիր ա՛մպ էր, մո՛ւթն էր,
Մը՛ժ էր. անձրև՛ կը գար:
Հեղեղ կայնավ. հեղեղի ջուր դառավ արուն,
Ու ջանդաքներ մեջ կը տաներ...
Արի, մի՛ էրթա վեր Դավթին,
Դու իմ խոսքին ակա՛նջ արա:
Մելիք ասաց.— Սո՛ւս, խաբեբա,
Դու քեզ համար կը քնես՝ էրապ ինձ համա՞ր կը տեսնես:
Տ'էրթա՛մ Սասնու վերան:
— Որ տ'էրթաս,— ասաց իր մեր,
Ես է՛լ տի գամ, մենակ չե՛մ թողնի քեզ:

Մելիք ասաց.— Դու կընի՛կ ես, մի՛ գա:
— Կը գա՛մ,— ասաց,— ես չե՛մ դադրի:

Էլավ Իսմիլ խաթուն,
Ժողվեց քառսուն աղջիկ, քառսուն կնիկ,
Ու էրկու ձեռք շավար քաշող,
Ու էրկու ձեռք կուռնա փչող առավ,—
Էդ աղջիկներ խաղալո՛ւ ապով առավ,—
Մելիքի հետ գընաց Սասուն:

Մելիք իր կորքեր առավ,
Ինք էլ ընկավ կորքի առաջ
Ու դուրս էլավ Սասնա վերա:
Էկավ ու մեջ Լեռա դաշտին բանա՛կ դրավ
Ու անհամար վրա՛ն կարկեց:
Էնոր բանակ էնքան էր մեծ,
Որ չուր հետինն էկավ, հասավ,
Առջին էկող քարեր քաղեց, ավալ մաղեց
Ու գետ կըտրեց...

Էդտեղ Մելիք թուղթ մի գրեց Դավթին.
— Դավի՛թ, կռի՛վ տ՚անես, արի՛ իմ դեմ,
Չէ հո՝ տի տամ ես իմ կորքեր քաղքի վերա
Ու ինչքան ո՛րձ կա՝ տի սպանեմ,
Կրա՛կ տի տամ Սասնա քաղաք ու տի վառեմ,
Ջրհեղեղի տակո՛վ տ՚անեմ,
Սասնա քար-հող քշեմ գերի:
Առան էդ թուղթ, բերին, տվին Հովանի ձեռ:
Ջենով Հովան կարդաց, ասաց.
— Ջա՛նըմ, էսա ո՞ւմ վերան է՝ կը գա կըռիվ.
Էսքան կորքեր ժողվե-էկեր է, ի՞նչ տ՚անենք:
Ոչ մա՛րդ ունենք, ոչ կո՛րք:
Կը լա Հովան՝ մորուսը վե,
Կը թափի տաք արտասուքներ:
— Հե՛, բարերա՛ր աստված,— կ՚ ասի,—
Դո՛ւ օգնություն հասնես մեկի:

Սասուն էդ թուղթ որ կարդացին՝ աչ-դող ընկան.
Ամա Դավիթ դեռ չէր լսե:

3

Զենով Հովան Մելքի գրած էդ թուղթ առավ՝
Գնաց Վերգոյի մոտ:
Երբ որ Վերգոն լսեց՝
Մելիք մեծ կորքերով էլե՛ր, էկե,
Զարկե վրան, ասաց.
— Հովան, մեր ձեռքեն չի՛ գա, որ կռվենք,
Բերենք Դավթին, նստենք, քե՛ֆ մի անենք,
Խաբենք Դավթին, խմեցուցե՛նք,
Էլնենք, տանենք կընիկ, աղջիկ,
Ոսկի-արծաթ տանք Մելիքին,
Անցնենք էնոր թրի տակով,
Բալքի Մելիք խղճա մեկի:

Էլավ Զենով Հովան, կեր-խում սարքեց:
Դավթին կուշտ-կուշտ գինի տվին,
Յոթը կանթեն պղինձ լցրին,
Բերին, դրին իրենց միջև:

Թորոսն էլ էդ քեֆին էկավ,
Ու իր միտ վե՛ ասաց.
«Դավիթ տաքարո՛ւն տղա՛ է,
Ինքկինքը մեջ կռվին վնաս կը տա,
Խմեցուցենք՝ թող տուն մնա...»:
Դարձավ ասաց.— Դավիթ,
Թե էդ պղինձ գինին խմես՝ Մհերի տղե՛ն ես,
Թե չը խմես՝ բիճ ես:
— Քեռի՛,— ասաց,— լի՛ց մի տեսնենք էդա բարոշ:
Քեռին պղինձ լցրեց լիք—չուր բերան:
Դավիթ վերուց, դրեց բերնին,
Խըմե՛ց, խըմե՛ց, խլսուց թողեց,
Պղինձ ընկավ գետին, ծակվավ:
Դավիթ էնպես մի գինովցա՛վ—պառկավ, քնա՛վ:
Քեռի Թորոս ինք էլավ, թմբուկ կարկեց, ասաց.
«Էլե՛ք, էլե՛ք*,
Քոթո՛թ, մոթո՛թ,
Անուշ Քոթոթ,

* Երգ է։

Վժիկ Մըխո,
Ճընճղափորիկ,
Ու Խոր Մանուկ,
Ու Խոր Գուսան,
Ու Ճոռ Վիրապ,
Էլե՛ք, էլե՛ք,
Էսօր լավ է, քանց ամեն օր,
Էրթանք, տեսնենք —
Շատեն՝ շա՛տ, ու քչեն՝ քիչ.
Յա աստված էդ մարդո՛ւն կը տա,
Յա թե՝ աստված կը տա մեկի»:
Քեռի Թորոս էրեսունինը վրան վերցուց,
Առավ իր տան անդամներուն,
Էլան, հեծան, գնացին.
Գնացին Լեռա սարի գըլուխ,
Իրենց վրաններ կարկեցին:
Էրեսունինը վրան կարկեց Քեռի Թորոս,
Մնաց, չուր լուս բացվի:

4

Քեռի Թորոսի կընկա, Սանդուխտի սիրտ լցվավ.
Սանդուխտ միտ վե ասաց.
«Թորոսին էնտեղ կը սպանեն,
Մեր տղեքնե՛ր էլ կը սպանեն,
Կը գան, մեկի՛ էլ կը սպանեն,
Մեր քոք կը բերեն, կը կտրեն»:
Էկավ Սանդուխտ նստավ,
Լացեց Դավթի գլխու վերև:

Էնոր արտասուքն օր թափավ Դավթի էրես,
Դավիթ կարթնավ, տեսավ՝ ասաց.
— Յա՛, նանե՛, աստված խե՛ր անի.
Հալա ես ո՛ղջ եմ—դու ինչի՛ կը լաս:
— Ա՛յ Դավիթ,— ասաց.— լա՛ռ, գրո՛ղ քեզ խեղդի.
Կոկբադնի կորք տվիր, ջարդիր.
Մըսրա Մելիք անթիվ կորք է քաշե, էկե.
Քեռիդ էլավ, գընաց դեմ էնոր:
Քեռուդ Մելիք տի ըսպանի

Ու գա, մեկի էլ տի ըսպանի,
Մեր քոքըն տի կտրեն,
Մեկի ամեն գերի տանեն:

Դավթի հերսըն էնպե՛ս էլավ,
Որ քո՛ւն, գինովութե՛ն անցան:
Էլավ, իր նետ-աղեղ առավ,
Ասաց.— Նա՛նե, մի՛ վախենա,
Հիմա կ'երթամ, ես Մելքին պատասխան կը տամ:
Էլավ, գնաց...

5

Գնաց Զենով Հովանի մոտ, ասաց.— Հրողբե՛ր Հովան.
Ինձ կենք ու ձի մի տուր, կռիվ տ'երթամ,
Զենով Հովան ասաց.— Գընա՛,
Գոմի ձիերուց մեկ ջոկի,
Օդի թրերուց էլ՝ թո՛ւր մի ջոկի:
Վերգոն էդտեղ ծաղրով ասաց՝
— Դավիթ, որ Մելիք կը սպանես,
Էնոր ականջ ինձ նվեր բեր:
Դավիթ ըռկավ, ամա բան չ'ասաց:
Դավիթ գնաց, գոմից կռուտ քուռա՛կ մ'առավ,
Թրերեն էլ ժանգոտ թուր մի առավ,
Ձին հեծավ, քըշեց, գընաց:

Էդ վախտ արտատեր Պառավ էլավ դեմ Դավթին,
Ասաց.— Դա՛վիթ, ո՛րդի, ի՞նչ տ' անես:
Ասաց.— Կ'երթամ վեր Մըսրա Մելիքին կռիվ:
Պառավ խնդաց Դավթի վերա, ասաց.
— Դավիթ, ծո՞ւռ ես, որ էդոնցով կ'երթաս կռիվ.
Բա ափսոս չի՞, որ դու էն հոր տղան ըլնես:
Դավիթ ըռկավ, ասաց.— Պառա՛վ,
Հապա ինչո՞վ երթամ կռիվ.
Կ'ուզես՝ անթարոցի՛ց, շիշի՛ց,
Ի՛նչ որ ունես՝ հապի՛ր արա,
Բե՛ր, էնոնցո՛վ երթամ կռիվ:
Պառավն ասաց.— Դավիթ, մեռնե՛մ քո արևուն,
Մի՛ բարկանա, կ'երթաս, քեզ բա՛ն ասեմ՝ նո՛ր գընա:
— Պառավ, դե, շո՛ւտ, ասա տեսնեմ:

Պառավ ասաց.
«Մագյար չը կա՞ր քո հոր Թուրն Կեծակին*,
Մագյար չը կա՞ր քո հոր Ռուռկիկ Ջալալին,
Մագյար չը կա՞ր Ռուռկուն Նալն պողպատի,
Մագյար չը կա՞ր քո հոր Գյամն պողպատի,
Որ դնես Ռուռկիկ Ջալալու բերնին:
Մագյար չը կա՞ր քո հոր Թամքը սադաֆի,
Ջանգուներ իր վերան կախուկ են ոսկի,
Մագյար չը կա՞ր քո հոր Գուտն ի գլխին.
Մագյար չը կա՞ր քո հոր Կապեն ղադիֆե.
Մագյար չը կա՞ր քո հոր Քամարն ի մեջքին.
Մագյար չը կա՞ր քո հոր Շալվարն ի ոտին.
Մագյար չը կա՞ր քո հոր Կոշիկն ի ոտին.
Մագյար չը կա՞ր քո հոր Խաչ Պատերազմին
Վեր իր աջ թևին»:
Ասաց.— Պառա՛վ, էդ բոլոր ո՞րտեղն է:
Պառավն ասաց.— Դավի՛թ, քո հրողբեր
Անե՛ծք դրեց էնոր վերան,
Ով քեզ քո հոր բաներ, նշա՛նց կը տա:
Ասեմ՝ էնոր անեծքի տակը տի մնամ:
Էլի՛ր, քանի դու էդապես շիվար էղար —
Մըսրա Մելիքն էկե, քեզնից կռիվ կ'ուզե,
Գընա, կռի՛, Հովան թող դո՛ւրս հանի.
Ամա խաթրով Հովան չի՛ տա էդա բաներ.
Տ'էրթաս, էնոր փողպատ պինդ տի բռնես
Ու կռռվե՛ն տ'առնես:

6

Դավիթ գնաց հրողբոր մոտ.
Իր ձեռ էթալ ու հրողբոր փողպատ բռնեց,
Պինդ թափ էտու, էնոր ոտքեր հողից կտրեց:
Ասաց.— Ես կուզեմ քենե իմ հոր Թո՛ւրն Կեծակին*.
Ես կուզեմ քենե իմ հոր Ռուռկի՛կ Ջալալին՝
Վեր ոտին Նալն պողպատի,
Ես կուզեմ քենե Սա՛նձը պողպատի,
Որ դնեմ Ռուռկիկ Ջալալու բերնին:

---

* Երդ է։

Ես կուզեմ իմ հոր Թա՛մքը սադաֆի՝
Վերան կախուկ կանգուներ ոսկի.
Ես կուզեմ քենե իմ հոր Գուտն ի գլխին,
Ես կուզեմ քենե իմ հոր Կապա՛ն դադիֆե,
Ես կուզեմ քենե իմ հոր Քամա՛րն մեջքին,
Ես կուզեմ քենե իմ հոր Շալվա՛րն ի ոտին,
Ես կուզեմ քենե իմ հոր Կոշի՛կն ի ոտին.
Ես կուզեմ քենե իմ հոր Խա՛չ Պատերազմին.
Կըտա՛ս՝ տո՛ւր խաթրով —
Չե՛ս ի տա՝ կը կայնեմ, կոռովե՛ն կառնեմ:
Հրողբեր դարձավ, ասաց.
— Էն բերան կոտրի, որ քեզ սովորցուց.
Էն քո գիտցած չէ՛ր, քեզի ուստա՛ կա:
Էն տարին, ինչ Մհեր մեռավ —
Շեմքի տակ էնոր գեստեր խորեցի:
Դե գնա՛նք, հանեմ:

Գնացին, հանին:
Դավիթ բերեց տուն, էդ գեստեր հագավ:
Հրողբերն ասաց.— Մեռնե՛մ քեզ, Դավիթ,
Քո հոր կենք-կրահ, կո՛, էն ներքնատան:
Քառսուն աստիճան սանդուղք ցած իջնես,
Նո՛ր քո հոր կենքեր էն տեղեն հանես:
Թե էդ կենք վերո՛ւս՝ դու կարնաս կռվես.
Թե չէ՝ մի՛ էրթա, չե՛ս կարնա կռվես:

Դավիթ էր՝ գնաց, իջավ ներքնատուն,
Իր հոր կենք-կրահ տեսավ պատեն կախ:
Էդ ամեն գրկեց, քաշեց իր թևին,
Դուրս հանեց, բերեց Զենով Հովանին:
Զենով Հովան էդ բան տեսավ, ուրախացավ:

Ասաց.— Բալքի Դավիթ իրա հոր տեղ բռնի:
Ես Մհերի աղբե՛ր էի՝ չէի կարնա դուրս բերեի,
Ամա Դավիթ գրկեց, բերեց:

---

* Երգ է։

7

Զենով Հովան ուրախացավ, ասաց.— Դա՛վիթ,
Էն օրից, ինչ քո հեր մեռավ, մինչև էսօր,
Ես քո հոր ձին փակեր էի մեծ գոմ,
Դուռն էլ շարե. հերթիկե՛ն խոտ ու ջուր կը տալի:
Մըսրա Մելքի ահուց չե՛մ իշխենա,
Որ դուռ բանամ, ձին հանեմ դուրս:
Տարավ Դավիթ Զենով Հովան,
Հեռվանց գոմի դուռ շա՛նց տվեց, ասաց.
— Դավիթ, քո հոր ձին էնտե՛ղն է.
Թե դու կարնա՛ս՝ գնա քաշի, հան դո՛ւրս:
Դավիթ դուռ բանդեց, բացեց, մտավ ներս:
Ձին Մհերի վենք-զրահներ տեսավ թե չէ,
Ճանաչեց, ուրախացավ,
Տռճիկ տվեց ու խրխնջաց:
Դավիթ մոտիկ գնաց ձիուն, մակեր բռնեց,
Աչքեր մաժեց, քամակ մաժեց.
Ձին հոտոտաց, ձին լա՛ց էղավ:
Էլավ Դավիթ, կձին գոմեն քաշեց, հանեց:
Գոմեն էլան՝ ձին ճանաչեց, որ Մհեր չէր:
Պինդ աքացի՛ մ'էկար գետին,
Կրակ էտու ոտի տակեն:
Աստծու շնորհքով լեկու առավ, ասաց.
— Հողածին, հո՛ղ ես, քեկ հո՛ղ տի դարձնեմ:
Ինձ ի՛նչ տ'անես:
Ասաց.— Ես քեկի տի հեծնեմ:
Ձին ասաց.— Քեկ էնպե՛ս տի բարձրացուցեմ,
Տի տամ արեգական— վառեմ:
Ասաց.— Կոլորվե՛մ քո փորի տակ:
Ձին ասաց.— Քեկ տի տանեմ սար ու ձորեր,
Զարնեմ քարեր, ծառեր՝ փշրեմ:
Ասաց.— Տ'օլորվեմ, էլնեմ քո մե՛ջք:
Ձին ասաց.— Հա՛յ գիդի մարդ,
Դու ինձ տե՛ր, ես քե ձի՛ ըլնենք:
Դավիթ ձիուն ասաց.
— Քե տեր չը կար՝ ես քե տե՛ր կ'ըլնեմ,
Քե թիմարող չը կար՝ ես քե թիմարող կ'ըլնեմ:
Քե կեր տըվող չը կար՝ ես կեր տըվո՛ղ կ'ըլնեմ:

Դարձավ Հովանին՝ ասաց.— Հրողբեր,
Ես կուզեմ քենե Թա՛մքը սադաֆին:

Թամք բերեց Հովան, իր միտ վե ասաց.
— Ինչ Մհեր էդ թամք կը դներ ձիուն,
Ինչ թանգ կը կրքեր,
Ջիու առաջի էրկու ոտ գետնուց կը կտրեր:—
Ասաց.— Թե Դավիթ ձիու ոտ վերուց,
Թող էրթա կռիվ.
Թե որ չը վերուց՝ չի՛ կարնա էրթա:
Դավիթ թամք դրեց ձիու քամակին
Ու թանգ որ կքեց,
Ջիու չորս ոտն էլ գետնուց կտրեց:
Ասաց.— Հրողբե՛ր,
Տո՛ւր ինձ Մհերի Խաչ Պատերազմին:
Հրողբերն ասաց.— Ես չե՛մ կարնա տա.
Թե արժա՛ն ես՝ կը գա քո թևին,
Թե արժան չես՝ չի գա քո թևին:
Էդտեղ աստծու հրամանով
Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին:
Դավիթ էլավ հոր ձին հեծավ,
Իր հոր ջոջ սապ էտու կարկել,
Փչեց իր հոր Պղլորի Փող,
Անգամ մի իր դռան առաջ գընաց, էկավ:
Սասուն ողջ ժողովավ էդտեղ:

8

Ջենով Հովան կայնեց, լավ մի աչքեց տղին,
Սիրտ մըռմըռաց, ըսկսեց լալ, երգով ասաց.
«Ա՛խ-վա՛խ, ախ-վա՛խ, հապա՛ր ափսոս*,
Ափսո՛ս, հապա՛ր ափսոս Ռուռկիկ Ջալալին,
Ա՛խ, հալա Ռուռկիկ Ջալալին,
Ափսո՛ս, հապա՛ր ափսոս Թամքը սադաֆին.
Ա՛խ, հալա Թամքը սադաֆին.
Ափսո՛ս, հապա՛ր ափսոս Սանձը պողպատին,
Ա՛խ, հալա Սանձը պողպատին.

* Երգ է։

Ափսո՜ս, հապա՛ր ափսոս Գուտն ի գլխին,
Ա՜խ, հալա Գուտն ի գլխին,
Ափսո՜ս, հապա՛ր ափսոս Կապան ղադիֆե,
Ա՜խ, հալա Կապան ղադիֆե.
Ափսո՜ս, հապա՛ր ափսոս Քամարն ի մեջքին,
Ա՜խ, հալա Քամարն ի մեջքին.
Ափսո՜ս, հապա՛ր ափսոս Կոշիկն ի ոտին,
Ա՜խ, հալա Կոշիկն ի ոտին,
Ափսո՜ս, հապա՛ր ափսոս Խաչ Պատերազմին,
Ա՜խ, հալա Խաչ Պատերազմին»:
Զենով Հովան Դավթին չէր տեսնի,
Դավիթ իր ձիուն նստած՝
Ձեռ կարկեց վեր թրին,
Տի քաշեր, կարկեր հրողբոր,
Զենով Հովան կանչեց.
«Ափսո՜ս, հապա՛ր ափսոս մեր թառլան Դավիթ*,
Ա՜խ, հալա մեր թառլա՛ն Դավիթ.
Ափսո՜ս, հապա՛ր ափսոս եղնիկն ջահել,
Որ գնաց մեր Սասնա տնեն»:

Որ ասաց՝ «Ափսո՜ս մեր թառլան Դավիթ»,
Դավիթն ասաց.— Հրողբե՛ր,
Դու մատա՛ղ ըլնես էդա մե՛կ խոսքին.
Էդա մեկ խոսք որ չ՚ասեիր՝
Քո վիզ տի կարկեի.
Տըվի՛ էդա մեկ խոսքի խաթեր:
Ինչի՞ առաջ ամե՛ն բանի ափսոսացիր— հետո ինձ.
Առաջ ինձի՛ ափսոսայիր ու հետո էնոնք:
Ե՞ս եմ ափսոս, թե՞ Թուր Կեծակին.
Ե՞ս եմ ափսոս, թե՞ Քամարն ի մեջքին:
Ասաց.— Դավի՛թ, քո գլխուն մեռնեմ,
Ախր ես քո ապով կը լամ:
Դավիթ ձիուց իջավ տակ,
Պագեց իր հրողբոր ձեռ, ասաց.
— Հրողբեր, հալա՛լ արա, ինչ ամագ տվեր ես ինձ՚:
Հրողբեր Հովան էդ բան որ լսեց,
Մհերի ջոջ սա՛կ էտու կարնել,

* Երգ էր

Մհերի թմբո՛ւկ էտու ծեծել:
Մհերի փո՛ղ էտու փչել:
Հարսներ էկան, դեմ կայնան,
Խաղով ասին Դավթին.
«Դավիթ, էրթալ քեզ չ՚ըլնի, դառնա՛լ քեզ ըլնի*.
Դառնա՛լ քեզ ըլնի, մեր աղբեր Դավիթ.
Զուր հիմիկ քեզ հարսնություն չե՛նք արեր —
Նո՛ր տի հարսնություն անենք, մեր աղբե՛ր Դավիթ.
Նո՛ր տի քո ձեռքին ջո՛ւր լըցնենք, մեր աղբե՛ր Դավիթ.
Քո ոտներին սո՛լ տի դնենք, մեր ախպե՛ր Դավիթ.
Քեզ հարսնությո՛ւն տ՚անենք, մեր աղբե՛ր Դավիթ»:

9

Դավիթ էլավ, թռավ վեր իր ձիուն,
Աստծու անուն տվեց,
Դարձավ, առավ խաթրը քաղքըցոց,
Դարձավ, առավ խաթրը գեղացոց,
Առավ Դավիթ խաթրը մարդ ու կընկտոց, ասաց.
— Աղբերնե՛ր, քուրե՛ր, դուք մի՛ վախենաք*,
Աստծու կամքով կ՚էրթամ ես կռիվ
Օ՜, քուրեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի քուրությո՛ւն եք արե.
Օ՜, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերությո՛ւն եք արե:
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով.
Իմ դուռ-դրկիցներ, ձեր էրես շա՛տ եմ թռեր,
Ինձ հալա՛լ արեք:
Բարի տանտիկիննե՛ր, ինչ հա՛ց կը թխեք,
Դավթի անուն հիշեցեք:
Ջահելնե՛ր, դուք է՛լ, ինչ որ քե՛ֆ կ՚անեք,—
Դավթի անո՛ւն հիշեցեք:
Իմ քուրե՛ր, մերե՛ր, իմ լա՛վ դրկիցներ,
Մնացե՛ք բարով:

* Երգ էջ

Երբ որ Դավիթ էս խոսք կ'ասեր՝
Իր մամիկ, Մըհերի մեր, Դեղձուն Ծամ,
Իր սուգեն էլավ սգահան:

Էն ժամանակեն որ Մհեր մեռեր էր,
Ու մամիկ մտեր էր յոթոտանու հետև,
Ծառա մի կար,
Էնոր հաց կը տաներ:
Էն օր, որ Դավիթ էլավ
Մհերի սապ էտու կարկել,
Էդ ծառան հաց կը տաներ Մհերի մոր:
Մհերի մեր ասաց.
— Էս Մհերի սապի՛ ձեն կ'առնի իմ ականջ,
Էս ի՞նչ բան է:
Ասաց.— Խանում, հալա դու դեռ չե՞ս հասկացե,
Դավիթ էլե, իր հոր շորեր հագե,
Իր հոր կենքեր կապե վեր ի՛ր,
Իր հոր Քուռկիկ Ջալալին հեծե,
Իր հոր սա՛պն է, որ կը կարկի,
Կռի՛վ կ'էրթա Մելիքի դեմ:
Մհերի մեր՝ էդ լսեց, թողեց իր սուգ,—
Էլավ, իրան տեղեն կայնեց, ասաց.
— Իմ մուրապ կատարվեց, տ'էլնեմ դուրս:
Գնաց, գլուխ փանջարեն վեր կախեց,
Աչքեց, տեսավ՝ նորմանուկ Դավիթ
Մհերի ձին հեծե, կայնե: Կանչեց.
— Քուռկի՛կ Ջալալին, մեռնե՛մ քե, մուրա՛պ:
Դավիթ շա՛տ կարմացավ, կայնեց:
Դեղձուն շարունակեց.— Քուռկի՛կ Ջալալին*,
Իմ Դավիթ հե՛ր չ'ունի՝ անես հերություն.
Իմ Դավիթ մե՛ր չ'ունի՝ անե՛ս մերություն,
Իմ Դավիթ աղբե՛ր չ'ունի՝ անե՛ս աղբերություն,
Իմ Դավիթ դու տանես իր հոր Կաթնով Աղբուր,
Դավիթ ձիուց իջնի, իջնի ջուր խըմի,
Իմ Դավիթ դու տանես իր հոր փորձաքար —
Դավիթ իր թուր կարկի, կարկի սան, փորձի:

---

* Երգ էլ

Քուռկիկ, քե ամանա՛թ իմ նորամանուկ Դավիթ:
Ձին վիպ թեքած լսեց, ասաց.— Շա՛տ լավ, մամիկ:
Պառավ իր խոսք դարձուց Դավթին, ասաց.
— Դավիթ, քո օղորմած հեր իր ձիուն
Ամեն ճար ու ճամփա շանց է տվե,
Ձին էդ ամեն գիտի:
Դավիթն ասաց.— Շա՛տ լա՛վ, մամիկ:
Ու էլավ Դավիթ՝ քըշեց Քուռկիկ Ջալալին:

11

Քշեց, գնաց մեջ հոր Ծովասարին.
Դավիթ որ Սասունեն էլավ՝
Էնպես մշո՛ւշ մի, դումա՛ն մի դրեց,
Որ Դավթի աչք ըսկի ճամփեն չէ՛ր ջոկի:
Ամա Քուռկիկ աղավնիկի՛ նման թռավ:
Դավիթ ասաց.— Ջա՛նըմ, էդ է՛լ աստծու բան է:
Կայնեմ, թողնեմ Քուռկիկ Ջալալու կամքին,
Ուր որ էրթա՛, թող էրթա՛:
Քուռկիկ Ջալալի՛ն էր, գընա՛ց, գընա՛ց,
Էն յո՛թ օրվա ճամփան մի սհաթվա՛ն անցավ:
Էլավ բարձրիկ սարի գլուխ.
Որ էլավ էդ սարի գլուխ, կանգնեց.
Կանգնեց վեր էն Կաթնաղբրին:
Մըժ բացվավ, դուման բացվավ.
Քուռկիկ չոքեր էկար գետին, մնաց.
Դավիթ գիտցավ, թե ձին դադրավ, ասաց.
— Հեյ-վա՛խ, Քուռկիկ Ջալալին,
Քո վի՛կ կոտրի,
Ես կ՚ասեի՝ դու ինձ արնի գետե՛ր տ՚անցուցես,
Էս պո՛ւտ մի ջուր է—ինձ չե՛ս կարնա անցուցես:
Էսա տեղ որ էսպե՛ս կ՚անես՝
Բա մեջ կռվին ի՛նչպես տ՚անես.
Ի՛նչպես տ՚էրթամ Մըսրա Մելիքի դեմ կռիվ:
Ասաց, վանգուն էկա՛ր,
Ձիու կողաշար կոտրեց:
Ձին ըռկավ, ասաց.
— Կարնա՛մ վքեվ կարնեմ արեգական էրես,
Համա քո հոր խաթրին չե՛մ իտա:
Դավիթ ըռկավ, քաշեց իր թուր,

Ու Քուռկիկի վիպ տի կտրեր.
Թուր մինչև կես քաշեց՝
Էն դեհեն քամի՛ մի կարկեց էնոր ճակատ.
Դավիթ ուշքի եկավ— լսեց ձիու ձեն:
Ձին ասաց.
— Էսի քո հոր Կաթնաղբո՛ւրն է.
Իջի՛ տակ, ջո՛ւր խմի:
Իջի պո՛ւտ մ'էլ ջրից տուր իմ կողաշարին:
Դավիթ իջավ, ձիու գլուխ պագեց,
Պուտ մի ջուր էտու ձիու կողաշարք:
Դավիթ ձին էթող խոտերի մեջ արածա,
Ինքն էլ աղբուրեն ջուր խմեց,
Պառկեց, քնեց, հանգստացավ:
Ձին էլ կանգնեց արևու դեմ՝
Հով արեց վերան:

12

Քնից ակահավ, ի՛նչ տեսավ,— հպորացե,
Իր հոր հագուստ հալիվ կը գա վերան:
Ձին խրխնջաց, էկավ, կանգնեց Դավթի առաջ:
Դավիթ սանձ դրեց բերան, էլավ, հեծավ:
Խնդացավ, քըշեց, գնաց:
Ճամփին տեսավ մեկ էրկաթե սուն:
Ձին ասաց.— Դավի՛թ,
Էն սուն որ կը տեսնես՝ էնի քո հոր փորձաքա՛րն է:
Թե դու մեկ դարբից կտրեցիր՝ կ'էրթա՛նք կռիվ.
Ձը կտրեցիր՝ չե՛նք էրթա կռիվ:
Դավիթ թուր քաշեց, մեկ դարբից էկարկ.
Թուր Կեծակին էն սուն կտրեց, մեջեն անցավ:
Էրկաթե սուն է—էդ սուր որ մեջեն անցավ՝
Կտոր վեր կտորի՛ն մնաց.
Դավիթ չ'իմացավ թե թուր կտրեր անցեր է.
Նոթեր կիտեց, էնոր սիրտ թոռոմավ:
Ասաց ձենով.
«Ոտի՛կ, դու թո՛ւլ կենայիր*.
Ձը գայի՛ր, հասնեի՛ր էստեղ:
Որ իմ դարբ կարկեի՛ էդ սան,

* Երդ է»

Զը կտրեի՝ իմ սիրտ թոռոմե՛ր:
Զեռի՛կ, դու կոտո՛ր կենայիր,
Որ ուժ էնքան չըկա՛ր քեզի,
Զարնեիր, էն սուն շո՛ւռ տայիր,
Իմ սիրտ էսպես չը թոռոմե՛ր:
Աչքի՛կ, դու խավա՛ր կենայիր,
Որ էսա բան չը տեսնեիր,
Ինչի էրկաթե սուն չը կտրեի,
Որ գնայի կռիվ դեմ Մըսրա Մելքին»:

Մեկ էլ՝ Դավիթ տեսավ՝ քամի՛ էլավ.
Էդա քամին փոթորկի՛ պես էկավ,
Էկավ, կարկեց էրկաթե սուն,
Սուն շո՛ւռ առավ:
Դավիթ գնաց, տեսավ,
Իր կարկած տեղ թուր կտրե՛, անցե:
Խնդացավ, ասաց.
«Ոտի՛կ, դու ուժո՛վ ըլնես*,
Դու բարո՛վ էկար էստեղ.
Որ ես կարկեցի՛ էս սուն կտրի.
Զեռի՛կ, դու կանա՛չ ըլնես,
Թող քո ուժ է՛լ ավելի ըլնի,
Որ Մելքի դեմ գնա՛մ կռիվ.
Աչքի՛կ, դու լուսո՛վ ըլնես,
Որ էս բան տեսար»:

Ասաց, քշե՛ց իր ձին,
Էն քարերուց, աղբրներուց, էն սարերուց
Հալալութե՛ն ուզեց,
Մնաք բարև՛ ասաց, երգեց.
«Ծովասարու պաղ-պաղ աղբրներ*,
Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք:
Ես կ՚էրթամ կռիվ, կը ծարավնա՛մ,
Դուք ինձնից կարո՛տ մնացեք:
Ծովասարու պաղ-պա՛ղ քամիներ,
Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք,
Ես կ՚էրթամ կռիվ, կը շոգնա՛մ,
Դուք հո՛վ մնացեք»:

---

* Երգ է։

Ասաց, քըշեց, գնաց Մըսրա Մելիքի դեմ.
Տեսավ՝ էրկնուց աստղին հաշի՛վ կար,
Էնոնց վրաններին հաշիվ չը կար.
Կայնեց բարձր սարի վերա,
Տեսավ՝ որ վորք քանց ծովու ավազ շատ է:
Գլուխ թափ էտու, ասաց.
«Տեր աստված, ինչպե՞ս տ'էրթամ կռիվ*:
Խնամք շա՛տ է մեծ թագավորին:
Էնոնք ըլեն գարնան մատղաշ գառներ,
Ես ըլնեմ անոթի գել՝
Չեմ կարնա էնոնց խեղդի.
Էդ վրաններ ըլնեն դեպեր, ես ըլնեմ կրակ,
Չե՛մ կարնա ես էդոնց վառի:
Էդոնք ըլնեն մոխիր, ես ըլնեմ քամի՝
Չե՛մ կարնա էնոնք տեղից վերցուցի»:

Զին իմացավ Դավթի էրկմտիլ, ասաց.
— Է՛յ անիրավ, ի՞նչ կը վախենաս*,
Քանի մի քո թո՛ւր կը կտրի,
Էնքան էլ իմ շո՛ւնչ կը կտրի.
Քանի մի քո թո՛ւր կը կտրի,
Էնքան էլ իմ ո՛տ կը տրորի:
Դավիթ, մի՛ էրկմտի, քըշի:
Դու իմ քամկից վե չը գաս, չը խաբվես:

Դավթի սիրտ պնդացավ էդ խոսքերով,
Դավիթ քշեց, գնաց, ասաց.
— Ջանըմ, ես տի խաբա՛ր անեմ ու նո՛ր տ'էրթամ:
Գնաց, էլավ Լեռա սարի գլուխ, կանչեց.— «Էհե՛յ*,
Ով քընած է՝ արթուն կացեք,
Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,
Ով թամբեր է՝ կենքե՛ր կապեք,
Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.
Չ'ասեք Դավիթ գող-գող էկավ,
Գող-գող գընաց»:

Ասաց, ընկավ էդ վորքի մեջ,
Ջարկեց, վարկեց, կանչեց.

---

* Երգ էլ։

«Վապե՛, Քուռկիկ, վապե՛,
Կըտրե՛, թըրիկ, կըտրե՛...»:
Կռվան, կարկին, կոտորեցին,
Արնե հեղեղ էլավ, լեշեր տարավ:

Էդ վախտ Քեռի Թորոս աչքեց
Դեպի Մըսրա Մելքի կորք,
Տեսավ՝ Մըսրա կորքերի մեջ
Էնպե՛ս մի կտրում ընկե,
Էնպե՛ս վայնասուն ընկե —
Ձիրար կը ջարդեն, կը կտրեն:
Քեռի Թորոս դարձավ, ասաց.
— Տղեկնե՛ր, վե՛ր էլեք, մեր աստված մե՛ծ է.
Կտրում ընկե՛ր է Մելիքի կորքերի մեջ:
Էլեք, մենք էլ ներքի դեհեն առնենք...
Վերի դեհեն Դավի՛թ կտրեց,
Ներքի դեհեն՝ Քեռի Թորոս...

Մըսրա Մելքի կորքի միջեն մարդ մի էլավ,—
Մեկ ալևոր—յոթ տղու հեր:
Մելիք էնոր յոթ տղեկներ կոռվե՛ն էր բերեր կռիվ:
Էդ ալևոր ասաց.— Հե՛յ-վա՛խ, հե՛յ-վա՛խ...
Դուրս էկավ էն՝ առանց կենքի ու գլուխբաց՝
Ջորքի միջեն վապեց,
Ասաց.— Ճամփա՛ տվեք, էրթամ Դավթի առաջ:
Մի խոսք ասեմ, էսա կորք ապատեմ կռվից:
Էկավ, կանգնեց Դավթի առաջ,
Ասաց.— Դավի՛թ, մեռնե՛մ քեզի,
Ակա՛նջ արա, ձիդ դադրեցրու,
Գամ՝ քեզի խո՛սք տ՛ասեմ:
— Ի՞նչ տ՛ասես ինձ, հալվո՛ր.— հարցուց Դավիթ:
— Դավի՛թ,— ասաց,— մեռնե՛մ քո արևուն.
Չէ՞ որ էնոնք էլ մա՛րդ են, իսա՛ն են.
Ինչի՞ կը կոտորես, ինչի՞ կը սպանես.
Չէ՞ էդոնք է՛լ էրեխանե՛ր ունեն,
Տո՛ւն ու կընի՛կ ունեն:
Էնոնց սպանես՝ ճժերու մեղք կ՛ընկնի քո վիզ:
Աղքատ ու խեղճ մարդ են էդոնք.
Որը՛ իր մոր մեկուճարն է,
Որը նոր պսակված տըղա,

* Սրգ է։

Որը իր օջախի սունն է,
Որը հանգած մի տան ճրագ:
— Ապա ինչի՞ էկած են, հետ ինձ կը կռվեն:
Պատասխանեց.— Մեկ ի՞նչ մեղք կա.
Մըսրա Մելի՛քն է կոռովեն բռնե, բերե.
Մըսրա Մելի՛քն է քո դուշման,
Գընա իր հետ կռիվ արա:
— Ապա Մելիքն ո՞ւր է հիմա:
— Ա՛յ, էն կանաչ վրանի տակ քնա՛ծ է, տե՛ս,
Ոսկի խնձորն էնոր չադրի գլխին դրուկ.
Յոթն ապապ աղջիկ էնոր ճանճ կը քշեն,
Յոթն ապապ աղջիկ էնոր ոտ կը մաժեն:
Էն վրանից մուխ որ կ'էլնի՝
Էն մուխն էլ հո մուխ չի,
Էն շոգե՛լքն էնոր բերնի:
Դու որ էրթաս Մելիք սպանես՝
Էդ կորք քեզի աղոթք տ՛անի,
Տի խնդանա ու ամեն մեկն իր տուն տ'էրթա:

Էդտեղ Դավիթ խղճավորվավ,
Զորք ջարդել վերջացուց,
Դարձավ, ասաց.— Հա՛լվոր,
Աղե՛կ խոսք ասացիր.
Ես քո ասած տ՛անեմ:

14

Դավիթ քշեց իր ձին, գընաց,
Մելքի վրանի դուռ կայնեց.
Տեսավ՝ Մելիք վրանի տակ
Մեջ վերմակին կոլոնվե՝ պառկե:
Յոթն աղջիկ էնոր չորս դին նստե՝ ճանճ կը քշեն,
Յոթն աղջիկ իր ոտ կը մաժեն,
Իսմիլ խաթուն նստե Մելքի գլխու առջև,
Էրկու արաբ ծառայող էլ դռան կանգնած:
Դավիթ արաբներին ասաց.
— Վե՛ր հանեք էդա ձեր աղեն,
Կանչեք, Մելիք թող դուրս գա դուռ:
Էդ արաբներ ասին.
— Մենք չե՛նք կարնա. էնի յո՛թըն օր տի քնի:
Իրե՛ք անցե, չո՛րս օր էլ կա, որ վեր էլնի:

Դավիթ ասաց.— Ես չե՛մ դադրի,
Զուր էնիկ իր քեֆով էլնի:
Քընի-մընի ես չե՛մ գիտի,
Շուտ մի կանչեք, թող դո՛ւրս էլնի,
Թե մահ չունի՝ մա՛հ եմ բերե.
Թե գրող չունի՝ գրող եմ դառե.
Էնոր ջո՛ջ քուն կը քնացնեմ:
Էլան՝ շամփուր կարմրցուցին,
Դրին Մելքի ոտների տակ:
Ասաց.— Օ՛ֆ, աղջիկներ,
Ինչի՞ իմ տեղ լավ չեք շինե.
Լո՛ւ կա իմ տեղ, ինձ կը խածե:
Ասաց, էլի մնաց քնուկ:
Բերին՝ գութնի խո՛փ մի կարմրցուցին,
Դրին էնոր ոտների տակ:
Ասաց.— Օ՛ֆ, մեջ իմ տեղաց ինչքա՞ն լու կա:
Ինձ կը խածե՛ն, չեն թողնի՝ ես քնեմ:
Դավիթ էդտեղ չը համբերեց, քաշեց նիկակ,
Զարկավ, Մելքի կրունկ ծակեց:
Ասաց.— Մե՛լիք, դե վե՛ր էլի, բա՛վ է քնես:
Մըսրա Մե՛լիքն ասաց.— Օ՛ֆ-օ՛ֆ,
Ձե՛ք թողնի դինջանամ:
Էլավ, նստեց.
Մեկ ձեռ դրեց էսա՛ աչքի վերա,
Մեկ ձեռ դրեց մեկէ՛լ աչքի վերա,
Աչքեր սրբեց, էսպես իրիշկեց դուրս,
Տեսավ Դավիթ իր ձին հեծե՝
Մեջ արնին շաղախվե,
Վրանի դուռ կանգնե:
Մելիք որ ճանաչեց կԴավիթ,
Փչեց, որ թռցնի տեղեն:
Տեսավ՝ Դավիթ իրար չ'էկավ:
Մելքի մոտեն քառսուն գոմշի ուժ պակասեց:
Դավիթ ասաց.— Էկել եմ, որ կռվենք:
Մելիք խնդացավ, ասաց.
— Ձա՛ր սատանեն կքեվ տանի, Թլո՛ր Դավիթ,
Էդ ե՞րբ էղար դու ձիավոր՝
Էկար, կանգնիր իմ չադրի դուռ:
Դավիթ, ձիուց իջի,
Արի էստեղ, խոսենք, հանգստանանք:

Նորեն էլնենք, կռիվ անենք:
Դավիթ ասաց.— Չէ՛, չեմ իջնի:
Էսա խեղճ ու կրակ մարդեր
Ինչի՞ ես դու բերե կռիվ.
Մենք էլ նստինք հանգստանա՞նք:
Դուրս արի, դուրս, կարկե՛նք իրար:
Մելիքի մեր, Իսմիլ խաթուն առաջ էկավ,
Ասաց.— Դավիթ, ճամփա էկե՝ նեղացեր ես.
Ձիուց իջի, հանգստանաս,
Նորեն կ՝էլնե՛ք, կռիվ կ՝անեք:
Շա՛տ որ խնդրեց՝ Դավիթ ուզեց ձիուց իջնի:
Ձին փախ տվավ, չ՝ուզեց Դավիթ իջնի:
Մըսրա Մելիք քառսուն գավ հոր փորե մեջ վրանին,
Էրկաթե թոռ գցե բերնին,
Ու խալիներ փռե վերան,
Կ՝ուզեր Դավիթ գար՝ նստեր,
Ընկներ մեջ էն հորուն:

Խաբեցին Դավթին՝ ձիուց բերին տակ:
Ձին ըռըկավ, փախա՛վ, գընա՛ց,
Գընաց՝ էլավ սարի գլուխ:
Տարան Դավթին, նստեցուցին վե՛ր էն հորին:
Դրրը՛մբ... ընկավ հոր վե՛, գընաց:
Մեջ էդ հորուն էրկաթե թոռ, օղե՛ր կալին:
Դավիթ ընկավ օղերու մեջ,
Ձըկարցա՛վ դուրս էլներ.
Էրկաթե թոռ էկավ իրուր:
Մելիք բերեց ջաղցի քարեր,
Քաշեց հորի բերնի վերան, թողեց, ասաց.
— Է՞ն էր, որ հետ ինձի կռիվ տ՝աներ,
Հայ-հո՛յ... Դավիթ Սասնու էկեր է՝
Հետ Մելքին կռի՛վ կ՝անի.
Թլո՛ր Դավիթ Սասնու էկեր է՝
Կուզի հետ Մըսրա Մելիքին կռի՛վ անի... հայ-հա՛յ...
Դե թող կենա էնտեղ, չուր օսկորներ փտեն...

Իրիկուն էղավ: Մելիք ընկավ քնավ.
Դավիթ մնաց էն հոր:
Դավիթ թող մնա էն հոր.
Մենք դառնանք վի՞րմեն խաբար տանք:
Խաբար տանք Ձենով Հովանեն:

Զենով Հովան գիշերն էրապ տեսավ.
Մըսրա աստըղ շողի՛ն կը տար,
Սասնա աստըղ կը խավարեր:
Հովան քնուց էլավ, ասաց.— Կընիկ, վե՛ր էլի, վե՛ր,
Տեսա՝ Մըսրա աստըղ շողի՛ն կըտար,
Սասնա աստըղ կը խավարեր —
Դավիթ մեր ձեռքեն գնաց:
Սառյեն ասաց.— Աստված քո տուն ավրի.
Դու քուն քեզ համար կը քնես,
Էրապ խալխի՞ն կը տեսնես:
Զենով Հովան էլի՛ քնավ:
Մեկ է՛լ էրապ տեսավ.
Մըսրա աստըղ շա՛տ էր պայծառ.
Սասնա աստըղ խավարե՛ր էր, հա՛, կը հանգչեր:
Հովան քնից էլավ, ասաց.— Կընի՛կ, վե՛ր էլի, վե՛ր:
Ես տեսա՝ Մըսրա աստըղ շա՛տ էր պայծառ,
Սասնա աստըղ հա՛ կը հանգչեր:
Սառյեն ասաց.— Քո տո՛ւն ավրի,
Դու ինչի՞ չես քնի, ա՛յ մարդ.
Ձը թողի՛ր, որ էսօր քնեմ:
Զենով Հովան մե՛կ էլ քնավ:
Քնավ, մեկ է՛լ էրապ տեսավ.
Տեսավ՝ Մըսրա աստըղ էկավ,
Ու Սասնա աստըղ կուլ էտու:
Ասաց.— Կընի՛կ, վե՛ր էլի, Դավիթ ըսպանեցին:
Սառյեն ասաց.— Ինչի՞ չես քնի դու, ա՛յ մարդ,
Ով գիտի՝ ո՞ր կընկա ծոց է պառկե Դավիթ.
Ով գիտի ո՞ր տեղ քեֆ կ՝անի:
Զենով Հովան ըռկավ,
Քացի մ՚ էկա՛ր կընկան:
Կնիկն էլավ ճրագ վառեց:
Զենով Հովան ասաց.— Իմ կրահներ բե՛ր:
Կընիկ բերեց: Զենով Հովան էլավ,
Ցոթ գոմշի կաշի փաթեց իրեն վերա,
Ցոթ գոմշի շղթա փաթեց իրեն վերա.
Որ բոռալեն չը պատռվի:
Հագավ իր վենք-կրահ,
Գնաց, գոմի դռներ էբաց:

Իր ձեռ տվեց վեր Սիպտակ ձիու մեջքին.—
Սիպտակ ձին փոր էտու գետին:
Հովան ասաց.— Սիպտակ ձի,
Ե՞րբ տի տանես ինձ, հասցնես Դավթի կռվին:
Ձին ասաց.— Չուր կեսորին:
Զենով Հովան ասաց.
— Հարա՛մ ըլնի էնա իմ կեր, որ տվի քեզ:
Չուր կեսոր Դավթի նաշի՞ն հասնեմ, թե լաշին:
Գնաց Հովան ու ձեռ էտու Կարմիր ձիու մեջքին,—
Կարմի՛ր ձին էլ իր փոր էտու գետին:
Հովան ասաց.— Ա՛յ Կարմիր ձի,
Ե՞րբ տի տանես ինձ հասցնես Դավթի կռվին:
Ասաց.— Չուր արևն առնելուն:
Զենով Հովան ասաց.
— Հարա՛մ ըլնի իմ պահել, որ պահեցի՛ կքեզ:
Դավթի ինչի՞ն հասնեմ արևն առնելուն:
Հետո գնաց ու ձեռ էտու Սևո՛ւկ ձիու մեջքին.
Էս Սև ձին փոր չ՚էտո՛ւ գետին:
Զենով Հովան պագեց Սևուկ ձիու գլուխ,
Ասաց.— Սև՛ ձի,
Ե՞րբ տի տանես ինձ—հասցնես Դավթի կռվին:
Սև ձին ասաց.
— Որ դու կարնաս քեզ վե՛ր իմ քամակին բռնես՝
Մեկ ոտ թալես կանգուն,
Չուր մեկէլ ոտ շուռ տաս մեկէլ կանգուն,
Կը հասցնեմ Դավթի կռվին:
Էլավ, հեծնի Հովան Սև ձին,
Մի ոտ էդիր կանգուն,
Չուր մեկէլ ոտ շուռ էտու մեկէլ կանգուն,—
Սև ձին հրեղեն էր —
Լեռա սարի գլուխ կայնավ:
Քուռկիկ Ջալալին կՁենով Հովան տեսավ,
Խրխնջալեն էկավ մոտիկ:
Զենով Հովան վախցավ, ասաց.
— Դավիթ սպանված է, ձին փախե, էկե էստեղ:
Կանգնեց Զենով Հովան, կանչեց.
Զեն ընկավ սար ու ձոր.
Ասաց.— Դավի՞թ, ո՞ւր ես,
Հիշա՛, Մարութա բարձր Աստվածածին,
Հիշա՛ կԽաչ Պատերազմին,

Ինչ վեր քո աջ թևին,
Ու թա՛փ տուր քեզ...

Կանչեց...
Հովանի ձեն հասավ, ընկավ Դավթի ականջ.
Դավիթ ասաց.— Հայ-հա՛յ,
Հրողբե՛րս է էկե էստեղ.
Ի՛նձ կը կանչի.
Յա, Մարութա բարձրիկ Աստվածածին,
Խա՛չ Պատերազմին, վեր իմ աջ թևին:
Ասաց, վինք թափ էտու:
Էրկաթե օղ ու շղթաներ թռան էրկինք,
Ջաղցի քարեր բլան, թռան,
Էնոնց ամեն կտոր քառսուն մարդ ըսպանեց:
Դավիթ թռավ, կանգնավ հորի բերան, ասաց.
— Մըսրա Մելիք, էլ դու բեբախտություն չ'անե՛ս:
Լուսուն տղամարդո՛ւ նըման կռվենք:
Մըսրա Մելիք էլ չը գիտցավ մոտենալ:
Դավիթ էլավ՝ իր ձին փնտռի.
Ձենով Հովան կանչեց.— Դավի՛թ, արի՛:
Դավիթ էնոր կանչով գնաց մոտ հրողբեր:
Ամա ձին ըռկեր էր՝ չէ՛ր իգա ձեռ:
Դավիթ գնաց, գուրգուրելով էբեր.
Ձին էկավ ձեռ, Դավիթ էլավ, հեծավ, ասաց.
— Հրողբեր, դու գնա քաղաք, ես տ'էրթամ կռիվ:

16

Գնաց, հասավ Մըսրա Մելքին, ասաց.
— Մըսրա՛ Մելիք, էն դիր ինձ խաբեցիր,
Մըկա էլ ի՛նչ տ'անես:
Մելիք տեսավ՝
Դավիթ դրեր էր ձեռ գուրպին:
Ահից դողաց, ասաց.
— Դավի՛թ ջան, դե արի՛, նստի՛:
Ասաց.— Ես չե՛մ նստի. կռի՛վ անենք:
Մըսրա Մելիք հրաման տվեց.—
Քյահլան ձին դուրս բերին:
Հագավ շորեր, կապեց վենքեր,
Նստեց իր ձին, գնաց մեյդան:

Ըսկսեցին մեջ մեյդանին էրթալ ու գալ։
Մըսրա Մելիք ասաց.
— Դավի՛թ, կըռիվ կոռովե՞ն անենք թե հերթով։
Դավիթ ասաց.— Ինչպես քո ջան կուզի։
Մըսրա Մելիք ասաց.
— Կուզեմ հերթո՛վ անենք.
Իրեք դարբ մեկ կարկի,
Իրեք դարբ մեկէլ կարկի։
Առաջ ո՞վ տի կարկի։
Դավիթ ասաց.— Առաջ դո՛ւ կարկ,
Տարիքով մեծ դո՛ւն ես։
Դավիթ ձիուց էկավ տակ.
Գնաց, կանգնեց մեջ դաշտին։
Ասաց.— Մրսրա Մելիք, քո դարբեր կարկ։
Մըսրա Մելիք իր գուրկ առավ։
Քըշեց, գնաց մինչև Ֆարկին.
Իրեք ավուր ճամփա՛ անցավ,
Քըշեց, էկավ, հասավ Դավթին,
Գո՛ւրկ մի կարկեց Դավթին։
Ինչպես շո՛ւն մի օռնա՝ գետին պոռթեց.
Ինչպես քառսուն ջուխտ գոմեշնե՛ր լծես,
Գութան վարես՝ գետին պոռթա,
Թոկ ու դուման էրկիր-էրկինք բռնեց,
Օր ու գիշեր էդ թոկ չիջավ գետին։
Մելիք ասաց.— Է՛, Դավիթ, հո՛ղ էիր,
Հող դարձուցի։
Դավիթն ասաց.— Մելիք, դեռ ես կենդանի՛ եմ։
Էդ մեկ, մե՛կ էլ կարկի։
Մելիքն ասաց.— Հա՛, տնավեր,
Էս մեկ անգամ ճամփաս մո՛տ էր.
Թափ չը մնա՛ց մեջ իմ գուրկին։
Ասաց, դարձավ, մեկ է՛լ քըշեց։

Գընաց, հասավ չուր Դիարբեքիր
Ու էնտեղից քըշեց, էկավ Դավթի վերա։
Էկավ՝ իր գուրկ թալեց Դավթին։
Ինչպես առյո՛ւծ օռնա՝ գետին պոռթեց,
Ինչպես հեղեղ ավերի, գետին պոռթեց։
Թոկ ու դուման էրկիր-էրկինք բռնեց,
Արեգական էրեսն առավ։

Էրկու գիշեր ու էրկու օր էդ թոկ կանգնեց Դավթի վերա:
Մելիք ասաց.— Դավի՛թ, հալա կենդանի՞ ես:
Հող էիր, ՝քեզ հող դարձուցի:
Դավիթ ասաց.— Մելիք, կենդանի՛ եմ.
Էսիկ էրկու, մեկ էլ կարկի:
— Հայ-հա՛յ,— ասաց Մելիք,—
Իմ ձիու մանգկիլ քի՛չ էր.
Թափ չը մնա՛ց մեջ իմ գուրկին:

Նորեն Մելիք դարձավ, գընաց,
Քըշեց, հասավ Մըսըր քաղաք:
Ու Մըսըրից քըշեց, էկավ Դավթի վերա:
Էկավ, գուրկ մ էլ կարկեց:
Ինչպես գարնան ամպ գոռգոռա՝ էրկիր պոռթեց,
Ինչպես էրկրաշա՛րժ մի կարկի՝ էրկիր պոռթեց:
Թոկ ու դուման էրկիր-էրկինք բռնեց,
Արեգական էրեսն առավ.
Իրեք ցերեկ, իրեք գիշեր
Էդ թոկ կանգնեց Դավթի վերան:
Մելիք ասաց.— Մեռա՛վ Դավիթ.
Հող էր Դավիթ, հող դարձուցի:
Ինչ թոկ-դուման գետնեն էլավ,
Դավիթ, իր ձին, էլան, իրենց տեղ կանգնեցին:

Դավիթ ասաց.— Մելիք, դու քո դարբեր պրծար,
Հերթ ի՛նձ հասավ:
— Է՛յ,— ասաց.— տնավե՛ր, մեկ է՛լ էրթամ:
— Չէ, չէ՛,— ասաց,— դու ո՞ւր տ'էրթաս:
Հերթ ի՛մըն է. աշխարհ հերթո՛վ է, թե կոռով:
Մելիքի մեր էկավ, ասաց.
— Դավի՛թ. Մելիք քո աղբե՛րն է.
Բեբախտություն չ'անես:
— Հա՛, մարե՛, չե՛մ անի բեբախտություն.
Իրեք դարբ տի կարկեմ Մելքին:
Մելիք ասաց.— Դավիթ, քեզնե կը խնդրվեմ.
Յոթ սհաթ ժամանա՛կ տաս ինձ:
Թող ես էրթամ, վրանի տակ պառկեմ,
Դու գաս ու ինձ կարկես:
Ասաց.— Գընա, պառկի,
Մենակ թե ինձ ասա, Մելիք,

Ինչո՞վ կարկեմ, թրո՞վ կարկեմ, թե՞ իմ գուրկով.
Մելիք իր մտքի մեջ ասաց.
«Ջա՛նըմ, էդ գուրկ որ ինձ կարկի՝
Էդ գուրկին դիմանա՛լ կ՚ըլնի»:
Ասաց.— Դավի՛թ, թրո՛վ կարկի:

17

Գընաց Մելիք վրանի տակ, ասաց.
— Ես իրեք դարբ Դավթին կարկի,
Դավթին ըսկի բա՛ն մի չ՚էղավ.
Հիմի Դավիթ կը գա, էստեղ ինձ կը կարկի:
Մելիքի մեր ասաց.
— Մե՛լիք, արի մտի մեջ էդ հորին:
Մելիք մտավ մեջ հորին:
Ջառսուն գոմշու կաշի բերին քաշին վերան,
Ջառսուն ջաղացի քար դրին վերան,
Վերմակ քաշին քարի վերան:
Մելիք մեջ էն հորին հանգիստ նստեց, ասաց.
— Հիմի հերթ Դավթի՛նն է:
Դավիթ գիտի՛, թե էն ինչ արեր է.
Կը գա, կը տեսնա ջաղացի քար,—
Չէ՞ որ հորու բերնին դրած էսպես բարձրացեր է —
Վերմակ քաշած քարի վերա:
Գիտի, որ էնքան Մելիքի ջանդաք չի՛:
Ապա Մելիքի մեր էնտեղ կայնուկ է:
Դավիթ չ՚ասաց՝ կՄելիք հանեք դուրս, տեսնեմ:

Հեծավ Դավիթ Քուռկիկ Ջալալին,
Գնաց հասավ չուր Ծովասար.
Քաշեց իր Թուր Կեծակին,
Քըշեց իր Քուռկիկ Ջալալին,
Էկավ, որ տի կարկեր՝
Իսմիլ խաթուն իրեն ծծեր հանեց,
Դավթի առաջ վաղեց, ասաց.
— Դավիթ, քաղցր ծիծ եմ տվե քեզի,
Դու իմ կաթի խաթեր էդ կարկ ինձի բախշի:
Դավիթ ասաց.— Մարե, ինչի՞ դուն չուր հիմիկ,
Մելիքի կարկ կը գար մեջ իմ գլխուն,
Մեկ մ՚ել չ՚ասիր՝ Մելի՛ք, կարկ մի ինձի՛ բախշի:

Դավիթ իր թուր իջեցուց, տարավ, բերեց,
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,
Դրեց ճակատին, ասաց.— Մարե՛,
— Էս մեկ կարկ քո՛ խաթեր:

Մեկ էլ դարձավ, գնաց Դավիթ,
Իր ձին քըշեց էկավ. էկավ, որ տի կարկեր՞
Մելիքի քուր վակեց էնոր առաջ, ասաց.
— Դավիթ, դու որ պստիկ էիր՝
Ես քեզ շա՛տ եմ գրկեր, պահեր, խաղցուցեր եմ.
Էդա մեկ թուրն էլ ինձ բախշի:
Դավիթ էդ թուր իջեցուց, տարավ, բերեց,
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,
Դրեց իր ճակտին, ասաց.
— Էս մեկ կարկ էլ քո՛ խաթեր:
Մընաց մե՛կ կարկ, մեկ աստված, մեկ ես —
Ցա կը սպանեմ, յա կը թողում:

Դավիթ դարձավ,
Գընաց, հասավ Սասնա սարեր,
Քըշեց, էկավ Մելքի վերա:
Որ տի հասներ հորի բերան՝
Իսմիլ խաթուն իր հետ բերած կնիկներուն.
Էդա ապապ աղջիկներուն,
Էդա շավար քաշողներուն ասաց.
— Շո՛ւտ, շա՛վար քաշեք,
— Շո՛ւտ, փողե՛ր փչեք,
— Շո՛ւտ, թմբո՛ւկ կարկեք,
— Շո՛ւտ, ձեր քաֆկիրնե՛ր բռնեցեք ձեր ձեռ.
— Խաղացե՛ք, խորո՛ւտ խաղացեք,
— Դավիթ որ գա՝ ապապ տըղա է,
Կ' իրիշկի ձեկի, կարկ թո՛ւլ կը կարկի.
Մելիք չի՛ սպանի:

Աղջիկներ էլան,
Շավա՛ր քաշեցին,
Փողե՛ր փչեցին,
Թմբուկնե՛ր կարկին,
Էլան, խա՛ղ կ'անեն:
Ապա Դավիթ գիտի՛.
— Էդա ինձի՛ համար կ'անեն,— ասաց,—

Կ՚ ուկեն ինձի շըշկղռացնեն:
Կանչեց, ասաց.
— Ցա՛ Մարութս բարձրիկ Աստվածածին,
Ցա Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աչ թևին:
Կանչեց, վարկեց Թուր Կեծակին:

Կըտրեց քառսուն ջաղացի քար,
Կըտրեց քառսուն գոմշու կաշին,
Կըտրեց հըրեշ Մըսրա Մելքին,
Կըտրեց ճակտից, ոտքերուց դուրս էլավ
Ու յոթ գավ էլ մտավ գետին,
Գնաց հասավ սև ջուր:
Թե հրեշտակ իր թև չ՚առներ առջև,
Սև ջուր տ՚էլներ, աշխարք առներ:
Մըսրա Մելիք կանչեց, ասաց.
— Դավիթ, ես էստե՛ղ եմ,
Մեկ է՛լ կարկի:
Դավիթ ասաց.— Մըսրա Մելիք, քեզի թա՛փ տուր:
Մըսրա Մելիք, գինք թափ էտուր,
Մեկ կտոր ընկավ էստեղ, մեկէլ՝ էնտեղ:
Մըսրա Մելիք խատա՛վ:

18

Դավիթ ասաց.— Մարե՛,
Վերմակ բացե՛ք, տեսնեմ Մելիք:
Ասին.— Գնա, մենք կը բանանք:
Դավիթ գնին քըշեց, էկավ կանգնեց,
Ձեռ էթալ, վերմակ բացեց,
Տեսավ քառսուն ջաղցի քարեր,
Ամենն էլ թրի առջև կտրտված.
Իր ձեռ էթալ, քարեր վերուց. գցեց,
Տեսավ քառսուն գոմշու կաշիք՝
Ամեն կտոր-կտոր արած:
Մելիքի մեր կռացավ էդ հորի վերան,
Կանչեց.— Մե՛լիք, Մե՛լիք, Մե՛լիք:
Մելիք ձեն չ՚էտու:
Մելիքի մեր ու քիր նստան էնտեղ, վերան լացին:
Ապա մեր դարձավ Դավթին, ասաց.
— Դավի՛թ, սպանեցիր Մըսրա Մելքին,
Վնա՛ս չը կա, դու է՛լ իմ տղան ես:

Արի, էնոր կնիկ դու ա՛ռ,
Մըսրա թագավորություն մնա՛ քեզի,
Սասուն կաթի քո՛նն է:
Դավիթ ասաց.
— Ես մորե որ ծնվեր եմ՝ անարա՛տ եմ,
Ես իմ հալալ լեշ հարամ լեշերու չե՛մ խառնի:
Կուկես արի, քե կը տանեմ մոտ ինձ, Սասուն:
Ասաց.— Չէ՛, Դավիթ, չեմ գա Սասնա էրկիր:
Ասաց.— Որ չես գա մեր Սասնա էրկիր,
Գընա, Մըսըր տվեր եմ քե, ապրի:

Դավիթ ձիու գլուխ շրջեց,
Էլավ, գընաց մեջ կորքերին.
Ինչ կորք կորական մնացե՝
Կանչեց, հրամայեց, ասաց.
— Ամենիդ իրավունք կը տամ.
Ուր տեղեն էկեր եք՝ էլեք, գնացեք ձեր տեղ:
Էլեք, գնացեք ու ձեր տներ նստեք,
Դուք ինձ համար աղո՛թք արեք,
Իմ հորն ու մորն էլ օղորմի՛ տվեք.
Հանդա՛ռտ կացեք,
Մեկ էլ չ՚էլնեք ու գաք վեր Սասնա:
Մեկ էլ որ կենք առսեք մեր դեմ,
Թե որ դուք կռվի գաք վեր մեկ՝
Քառսուն գալ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ՚էլնի ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ՚էլնի ձեր դեմ Թուր Կեծակին:

Էդա կորք Դավթին օրհնեց,
Համա դժար կը հավատար, թե Մելիք սպանուկ է:
— Հա՛, Դավիթ,— կ՚ասեն,—
Մեռնե՛նք մենք քո գլխուն,
Ո՛ւր էլ գնաս՝ աստված հետ քեզ,
Աստված քո բան միշտ աջողի,
Աստված քեզ ջանսաղությո՛ւն տա,
Աստված քո հոր ու մոր արքայություն տա:
Իսմիլ խաթուն առավ իր կորք, գընաց Մըսըր.
Էն եկած թագավորներ, փաշեք ու կորքեր
Էլան, ցրվեցան չորս կողմն աշխարհին,

Դավթի արած կտրճություն ամեն տեղ պատմեցին,
Ասին.— Դավիթ իր հոր ուխտ արավ՝
Մըսրա Մելիք սպանեց,
Սասուն ապատեց:

19

Իր կռվի տեղեն իմացավ Թորոս,
Որ Դավիթ Մըսրա Մելքին սպաներ է:
Դադարեցուց իր կռիվ,
Էկավ, հասավ Դավթին:
Դարձուց Դավիթ իր Քուռկիկ Ջալալին,
Դարձուցին իրենց ձիեր Քեռի Թորոս
Ու էրեսունութ կտրիճներ—էկան Սասուն:
Ի՞նչ կ'բերեն հետներ էն կռվից.
Իսկի բան չեն բերի:
Էնոնց բերած էղավ ջուխտ մի եվ,
Լծեցին սել, քցեցին հետևներ,
Մըսրա Մելիքի ականջ Դավիթ կարկեց նիկակի ծեր,
Դրավ վեր սելին, քաշեցին, բերին,
Քաշեցին բերին՝ Սասնա քաղաք հասցնեն,
Վերգոյին նվեր:

Էդ ժամանակ ի՞նչ կ'անցներ կը դառնար Սասուն:
Հովան որ հասավ Սասուն,—
Չէ՞ որ Հովան էն կորք ամեն տեսեր էր,
Ամեն վրաններ տեսեր էղ,
Գընացեր Սասնա քաղաք, ժողովրդին ասեր էր —
Էսքան չա՛դր կա, էսքան կո՛րք կա.
Ժողովուրդ ասեր էր.— Ախ-վա՛խ, ախ-վա՛խ,
Ախ-վա՛խ, տի սպանե՛ն կ'Դավիթ.
Տի գան կընիկ, աղջիկ, ճժեր տանեն գերի:
Ախ-վա՛խ, տեր աստված,
Ախ-վա՛խ, դո՛ւ ճար արա...
Էդա քաղքի մարդեր
Էն սարի գլուխ պահապան են դրե՝ ի՞նչ ապով.
Որ իրիշկեն ճամփան,
Դավի՞թ կը գա, թե կո՞րք կը գա:
Որ շատ մարդ գա՝
Քաղքի մարդերուն խաբար տան,
Իրենց պատրաստություն տեսնեն:

Կանչեց զարկեց բուր կեծակին

Էդ պահապաններ մեկ էլ տեսան՝
Մեկ ձիավոր կը գա առաջից,
Էրեսունինը ձիավոր հետևից:
Պահապաններ վազեցին քաղաք, ասին.
— Ձիավորնե՛ր կըգան, մեկն էլ առջևեն.
Հավատաս, Դավի՛թն ըլնի:
Հովանին ասին.— Դավիթն էկավ:
Հովան էլավ՝ էրթա Դավթի առաջ: Էն քաղքցիք,—
Մարդ, կընիկ, ալևոր, պառավ, ճիժ-բիժ —
Ամե՛ն գնացին Դավթի առաջ:

Դավիթ նայեց, տեսավ, ջոջ վորք կը գա:
«Ջա՛նըմ,— միտ վե ասաց,— էդա վորք ի՞նչ է.
Ինձի քանի՞ դուշման կա՝ կը գան վեր ինձի»:
Դավիթ իր ձին քըշեց, ասաց.
— Ձի՛, գընա՛, աստված ինչ արե՛ր է, արե՛ր է...
Ձին քըշեց, մոտեցավ, տեսավ՝
Հովան ամենու առջևն է.
Իրիշկեց՝ տըղա, աղջիկ, գեղական ամեն էկած են.
Բոռաց.— Հրողբեր, դու է՞լ էկեր ես հետ ինձ կռիվ:
Հրողբեր ասաց.— Դավի՛թ,
Մենք էկել ենք քո վերա կը խնդանանք.
Մենք փառք կը տանք աստծուն,
Որ սալամաթ էկար:
Դավիթ հարցուց.— Էդ կնիկնե՛ր ինչի էկած են:
— Դավի՛թ,— ասաց,— ինչ դու գնացիր՝
Ձուր հիմիկ էդա շիվարներ կը լան,
Աստված կը կանչեն, կը վախենան,
Թե Մըսրա Մելիք քեկի կը սպանի,
Արաբներ կը գան, քաղքի մարդեր ամեն կը սպանեն,
Կընկտեր կը տանեն:
Քո գալ լսան, ամեն խնդացան, ուրախացան:
Մեծ ու պստիկ քո ապո՛վ էկան:
— Դե դարձե՛ք, գնացե՛ք,— ասաց,—
Մելիք սպանե՛ր եմ. դե դարձե՛ք, դարձե՛ք:
Դավթի հրողբեր էլավ,
Դավթի գլուխ պագեց, քրտինք սրբեց, ասաց.
— Էլ իսկի չե՛նք վախենա:
Սասունցիք գնացին արխային տներ նստան:

Տուն որ էկան, հրողբեր Դավթի արնոտ շորեր փոխեց.
Առոք-փառոք նստեցուց,
Քուռկիկ Ջալալին էլ մաքուր լվացին,
Տարան, կապեցին իր տեղ:

Ինչ Դավիթ՝ գնաց նստեց իր տեղ,
Ասաց.— Դե մեկ կթխա գինի՛ տվեք ինձ:
Գինին խմեց ու պառկավ, քնավ իրեք օր:
Ինչ իրեք օր անցավ,
Արտատեր Պառավ էլավ էկավ Դավթի մոտ,
Ասաց.— Դավի՛թ, բարո՛վ էկար,
Դա՛վիթ, բարո՛վ էկար:
— Աստծու բարի՛ն քե, Պառավ:
— Տեսա՞ր,— ասաց Պառավ,—
Ժանգոտ թրով, քոսոտ ձիով ինչպե՞ս կ'էրթալիր.
Տեսա՞ր Մելիքի դեմ կռիվ քանի մի կո՛ռ է:
— Պառավ,— ասաց,— շնորհակալ եմ քեկնե.
Կը գա՞ս դու ինձի մե՛ր ըլնես. ես մեր չ'ունեմ:
— Դավիթ, ես էլի՛ քեկ մեր եմ,— ասաց,—
Կ'էրթամ իմ տուն.
Ինչ բան քեկ պետք կ'ըլնի՝ կը գամ, կ'ասեմ:
Ըսկի՛ մի վախենա, Դավիթ, ծլի՛ս, ծաղկիս:
Չուր հիմիկ պըստիկ էիր՝ ջոջացար,
Էլ էստեղ մի՛ նըստի.
Դու գընա, Հովանին ասա.
«Իմ հոր սենեկ պատրաստի,
Ես էրթամ, իմ հոր սենեկ նստեմ»:
Դավիթ, դե մնա՞ս բարով:

Դավիթ գնաց, Հովանին ասաց.
— Հրողբեր, իմ հոր սենեկ բաց:
Տ'էրթամ, իմ հոր սենեկ նստեմ:
— Հա՛,— կ'ասի Հովան,— հիմիկ կը բանամ:
Էդա Սասնա ճրագ չուր հիմիկ հանգա՛ծ էր,
Հիմիկ Սասնա ճրագ վառվավ.
Ապա չը բանա՞մ:
Քո արածն, որ դո՛ւ արիր, ես շա՛տ կը խնդանամ.
Որ դու էսպես կտրիճ ես —
Ես գիտեմ, թե աշխարհ ամեն իմն է.
Ես կը խնդանամ, որ դու ասես, մենք ծիծաղանք:

ՄԱՍՆ Բ

ԴԱՎԻԹ ԵՎ ԽԱՆԴՈՒԹ

ԴԱՎԹԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆԸ

1

Քանի Դավիթ չէր գնացե կռիվ,
Որբ տղա էր, պահող, ականջ արող չկար.
Որ գնաց կռիվ, էկավ, փոխվավ, լցվավ.
Ով կը տեսներ էնոր խորոտ աչքեր,
Կարմիր էրեսներ, խորոտ քի՛թ-բերան,
Էնոր գլխեն իր խելք կ՚էրթար:

Մեկ օր, Զենով Հովան քնած էր,—
Էնոր կնիկ էլավ,
Շաքարհաց թխեց գողտուկ,
Հավ մորթեց, տապակեց,
Մեղր, կարագ, յոթ տարվա գինին առավ,
Էլավ իր խորոտ-խորոտ շորեր հագավ,
Աչքեր դեղեց, բսկեր էհան,
Խորոտ-խորոտ կոնդուրեք հագավ,
Առավ էդ բաներ, մոմ վառեց,
Էկավ Դավթի սենեկ:
Դավիթն էլ դուռ շինե, քներ է:
Ասաց.— Դա՛վիթ, էլի՛, դուռ բա՛ց:
Դավիթն էլ հարցմունք արավ էնոր մոտեն,
Ասաց.— Դու ո՞վ ես՝ ես դուռ բանամ:
Ասաց.— Ռու հրողբոր, Հովանի կնիկն եմ:
Դավիթն էլ էլավ, դուռ էբաց.
Հովանի կնիկ էկավ սենեկ, նստավ:

— Դավիթ,— ասաց,— ես շուտուց քո կարոտով էի,
Չեմ կարցեր անուշ-անուշ բան շինե,
Պատրաստ էդ էր, քեզ համար բերի:
Բացեց իր բերած, էդիր առջև,
Կուժ մի գինի, մեկ կըթխա,
Էն էլ էդիր առջև Դավթին:
Դավիթ միտք արավ, թե.
«Ինձի մեր չկա, էս իմ մոր տեղն է»:
Շատ շնորհակալ էղավ, ասաց.
— Դու իմ մոր տեղն էիր,
Էսօր ինձի ճանչեցար, էկար իմ մոտ:
Հովանի կնիկ ասաց.
— Դավի՛թ, մատաղ եմ քե,
Սասնա մեջ քո պես կտրիճ՝
Ոչ էղեր է, ոչ կ՚ըլնի:—
Դավիթ հաց կերավ, նռան գինին խմեց:—
Է՛, յոթ տարվան գինին,
Դավիթն էլ շա՛տ խմեց:
Խնդացավ, ասաց.— Խմե՛մ,
Էսօր իմ հրողբոր կնիկ պատիվ կանի:
Աղե՛կ մի խմեց, հարբավ,
Գլուխ էդիր վեր բարձին, քնավ.
Էլ չը կարցավ, որ վրուցի:

Հովանի կնիկ Դավթի էրեսներ պագեց,
Ճակատ պագեց, իրիշկեց՝
Դավիթ քներ է, իսկի՛ խաբար չի իր մոտեն:
Էլավ, գնաց տուն, դեռ Հովան քնած:

Մեկ շաբաթ էդպես գնաց, էկավ:
Էն մեկ օր միտք արեց, ասաց.
— Ես էդ յոթ տարվան գինին ինչի՞ կը տանեմ.
Դավիթ կը խմի, պառկի, քնի՛.
Ես էնոր մոտեն ի՞նչ կը հասկանամ:
Էն մեկ օր էլավ մե՛կ տարվան տարավ,
Գինին էլ քիչ տարավ:
Գնաց սենեկ, նստավ:
Էդիր առջև Դավթին:
Դավիթ հաց կերավ, գինին խմեց.
Էլ գինին էնոր գլուխ չը բռնեց, չը քնավ:

Հովանի կնիկ նստավ Դավթի գոգ,
Ձեռ քցեց, էնոր վիպ բերի, գրկի.
Արեց, որ Դավթի էրես բերի, պագի,
Դավիթ էնտեղ ըռըկավ, չ'էթող, որ պագի:
Ասաց.— Դու իմ մոր տե՛ղն ես.
Էլի՛, նստի՛ էնտեղ, ես դու վրուցենք:
Ասաց.— Դավի թ, ինչի՞,
Ես քո մոր տե՞ղն եմ.
Ես օտար աղջիկ եմ,
Էկեր եմ քո հրողբորն առեր:
Դավիթ ասաց.— Իմ մեր, հրողբոր կնիկ մեկ է.
Էն էլ իմ մոր տեղն է...
Էն ինձի համար քանց լուսն-արեգակն է:
Հովանի կնիկ ասաց.
— Դավի՛թ, դու չես գիտի ես օտար աղջիկ եմ,
Էսքան ժամանակ քո հրողբոր ձեռքին էի,
Հիմի էնոր չեմ ուզի, ըզքե կ'ուզեմ:
Դավիթ մնաց մտածելով.
«Ես հիմի էլնեմ կարնեմ, սպանե՞մ,
Իմ հրողբեր գանգատ տ'անի,
Թե՝ իմ կնիկ սպանեց Դավիթ.
Թե չը սպանե՞մ, էդ կնիկ ինձնե չը դա՞դարի»:
— Հրողբո՛ր կնիկ,— ասաց Դավիթ,
Էլի՛ գնա՛, ես քնեմ.
Զուր վաղ, վաղ քե բան կ'ասեմ:
Խաբեց, էդիր ճամփու:

Առավոտուն շուտ Դավիթ էլավ,
Գնաց վեր աղբրին, լվացվեց,
Նստավ էնտեղ, մտածեց:
Տեսավ՝ Պառավ էնտեղ էրևաց:
Կանչեց.— Պառա՛վ, արի՛ էստեղ:
Ձեռով արավ, Պառավ էկավ:
Հովանի կնիկ ինչ արեր էր,
Ամեն մեկ-մեկ Պառվուն պատմեց:
Ասաց.— Պառա՛վ, իմ մոր տեղն ես, ընդուց կ'ասեմ:
Ասաց.— Դավի՛թ, ես էն կնկան մեղք չեմ դընի:
Էն ժամանակ դու պստիկ էիր,
Հիմի էղեր ես քսան տարեկան,
Դեռ ապապ մնացեր ես.

Ով կքեկ տեսնի, իր խելք կ'էրթա,
Կուկի որ գա, քո ծոց պառկի:
— Է՛, Պառավ, ապա ի՞նչ անեմ,— ասաց Դավիթ:
— Ե՛լ, քեկ համար կնիկ մի բեր,
Որ էլ կնիկ քե չը նեղի.
Ով կ'իրիշկի քո բոյ-բոսին՝
Էնոր գլխեն իր խելք կ'էրթա:

Մեկ տարի մի վերա անցավ,
Ձենով Հովան ասաց.
— Դա՛վիթ, դու կմեկ ապատիր Մելիքի ձեռեն.
Տ'էրթամ, քեկ համար կնի՛կ ուկեմ:

Գնաց Զմշկիկ Սուլթան ուկեց Դավթին:
Զմշկիկն էլ շատ խորոտ փահլևան էր,
Դեռ չէր պսակվե:

Դավիթ, Զմշկիկ Սուլթան
Մատնիքներ իրարու հետ փոխեցին:

2

Դավիթ որ Մըսրա Մելքին հաղթեց,
Ձեն ի ձեն հասավ Կապուտկող,
Կապուտկողի թագավոր Վաչոյ-Մարջոյին,
Էնոր աղջկան՝ Խանդութ խանումին:
Ինչպես որ Դավիթ՝ քաջ, խորոտ մարդ էր,
Խանդութ՝ թե՛ խորոտ էր, թե՛ քաջ էր.
Էնոր սիրունություն աշխարհ բռներ էր:
Շապուհ արքան լսեր էր էնոր ձեն՝
Մարդ ղրկեր, Խանդութին կ'ուկեր:
Ուրիշ քաջ մարդիկ քառսուն հոգով
Իրենց ուժին վստահ,
Էկած են Խանդութին ուկելու:
Էդոր սիրուն կ'ուտեն, կը խմեն,
Որ բալքի հավներ, մեկին առներ:
Համա Խանդութ՝ Դավթի ձեն լսեր էր,
Իրեն մտքի մեջ կ'ասեր՝
«Իմն որ կա՝ Դավիթն է.
Իմն որ չկա՝ Դավիթն է.
Էդոնք ի՞նչ մարդ են՝ որ ես էդոնցմե առնեմ»:

Մեկ օր Խանդութ նստած էր պատուհան,
Տեսավ իրեք գուսան կ'անցնեն փողոցով:
Կանչեց էնոնց, ասաց.
— Գո՛ւսաններ, մի էկե՛ք էստեղ:—
Հարցուց էդ գուսաններուն.
— Գուսաննե՛ր, օրական դուք ի՞նչ կ'առնեք:
Ասին.— Խա՛նում, գուսանություն է,
Մենք ի՞նչ գիտնանք, որ ասենք.
Օր կա՝ շատ կառնենք, օր կա՝ քիչ.
Օր կա՝ մեկ արծաթ, օր կա՝ էրկու:
Խանդութ ասաց.— Գո՛ւսաններ,
Դուք էկեք, գնացեք Սասուն.
Քանի օր գնացիք, էկաք,
Օրական ձեվի մեկական արծաթ փող տամ:
Գուսաններ շուտ մի էլան, դարձան,
Ուրախ-ուրախ դեմ ի Սասուն գնացին:
Խանդութ ասաց.— Գո՛ւսաններ, ո՞ւր կ'էրթաք:
Գուսաններ ասին.— Խա՛նում, դու չասի՞ր՝
Էլե՛ք, գնացեք Սասուն, էկեք:
Ասաց.— Աստված ձեր տուն քանդի,
Սասուն որ կ'էրթաք, ես բանի կը ճամփեմ,
Հո՛ դատարկ չե՛ք էրթա, գա:
— Խա՛նում,— ասին,— ի՞նչ կ'ասես:
— Գո՛ւսաններ,— ասաց,— կ'էրթաք Սասուն,
Կը հարցուք Դավթի սենեկ,
Կ'էրթաք, կը նստեք էնտեղ,
Դավթի առջև ինձի կը գովեք,
Որ էլնի, գա, ինձի առնի՞:
Թե հավնա՞վ ինձի, հավնա՞վ,
Թե չըհավնավ՝ գլուխ քար, էրես պատ,
Էն էլ ինձի պետք չի:

Գուսաններ էլան, գնացին.
Գնացին դեմ ի Սասուն:
Հասան Սասնա քաղաք:
Էդոնց տղաներ կը խաղային:
Գուսաններ տղաներուց հարցուցին,
Թե.— Դավթի սենեկ ո՞ր մեկն է:
Տղաներ մոտեցան էդոնց, ասիս.
— Արե՛ք, ձեվի տանենք Դավթի սենեկ:

Էնոնք որ մոտիկցան գուսաններուն,
Տեսան՝ մեկ-մեկ փետ կա էդոնց թև,
Էդ փետերի վերան էլ ականջ կա:
Հասան տղաներ, ձեռ քցեցին,
Էդ գուսաններու սպեր բռնեցին:
Ասին, թե.— Էդ ի՞նչ տեսակ փետ է.
Ձեռ քսվավ էն մեկ սպի թելին,
Էդ սպի միջեն ձեն էլավ:
— Վա՛յ,— ասին էդ տղաներ,
Ու թափան գուսաններու վերան,
Որ սպեր էնոնց ձեռեն առնեն:
Էնոնք մեկ-մեկի ասին.
— Տըղա՛, էդ փետի միջեն ձեն կ'էլնի,
Մի արի՛, աչկենք, տեսնենք էդ ի՞նչ է.
Քեռի Թորոս տեսավ, էկավ.
Էկավ, էդ տղաներուն բարկացավ.
— Իմկնի Սասունա ծռեր,
Էդ գուսա՛ն է, սա՛պ է.

Ձեն կ'էլնի մոտեն, անո՛ւշ-անո՛ւշ:
Դուք իսկի բան չեք տեսե,
Արե՛ք, տանեմ մեր սենեկ,
Էդոնք սպ կարկեն, խաղ ասեն,
Մենք էլ ականջ անենք...
Առա՛վ գուսաններուն, գնաց իր սենեկ:
Հաց բերել էտու, գուսաններ կերան:
— Դե՛,— ասաց,— փշուր մի մեվի դամ արեք
Մենք էլ մեր ձեռնեն գալած նվեր կը տանք,
Կ'էլնեք, կ'էրթաք ձեր տուն:
Գուսաններ ասին.— Մենք էկեր ենք,
Խանդութ խանում Դավթի համար գովենք:
Քեռի Թորոս ասաց.— Դավիթ ե՛ս եմ,
Դե՛հ, տեսնեմ՝ ինձի համար գովեցեք:
Գուսաններ հանեցին թևերուց սպեր,
Թելներ կըլցուցին, սպեցին,
Դարձան կԽանդութ խանում գովեցին:
Որ գովեցին պրծան,
Քեռի Թորոս հարցուց, ասաց.
— Գո՛ւսաններ, էդ ո՞րտեղ է ձեր գոված Խանդութ:
Գուսաններ ասին.— Կապուտկող է,

Վաչոյ-Մարջոյ աղջիկն է:
Քեռին դարձավ տղաներուն, ասաց.
— Զարկե՛ք էդ գուսաններուն:
Էդոնք էկեր են, որ խաբեն,
Մեր էղնիկի սիրտ ավերեն:
Քեռին ձեռաց հասկացավ,
Որ Խանդութ ճամփեր է գուսաններ՝
Դավիթ հասկանա, էրթա իրեն առնի:
Զարկեցին գուսաններուն, սպեր ջարդեցին,
Գուսաններ էլան փախան...

3

Էկան,— քաղքի տակ կամուրջ մի կար,—
Կամրջի գլուխ կայնան, միտք արին, ասին.
«Կ'էլնի՝ մենք Խանդութի ասած չասինք,
Որ մեկի ծեծեցին, կարկեցին:
Չէ՛, աղբեր, Խանդութ մեկի էդպես սովորցուց,
Ապա էդոնք ծո՛ւռ են,
Ինչի՞ մեկի ծեծեցին, կարկեցին»:

Էդ որ գուսաններ կ'ասեին,
Դավիթ Ավագ սարեն որս վեր թևին՝
Կուգար դեմ ի իրենց տուն:
Իրիկուն էր. կամրջի գլուխ կայներ
Գուսաններու ասած ականջ կաներ:
Դավիթ մոտեցավ էնոնց, ասաց.
— Գո՛ւսաններ, էդ ի՞նչ է, որ կասեք:
Գուսաններ ասին.— Մենք գնացինք Սասուն,
Խանդութ Դավթի համար տի գովեինք,
Դավիթ էլավ, Սասունա ծուռ ճժեր
Մեր վերան լարեց, մեր սպեր ջարդեցին,
Մեկի ծեծեցին, քաղքեն հանին...
Մեր հույս վեր են սպերին էր:
Ասաց.— Գո՛ւսաններ, Դավիթ որ կա, ես եմ,
Էն իմ քեռին է էղեր:
Առեք էսա փողեր՝
Գնացեք, ձեր սպեր տվեք շինել,
Ոսկի թել տվեք քաշել վերան,
Բերեք, ինձի համար Խանդութ խանում գովեցեք:

Գուսաններ գնացին, սպեր տվին շինել,
Էկան Դավթի սենեկ,
Իրեքն էլ ջոկ-ջոկ խաղ ասին,
Ամեն մեկ՝ մեկ դիր Խանդութ խանում գովեց:

Առաջին դիր էն սիպտակմորուս գուսան
Առավ ձեռ իր դամբուրեն, լարեց,
Խանդութ խանում գովեց, ասաց.

«Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին*.
Էնոր բոյ գյոլու էղեգ նման է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.
Էնոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեյդանն է.
Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.
Էնոր բերան մեղրով բացած է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.
Էնոր ատամներ մարգըրիտ շարած է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.
Էնոր աչքեր գինու կթխա է:
Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին»:

Էնոր էտևեն էն թուխմորուս գուսան
Առավ ձեռ իր տամբուրեն, լարեց,
Խանդութ խանում գովեց, ասաց.

«Կ'իրիշկեմ Խանդութ խանում, ձեռ-ոտ կալամով քաշած է՞.
Ա՜խ, հալա տըգո, կալամով քաշած է:
Կ'իրիշկեմ՝ էնոր էղնգներ, ռանդայով տաշած է,
Ա՜խ, հալա տըգո, ռանդայով տաշած է:
Կ'իրիշկեմ՝ էնոր ծամեր, քառսուն ճուղ ծամ է,
Ա՜խ, հալա տըգո, քառսուն ճուղ ծամ է:
Կ'իրիշկեմ՝ բոյն ու բուսաթ, շատ նման է քաղքի բրջին,
Ա՜խ, հալա տըգո, քաղքի բրջին:
Կ'իրիշկեմ՝ էրեսի կարմրություն, նռան գինի է,
Ա՜խ, հալա տըգո, նռան գինի է.
Կ'իրիշկեմ՝ էնոր ծըծեր մեջ ծոցին,
Քանց Հալապա շաքար քաղցր է,
Ա՜խ, հալա տըգո, քաղցր է»:

---

* *Երգ է։*

Վրա իրեք դիր էն ջահել գուսան
Առավ ձեռ իր սապ, լարեց,
Խանդութ խանում գովեց, ասաց.

«Ընդրա բոյն ասեմ,
Քառսուն գապ է, լգո՛, մե չափ ավելի*.
Ընդրա աչքի թարթափներ ասեմ,
Կռնկի թևի նման է, լգո՛, մե չափ ավելի —
Ընդրա սրտի լենք գովեմ,
Յոթը գապ է, լգո՛, մե չափ ավելի.
Ընդրա սիպտկություն ասեմ,
Քանց մեկ օրվա գալած ձուն սիպտակ է, լգո՛, սիպտակ է
Ընդրա կակղություն ասեմ,
Քանց բամբակի քուլեն կակուղ է, լը՛գո, կակուղ է»։

Դավիթ որ Խանդութ խանումի գովք լսեց,
Էն ինչ գուսաններ իրեք դիր գովեցին,
Առավ ձեռ իր սապ, լարեց, ասաց.

«Գո՛ւսաններ, դուք բարով էկաք*.
Իմ սիրտ քանց կաթն անարատ էր,
Մերան թալիք, մակարդիք։
Իմ սիրտ քանց Սասնա բերդն ամուր էր,
Քլունգ առաք, իմ հիմ քանդեցիք։
Իմ սիրտ քանց աշունքվա գետ կուլալ էր,
Գարնան հեղեղի նման պղտորիք։
Գուսաններ, դուք ինձի հալիք, մաշեցիք,
Դեհ ձեր Խանդութ խանում ինձի քաշեցեք»։

Դավիթ որ պրծավ, սապ էդիր գետին, ասաց.
— Գուսաննե՛ր, էդ ո՞րտեղ է
Ձեր գոված Խանդութ խանում։
— Կապուտկող է, Վաչոյ-Մարջոյ աղջիկն է։
Ասաց.— Գո՛ւսաններ, կ'էրթաք, կ'ասեք,
Դավիթ ասաց՝ վեց օր կը սպասի,
Յոթն ավուր վերան իրեն հյուրն եմ։
Իմ ճաշ կ'ուտեմ Ճաժվան,
Խրամենց կը գամ Բանդումահին,

* երդ է։

Ընթրիսին կը հասնեմ սեր խանումին:
Հանեց, քանի մի փող էտու նվեր,
Բարով էրթաք ասաց, ճամփու էդիր:
Գուսաններ՝ «Տը՛մբ, տը՛մբ»... սպեր կարկեցին,
Էլան, ընկան ճամփա:

Դավիթ էլավ, գնաց տուն,
Հրողբոր կնկան ասաց.
— Իմ շորեր լվա, ես տեղ տ'էրթամ:
Դառավ հրողբորն ասաց.
— Ես Զմշկիկ Սուլթան չե՛մ առնի.
Տ'էրթամ, Խանդութ խանում բերեմ:
Հրողբեր ասաց.— Դա՛վիթ, էս յոթ տարի էղավ,
Քառսուն փահլևան նստած են առջև էնոր դուռ.
Դու էլ կ'էրթաս առջև էնոր պատուհան.
Թե քե նշան էտու, կ'էրթաս.
Թե չ'էտու, կը դառնաս, կը գաս:

Գուսաններ էկան, հասան Կապուտկող:
Խանդութ խանում պատուհան նստած էր.
Որ տեսավ էնոնց, հարցուց, ասաց.
— Գո՛ւսաններ, գնացի՞ք Սասուն:
Ասին.— Հրամանք ես, խանո՛ւմ:
Աստված էնոնց տուն ավերի,
Էդոնք ամեն ծուռ են:
Գնացինք Դավթի սենեկ,
Քեպի տի գովեինք,
Բռնեցին մեպի ծեծեցին, մեր սպեր ջարդին,
Էկանք քաղքի տակ,—
Էլի աստված կյանք տա էն Դավթին,
Մեր սպեր էտու շինել, ասաց.
«Կերթա՛ք Խանդութին կասեք՝ վեց օր կը սպասի,
Յոթն ավուր վերան իրեն հյուրն եմ:
Իմ ճաշ կուտեմ Ճաժվան,
Խրամենց կը գամ Բանդումահին,
Ընթրիսին կը հասնեմ սեր խանումին»:

Խանդութ գուսանների փող հաշվեց,
Քանի օր գնացեր, էկեր էին, էտու:
Գուսաններ էլան, գնացին իրենց տուն:

4

Դավիթ խոսք տվածին պես,
Վեց օրեն գնաց իր սենեկ,
Սնդուկ էբաց, շորեր հագավ,
Թուր Կեծակին կապեց,
Քուռկիկ Ջալալին քաշեց դուրս,
Սանձ էդի բերան, թամբ էդի մեջքին,
Հեծա՛վ, ընկավ ճամփա:
Սասնա մինչև Ճաժվան
Յոթն ավուր ճամփա է,
Ճաժվանա Բանդումահու կամուրջ՝
Յոթն ավուր ճամփա.
Բանդումահու կամրջից Կապուտկող՝
Յոթն ավուր ճամփա:
Դավիթ իր ձին քշեց.
Չուր ճաշ հասավ Ճաժվան.
Կեսօրին՝ Բանդումահու կամուրջ:
Տեսավ Գործութա գութան
Էկեր է էնտեղ, դաշտ կը վարի:
Յոթ գութան է:
Գութանավոր նստեր են հացի:
Դավիթ էկավ, ասաց.
— Բարի աջողո՛ւմ, գո՛ւթանավոր:
— Աստծու բարին,— ասին,—
Կարի՛ բ աղբեր, դու բարո՛վ էկար.
Նստի, հաց անուշ արա:
Դավիթն ասաց.— Չէ՛, ես կ'էրթամ,
Թող հաց ձեր ճժեր ուտեն:
Ես ուտեմ իրենց բան չի մնա:
Գութանավոր վերուց ասաց.
— Աշխարհ գութանի մոտ կը լիանա:
Դավիթ գնաց արտի կուշտ, ձիուց իջավ,
Սանձ ձիու բերնեն հանեց,
Ձին էնտեղ թողեց,
Գնաց, նստավ, մեջք տվեց սելի ական:
Մեծ մի աման փլավ են բերած,
Բերին դրին Դավթի առաջ.
Էրկու հաց կաներ մեկ պատառ.
Հինգ պատառ կարկեց, փլավի տակն առավ:

Յոթ օրվա պաշար
Բերին դրին Դավթի առաջ.
Յոթ գութնի հաց ու ջուր
Բոլոր կերավ, խմեց, մանանա չ'էթող:
Էլավ որ պիտի էրթար,
Գութանավորներ իրար ասին.
— Ի՞նչ անենք, մենք մնացինք անոթի,
Էդ ճամփորդ մեր յոթ օրվա պաշար կերավ.
Վեց օր պիտի էստեղ գութան անենք,
Մեր էտև հաց բերող չկա, ի՞նչպես տ'անենք:
Մենք ճամփենք տուն, պիտի ասեն՝
Կեսօր եք գնացե, ձեր հաց չի պրծե.
Թե որ ասենք՝ հյուր էկե մեկ մարդ, չեն հա՛վատա
Թ'ասենք՝ գոմեշն է կերե, էլի չեն հա՛վատա:
Դավիթ լսեց, ասաց.— Ի՞նչ տի վարեք:
Ասին.— Այ, էդա դաշտ:
Ասաց.— Դուք էստեղ քիչ մի նստեք,
Ես կ'էլնեմ, էն վեց ավուր գութան
Մեկ ժամվա մեջ կ'անեմ:
Էդ ասելուն Դավիթ էլավ,
Յոթ գութան կապեց իրարուց, ձին նստավ
Ու քաշեց վգութաններ:
Մեկ տաս փաթ գնաց, էկավ,
Դաշտ մի տեղ սևցուց:
Մշակներ ասին.— Էդ քո շնորհք չէ,
Քո ձիո՛ւ շնորհքն է:
Էն ժամանակ Դավիթ իջավ ձիուց,
Դավիթն բնատեն առավ ձեռ,
Ու ինք վարե՛ց, վարե՛ց, արտ պրծավ:
Մշակներ կարմացան, բերաններ մնաց բաց:
Գութանավոր ասաց.— Սասունա Դավիթ որ կասեն,
Չըլնի՞ դու ես, ա՛յ ճամփորդ:
Ասաց.— Ե՛ս եմ, որ կամ:
Ասին.— Դավի՛թ, աշխարքի մեջ՝
Քո պես կտրիճ՝ ոչ էղեր է, ոչ կ'ըլնի,
Որտեղ որ դու էրթաս՝
Քո ոտ քարին չըդիպնի.
Աստված քեզի վատ օր նշանց չը տա:

Դավիթ էլավ էդ տեղեն,
Սանձ դրեց ձիու բերան, հեծավ քշեց:
Կապուտկող, ո՞ւր ես... էկա քեզի:

Դավիթ էկավ, տ'անցներ
Զմշկիկ Սուլթանի պատուհանի տակով,
Զմշկիկ Սուլթան տեսավ՝
Էկավ էնոր առաջ, ասաց.
— Դա՛վիթ, արի էրթանք էսօր ինձի հյուր:
Ասաց.— Չէ, ինձի ճամփուց ետ մի գցի:
Ասաց.— Ես գիտեմ, դու Խանդութի համար կերթաս,
Համա Խանդութ իմ ճկութի հավասար չի՛լնի:
Զ Դավիթ խաբեց, տարավ տուն.
Կերան, խմեցին, էլան քնան:

Լուսուն Դավիթ փոշմնավ իր բռնած բանեն, ասաց.
«Էդ ի՞նչ բան էր՝ ես բռնեցի,
Պիտի մեր ապգ չխաբվեր.
Ես ինչի՞ խաբվա մեկ կնկա ապով»:
Էլավ, ձին քաշեց, հեծավ, քշեց:
Զմըշկիկ Սուլթան ասաց.— Դու կեցի՞.
Էկար, ինձի խաբեցիր, գնացիր:
Ու հակառ ընկավ հետ Դավթին:

5

Վեց օր որ էկավ անցավ,
Խանդութ խանում առավոտ լուսուն՝
Էլավ, նստավ պատուհան,
Դավթի ճամփան բռնեց:
Մեկ էլ իրիշկեց՝ ինչ տեսնի.
Կրակ մեջ էրկինք, մեջ գետինք կը տա:
Մեկ ձիավոր մի մեջ էրկինք, մեջ գետինք կը գա,
Հապիվհապ կերևա:
Ասաց. «Կա-չկա էս Դավիթն է»:
Դարձավ դռնապանին, ասաց.
— Գորգի՛կ, հասի, դուռ կարկ.
Գահ է, որ ձիավոր մի հասնի դուռ:
Գորգիկ հասավ, դուռ էկար.
Խոսք դեռ բերանն էր, Դավիթ հասավ վեր դռան,

Քշեց, գնաց առջև Խանդութի պատուհան:
Խանդութ խանում՝ որ աչք ընկավ,
Զ'Դավիթ տեսավ՝ ուրախացավ.
Ուրախությունե խնձոր մ'էկար Դավթին:
Դավիթ խնձոր բռնեց վեր ձիուն,
Խնդացավ վեր խնձորին:
Իրիշկեց, տեսավ կ'Խանդութ
Գուսաններ ինչ գովացեր էին,
Դեռ կեսն էլ չէին ասե:
Զին քշեց առաջ, տեսավ՝
Մարդու մեկ գուրկ ձեռք կայնե էտև դռան:
Դավիթ միտ վե ասաց.
«Ինչ մորե մեկներ եմ, մարդու բարև չեմ տվե.
Թե որ էդոր բարև տամ՝
Տ'էլնի ցավ, ընկնի իմ սիրտ, ինձ տի սպանի:
Թե որ էդոր բարև չը տամ՝
Էդ փահլևան ինձ տի սպանի»:
Ահու բարև էտու, մտավ ներս:
Գորգիվ էնոր բարև առավ:
Դավիթ ասաց.
— Ինչ մորե մեկներ եմ՝
Մարդու բարև չեմ տվե.
Էսօր Գորգիվն եմ տեսե՝
Ահու բարև եմ տվե,
Լգո, ահու բարև եմ տվե:
Գորգիվ ասաց.
— Քառսուն տարի դռնապանություն եմ արե՝
Մարդու բարև չեմ առե.
Էսօր Դավիթն եմ տեսե՝
Ահու բարևն եմ առե,
Լգո, ահու բարևն եմ առե:
Դավիթ հարցուց էդոր.
— Գորգիվ, էդ ի՞նչ գունդ են դրած քո ձեռք:
Թև էրկնցուց, առեց կգուրկ ու թալեց.
Ու դեռ հալա կերթա՞...
Գորգիվ հարցուց.— Դավիթ, ինչի՞ ես էկե:
Ասաց.— Խանդութ խանումի համար.
Ես ինչպե՞ս տեսնեմ էնոր:
Ասաց.— Ուրբաթե-ուրբաթ Խանդութ խանում՝
Քառսուն նաժիշտներով կը գա Խաս բախչեն.

Էսօր ուրբաթ է, կ՚էրթանք էնտեղ, կը տեսնես:
Գորգիվ վերուց ասաց.
— Որ Խանդութ խանում առնես,
Ինձի կանե՞ս քեվի քավոր:
Ասաց.— Կ՚անեմ,
Կ՚ընենք սանհեր Դավիթ, քավոր Գորգիվ:

Դավիթ էլավ գնաց,
Ձիով քշեց Խանդութ խանումի Խաս բախչի մեջ:
Ձին թողեց վարդ, ըռեհաններու մեջ արածի,
Ինք անմահության հավուզի վերան պառկավ:
Արև որ տաքացավ,
Խանդութ խանում քառսուն նաժիշտով էկավ,
Տեսավ Դավիթ կո ձին թողե Խաս բախչի մեջ,
Վարդ, ըռեհաններ կարածի,
Ինք պառկե հավուզի վերան, քնե:
Խանդութ խանում ասաց.
— Էն Դավիթ ինչ անհիմա մարդ է.
Գնացե՛ք, ասեք, որ էն տեսակ մարդ է,
Թող էլնի, էնտեղեն էրթա:
Մեկ հաց էլ տարեք, թող ուտի,
Նոր ասեք՝ մեր Խանդութ խանում կասի՝
Թող էլնի, էնտեղեն էրթա:

Հաց տարան, դրին առջև Դավթին, Դավիթ կերավ:
Ծառաներ ասին.— Մեր Խանդութ խանում կասի՝
«Թող էլնի, էնտեղեն էրթա:
Էնոր ո՞վ ասե՝ գա,
Ձին թողնի Խաս բախչի մեջ,
Վարդ, ըռեհան ուտի, տրորի, թավալ տա.
Էն էնոր հոր չիմա՞նն է,
Օձն իր պորտով, հավքն իր թևով
Մեր Խաս բախչի վրա չէր իջե.
Էն քա՞նի գլուխ ունի,
Մտնի Խաս բախչի մեջ,
Ձին թողնի էնտեղ արածի:
Ի՞նչ տեսակ անհիմա մարդ է.
Թող էլնի, էնտեղեն էրթա.
Ափսոս է, թե չէ փահլևաններ կը գան,
Էնոր ջոջ պատառ ականջ կը թողնեն»:

Դավիթ ասաց.— Ինչի՞ դուք շուտ չէիք ասե,
Քանի ես հաց չէի կերե.
Հաց կերա, պրծա, նոր ասիք:
Որ էդպես է, ես չեմ էրթա.
Ինչ էնոնց ձեռնեն կը գա, թող չըխնայեն:
Գնացին, Խանդութ խանումին ասին՝
— Դավիթ էսպես ասաց:

Էնոնք որ գնացին,
Դավիթ կանչեց Խանդութի ծիապան,
Ասաց.— Իմ ձին թողնեմ ո՞րտեղ:
Էն էլ դարձավ, ասաց.
— Քառսուն փահլևանների ձիանք
Կո գոմն է, դո՛ւ էլ տար:
Դավիթ գոմի դուռ բացեց,
Ձիու սանձ բերնեն էհան,
Քաշեց, էթող էն ձիերու մեջ, ասաց.
— Թե դու էդ ձիեր հաղթեցիր,
Ես էլ էնոնց տերվանք տի հաղթեմ:
Քուռկիկ Ջալալին խրխնջաց,
Էն քառսուն ձիու կեր մոտերուց առավ,
Էտու իրեն դոշի առջև, ճխթեց, կպցուց պատ,
Էնոնց ամենի դարման կերավ:
Ծառաներ խաբար տարան Խանդութին, ասին.
— Ձին իր հունար ծախսեց, մնաց տեր:

6

Ինչ Խանդութ խանում խնձոր էկար Դավթին,
Էն քառսուն փահլևան, որ էնոր համար
Յոթ տարի էնտեղ նստեր էին,
Շատ նեղացան, ասին.
— Մենք յոթ տարի էստեղ ենք,
Մեկի նշան չ'էտու,
Սասնա շաղգամակեր Դավիթ նոր էկավ,
Դեռ չի տեսե՝ խնձոր էկար էնոր վեր ձիուն:
Դավիթ գնաց էդ քառսուն փահլևանի մոտ,
Տեսավ՝ քառսունն էլ նստած, գինի կը խմեն:
Էնոնք ինչպես ճժեր մոտ Դավթին:
Փահլևաններ ինչ Դավթին տեսան,
Ամեն վախեցան, դողացին,

Խոսք մեկ արին, ասին.
— ԶԴավիթ հարբեցնենք, սպանենք,
Թե չէ՝ մեր բան կուր է.
Մենք էլ Խանդութի տեղ ընինք,
Էնոր չենք թողնի, մեկնե մեկին առնի:

Տարան Դավթին, նստեցուցին իրենց մեջ,
Ցոթ տարվա նռան գինին դրին՝ խմեն:
Դավիթ ինչ նստավ, էնոնք մեկ-մեկ թաս տվին,
Ասին.— Դավի՛թ, դու բարով ես էկե,
Ա՛ռ, Խանդութ խանումի կենաց խմի:
Ասաց.— Գինու կարաս ինձի նշանց տվեք՝
Էրթամ գինի խմեմ, գամ հաց ուտեմ,
Որ իմ սրտի թոկեր սրբվի.
Էդով մարդու բերան չի թացվի.
Ես ճնճղուկ չեմ, որ ինձի ջուր կուտաք,
Ուղտ գդալով կը ջրվի՞:

Էլան մեկ ուրիշ թաս բերին,
Էն թասն էլ քանց ջոջ տաշտ էր:
Էն թասով սկսեց խմել:
Դավիթ քեֆովցավ, հարբավ.
Գինին էնոր վերուց, տարավ,
Էղավ շոխ շաբգան, սըմբուլ գըդական:

Դավիթ որ հարբավ, գլուխ կիջեցներ սրտին,
Նորեն կը բարձրացներ, կը շիտկեր:
Փահլևաններ էդ որ տեսան,
Թրեր քաշին, կայնան,
Ու պիտի խփեն Դավթին:
Գորգիվ դռնից տեսավ, կանչեց.
— Սանհե՛ր Դավիթ, սանհե՛ր Դավիթ,
Ճանճ գլխուդ վերևով կ'անցնի, գլուխ թռու:
Փահլևաններ իրենց թրեր պահին,
Համա Դավիթ բան չէր լսի:
Խանդութ խանում վերուց աչքեց,
Տեսավ Դավիթ գլուխ կ'իջեցնի սրտին:
Որ տեսավ, էլավ, գնաց,
Ջվալ մի կաղին բերեց, էդիր էրդիսին,
Էն ժամանակ ինչ Դավթի գլուխ կիջներ ծոցին,

Փահլևաններ ինչ թրեր կը հանեին դուրս,
Որ վարկեն, Դավթի վիզ կտրեն,
Խանդութ խանում վերուց կաղին կը թալեր:
Կը դիպներ սինուն, սինին կը զընգար.
Դավիթ գլուխ կը վերուցեր,
Էնոնք թրեր կը պահեին.
Կը սըրսըփային, կը դողային:
Խանդութ էն ջվալ կաղին՝
Մեկ-մեկ թափեց տակ, պրծուց:
Դավիթն էլ լուրջացավ, ծառային ասաց.
— Էլի՛, էսա սուփրեն վերո՛ւ,
Մեղք է էսա հացեր կոխեն:
Էլավ ձեռ էտու, սուփրեն տի վերուցեր,
Փահլևաններ ասին.— Սուփրեն թող կենա.
Գնացեք, հաց բերեք մեկ էլ ուտենք:—
Էնպես կանեն, որ թրեր չ'էրևան:—
Դավիթ ասաց.— Սուփրեն վերուցե՛ք:
Ձեռ էտու, վերուց, ասաց.
— Սուփրեն կ'էրթա էտև հացին,
Հաց չ'էրթա էտև սուփրին:
Տեսավ ամեն փահլևանի առջև մեկ թուր տկլորած:
Ասաց.— Էդ ի՞նչ է ձեր առջև:
Ասին.— Մեր թրերն են:
Ասաց.— Տվեք տեսնեմ:
Ամեն ժողվեցին, տվին ձեռ:
Դավիթ վերուց, ասաց.
— Էսոնք խորոտ կանգրհան կ'էլնեն,
Գարուն աղջիկներ տանեն, բանջար հանեն:
Ձեռ տվեց, թրեր ամեն ժողվեց,
Էտու ծնկան, կոտրտեց,
Ինչ որ մարդ բուռ մի քիբրիթ կոտրի:
Ծալեց, ծալմլեց, ասաց.— Գո՛րգիվ,
Տար, թալ մեր ձիու խուրջին.
Լավ պողպատ-էրկաթ է,
Իմ ձիուն նալ, բևեռ չկա.
Տանեմ, շինեմ իմ ձիուն նալ, բևեռ:
Մեկ տարի իմ ձիու համար հերիք է:
Փահլևաններ որ էնոր արած տեսան,
Շուտ մի էլան, փախան սենեկեն դուրս:
Դավիթ կանչեց.— Ջավո՛ր Գորգիվ, արի մտնենք ներս.
Տուն մնաց մեզի, բակ մնաց հավերուն:

7

Էն փահլևաններու մեջ
Խանդութ խանում Դավթին հավնեցավ,
Ասաց.— Թող Դավիթ գա վեր,
Մեկէլ քառսունին հաց տանեն էնտեղ:
Դավիթ էլավ, գնաց Խանդութի սենեկ:
Ինչ աչք ընկավ, Խանդութին տեսավ,
Դե՛, ջահել տղա էր, չդիմացավ,
Ձեռ թալեց, կԽանդութ խանում կիք մի գրկեց,
Թև էթալ վիկ, ճակատ պագեց,
Սիրտ չըհովացավ.
Մեկ էլ՝ էրես պագեց,
Էլի սիրտ չըհովացավ.
Մեկ էլ՝ ձեռ թալեց, որ սիրտ պագի,
Խանդութ բռունցքի մ'էկար Դավթի քիթ-բերան:
Ինչ աղբուր ջուր կը թալի,
Էնպես արուն Դավթի բերնեն թալեց:
Ասաց.— Դու քո հոր կտրիճն ես, ես էլ իմ.
Դու էն մեկ անգամ իմ ճակատ պագեցիր,
Քո ճամփու խաթրի համար, ինչ դու էկեր էիր.
Էն մեկէլ անգամ, որ իմ էրես պագեցիր,
Քո ջահելության համար, քեզ հալալ էր.
Դու ինչի՞ վրա իրեք դիր իմ սիրտ տի պագնեիր:

Դավիթ ըռըկավ, դարձավ ետ,
Էկավ Գորգիպին ասաց.
— Գո՛րգիպ, իմ ձին քաշի դուրս:
Գորգիպ գնաց ձին բերեց,
Դավիթ հեծավ, տ'էրթար,
Խանթուդ խանում ընկավ էտև,
Լացեց, աղաչեց Դավթին:
Դավիթ ետ չըդառավ:
Խանդութ խանում էնպես գնաց,
Ձմուշկներ թողեց, թաթացիկ գնաց.
Թաթեր կտըրտվան, ոտքեր ընկան գետին,
Փշուր մի բոբիկ գնաց.
Ոտքեր ճղճըղվան, վիրավոր էլան,
Արուն-արնջուր լցվավ տակ.
Էնտեղ ինչ ոտ կը դներ, լիք արուն կ'էլներ գետին:

Դավիթ վեր ձիուն հա՛ կը գա, հա՛ ականջ կ'անի.
Իրիշկեց մեկ ձեն կը գա, հա՛ կը բոռա.
— Դավի՛թ, Դավի՛թ, կանգնի,
Կանգնի, չուր ես գամ, հասնեմ.
Իրիշկի էտև՝ իմ հալ տես, նոր գնա:
Դավիթ ձիու վերևեն կը դառնա, կ'իրիշկի,
Կը տեսնի Խանդութ խանում՝
Բոբիկ էտևեն կը վազի:—
Է՛, էսքան ժամանակ Խանդութ խանում
Բոբիկ ոտ գետին չէր դրե,
Հիմի բոբիկ դաշտի մեջ կը վազի.
Ոտ ամեն էղեր է արուն:
Խանդութ Դավթին ասաց.
— Իմ մեղք մի՛ թալի քո վիվ, դարձի էրթանք.
Դավի՛թ, տնա՛շեն, ի՛նչ շուտ նեղացար:
Դավիթ ասաց.— Ես Սասունա քո ապով էկա.
Էսքան ճամփա էկա, հասա քո մոտ.
Մեկ անգամ քո էրես պագի.
Ապա էն բռունցքին դու ինձի վարկիր,
Հալբա՛թ կը նեղանամ:
Խանդութ ասաց.— Ուխտ ըլնի՝ քանի հոգի ինձի կա,
Ես քո էտևեն բոբիկ տի գամ:
Դավիթ խղճացավ, դարձավ:
Ինք, Խանդութ էկան տուն:

8

Աջմու Շապուհ արքան էլավ,
Թուղթ գրեց Բապը ֆրենկին,
Ասաց. «Մեկ մարդ Սասունա էկե,
Էդ մարդու անուն էլ Դավիթ կ'ասեն,
Կապուտկողու խորոտ Խանդութ
Ջոռովեն կուպի տանի»:
Բապը ֆրենկին կանչեց իր վազիր-վաքիլ, ասաց.
— Շահու թուղթ կարդացեք,
Տեսնենք ի՞նչ է գրած մեջ:
Թուղթ կարդացին, իմացան:
Բապը ֆրենկին էլավ գրեց Դավթին.
«Դա՛վիթ, մենք լսեր ենք՝
Դու շատ վորեղ մարդ մ' ես.
Կը գաս, արի հետ մեկ կռիվ.

Որ չես իգա, վորք կը քաշենք՝
Քո էրկիրը քար ու քանդ կանենք,
Ինչ կա, չկա, լոպկենք տանենք»:

Թուղթ առան, բերին,
Տվին Խանդութի ծառային.
Էն էլ էտու Խանդութին.
Խանդութ կարդաց, ասաց.
— Էդ թուղթ ո՞վ է բերե:
Ծառան ասաց.— Էրկու հատ մարդ:
Խանդութ ասաց.— Տար մեր սենեկ,
Էն էրկու մարդ լավ մի պատվի:
Ծառան էլավ էնպես արեց:
Մնաց, չուր լուս բացվեց,
Խանդութ խանում թուղթ գրեց.
«Մենք քե վնաս մի չենք տվե,
Մենք քո անուն չենք էլ լսե,
Ու քեվի էլ չենք ճանչենա:
Որ դու կը գաս, մենակ մի՛ գա,
Դու չես կարնա Դավթին հաղթի.
Քեվ հետ ուրիշ թագավոր էլ բե,
Թող էն էլ գա, որ քեվ օգնի»:

Խանդութ էն թուղթ ծալեց,
Տվեց ծառային, ասաց.
— Առ էս նամակ, տու էն էրկու մարդուն,
Աղեկ շոր հագցրու, տաս ոսկի էլ հետ,
Էրկու ձի էլ տու, թող հեծնեն էրթան:
Ծառան էլավ էնպես արեց:
Էն երկու մարդ Խանդութին օրհնեցին,
Գլուխ տալով ասին.
«Ոտքով էկանք, ձիով կ'էրթանք»:
Խանդութ Դավթին բան չի ասի՝
Մեջ էն թղթին ինչ կար գրված:
Էն էրկու մարդ թուղթ տարան,
Տվին իրենց թագավորին:
Թագավոր իր վակիր-վաքիլ ժողվեց.
Թուղթ կարդացին, կարմացան, ասին.
— Էդ ի՞նչ վորեղ մարդ է Դավիթ.
Էլեք,— ասին,— խաբար ղրկենք

Խանդութի հոր հողի դուշման՝
Էն վեց էրկրի նստողներին:
Էլան էնտեղ խաբար ղրկին...
Մեկ թուղթ էլ ճամփեցին Դավթին, ասին.
«Դավիթ, կո՛ մենք էկանք»:

Թուղթ բերին, տվին Դավթին.
Էն էլ տվեց Խանդութին.
Խանդութ կարդաց, ասաց.
— Էս էրկու դիր թուղթ կը գա.
Մեկ առաջ, մեկն էլ հիմի:
Բապը ֆրենկի թագավորն է
Էդ թուղթ գրե, ղրկե քեզի.
Հետ քեզ էնիկ կռվել կուզի:
Էն մեկ անգամ թուղթ որ էկավ,
Ես քեզ չ'ասի, ասաց Խանդութ.
Էլա գողտուկ թուղթ գրեցի.
«Թե որ կը գաք՝ էրկսով էկեք.
Դուք չեք կարնա մենակ կռվեք»:
Էնպես գրի, որ վախենա,
Չ'էլնի ու գա հետ քեզ կռիվ:
Համա դու տես, չի՛ վախեցե,
Զորքով, կոռով էլեր էկե, կուզի կռվել...

9

Զուր լուսուն, ինչ աղոթրան բացվավ,
Քանի աստղ էրկինք կար,
Էնքան վրաններ բռնեցին
Բոլոր Խանդութ խանումի հոր քաղքին,
Ամեն Խանդութ խանումի հոր դուշման:
Բապը ֆրենկին
Ժողվեր է իր զորք, էկե
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:

Աջմու Շապուհ արքան
Ժողվեր է իր զորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:

Չինաստանա թագավոր
Ժողվեր է իր կորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:
Սև թագավոր
Ժողվեր է իր կորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:

Օղան-Տողան
Ժողվեր են իրենց կորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնեն, տանեն:

Հալապա թագավոր
Ժողվեր է իր կորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:

Լանդբանդ թագավոր
Ժողվեր է իր կորք, էկե,
Դրե մեջ Խանդութ խանումի հոր հողին,
Որ Խանդութ խանում առնի, տանի:

Էն քառսուն փահլևաններ մեկ-մեկի ասին.
— Մենք կռիվ չենք էրթա.
Էս յոթ տարի էստեղ նստեր ենք,
Մենք Խանդութի էրես չենք տեսե.
Դավիթ էրեկն էկավ,
ԶԽանդութ տեսավ, հետ էնոր քեֆ արեց.
Թող էն էրթա կռիվ անի:

Լուսուն Խանդութ ասաց.
— Ո՞վ տ'էրթա ձեվնեն կռիվ:
Էն քառսուն փահլևան ասին.
— Ով տ'էրթա մեվնեն կռի՞վ.
Խնձոր ում տվեր ես՝ էն տ'էրթա կռիվ:
Թե կուվես խաբար մեվ տուր, մենք էրթանք կռիվ:

Դավիթ լսավ էդ խոսքեր, ասաց.
— Էն կռիվ իմ բանն է.
Ես տ'էլնեմ, էրթամ կռիվ:

Էլավ, Խանդութի կամքն առավ, ասաց.
— Ես գնացի կռիվ...
Իրեք օր որ լըմընցավ, էկա՝ էկա,
Որ չ'էկա, ես սպանվա.
Գաս, սպանվածներու մեջեն
Իմ մարմին վերցնես, տաս թաղել:
Իմ նշան էլ ի՞նչ է.—
Խաչ Պատերազմին վեր իմ աջ թևին:
Էն խաչով ինձի կը ճանչենաս,
Իմ մարմին կը բերես, կը հորես:

Դավիթ գնաց, որ ձին քաշի, Խանդութ ասաց.
— Վա՛յ, իմ մտեն գնաց քո ձին քաշեի դուրս:
Ետև Դավթին վազեց, ասաց.
— Դավի՛թ, Դավի՛թ, կանգնի.
Ես գամ քո ձին քաշեմ դուրս:
Դավիթ հնտեղ դադրավ:
Խանդութ մտավ ախոռ՝
Տեսավ էն քառսուն ձին էլ
Փախած են վերին բունջ, կծկըված,
Չեն իշխենա դուրս փախնի.
Դավթի ձին մեկ սարի պես մեջ ախոռին կայնե:
Խանդութ ձեռ թալեց ձիու վիզ՝
Տի բռներ, քաշեր դուրս,
Ձին իրիշկեց. չը ճանչեցավ. վիզ չ'էտու.
Գլուխ էնպես թալեց,
Խանդութ էկավ, թռըփալով դիպավ գետին:
— Վա՛խ, Դա՛վիթ,— ասաց.— քո ձին ինձի սպանեց:
Դավիթ մտավ ներս, Խանդութին գրկեց, ասաց.
— Է՛յ ձի, աստված քո շնորհք կտրի.
Ինչի՞, մարդ կնկան կը կարկի.
Դու չը տեսա՞ր՝ կնիկ էր:
Ասաց.— Խանդո՛ւթ, ձեռ տու, քաշի դուրս:
— Միտք ունես ինձի քո ձիով սպանե՞ս:
— Չէ՛,— ասաց,— ձին էլ ձեռ չի տա, քաշի,
Էն գիտեր դու օտար էիր:
Գնաց, ձեռ էտու ձիու գլուխ, քաշեց.
Ձին բան էլ չ'արավ. թամք էդիր վերան:
Դավիթ ինք փորքաշներ կապեց,
Էլավ, հեծավ Քուռկիկ Ջալալին,

«Հի՜» էրավ, թռուց Ռուռկիկ Ջալալին,
Ջպարիսպ անցավ, հասավ մեջ կռվին:

10

Դավիթ մեկ քարի վրա կայնավ, իրիշկեց՝
Տեսավ, ինչքան ծառ կա անտառ,
Էնքան մարդ էկած մեջ դաշտին.
Էնքան վրան կարկած են էնտեղ, ասաց.
«Էնոնք տի կարթեցնեմ, նոր կռվեմ»: Ասաց.— Է՛յ,

«Ով քուն եք, արթուն կացեք*,
Ա՜խ, հալա արթուն կացեք.
Ով արթուն եք, ձեր ձիանք թամքեցեք.
Ա՜խ, հալա ձիանք թամքեցեք.
Ով թամքեր եք, էլեք հեծեցեք,
Ա՜խ, հալա էլեք հեծեցեք.
Ջասեք՝ Դավիթ գող էկավ, գող գնաց,
Ա՜խ, հալա գող գնաց»:

Դավիթ քշեց Ռուռկիկ Ջալալին,
Շիտկավ թամքին, կանչեց, ասաց.
«Հիշա Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր Դավթի աջ թևին.
Աջու էրթա, ձախու գա,
Կտրելով, կորք չը թողա»:
Ասաց, անցավ վրաններու մեջ, կարկեց:

Ինչ որ կարկուտ ընկնի՝
Հասած արտ փչացու, ջարդի,
Էնպես Դավիթ ընկեր է կորքի մեջ,
Շարքով կը ջարդի, կը գա:
Շապուհ արքան, որ Դավթին տեսավ,
Գիլու պես կատղավ, ոռնաց:
Շապուհ արքան կորքին ձենեց.
«Էլե՛ք, պատրաստվե՛ք, ամուր կայնե՛ք»:
Էլան մեյդան, կռիվ արին:
Դավիթ դարձավ, կարկեց Շապուհին,
Թուր Կեծակով գլուխ կտրեց.

---

* Երգ է։

Զորք աՀու չըխլվլաց:
Էլավ, գնաց մեկ-մեկ էբեր՝
Օղան-Տողան թագավորներ,
Կտրեց մեկ-մեկ էնոնց վզներ,
Դրեց էնտեղ:

Իրիկուն էկավ մոտ Խանդութին:
Լուսուն էլ մ' էլ գնաց կռիվ:
Չկարցան ՀետՀ Դավթին կռիվ անեն:

11

Դուշմաններ խորՀուրդ արին,
Հալապա թագավոր ղրկեցին Սասնա քաղաք՝
Մոտ Զենով Հովան, ասին.
— Մենք իմացեր ենք՝
Սասնա քաղաք շատ կտրիճ փահլևան կա.
Մեկ փահլևան ճամփես,
Էստեղ մարդ մի կա, շատ կտրիճ է,
Գա, էնոր սպանի, էրթա,
Մենք յոթ քաղաք նվեր կը տանք:

Ցռան Վերգոյին մեկ տղա կար,
Անուն էնոր Պարոն Աստղիկ:
Պարոն Աստղիկ հեծավ իր ձին,
Մեջ էրկինք, մեջ գետինք,
Թռավ, գնաց, հասավ կռվուն:
Դավիթ ճանաչեց էնոր:
Իրիկուն էկավ, ասաց.— Խանդո՛ւթ,
Ես չեմ էրթա լուսուն կռիվ:
Խանդութ խանում դարձավ, ասաց.
— Որ դու չե՛ս ամչենա, ե՛ս կ'էրթամ կռիվ:
Դավիթ ասաց.— Դե՛, էրդըվցի,
Որ էրթամ կռիվ, դուրս չ'էլնես,
Դուռ չը բանաս, էրդիս չը բանաս,
Նոր ես կ'էրթամ կռիվ:
Խանդութ խանում ասաց.
— Լավ, ես չեմ էլնի դուրս,
Իմ դուռ կը շինեմ, կը նստեմ էստեղ,
Ինձի համար քարգահ քաշեմ:

Լուսուն Դավիթ գնաց կռիվ:
Չուր կեսօրին կռիվ արեց,
Կռիվ արեց հետ Պարոն Աստղկան:
Թրի շառավիղը էկար մեջ էրդիսին:
Խանդութ խանում մեկ էլ տեսավ՝
Լուս մի էկավ իրեն սենեկ.
Ասաց. «Էս ի՞նչ բան է, ես չեմ գիտի.
Ամպ չի, անձրև չի գա,
Գիշեր չի, կայծակ չի տա»:
Խանդութ խանում չը դիմացավ,
Էլավ, պատուհան էբաց, իրիշկեց.
Տեսավ մեկ մի հրեղեն ձին հեծե,
Դավթի գլխու վերև կը ֆրռա.
Հավլունի թուր կը ֆրռացու,
Կրակ կը թափի վեր Դավթի գլխուն:
Խանդութ խանում իմաստուն, կարդացվոր էր.
Գիրք էդիր էնտեղ, գիրք կարդաց.
Տեսավ Դավթի հրողբոր տղան էր,
Ինչ թուր կը շարժեր էնոր գլխուն,
Կրակ կը թափեր վեր Դավթին, կ'էրթար անդունդը:
Դավիթ էնոր բան չէր անի:
Խանդութ խանում երգեց, ասաց.

«Հրողբեր, դու էկիր բարով, հապար բարով*.
Կրակ թափեցիր մեր Դավթի գլխուն,
Կրակ թափեցիր մեր Դավթի գլխուն,
(լա՜) Տուն ավրեցիր Խանդութ խանումին»:

Դավիթ էնոր ձեն առավ, ասաց.
— Վա՜յ, քո կնկան բախտ կտրի.
Ես գիտեի դու չես մնա տուն:
Դավիթ շատ բարկացավ,
Նետ-աղեղ դեմ արավ
Պարոն Աստղկա ձիու փորին,
Ձիու փոր նետով ծակեց,
Պարոն Աստղկան գլխու գագաթ վե դուրս էտու:
Պարոն Աստղիկ ընկավ գետին, ձեն էտու, ասաց.
— Ա՜խ, ես մեր ապգականի կարկերն է ինձի հասավ:—
Էն չէր ճանաչի կ'Դավիթ:
Դավիթ ասաց.— Ես իմ աչքեր կուրցուցի.

---

* Երդ էս

Մեր ադաթ էն է, ով մեռնի,
Գլուխ դնի ապգականի ծնկան վերան,
Հոգին տա աստրծուն:
Դավիթ Աստղկան գլուխ էդիր վեր իր ծնկան.
Էնոր քռոց ընկավ, հոգին էտու:
Որ Պարոն Աստղիկ հոգին էտու,
Դավթի ուշ գնաց,
Զորքեր էկան, որ էնոր բռնեն:
Քուռկիկ Ջալալին տիրոջ բոլոր կայներ էր,
Չէթող, որ Դավթին բռնեն,
Զուր էնոր ուշ էկավ գլուխ,
Էլավ, ձին հեծավ, ընկավ մեջ զորքին:
Զորք առջև Դավթին փախավ:
Դավիթ կանչեց.— Դու մի՛ փախնեք,
Ձեր թագավորի տեղ ինձի ասեք:
Էնոնք կանգնան, էլ չը փախան:
Մեկ մի դարձավ Դավթին, ասաց.
— Մեր թագավոր Բապը Ֆռենկին է,
Էնիկ փախե, գնացե իր քաղաք:
Դավիթ դարձուց ձիու գլուխ՝
Էկավ Բապը Ֆռենկու քաղաք,
Մարդ ճամփեց թագավորին, ասաց.
— Թող էլնի գա, իրեն տեսնեմ:
Թագավորն էլավ, էկավ,
Որ տեսավ էնտեղ Դավթին,
Վախեցավ, ուզեց փախչի:
Դավիթ ընկավ ետև,
Բռնեց, էնտեղ գլուխ կտրեց:
Քաղքի մեջ ով մնացեր էր,
Էնոնց համար թագավոր դրեց.
Ջոջ մարդեր սպանեց,
Պստիկներ տեղ դրեց, ասաց.
— Քանի դու ժիր եք, կռիվ միք է՛րթա:
Որ դու նեղ կ'ընկնեք,
Ինձի՛ թուղթ գրեք, ես կը գամ:
Քաղաք ամեն ասաց.— Դավի՛թ,
Զուր մեռնենք, քո խոսք տ'անենք:
Դավիթ էլավ, էկավ դեհ զորք,
Ասաց.— Դարձեք ձեր քաղաք,
Ձեր թագավոր սպաներ եմ:

Էն օր իրիկուն Դավիթ չ'էկավ Խանդութի մոտ:
Խանդութ գիտցավ, որ Դավիթ սպաներ են,
Կսկծուց իր սիրտ վառվավ:
Լուսուն էլավ, մարդանակ շորեր հագավ,
Նիկակ առավ, ձին հեծավ, ասաց.
— Էրթամ Դավթի մարմին ջոկեմ, բերեմ, թաղեմ:

Գնաց, ընկավ մեջ լեշերուն:
Ինչ կը տեսներ, որ մեծ լեշ է,
Նիկակ կը տար, կը հաներ վեր,
Կը տար առջև արեգական,
Ու կ'իրիշկեր՝ խաչ կա՞ թևին:
Մեկ էլ տեսավ՝ էն մեկ կողմեն,
Մեջ լեշերուն մեկ մի էկավ:
Դավիթ պրծեր իր կոտորած,
Մեջ լեշերուն էլեր, կը գար:
Իրիշկեց, տեսավ Խանդութ խանում
Նիկակ կը կարկի մեջ լեշերուն,
Լեշ կը վերցի, թև կ'իրիշկի:
Դավիթ կանչեց.— Է՛յ, ի՞նչ կը փնտռես.
Ում ետևեն տու ման կը գաս,
Իրեք օր կա սպաներ եմ,
Թե մարդ կուզես, ես քեզի մարդ:
Խանդութ աչքեց, աչքեց, ասաց.
«Էսա ձին Դավթի ձին է,
Ամա ինք չը նըմաներ կԴավիթ, էս ո՞վ է»:
Դարձավ ասաց.— Բերանդ շատ մի՛ ցրվի.
Քենե ավել է, դու էն մարդ սպանես.
Քսան քե պես, տասն էլ իմ պես
Մատաղ կ'անեմ էնոր էղնգին.
Էնոր սպանած լե՛շն էլ տեսնեմ,
Քենե՛ ավել է ինձ համար:
Դավիթ ասաց.
— Որ էնպես է, մենք տի կռվենք:
Էլան, կռվան.
Թոզ ու դուման կդաշտ բռնեց:
Հող ճղվավ ձիերու ոտքերու տակ:
Շատ կռվան, իրարու չ'աղթեցին.

Դավիթ սրտով չէր կարնի,—
Ամա Խանդութ կ'ուզեր սպանի:
Մեկ էլ տեսար՝ իր գուրպ քաշեց,
Արեց որ կարնի Դավթին,
Դավիթ վահան դեմ էտու,
Խանդութ դառավ, որ փախնի,
Դավիթ քշեց Քուռկիկ Ջալալին,
Շիտկավ թամքին, դարձավ, ասաց.
«Հացն ու գինին, տեր կենդանին»,
Քաշեց իր գուրպ, որ կարներ,
Խանդութ էտևանց ծամեր էթող,
Թռավ ձիուց, իջավ գետին:

Էնոր ետևեն Դավիթ թռավ,
Վերուց, կԽանդութ էտու գետին,
Ձոքեր կարկեց էնոր սրտին:
Խանդութ խանում ասաց.
— Ամա՜ն, կտրի՛ճ, ինձ մի՛ սպանի, ես կնիկ եմ:
Դավիթ ասաց.— Ես գիտեմ դու կնիկ ես,
Էսիկ էն ավուր փոխ՝
Մի՞տդ է, ինչ դու բռունցքի մ' կարկիր՝
Արուն-արնջուր էկավ բերնես:
Խանդութ ասաց.— Դավիթ, դո՞ւ ես:
Դավիթ ասաց.— Ես եմ, Խանդութ:
— Որ էդպես է, ինձի թող դու.
Տեսա՞ր, Դավիթ, քառսուն փահլևան,
Յոթ տարի կա էնտեղ նստած.
Ձիմ նշան ես տվի քեկի,
Ինչ դու էկար, իջար իմ տուն.
Դավիթ, ինձի թող դու,
Դոր ես քե կնիկ, դու ինձի մարդ:
Դավիթ Խանդութին թող էտու:
Էլան մեկտեղ, էկան դեհ տուն:
Ճամփեն Խանդութ Դավթին ասաց.
— Դավի՛թ, բան մի պատմեմ քեկի.
Էրկու-իրեք տարի կ'ըլնի՝
Ինձի տարան մեկ թագավորի տղի,
Դրին մեկ սենեկի մեջ.
Մարդս էլ էկավ, մտավ էնտեղ.
Հետ իրարու հանաք արինք.

Զեռս թալի որ թև բռնեմ, տեղեն պրծավ
Թագավորի տղա է, ասի,
Չ'էրթա վար-ցանք ինձի համար.
Անթև էլ ինձ բավական է:
Զեռս թալի էն մեկէլ թև,
Համ մեջք կոտրավ, համ թև պրծավ,
Շունչը փչեց, ընկավ, մեռավ:
Ես նոր իմացա իմ ուժի չափ:
Թագավորն էլ դարձավ, ասաց.
«Վա՜խ, էդա հարս մարդասպան է»:
Ինձի նորեն մեր տուն ճամփին:
Էլ մ'էլ էկա իմ հոր տուն.
Ուխտ արեցի, ասի էնտեղ՝
«Ով իմ մեջք գետին դնի՝
Ես էնոր կ'առնեմ»:
Էսօր ես՝ դու կռիվ արինք,
Դու դրեցիր իմ մեջք գետին.
Էստուց ետքը՝ ես քե կնիկ, դու ինձի մարդ,
Ուր կը տանես՝ ա՛ռ ինձի տար:

13

Ինչ հասան տուն, Խանդութ կանչեց ծառաներին.
Էկան Քուռկիկ Ջալալին տարան,
Դավթի արնոտ շորեր լվացին:

Դավիթ ու Խանդութ սեղան նստեցին.
Կերան, խմեցին, էլան քնեցին...

Իրեք օր որ անցավ, Դավիթ քաշեց ձին,
Մեկ ձի էլ Խանդութ բերեց.
Էլան էրկսով հեծան էն ձիեր,
Թև-թևի պարկին, էկան դեհ Սասուն:
Որ էկան հասան Խլաթ՝
Առջև Զմշկիկ Սուլթանի պատուհան տի անցնեին:
Զմշկիկ Սուլթան կ'Դավիթ տեսավ,
Էկավ էնոր առջև,
Ասաց.— Թըլո՛ր Դավիթ,
Դու ուխտ արիր ինձի առնեիր.
Մենք մատնիքներ իրարու հետ փոխեցինք,
Դու ինձի թողիր, գնացիր Խանդութին բերիր:

Ինչի՞, ես խորոտ չէ՞ի,
Դու ինձի չը հավնար,
Գնացիր էնոր բերիր:
Տի գաս, ես դու կռիվ անենք.
Կամ ես քեզի տի սպանեմ,
Ես էլ, Խանդութ խանումն էլ մնանք որբևարի.
Կամ դու ինձի սպանես,
Նոր էրթաս Խանդութ խանումի ծոց պառկես:
Դավիթ ասաց.— Զմշկի՛կ Սուլթան,
Խնդիրք կ՚անեմ քո մոտեն.
Կնիկարմատ կա հետ ինձի.
Թող ես էրթամ իմ տուն,
Յոթ օր որ լրանա,
Ես կը գամ, կռիվ անենք:
Զմշկիկ Սուլթան ասաց.
— Դե՛, էրդըվցի՝ Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր քո աջ թևին.
Ինչ յոթ օր լրանա,
Գաս հետ ինձ կռիվ,—
Որ թողնեմ դու էրթաս:
Դավիթ ասաց.— Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին, ինչ վեր իմ աջ թևին,
Ինչ յոթ օր լրանա,
Ես կը գամ, կռիվ անենք:
Ասաց, առավ գԽանդութ խանում, էկավ դեհ Սասուն:
Որ էկան, հասան տուն,
Բերեցին յոթ ձեռք գուսան,
Յոթն օր, յոթ գիշեր հարսնիք արին,
Դավիթ ու Խանդութ պսակեցին...
Ուտել, խմել, մեծ ու պստիկ ուրախացան...
Ինչ Դավիթ Խանդութ խանումի ծոց պառկավ,
Խաչ Պատերազմին, որ էրդում էր արե,
Մոռացավ:

ԴԱՎԹԻ ՄԱՀԸ

1

Ավուր մեկ Դավիթ ասաց.— Խա՛նդութ,
Էն, ինչ ես քեզի բերի՝
Էն քառսուն փահլևանի մեղաց տակ ընկա.
Իմ խիղճ չի տանի՝ քեզի էնոնց ձեռքեն խլեցի:
Ես լսեր եմ՝ Գյուրջիստան խորոտ աղջիկներ շատ կան.
Տ'էրթամ, գըտնեմ էն քառսուն փահլևաններ,
Քառսուն ապապ աղջիկ պսակեմ վեր էդոնց,
Ո՛ր աղջիկ իրենց քեֆ կ'ուզի,
Նոր դառնամ, գամ Սասուն:
Խանդութ խանում ասաց.
— Դա՛վիթ, դու իմ մեղաց տակ մտար,
Ինձի հորե, մորե հանեցիր,
Ինձի բերիր, էս քաղաք դրիր,
Կը թողնես ինձի, էրթա՞ս:
Որ քեզի տղա մ'էլավ, ես ի՞նչպես տ'անեմ:
Դավիթ ասաց.— Խանդութ խանում,
Որ ինձի տղա էլավ,
Անուն կը դնես Մհեր.
Իմ հոր անուն գետին չը մնա:
Հանեց մեկ ոսկի բակբանդ էտու,
Անգին քարերն էլ մեջ:
Ասաց.— Թե տղա էլավ,
Կը կապես էնոր աջ թևին.

Թե որ աղջիկ էլավ,
Ասաց,— Կըտաս իրեն բաժինք:
Ես որ շատ ուշացա, կՄիեր ճամփի, թող գա,
Բալբանդ տեսնեմ, կը ճանչենամ:

Էլավ, հեծավ Ռուռկիկ Ջալալին,
Ընկավ ճամփա, քշեց գնաց:
Էն քառսուն փահլևաններ,
Քառսուն էրկիր մեկ-մեկ գտավ,
Տարավ էնոնց դեհ Գյուրջիստան:
Գնացին, գնացին հասան Գյուրջու քաղաք:
Քառսուն փահլևանին աղջիկ գտավ:
Դավիթ էնտեղեն դարձավ գնաց Ադրբեջան:
Իրիշկեց, տեսավ, որ մեկ աղջիկ կա էդա տեղ.
Էն աղջկան պես էլ աղջիկ խորոտ չկա:
Ասաց.— Տանեմ Խանդութ խանումին խըղամ:
Էդ մեկ աղջիկ էլ վերուց
Ասաց.
— Ամեն մարդ իրեն աստված,
Էրթա իրեն էրկիր,
Ես էլ կ'էրթամ դեհ Սասուն:
Փահլևաններ առան իրենց աղջիկներ,
Գլուխ տվին, ասին.
— Շնորհակալ ենք քենե, Դա՛վիթ,
Որ հասուցիր մեր մուրալին:
Կաց-բարև արին, գնացին:
Դավիթն էլ առավ էն մեկ աղջիկ,
Էդի ձիու գավակ, էկավ:
Մենք խաբար տանք Խանդութի մոտեն:

2

Դավիթ որ գնաց Գյուրջիստան,
Վաչոն մարդ ճամփեց Խանդութի ետև,
Առավ, էկավ Կապուտկող:
Խանդութ էն ժամանակ էրեխով էր.
Որ էկավ իր հոր տուն,
Պառկավ, տղա մի բերեց:
Վաչոն ասաց Խանդութին.
— Թե որ էդ տղան Դավթի տղան է,

Էնոր մոտեն նշան մի, կորություն մի տ'էլնի:
Էլան կտղեն բարուրեցին,
Գութնի շղթաներ բնդի տեղ փաթթեցին վեր էնոր.
Տղան էր՝ ինչ էլաց ու ճմլտկաց մեջ ճղորիս,
Էն շղթաներ կտոր-կտոր էղան:
Դե՜հ, Դավթից ու Խանդութից
Մանդր տղա հո՛ չ'ըլներ...
Տեսան որ՝ Ակնանցորդի՛ է:
Համա տղան, որ կը լողկըցուցեն,
Տեսան՝ մեկ ձեռք խուփ է:
Ինչ ճար արին-չարին,
Տղի ձեռք չը բացվավ,
Քաղաք քաղքով չեն կա՛ռնա էնոր ձեռք բանա.
Վաչոն էլավ իրեն աճուն,
Նամակ գրեց 'Դավթի քեռուն.
«Թո՛րոս, աչքդ լուս ըլնի.
Դավթին տղա մի էղեր է,
Մենակ մի ձեռք խեղ է»:
Թորոս որ էդ նամակ կարդըցավ,
Էլավ, հեծավ Վեցոտնեն Լալգին,
Էկավ, հասավ Կապուտկող.
Էկավ Վաչոյի տուն, ասաց.
— Հըլա տղի բարուր տվեք,
Աչքեմ իմա՛լ տղա է:
Թորոս առավ ըստղան, տեսավ.
Զմանուկի ձեռք մաժեց, մատներ բացվան.
Տեսավ, կաթ մի արուն ձեռքի մեջ.
Ասաց.— Հա՛յ, հա՛յ, թե քար էսօր մուտ տա, մուտ տա,
Հող չի կարնա պահի.
Զաշխարք արեր է կաթ մի արուն,
'Դրեր է մեջ ձեռքին:
Թե որ էդի մնաց,
Էդոր մոտեն վարմանալի բան տ'էլնի:
Մնաց էրկու-իրեք օր,
Խանդութ տղան էտու կնքել,
Անուն էդիր Մհեր:

Ինչ խալխի տղեք տարով կը ջոջանային,
Մհեր օրով կը ջոջանար,
Ինչ ամսով, Մհեր՝ ժամով:

Մնաց ժուկ մ' ու ժամանակ մի՝
Քեռի Թորոս էլավ, առավ կՄհեր.
Առավ կԽանդութ խանում,
Էկան, էլան Սասուն:

Տարին որ թամամավ,
Մհեր էլավ, գնաց մեջ քաղքին ման կը գար:
Ջոջ գետ մի Սասնու քաղքի առջևեն կ'էրթար.
Մհեր վեց էլից՝ կամուրջ կապեց վեր էն գետին:
Որ մարդիկ կ'էրթային՝
Վեր կամրջին ինի կ'էրթային:
Մհեր կ'էրթար, մարդեր կը տփեր, կ'ասեր.
— Շա՛ն որդիք, ես կամուրջ կապեր եմ,
Ձե՛կ համար եմ կապե.
Ինչի՞ վեր իմ կամրջին կ'էրթաք:
Մարդիկ կը դառնային, գային,
Ձարկեին, ջրով անցնեին:
Մհեր կ'էրթար, կը տփեր, կ'ասեր.
— Շա՛ն որդիք, ես կամուրջ կապեր եմ,
Ձե՛կ համար եմ կապե,
Դուք ինչի՞ կը տաք ջրին,
Ջուր կձե տանի, մեղք ընկնի իմ վիկ:
Քաղքցիք էկան մոտ Քեռին գանգատ:
Քեռի Թորոս կՄհեր խրատեց:

3

Յոթ տարին լրացավ, Դավիթ չ'էկավ:
Մհեր իր մորն ասաց.
— Ի՛մ մեր, իմ հեր ո՛ւր է.
Էրեխեք ինձի կ'ասեն՝
Դու հեր չունես, բիձ ես,
Ինձի հեր չկա՞, էրթամ ետև.
Իմ հեր ո՛ւր է գնացե:
Մերն ասաց.— Քո հեր Դավիթն է.
Գնացե Գյուրջիստան էրկիր,
Քառսուն փահլևաններուն պսակի, գա.
Մեկ ոսկե բալրանդ էլ տվե,

Որ իրեն տղա ընի՝ կապեմ թևին.
Ճամփեմ գնա էնոր առջև:
Մհեր ասաց.— Ես տ՚էրթամ իմ հոր գտնեմ:
Մերն էլ էբեր ոսկե բապբանդ,
Կապեց Մհերի թևին,
Գյուրջիստանի ճամփան նշանց էտու:

Մհեր գնաց ախոռ, ձի մի հանեց,
Ջենքեր առավ, հեծավ, ընկավ ճամփա:

Էկավ մեջ դաշտին, իրիշկեց՝
Տեսավ թուխմորուս մարդ մի,
Խորոտ աղջիկ մի առե ձիու գավակ, կուգա.
Մհեր կանչեց.— Է՚յ, մարդ,
Դու միրուքավոր մեկ մի, էդ ջահել աղջիկ
Քե վայե՞լ է, որ առեր, կը տանես:
Էդ աղջիկ տի տաս ինձի:
Ասաց.— Տղա՛, դու գյադա մի,
Քեզի վայել է, ինձի վայել չէ՞:
Ասաց.— Էնդուց ինձի վայել է,
Ես ապապ, էն ապապ:
Դավիթ արավ. որ անցներ,
Մհեր ձեռ էթալ, ասաց.
— Չե՛մ իտա, տ՚առնեմ քո մոտեն:
Էնտեղ Դավթի սիրտ էլավ, ասաց.
— Հա՛յ-հո՛յ, հա՛յ-հո՛յ, իրիշկեցեք.

«Շատ ծովեր եմ մտե*.
Իմ ձիու ճանճեր չեն թացվե.
Հիմիկ մեկ բարակ առու եմ տեսե,
Չի թողնի, որ ես անցնեմ:
Շատ սարեր, քարեր եմ ման էկե,
Իմ առջև դեմ կանգնող չէր էղե,
Մեկ բարակ բատան եմ տեսե,
Շատ եմ մոտեն վախեցե»:

Դավիթ որ պրծավ, Մհեր ասաց.

— Գյուվա բարակ առուն ե՞ս եմ,
Գյուվա բարակ բատան ե՞ս եմ:

---

* Երգ էր

Ձիուց վեր էլի, ես դու կպնենք կուշտի:
Դավիթ ձիուց վեր էկավ, ասաց.— Կայնի,
Էս աղջիկ տանեմ էնտեղ,
Նոր ես դու կռվենք:
— Էլի տար,— ասաց Մհեր:
Տարավ, աղջիկ էդիր սարի գլուխ,
Ինք դարձավ, էկավ էնտեղ:
Դավիթ, Մհեր մտան կուշտի:
Էնպես կարկվան, կռվան իրարու հետ,
Փոշին էլավ երկնուց երես բռնեց,
Քրտինք իջավ գետին ցեխ արեց:
Էնոնց գուրպի վորությունից
Քամին կարկեց Դավթի թաշկինակ տարավ,
Տարավ, թալեց առջև Խանդութի դռան:

Խանդութ խանում էլավ դուրս,
Իրիշկեց, փոշին աշխարք բռներ է:
Տեսավ էնտեղ մեկ թաշկինակ.
Առավ, հոտ արավ, ասաց.
«Ըհը՛, էս Դավթի թաշկինակն է»:
Տեսավ՝ գրգռոց ընկե դաշտ:
Էլավ, ձին հեծավ, քշեց գնաց.
Տեսավ՝ թոկ-դուման կ'էլնի,
Ինչ որ երկու սար
Կը գան, դիպնեն իրար,
Էնպես էն Դավիթ, Մհեր առած իրար.
Արընի մեջ լող կը տան:
Մարդ չէր կարնա մոտենա:
Խանդութ խանում առավ կանչի, ասաց.

«Դավի՛թ, դու մի՛ վարնի*,
Դավի՛թ, դու մի՛ վարնի,
Մեր նորելուկ մեկ տակ մանուկին»:

Դավիթ ինք չի վարնի,
Համա կուվի իր հոգին փրկի,
Իր աիու կը վարնի Մհերին:
Մհեր դարձավ, ասաց.

---

* Սրդ էլ



Մելիք որ ճանաչեց զԴավիթ, Փչեց որ բոցնի տեղեն



— Մա՛րե, դու հոգ մի՛ անի,
Էնոր վարկեր կը նմանի Ծովասարու բամի՝
Որ կը հասնի իմ մայերուն:

Խանդութ խանում դոր ասաց.

«Մհեր, դու մի՛ վարնի*,
Մհեր, դու մի՛ վարնի,
Մեր թուխմորուս Դավթին»:

Մհեր իսկի չը լսավ:
Խանդութ խանում դոր երգեց.

«Սարեր, հըմդաթ էկեք*,
Ձորեր, հըմդաթ էկեք,
Հե՛ր, տղեն մե-մեկից բաժանեք»*:

Սարեր, ձորեր հըմդա՛թ կը գան,
Սարեր, ձորեր հըմդաթ չեն իգա:
Խանդութ խանում կանչեց.

«Օրհնյա՛լ, բարերար աստված*,
Քո հրամանքն էր շատ.
Հրաման էնես՝ Գաբրիել հրեշտակ վար իջներ,
Հեր, տղեն մե-մեկից հետ կտրեր»:

Աստծու հրամանքով Գաբրիել հրեշտակ վար իջավ,
Ձեռ էտու, հեր-տղան ետ կտրեց իրարուց,
Ինչ որ երկու աքլոր կռվեն, մեկ էրթա, ետ կտրի:

Դավիթ դարձավ, ասաց.
— Ա՛յ տղա, դու ինձի տի սպանեիր,
Իմ կտրիճի ձեռնեն ի՞նչպես տի պրծնեիր:
Ասաց.— Քո կտրիճն ո՞վ է:
Ասաց.— Իմ կտրիճ էն է,
Ինչ ոսկի բալբանդ կո վեր թևին:
Տղան իրիշկեց վեր իր թևին,
Տեսավ՝ ոսկի բալբանդ կապած է.

---

* Երգ է:

Լացեց, հասավ Դավթի ձեռք պագեց, ասաց.
— Իմ հեր դո՞ւն ես, ես քե մեղա:
Դավիթ կանչեց, ասաց.
— Մհե՛ր, որ դու հետ ինձի կռիվ արիր,
Ինձի ամանչեցրիր,
Կանչեր եմ քաղցրիկ աստված,
Անմահ ընիս, անժառանգ:

Ինչ Դավիթ անեծք էտու,
Մհեր ըռըկավ, գնաց Կապուտկող:
Քառսուն ապապ լաճ առավ,
Քառսուն ապապ աղջիկ, նստավ,
Յոթ տարվան նռան գինին դրին, խմեցին:

4

Դավիթ էլավ, առավ էն աղջկան,
Առավ գԽանդութ խանում, էկան տուն:
Ինչ կռիվ արին հետ Մհերին,
Մեջ արընին կարմրցեր էր.
Ասաց.— Խանդութ խանում, ջուր բեր, լվացվեմ:
Դավիթ շորեր էհան, տի լվացվեր,
Կնիկ իրիշկեց՝ էնոր խաչ վեր թևին
Սևցեր էր ածուխի պես,
Էլաց, դժարացավ:
Դավիթ ասաց.— Կնի՛կ,
Ինչի՞ դժարացար, լացիր:
Ասաց.— Խաչ Պատերազմին վեր քո աջ թևին՝
Սևցեր է, էլեր է սև կուտ:
Ասաց.— Խանդութ խանում,
Էն չէր Մհերի վարկեր կը գար վեր իմ գլխուն,
Էն Խաչ Պատերազմին էր, ինձի կը վարներ:
Կնի՛կ, ես տ'էրթամ Զմշկիկ Սուլթանի մոտ,
Էրթում արի յոթ օր, գնաց յոթ տարի.
Ես էրթմակոտոր եմ էլե,
Կնի՛կ, ես գնացի...

Ասավ թե չէ, էլավ,
Քուռկիկ Ջալալին հեծավ,
Թուր Կեծակին կապեց, գնաց:

Հասավ առջև Զմշկիկ Սուլթանի քոշկին։
Զմշկիկ Սուլթան տեսավ՝
Դավիթ էկավ առջև իրեն սարին, ասաց.
— Դավի՛թ, դու էրդում էիր արե յոթն օր,
Քո էրդում տարար յոթ տարի.
Ես մնացի առանց մարդ,
Քո ճամփան կ'իրիշկեմ։
Ասաց.— Դե՛հ, քո պատրաստություն տես,
Էլնենք մեյդան, կռվե՛նք։
Էն էլ ասաց.— Մեկ ժամ ժամանակ տու,
Ջիմ շորեր հագնեմ, կենքեր կապեմ, գամ։
Դավիթ կապեց կՔուռկիկ Ջալալին
Վեր Զմշկիկ Սուլթանի դռան, ասաց.
— Ջին էստեղ թող մնա,
Ես էրթամ գետ, լողանամ,
Զուր քո շորեր հագնես, գաս։

Դավիթ շորեր էհան,
Մտավ գետ, մեջ ջրին լողանա։
Էդ ջրի ափ էղեգնուտ էր,
Զուր Զմշկիկ Սուլթան կը գար,
Էնոր աղջիկ առավ նետ-աղեղ,
Էկավ էդ էղեգներու մեջ, պահ մտավ։
Դավիթ որ լողանալու հետ էր,
Էդ աղջիկ գողտուկ էլավ՝
Թունավոր նետով էկար Դավթին,
Որ էկար մեջքին, ծակեց,
Սրտեն ինի էտու դուրս։
Որ կարկեց՝ Դավիթ բոռաց,
Էնոր մոտեն յոթ գոմշու ձեն էլավ.
Գնաց, հասավ Սասուն.
Քեռի Թորոս լսեց Դավթի ձեն,
Ասաց.— Տղեկնե՛ր, էլեք,
Մեր Դավթին կարկեցին։
Քեռի Թորոս, Զենով Հովան, Ճնճղափորիկ,
Խոր Մանուկ, Խոր Գուսան ժողվին իրար։
Զենով Հովանն էլ Սասնու բոռաց.
— Դավի՛թ, կո մենք էկանք։
Ու էկան Դավթին օգնության։

Էկան, հասան էն ջրի մոտ:
Քեռին հարցուց Դավթին.
— Տղա՛, Դավիթ, քեզի ո՞վ կարկեց:
Ասաց.— Չեմ գիտի ով կարկեց.
Էն էղեգնուտեն մեկ մի էլավ, կարկեց:

Գնացին էղեգնուտի մեջ,
Փնտռեցին, գտան, տեսան՝
Մեկ չինի աչքերով աղջիկ.
Ինչ Դավիթ բոռացեր էր, մեռեր էր աիու:
Էդ աղջիկ Չմշկիկ Սուլթանի աղջիկն էր:
Դավիթ որ իմացավ՝ ասաց.
— Իմ ցեց իմ անձից է,
Էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց:
Դավիթ էդ խոսք ասաց,
Ու ինքն էլ էնտեղ մեռավ,—
Արև էտու ձեր որդոց:
Էն մեռավ, ձին էնտեղ ծռավ,
Ծռակապ կտրեց, ընկավ դուրս,
Ինչքան մարդ պատահավ,
Տավար պատահավ, ձի, կտրեց,
Գնաց, կանգնավ առջև Խանդութ խանումի դռան:
Խանդութ խանումն էլ էլավ, իրիշկեց,
Տեսավ՝ ձին էկե, տեր հետ չը կա.
Շուտ մի խաբար արավ,
Թե Դավիթ կորե, չը կա:

5

Քեռի Թորոս ասաց.
— Տղեկնե՛ր, բերեք Դավթին,
Քոթակ կապենք ձիու վերան,
Էլնենք ջրինդ խաղալով էրթանք,
Բալքի Խանդութ չը գիտնա, որ Դավիթ մեռեր է:

Համա Խանդութ էլած տանիք,—
Բարձր էր իրենց տանիք,
Քարերու վրա էր շինած,—
Ամեն կողմ կ'իրիշկեր, տեսներ՝
Դավիթ ո՞ղջ կը գա, թե՝ մեռած:

Խանդութ իրիշկեց, տեսավ, որ
Զրինդ խաղալով կը գան էդոնք:
Դավիթ հեծեր է մեկ ուրիշ ձի,
Իսկի չի խլվլա իր տեղեն:
Էն հասկացավ, որ Դավիթ մեռած է.
Ասաց.

«Որ աժեց, էկավ*,
Որ չ'աժեց, էկավ,
Իմ կանաչ կտրիճ Դավիթ չ'էկավ»:

Էն քոփակ Ցռան Վերգոն
Էնտեղ տանքի վերան կայնած էր.
Առաջ էկավ՝ վերցուց, ասաց,
— Դավիթ մեռավ առանց կռիվ.
Էն մեռավ, ես քեզի անուշ.
Կը պակսի քե կտրիճ Դավիթ,
Չի պակսի պարոն էրիկ:
Խանդութ դարձավ ասաց.
— Ըստուց ետև արև-լուս ինձի հարամ ըլնի,
Ետև Դավթին ես աշխարք չեմ մնա:

Էս անգամ Խանդութ էլավ բերդի գլուխ
Ու էնտեղեն իրեն թալեց.
Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս:
Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ
Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ:
Էնոր ծծերի տեղ հիմի էլ էրկու աղբուր կը թալի:
Յոթ ճուղ ծամի տեղ էլ հիմի կ'էրևա,
Քանց յոթ սուն կը սևկըտի:
Ու հիմի էլ սանդ էնտեղ է, բերդի առաջ:

Էկան տեսան, որ Խանդութ խանում ընկե մեռե:
Մեկ դարդն էղեր է էրկու:
Քեռի Թորոս հարցուց.
— Էդ ո՞վ ասաց:
Ասին, թե.— Վերգոն էր:
Ասաց.— Քոփա՛կ, ինչի՞ չը համբերիր՝ չուր գալինք:

---

* Երգ է։

Բերին, էրկուսին էլ պատանքեցին,
Էլան էրկսի նաշն էլ կապեցին իրարու,
Քառսուն տերտերով, քառսուն վարդապետով,
Քառսուն էլ սարկավագով,
Քաղքի ժողովուրդն էլ բոլորը հետ.
Լալով, գոռալով, ժամով-պատարագով,
Տարան էրկուս մեկտեղ Ծովասար,
Մարութա վանք թաղեցին,
Ցոթն օր սուգ կապեցին:
Էնոնք մեռան, աստված օղորմի իրենց հոգուն,
Դո՛ւք, ձեր անուշ ջա՛ն սաղ ըլնի:

ԾՅՈՂ ՉՈՐՐՈՐԴ

ՀԵՐ ՓՈՔՐ

1

Տի տամ օղորմին Պստիկ Մհերին,
Տի տամ օղորմին Գոհար խանումին,
Տի տամ օղորմին Զենով Հովանին,
Տի տամ օղորմին Ռեռի Թորոսին,
Տի տամ օղորմին յոթ ճուղ Դավթին,
Ճղեճուղ էկանք վեր Մհերի ճուղին:

ՄՀԵՐՆ ԱՌՆՈՒՄ Է ԴԱՎԹԻ ԱՐՅԱՆ ՎՐԵԺԸ

2

Էն ժամանակ ինչ Դավիթ մեռավ,
Իր արև էտու ձեր որդոց,
Էնոր տղան՝ Մհեր, Կապուտկող էր.
Մհեր չ'իմացավ՝ իր հեր մեռե:
Քառսուն ապապ լաճ առեր,
Քառսուն ապապ աղջիկ առեր,
Յոթ տարվան նռան-գինին դրեր, քեֆ կ'աներ:

Մնացին մեկ ժամանակ՝
Քեռի Թորոս միտք արեց,
Ասաց.— Ձենով Հովան, էլի՛,
Ձմշկիկ Սուլթան տի գա,
Սասնա հող-քար տ'ողողի, տանի:
Էլի էրթանք Դավթի տղա Մհեր առնենք, գանք.
Թե՛ իր հոր վրեժ առնի,
Թե՛ Սասուն չը մնա անտեր,
Տեր կենա Ջոջանց տան:

Էլավ, առավ Ձենով Հովան,
Յոթ հատ էլ գոմշի կաշի,
Գնացին, հասան Կապուտկող,
Ու տեղի նստողին ասին.
— Մեր աղբոր ու հարսին էդտեղ տղա մի կա,
ո՞ւր է.

Էնոնք էլ ասին՝ մեռեր է:—
Զմհեր տարե յոթ դարգիով ներս,
Պահապան են դրե վերան,
Փող ու թմբուկ կը կարնեն՝
Որ էն չը լսեր էդոնց ձեն, դուրս չը գար:
Մհեր մեկ բերդի պես կայներ էր,
Չէր թողնի, որ դուշման թագավորներ
Ոտ դնեն Կապուտկողի հող:—
Քեռի Թորոս ասաց.
— Մեր մեռելներուն նշան կա.
Մեր տան մարդ որ մեկ տարեկան մեռնի,
Էնոր տապան տաս Հալապա գալ է.
Էրկու տարեկան մեռնի՝ քսան Հալապա գալ.
Քանի տարեկան որ մեռնի՝
Ամեն տարվան տաս-տաս գալ է էնոր գերեվման.
Մենք մեր ցեղի գերեվման կը ճանչենանք:

Էլան, գնացին գերեվմաններ,
Տեսան, որ իրենց շենքով գերեվման չը կար:
Զենով Հովան ասաց.
— Բերե՛ք, կաշիք փաթթեք, որ ես բոռամ:
Բերին յոթ գոմշի կաշի փաթթեցին:
Էլան, գնացին սարի գլուխ.
Զենով Հովան կանչեց.

«Տա՛ Մհեր, դու խմի՛*,
Տա՛ Մհեր, դու խմի՛
Նռան գինին,
Քո հեր սպանած,
Էսօր յոթն ենք արե»:

Զեն էկավ, Մհերի ականջ ընկավ:
Փող, թմբուկ ավելի կըլեցին:
Մհեր գուսաններուն ասաց.
— Էդոնց ձեն կտրեք, էդ իմ ցեղի ձենն էր էկավ:

«Զենիկ մի կը գար, չեմ գիտի*
Արևելն էր, թե արևմուտն էր.
Չեմ գիտի հարավա էր, հյուսիսա էր»:

---

* Սրդ է։

Հրողբեր դարձավ, ասաց.

«Մեջ հյուսիսա էր*,
Մեջ հարավա էր,
Մեջ արևմուտ էր,
Մեջ արևել էր
Քո հեր սպանած,
Էսօր յոթն ենք արե:

Քո հոր վրեժ մնացե գետին.
Հիմի դու չե՞ս գա էնոր վրեժ առնենք:
Ախը՛ր, դու էլ Սասնա տան խոյերեն ես»:

Գուսաններ ավելի պլեցին իրենց փող ու թմբուկ:
Մհեր ասաց.— Ես տ՝էրթամ,
Իմ հրողբոր ձեն կը գա:
Արեց, որ տ՝էլներ, պահապան ասաց.
— Էդ ձեր ցեղի ձեն չէ՛.
Ճժերն են ու թմբուկներն են. էնո՛նց ձենն է:
Մհեր իրեք անգամ որ ձեն լսեց,
Աքացի մ՝էկար դարգահին,
Առաջի դարգահ կոտրեց.
Էնի հասավ մեկէլին, մեկել մեկէլին,
Յոթն էլ ջարդեց, էլավ դուրս:

Որ հասավ Քեռի Թորոսի մոտ,
Քեռի Թորոս ասաց.
— Ջենով Հովան, կայնի փորձեմ,
Թե Դավթի տղան է, կը տանեմ,
Թե Դավթի տղան չէ, կը կարկեմ,
Թողնենք էրթանք Սասուն:
Որ հասավ Քեռի Թորոսի մոտ,
Քեռին ասաց.— Տղա՛, էդ ո՞ւր էդպես հպարտ, հպարտ:
Ասաց.— Ինձի էրկու մարդ կը կանչեն,
Էնոնք ո՞ր կողմ գնացին:
Ասաց.— Դու ի՞նչ մարդ ես, որ քեզի կանչեն.
Դու ճիժ մ՝ ես, տղա ես:
Մհեր ասաց.— Ինչի դու մարդ ես, ես մարդ չե՞մ:

---

* Երգ է։

Քեռի Թորոս ասաց.
— Ա՛յ տղա, քեզի գուրպ մի կը թալեմ,
Համա դու ճիժ ես, առաջ դու քո գուրպ թալ,
Ետև ես կը թալեմ իմ գուրպ:
Տղան որ իր գուրպ բերեց,
Քեռի Թորոս քշեց Վեցոտնեն Լապգին,
Մհերի գուրպ էնոր ձիու տակով պարապ գնաց:
Քեռի Թորոս կայնավ, օլըրավ, ասաց.
— Ա՛յ տղա, քեզի պատրաստ պահի,
Որ իմ գուրպ կարկեմ:
Թորոս որ գուրպ կարկեց,
Մհերի ճուռ բևեռեց թամքին.
Որ քաշեց, Մհեր իսկի օ՞ֆ չարեց:
Քեռի Թորոս ասաց.
— Յա՛, տղա, քո հոր հերական ասա,
Քո մոր մերական ասա.
Յա, ես գիտեմ դու բիճ ես.
Ես իմ գուրպ կը կարկեմ,
Ապառաժ քարեր կը ձևի, կը թալի,
Դու իսկի օ՞ֆ չ'արիր...
Մհեր ասաց.— Բիճ դու ես,
Իմ հոր հերական Դավիթն է.
Իմ մոր մերական Խանդութն է:
Էդտեղ իրար ճանչեցան:
Մհեր որ տեսավ քեռին, հրողբեր էկեր են,
Հեր չկա, հարցուց էնոնց:
Զենով Հովան ասաց.
— Քո հեր սպանած, քո մերն էլ մեռե.
Զմշկիկ Սուլթան գահ է գա,
Սասնա հող-քար ողողի, տանի:

Էլաց ու վեր քիթ ու բերնին ընկավ գետին:
Մհեր որ ընկավ գետին,
Քեռին ու հրողբեր թափան վերան՝
Ինչ արեցին, չը կարցան շիտկել:
Մհերի արտսունք գետին արեց խանդակ, գնաց:
Իրեք օր որ թամամավ, Մհեր նոր շիտկավ, ասաց.
«Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք*,

* Երգ է։

Խնդայիք վեր ձեր հոր Գուտն ի գլխին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Քամարն ի մեջքին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Թուրն Կեծակին,
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Շապիկն կրեհին.
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք,
Խնդայիք վեր ձեր հոր Կոշիկն ի ոտին.
Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ'որբանայիք.
Խնդայիք վեր ձեր հոր Քուռկիկ Ջալալին»:

Ասաց, հեծավ իր ձին՝
Ու հետ Քեռի Թորոս, հետ հրողբեր
Ճամփա ընկավ դեհ Սասուն:

3

Սասունա ճամփին մեկ վանք կար.
Էդ վանքի անունն էլ Մատղավանք էր:
Դավթի թշնամի թագավորներ
Իմացան, որ Մհեր պիտի գա,
Էդ ճամփով էրթա Սասուն,
Էլան, էկան վանահորն ասին.
— Ինչ ժամանակ Մհեր գա, անցնի էստեղեն,
Մարդ ղրկես, մեկի իմաց տա:—
Էնոնց միտք էն էր՝ ճամփան կտրեն,
Մհերին ըսպանեն:—
Որ էկան, մոտեցան վանքին՝ իրիկվա կողմն էր,
Մեկ էլ Քեռի Թորոս կայնավ,—
Էն առաջ կ'էրթար, Հովան ու Մհեր ետևեն,—
Մհեր որ տեսավ Քեռու կայնել, ասաց.
— Քեռի՛, ինչի՞ կայնար:
Ասաց.— Ջոջ գերաններ թալե, ճամփեն փակեր են,
Որ դուշման գա մեկի բռնի:—
Էդ թալաք վանահոր սարքածն էր:
Էրեր էր, որ Մհեր գերաններ թալելուց բեկրի,
Իջնի վանք հանգստանա,
Դուշմաններ գան, վրա տան:
Մհեր հարցուց.— Ի՞նչ հնարք կա՝ ճամփեն բանանք:

Ասաց.— Հնարքն էն է, որ Դավիթ էստեղ ըլներ
Ես իմ նիկակով կը վերուցի էդ գերաններ,
Էն էլ կ'առներ, կը թալեր դեն:
Մհեր ասաց.— Քեռի՛, դու վերու, ես թալեմ:
Թորոսն էլավ նիկակ էտու՝
Մեկ ջոջ գերան վերուց,
Էտու Մհերին, ասաց.
— Ա՛ռ, էսա էն կողմ թալ:
Մհերն էլ, փաթթվավ գերան,
Տարավ ձորի բերան
Ու ոտքով քշեց անդունդը:
Էդապես մեկ-մեկ գերաններ վերուցին,
Զուր իրիկուն ճամփեն բացին,
Գնացի՛ն առաջ, հասան վանք:
Վանահեր էնոնց մեկ ջոջ սենեկ էտու,
Հաց էդիր որ ուտեն,
Ինքն էլ գողտուկ էլավ,
Խաբար ղրկեց դուշմաններին:
Մհեր, Զենով Հովան, Քեռի Թորոս
Իրիկնահաց որ կերան, քնան:
Քեռի Թորոս լուսուն շուտ մի կարթնավ,
Իրիշկեց, տեսավ՝ յոթ թագավորի կորք
Էկե, փաթթեր է վանքի բոլոր:
Թորոս որ էդ կորք տեսավ,
Զեն էտու Մհերին, բոռաց.
— Մհե՛ր, վեր էլի, մեկ դուրս իրիշկի՝
Յոթ թագավորի կորք էկե,
Փաթթեր է վանքի բոլոր:
Մհեր կարթնավ, աչքեր տրորեց,
Զենով Հովանն էլ էն կողմեն էլավ,
Էկան առջև պատուհան, իրիշկեցին,
Տեսան՝ անտառի ծառներին թիվ կա,
Էն յոթ թագավորի կորքին թիվ չկա:
Վանահերն էլ էնոնց մեջ:—
Մհեր ասաց.— Ես գնացի,
Դուք էլ իմ ետևեն էկեք:
Գնաց, հեծավ իր ձին, քշեց...
Քեռին ու հրողբերն էլ էլան՝
Իրենց ձիանք թամքեցին, քշեցին:
Մհերն ընկավ կորքի մեջ,

Աջո՛ւ էկար, ձախո՛ւ էկար,
Էնպես ջարդեց, քշեց,
Ինչպես քամին մժիկի էրամ:

Քեռին ու Հովան էդ որ տեսան՝
Իրենց եռանդն էլ էկավ.
Մեկ-մեկ բարդի քոքհան արին,
Առան իրենց ձեռ, ընկան մեջ կորքին:
Մհեր որ տեսավ, հարցուց.
— Էդ ի՞նչ կանեք, ծառո՞վ կը կռվիք:
Ասին.— Բան չենք անի, տղա՛,
Տեսանք, որ դու կալի մեջ հաշան կ'անես,
Օրանը ցրիվ կը տաս,
Մենք էլ ափները վրա կը բերենք:

Զորքի քոք որ առան, պրծան,
Վանահոր հետ էկան վանք:
Մհեր մեկ ձեռքով վերուց վանքի գերան,
Մեկէլով բռնեց վանահոր մապեր,
Գլուխ դրեց գերանի տակ,
Գերան թողեց վեր գլխուն, ասաց.
— Էս վանքի անուն ըստուց ետ՝
Մատղավանք չը պիտի ըլնի,
Մատնավանք պիտի ըլնի,
Քանի որ վանահեր մատնություն արեց:

Ու էլան իրեքով էկան դեհ Սասուն:

Որ էկան հասան Սասուն,
Ձենով Հովան Սասնա տան շորեր,
Ձենքեր հանեց, Մհերին էտու:
Քուռկիկ Ջալալին բերեց,
Ասաց.— Ո՛րդի, ա՛ռ հագի, նստի,
Սասնա տան խոյերեն դու ես մնացե,
Էլ ես խնայեմ ո՞ւմ համար:

Մհերն էր, էլավ վեր,
Հագավ Դավթի Զրեհի Շապիկ,
Կապան Ղադիֆե, Կոշիկ Արկըրմին,
Կապեց վեր իրեն Թրիկ Կեծակին,
Առավ էն իր ձեռ Նիկակ կտրիճին,
Դրեց վեր թևին Գուրկիկ ջոջանին,
Սանձ պողպատին էկար Քուռկիկ Ջալալու բերան,
Թամք սադաֆին էդիր Քուռկիկ Ջալալու մեջքին,
Քաշեց դուրս որ հեծներ,
Քուռկիկ Ջալալին լեկու առավ, ասաց.
— Է՛յ, անիրավ, դու ո՛վ ես, որ ինձի հեծնես:
Քո բերա՞ն է, ինձի հեծնես դու:
Մհեր ասաց.— Քուռկիկ Ջալալի,
Անբախտություն մի՛ անի հետ ինձ,
Ես էլ Սասնա տան խոյերեն եմ:
Քուռկիկ Ջալալին ասաց.
— Դավթի խաթեր համար,
Էդ մեկ խոսք ասիր,
Քեզ ձեռ չեմ տա, էլի հեծի:
Մհեր էլավ, հեծավ,
Հրողբեր ու Քեռին էտու առջև,
Գնաց Զմշկիկ Սուլթանի կռվի մեջ:
Զենով Հովան ասաց.— Ես ի՞նչպես անեմ,
Մհեր տղա է, բան չի հասկանա.
Ես էլ ծերացեր եմ, չեմ կարնա կռվի:
Մհեր ասաց.— Հրողբե՛ր,
Բա մենք Սասնա տնեն չե՞նք,
Չէ՛ մենք Սասնա տնեն ենք.
Մենք մեռնենք, մեր գերեզմանի վերա
Թագավորներ չեն կարնա գա:
Քշի՛, էրթանք, մեր կռիվն անենք:
Քուռկիկ Ջալալին ասաց.
— Է՛յ, անիրավ, ի՞նչ կը վախենաս,
Իրեք էդքան վորք ըլնի, կը կոտորեմ:
Էն ի՞նչ բան է, իմ պոչի առջև,
Իմ ոտներու, իմ շնչի առջև,
Էնոնք ամեն կը կոտորեմ:

Էլան գնացին, քաղաքին հասան:
Մհեր ասաց.

էդա մեկ բուրն էլ ինձ բախշի

— Հրողբեր, դուք տ'էրթաք դեհ քաղաք, թե՞ դեհ վորք:
Էնոնք մտածեցին, ասին.
— Էրթանք դեհ քաղա՛ք՝ քաղաք ծանր է,
Ձենք կարնա ավերի:
Մհեր վերուց ասաց.
— Ամեն մեկդ էրկու անգամ ինձի կը կշռեք,
Ես էրկուսիդ ղրկեմ մե կողմ,
Մենակ էրթամ մե կողմ, ձեր սրտով չի՞:
Ձենով Հովան, Քեռի Թորոս ասին.
— Մենք տ'էրթանք դեհ քաղաք: Գնացին:
Մհեր էլավ, Թուր Կեծակին քաշեց,
Գնաց խառնվա՛վ վորքին.
Աջու էկար, ձախու էկար,
Ո՛չ վորք թողեց, ո՛չ վորական,
Ինչ որ կար, բոլոր կոտորեց, ասաց.
— Էս իմ հոր փոխ:
Ձմշկիկ Սուլթան բերեց,
Ծամեր կապեց Քուռկիկ Ջալալու պոչ.
Ձին էնոր ամեն պատառ մեկ էրկիր թալեց,
Ծամեր մնացին պոչ:
Մհեր ասաց. «Տ'էրթամ տեսնեմ՝
Իմ քեռին ու հրողբեր ի՞նչ են արե»:

Գնաց, տեսավ քաղաք ավերած,
Մնացե մեկ կատու, թռե մինարի ծեր,
Դադրած կ'իրիշկի:
Մհեր քաշեց չինարի մ' ծառ,
Ջարկեց, կատուն էբեր տակ:
Ու էլավ Նեմրութա սարի գլուխ:
Իրիշկեց, որ ծուխ կ'էլնի.
Մեկ էլ դարձավ, գնաց,
Տեսավ՝ մեկ ջադու պառավ է մնացե,
Որ քաշված անկյուն մի ծուխ կ'անի:

Էլան իրեքով էկան էնոր քով,
Հարցուցին.— Ինչի՞ ծուխ կ'անես:
Պառավ ասաց.— Որ չ'ասեք թե՛
Էնպես ավերեցինք Խլաթ,
Որ հեչ մի տեղից ծուխ չ'էլնի:

Մհեր բռնեց էն ջադու պառավ,
Ամեն ոտ կապեց մեկ ծառ
Ու ծառեր թողեց:
Խլաթի ծուխ ու մուխ կտրեց,
Ասաց.— Օխա՛յ, իմ հոր վրեժ առա:
Էլան իրեքով էկան տուն:

ԳԱՍԿ Բ

ՄՀԵՐԻ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԸ

1

Մեկ ժամանակ վրա անցավ,
Մհեր ասաց.— Հրողբեր,
Տ'էրթամ աշխարհ ման գալու.
Ես չեմ կարնա էստեղ նստի,
Ոչ ժառանգ կա ինձի, ոչ մահ ունիմ:

Էլավ, առավ Թուր Կեծակին,
Հեծավ Քուռկիկ Ջալալին, գնաց:
Շատ գնաց, քիչ գնաց,
Տեսավ ճամփեն ընկեր է անտառի մեջ,
Ծառներ չեն թողնի ինք էրթա:
Ջարդեց կծառներ, անցավ առաջ:
Գնաց, գնաց, չուր առավոտ.
Դեմ ընկավ մեկ մեծ քարափի:
Մհեր չէր ուզի ետ դառնա,
Ամա քարափ կտրեր էր էնոր ճամփան:
Մեկ էլ տեսավ աղվես մի էնտեղով փախավ,
Մհեր գնաց էնոր ետևեն,
Էլավ քարափի գլուխ:
Իրիշկեց, թագավորական քաղաք մի.
Ճամփան էտու առաջ ու գնաց...
Հասավ մեկ խորոտ էրի առաջ.
Նստավ էնտեղ հանգստանա:
Մեկ էլ տեսավ մարալ մի՝

Լեկուն թալե դուրս, կը վազի:
Մհեր քաշեց իր նետ ու աղեղ,
Զարկեց մարալին, սպանեց:
Աչքեց — տեսավ էն դեհեն՝
Քսանի չափ ձիավորներ էկան,
Հայհոյանք կ'անեն, կ'ասեն.
— Սասնա ծուռ Դավթի տղան
Էլնի մեռ թագավորի մարալ սպանի՞...
Էդ որ լսեց Մհեր, սիրտ համբեր չ'էտու,
Էլավ, ընկավ էտներ.
Էնոնք որ տեսան Մհերին,
Ձիերու գլուխ դարձուցին, փախան...

Մհերն էր, շատ գնաց, քիչ գնաց,
Մոտեցավ Պաճիկ թագավորի քաղաքին:
Ձիուց իջավ տակ, վրան կարկեց:
Խաբար տարան Պաճիկ թագավորին,
Թե՝ Սասունա Մհեր էկե,
Քո քաղաքի մոտ վրան կարկե:
Պաճիկ թագավորն էլ առավ իր վազիր, վաքիլ,
Առավ իր սինոդներ,
Էկավ Մհերի առաջ, ասաց.
— Էն ժամանակ, ինչ քո հեր
Մըսրա Մելիքի հետ կռիվ արեց,
Ես ու քո հեր ուխտ ենք արե:
Թե.— Ի՞նչ ուխտ եք արե:
Ասաց.— Ուխտ ենք արե քո հոր հետ,
Որ ինձի աղջիկ ըլնի, քեզի տղա,
Իմ աղջիկ տամ քո տղին.
Որ քեզի աղջիկ էղավ, ինձի տղա,
Քո աղջիկ տաս իմ տղին:
Հիմի աստված քեզ քո հորն է տվե,
Ինձի էլ աստված աղջիկ է տվե.
Տեսնենք՝ դու կառնե՞ս իմ աղջիկ:
Ասաց.— Որ աղջկան հավնա, կ'առնեմ.
Թե չը հավնա, չեմ առնի:
Էլան գնացին աղջկա մոտ.
Էնոր անունն էլ Գոհար խանում էր:
Մհեր որ տեսավ, հավնավ.
Աղջիկն էլ տղին հավնավ:

2

Մնաց: Առավոտ Գոհար էլավ,
Պատուհանեն իրիշկեց, տեսավ՝
Մհեր վրանի տակ քնած է:
Էնոր ոտներ չուրի չոքեր մնացե դուրս:
Գոհար տեսավ, սիրտ ցավեց, ասաց.
«Զլնի՝ արև կարնի Մհերին»:
Էլավ, հեծավ խարտեշ ձի մի,
Հագավ կարմիր շորեր,
Զենք կապեց վեր իրեն,
Էկավ դեմ ի Մհեր.
Էկավ դռնեն բոռաց, ասաց.
— Մհե՛ր, տե՛ս, արև քեզի կը կարնի:
Մհերն ասաց.— Է՛, ես ի՞նչ անեմ, որ վրան պստիկ է:
— Պստիկ չէ,— ասաց Գոհար,— ջոջ է,
Համա դուն ավնահուրի ջան ունիս:
Մհեր ասաց.— Լա՛վ, թող քնեմ:
Ասաց.— Է՛լ, ես թագավորի տղան եմ,
Էկեր եմ, որ քեզի փորձեմ:
Հետ ինձի կռիվ տ'անես.
Թե դու ինձի հաղթեցիր,
Լուսուն վիմ քուր Գոհար կը տամ՝ կ'առնես կ'երթաս:
Թե դու ինձի չը հաղթեցիր,
Ես քո գլուխ կը կարնեմ:
Մհեր հեծավ, էլավ մեյդան:
Գոհարն էլ էլավ մեյդան, կայնավ:
Մհեր որ գուրպ թալեց, Գոհար վերուց.
Գոհար որ թալեց, Մհեր վերուց:
Մեկ մեկու չը կարցան հաղթեն:
Գոհար ասաց.— Մհե՛ր, հերիք է,
Էդ անասուններ սպանեցինք.
Գնա, իջի քո տեղ, հանգստացի.
Ես քեզի հաց ու ջուր կը ճամփեմ:
Գոհար էլավ գնաց,
Օչխար մի կարմրցուց,
Տիկ մի գինի, հաց էլ հետ,
Էտու իր առջևի ծառային,
Տարավ Մհերի վրանի դուռ:
Մհեր հաց կերավ, գինին խմեց,
Պառկավ, քնավ չուրի լուս...

Լուս որ բացվավ, Գոհար հագավ սև շոր,
Ջենքեր կապեց վեր իրեն,
Էլավ, էկավ դեհ Մհեր:
Էկավ, էնոր վրանի դուռ կտրեց,
Ասաց.— Դավթի տղա Մհեր դո՞ւն ես:
Մհեր ասաց.— Հա՛, ես եմ:
— Իմ քուր Գոհար որ էկեր ես կ'առնես, դո՞ւն ես:
Մհեր ասաց.— Հա՛, ես եմ:
— Դ'էլի, արի քեզի պայման մի կտրեմ:
Թե դու տարար, ասաց,
Իմ քուր Գոհար կը տամ քեզի,
Առավոտուն կ'առնես, կ'էրթաս.
Թե ես տարա քեզի,
Ես կքո գլուխ կը կտրեմ:
Ասաց.— Ի՞նչ է քո պայման:
Ասաց.— Քո մատնիք դնենք, կարկենք,
Նետ-աղեղ միջեն անցունք:
Ով որ չը կարցավ, էն տարված է:—
Մհերի մատնիք պստիկ մատնիք չէր, որ չ'անցներ:—
Բերին, դրին մեջտեղ:
Առաջ Գոհար կարկեց:
Նետ էնպես անցուց,
Մատնիք իսկի չը խըլվլաց:
Էս անգամ հերթ էկավ Մհերին:
Մհեր որ կարկելու արեց,
Գոհար էկավ, կայնավ էնոր առաջ:
Մհեր աչքեց Գոհարի էրես,
Գոհար էնպես խորոտ էր,
Աչք մնաց էնոր էրես.
Նետ էկար, մատնիք թռուց.
Չը կարցավ միջեն անցուցեր:
Գոհար գուրկ քաշեց, ասաց.
— Խոսք խոսք է, ըկքո գլուխ տի կարկեմ:
Մհեր վերուց, ասաց.
— Չէ՛, դու իմ աչք խաբիր.
Դու կայնար իմ առաջ,
Որ աչքեցի քո էրես,
Իմ նետ դիպավ մատնիքին:
Բերեց, մեկ էլ էդիր, ասաց.
— Մհե՛ր, էս անգամ անցուցիր,

Իմ խոսք խոսք է,
Իմ քուր Գոհար կը տամ քեզի.
Չ'անցուցիր, քո գլուխ տի կարկեմ:
Դրեցին. Մհեր նշնեց, կարկեց,
Մատնիքի միջեն անցուց իր նետ:
Գոհար էդտեղ ասաց.
— Դու արժան ես՝ Գոհարի մարդն ըլնիս,
Համա էլի կ'ասեմ՝ տե՛ս, արև չը կարնի:
Գնաց մեկ վրան էլ ղրկեց, ասաց.
— Ջարկեք Մհերի ոտներին:
Մհեր գլխի ընկավ,
Որ էն թագավորի տղան չէր,
Աղջիկն էր, ինք Գոհարն էր:
Մնաց քանի մի օր՝
Բերին Գոհարին ու Մհերին պսակեցին.
Յոթն օր, յոթ գիշեր հարսնիք արին,
Կերան, խմեցին, ուրախացան:
Մհեր գիշեր պառկավ Գոհարի մոտ.
Գոհար բերեց, թուր էդիր մեջտեղ, ասաց.

— Արևմտից թագավոր մեր մոտեն խարջ կ'առնի:
Ասաց,— Էն խարջ որ կտրեցիր,
Ես քեզի կնիկ, դու ինձի մարդ:
Քնան: Լուս բացվավ, էլան,
Մհեր հեծավ ձին, քշեց:
Հասավ արևմտից թագավորի քաղաք:
Էնոնք որ տեսան Մհերին՝
Մենակ ձիու վրա նստած՝
Ինչպես մի մեծ սար էլնի սարի վերա,
Շատ վախեցան էնոր մոտեն:
Էլան վորք արին, էկան Մհերի վերան:
Մհեր քշեց Քուռկիկ Ջալալին,
Մեկ կողմեն ինք, մեկ կողմեն ձին,
Ջորքի ծերն առան, սկսին ջարդել...
Ջարդեցին, կտրեցին չուրի իրիկուն:
Իրիկուն Մհեր ձիու գլուխ դարձուց,
Էկավ տուն Գոհարի մոտ, ասաց.
— Արևմտից թագավոր սպաներ եմ,
Էլ քո հոր մոտեն խարջ տանող չ'իլնի:

3

Մնաց ժամանակ մի՝
Զենով Հովան էլավ,
Թուղթ ճամփեց դեհ Մհեր, ասաց. «Մհե՛ր,
Կոկբադնի թոռներ էլած են, կտրճացած,
Էկած Սասնա քաղքի վեճ կանեն.
Ես չեմ կարնա, իմ ուժ չի հաղթի.
Կ'էլնես, կը գաս, հասնես»:
Մհեր ասաց.— Ա՛յ կնիկ,
Կ'առնես կիմ գուրկ, դուռ կը դնես,
Ինչ փահլևաններ կը գան,
Քեզի նեղություն չեն տա.
Կ'ասեն՝ Մհեր տուն քնած է:

Էլավ քշեց, էկավ Սասնա քաղաք.
Որ էկավ, Սասնա քաղաքին մոտեցավ.
Էլաց, դժարացավ:
Իրիկվան ժամանակն էր.
Հրողբեր դուռ շիներ, քներ էր:
Կանչեց.

«Հերահո՛տ հրողբեր, վե՛ր էլի*,
Քո անուշ քնուց վե՛ր էլի,
Ա՛խ, հալա վե՛ր էլի»:

Զեն ընկավ հրողբոր ականջ, մեջ քնուն ասաց.
— Մեկ բարակ ձեն էկավ, դիպավ ականջիս,
Իմ խոր քնու մեջեն կարկավ:
Կնիկ ասաց.— Ա՛յ աղբեր, ի՞նչ ձեն:
Ասաց՝ Սասնա տուն է, դուռ շիներ ես,
Դեռ էլի կը վախենա՞ս:
Հրողբեր ասաց.
— Հալբաթ կը վախենամ,
Ծերացեր եմ, իմ ապգական մոտես հեռացած:
Մեկ էլ գնաց՝ էրդսի վերա.
Կանչեց.

«Հերահո՛տ հրողբեր, վե՛ր էլի*.
Իմ տուն գետին եմ դրե,

---

* Երգ է։

Իմ տուն իմ գուրպին պահ եմ տվե,
Իմ գուրպ Պաճիկ թագավորի աղջկան պահ եմ տվե»:

Հրողբեր վապեց, գնաց,
Մհերի գլուխ պագեց,
Ասաց.— Դու ի՞նչխ ես պահ տվե,
Քո տուն թողե, էկե:
Ասաց.— Ես էնպես եմ էկե,
Մեկ աստված խաբար էլե, մեկ հրեշտակ:
Ասաց.— Քո գուրպ դուռ դրեր ես, նշան ի՞նչ է:
Ասաց.— Ջավահիր քար կո էրեսին.
Ինչ արև դիպնի, լուս կը տա,
Մարդ չեն քըշի վեր իմ դռան.
Ինչ իրիկուն կը գա,— ասաց,—
Մեղրե մոմեր կը վառեն,
Էլի լուս կը տա, չեն իշխենա քըշի:
Ասաց.— Դու հապար բարով էկար.
Ես գիտեմ՝ քո հոր տեղ կը բռնես:
Ասաց.— Ո՞վ է՝ քեզի նեղություն կը տա:
Ասաց.— Կոկբադնի թոռներն են:
Չորս թոռ են, չորսն էլ նման են գապան:
Ասաց.— Ես էրթամ, չորսին էլ բռնեմ՝
Սպանե՞մ, թե ողջ-ողջ բերեմ:
Ասաց.— Էրկսից մեկն արա՝
Կ'ուզես սպանի, կ'ուզես բեր:

Մհերն էր, լուսուն էլավ,
Իր ձին հեծավ, քշեց, գնաց Լեռա դաշտ:
Տեսավ՝ Կոկբադնի չորս թոռներ էկան.
Որ տեսան Մհերին,
Իրենց նետ թալեցին.
Որ թալեցին, նետ մի էկավ,
Կպավ Քուռկիկ Ջալալու ոտին:
Մհեր Թուր Կեծակին էկար:
Կես կտրավ, կես մնաց ձիու ոտին:
Էլավ, չորս թոռներն էլ բռնեց,
Առավ, էբեր հրողբոր մոտ:
Քուռկիկ Ջալալին կոտ վերուց.
Որ վերուց, հրողբեր ասաց.
— Էդ ի՞նչ է էլե քո ձիու ոտաց:
Աչքեց, տեսավ՝ կո նետի կտոր մեջն է:

Էլավ, էբեր յաղութ, կմրութ,
Հալեց, էլից էնոր ոտաց վերք,
Ժրավ, էլավ քանց առաջ աղեկ:

Մհեր էբեր կԿոկբադնի չորս թոռներ,
Էրկուս բևեռեց դռան էն կողմ, էրկուս էն կողմ:

Էլավ, հեծավ Ռուռկիկ Ջալալին,
Ճամփա ընկավ դեհ Գոհար խանում:
Շատ գնաց, քիչ գնաց,
Տեսավ Հալեպա թագավորի տղաներ,
Քառսուն փահլևան աղբերներ,
Իրենց հեծնելու ձին էլ ուղտ է:
Էդ քառսուն առջև Մհերին էկան:
Բարև էտու,— բարև առան:
Բարև առնելուց էտև ասին.
— Մենք քառսուն ենք, աղբեր ենք,
Դուն էլ ըլնիս մեկի աղբեր,
Ըլնենք քառսունմեկ աղբեր:
Ասաց.— Ես կ'ըլնեմ ձեկ հետ աղբեր,
Համա ասեք տեսնեմ՝ ձեր քաղաք ո՞րն է:
Ասին.— Հալեպ:
Ասաց.— Դուք էստեղ ի՞նչ կանեք:
Ասին.— Մենք մե քուր ունենք,
Մեր քուր մեր հոր թախտ կավթե,
Մեկի ճամփեր է էստեղ,
Ինք թագավորություն կանի:
Ասաց.— Դուք կը գաք, ինձի նշանց տաք,
Տեսնեմ ի՞նչ տեսակ քուր է,
Որ թագավորություն կանի:
Ասին.— Որ դու հարցնես,
Մեր քուր ինչ մորից էլավ, մարդակեր էր.
Մեր հերն էլ, մեր մերն էլ էն է կերե.
Քաղքի ժողովուրդ բոլոր կերե:

Մհեր գնաց, էն քառսուն փահլևանի քուր՝
Մարդակեր պառավին գտավ,
Մեկ ճըլխտրիկ էկար, գլուխ թռուց...
Էն քառսուն փահլևանների կուշտ էկավ, ասաց.
— Ձեր մարդակեր քուր սպանեցի,
Դարձեք ձեր քաղաք:

Էնոնք Մհերի ոտ ու ձեռ պագեցին,
Ասին.— Մենք չէինք կարնա էդ պառվուն հաղթի,
Որ դու էնոր սպանիր, մեզի ապատիր,
Կուզե՛ս, քաղքի թագավորություն առ,
Մենք քո ծառան մինչև օր մեռնելուն:
— Ես ձենե բան չեմ ուզի,
Ո՛չ թագավոր կ'ըլնեմ,
Ո՛չ քաղքի տեր կ'ըլնեմ:
Ես Դավթի տղա Մհե՛րն եմ,
Ես չեմ կարնա էստեղ նստի,
Ոչ ժառանգ կա ինձի, ոչ մահ ունեմ:

4

Մհեր էնտեղեն ճամփա ընկավ, գնաց,
Հասավ Բաղդադ քաղաք.
Տեսավ՝ մեկ ծերանուկ մարդ էնտեղ նստած.
Հարցուց, ասաց.— Ի՞նչ կա Բաղդադ քաղաք.
Բաղդադա թագավոր ո՞ր մեկն է:
Ասաց.— Ես թագավոր չեմ ճանչենա,
Համա կասեն՝ թագավոր Խալիֆի թոռներն են:
Ասաց.— Բաղդասարի գերեզման ո՞րտեղ է:
Ասաց.— Թագավորի սենեկի դեմն է:
Մհեր ասաց.— Բաղդասար մեր ապգեն է, Սասնա տնեն է.
Էնոր գերեզման ինձի նշանց կը տա՞ս:
Նշանց էտու, տարավ էնտեղ,— տեսավ:

Մհեր ձիուց իջավ բախչի մեջ,
Գերեզմանին էրկրպագություն էտու,
Աղոթք արավ:— Ինչ աղոթք արեր է,
Ձեռն էլ կարկեր վեր քարին, տեղ կ'էրևա:—
Մհերն էնտեղեն էլավ, գնաց,
Էկավ հասավ Ջզիրու քաղաք.
Ջզիրու քաղաք մեկ գետ կա,
Անուն Ջզիրու Շատ.
Կ'էլնի որ հարուր քառսուն գետ
Իրարու կը խառնվեն, կ'էլնեն մեկ գետ:
Էդ գետ իրեք անգամ կէն քաղաք ավերեց:
Մհեր էկավ էնտեղ,
Մեկ մեծ, ահագին քար էբեր,
Թալեց քաղքի քամակ, գետի մեջ.

Գետ էլավ էրկու ճուղ.
Մեկ ճուղ էն կողմեն կ'էրթա, մեկ՝ էն,
Էլ քաղաք չի ավերի:
Բրջա-Բալաքն էլ վեր էն քարին շինեց,
Իսկի ավերել չը կա էն բերդին:

Մհեր էլավ՝ կձին հեծավ,
Քշեց, գնաց Պաճիկ թագավորի քաղաք:
Գնաց տեսավ՝ գուրկ ինչպես դրեր էր,
Էն էնպես մնացեր էր.
Մարդ չէր գնացե էնտեղ.
Գնաց, մտավ իր տուն,
Տեսավ՝ կնիկ կո թախտին մեռեր է:
Ձեռ էտու կնկան ձեռ,
Տեսավ՝ թուղթ մի կա էնտեղ,
Մեջ գրուկ. «Քենե կը խնդրեմ՝
Ինչ ժամանակ դու գաս, ինձի տեսնես,
Ինձի տանես Սասուն,
Խանդութ խանումի կուշտ թաղես»:

Մհեր էլավ, էբարձ Գոհարի մարմին,
Առեց, տարավ Սասնա տուն.
Էկավ, տեսավ՝ հրողբեր մեռած.
Գերեզման շինեց, կԳոհար Խանդութի կուշտ թաղեց.
Էլավ, քառսուն պատարագ էտու անել,
Սասնա տուն քանի որ մեռած կային,
Բոլորին պատարագ արավ:
Էլավ, որ տ'էրթար,
Տեսավ՝ ոտքեր չէր դադրի վեր հողին.
Դարձավ, գնաց վեր մոր գերեզմանին, կանչեց.

«Մերի՛կ, վե՛ր էլի, մերի՛կ, վե՛ր էլի*,
Մհերն եմ, քո ծծի որդին,
Ինն ամիս ինձի շահեր ես վեր քո սրտին,
Շատ տանջան ես քաշե վեր աստնվորին,
Շատ եմ ման էկե աշխարք, շվար եմ ման էկե,
Չը տեսա քո պես քաղցրիկ մեր վեր աշխարքին»:

Մոր գերեզմանեն ձեն էկավ, ասաց.

«Ո՛րդի, վի՞նչըխ անեմ*,
Ո՛րդի, վի՞նչըխ անեմ,

---

* երդ էլ։

Գույն, կերպ թափե էրեսես,
Լուս կտրվե աչքերես,
Օձ, կարիճ բուն դրե վերաս:
Բոլ է ման գաս վեր աշխրքին,
Բոլ է ման գաս...
Քո տեղ Ագռավու քարն է,
Գնա Ագռավու քար»:

Մհեր էնքան էլաց,
Էլ ձեն չ'էլավ մոր գերեզմանեն:
Դոր գնաց վեր հոր գերեզմանին,
Էլաց, ասաց.

«Հերի՛կ, վե՛ր էլի, հերի՛կ, վե՛ր էլի*,
Սասնա Ջոջ տնեն անմաս եմ, էլի,
Աշխրքի էրեսեն անմաս եմ, էլի:
Հերի՛կ, վե՛ր էլի, հերի՛կ, վե՛ր էլի,
Էսօր մռմուռ ձուն էկեր է,
Քո որդի Մհերի ոտքեր կը մռմռան:
Հերի՛կ, վե՛ր էլի, հերի՛կ, վե՛ր էլի,
Քո անուշ հոտուն փափագ մնացի,
Քո անուշ խոսքերուն կարոտ մնացի,
Էնքան մենակ աշխարք գնացի»:

Հոր գերեզմանեն ձեն էկավ, ասաց.

«Ո՛րդի, վի՞նչըխ անեմ*,
Ո՛րդի, վի՞նչըխ անեմ,
Գույն, կերպ թափե էրեսես,
Լուս կտրվե աչքերես,
Օձ, կարիճ բուն դրե վերաս:
Բոլ է ման գաս վեր աշխրքին,
Բոլ է ման գաս...
Քո տեղ Ագռավու քարն է,
Աշխարք ավերի, մեկ էլ շինվի,
Որ գետին քո ձիու առջև դիմանա.
Աշխարք քոնն է»:

Էնքան էլաց, էլ ձեն չ'էլավ հոր գերեզմանեն,
Էդ մեկ խոսք էլավ:

Մհեր գնաց, հասավ Ոստանա կապան.
Որ հասավ Ոստանա կապան,

Էնտեղեն,— մեկ իշխան կար,
Կապ էթալ, կՄհեր կապեց:
Մհեր ձիով ընկավ կապ, ասաց.
«Հիշա իմ հացն ու գինին, տեր կենդանին,
Մարութա բարձր Աստվածածին»:
Ասաց, էկար, կտրեց ըկկապ,
Ապատեց Քուռկիկ Ջալալին:

Դարձավ աստծուց խնդրեց՝
Որ կամ կռիվ մի տա իրեն,
Կամ իրեն ամանաթ առնի:

Աստված յոթ ձիավոր հրեշտակ ճամփեց
Հետ Մհերին կռվելու:
Կես օրվնե չուր իրիկուն կռվան,
Մհեր Թուր Կեծակին կը թալեր,
Հրեշտակներուն չէր բռնի.
Ձիու ոտ չէր դադրի վեր հողին,
Որ կոտքեր կը թալեր՝ կ'էրթար մեջ հողին.
Հող առջև թուլացեր էր,
Չէր դադրի առջև Մհերին:
Մհեր ասաց. «Հա՛յ-հո՛յ, կո՛ւր է,
Գետինն էլ հալևորցեր է,
Իմ ձիու ոտաց տակ չի դիմանա»:
Օր կեսօր էր, քանի քշեց,
Ձին թաղվավ չուր իրիկուն:
Ձին առավ, քաշեց էկավ,
Հասավ Վանա մոտ սարի մի տակ:
Մեկ քար մի պատահավ էդոր:
Էդ քարին Վանա քար կ'ասեն:
Ասաց. «Կանգնի, իմ թուր կարնեմ էդ քարին,
Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր.
Թե չը կտրեց, մեղավորցեր եմ»:
Թուր որ էկար քարին,
Քար էրկու կողմեն փեղկվավ,
Ինք, իր ձին գնացին մեջ.
Քար էկավ, իրար կպավ:

Քեռի Թորոս կսկծուց մեռավ,
Որ իմացավ Մհերի փակվել:

ՎԵՐՋԵՐԳ

Կ'ասեն՝ տարին երկու անգամ
Էդ քար իրարուց կը բացվի.
Մեկ անգամ Վարդևորին,
Մեկ անգամ՝ Համբարձման:
Որ քար կը բացվի, Մհեր՝
Քառսուն ավուր ճամփա մեկ ժամվա կ'երթա.
Քառսուն օր վեր քարերին կ'երթա,
Ինչ հողի վերան ընկնի՝ ձին կը խանդկի,
Չը կարնա քելի, ետ կը դառնա:
Կ'ասեն՝ մեկ Համբարձման գիշեր
Հովիվ կ'երթա էդ քարի առաջ,
Մհերի քար իրարուց կը բացվի,
Հովիվ ներս կը մտնի, կը տեսնի՝
Հսկա մարդ մի էդտեղ նստած.
Հովիվ կը հարցու.
— Մհե՛ր, դու ե՞րբ տ'էլնիս էդտեղեն:
Մհեր կը դառնա՝ կ'ասի.
— Ես որ էլնեմ էստեղեն,
Հողն ինձ չի պահի:
Քանի աշխարք չար է,
Հողն էլ դալբցեր է,
Մեջ աշխարքին ես չեմ մնա:
— Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:
Հովիվ որ դուրս կ'էլնի,
Քար կը գա, կը հասնի իրարու:

Ուրբաթե ուրբաթ,— կ'ասեն,—
Ջուր կը գա, կաթի էդ քարեն:
Կ'ասեն՝ Մհերի ձիու ջուրն է:
Ու ամեն ճամփորդ՝ ուրբաթ օրեր
Կը լսի Ռուզկիկ Ջալալու խրխնջոցն էդ քարեն:

Հիշենք կողորմին Ծովինարին,
Քառսուն օղորմի Սանասարին:
Հիշենք կողորմին Բաղդասարին,
Քառսուն օղորմի Դեղձուն Ծամին:
Հիշենք կողորմին Քեռի Թորոսին,
Քառսուն օղորմի Ջենով Հովանին:
Հիշենք կողորմին Ջոջ Մհերին,
Քառսուն օղորմի Արմաղանին:
Հապար օղորմի էն Թառլան Դավթին,
Քառսուն օղորմի Խանդութ խանումին:
Հիշենք կողորմին Պստիկ Մհերին,
Քառսուն օղորմի Գոհար խանումին:
Հիշենք կողորմին, քառսուն օղորմի,
Մեր փիր վարպետին, որ մեկի պատմեց:
Հիշենք կողորմին, հապար օղորմի
Ականջ արողի հոր ու մոր հոգուն:

ԲԱՌԱՐԱՆ

ՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Ա

ԱԴՐԱՏԳԱՀ— նախաճաշի ժամանակ
ԱԳՈՒԲԵ— խուրջին, պայուսակ
ԱՁԱՊ— չամուսնացած տղա, աղջիկ
ԱՁՐԱՅԻԼ— հոգեառ հրեշտակ
ԱՁՆԱՎՈՒՐ— աղնվական, աղնիվ, հսկա
ԱԺԴԱՀԱՐ— աժդահա, վիթխարի
ԱԿԱՆՋԿԼԱ— համբավ, լուր
ԱԿԱՆԱՏ— դռան փայտե բանալիի տեղ
ԱԿՀԱՎ, ԱԿԱՀԱՎ, ԱԿԱՀԵՑ— կռահեց, իմացավ
ԱՂԵԿ— լավ, գեղեցիկ
ԱՂԲԵՐՈՒԿ— եղբայր, եղբայրիկ
ԱՂՈՒՐ— փշրանք
ԱՄԱՆԱԹ— հավատարմի մոտ պահ տված որևէ իր
ԱՄԱԴ— աշխատանք
ԱՆԱԿԱՀ— հանկարծակի, ոչ արթուն, ոչ զգաստ
ԱՆԳՅԱԼ— անպետք, անգործունյա
ԱՆՀԻՄԱ— անհասկացող
ԱՊՌՎ— համար, հուսով
ԱՌ ՈՒ ԱՎԱՐ— թալան, ավար, կողոպուտ
ԱՍՔԱՐ— զինվոր, զորք
ԱՍԼԱՆ— առյուծ
ԱՍՏԵՎՈՐ— ապրող

Բառարանը կազմել է Ս. Տարոնցին

ԱՎԱՏԱՍ— հավատաս, հավատացիր
ԱՎԱ— ահավասիկ, ահա
ԱՎՈՒՐ— օրերից մի օր
ԱՐՈՒՆՔ— արյուն
ԱՐՄԱՂԱՆ—գեղեցկուհի, նրբագեղ, կույս կին, (հատուկ անուն)
ԱՓՈ— պապ, պապիկ
ԱՔՈՒՑ— աքացի, քացի

Բ

ԲԱԴԱԼ— փոխարեն
ԲԱՁԲԱՆԴ—բազկին կապվող պահպանակ, նշան
ԲԱԼՔԻ— գուցե
ԲԱՐՈՇ— պղինձ (ման)
ԲԻՋ, ԲԻՃ, ՊԻՋ— ապօրինի զավակ, ընկեցիկ
ԲԻՆՏ, ԲԻՆԴ— փաթաթան, կապ
ԲԼԵԼ— փուլ գալ
ԲՂՈՒՂ— ման, քասա
ԲՆԱՏԱ— դուքանի մաս
ԲՈՒՄԲԱՐԱՔ— վայելում
ԲՈՒՐՋ— բերդ
ԲՈՒՍԱԹ, ԲՈՅ ՈՒ ԲՈՒՍԱԹ—տեսք, մարդու արտաքին
ԲՍԿԵՐ— կանանց գանգուրներ, որ կախվում են դեմքի երկու կողմերից

Գ

ԳԱՉ— չափ է
ԳԱՀԱ, ԳԱԽ է— ժամանակն է, ահա
ԳԱՂՏԻԿ— գաղտնի
ԳԵՍՏԵՐ— զգեստներ
ԳԻՆԱՍ— գիտես
ԳՈՐԱ, ԳՅՈՐԱ— չափ
ԳՈՓ, ԳՈՄՓ— բռունցք
ԳՈՒՍԱՆ— ժողովրդական երգիչ, աշուղ
ԳՅՈԼ— լիճ
ԳՅՈՒՎԱ— իբր թե

Դ

ԴԱՍՏՈՒՐ— հրաման
ԴԱՎԱ— ուղտ
ԴԱՐԲ— զարկ, հարված
ԳԱՐԳԱՀ— դարպաս
ԴԵՀ— դեպի, կողմ
ԴԻՎԱՆՔ— քրիստոնեական շար ոգիներ
ԴՂԵԿ— գղյակ
ԴՈ՞Ր— որտե՞ղ, ո՞ւր
ԴՈՐ— այս անգամ, հերթ
ԴՆԴԵՂ— ալիք
ԴՈՒՌ ԲԻՆԱԿ— դուռ բռնած նստած
ԴՌԸՆԴՈՋԱ— մանկական խաղ, փայտե լծակով

Է

ԷԲԱՑ— բացեց
ԷԲԱՐՁ— բարձեց
ԷԲԵՐ— բերեց
ԷԼԻՑ— լցրեց
ԷԿՈ— արի
ԷՀԱՆ— հանեց
ԷՆԻ— նա, այն
ԷՆ ԴԻԵՆ— այն կողմից
ԷՌԱՆԴ— երեկ չէ մյուս օրը
ԷՍԱ— այս
ԷՍ ԴԻՐ— այս անգամ
ԷՏՈՒ— տվեց
ԷՐ— այր, քարայր

Զ

ԶԱՊՈՒՆ— նիհար
ԶԱԼՈՒՄ— անսիրտ, անգութ
ԶԱԹԻ— արդեն
ԶԱՂՋԿԱՆ— աղջիկը, աղջկան
ԶԱՄԵՆ— ամենը, բոլորը
ԶԱՆԳՈՒ— ասպանդակ
ԶԱՐՄ— ցեղ
ԶԱՐԶԱՄԲԱ— նկուղ
ԶԱՏԱՆՑ— հեռվից, առանձին
ԶԱՏԱՆԱԼ— հեռանալ, առանձնանալ
ԶԷՆ— այն, նա
ԶԷՆԻ— նրան
ԶԷՆԵԼ— զոհել
ԶԷՆՈՒՆՔ—նրանք
ԶԷՏ— այդ, գա
ԶԻՐ— իր, յուր
ԶԻՐԱՆՑ— իրանց, յուրյանց
ԶԻՆՔ— ինքը, իրեն
ԶՄՐՈՒՐ— զմուռս
ԶՄԵՐ— մերը
ԶՄԵՆ— ամենը, բոլորը
ԶՈՂՈՐՄԻ— ողորմի
ԶՈՒՈՎ— ուժով, բռնի
ԶՈՐԸՆԴԵՂ— զորեղ

Ը

ԸԶՔՈ— քո, քոնը
ԸՂՆԵՐ— լիներ
ԸՂԻ— լինի
ԸՌԸԿԵԼ, ԸՌԿԵԼ, ԸՌԿԱՎ— խոռվել, բարկանալ, բարկացավ
ԸՐԻՎ-ՃԸՐԻՎ— խուճապ

Թ

ԹԱԹԱՑԻԿ— ոտաբաց
ԹԱԼԵԼ— գցել, նետել
ԹԱԼԱԿ— թակարդ
ԹԱԽԹԸՓԵԼ— թափ տալով մաքրել
ԹԱՇԿԵԼ— թոռոմել
ԹԱՍԼԻՄ— հանձնում
ԹԱՍԻԲ— պատիվ
ԹԱՌԲԵՂ, ԹԱՌԲԵԽ— նորածիլ բեղ ունեցող

ԹԱՐԹԱՓ— արտանունք
ԹԱՄԲԱՀ— պատվեր, ապսպրում
ԹԱՄԱՄ— լրիվ
ԹԱՎԼԱ— ախոռ
ԹԻՐԵՆ— կողմից
ԹՈՆԴԻՐ— թոնիր
ԹՈՐԿԵԼ— թողնել
ԹՌՈՒՑԻՆ— թոցրին

Ի

ԻԳԱ— գա
ԻԴԱՐԵ, ԻԴԱՐԱ— ապրուստ
ԻԼԻՆ— լիքը, լեցուն, նաև՝ լցրեցին
ԻՇԽԵՆԱԼ— համարձակվել
ԻՍԿԻ— բոլորովին
ԻՎԵ— ի վեր, վեր
ԻԴԱ— այս, այդ
ԻՐԻՇԿԵԼ— նայել, դիտել
ԻՐՈՒՐ— իրար

Լ

ԼԱՃ— տղա
ԼԱՈ— որդի, որդյակ
ԼԱՎՈՏԵԼ— տակը կեղտոտել
ԼԲՈԿ— լերկ կաշի
ԼԸՄԱՆ— լրիվ
ԼՄՆՑԱՎ— լրացավ
ԼՆՈՒՄ— լցնեմ
ԼՈԴՐԻԿ— կտրիճ
ԼՈՒԼԱ— խողովակ
ԼՈԲԿԵԼ, ԼԲՈԿԵԼ— քերթել, պլոկել
ԼՑՈՒԿ— լցված

Խ

ԽԱԲՐԱԲԵՐ— լրաբեր
ԽԱՋԻՆԱ— հարստություն, գանձ
ԽԱԹՐ, ԽԱԹԵՐ— հարգանք
ԽԱԼԻՖ— արաբական հոգևոր և աշխարհիկ իշխանության պետ միջնադարում
ԽԱՆԴԱԿ— փոս
ԽԱՉ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ԽԱՉ ՊԱՏՐԱԶԻՆ, ԽԱՉ ՊԱՏՐԱՍՏԻ—հաղթության նշան
ԽԱՌԱՆ— շունը կապելու շղթա
ԽԱՏԵԼ, ԽԱՏՆԵԼ— վերջանալ
ԽԱՐՏԵՇ— խարտյաշ, շագանակագույն
ԽԱՐՋ— հարկ, միաժամանակ և հարմար
ԽԱՐՋԴԱՐ— հարկատու
ԽԻԱՄ— նաժիշտ
ԽԵԼԻ— բավական
ԽԵՂ— խեղանդամ, հաշմանդաս
ԽԵՂԵԼ— խեղանդամ դարձնել, հաշմանդամ դարձնել
ԽՎԸԼԱԼ— շարժվել
ԽՈՐՈՏ, ԽՈՐՈՏԻԿ— սիրուն, սիրունիկ
ԽՈՒԵԼ— կիսել
ԽՈՋԱ— մեծ, ահագին, նաև՝ պատվավոր, հարուստ
ԽՈՅ— ղոշ, էպոսում՝ քաջի իմաստով

Ծ

ԾԵԾԿՈՒՔ— ծեծ, հեծեծանք
ԾՈՒԱՆԱԿ— խենթի պես, գժի պես

Կ

ԿԱԴԱՐ— ինչքան
ԿԱԼԱՄ— գրիչ
ԿԱԼԽԱՆ— կապարճ, նետերը պահելու տեղ
ԿԱՆԳՐՀԱՆ— կանգար բույսը հանող գործիք
ԿԱՊԱ, ԿԱԲԱ— վերնազգեստ
ԿԱՊՈՒԿ— կապած
ԿԱՐԻԲ— օտարական, պանդուխտ
ԿՉԱՎ— կոացավ
ԿԹԽԱ— թաս, բաժակ
ԿԻՔ— ամուր, պինդ, կիպ
ԿԽՏԱՐ— եղջերու
ԿՆԴՈՒԿ, ԿՆԴԵԼ— թրաշված, ածիլված, թրաշել, ածիլել
ԿՆԿՌԱԼ, ՁԸՆԿՌԱԼ— համառել, մի տեղում կանգնել
ԿՊՑՈՒՑ— կպցրեց
ԿՈ— ահա
ԿՈՆԴՈՒՌԱ— կոշիկ
ԿՈՊԱԼ— կեռագլուխ ձեռնափայտ
ԿՈՌ— գավազան
ԿՈՌԵԼ— կորացնել, կոփել
ԿՌՈՒԿ — Կոռ, ծռված

ԿՈՏ— ցորենի չափաման
ԿՈՒՋ— սև գույնի մի կենդանի
ԿՈՒԴՈՒՄ— ուժ
ԿՈՒՏ— այրված հաց
ԿՈՒՇՏԻ— ըմբշամարտ
ԿՈՒՍ— կույս
ԿՌՄԵԼ— թմրել
ԿՌՉԱԼ— ճարճատել

Հ

ՀԱԲԿԱ— խուրջին, պայուսակ
ՀԱՋԲԱՑ— բարևի եղանակ
ՀԱՎԱՎ— հագուստ
ՀԱՎՈՐ— ծերունի
ՀԱՂԹՈՒԿ— հաղթող, հաղթանդամ
ՀԱՆ ԳՈ— ահավասիկ, ահա
ՀԱՎՈՒՋ— ավաղան
ՀԱՅՐԵՆԻ— հայրենիք
ՀԱՐ— մինչև
ՀԵԼԱԿ— բաճկոնակ
ՀԵՂ— անգամ
ՀԵԼՍՏԱ— սվաղ
ՀԵՄԵԼ— հեծյալ
ՀԵՅՐԱՆ— սիրահարություն, սիրելի
ՀԵՏ ԻՐ— իր հետ
ՀԵՏ ԻՐԱՑ— իրար հետ
ՀԵՐԱԳՈՒԹ— հոր գութ ունեցող
ՀԵՐԱՀՈՏ— հերագութ
ՀԼՀԼՈՑ— հևք
ՀՄԴԱԹ— օգնող, օգնություն
ՀՈԼՐԵԼ— ոլորել
ՀՈՐԻ՞— ինչո՞ւ
ՀՐԱՄԱ, ՀՐԱՄԵՆ— ընթրիքի ժամանակ

Զ

ԶԻԱԹՈՂՍ— ձիարշավ, խաղ

Ղ

ՂԱԴԻՖԱ— թավիշ
ՂԱԼԲ— խարդախ, կեղծ
ՂԱՅԴԱ— եղանակ, կերպ
ՂԱՓԼԱՆ— վագր
ՂԱԲՈՒԿ, ՂԱՓՈՒԴ— մահուդե վերնազգեստ
ՂԸՍԲԸՂ— էգ ձի

Ճ

ՃԱՄԲԱՐՈՒԿ— գութանի մաս
ՃԱՆ— վեգ
ՃԱՆԿ— ափ, բուռ, ձեռքի մատներ
ՃԱՐ— հնար, դեղ
ՃԻԺ— երեխա
ՃԻՎ— ոտքից մինչև աղդրը, նաև՝ հավ
ՃԼԸԽՏՐԻԿ— ապտակ
ՃԽԱԼ— ուրախությունից սիրտը զարկել
ՃՂՈՒՆ— ճեղքած
ՃՂՈՐ— օրորոց
ՃՃԵԼ— հարստության մեջ լողալ
ՃՄԼՏԿԱԼ— մարմինը կուշ ու ձիգ տալ՝ զարթնելուց հետո
ՃՆՃՆԱԼ— թնգթնգալով լաց լինել
ՃՈԹ— կողմ, ծայր
ՃՈՂԱՏ— փորը պատռած
ՃՎԱԼ— բղավել

Մ

ՄԱԳՅԱՐ— միթե
ՄԸԳԱՐ— միթե
ՄԱՐԴԱՆԱԿ— տղամարդու նման
ՄԱՐԵ— մայրիկ
ՄԱԺԵԼ— շփել, շոյել
ՄԱՆՋԻԼ— տարածություն
ՄԵՋԼԻՍ— դիվան, ժողով
ՄՋՐԱԽ— նիզակ
ՄԺԻԿ— մժեղ, մժղուկ
ՄԻԴ ՎԵ, ՄԻՏ ՎԵ— մտքում, մտքի մեջ
ՄԼԵԼ— խցկել, կոխել
ՄԿԱ— հիմա, այժմ
ՄՈԼՎԱԾ— ծեփված
ՄՈՒՇԱՄԲԱ— նրբագործ ծածկոց
ՄՈՒՐԱՋ— իղձ, փափագ

Ն

ՆԻԱԹ— դեմքի խոժոռում, տխուր, թրթռված դեմք

ՆՍՏՈՒԿ— նստած
ՆՇԱՆԳԱՀ— նշած տեղը, նշանը
ՆՎԱՋՑՈՒՑ— նվազեցրեց, կտրեց

Շ

ՇԱՌԱՎԻՂՔ— ցոլք, շողք
ՇԱՎԱՐ— ջուլֆակ
ՇԱԼԱՊՈՒՏԻԿ— գլխկոնծի
ՇԵՆՔ-ՇՆՈՐՀՔ— շնորհք, ընդունակություն
ՇՆԻԿ— ցորենի չափման
ՇՈԳԵԼՔ— բերանի գոլորշի
ՇՈՂՇԱԲԳԱՆ— հարբած ժամանակ կարմրելը

Ո

ՈՒՂՈՐԴ— ճիշտ, ճշմարիտ
ՈՒՆԿ— կանթ, ականջ
ՈՒՍՏ— որտեղից
ՈՒՇԻԿ— կամաց
ՈՍՏԻՆ— անջրդի

Չ

ՉԱԴՐՐ— վրան
ՉԱԹՈՒՆ— ամբոխվել, կիտվել
ՉԱՓՐԱՐ— չափող
ՉԵՎ— մինչև
ՉԸՂՉԸՓԵԼ— շարժել, թափ տալ
ՉԼՈՒՏ— մերկ
ՉԸԼՏԵԼ— մերկացնել
ՉԽՈՒԼ— վտանգավոր
ՉԽՈ— արդեն, թե չէ
ՉՈՒՐ— մինչև

Պ

ՊԱԳԵԼ— համբուրել
ՊԱԽՈՒՑ— պախուրց
ՊԵԴԱՆԱԼ— մեծանալ, խոշորանալ
ՊԼԸՆԳ— փալանք, վագր
ՊՂԼՈՐԻ ՓՈՂ— գալարափող
ՊՈՌԹԵԼ— պատռել
ՊՌՈՒԿ— շուրթ
ՊՌՏԵԼ— քսել
ՊՈՒՃԻԿ— գուլպա

Ջ

ՋԱՆԴԱՔ— դիակ
ՋԻՆ-ՋԱՆԱՎԱՐ— դև-գաղան
ՋԻՐԻՆԴ— ճիարշավ
ՋՐԲԱՔԱՐ— փորձաքար
ՋՋՄԱ— երկարաճիտ կոշիկ
ՋՈԿ— առանձին
ՋՈՋ— ժեծ
ՋՈՒԱԲ, ՋՈՒՂԱԲ— լուր, համբավ
ՋՈՒԽՏ— զույգ

Ռ

ՌԱՆԴԱ— փայտահարթիչ գործիք
ՌԱՍՏ— հանդիպում

Ս

ՍԱԼԱՄԱԹ— ողջ-առողջ
ՍԱԿՌԻ— կողովի մեծ տեսակ, քթոց
ՍԱՐԱՅ— պալատ
ՍԱՐ-ՍՈՒՐԲ— մաքուր, հստակ սերսուփ
ՍԵՆԵԿ— սենյակ
ՍԵՅՐ-ՍԵՅՐԱՆ— պտույտ, ման գալ
ՍԹՐԵԼ— տեղավորվելով հանգստանալ
ՍԻԼԱ— ապտակ
ՍԻՆՈՐ— սահման
ՍՄԲՈՒԼ ԳԴԱԿԱՆ— գլխարաց՝ հարբած ժամանակ
ՍՈԼ— շուստ (ոտնաման)
ՍՊԱՆՈՒԿ— սպանված
ՍՏԱ— այստեղ

Վ

ՎԱԴԱ— ժամանակ
ՎԱՋԻՐ— թագավորության երկրորդ անձը
ՎԱՔԻԼ— փոխանորդ
ՎԵ— ի վեր, վեր
ՎԵՐԱՆ— ավեր, ավերակ
ՎԵՐԱՆ— վրա, վրան
ՎԵՐՔԵՐ— վայրեր, տեղեր
ՎԵՐՈՒՑ— վերցրեց
ՎԵՑԿԻԻ— վեց զույգով լծված գութան
ՎԺԺԱԼ— բարձրաձայն լաց լինել

ՎԻՐՈՒ, ՎԵՐՈՒ— վայրի, վայրենի
ՎԻ՞ՆՉԸՆ— ինչպե՞ս, ո՞նց
ՎՈՐՎԱՆՔ— գզած բրդի տականք, մնացորդ

Տ

Տ'— պիտի
Տ'ԱՍԵՄ— պիտի ասեմ
ՏԻ— պիտի
ՏԻ ՏԱՄ— պիտի տամ, պետք է տամ
ՏԻ ՏԱՍ— պիտի տաս, պետք է տաս
Տ'ԸԼՆԻ— պիտի լինի
ՏԻԼ— ցեխ
ՏԻՐՎԱՆՔ— տերեր
ՏՂԱՄԵՐ— հղի կին
ՏՌՉԻԿ, ՏՌՃԻԿ— տրտինգ, ցատշոտել
ՏՓԵԼ— ծեծել

Ք

ՔԱԿԵԼ— քանդել
ՔԱՆՑ— քան
ՔԱՐԳԱՀ— իլիկ
ՔԱՑԿԻՐ— միջնադարյան երաժշտական գործիք
ՔԱՑՐ, ՔԱՑՈՒՐ— անգութ, անխիղճ
ՔԵ— քեզ
ՔԵՆԵ— քեզնից
ՔԵՌՄԵՐ— մորեղբայր
ՔԻՐԲԻԹ— լուցկի
ՔՈԹԱԿ— դիակը նստած, կենդանի ցույց տալու փորձ
ՔՈՇՔ— պալատ
ՔՈՔ— արմատ
ՔՈՓԱԿ— շնաբարո մարդ
ՔՌՈՑ—.հոգեվարքի հոնդյուն
ՔՈՒՆՋ— անկյուն
ՔՈՒՇՏԻ— տես՝ կուշտի
ՔՈՒՐՍԻ— աթոռ, թոնրի ծածկ
ՔՐՎԵԼ, ՔՎՐԵԼ— հայհոյել

Փ

ՓԱԼԱՍԱՆՔ— անպետք
ՓԱՐԴԱ— վարագույր
ՓԱԹԻՇԱՀ— թագավոր, արքա
ՓԱՀԼԵՎԱՆ— քաջ, հերոս, դյուցազն
ՓԼՈՒՑ— փլցրեց
ՓՈՂՊԱՏ— օձիք
ՓՈՒԼ— թումբ
ՓՍԼԻՔ— բերանի ջուր
ՓՐՉՈՏ— մաղոտ
ՓՌՈՂՔ— զայրույթ, ցասում

ԱԳՈՒԱՎՈՒ ՔԱՐ, ԱԳՐՓՈՒ ՔԱՐ, ՎԱՆԱ ՔԱՐ, ՄՀԵՐԻ ԴՈՒՌ — Վանա մոտ մի քար է՝ հին սեպագրերով

ԱԽՄԱԽՈՒ ՍԱՐ— սարի անուն է

ԱՆԳՂԱ ԳԵՏ— Տիգրիսի վտակներից մեկը

ԱՐԶՐՈՒՄ, ԷՐԶՐՈՒՄ— Կարին քաղաքի անունն է

ԱՐՔԻԿ— գյուղ Սասուն գավառում

ԲԱՆԴՈՒՄԱՀՈՒ ԿԱՄ ԲԵՐԿՐԻ ԳԵՏ— գետ Վանի շրջանում

ԲԻԹԼԻՍ— քաղաքի անուն է. Սասունի հարավ-արևելյան կողմը

ԲԱՂԴԱԴ— քաղաք Միջագետքում

ԲԱԹՄԱՆԱ ԿԱՄՈՒՐՋ, ԳԵՏ— կամուրջի և գետի անուն, Սասնա սահմանում

ԳՅՈՒՐՋԻՍՏԱՆ— Վրաստան

ԴԻԱՐԲԵՔԻՐ— քաղաք, նախկին Տիգրանակերտը կամ նախկին Տիգրանակերտի սահմաններում

ԴԵՂԴԻՍ ԿԱՄ ՏԵԽՏԻԼ— գյուղ Սասունում

ԴԱՇՏՈՒ-ՊԱԴՐԻԱՀ— գյուղ Սասունում

ԼԵՌՎԱ ՍԱՐ ԿԱՄ ԼԵՌԱ ՍԱՐ— սար Սասնա սահմաններում

ԽԼԱԹ, ԱԽԼԱԹ— միջնադարյան հայկական քաղաքի անուն, այժմ գյուղ

ԾՈՎԱՍԱՐ— սար Սասունում

ԾՄՄԱԿԱԿԻԹ— սար Սասունում

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ— առասպելական աղբյուր

ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ— առասպելական քաղաքի անուն

ԿԱՊՈՒՏԿՈՂ— կապույտ բերդ

ԿԱՊՈՏԻՆ ԲԵՐԴ ԿԱՄ ԲԵՐԴ ԿԱՊՈՏԻՆ— բերդ Կաղզվանում

ՀԱԼԵՊ— քաղաք Միջագետքից արևմուտք, Սիրիայում

ՀԻԼԻ— վանքի անուն Ռիշտունիքում

ՃԱԺՎԱՆ— հին Ճոճվանը, տեղի անուն է

ՃԱՊԱՂՋՈՒՐ— տեղի անուն է, Տարոնի և Դիարբեքիրի մեջտեղը

ՄԱՆԶԿԵՐՏ, ՄԱՆԱԶԿԵՐՏ— միջնադարյան բերդ-քաղաք, այժմ գյուղ

ՄԱՌՆԻԿ, ՄԱՌԸՆԿԱ ԴԱՇՏ— գյուղ Տարոնում

ՄԱՐՈՒԹ, ՄԱՐՈՒԹՈՒԿ, ՄԱՐՈՒԹԱ— սար Սասունում
ՄԱՏՂԱՎԱՆՔ— հին Հայաստանի վանքերից մեկը
ՄԱՐԱԹԿԱՋՈՒՐ— Տիգրիսի վտակը
ՄԱՐՈՒԹԱ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ— վանք Մարութա սարի վրա
ՄՈՒՐԱԴ ԳԵՏ— Արածանի գետը, այժմ Մուրադ-չայ
ՄՈՒՇ— քաղաք Տարոնում
ՄՍԸՐ— եգիպտոս
ՆԵՄՐՈՒԹ— սար Սասունի և Մոկսի մեջտեղը
ՆՈՐԱԳԵՂ— գյուղի անուն Մուշում և Վանի մոտերքը
ՋՋԻՐ— պատմական Աղբակից դեպի հարավ ընկնող գավառ
ՇԱՄ— Դամասկոս քաղաքը
ՋՋԻՐՈՒ-ՇԱՏ— Ջզիրու գետի անունը
ՊՂՆՋԵ ՔԱՂԱՔ— առասպելական քաղաք
ՍԱՍՈՒՆ— Տարոն-Տուրուբերանի լեռնային գավառներից մեկը
ՍԵՂԱՆՍԱՐ— սար Մուշի գավառում
ՍԵՎՍԱՐ— սար Սասունում
ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ— Ինանակնյան Գլակա վանքը
ՎԱՆ— քաղաքի անուն է
ՈՍՏԱՆԱ ԿԱՊԱՆ— Վանա ծովի հարավային ափին, պատմական Ռշտունյաց գավառի կենտրոնը, հայտնի Նարեկ գյուղի մոտ
ՏՈՍՊԱՆ ԲԼՈՒՐ— տես՝ Ադռավու քար
ՑԱՐԿԵՆ— Նփրկերտ քաղաքը, Դիարբեքիրի մոտերքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Նախարան III
Կազմողների կողմից LXIII

Ճյուղ առաջին

ՍԱՆԱՍԱՐ ԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ 1

Մասն Ա

Կռիվ Բաղդադի խալիֆայի դեմ 3

Մասն Բ

Սանասարի և Բաղդասարի ամուսնությունը 3

Ճյուղ երկրորդ

ՄԵԾ ՄՀԵՐ 95

Մասն Ա

Մհերը խնամում է Սասունը 97

Մասն Բ

Մհերի կռիվը Մրսրա Մելիքի դեմ 115

Ճյուղ երրորդ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ 129

Մասն Ա

Դավթի կռիվը Մրսրա Մելիքի դեմ 131

Մանուկ Դավիթը Մրսրում 131
Դավիթը հովիվ 159
Որսորդ Դավիթը վերաշինում է հոր վանքը և պատուհասում է խոլբաշու գոր-
քերին 183
Դավիթը պատուհասում է Մրսրա Մելիքի հարկահաններին . . . 203
Դավթի և Մելիքի մենամարտը 217

Մասն Բ

Դավիթ և Խանդուր 251
Դավթի ամուսնությունը 251
Դավթի մահը 283

Ճյուղ չորրորդ

ՄՀԵՐ ՓՈՔՐ 295

Մասն Ա.

Մհերն առնում է Դավթի արյան վրեժը 297
Մհերի ամուսնությունը և վերջը 307
Վերջերդ 319

Բառարան 323
Վայրերի անուններ 330

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ

Խմբագիր՝
Ս. Հ. Մարգսյան

Գեղ. խմբագիր՝
Ա. Ն. Գասպարյան

Տեխ. խմբագիր՝
Ա. Մահակյան

Վերստուգող սրբագրիչներ՝
Ռ. Հովսեփյան, Ա. Մանվելյան

Գաղթեր 1351։ *Տիրաժ 60000։*

Հանձնված է արտադրության 22/VIII 1960 թ.։
Ստորագրված է տպագրության 13/III 1961 թ.։
Թուղթ՝ 70×108¹/₁₆։ Տպագր. 25,0 մամ. = 34,25 պայմ. մամ.,
հրատ. 21,0 մամ. + 12 ներդ.։
Գինը՝ 1 ռ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։

2.12-2748.65

Տեղի՛ է հեր դեմ Սատանա Զաւէթ,



Տ՛եղի՝ յեր դեմ թոռր կեծուակին։

LIBRARY OF CONGRESS
0 007 704 495 4